

Հ. Գ. ՄԱՂԱՔՅԱՆ

ՄԵՏԱՂԱԾՆՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԱՍԻՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԱՍԻՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ГЕОЛОГИЧЕСКИХ НАУК

И. Г. МАГАКЬЯН

МЕТАЛЛОГЕНИЯ

(ЗАКОНОМЕРНОСТИ РАЗМЕЩЕНИЯ МЕСТОРОЖДЕНИЙ
МЕТАЛЛИЧЕСКИХ ПОЛЕЗНЫХ ИСКОПАЕМЫХ)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1978

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱ
ԵՐԿՐԱՐԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հ. Գ. ՄԱՂԱՔՅԱՆ

ՄԵՏԱՂԱԾՆՈՒԹՅՈՒՆ

(ՄԵՏԱՂԱՅԻՆ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ
ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՕՐԻՆԱԶԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)

Գրքում քննարկվում են մետաղային օգտակար հանածոների հանքավայրերի տեղաբաշխման օրինաչափությունները նրկրի կեղևում՝ սերտորեն կապված նստվածքակուտակման, մագմատիզմի ու տեկտոնիկայի հետ:

Մանրամասն շարադրված են զարգացման փուլերն ու հանքայնացման առանձնահատկությունները նրկրի խոշոր ստրուկտուրային միավորների՝ վահանների և նրանց պլատֆորմների, շարժուն ծալքավոր գոտիները, ինչպես նաև ակտիվացած մարզերի համար հաստատված է այդ ստրուկտուրային միավորների զարգացման առանձին փուլերի հանքայնացման առանձնահատկությունն ու նրանց օրինաչափ տարածական մեկուսացումը:

Գրքում բերված է վահանների և նրանց պլատֆորմների, տարբեր հասակի շարժուն ծալքավոր գոտիների, ինչպես նաև վահանների, միջնազանգվածների ու ծալքավորված մարզերի ակտիվացած տեղամասերի մետաղածնության համակարգված նկարագրությունը:

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ռեզիոնալ մետաղածնային հետազոտությունների լայն զարգացումը, որն ընդգրկել է Սովետական Միության և այլ երկրների ողջ բնաշխարհը, ուղեկցվում է մետաղածնության տեսության մշակմամբ, գիտություն, որն ուսումնասիրում է օգտակար հանածոների հանքավայրերի տեղաբաշխման օրինաչափությունները Երկրի կեղևում:

Մակայն մետաղածնության վերաբերյալ դասագրքեր և մենագրություններ քիչ կան, իսկ հայերեն՝ առհասարակ չկան, տվյալ ձեռնարկը կոչված է լրացնելու այդ բացը:

Աշխատության մեջ զետեղված են մետաղածնության դասընթացի դասախոսություններ, որոնք հեղինակը 1960 թ. կարդում է Լենինգրադի լեռնային ինստիտուտում և Երևանի, Սոֆիայի ու Պրագայի համալսարաններում:

Դասագիրք-մենագրությունն ամփոփում է «Մետաղածնություն» գիտության հիմունքները, մետաղածնային ստրուկտուրաների հիմնական տիպերի (վահանների ու նրանց պլատֆորմների, ծալքավոր գոտիների ու ակտիվացած մարզերի) նկարագրությունը, նրանց զարգացման փուլերն ու հանքանյութային առանձնահատկությունները:

Կարևոր է նաև հիմնական մետաղների մետաղածնության նկարագրությունը՝ ըստ հանքային ֆորմացիաների և նրանց կոմպլեքսների (շարքերի), ստրուկտուրա-մետաղածնային քարտեզների կազմման մեթոդիկայի մշակումը, որը ուղեցույց կհանդիսանա որոնողա-հետախուզական աշխատանքների համար:

Ներկայացված աշխատությունում առանձին մետաղածնային մարզերի և հանքային ֆորմացիաների նկարագրման մանրամասնություններում անխուսափելի է որոշ անհամաչափություն. նրանց մի մասը ուսումնասիրվել է հեղինակի ակտիվ մասնակցությամբ, իսկ մյուս մասը հայտնի է կարճատև դիտումներից և գրականությունից:

Այսպես, հեղինակը կատարել է բազմամյա մանրազնին ուսումնասիրություններ (1942—1972 թթ.) Անդրկովկասի ալպիական ծալքավոր մետաղածնային մարզում (հատկապես Հայկական ՍՍՀ տարածքում), ինչպես նաև հերցինյան հասակի Միջինասիական ծալքավոր և մետաղածնային մարզում (1934—1940 թթ.), հիմնականում Տաջիկական ՍՍՀ-ում:

Երկրաբանական գիտաշրջագայությունների և հատուկ ուղևորությունների ընթացքում դիտվել են մի շարք այլ ծալքավոր մետաղածնային մարզեր՝ Ուրալյանը, Միջնալեռնայինը՝ Բուլղարիայում, Կարպատյանը՝ Հունգարիայի ու Սլովակիայի սահմաններում, Կորդիլիերյանը՝ Բրիտանական Կոլումբիայում (Կանադա), Կյուսյու կղզին՝ Ճապոնիայում, Բալկանները՝ Հարավսլավիայում:

Հեղինակը հնարավորություն է ունեցել այցելելու մի շարք խոշոր հան-
քային շրջաններ Բալթիական վահանի (Հյուսիսային Շվեդիա, Կոլայի թերա-
կղզի) և Ուկրաինական վահանի (Կրիվոյ ոոզ) սահմաններում, ինչպես նաև
ակտիվացած շրջանների հանքային մարզեր (Հանքային լեռները՝ Գերմա-
նիայի ու Չեխոսլովակիայի սահմաններում, Կենտրոնական գանգվածը՝
Ֆրանսիայում, Դոնբասը և այլ հանքավայրեր)։

Հետազոտություններից ստացված նյութերը օգտագործված են գրքի հա-
մապատասխան բաժիններում։

Գլխավոր հանքային ֆորմացիաներից մեզ լավ հայտնի են սկանդինավյան
(երկաթաբեր և շեկիտաբեր տիպերը), կոլչեղանայինը, պղինձ-մոլիբդենա-
յինը, ոսկի-սուլֆիդայինը, ոսկի-տելուրիդայինը, համեմատաբար ավելի քիչ՝
ապատիտ-մազնետիտայինը, տիտանամազնետիտայինը, քրոմիտայինը, էքս-
հալյացիոն-նստվածքային մանգանայինը, լիկվացիոն պղինձ-նիկելայինը,
սուլֆիդ-անագաքարայինը, ծարիր-անդիկայինը, բազմամետաղայինը, որոնք
նկարագրված են ավելի մանրամասն։

I. ՄԵՏԱՂԱԾՆՈՒԹՅԱՆ ԾԱԳՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՌՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Մետաղածնություն (Métallogénie) տերմինն ունի ֆրանսիական ծագում և բառացիորեն նշանակում է մետաղների ծնում. իր բովանդակությամբ մետաղածնությունը մետաղային հանքավայրերի երկրաբանության մի ճյուղն է, որի հիմնական խնդիրն է՝ ուսումնասիրել մետաղային հանքավայրերի տեղաբաշխման օրինաչափությունները Երկրի կեղևում:

Ավելի լայն իմաստ ունի «միներագենիա» տերմինը, որն ընդգրկում է ինչպես մետաղային, այնպես էլ ոչ մետաղային օգտակար հանածոները, սակայն այն լայն տարածում չի ստացել:

Մետաղածնության վերաբերյալ առաջին անգամ կարծիք է հայտնել ռուս մեծ գիտնական Լոմոնոսովը դեռ 1763 թվին՝ գրելով* «Քայլենք այժմ մեր հայրենիքով, դիտելով տեղամասերի դիրքը և ենթաբաժանելով նրանց հանքանյութերի առաջացման տեսակետից կարող և անկարողների»:

Հանքավայրերի տեղաբաշխման օրինաչափությունների ուսումնասիրման մեծ նշանակությունը ընդգծել է երկրաբան Ի. Ա. Պոլետիկան դեռևս 1860 թ., իսկ XIX դարի վերջում և XX դարի սկզբում ֆրանսիական հետազոտողներ Դե-Լոնեն և Լակրուան առաջարկեցին մետաղածնային «մարզեր» և «դարաշրջաններ» հասկացությունները:

Այդ ժամանակաշրջանում Դե-Լոնեն հրատարակում է մի շարք աշխատություններ, որոնք այժմ էլ ներկայացնում են մեծ հետաքրքրություն՝ «Տրակտատ մետաղածնության վերաբերյալ» (Traité de métallogénie), «Աֆրիկայի մետաղածնությունը» (La métallogénie de l'Afrique), «Ասիայի մետաղածնությունը» (La métallogénie de l'Asie) և ուրիշներ:

XX դարի առաջին քառորդում մետաղածնության բնագավառում աշխատանքներ են կազմակերպվում մի շարք երկրներում՝ ԱՄՆ-ում Վ. Էմմոնսի, Վ. Լինդգրենի և ուրիշների կողմից տեկտոնիկական հիմքի վրա կազմվում են հանքավայրերի տեղաբաշխման քարտեզներ, Սովետական Միությունում հրատարակվում են Վ. Ա. Օբրուչևի Միբիրի մետաղածնության և հատկապես սուկեբեր մարզերին, Ա. Ն. Ֆերսմանի Մոնղոլո-Ցիոստյան հանքային գոտու անջատմանը նվիրված աշխատությունները:

Առաջին անգամ 1939 թ. պրոֆեսոր Վ. Ն. Զվերևը, որի մոտ այդ ժամանակ որպես ասիստենտ աշխատում էր հեղինակը, սկսեց կարդալ մետաղածնության դասընթացներ Լենինգրադի լեռնային ինստիտուտի երկրաբանական ֆակուլտետի ուսանողների համար:

* «Пойдем ныне по своему Отечеству, станем осматривать положения мест и разделим к произведению руд способные от неспособных» (М. В. Ломоносов, О «слоях земных», Изд. Академии наук, 1763).

Սեփակյան պետք է խոստովանել, որ բոլոր վերը նշված աշխատանքները և դասընթացների առաջին փորձը կրում էին նկարագրական բնույթ. այդ աշխատություններում բացահայտված շէին առանձին մարզերի մետաղածնային առանձնահատկությունները նստվածքների, տեկտոնիկայի, մագմատիզմի ու հանքայնացման փոխադարձ կապերի հարցերը:

Մետաղածնությունը որպես գիտություն ձևավորվեց միայն 1945—1946 թթ. Սովետական Միությունում. համարյա միաժամանակ տպագրվեցին Ս. Ս. Սմիրնովի «Նաղաղովկիանոսյան հանքային գոտու մասին» (С. С. Смирнов, «О Тихоокеанском рудном поясе») և Դ. Ի. Շչերբաևի «Մետաղածնային քարտեզի կազմման սկզբունքներն ու մեթոդիկան» (Д. И. Щербаков, «Принципы и методика составления металлогенической карты») հոդվածները:


Ս. Ս. Սմիրնովը հաշոդ փորձ կատարեց բացահայտելով մետաղային հանքավայրերի տեղաբաշխման օրինաչափությունները Նաղաղովկիանոսյան մետաղածնային գոտու սահմաններում, իսկ Դ. Ի. Շչերբաևովը Կովկասի—Անդրկովկասի համար առաջարկեց մետաղածնային քարտեզի առաջին տարբերակը, որը կազմված էր լիթոլոգո-ստրուկտուրային հիմքի վրա և ընդգրկում էր բազմաթիվ հանքավայրերի տեղաբաշխումն ըստ նրանց գենետիկական տիպերի ու հանքային ֆորմացիաների:

Հետագայում մետաղածնության գիտության զարգացման և այդ առումով Սովետական Միության տարածքի լայն ուսումնասիրությունների գործում մեծ ավանդ են ներդրել ՎՍԵԳԵԻ (ВСЕГЕИ) երկրաբաններ՝ Յու. Ա. Բիլիբինը, Վ. Ս. Գոմարևը, Մ. Ի. Իցիկսոնը, Ե. Դ. Կարպովան, Ա. Ի. Սեմյոնովը, Վ. Ի. Սերպոլսովը, Յու. Գ. Ստարիցկին, Պ. Մ. Տատարինովը, Ա. Դ. Շչեգլովը և ուրիշներ, ինչպես նաև Ղազախական հանրապետության մետաղածնությունը ուսումնասիրող երկրաբաններ Կ. Ի. Սատպաևը, Ռ. Ա. Բորուկաևը, Գ. Ն. Շչերբան, Ուզբեկական հանրապետությունից Հ. Մ. Աբդուլաևը, Ի. Ն. Խամբաբաևը, Սիբիրից Վ. Ա. Կուզնեցովը, Ս. Ա. Վախրոմեևը, Մ. Մ. Օդինցովը, Տ. Վ. Բիլիբինան, Ռուսից Ե. Ե. Զախարովը, Ս. Ն. Իվանովը, Մ. Ի. Բորոդանսկայան, Ուկրաինական հանրապետությունից Ն. Պ. Սեմենենկոն, Յա. Ն. Բելեցևը, Հեռավոր արևելքից և Հյուսիս-արևելքից Ն. Ա. Բելյանսկին, Ե. Տ. Շատալովը, Ե. Ա. Ռադկևիչը, Լ. Ի. Կրասնին, Վ. Տ. Մատվենկոն, Անդրբայկալից Ա. Դ. Շչեգլովը, Վ. Ս. Կորմիլիցինը, Դ. Վ. Ռունդկվիստը, Դ. Ի. Գորժևսկին, Կովկասից ու Անդրկովկասից Վ. Գ. Գրուշևոյը, Վ. Ն. Կոտլյարը, Վ. Ի. Սմիրնովը, Լ. Ա. Վարդանյանցը, Գ. Ա. Թվալձրեիձեն, Գ. Ս. Զոժենիձեն և ուրիշներ:

Արտասահմանյան գիտնականներից հարկ է նշել Ֆ. Տերների (մետաղածնային մարզերի և դարաշրջանների վերաբերյալ), Պ. Լաֆիտի (Յրանսիայի մետաղածնության վերաբերյալ) ու Տ. Վատանաբեյի մի շարք աշխատությունները: Առանձնապես մեծ նշանակություն ունեցավ Լենինգրադի համալսարանում Յու. Ա. Բիլիբինի* «Մետաղածնային մարզեր ու դարաշրջաններ» առարկայի 1950—1951 թթ. դասընթացը (1955 թ.) և Վ. Ի. Սմիրնովի**

* Ю. А. Билибин, Металлогенические провинции и металлогенические эпохи. Госгеолтехиздат, М., 1955.

** В. И. Смирнов, Очерки металлогении, Госгеолтехиздат, М., 1963.



Նկ. 1—Վահանների և նրանց պլատֆորմների ու ծալքավոր գոտիների բաշխումը:

- 1—Վահանները և նրանց պլատֆորմները. 2—Կալեդոնյան հասակի ծալքավոր գոտիները.
 3.—Հերցինյան հասակի ծալքավոր գոտիները. 4—Քիմերյան հասակի ծալքավոր գոտիները.
 5—Ալպիական հասակի ծալքավոր գոտիները.

I—X վահանները և նրանց պլատֆորմները. I—Ռուսական, II—Սիբիրական, III—Չինա-Կո-րեական, IV—Կանադական, V—Աֆրիկա-Արաբական, VI—Հնդկական, VII—Արևմտաավստրալիական, VIII—Գլխանական, IX—Բրազիլական, X—Անտարկտիկական:

- 1—14 ծալքավոր գոտիներ. 1—Միջերկրածովափին, 2—Խաղաղօվկիանոսյան, 3—Ուրալյան, 4—Քալմիկյան, 5—Ալթայա-Սայանյան, 6—Ղաղախստանյան, 7—Միջինասիական, 8—Արևմտա-եվրոպական, 9—Նորվեգիա-Ասիալայան, 10—Ատլասյան, 11—Կասպի, 12—Կամ-Յուննանյան, 13—Արևելաավստրալիական, 14—Արգենտինյան:

1963 թ. «Մետաղածնության ակնարկներ» խորագրով գրքի հրատարակումը: Սկսած 1957 թ. Լենինգրադի լեննային ինստիտուտում մտցվում է «Մայրցամաքների մետաղածնության հիմունքները» դասընթացը (Հ. Գ. Մաղաքյան, 1959*), իսկ 1969 թ. հրատարակվում է նույն հեղինակի «Սովետական Միության տարածքի հանքային մարզերի ու ֆորմացիաների տիպերը» մենագրությունը**:

1968—1971 թթ. հրատարակվում են նաև Ա. Գ. Շչեզլովի երկու գրքերը, որոնցից առաջինը նվիրված է ինքնավար ակտիվացած մարզերին, իսկ երկրորդը՝ միջնազանգվածների մետաղածնությանը:

Պետք է հիշատակել նաև 1963 թ. Իրկուտսկի պոլիտեխնիկական ինստիտուտում պրոֆ. Ս. Ա. Վախրոմենի կարգացած մետաղածնության համառոտ դասընթացը (1970 թ.):

Վերոհիշյալ աշխատություններում մետաղածնությունը ձևավորվեց որպես գիտություն, որի հիմնական խնդիրները դարձան Երկրի կեղևի առանձին տեղամասերի ընդհանուր երկրաբանական զարգացման հետ կապված մետաղային հանքավայրերի տեղաբաշխման օրինաչափությունների ուսումնասիրման հարցերը:

Հանքայնացումը դիտվում է նստվածքների, տեկտոգենեզի ու մագմատիզմի հետ սերտորեն կապված, ընդ որում ներծին (էնդոգեն) հանքայնացման համար ընդգծվում է մագմատիզմի և ստրուկտուրաների, իսկ արտածին (էկզոգեն) հանքայնացման համար՝ լիթոլոգա-ստրատիգրաֆիական ու պալեոաշխարհագրական գործոնների (ֆացիաներ, առափնյա գծի դիրքը, կլիման, ուլտրաֆիզիկական պայմանները) մեծ դերը:

II. ՄԵՏԱՂԱԾՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԳԻՐՆԵՐԸ ԵՎ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մետաղածնության հիմնական խնդիրները կարելի է շարադրել հետևյալ կերպ՝

1. Երկրի կեղևի մետաղածնային զարգացման օրինաչափությունների բացահայտումը խոշոր ստրուկտուրային միավորների (վահաններ և նրանց պլատֆորմներ, ծալքավոր շարժուն գոտիներ ու ակտիվացած մարզեր) համար:

2. Այդ ստրուկտուրաների զարգացման առանձին փուլերի հանքայնացման առանձնահատկությունների բացահայտումը:

3. Հանքայնացման առանձին փուլերի տարածական մեկուսացման օրինաչափությունների բացահայտումը խոշոր ստրուկտուրաների տարբեր տեղամասերում:

4. Գլխավոր մետաղածնային մարզերում ու դարաշրջաններում առանձին մետաղների արդյունաբերական կուտակումների առաջացման պայմանների ուսումնասիրումը, հաշվի առնելով գենետիկական տիպերը ու հանքային ֆորմացիաները:

* И. Г. Магакьян, Основы металлогении материков. Изд. АН Арм. ССР, 1959.

** И. Г. Магакьян, Типы рудных провинций и рудных формаций СССР, «Недра», М., 1969.

Մետաղածնային մարդ ասելով հասկանում ենք Երկրի կեղևի մի հատված, որը բնորոշվում է երկրաբանական կառուցվածքի ու զարգացման, հետևապես և հանքայնացման առանձնահատկությունների ընդհանրությամբ:

Այսպես, օրինակ, առանձնացվում է քիմերյան հասակի Անդրբայկալյան մետաղածնային մարզը՝ ոսկի-անագ-վոլֆրամային տիպիկ հանքայնացումով, քիմերյան-ալպիական հասակի Անդրկովկասյան մարզը՝ երկաթ-ոսկի-պղինձ-մոլիբդենային հանքայնացումով, կալեդոնյան-հերցինյան հասակի Ուրալյան մարզը, որի համար բնորոշ է երկաթ-պղինձ-ոսկի-քրոմիտային հանքայնացումը և ուրիշներ:

Առանձին մետաղածնային մարզերի սահմաններում անջատում են ենթամարզեր, որոնք միմյանցից տարբերվում են ստրուկտուրային դիրքով ու հանքայնացման հասակով. այսպես, օրինակ, Անդրբայկալում մեկուսացվում են անագ-վոլֆրամային, ոսկի-մոլիբդենային և բազմամետաղային ենթամարզերը (Ս. Ս. Սմիռնովի երեք հանքային գոտիները), Անդրկովկասում՝ պղինձ-կոլչեդանային, պղինձ-մոլիբդենային ու քրոմիտային (վերադրված ոսկու հանքայնացմամբ) ենթամարզերը կամ հանքային գոտիները, Ուրալի համար՝ պղինձ-կոլչեդանային, քրոմիտային, սկառնային երկաթաբեր, պլատինի և այլ ենթամարզերը:

Մյուս կողմից հանքայնացման բնույթով և ստրուկտուրային դիրքով նման մի շարք մարզեր միավորվում են մետաղածնային գոտիներում և, ունենալով հսկայական տարածում, իրոք գոտևորում են երկրագունդը. օրինակ՝ հազարավոր կիլոմետրանոսյանը և Միջերկրածովայինը:

Մետաղածնային դարաշրջան ասելով հասկացվում է երկրաբանական ժամանակի մի հատված, որի ընթացքում զարգանում է օգտակար հանածոների հանքավայրերի առանձնահատուկ միակցություն:

Սովորաբար ներծին հանքայնացման համար, մետաղածնային դարաշրջանները համընկնում են ծալքավորման ու մագմատիզմի փուլերին, որի հետևանքով անջատվում են մինչքեմբրյան (երբեմն արխեյան ու պրոտոերոզոյան ենթաբաժանումով), կալեդոնյան, հերցինյան, քիմերյան ու ալպիական մետաղածնային դարաշրջանները:

Մետաղածնային ուսումնասիրությունների կարևոր կիրառական խնդիրն է որոնող-հետախուզական աշխատանքների նպատակասլաց կազմակերպումը. այդ նպատակին են ծառայում կանխատեսումային-մետաղածնային քարտեզները, որոնց վրա արտահայտված են հանքայնացման տարատեսակը և տեղաբաշխումը որոշող բոլոր գործոնները:

Այդ քարտեզները իրենց մասշտաբներով տարբերվում են. ամփոփիչ քարտեզները լինում են փոքր մասշտաբի, իսկ առանձին հանքային շրջանների համար կազմում են մանրազնին (1:100000—1:25000) քարտեզներ: Քարտեզներում երկրաբանա-տեկտոնական հիմքի վրա տեղադրվում են՝

1. Հանքայնացումը հսկող բոլոր ստրուկտուրաները (ծալքավոր և խզումային ստրուկտուրաները, աններդաշնակուսթյան մակերեսները, ինտրուզիաների կոնտակտները, դայկաները, հրաբխականության կենտրոնները՝ նեկերը և պլաթման խողովակները, առափնյա գծի դիրքը և այլն):

2. Լիթոլոգա-ստրատիգրաֆիական բոլոր տարրերը (հաստվածքները ու նրանց առանձին հորիզոնները, կարբոնատային, բիթումային, սպիլիտակե-

բատոֆիրային, ծակոտկեն կամ ճեղքավորված, էկրանավորող ապարները), որոնք հսկում են հանքայնացումը:

3. Հանքաբեր մագմատիկ կոմպլեքսները, որոնց համար նշվում են առանձին ֆազաների ու ֆացիաների կազմը, հասակը, ձևավորման ու էրոզիայի կտրվածքի խորութիւնը:

4. Հանքավայրերը ըստ զենետիկական տիպերի ու հանքային ֆորմացիաների (նշանի ձևը), գլխավոր մետաղը (զույնը), հանքավայրի մեծութիւնը (նշանի չափը):

Կանխատեսումա-մետաղածնային մանրաղնին քարտեզներում առանձնացվում են նաև հանքայնացման տարբեր փուլերի տարածման մարզերը, հիդրոթերմալ փոփոխված ապարների տեղամասերը, գեոֆիզիկական ու գեոքիմիական անոմալիաները, սկզբածքային հանույթի տվյալները, մետաղամետրիկ ու հիդրոգեոքիմիական ցրման պատկանները՝ մի խոսքով այն, ինչ կարող է ուղղութիւն տալ նոր հանքավայրերի (այդ թվում «կույր» շմերկացող) հանքայնացման որոնմանը:

Սովետական Միութիւնում արդեն ձեռք է բերված որոշակի փորձ ամենատարբեր մասշտաբի, այդ թվում առանձին հանրապետութիւնների ու հանքային մարզերի կանխատեսումա-մետաղածնային քարտեզների կազմման գործում: Այդ տիպի քարտեզներ են կազմել երկրաբանների կոլեկտիվները Ղազախական հանրապետութեան, Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի, Անդրբայկալի, Հեռավոր արևելքի ու մի շարք այլ շրջանների համար:

Քարտեզների կազմման մեթոդիկային ու նրանց կիրառական մեծ նշանակութեան մասին, տե՛ս աշխատութեան IX գլուխը:

III. ՄԵՏԱՂԱԾՆԱՅԻՆ ՄԱՐԶԵՐՆ ՈՒ ԴԱՐԱՇՐՋԱՆՆԵՐԸ

Այս բաժնում քննարկում ենք մետաղածնային մարզերի ու դարաշրջանների մի քանի օրինակներ և փորձում ենք բացատրել նրանց հանքայնացման յուրահատկութիւնները:

Առաջիկ մանրամասն ուսումնասիրված են այն հանքային մարզերը, որոնք միավորված են խաղաղօվկիանոսյան, Միջերկրածովային և Ուրալյան մետաղածնային գոտիներում:

Այդ, ինչպես նաև ուրիշ, մետաղածնային գոտիների համար Ս. Ս. Սմիռնովի, Յու. Ա. Բիլիբիևի և ուրիշների աշխատանքներում առանձնացված են արտաքին ու ներքին զոնաներ, որոնք բնորոշվում են յուրահատուկ հանքայնացումով. հաստատված է որոշակի տիպերի ներքին հանքավայրերի օրինաչափ կապը այս կամ այն տեկտոնա-մագմատիկ կոմպլեքսների հետ, որոնք առաջանում են խոշոր ստրուկտուրաների զարգացման տարբեր փուլերում ու մեկուսանում են տարածականոթեն:

Այսպես, մետաղածնային գոտիների արտաքին (վահաններին ու նրանց պլատֆորմներին կից) զոնաների հանքայնացումը ծագմամբ սերտորեն կապված է թթու գրանիտների հետ և արտահայտված է անադ-վոլֆրամային հանքայնացումով՝ ոսկու, մոլիբդենի, կապարի, ցինկի, ծարիրի, հաճախ ուրանի երկրորդական դերով: Ներքին զոնաների (հարում են գեոսինկլինալների առանցքային մասերին) նույն մետաղածնային գոտիների հանքայնացումը

կապված է հիմքային-ուլտրահիմքային ու շափավոր թթվության ինտրուզիաների հետ, որոնց հարում են քրոմի, տիտանի, երկաթի, պղնձի, մոլիբդենի (պղնձի հետ դուգալցիդոլ), ինչպես նաև պլատինի, բազմամետաղային հանքանյութերի, ոսկու, ծարիրի, սնդիկի խոշոր կոտակումներ: Հանքայնացման այդ էական տարբերությունների հետևանքով առաջանում են երկու տիպի մետաղածնային մարզեր՝ անագ-վոլֆրամային (Սովետական Միության հյուսիս-արևելքը, Հեռավոր արևելքը, Անդրբայկալը, Կենտրոնական Ղազախստանը, Բոլիվիան, Հյուսիսային Արդենտինան, Ասիայի հարավ-արևելքը) և պղնձաբեր, քրոմի, տիտանի, երկաթի, հաճախ նաև մոլիբդենի մեծ դերով (Անգրկովկասը, Բալկանները, Ուրալը, ԱՄՆ-ի արևմտյան նահանգները, Չիլին):

Վահանների ու նրանց պլատֆորմների սահմաններում արխեյան ու պրոտոերոզոյան հասակի մետամորֆացված հաստվածքներում բնորոշ են երկաթի, մանգանի, ոսկու և ուրանի մետամորֆոզեն հանքանյութերի մարզեր՝ Աֆրիկայում, Բրազիլիայում, Հնդկաստանում, Կանադայում, Ավստրալիայում, Սովետական Միությունում, իսկ պլատֆորմների ուլտրահիմքային-հիմքային և ուլտրահիմքային-ալկալային մագմատիկ կոմպլեքսների հետ կապված են լիվլացիոն պղինձ-նիկելային, հազվագյուտմետաղային կարբոնատիտային, ալմաստաբեր քիմերիլիտային հարստագույն հանքային մարզեր՝ Աֆրիկայում, Բրազիլիայում, Կանադայում, ՍՍՀՄ-ում և այլ երկրներում:

Մետաղածնային մարզերի հանքայնացման բնույթի տարբերությունները և տարբեր մետաղների ու հանքավայրերի տիպերի, կարծես թե, անկանոն բաշխումը մի ժամանակ փորձում էին բացատրել առանձին երկրների երկրաբանական ուսումնասիրվածությունների տարբեր աստիճանով:

Իրոք, մինչև այժմ էլ առանձին մայրցամաքներ ու երկրներ ունեն ուսումնասիրման տարբեր աստիճան. համեմատաբար թույլ ուսումնասիրված մարզերում (Կանադայի ու ՍՍՀՄ-ի հյուսիսային շրջանները, Բրազիլիա, Աֆրիկա, Ավստրալիա, Անտարկտիկա) յուրաքանչյուր տարի հայտնագործվում են նոր խոշոր հանքավայրեր ու հանքային շրջաններ, սակայն բոլոր դեպքերում էլ դրանք պատկանում են հանքայնացման այն տիպերին, որոնք բնորոշ են սովյալ ստրուկտուրաներին:

Այսպես, Ավստրալիական վահանի սահմաններում վերջերս հայտնաբերված են երկաթի մետամորֆոզեն ու պղինձ-նիկելային լիվլացիոն տիպի խոշորագույն հանքավայրեր. ՍՍՀՄ-ի հյուսիսային շրջաններում Սիբիրական պլատֆորմի սահմաններում հայտնաբերված են հազվագյուտմետաղային կարբոնատիտների, ալմաստաբեր քիմերիլիտների ու պղինձ-նիկելային լիվլացիոն հանքավայրեր: Աֆրիկայի, Բրազիլիայի, Կանադայի թույլ ուսումնասիրված շրջաններում հայտնաբերված են հազվագյուտմետաղային կարբոնատիտների, ոսկի-ուրանաբեր կոնգլոմերատների ու քվարցիտների մետամորֆոզեն տիպի հսկայական պաշարներ ունեցող հանքազաշտեր:

Հեցիսյան հասակի ակտիվացած միջնադանդվածներում՝ Արմորիկյան ու Կենտրոնական Փրանսիական, Բոհեմյան, Ռոզոպյան և այլն, վերջին երկու տասնամյակների ընթացքում հայտնագործված են ուրանի, բազմամետաղային հանքանյութերի, ֆլուորիտի, ծարիրի խոշոր հանքավայրեր, որոնք հատուկ են այդ տիպի ստրուկտուրաների համար:

Մյուս կողմից, երեք հարավամերիկյան երկրներում՝ Չիլի, Բոլիվիա ու

Բրազիլիա, որոնց ուսումնասիրման աստիճանը մոտավորապես նույնն է, դիտվում է հանքայնացման բոլորովին այլ բնույթ: Չիլին, որը տեղադրված է ամբողջությամբ հնադարյան օվկիանոսյան մետաղածնային գոտու ներքին մասում՝ պղնձի երկիր է: Բոլիվիան, որը գտնվում է նույն գոտու արտաքին զոնայում՝ անագի ու վոլֆրամի երկիր է: Բրազիլիան տեղադրված է նույնանուն վահանի սահմաններում և բնորոշվում է վահանների համար տիպիկ հանքայնացումով՝ երկաթի, մանգանի, ոսկու և ուրանի մետամորֆոզեն հանքավայրերով, հազվագյուտմետաղային կարբոնատիտներով, արմատաբեր քիմբերլիտներով:

Այսպիսով, տվյալ տարածքի հանքայնացման բնույթը կանխորոշում է ոչ թե մարդի ուսումնասիրության աստիճանը, այլ նրա ստրուկտուրային դիրքը:

Վ. էմմոնսը, ելնելով իր կողմից առաջարկված բաթոլիտային տեսությունից (ներծին հանքայնացման կապը գրանիտոիդային բաթոլիտների հետ) և զոնալությունից (հանքայնացման զոնալ տեղաբաշխումը բաթոլիտների շուրջը և նրանցից վեր), փորձեց մետաղածնային մարդերում դիտվող հանքայնացման բնույթի տարբերությունները բացատրել էրոզիոն կտրվածքի խորությունով:

Սակայն Վ. էմմոնսի բաթոլիտային և զոնալության տեսությունների անկարողությունը այժմ ակնհայտ է:

Հաստատված է, որ ներծին հանքայնացումը կապված է ոչ միայն բաթոլիտների, այլև բավականին հաճախ՝ երկու այլ մագմատիկ օջախների տիպերի, այսպես կոչված, փոքր ինտրուզիաների խորքային օջախների ու հրաբխային ապարատների արմատների հետ: Հայտնի է նաև, որ գրանիտային բաթոլիտները շեն բնութագրվում ունիվերսալ հանքայնացումով և մասնագիտացված են՝ մի մասը անագ-վոլֆրամային, մյուսները՝ պղինձ-մոլիբդենային, կամ ոսկու, ուրանի հանքայնացումով, ընդ որում, սովորաբար, անագ-վոլֆրամային հանքայնացման լայն զարգացումը բացառում է պղնձի հանքայնացման մեծ դերը, հետևապես այդ երկու մետաղները (անագը, պղինձը) անտագոնիստներ են: Ինչ վերաբերում է հանքայնացման զոնալականությունը խորքային օջախի նկատմամբ, այն իրոք դիտվում է, սակայն Վ. էմմոնսի նկարագրած 16 զոնաների անընդմեջ սյունակը դեռ ոչ մի տեղ և ոչ մեկի կողմից չի նշվել:

Փոքր Կովկասում Հայկական ՍՍՀ պղինձ-մոլիբդենային գոտու սահմաններում, օրինակ, հանդիպում է լավ արտահայտված ուղղաձիգ և հորիզոնական զոնալություն՝ վերին հորիզոններում գրանիտոիդների էկզոկոնտակտում զարգացած է բազմամետաղային հանքայնացումը, որը խորքում ու գրանիտոիդների զանգվածների ներսում փոխարինվում է պղինձ-մոլիբդենայինով (Քաջարանի, Ագարակի, Դաստակերտի և ուրիշ հանքադաշտերը), բայց ոչ մի տեղ, նույնիսկ ամենախորը հորիզոններում, պղինձ-մոլիբդենային հանքայնացման անցումը անագ-վոլֆրամային զոնայի չի նկատվում: Դեռ ավելին, անագն ու վոլֆրամը այդ մարզում համարյա բացակայում են:

Հարավային Վրաստանի և Հյուսիսային Հայաստանի պղինձ-կոլչեզանային ու բարիտ-բազմամետաղային հանքային մարդերում (Բոլնիսի ու Ալավերդու շրջանները) նույնպես լավ արտահայտված է ուղղաձիգ զոնալությունը. վերից վար դիտվում է բարիտի անցումը կոլչեզանային տիպի

բազմամետաղային, իսկ ամենախորքում պղինձ և ծծմբակուլչեղանային տիպի հանքանյութերի: Այստեղ ամենախորը հորիզոններում և ուժեղ էրոզիայի ենթարկված տեղամասերում բացակայում են պղինձ-մոլիբդենային և առավել ևս անագ-վոլֆրամային հանքանյութերը: Այսպիսով էրոզիոն կտրվածքի խորությունով կամ էմմոնսի բաթոլիտային ու զոնալուսթյան տեսությունների տեսակետից մետաղածնային մարզերի հանքայնացման բնույթի տարբերությունները անբացատրելի են:

Արտասահմանյան մի շարք գիտնականներ (Բեզգինգտոնը, Գրոուտը և ուրիշներ) առաջարկում են մասնագիտացված ինտրուզիաների հասկացությունը՝ փորձելով հանքայնացման բնույթը կապել ինտրուզիվ ապարների որոշակի տարբերակների հետ: Սակայն պարզվեց, որ մոտավորապես նույն կազմության ինտրուզիաների հետ տարբեր մարզերում կապված է յուրահատուկ հանքայնացում, մի դեպքում՝ պղինձ-մոլիբդենային, մյուս դեպքում՝ բազմամետաղային, ոսկեբեր և այլն, այդ իսկ պատճառով այս ուղղությունը համարվեց անհեռանկարային:

Մետաղածնային մարզերի միջև եղած տարբերությունները փորձեցին բացատրել նաև Երկրի կեղևի ձևավորման ժամանակ տարբեր մետաղների անհավասարաչափ բաշխումով: Այդ տեսակետը հիմնավորվում էր մի շարք մարզերում դիտվող ներծին հանքայնացման ժառանգումով՝ ոսկեբեր, անագաբեր, պղինձաբեր հանքայնացմամբ, որն առաջանում է մի քանի հաջորդական մետաղածնային դարաշրջանների ընթացքում:

Բայց և այս տեսակետը անկարող էր բացատրել միևնույն մարզում հանքայնացման տարբեր տիպերի համատեղ գտնվելը, նրանց հերթափոխումները ժամանակի և տարածության մեջ:

Ուրիշ հետազոտողների կարծիքով տվյալ մետաղածնային մարզի յուրահատկությունները բնորոշվում են մագմայի կողմից ասիմիլացված ապարների կազմով, այդ ապարների հաշվին մագման հարստանում է մետաղներով և ցնդող բաղադրամասերով:

Ըստ Պ. Ն. Կրոպոտկինի, մետաղներով առավել հարուստ հիմքային մագմաները, ասիմիլյացիայի ենթարկվելով ջրով և ցնդող բաղադրամասերով հարուստ թթու գրանիտոիդների կողմից, նպաստում են հանքաբեր հիդրոթերմալ լուծույթների անջատմանը:

Ըստ Ա. Պ. Նիկոլսկու, գրանիտային մագման ասիմիլյացիայի է ենթարկում անագաբեր շրջաններում հաճախ լայն տարածված կավային թերթաքարերը, դառնում է անագաբեր և այդ պայմաններում էլ առաջանում են անագաբեր մարզերը:

Խ. Մ. Աբդուլաևը գտնում է, որ յուրաքանչյուր գրանիտային մագմա պոտենցիալ հանքաբեր է, բայց կարող է առաջացնել հանքավայրեր միայն ներփակող ապարների ասիմիլյացիայի հետևանքով՝ վերջինների հաշվին հարստանալով մետաղներով ու ցնդող բաղադրամասերով:

Այդ հեղինակը, ելնելով վերը նշված ապարների կազմությունից տարբերում է գրանիտային ինտրուզիաների ու նրանց հետ կապված հանքավայրերի երկու շարք.

1. կոնտամինացված ալյումոսիլիկատային նյութով.

2. կոնտամինացված կարբոնատային կամ երկաթա-մագնեզիումային

նյութով, որի դեպքում մագման իր կազմությամբ դառնում է չափավոր թթու (գրանոդիորիտներ, մոնցոնիտներ և այլն)։

Վերոհիշյալ ապարների վճռական դերը հանքայնացման մեջ ընդունում են նաև այն երկրաբանները (Սուլլիվան, Սուդովիկով), որոնք ներծին հանքայնացումը կապում են գրանիտացման երևույթների հետ. գրանիտացնող լուծույթները դուրս են բերում այդ ապարներից հանքային բաղադրամասերը՝ կազմելով հանքաբեր հիդրոթերմալ լուծույթներ, ընդ որում մետաղների մի մասը մետասոմատիկ գրանիտների ապար կազմող միներալներում մնում է ցրված վիճակում։

Մենք այստեղ չենք քննադատում վերը նշված տեսակետները. նշենք միայն, որ նրանցից և ոչ մեկը ի վիճակի չէ բացատրելու մետաղածնային մարզերի առաջացման և նրանց հանքայնացման բնույթի տարբերության պատճառները։

1948—1950 թթ. ՎՍԵԳԵԻ մի խումբ գիտաշխատողներ Յու. Ա. Բիլիբինի գլխավորությամբ սկսեցին մետաղածնային անալիզի հիմունքների մշակման աշխատանքները, որոնք ինստիտուտի կոլեկտիվին հանգեցրին հետևյալ եզրակացություններին (հիմնականում ըստ Յու. Ա. Բիլիբինի, 1955)։

1. Հանքայնացումը Երկրի կեղևի զարգացման ընթացքի կողմերից մեկն է, որը սերտորեն կապված և պայմանավորված է այդ ընթացքի մյուս կողմերի հետ՝ նստվածքակուտակման, ստրուկտուրաների զարգացման, մագմատիզմի ու մետամորֆիզմի հետ։

2. Տարբեր շրջաններում՝ շնայած նրանց միջև եղած մեծ հեռավորությանը և երկրաբանական հասակի տարբերությանը, հանդիպում են նման մագմատիկ կոմպլեքսներ ու ներծին հանքավայրեր։

3. Տարբեր շրջանների ու տարբեր երկրաբանական հասակի մագմատիկ կոմպլեքսները, ինչպես պարզվում է, միմյանց նման են՝ դրանք կազմող ինտրուզիվ ապարների դուզակցումներով։

4. Նման հանքային կոմպլեքսները տարբեր շրջաններում կապված են նույնանման ինտրուզիվ կոմպլեքսների հետ, որը հաստատում է Ս. Ս. Սմիրնովի՝ ինտրուզիվ (կամ մագմատիկ) մասնագիտացված հանքայնացում ունեցող կոմպլեքսների առկայության հայտնի դրույթը։

5. Տարբեր բնույթի ինտրուզիվ և նրանց համապատասխանող հանքային կոմպլեքսները փոխարինում են իրար որոշակի հերթականությամբ, որը պահպանվում է անկախ հասակից ու միմյանցից բավական հեռու գտնվող շրջաններում։

6. Ներծին հանքայնացման ու մագմատիզմի փուլերը համապատասխանում են ծալքավոր շարժուն գոտիների զարգացման նման փուլերին նույնպես անկախ հասակից ու տարածական դիրքից։ Հանքային կոմպլեքսները, որոնք համապատասխանում են ներծին հանքայնացման որոշակի փուլին, առանձնանում են տարածության մեջ՝ կազմելով ստրուկտուրա-մետաղածնային զոնաներ։

7. Ամենավաղ առաջացած ստրուկտուրա-մետաղածնային զոնաները (ու նրանց համապատասխանող ամենավաղ ինտրուզիվ և հանքային կոմպլեքսները) հարում են անտիկլինորիումային տիպի ստրուկտուրաներին, որոնք սկսում են ձևավորվել դեռ նստվածքակուտակման ժամանակ՝ սինկլինորիումային տիպի ստրուկտուրաներից առաջ։

Համեմատաբար ուշ ստրուկտուրա-մետաղածնային զոնաները ձևավորվում են աչգ առանցքային անտիկլինորիումային ստրուկտուրայի թևերում, ամենաերիտասարդ զոնաները տեղաշարժվում են ավելի հեռու, բայց երբեմն վերադրվում են առանցքային ստրուկտուրայի վրա: Առավել երիտասարդ ստրուկտուրա-մետաղածնային զոնաները մի դեպքում իրենցից ներկայացնում են սինկլինորիումային տիպի ծալքեր, մյուս դեպքում՝ եզրային ճկվածքների տիպի ստրուկտուրաներ, որոնք զարգանում են ծալքավոր զոնաների ու վահանների կամ միջնազանգվածների սահմաններում:

Ընդհանուր «ճարտարապետական» (ըստ Յու. Ա. Բիլիբինի) ստրուկտուրա-մետաղածնային զոնաների տեղաբաշխման, ինտրուզիվ ու հանքային կոմպլեքսների զարգացման օրինաչափությունները օգնում են որոնողա-հետախուզական աշխատանքների նպատակասլաց ուղղութայնք, որը յուրաքանչյուր շրջանի մետաղածնային ուսումնասիրման գլխավոր կիրառական նպատակն է:

Յու. Ա. Բիլիբինի ղեկավարած խմբի արած հետևությունները հիմնված են մեծ փաստացի նյութի վրա (հավաքված 30 խոշոր հանքաքեր մարզերի սահմաններում), հիմնավորված են ու արժեքավոր:

Ամենևին չնվազեցնելով այն հսկայական նշանակությունը, որը ունեցել են ՎՍԵՑԵԻ ինստիտուտում կատարված աշխատանքները պետք է նշել, որ աչգ հետազոտություններից անկախ, սկսած 1947 թ. միաժամանակ նման եզրակացությունների է հանդել սույն մենագրության հեղինակը*:

Այսպիսով, առանձին մետաղածնային մարզերի հանքայնացման տարբերությունները կապված են նրանց երկրաբանական զարգացման առանձնահատկությունների և, ինչպես կհամոզվենք հետագայում, մետաղածնային զարգացման առանձին փուլերի արտահայտման ինտենսիվության հետ. իր հերթին այդ բոլորը որոշվում է մարզի ստրուկտուրային դիրքով ու ավյալ տեղամասում Երկրի կեղևի խորքային կառուցվածքով:

Ինչ վերաբերում է մետաղածնային դարաշրջանների հանքայնացման տարբերություններին, աչգ երևույթի բավարար բացատրություններ չկան. իրականում հանքայնացման բնույթը և ինտենսիվությունը որոշակի հանքավայրերի տիպերի ու տարբեր մետաղների կուտակումների առաջացման տեսակետից էպպես տարբերվում են ըստ մետաղածնային դարաշրջանների: Այսպես, մինչքեմբրյան մետաղածնային դարաշրջանին բնորոշ են երկաթի, մանգանի, ոսկու և ուրանի մետամորֆոզեն տիպի հանքավայրեր, որոնք տալիս են հսկայական կուտակումներ երկաթային քվարցիտների, մանգանաքեր գոնդիտների ու ոսկի-ուրանաքեր կոնգլոմերատների մեջ ու շատ թույլ են զարգացած կամ բացակայում են ավելի ուշ դարաշրջաններում:

Մինչքեմբրյան դարաշրջանին բնորոշ են նաև նիկելը և պլատինոիդները լիվվացիոն հանքավայրերում, ախտանը՝ հիստերոմադմատիկ ափում, հազվագյուտ մետաղները՝ պեգմատիտներում, ուրանը և ոսկին՝ հիդրոթերմալ հանքավայրերում:

Հերցինյան մետաղածնային դարաշրջանը բավականին հարուստ է եղել անադրվ ու վոլֆրամով, ուրանով, ոսկով, նաև քրոմով:

* И. Г. Магакьян, О металлогенической специализации в некоторых типах тектоно-магматических комплексов, «Зап. ВМО», ч. 81, № 3, 1952, с. 169—174.

Քիմերյան դարաշրջանում տեղի են ունեցել անագի ու վոլֆրամի խոշոր, նաև ոսկու, ծարիրի ներծին ու երկաթի արտածին (նստվածքային) զգալի կուտակումներ:

Ալպիական դարաշրջանում առաջատար նշանակություն են ձեռք բերում մոլիբդենի, պղնձի, արծաթի ու սնդիկի հիդրոքսիդավ հանքավայրերը. մեծ է անագի, ծարիրի, ոսկու ու շատ մեծ է մանգանի արտածին (նստվածքային) հանքավայրերի դերը:

Մետաղների ռեսուրսների (պաշարների) մոտավոր զննահատումը, ըստ մետաղածնային դարաշրջանների, բերվում է աղյուսակ 1-ում (%-ով), որտեղ հաշվի է առնված պատմականորեն թվագրվող ժամանակաշրջանում կատարված արդյունահանումը:

Աղյուսակ 1

| Մետաղածնային դարաշրջանները | Fe | Mn | Cr | Ni | Mo | W | Sn | Sb | Hg | Cu | Pb-Zn | Au | Pt | U |
|----------------------------|----|----|----|----|----|----|----|----|----|----|-------|----|----|----|
| Մինչքեմբրյան | 75 | 25 | 20 | 70 | — | — | 10 | 5 | — | 25 | 10 | 70 | 70 | 70 |
| Հերցինյան ու կալեդոնյան | 5 | — | 60 | 10 | 5 | 20 | 20 | 5 | — | 10 | 30 | 5 | 20 | 10 |
| Քիմերյան | 15 | 5 | 10 | 20 | 5 | 70 | 60 | 70 | 5 | 5 | 30 | 15 | 5 | 10 |
| Ալպիական | 5 | 70 | 10 | — | 90 | 10 | 10 | 20 | 95 | 60 | 30 | 10 | 5 | 10 |

IV. ՄԵՏԱՂԱԾՆԱՅԻՆ ԱՏՐՈՒԿՏՈՒՐԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԻՊԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Երկրի կեղևի հիմնական խոշոր ստրուկտուրաների մեջ կարելի է առանձնացնել երեք տիպեր՝

1. Վահաններ ու նրանց պլատֆորմներ
2. Ծալքավոր շարժուն զոնաներ
3. Ակտիվացած («Դիվա» տիպի) ստրուկտուրաներ:

Այդ ստրուկտուրաների տիպերից յուրաքանչյուրն ունի օրինաչափ զարգացում մի քանի փուլերով ու յուրաքանչյուր փուլին բնորոշ մետաղածնություն:

Վահանների ու նրանց պլատֆորմների մետաղածնության զարգացման սխեման՝

1. Հսկայական մինչքեմբրյան ավազաններում հզոր հրաբխա-նստվածքային շերտախմբերի կուտակում. էֆուզիվ ապարների հետ սերտորեն կապված են պորֆիրիտների, կերատոֆիրների, սպիլիտների, դիաբազների փոքր սուբհրաբխային ինտրուզիաներ:

Նստվածքային ապարներից լայնորեն զարգացած են ավազաքարերը, թերթաքարերը, քվարցիտները, կոնգլոմերատները, իսկ թթու էֆուզիվների մետամորֆիզմի հետևանքով առաջանում են նրանց թերթավորված տարատեսակները՝ լեպտիտները: Շերտախմբերի հասակը արխեյան ու ստորինպրոտերոզոյան է, նրանք խիստ մետամորֆացված են. մետամորֆիզմի ընթացքում առաջանում են մետամորֆոզեն հանքավայրեր՝ երկաթի (երկաթաչին քվարցիտներում և եղջրաքարերում), մանգանի (մանգանով հարուստ

թերթաքարերում՝ գոնդիտներում), սսկի-ուրանային հանքանյութերի (կոնզլոմերատներում ու քվարցիտներում):

Բացի այդ մետաղների (Fe, Mn, Au, U) մետամորֆոզեն տիպի հսկայական կուտակումներից, այս փուլի համար բնորոշ է պղինձ-կոլչեղանային հանքայնացումը (երբեմն Pb, Zn, As, Au, Ag և ուրիշ խառնուրդներով), որը տեղագրված է լեպտիտներում ու հավանաբար կապված է լեպտիտների վերածված թթու էֆուզիվ շերտախմբերի արմատային մասերի հետ:

Մեծ նշանակություն ունեն և լավ հայտնի են այդ փուլի հետևյալ հանքավայրերը՝

ա) երկաթի հանքանյութերի մետամորֆոզեն հանքավայրերը՝ Կրիվոյ Ռոգ, Կուրսկ-Բելգորոդյան խումբը (ՍՍՀՄ), Վերին լիճ (ԱՄՆ), Իտաբիրա (Բրազիլիա), Բիհար և Օրիսա (Հնդկաստան) ու նույնատիպ հանքավայրեր Ավստրալիայում, Կանադայում, Հյուսիսային Չինաստանում և Կորեայում:

բ) Մանգանի հանքանյութերի մետամորֆոզեն հանքավայրեր Հնդկաստանում, Բրազիլիայում, Գանայում, Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում (ՀԱՀ):

գ) Ոսկի-ուրանաբեր կոնզլոմերատների և քվարցիտների հանքավայրեր (մետամորֆացված հնագույն բրածո ցրտների տիպի՝ Վիտլատերսբանդ՝ ՀԱՀ-ում, Բլայնդ-Ռիվեր՝ Կանադայում, Յակոբինա՝ Բրազիլիայում ու նույնատիպի հանքավայրեր Գանայում, Ֆինլանդիայում):

դ) Պղինձ-կոլչեղանային (ցինկի, կապարի, սսկու, արծաթի խառնուրդներով), ծծմբակոլչեղանային կամ պիրոտին-արսենոպիրիտային լեպտիտների մեջ տեղագրված հանքավայրեր՝ Շվեդիայում (Բոլիդեն, Ֆալուն, Ադաֆ և ուրիշն.), Ֆինլանդիայում (Օուտոկոնպյո), Կարելիայում (Պարանդոլո), Կանադայում (Ֆլին-Ֆլոն, Շերիտ-Գորդոն, Նորանդա և այլն):

2. Հրաբխա-նստվածքային շերտախմբերի կոնսոլիդացում, որը ուղեկցվում է գրանիտացմամբ ու գրանիտոիդների, ավելի հազվադեպ, հիմքային ուլտրահիմքային ինտրուզիաների ներդրումով: Գրանիտոիդների հետ կապված են բազմաթիվ, հաճախ շատ մեծ հանքադաշտեր, որոնք ընդգրկում են հանքավայրերի հետևյալ տիպերը՝

ա) հազվագյուտ մետաղներ պարունակող պեգմատիտներ Be, Li, Ta-Nb, Zr, Sn, U ու Th հանքայնացումով (Բրազիլիայի, Հնդկաստանի, Կանադայի, Աֆրիկայի, Արևմտյան Ավստրալիայի, ՍՍՀՄ-ի պեգմատիտային հանքադաշտեր):

բ) Բարձր ջերմաստիճանային գրեյզենային տիպի քվարց-կասիտերիտային, քվարց-վոլֆրամիտ-մոլիբդենիտային, քվարց-ոսկի-արսենոպիրիտային հանքանյութեր բավականին լայն տարածված Կանադական, Բրազիլական, Աֆրիկական, Հնդկական, Ավստրալիական վահաններում, ինչպես նաև ՍՍՀՄ-ում:

գ) Ուրանային հանքանյութերի հինգտարանոց (Co, Ni, Bi, Ag, U), ուրան-պղինձ-կոբալտային և ուրան-հեմատիտային ֆորմացիաների հիդրոթերմալ հանքավայրեր, որոնք մեծ դեր են խաղում Կանադական, Աֆրիկական ու Ավստրալիական վահանների սահմաններում: Այդ փուլի զարբերների, նորիտների և ուլտրահիմքային ապարների հետ կապված են տիտանամազնետիտային հանքանյութերի (Կանադայում, Տանզանիայում, Հնդկաստանում,

ՄՍՀՄ-ում), քրոմիտի (ՀԱՀ և Հարավային Ռոդեզիայում), որոշ պղինձ-նիկելային լիկվացիոն (Կանադայում ու ՀԱՀ-ում) խոշորագույն հանքավայրեր:

3. Պլատինոմային փուլը նստվածքային, երբեմն էլ էֆուզիվ ապարների ծածկոցի զարգացմամբ, որոնք ծածկում են վահանի հիմքի հնագույն ապարները: Ծածկոցի ապարների հասակն ընդունվում է վերին պրոտերոզոյից (ոֆեֆից կամ սինիից) մինչև շորրորդական դարաշրջանը ներառյալ. լայն զարգացած են պերմոկարբոնի ածխաբեր ավազա-թերթաքարային շերտախմբերը ու հիմքային էֆուզիվների՝ առապների ծածկոցները:

Վահանների տեկտոնական ակտիվացման կապակցությամբ տեղի ունեն խորքային բեկվածքներ, որոնց երկայնքով ներդրվում են հիմքային-ուլտրահիմքային և ուլտրահիմքային-ալկալային, ավելի հազվադեպ գրանիտոդային կազմով ինտրուզիաներ: Այս փուլն ընդգրկում է վերին պրոտերոզոյից մինչև մեզո-կայնոզոյի ժամանակաշրջանը և նրա հետ կապված է հետևյալ հանքավայրերի շարքը՝

ա) կարբոնատիտային հանքավայրեր (Nb, Zr, TR, ապատիտ, ֆլուորապիտ պարունակող), կապված Աֆրիկայի, Բրազիլիայի, Կանադայի, Ռուսական ու Սիբիրական վահանների ուլտրահիմքային-ալկալային ինտրուզիվ միավորների հետ.

բ) ավաստաբեր քիմերիլիտներ (Աֆրիկա, Բրազիլիա, Հնդկաստան, Սիբիր).

գ) ապատիտի ու լոպարիտի հանքավայրեր՝ կապված ալկալային ինտրուզիաների հետ.

դ) պղինձ-նիկելային լիկվացիոն հանքավայրեր (Սիբիրական պլատինոմային):

Ավելի փոքր նշանակություն ունեն ոսկի-սուլֆիդային, մոլիբդենային, անագային հանքավայրերը, որոնք կապված են այդ փուլի գրանիտոդենների հետ:

Մալֆավոր շարժուն զոնաների մետաղածնության գարգացման սխեման

Մալքավոր շարժուն զոնաները զարգանում են գեոսինկլինալային ճեղվածքներում և հանքայնացման պրոցեսը այստեղ կարելի է ենթադրաբանել մի շարք փուլերի. ճկման ու հզոր հրաբխա-նստվածքային շերտախմբերի կուտակման շրջանը հաջորդաբար փոխվում է այդ շերտախմբերի ծալքավորումով, որն ուղեկցվում է ինտրուզիվ ապարների ներդրումով, ապա գեոսինկլինալի ինվերսիայով և, վերջապես, նրա վերածումով կարծր կիսապլատինոմային ստրուկտուրայի:

Մալքավոր զոնաների երկրաբանական ու մետաղածնային զարգացման ընթացքում սովորաբար տարբերում են չորս հաջորդական փուլեր՝ վաղ, միջին, ուշ և վերջին, որոնց համառոտ բնութագիրը տրվում է ստորև:

Վաղ փուլը բնորոշվում է գեոսինկլինալի մինչծալքավոր զարգացմամբ, այսինքն նրա ճկումով և հզոր հրաբխա-նստվածքային շերտախմբերի կուտակումով (տերիզեն-կարբոնատային նստվածքներ, պորֆիրիտներ, սպիլիտ-կերատոֆիրներ և այլն), որն ուղեկցվում է սուբհրաբխային քվարց-պորֆիրների, ալբիտոֆիրների, դացիտների փոքր ինտրուզիաների ներդրումով:

Փոքր-ինչ ուշ տեղի է ունենում գաբրո-պերիդոտիտների, դոնիտների ու պիրոքսենիտների դիֆերենցիալ ձևի շեղումները ինտրուզիաների ներդրումը: Այդ փուլում հրաբխային շերտախմբերում (սպիլիտ-կերատոֆիրներ, պորֆիրիտներ) առաջանում են կոլչեղանային, գլխավորապես պղնձային, նաև բարիտ-բազմամետաղային ու ծծմբակոլչեղանային խոշոր հանքավայրեր, որոնք լայն տարածված են և ունեն տարբեր երկրաբանական հասակ (միջինպալեոզոյան՝ Ուրալում և Հյուսիսային Կովկասում, մեզոկայնոզոյան՝ Անդրկովկասում, Բալկաններում, Թուրքիայում, Ճապոնիայում, ԱՄՆ-ում և մի շարք այլ երկրներում): Այդ նույն ժամանակ հրաբխա-նստվածքային շերտախմբերում առաջանում են էքստրալպցիոն-նստվածքային տիպի երկաթի (հեմատիտային), մանգանի (պիրոլուզիտ-պսիլոմելան-բրաունիտային) կամ խառն երկաթա-մանգանային հանքանյութերի կուտակումներ, որոնք լայն զարգացած են Խաղաղօվկիանոսյան ու Միջերկրածովային մեզոկայնոզոյան հասակի հրաբխային գոտիներում (Բալկանների, Թուրքիայի, Անդրկովկասի, Իրանի, Ճապոնիայի, Ֆիլիպինյան կղզիների, Մեքսիկայի, ԱՄՆ-ի հանքավայրերը): Նման հանքավայրեր հայտնի են նաև Ղազախստանի, Ուրալի, ԳՖՀ, Շվեյցարիայի պալեոզոյի հասակի հրաբխային շերտախմբերում: Այս փուլի հիմքային-ուլտրահիմքային ինտրուզիաների հետ սերտ կապված են բուն մագմատիկ տիպի տիտանամագնետիտի, քրոմիտի, պլատինի խմբի մետաղների ու երևի ալմաստի հանքավայրեր:

Վաղ փուլը ու նրան բնորոշ հանքավայրերի միակցությունը ավելի ցայտուն արտահայտված է Ուրալում, Միջերկրածովային ու Խաղաղօվկիանոսյան մետաղածնային գոտիների ներքին զոնաներում և կապված է այդ տեղամասերում օվկիանոսային տիպի կեղևի (բազալտների ու նրանց հիմքային-ուլտրահիմքային և շափավոր թթվության ածանցյալների) զարգացման հետ:

Միջին փուլը բնորոշվում է գետտինկլինալում ինտենսիվ ծալքավորման շարժումներով, որը սովորաբար ուղեկցվում է շափավոր թթվության գրանիտոիդների մեծ զանգվածների ներդրումով: Իշխում են պլազիոգրանիտները, գրանոլիորիտները, մոնցոնիտները, որոնց հետ կապված է մետաղային հանքավայրերի հարուստ շարք՝

ա) երկաթի, վոլֆրամի (շեելիտաբեր սկաններ), պղնձի, մոլիբդենի, բազմամետաղային հանքանյութերի, երբեմն անադի, բերիլիումի, նիոբիումի սկանային հանքավայրեր:

բ) պղնձի և պղինձ-մոլիբդենային հանքանյութերի երակիկա-ցանավոր և մասամբ երակային հիդրոթերմալ միջին շերմաստիճանային հանքավայրեր:

գ) պղինձ-մոլիբդենային տիպի հետ հաճախ կապված բազմամետաղային ու ոսկի-սուլֆիդային (ոսկի-բազմամետաղային) երակային հանքավայրեր:

դ) անտիմոնիտ-կլինոլաբ-ֆլյուորիտային ու առանձին դեպքերում ուրանի խեժի հանքավայրեր:

Այդ հանքավայրերի միակցությունը, ինչպես և միջին փուլի լավ արտահայտումը, սովորաբար տարածականորեն համընկնում է վաղ փուլի ուժեղ զարգացման հետ. վաղ ու միջին փուլերի հանքանյութումը բնորոշ է Ուրալի, Միջերկրածովային և Խաղաղօվկիանոսյան մետաղածնային գոտիների ներքին զոնաներին:

Ուշ փուլը համընկնում է ծալքավորման եզրափակիչ շրջանին, երբ գեոսինկլինալում տեղի է ունենում թթու գրանիտների ներդրում, որից հետո այն ենթարկվում է ինվերսիայի:

Այդ թթու գրանիտները Յու. Ա. Իլիբինը առաջարկում է անվանել «ինքնուրույն», բնդգծելով, որ նրանք բազալտային շերտի ածանցյալներ չեն հանդիսանում ու իրենցից ներկայացնում են սիալիկ պատյանի, սովորաբար ավազաքար-թերթաքարային կազմության ապարների, վերածուլման արդյունք: Սակայն այդպիսի վերածուլման համար անհրաժեշտ են տեկտոնական ինտենսիվ բեկորատում, սիալիկ պատյանի ապարների խորասուզում, որը տեղի է ունենում Երկրի կեղևի առանձին սահմանափակ հատվածներում որոշ ժամանակաշրջաններում:

Այստեղից բխում է այն փաստը, որ ուշ փուլը զարգացած է լուկալ, սովորաբար մետաղածնային գոտիների արտաքին զոնաներում, ծալքավոր զոնայի ու վահանի սահմանամերձ մասում, մեկուսանալով այն շրջաններից, որտեղ ուժեղ զարգացած են վաղ ու միջին փուլերը. ուշ փուլի թթու (հաճախ կալիումային) գրանիտների հետ կապված է հանքավայրերի հետևյալ շարքը՝

ա) գրանիտային պեգմատիտներ հազվագյուտ մետաղների (անագ, տանտալ, նիոբիում, բերիլիում, լիթիում և այլն) հանքայնացումով.

բ) քվարց-կասիտերիտային, քվարց-վոլֆրամիտ-մոլիբդենիտ-բերիլիումային ֆորմացիաների գրեյզենային ու հիդրոթերմալ բարձր ջերմաստիճանային հանքավայրեր, հաճախ սերտ կապված հազվագյուտմետաղային պեգմատիտների հետ.

գ) ոսկեբեր քվարցի ու ոսկի-սուլֆիդային հիդրոթերմալ բարձր-միջին ջերմաստիճանային տիպի հանքավայրեր.

դ) սուլֆիդ-կասիտերիտային ու բազմամետաղային (կասիտերիտի խառնուրդով) հանքավայրեր.

ե) ծարիր-անդիկային ու ծարիրի հանքավայրեր.

զ) անագ-վոլֆրամային կամ բազմամետաղային հանքայնացման հետ սերտ կապված ուրանի հանքավայրեր: Հանքավայրերի այդ միակցությունը, ինչպես նաև ուշ փուլի ու թթու գրանիտների զարգացման մարդերը տարածականորեն առանձնանում են նախորդ երկու (վաղ ու միջին) փուլերի զարգացման շրջաններից. նրանք լավ են արտահայտված Արևմտյան Եվրոպայի ու Ղազախստանի հերցինիդներում և Ասիայի հյուսիսարևելյան, ու հարավարևելյան, Բուլղարիայի և Հյուսիսային Արգենտինայի մեզոկայնոզոյան ստրուկտուրաներում: Ուշ փուլը թույլ է զարգացած կամ բոլորովին բացակայում է Ուրալում և Միջերկրածովային ու Խաղաղօվկիանոսյան մետաղածնային գոտիների ներքին զոնաներում:

Վերջին փուլը տեղի է ունենում հետծալքավոր շրջանում գեոսինկլինալի ինվերսիայի ավարտումից ու նրա՝ կարծր կիսապլատֆորմային ստրուկտուրայի վերածումից հետո: Այստեղ լայն զարգացած են հետծալքավոր ճեղքային փոքր ինտրուզիաներ, գլխավորապես շափավոր թթվուլթյան գրանիտոիդներ, որոնց հետ կապված է հանքավայրերի յուրահատուկ մի շարք՝

ա) պղինձ-անագային (Ճապոնիայում) ու պղինձ-տուրմալինային (Չիլիում) ֆորմացիաների բարձր ջերմաստիճանային հիդրոթերմալ մերձակերեսային հանքավայրեր.

բ) ոսկու, ոսկի-արծաթային, ծարիր-անդիկային (Ֆերբերիտի կամ շեն-

լիտի, օսկու և արծաթի տելուրիդների խառնուրդով), սեւալար-աուրիպիգ-մենտային, ուրանի խեժի ցածր ջերմաստիճանային հիդրոթերմալ մերձակերեսային հանքավայրեր:

Վերջնական փուլը ու նրա հետ կապված հանքային կոմպլեքսը հանքաքեր շրջանի ամենից երիտասարդ առաջացումներն են. նրանք հաճախ տարածականորեն վերազրվում են մի կողմից վաղ ու միջին, մյուս կողմից՝ ուշ փուլերի զարգացման մարզերի վրա:

Վերջնական փուլի հանքայնացումը լայն զարգացած է Անդրկովկասում, Բալկաններում, Անդրբայկալում, Սովետական Միության հյուսիս-արևելքում, ԱՄՆ-ի արևմտյան նահանգներում, Մեքսիկայում և այլուր:

Վերը նշված ծալքավոր շարժուն զոնաների շրտփուլանոց զարգացման հետևանքով առանձնացվում են երկու տարբեր տիպի մետաղածնային զոնաներ ու մարզեր՝

Առաջին տիպը բնորոշվում է վաղ ու միջին փուլերի ինտենսիվ զարգացմամբ, որոնց վրա երբեմն վերադրված է վերջնական փուլը: Դրանց օրինակներն են Ուրալը, Կովկաս—Անդրկովկասը, Բալկանները, ԱՄՆ-ի արևմտյան նահանգները, Մեքսիկան, Չիլին, Ճապոնիան և ուրիշ.:

Երկրորդ տիպը բնորոշվում է ուշ փուլի ինտենսիվ զարգացմամբ, որի վրա երբեմն վերադրված է վերջնական փուլը: Այս տիպի մարզերի օրինակներն են Արևմտյան Եվրոպան, Կենտրոնական Ղազախստանը, Անդրբայկալը, Ասիայի հյուսիս-արևելքն ու հարավ-արևելքը, Բուլիվիան և այլն:

Կարելի է ավելացնել, որ առաջին տիպի մարզերը տեղադրված են մետաղածնային գոտիների ներքին զոնաներում, որոնք ստորադրված են օվկիանոսային տիպի կեղևով ու բնութագրվում են ուլտրահիմքային, հիմքային և հատկապես չափավոր թթվության գրանիտոիդային մագմաների լայն տարածմամբ. նրանց հետ կապված է համապատասխան հանքայնացում՝ Cr, Ti, Pt-ի խմբի մետաղներ, Fe, Cu, Mo, Pb-Zn, Au, Hg, Sb և ուրիշներ:

Երկրորդ տիպի մարզերը տեղադրված են մետաղածնային գոտիների արտաքին զոնաներում և ստորադրված են սիալիկ տիպի կեղևով ու բնութագրվում են թթու գրանիտոիդների լայն տարածմամբ, որոնց հետ կապված է յուրահատուկ մետաղածնություն՝ Sn, W, Mo, Be, Au, Pb-Zn, Sb, U և այլն: Կարևոր է ընդգծել, որ ծալքավոր գոտիների զարգացման առանձին փուլերն ու նրանց համապատասխանող հանքավայրերի կոմպլեքսները առանձնանում են տարածության մեջ որոշակի զոնաներում, որոնք բնութագրվում են նստվածքակուտակման, ստրուկտուրաների, մագմատիզմի ու հանքայնացման առանձնահատուկություններով. այդպիսի զոնաները կոչվում են ստրուկտուրա-մետաղածնային: Յուրաքանչյուր զոնայում զարգացած են մագմատիզմի ու հանքայնացման մի քանի փուլ, բայց սովորաբար իշխում են միայն մեկ-երկու փուլ, որը պայմանավորում է մետաղածնային զոնայի առանձնահատուկությունները ու հնարավորություն է տալիս գիտական հիմունքներով տանել որոնողական աշխատանքները:

Ակտիվացած զոնաների մետաղածնության զարգացման սխեման

Ակտիվացած զոնաները (այլ կերպ՝ Ֆրանսիայի երկրաբանների ռեակտիվացման շրջանները, Ե. Դ. Կարպովայի կամարա-մեծաբեկորային մարզերը, Ա. Դ. Շչեգլովի ավտոնոմ ակտիվացման մարզերը և այլն), որպես երկրի

կեղևի երրորդ խոշոր ստրուկտուրային միավոր առանձնացված են նորերս-
Չինացի երկրաբան Չեն-գո-դան ու սովետական երկրաբան Գ. Յ. Միրչինկը
«ղիվա» ստրուկտուրաների տիպի տակ հասկանում էին գեոդեպրեսիաներ,
այսինքն իջվածքներ Երկրի կեղևում, որոնք զարգանում են հետպլատֆոր-
մային կոնտինենտալ շրջանում: Այդ ստրուկտուրաների հասակը տարբեր է՝
պրոտոերոզոյան, ուշպալեոզոյան, մեզոզոյան ու կայնոզոյան:

Ա. Գ. Շչեգլովը ակտիվացած շրջանները ստորաբաժանում է երեք տի-
պերի.

1. Մալբավորումը ավարտած ակտիվացած շրջաններ (Անդրբայկալ,
Տյան-Շան, Մայաններ, Ժայռոտ լեռներ):

2. Ակտիվացած միջնադանգվածներ (Մեսետա, Արմորիկյան, Կենտրո-
նական Ֆրանսիայի, Բոհեմյան, Ռոդոպյան, Բուրեխյան, Ուսուրի-Խանկայան
և այլն):

3. Ակտիվացած վահաններ ու պլատֆորմներ (Արևելյան Աֆրիկայի ռիֆ-
տային սիստեմները, Բրազիլական վահանը, Միբիրական ու Չինա-Կորեական
պլատֆորմները, Ալդանը, Բալթյան զանգվածը և ուրիշներ):

Ակտիվացումն արտահայտվում է կամարային բարձունքների և իջվածք-
ների առաջացմամբ, որոնք երբեմն բարդացված են նեղ գրաբեկներով՝ «ռիֆ-
տային սիստեմներով», խախտումներով. վերջինները ուղիներ են հանդիսա-
նում ալկալային գրանիտոիդների, ավելի հազվադեպ ուլտրահիմքային-ալ-
կալային ու հիմքային-ուլտրահիմքային ինտրուզիաների ներդրման համար-
այդ տիպի ինտրուզիաները բնորոշվում են հատուկ հանքայնացումով:

Ակտիվացման ընթացքում առաջացած իջվածքներում տեղի են ունենում
ավազաբարա-թերթաբարային հզոր շերտախմբերի կուտակում, կրաքարերի
ու կոնգլոմերատների ենթակա դերով, որոնք նման են մոլասների տիպի
նստվածքներին. երբեմն այդ կոնտինենտալ ու ավելի հազվադեպ ծովային
նստվածքները շերտավորված են հրաբխային տուֆերով, ռիոլիտներով և բա-
զալտներով: Եատ դեպքերում այդ իջվածքների նստվածքները ածխաբեր են:

Ինտենսիվ հանքայնացումը կապված է ակտիվացման փուլի ինտրուզիվ
ապարների հետ, որոնք ներկայացված են արտագետսինկլինալային ճեղքային
կամ կենտրոնական տիպի օդակային կոմպլեքսներով:

Գրանիտոիդների (սովորաբար ալկալիներով հարստացած) ու ալկալա-
յին ինտրուզիաների հետ կապված են վոլֆրամի, մոլիբդենի, ոսկու, բազմա-
մետաղային հանքանյութերի, ծարիրի ու սնդիկի, ուրանի, ֆլյուորիտի հիդ-
րոթերմալ հանքավայրերը: Ուլտրահիմքային-ալկալային կոմպլեքսների հետ
կապված են կարբոնատիտային հազվագյուտմետաղային (Nb, Zr, TR և ու-
րիշն.) հանքանյութերի խոշոր կուտակումներ, քիմերիլիտների հետ՝ ավաստի
հանքավայրեր:

Հանքաբեր մագմատիկ կոմպլեքսների, ինչպես և հանքայնացման հա-
սակը տարբեր է՝ պրոտոերոզոյանից մինչև վերին երրորդականը ներառյալ,
ընդ որում ակտիվացած մի շարք շրջաններում մագմատիվը և հանքայնա-
ցումը տարբեր հասակի են (Անդրբայկալում, օրինակ, վերին յուրայի ու հետ-
կավճյան, Բրազիլիայում՝ դեոնյան ու մեզոզոյան):

Ակտիվացած շրջանների հանքայնացումն ունի իր առանձնահատկու-
թյունները և տարբերվում է վահանների ու նրանց պլատֆորմների, ինչպես
նաև ծալքավոր շարժուն գոտիների հանքայնացումից. սակայն անհրաժեշտ է

նշել, որ չնայած այդ ինքնուրույնությանը, ակտիվացած մարզերին բնորոշ մի շարք հանքային ֆորմացիաները բավական սովորական են նաև ծալքավոր գոտիների զարգացման վերջնական փուլի համար: Այդ վերաբերում է ցածր ջերմաստիճանային ոսկի-արծաթային (հաճախ տելուրով), ստիբնիտ-ֆերբերիտային կամ ստիբնիտ-շեելիտային, բաղամետաղային, ուրանային ու ֆլյուորիտային հանքային ֆորմացիաներին:

Այստեղից առաջանում են դժվարություները մի կողմից ծալքավոր զոնաների վերջնական փուլի, մյուս կողմից՝ ակտիվացման փուլի նույնանման հանքային ֆորմացիաների առանձնացման հարցում. այդ դժվար է նաև այն պատճառով, որ ոչ միայն հանքայնացման տիպը, այլև տեկտոնական պայմանները նման են՝ երկուսն էլ առաջանում են հետծալքավոր ժամանակաշրջանում: Այդ երկու նման տիպերը տարբերելու միակ հուսալի եղանակը կապված է հանքայնացման հասակի որոշման հետ. օրինակ, մինչքեմբրյան վահաններում կամ հերցինյան միջնազանգվածներում մեզոկայնոզոյան հասակի հանքայնացման հայտնաբերումը խոսում է ակտիվացման օգտին: Մյուս կողմից, ստրուկտուրաների սահմաններում զարգացած վաղ ու միջին (առաջին տիպի մարզերում), կամ ուշ (երկրորդ տիպի մարզերում) և վերադրված հանքայնացման մոտ հասակը հաստատում է վերջնական փուլի զարգացման հավանականությունը:

V. ՎԱՀԱՆՆԵՐԻ ՈՒ ՆՐԱՆՑ ՊԼԱՏՖՈՐՄՆԵՐԻ ՄԵՏԱԳԱՇՆՈՒԹՅՈՒՆԸ

Վահաններն ու նրանց պլատֆորմները մեր կողմից միավորված են երկու խմբերում. հյուսիսային խումբը ընդգրկում է 1. Արևելաեվրոպական (Ռուսական) վահանն ու նրա պլատֆորմը, 2. Սիբիրական վահանն ու նրա պլատֆորմը, 3. Չինա-Կորեական վահանն ու նրա պլատֆորմը, 4. Կանադական վահանն ու նրա պլատֆորմը, իսկ հարավայինը՝ 5. Աֆրիկա-Արաբական վահանն ու նրա պլատֆորմը, 6. Հնդկական վահանն ու նրա պլատֆորմը, 7. Արևմտաավստրալիական վահանն ու նրա պլատֆորմը, 8. Գվինական վահանն ու նրա պլատֆորմը, 9. Բրազիլական վահանն ու նրա պլատֆորմը, 10. Անտարկտիկական վահանն ու նրա պլատֆորմը: Վահանների հյուսիսային խումբը, ըստ երևույթին, իրենից ներկայացնում է կավրասիա հնադարյան մայրցամաքի մասերը, իսկ հարավայինը՝ Գոնդվանա մայրցամաքի առանձնացած բեկորները:



Ստորև բերվում է այդ վահանների ու նրանց պլատֆորմների համառոտ նկարագրությունը:

Առանձնացրած վահանների և նրանց պլատֆորմների ու ծալքավոր շարժուն գոտիների դասավորման սխեման ներկայացված է № 1 նկարում:

1. Արևելաեվրոպական (Ռուսական) վահանն ու նրա պլատֆորմը գրավում են ՄՄՄ-ի տարածության եվրոպական մասը ու նրան կից Ֆինլանդիայի, Շվեդիայի, Նորվեգիայի հարավային մասի, ինչպես նաև Լեհաստանի, ԳԴՀ-ի ու Գանիայի տարածքը 5 մլն. կմ² ընդհանուր մակերեսով (նկ. 2):

Մինչքեմբրյան բյուրեղային վահանի հիմքը ծածկված է պալեոզոյան ու մեզոկայնոզոյան հասակի նստվածքային ապարների ծածկոցով. բյուրեղային ապարները մերկանում են Բալթյան և Սարմատյան (Ուկրաինա-Վրոնեսիյան) դանգվածների սահմաններում:

Բալթյան զանգվածի հնագույն զնեյսները, որոնք պրոտոպլատֆորմի մնացորդներ են, ունեն 2800—2700 մլն. տարի բացարձակ հասակ. նրանք հանքազուրկ են: Ավելի երիտասարդ Բելոմորյան (կամ Սվիոնյան) ֆորմացիան 2100—1900 մլն. տարի հասակով, ներկայացված է գլխավորապես զրանիտներով, որոնք ուղեկցվում են մուսկովիտ ու հազվագյուտ մետաղներ պարունակող պեգմատիտներով: Հնագույն ֆորմացիաները եզրապատված են Կարելիդների (Սվեկոֆենիդների) գեոսինկլինալային ծալքավոր նեղ զոնանե-



նկ. Չ—Ռուսական պլատֆորմի միւլքեմբրյան տեկտոնիկայի քարտեզ (ըստ Ն. Պ. Սեմենենկոյի).
 Կ—Ա՝ կատարիսեյան ծալքավորում (2700—3500 մլն. տ.), Ա՝ արխեյան ծալքավորում (1900—2700 մլն. տ.), Կ՝ կարելա-կրիվորոժյան ծալքավորում (1700—2000 մլն. տ.), Ս—Ֆ՝ սվեկոֆենյան ծալքավորում (1700—2000 մլն. տ.), Վ՝ վոլինյան (հետկարելական) ծալքավորում (1500—1700 մլն. տ.), Գ—Օ՝ գոտսկ-օվրուչյան ծալքավորում (1150—1500 մլն. տ.), Բ՝ րիֆեյան ծալքավորում (540—1150 մլն. տ.):

րով, որոնց բացարձակ հասակն է 1300—1760 մլն. տարի: Այդ ժամանակ է առաջացել Լադոգյան զնեյսների, հրկաթային քվարցիտների, էֆուզիվների ֆորմացիան, որը ներդրված է պեգմատիտներով ուղեկցվող զրանիտներով: Թերթավորված էֆուզիվների՝ լեպտիտների մեջ տեղադրված են կոլչեզանային հանքավայրերը (ծծմբակոլչեզանային Պարանդովան Կարելական ԱՍՍՀ-

ում, պղինձ-կոբալտային Օուտոկումպո հանքավայրը Ֆինլանդիայում, պղինձ-ոսկի-մկնդեղային Բոլիդեն հանքավայրը Շվեդիայում և այլն)։

Հին գնեյսային ֆորմացիաների վրա աններդաշնակ տեղադրվում են տերիգեն շերտախմբեր՝ Յատուլյանը (քվարցիտներ, կոնգլոմերատներ ու դիաբազներ, բացարձակ հասակը 1500—1300 մլն. տարի) ու Իոտոյան-խոզլանդյան ֆորմացիան (ավազաքարեր ու Վիբորգի շրջանի ռապակիվի գրանիտներ)։ Ռապակիվի գրանիտների բացարձակ հասակը 1200—1000 մլն. տարի է։

Ֆինլանդիայում Յատուլյան ֆորմացիայի կոնգլոմերատների ու ավազաքարերի հետ կապված է մետամորֆոզեն տիպի ոսկի-ուրանային հանքայնացում։

Բալթյան վահանի ու հատկապես Կոլայի թերակղզու տարածքում տեղի է ունեցել ակտիվացում, արտահայտված բազմիցս նորոգվող խորքային խզումներով, որոնց երկայնքով ներդրվել են մագմատիկ ապարներ՝ վերին պրոտերոզոյում ուլտրահիմքային-հիմքային զանգվածներ ու գրանիտոիդներ, միջին պալեոզոյում ուլտրահիմքային-ալկալային և հերցինյան ժամանակաշրջանում ալկալային ապարներ։

Պրոտերոզոյի հասակի գրանիտոիդների ու դաբրոդիաբազների հետ կապված է բազմատեսակ հանքայնացում՝ պղինձ, տիտան, կապար, ցինկ, մոլիբդեն, անագ, արծաթ (Սպիտակ ծովի առափնյա շրջանի արծաթի հանքավայրերը սպառված են, սակայն Նորվեգիայում մշակվում են Կոնգսբերգը և ուրիշներ)։ Պեչենգայի ու Մոնչեգորսկի պրոտերոզոյան ուլտրահիմքային և հիմքային կոմպլեքսների ինտրուզիաների հետ են կապված պղինձ-նիկելային հանքանյութերի (Co, Pt, Pd-ի խառնուրդով) լիվլացիոն հանքավայրերը։ Նման հանքավայրեր հայտնի են նաև Ֆինլանդիայում, Շվեդիայում, Հարավային Նորվեգիայում։ Կովդորի, Աֆրիկանդայի, Վուորի-Յարվիի և ուրիշ ուլտրահիմքային-ալկալային կոմպլեքսների հետ են կապված տիտանամագնետիտային հանքանյութերի հանքավայրերը, հազվագյուտհողային կարբոնատիտները (պիրոքլորով, ցիրկոնով, բաստնեզիտով, պարիզիտով և այլն) և ֆլուգոպիտի ու վերմիկոլիտի հանքավայրերը։ Ա. Ա. Կուխարենկոյի տվյալներով (1958 թ.) այդ զանգվածների և հանքավայրերի հասակը կազմում է 305—375 մլն. տարի, այսինքն միջինպալեոզոյան է։

Հերցինյան հասակի ալկալային ապարների հետ կապված են Նիբիինի ապատիտի խոշոր ու կովոզերոի հազվագյուտմետաղային (նիոբիում, հազվագյուտ հողեր) հանքավայրերը։

Այսպիսով, Բալթյան վահանի սահմաններում առանձնացվում են հանքավայրերի հետևյալ գլխավոր տիպերը.

1. Պեգմատիտներ մուսկովիտով ու հազվագյուտ մետաղներով, կապված Բելոմորյան, Լադոգյան գրանիտների հետ։

2. Սկառնային մագնետիտային հանքանյութերի (Վիբորգ) ու անագ-ցինկային (Պիտկյարանտա) հանքավայրեր, կապված Վիբորգի ռապակիվի գրանիտների հետ. սկառնային զոնաներում տեղ-տեղ հաստատված են հելվին և խրիզոբերիլ միներալները։

3. Քվարց-մոլիբդենիտային (հաճախ խալկոպիրիտի խառնուրդով) հանքավայրերը Կարելյական ԱՍՍՀ-ում, Ֆինլանդիայում, Շվեդիայում, Նորվեգիայում, կապված Լադոգյան գրանիտների հետ։

4. Կոլչեղանային հանքավայրեր սպիլիտա-կերատոֆիրների ու լեպտոտների մեջ (Պարանդովո, Օուտոկումպո, Բուրդեն, Ֆալուն և այլն):

5. Պղինձ-նիկելային լիկվացիոն հանքավայրեր (Co, Pt, Pd-ի խառնուրդով), կապված պրոտերոզոյի հասակի ուտրաճիմքային-հիմքային կոմպլեքսների հետ՝ Պեչենգա, Մոնչեգորսկ, Մակկալա և ուրիշ.:

6. Տիտանամազնետիտային, ապատիտ-մագնետիտային (կարբոնատիտներով), ֆլոզոպիտային, վերմիկոլիտային հանքավայրեր, կապված միջին-պալեոզոյի հասակի ուտրաճիմքային-ալկալալային կոմպլեքսների հետ (Աֆրիկանդա, Կովդոր և ուրիշ.):

7. Նեֆելին-ապատիտային (խիբինի) ու լոպարիտային (կովոզերո) հանքավայրեր, կապված հերցինյան հասակի ալկալային կոմպլեքսների հետ:

8. Երկաթային քվարցիտներ (Օլենեգորսկ, Զյուզվարանգներ և ուրիշ.) վերին արխեյան-ստորին պրոտերոզոյան հասակի կադոզյան շերտախմբի մեջ:

9. Կիանիտի հանքավայրեր վերին արխեյան Կեյվա ֆորմացիայի բյուրեղային թերթաքարերում (Ա. Ե. Ֆերամանի անվան հանքավայր):

10. Ոսկի-ուրանաբեր կոնգլոմերատներ (վերին արխեյան կամ ստորին պրոտերոզոյան հասակի) Ֆինլանդիայում ու Կարելիական ԱՍՍՀ-ում*:

Հարկ է նշել, որ Կոլայի թերակղզում և Հյուսիսային Շվեդիայում հայտնի են քիմբերլիտանման ապարներ, որոնց հետ հավանաբար կապված են այդ շրջանների գետաբերվածքներում արմատի եղակի հայտնաբերումները:

Սարմատյան (Ուկրաինա-Վորոնեժյան) զանգվածի սահմաններում հնագույն գոյացումներ են հիմքի գնեյսները, որոնց բացարձակ հասակը 2800—2500 մլն. տարի է: Գնեյսների զանգվածները եզրապատվում են թերթաքարերից, հրաբխածիններից, երկաթային քվարցիտներից կազմված հին գեոսինկլինալային՝ Կրիվոյ Ռոզի (բաց. հաս. 2600—1900 մլն. տ.), Կուրսկի (2600—1900 մլն. տ.) ու Օրնխովո-Պավլոգրայան (2300—2100 մլն. տ.) զոնաներով: Արխեյան-ստորին պրոտերոզոյան հիմքի վրա աններդաշնակ տեղադրված են Օվրուչյան հաստվածքի ավազաքարերը և քվարցիտները 1500—1360 մլն. տ. բաց. հասակով: Սարմատյան զանգվածի ինտրուզիվ գոյացումներից հնագույններն են Պավլոգրայան (բաց. հաս. 2300—2100 մլն. տ.) և Չուզնովոբերդիչևյան գրանիտները ու Պոդոլյան գնեյսները (հասակը 2000 մլն. տ. ավելի), որոնց հետ կապված են պեզմատիտները և հազվագյուտհողային հանքայնացումը:

Փոքր-ինչ ավելի երիտասարդ են Պոբուժյան շառնոկիտա-մոնցոնիտները, գնեյսներն ու գաբրոպերիդոտիտները, որոնց հասակն է 2000—1900 մլն. տ.: Պերիդոտիտների հետ կապված են քրոմիտի աննշան երևակումներ, իսկ Վոլոնեժի շրջանի գաբրո-պերիդոտիտներում հայտնաբերված են լիկվացիոն տիպի պղինձ-նիկելային հանքանյութերի (Co, Pt, Pd-ի խառնուրդներով) կուտակումներ, որոնք Կոլայի թերակղզու հանքայնացման նմանակներն են: Օվրուչյան գրանիտների (բաց. հաս. 1400 մլն. տ.) հետ կապված է հազվագյուտմետաղային հանքայնացումը՝ կասիտերիտ, վոլֆրամիտ, կոլումբիտ,

* Ա. Գ. Շչեզլովի բանավոր հաղորդման համաձայն (1972 թ.) Բալթյան վահանի արեվելյան մասում հայտնաբերված են ծարիրի ու սնդիկի երևակումներ, իսկ Ֆինլանդիայում շեկիտ-տորմալինային խողովակաձև հանքամարմիններ, հավանաբար կապված ալտիվացման պրոցեսների հետ:

թորիտ: Ավելի երիտասարդ են Կորոստենյան ռապակիվի գրանիտները (բաց-
հաս. 1200—1100 մլն. տ.), որոնք ուղեկցվում են պլեզոքվարցի հանքավայ-
րերով: Մոտավորապես նույն հասակի է Մերձազովյան ալկալային կոմպլեք-
սը (բաց. հաս. 1000 մլն. տ.), որը հաճախաբար կապված է արդեն Սարմատ-
յան զանգվածի հարավային մասի ալտիվացման հետ և ուղեկցվում է կար-
բոնատիտներով պիրոքլորային ու ցիրկոնիումային հանքայնացումով (Պետ-
րովսկո-Գնուտովյան, Պոկրովսկո-Կիրեևյան և ուրիշ հանքավայրեր):

Գոնբասում և նրա Մերձազովյան շրջանի միակցման զոնայում, վերին-
պալեոզոյան-մեզոզոյան (°) փուլի ալտիվացման ու բարձր ալկալիություն
անդեզիտային ինտրուզիաների հետ կապված են ֆլյուորիտի (Վոլնովախ-
յան հանքային մարզ), ծարիր-սնդիկային (Նիկիտովկա) ինչպես նաև ոսկի-
բազմամետաղային (Նագոլնի կրյած) հանքանյութերի հանքավայրեր:

Գոնբասի և Մերձազովյան մարզի միակցման զոնայում, ինչպես նաև
Տետերև, Հյուսիսային Բուզ, Գնեստր և Ազովյան ծովի հյուսիսային ափի
ալյուվիալում հայտնաբերված են ալմաստ ու նրան ուղեկցող պիրոպը: Կրի-
վոյ Ռոգի և Կուրսկի երկաթային քվարցիտների ֆորմացիաներում տեղադրված
են հոծ մարտիտային ու հեմատիտային հանքավայրեր. նրանք մետամորֆո-
զեն ծագման են հողմնահարման պրոցեսների վերադրմամբ (Կրիվոյ Ռոգ,
Յակովլևսկոյե, Գոստիշչևսկոյե), որոնք երկաթի հարուստ հանքանյութերի
պաշարներով աշխարհում գրավում են առաջին տեղը:

Կրիվոյ Ռոգի շերտախմբի ստորին մասի կոնգլոմերատներն ու երկաթա-
յին քվարցիտների արդ հորիզոնները հարստացած են ոսկով (մինչև մի քա-
նի գ/տ): Ուկրաինական զանգվածի արևմտյան մասում հաստատված է ալ-
կալային-հալոիդային մետասոմատոզի ու նրա հետ կապված հազվագյուտ-
մետաղային հանքայնացման լայն զարգացումը (Субботин, 1971):

Ալկալային-կալիումային փուլում առաջանում են միկրոկլինիտներ ու
սկաոներ, հետագայում ուշ ալկալային-նատրիումային ստադիալում՝ ալբի-
տիտներ, որից հետո եզրափակիչ թթվային ստադիալում առաջանում են
գրեյզդեններ և ֆլյուորիտային մետասոմատիտներ անագի, բերիլիումի ու հազ-
վագյուտ հողերի հանքայնացումով: Ուկրաինական բյուրեղային զանգվածի
արևմտյան եզրային մասում հայտնաբերված է գադոլինիտ-բերտրանդիտա-
յին ու կասիտերիտ-դենտհելվինային հանքայնացում. ալբիտիտներում դար-
գացած են օրթիտ, բաստնեզիտ, հելվին, բերիլիտ, երբեմն ֆենակիտ-բեր-
տրանդիտ-միներալները:

Ա. Ս. Գրինսոնի (1970) տվյալներով ալտիվացման պրոցեսները տեղի են
ունեցել նաև ռուսական պլատֆորմի հյուսիսարևելյան մասում, նրա և Տի-
մանի ու Ուրալի ստրուկտուրաների միակցման շրջանում: Այստեղ, Կովա-
Վիշերյան երկրամասի սահմաններում վերջերս հայտնաբերված են ալկալա-
յին բազալտոիդների հիպաբիսալ ինտրուզիաներ, որոնք հարում են հիմքի
բեկվածքներին և ունեն վենդ-քեմբրյան հասակ: Նման ալկալային բազալ-
տոիդներ հայտնի են նաև Միջին Ուրալի արևմտյան լանջում:

Ալկալային բազիտների և հիպերբազիտների հայտնաբերումն ու ուսում-
նասիրումը Կովա-Վիշերյան երկրամասի ու Միջին Ուրալի արևմտյան լանջի
ալմաստաբեր շրջաններում մեծ նշանակություն ունեն ալմաստի արմատական
հանքավայրերի որոնման տեսակետից այն տեղամասերում, որտեղ ցրտնե-
րում հաստատված է ալմաստների ու պիրոպների բարձր պարունակություն:

Ռուսական պլատֆորմի ծածկոցում զարգացած մետաղային օգտակար հանածոների արտածին հանքավայրերից առավել կարևորներն են.

1. Երկաթի օօլիտային նստվածքային հանքանյութերի կիպցկի, Տուլայի (ստորին կարբոնի հասակի) և Խոպերի (վերին կավճի հասակի) հանքավայրերը:

2. Մանգանի օօլիտային նստվածքային հանքանյութերի օլիգոցենի հիմքում տեղադրված Նիկոպոլյան և Բուլշտոկմակյան հանքավայրերը:

3. Բոքսիտի հանքավայրերը ստորին կարբոնի հիմքում՝ Տիլվինյանը:

4. Իլմենիտի և ուտիլի ցրոնային հանքավայրը օլիգոցենի ավազներում՝ Մերձդնեպրյանը:

Արդյունաբերական նշանակությունից զուրկ են և ղեռ վատ են ուսումնասիրված էստոնիայի օրդովիկի ու սիլուրի դոլոմիտացված կրաքարերի մեջ տեղադրված կապար-ցինկային, ինչպես նաև Արևմտյան Մերձուրալի ու Դոն-բասի պերմի հասակի նստվածքներում գտնվող պղնձի հանքանյութերի երևվակումները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՌՈՒՍԱԿԱՆ ՎԱՀԱՆԻ ԵՎ ՆՐԱ ՊԼԱՏՖՈՐՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Белевцев Я. Н. Металлогения докембрийской геосинклинали Украинского щита. Изв. АН СССР, сер. геол., № 1, 1964, с. 8—20.
- Белевцев Я. Н. и др. Проблемы металлогении Украины. Киев, «Наукова думка», 1964, с. 3—256.
- Буковшин В. В. Вещественный состав и условия образования сульфидных медно-никелевых руд месторождений Воронежской группы. Автореф. канд. дисс., Воронеж, 1969, с. 1—24.
- Варданянц Л. А. Докембрийский кристаллический фундамент Русской платформы. Докл. сов. геол. на XXI сессии МГК. Пробл. IX—Стратиграфия и корреляция докембрия. Изд. АН СССР, 1960, с. 57—68.
- Вопросы генезиса и закономерности размещения эндогенных месторождений. «Наука», 1966, с. 24—51; 221—232; 334—343.
- Геологическое строение СССР, т. IV. Основные закономерности размещения месторождений полезных ископаемых на территории СССР. «Недра», с. 17—437.
- Гринсон А. С., Кукушкин А. И., Михайловская Л. И. К проблеме алмазности востока Русской платформы. «Изв. АН СССР, сер. геол.», № 1, 1970, с. 105—113.
- Закономерности размещения месторождений в платформенных чехлах. Докл. II Всес. объедин. сессии по закон. размещения полезных ископаемых и прогнозным картам. Часть II, Изд. АН Укр. ССР, 1960, с. 5—194.
- Каляев Г. И. Геологические формации Украинского щита и их металлогеническое значение. В сб. «Рудообразование и металлогения». Киев, «Наукова думка», 1971, с. 21—29.
- Кухаренко А. А. Палеозойский комплекс ультраосновных и щелочных пород Кольского п-ова и связанные с ним редкометальные месторождения. «Зап. ВМО», ч. 87, № 3, 1958, с. 304—314.
- Магакьян И. Г. Некоторые геологические наблюдения за время экскурсии С-26 в Шведской Лапландии. «Изв. АН Арм. ССР, геол. и геогр. науки», т. XIII, № 6, 1960, с. 59—67.
- Металлогения докембрийских щитов и древних подвижных зон. Докл. II Всесоюз. объедин. сессии по закон. размещения полезных ископаемых и прогнозным картам. Часть I, Изд. АН Укр. ССР, 1960, с. 3—262.
- Половинкина Ю. Ир., Полевая Н. И. Главнейшие геохронологические этапы в истории формирования Украинского кристаллического массива. «ДАН СССР», т. 159, № 4, 1964, с. 811—813.

- Пустовалов Л. В. (ред.). Рудоносность Русской платформы. «Наука», 1966, с. 3—53.
- Семенов Н. П. Металлогения докембрийского щита и складчатых зон Украины. В сб. «Металлогения докембрийских щитов», Изд. АН Укр. ССР, 1960, с. 5—29.
- Семенов Н. П. Межконтинентальная корреляция докембрия. АН СССР. Комиссия по опред. абс. возраста геол. формаций при Отделении наук о Земле. Геохронология докембрия. «Наука», 1970, с. 5—22.
- Стрыгин А. И., Кобзарь В. Н. Конгломераты в кристаллических породах центральной части Украинского щита. В сб. «Проблемы осадочной геологии докембрия». Вып. 2—Вопросы литологии и рудоносности докембрийских метаморфических толщ. «Недра», 1967, с. 3—335.
- Международный геохимический конгресс, 1971, М. Тезисы доклада К. Д. Субботина, с. 552—553.
- Твалчрелидзе Г. А. О главнейших металлогенических эпохах Земли. «Геология рудных месторождений», № 1, 1970, с. 22—36.
- Шатский Н. С. Основные черты строения и развития Восточно-Европейской платформы. «Изв. АН СССР, сер. геол.», № 1, 1946, с. 5—62.

2. Միբիրական վահանն ու նրա պլատֆորմը ամբողջությամբ տեղադրված է Սովետական Միության սահմաններում, հիմնականում նիստի ու կենսա գետերի միջև, զբաղեցնելով շուրջ 6 մլն. կմ² տարածություն (նկ. 3): Պլատֆորմի զգալի մասում տեղադրված է միջին պրոտերոզոյից մինչև ժամանակակից հասակի շմեռամորֆացված նստվածքային ու հրաբխածին ապարների ծածկոց: Պլատֆորմի հիմքի ապարները ներկայացված են արխեյի ու ստորին պրոտերոզոյի մետամորֆիկ և ինտրուզիվ ծալքավոր կոմպլեքսներով, որոնք կազմում են Ալդանյան ու Անաբարյան զանգվածները, Արևելյան Սայանները, Տուրուխանյան և Իգարսկյան բարձունքները: Հարավից ու հարավ-արևմուտքից Միբիրական պլատֆորմը եզրապատվում է Բայկալյան (Ասինտսկյան) ծալքավոր մարզով, որն իր գեոսինկլինալային զարգացումը ավարտել է ստորին կամ միջին քեմբրում: Հյուսիսում ու արևելքում պլատֆորմը սահմանակից է Վերխոյանյան և Թայմիրյան վաղ մեզոզոյան ծալքավոր սիստեմաների հետ: Արևմուտքում Արևմտասիբիրական սալից նա առանձնացված է երիտասարդ խզումներով:

Միբիրական պլատֆորմի մետաղածնությունը հարկ է ենթադրվում էլ բյուրեղային հիմքի, պլատֆորմային ծածկոցի ու պլատֆորմի վրա վերադրված ակտիվացման երևույթների հետ կապված մետաղածնության:


Ստորև բերված Միբիրական պլատֆորմի մետաղածնության համառոտակներկը հիմնվում է գլխավորապես Յու. Գ. Ստարիցկու բազմամյա ուսումնասիրությունների տվյալների վրա (1964 և ուրիշ.):

Հանքավայրերի առաջին խումբը, որը կապված է ծալքավոր հիմքի ելքերի հետ, ձևավորվել է գեոսինկլինալային ծալքավոր ուժերի պայմաններում ու վերագրվում է մետամորֆոզեն և ինտրուզիվ տիպերին:

Պլատֆորմի հիմքի կառուցվածքում հնարավոր է անջատել երեք ստրուկտուրային համալիրներ՝ արխեյան, ստորին պրոտերոզոյան ու բայկալյան (ասինտսկյան):

Անաբարյան վահանի արխեյան ստրուկտուրային կոմպլեքսում հայտնի են երկաթը, ֆլոգոպիտը, ոսկին, իսկ Ալդանյան վահանում (Ստանովյան լեռնաշղթան ներառյալ)՝ երկաթը, ֆլոգոպիտը, բարձրարժանհողային հումքը: Երկաթի հանքավայրերը ներկայացված են երկու տարբեր գենետիկական

տիպերով՝ մետամորֆոզեն (երկաթային քվարցիտներ) Անարարյան վահանի Գալգինյան և Ալդանյան վահանի վերինալդանյան շերտախմբերում ու սկառնային մագնետիտային ավելի խոշոր հանքավայրերով Ալդանյան վահանի սահմաններում (Տալոժնի, Սիվազլի և ուրիշ.): Ֆլոզոպիտի հանքավայրերը հայտնի են Անարարյան և Ալդանյան վահանների սահմաններում, ընդ որում Ալդանյան վահանում նրանք հարում են ֆլոզորոզիան շերտախմբի դիոպսիդային ապարներին: Այդ հանքավայրերի ծագման վերաբերյալ գոյություն ունեն մի քանի տեսակետներ, որոնցից առավել հիմնավորված է Ն. Գ. Սուգոլիկովի տեսակետը՝ խորքից կալցիումի ու մագնեզիումի ներմուծման և ֆլոզոպիտի մետասոմատիկ առաջացման մասին:



Նկ. 3—Սիբիրական պլատֆորմի հիմքի կառուցվածքի սխեման (ըստ Մ. Վ. Մուրատովի).

1—Տիմուրսոյան զանգվածի պրոտոպլատֆորմը, 2—նույնը նստվածքային ծածկոցի տակ ու ենթադրվող զանգվածները՝ Տունգուսյանը (I) և Տյունգինյանը (II), 3—Չարսկի-Օլեկմինյան զանգվածի պրոտոպլատֆորմը, 4—նույնը նստվածքային ծածկոցի տակ, 5—պրոտոպլատֆորմային իջվածքներ, 6—Կոզարո-Ուզոկանյան պրոտոպլատֆորմային իջվածք, 7—ժալբավոր սիստեմներ՝ Անարարյան (III), Ալդանյան (IV), Օխոտյան զանգվածը (V), 8—նույնը նստվածքային ծածկոցի տակ, 9—Ստանովոյ լեռնաշղթայի սիստեմը, 10—անորթոգիտներ, 11—պլատֆորմի հյուսիսային բլուր, 12—Բաշկալյան սիստեմի միոգենոսինկլինալային զոնաները մակերեսում, 13—նույնը նստվածքային ծածկոցի տակ, 14—էվգենոսինկլինալային զոնաները մակերեսում, 15—նույնը նստվածքային ծածկոցի տակ, 16—տորուկաուրաների տարածումը Թայմիրյան սիստեմում, 17—բեկվածքները:

Ըստ Տ. Վ. Բիլիբինայի (1966), Ալդանյան վահանի սահմաններում արխեյան ու պրոտերոզոյան ծալքավորման մարզերը և ավելի երիտասարդ վերագրված ճկվածքները զուգորդվում են: Վահանի զլխավոր տեկտոնական էլեմենտներն են՝ 1) արխեյան ծալքավոր մարզը, 2) պրոտերոզոյան ծալքավոր մարզը, 3) վերին պրոտերոզոյան-քեմբրյան պլատֆորմի ու Բայկալյան եզրային ճկվածքների մարզը, 4) ակտիվացած պլատֆորմի տեկտոնական էլեմենտները, որոնք ընդգրկում են ա) նախալեռնային ճկվածքները, բ) մեզոզոյան մագմատիզմի դրսևորման շրջանները:

Արխեյան ծալքավոր մարզը զբաղեցնում է Ալդանյան վահանի մեծ մասը ընդգրկելով արխեյի երկու խոշոր ելքեր՝ Ալդանյան զանգվածը ու Չարսկի մեծ բեկորը, որոնք բաժանված են միմյանցից Օլեկմինյան ճկվածքով: Այստեղ լայն զարգացած են մետամորֆացած հրաբխածին ապարներ, քվարցիտներ, ավազաքարեր, իսկ ինտրուզիվ ապարներից հիպերբազիտներ ու ավելի երիտասարդ պալիոգեն ու անատեկտիկ ծագման գրանիտներ: Արխեյի մետազածնության համար հատուկ են երկաթի, ֆլուգուպիտի, հազվագյուտ մետաղներ պարունակող պեգմատիտների հանքավայրեր:

Պրոտերոզոյան ծալքավոր մարզը ընդգրկում է Ստանովոյ լեռնաշղթան, որը եզրապատում է Ալդանյան զանգվածը, որտեղ լայն զարգացած են սպիրիտային լավաները, անորտոզիտները և նստվածքահրաբխային ֆորմացիան:

Մագմատիզմը ներկայացված է վաղպրոտերոզոյան հասակի բազալտային մագմայի ածանցյալներով մինչև գրանիտոիդները ներառյալ, իսկ հանքայնացումը՝ տիտանամագնետիտային հանքանյութերով զարբո-անորտոզիտների մեջ, երկաթի մետամորֆոզեն հանքավայրերով ու հազվագյուտ մետաղներ պարունակող պեգմատիտներով: Միջին-վերին պրոտերոզոյի շերտախմբում լայն տարածված են ուղեկանյան շերտախմբի տիպի պղնձաբեր ալերոլիտաավազաքարային նստվածքները:

Վերին պրոտերոզոյի-քեմբրի պլատֆորմի ու Բայկալյան եզրային ճրկվածքների մարզերը կազմված են վերին պրոտերոզոյի (սինիի) բեկորային ու քեմբրի հասակի տերիգեն-կարբոնատային շերտախմբերից: Մագմատիզմը ներկայացված է զարբոններով, ալկալային գրանիտներով, ուլտրահիմքային-ալկալային ապարներով տիտանամագնետիտային, ֆլուգուպիտային ու հազվագյուտ մետաղային հանքայնացումով: Ալդանի վահանի մեզոզոյան տեկտոնա-մագմատիկական ակտիվացման մարզը բնորոշվում է խզումներով ու գրանիտոզիտային և ալկալային ինտրուզիաներով, որոնց հետ կապված են ոսկու, ինչպես նաև մոլիբդենի, կապարի, ցինկի, ֆլուորիտի և ուրիշ հանքավայրեր:

Ալդանյան զանգվածում բավականին լայն տարածված են կորունդ պարունակող կիանիտային ու սիլիմանիտային վերին ալդանյան ու ֆլոդորովյան շերտախմբերի սիլիմանիտային թերթաքարերը:

Նույնատիպ ապարներ են հայտնաբերված Արևելյան Սայանների սլոուդանսկի շերտախմբի ստորին մասում:

Անաբարյան վահանի տարածքի զետաբերվածքներում հայտնի է ոսկի, սակայն նրա արմատական աղբյուրները պարզ չեն: Մ. Մ. Ռաբկինի պատկերացումներով ալյուվիալ ոսկին կապված է զնեյանների մեջ ու կատակազիտների զոլերում ցանի ձևով տարածված սուլֆիդների հետ:

Ալդանյան վահանի ու Արևելյան Սայանների ստորին պրոտերոզոյան

ստրուկտուրայի հիմքում հայտնի են՝ երկաթ, բազմամետաղներ, հազվագյուտ մետաղներ, լեռնային բյուրեղապակի, կորունդ և ուրիշ:

Միջին Ունգրա և Զիրխնգա գետերի ավազանների զաբրոիրներում երկաթի հանքավայրերից առավել կարևորագույն են բուն մագմատիկ տիտանամագնետիտային հանքանյութերի կուտակումները: Տիտանամագնետիտային հանքանյութերի երևակումներ են հանդիպել նաև վահանի արևելյան մասում Զուդչուրի զաբրոանորտովտների խոշոր զանգվածներում:

Շատ հետաքրքիր են լեռնային բյուրեղապակու հանքավայրերը՝ ալդանյան բյուրեղապակաբեր շերտախմբի քվարցիտների մեջ. լեռնային բյուրեղապակու երակները, ինչպես համարում են, առաջացել են հիդրոթերմալ լուծույթների ազդեցության, քվարցիտներում սիլիկահաղի վերաբաշխման հետևանքով: Ննիսեյան լեռնաշխարհում արխեյան զրանիտների հետ կապված են մուսկովիտ և հազվագյուտ մետաղներ պարունակող պեգմատիտներ, իսկ պրոտերոզոյան զրանիտոիրների հետ՝ ոսկու (Սովետակի, Պրոլետարսկի, էլզորադո հանքերը), ծարիրի (Ռազդոլինիսկի հանքավայրերը) հանքանյութեր, հավանաբար նաև Գորևակի կապար-ցինկային տելեթերմալ հանքավայրը, որը տեղադրված է ուշ մինչքեմբրի հասակի կարբոնատային հաստվածքում:

Քվարց-սուլֆիդային բազմամետաղային հանքանյութերի երակային համեմատաբար փոքր հանքավայրեր հայտնի են Ստանովոյ լեռնաշղթայում:

Միբիրական պլատֆորմի ծածկոցի մետաղածնային զարգացել է մի քանի փուլերով:

Առաջին փուլն ընդգրկում է ստորին պրոտերոզոյի վերջից, կամ միջին պրոտերոզոյի սկզբից (պլատֆորմային ռեժիմի սկիզբը) մինչև պրոտերոզոյի ստորին կամ միջին քեմբրի վերջն ընկած ժամանակաշրջանը: Մագմատիզմը ներկայացված է մինչքեմբրյան կամ ստորինքեմբրյան հասակի հիմքային (տրապներ) ու ուլտրահիմքային-ալկալային ֆորմացիաներով:

Պլատֆորմի հարավարևմտյան եզրային մասում տրապների հետ կապված հանդես են դալիս պղնձի երևակումներ, քվարց-կարբոնատային երակների ձևով, իսկ Ալդանյան վահանում՝ ուլտրահիմքային-ալկալային ֆորմացիայի հետ մի կողմից կապված են տիտանի, բրոմի և պլատինի մագմատիկ կուտակումներ, մյուս կողմից՝ կարբոնատիտներ հազվագյուտմետաղային հանքանյութերով (Կոնդեր, Ինագլի և ուրիշ զանգվածները):

Ալդանյան վահանի արևելյան եզրամասի քեմբրի հաստվածքում տեղադրված են Միսսուրի-Միսսիսիպի տիպի շերտածն կապար-ցինկային հանքանյութերի հանքավայրերը (Ա. Գ. Շչեզլովի բանավոր հաղորդումը):

Միբիրական պլատֆորմի ծածկոցի մետաղածնային զարգացման երկրորդ փուլն ընդգրկում է քեմբրից մինչև ստորին տրիաս ժամանակաշրջանը ներառյալ: Մագմատիզմը ներկայացված է տրապային և ուլտրահիմքային-ալկալային ֆորմացիաներով: Տրապների հասակն է կարբոնի վերջից մինչև տրիասի սկիզբը. նրանց մեջ առանձնացվում են (Մ. Լ. Լուրյե, Վ. Լ. Մասսյուտիս, Լ. Ա. Պոլունինա, 1962) վեց ֆազաներ, որոնք միմյանցից տարբերվում են համեմատական հասակով, կազմութայամբ ու դիֆերենցման բնույթով: Առաջին և երկրորդ ֆազաները բնորոշվում են բարձր ալկալիությունով, երրորդը կազմութայամբ համապատասխանում է «նորմալ» ղուլերիտներին, չորրորդը, մետաղածնային տեսակետից առավել հետաքրքիրը, խմբավորում է չորս ինտրուզիվ՝ Նորիսկի, Կուրեյսկի (մազնեզիումի բարձր պարունակությամբ),

Վուզմովսկի (երկաթով հարուստ), Տիչանի (ալկալիներով հարուստ) կոմպլեքսներ: Այդ ֆազայի ինտրուզիաները լավ դիֆերենցված են, որը բացատրվում է նրանց մեջ ցնդող բաղադրամասերի բարձր պարունակով: Այդ ֆազայի հետ կապվում են պղինձ-նիկելային (Co, Pt, Pd-ի խառնուրդով) լիվլացիոն՝ Նորիլսկ, Տալնախ, Հոկտեմբերյան հանքավայրերը: Հինգերորդ ինտրուզիվ ֆազան իր կազմով ժամ է երրորդին. վեցերորդը (բստ Վ. Լ. Մասայտիսի՝ Վիլյույի տիպի) զարգացած է պլատֆորմի արևելյան մասում և բնութագրվում է ալկալիների և տիտանի բարձր պարունակով: Առաջին և երկրորդ ինտրուզիվ ֆազաներն ունեն պերմ-տրիասյան հասակ, իսկ մնացածները՝ ստորին տրիասի: Պերմի վերջում՝ տրիասում, պլատֆորմի հյուսիսում, ինչպես նաև Արևելյան Սայաններում և Չադոբեցի բարձունքում, երևան են դալիս ուտրահիմքային-ալկալային ֆորմացիայի ապարները, որոնք կազմում են կենտրոնական տիպի ինտրուզիաներ, լավաների հզոր ծածկոցներ ու քիմերիլիտային խողովակներ: Այդ ֆորմացիան ամենից լավ ներկայացված է պլատֆորմի հյուսիսում, Մայմեչա-Կոտույի շրջանում, որտեղ նրա հետ կապված են կարբոնատիտների հանքավայրեր՝ Ֆլոգոպիտի, վերմիկուլիտի, նեֆելինի, պիրոքլորի, ապատիտի կուտակումներով: Ուտրահիմքային-ալկալային ֆորմացիային են վերաբերում նաև քիմերիլիտները, որոնք լցնում են պլաթման խողովակները. վերջինների հետ կապված են ալմաստի հանքավայրերը:

Քիմերիլիտների հասակը տարբեր է՝ մինչպերմյանից մինչև հետստորին-կավճյան, բայց գլխավորապես՝ մեզոզոյան:

Սիբիրական պլատֆորմի հյուսիսում Գուլինյան ու Զիմինյան ուտրահիմքային-ալկալային ինտրուզիվ կոմպլեքսների հետ հաշտնաբերված են կարբոնատիտներ:

Տրապային մագմատիզմի հետ կապված են նաև երկաթի սկառնային ու հիդրոթերմալ հանքանյութերի հանքավայրեր (Անգարո-Իլիմյան խումբը և ուրիշներ), իսլանդական սպաթի, բարիտի ու ցելեստինի բաղաձեռնով երևակումներ, կապար-ցինկային, խալկոզին-բոոնիտային հանքանյութեր, ինչպես նաև գրաֆիտի մետամորֆոզեն տիպի հանքավայրեր (Կուրեյկա, Բախտա և այլն), առաջացած տրապների ու պերմի հասակի քարածխի շերտերի կոնտակտներում:

Երկրորդ փուլի արտածին հանքավայրերից պետք է նշել Լենա գետի ավազանում, ինչպես նաև Ենիսեյան բլրաշարքից դեպի արևելք, վերին Լենայի շերտախմբի տերիզեն-կարբոնատային հորիզոնում տեղադրված պղնձի երևակումները, որոնց վերագրում են նստվածքային ծագում (Մ. Մ. Կոնստանտինով, 1963):

Սիբիրական պլատֆորմի մետաղածնային զարգացման երրորդ փուլն ընդգրկում է միջին տրիասից մինչև անտրոպոգեն ժամանակաշրջանը: Այդ փուլի մագմատիկ ապարների շարքին է դասվում քիմերիլիտային խողովակների ճնշող մեծամասնությունը, որոնց հասակը գլխավորապես հետստորինտրիասի է. պլատֆորմի հյուսիս-արևելքում հայտնի են հետստորինկավճի հասակի խողովակիկներ: Ալմաստաբեր են ոչ բոլոր քիմերիլիտային խողովակիկները. ամենից հայտնի ու հարուստ են «Միր», «Ալխալ», «Ուղաչնայա» և այլ խողովակիկներ: Մ. Մ. Օդինցովի ու Բ. Մ. Վլադիմիրովի տվյալներով (1966) Սիբիրական պլատֆորմի քիմերիլիտային մարզը ենթաբաժանվում է

շրջաններին՝ 1) Վիլյույ-Օլենեկյան, 2) Անաբարյան, 3) Իլմո-Տունգուսյան, 4) Ենիսեյ-Չադոբեցի, 5) Մերձսայանյան, 6) Ալդանյան:

Առաջին երկու շրջաններում քիմբերլիտները կապված են Գուլինյան ինտրուզիայի ու Սոերո և Կոտույ գետերի փոքր ինտրուզիաների ուլտրահիմքային-ալկալային կոմպլեքսի հետ. այդ ինտրուզիաները ու տրապիները պայմանավորված են վաղմեղոզոյան ակտիվացմամբ: Քիմբերլիտների համար այստեղ անշատում են երկու գեներացիաներ՝ մինչպերմյան (Ալխալ) ու տրիասի (Միր). ավելի երիտասարդ քիմբերլիտային ապարների առկայությունը դեռևս ապացուցված չէ:

Ենիսեյ-Չադոբեցի մարզում քիմբերլիտները կապված են վաղմեղոզոյան ու դեոնյան, իսկ Մերձսայանյան մարզում՝ դեոնյան (գուցե նաև վաղմեղոզոյան) ակտիվացման հետ:

Պլատֆորմում առանձնացվում են ալմաստաբեր երեք զոնաներ՝

ա) Դեոնյան ակտիվացման զոնա ալկալային ինտրուզիաներով, կարբոնատիտներով ու քիմբերլիտներով Սիբիրական պլատֆորմի հարավարևմտյան մասում:

բ) Տունգուսյան ստրուկտուրա-հրաբխածնային զոնա պլատոբազալտներով, ուլտրահիմքային-ալկալային ինտրուզիաներով և մինչպերմյան ու տրիասյան հասակի քիմբերլիտներով:

գ) Ալդանյան զոնա՝ վերինմեղոզոյան տեկտոնական ակտիվացումով ալկալային ու հիպերբազիտային ինտրուզիաներով և անորոշ հասակի (համախաբար, վերին մեղոզոյան) քիմբերլիտներով:

Երրորդ փուլի արտածին հանքայնացումը կապված է հողմնահարման կեղևների առաջացման (բոքսիտներ, երկաթ, տիտան), կամ տարբեր փուլերի արմատական հանքավայրերի քայքայման ու ալյուվիալ ցրոնների (ոսկի, պլատին, ալմաստ) գոյացման հետ:

Պլատֆորմի ակտիվացման հետ կապված պրոցեսները արտահայտվել են մեզոկայնոզոյի ժամանակաշրջանում խզումների և բեկորային շարժումների ձևով, որոնք ուղեկցվել են թթու ու ալկալային ինտրուզիաների ներդրումով:

Ակտիվացման բնորոշ մարզ է Ալդանյան վահանը, հատկապես նրա հարավային մասը:

Ակտիվացման հետ կապված մագմատիզմը տեղի է ունեցել Ալդանյան վահանում շորս փուլով, որոնցից առավել խոշոր մետաղածնային նշանակություն է ունեցել վերին յուրայի—ստորին կավճի հասակի երրորդ փուլը, երբ ներդրվել են Ստանովյան կոմպլեքսի թթու ու Ալդանյան կոմպլեքսի ալկալային ինտրուզիաները:

Ալդանյան կոմպլեքսի ալկալային ինտրուզիաների ներդրման հետ կապված են տարբեր օգտակար հանածոների բազմաթիվ հանքավայրեր, նրանց թվում ամենամեծ նշանակությունը ունեն՝ երկաթը, ոսկին, մոլիբդենը, ֆլյուորիտը ու ավելի փոքր նշանակություն բազմամետաղները, հազվագյուտ մետաղները, լեռնային բյուրեղապակին: Երկաթի մագնետիտային հանքայնությունը սկսածնային հանքավայրերը հարում են հետյուրայի հասակի սինեիտային ինտրուզիաների ու ստորին քեմբրի զոլոմիտների կոնտակտներին. ոսկու հանքավայրերը (Լեբեդինսկի և այլն) կապված են մեղոզոյան հասակի ալկալային ինտրուզիաների հետ ու ներկայացված են երեք՝ մետասոմատիկ,

երակային ու ցանավոր տարատեսակներով: Հանքանյութերը պատկանում են ոսկի-սուլֆիդային ֆորմացիային, որտեղ ոսկու մանր անջատումները ցրված են սուլֆիդների մեջ ու զուգակցվում են արծաթի միներալների, հեմատիտի, քվարցի, կալցիտի հետ:

Մոլիբդենի հանքանյութերը ներկայացված են քվարց-մոլիբդենիտային երակներով (Տուրուկ և ուրիշ.), որոնք կապված են սիենիտ-պորֆիրների ինտրուզիաների հետ:

Ֆլյուորիտային հանքանյացումը կապված է ալկալային ինտրուզիաների հետ և ներկայացված է երակային ու մետասոմատիկ տիպի հանքավայրերով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՍԻԲԻՐՍԿԱՆ ՎԱՀՄԱՆ ՈՒ ՆՐԱ ՊԼԱՏՖՈՐՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Билибин Ю. А. Послеюрские интрузии Алданского района. Петрография СССР, сер. I, Регион. петр., вып. 10, Изд. АН СССР, 1941, с. 22—119.
- Билибина Т. В. Геология и металлогения Алданского щита. Вопросы генезиса и закономерности размещения эндогенных месторождений (АН СССР, Сибирское отделение, Ин-т земной коры). «Наука», 1966, с. 233—256.
- Бобревич А. П., Бондаренко М. Н. и др. Алмазы Сибири. Госгеолтехиздат, 1957, с. 5—158.
- Волобуев М. Н., Зыков С. И. Возраст и химические особенности свинцовых рудопроявлений Енисейского кряжа. «Геол. и геофиз», № 12, 1963, с. 22—34.
- Годлевский М. Н. Геология и рудные месторождения Норильского района. «Горный журнал», № 6, 1958, с. 9—14.
- Константинов М. М. Происхождение стратифицированных месторождений свинца и цинка. Изд. АН СССР, 1963, с. 7—181.
- Лазыко Е. М. Хрусталеносные кварцевые жилы и их генезис. Изд. Львовск. ун-та, 1957, с. 205.
- Лобанов М. Ф. Металлогения севера Сибирской платформы. «Сов. геол.», № 7, 1960, с. 28—39.
- Масайтис В. Л., Старицкий Ю. Г. Об особом типе структур Восточной Азии (третий основной структурный элемент континентальной земной коры—дива). «Тр. ВСЕГЕИ, новая серия», т. 85, 1963, с. 63—89.
- Минералогия Сибирской платформы. Под ред. П. М. Татаринова и Ю. Г. Старицкого. «Недра», 1970, с. 208.
- Павлов Н. В. Магно-магнетитовые месторождения района Тунгусской синеклизы Сибирской платформы. Изд. АН СССР, 1961 (Тр. ИГЕМ, вып. 52), с. 5—224.
- Спижарский Т. Н. Тектоническая карта Сибирской платформы и прилегающих частей складчатых систем. Госгеолтехиздат, 1958 (4 листа).
- Старицкий Ю. Г. Основные черты металлогении Сибирской платформы. В сб. «Закон. размещ. полезн. ископ. в платформ. чехлах». Изд. АН Укр. ССР, ч. II, 1960, с. 5—13.
- Старицкий Ю. Г. Краткий очерк металлогении Сибирской платформы. Доклады сов. геол. на XXI сессии. МГК. 1965, с. 150—167.

3. Չինա-կոբեական վահանն ու նրա պլատֆորմը. Ինչպես նշում է Ա. Ն. Մազարովիչը (1951), չինական պլատֆորմը իր ձևավորումից հետո ենթարկվել է մեծ փոփոխությունների, որի հետևանքով նրա երկրաբանությունն առաջնային ուրվագծերը որոշվում են դժվարությամբ:

Նախկինում նրա մեջ մտնում էին Բուրեի զանգվածն ու Մանջուրիան հյուսիսում, Տարիմի զանգվածը՝ արևմուտքում և Կորեա-Շանդունինը՝ արե-

վելքում. դեպի հարավ նա զբաղեցնում էր Հարավարևելյան Չինաստանի զգալի մասն ու տարածվում էր մինչև Կամբոջայի զանգվածը ներառյալ:

Այդ սահմաններում վահանի տարածությունը կազմում էր շուրջ 5 մլն. կմ²:

Չինա-Կորեական վահանի հիմքը կազմված է նյնպես, ինչպես առհասարակ արևելյի ապարներից կազմված Երկրի կեղևի տեղամասերը՝ տարածված են գնեյսներն ու բյուրեղային թերթաքարերը, որոնց մեջ ներդրված են գրանիտոիդները:

Լի Սը-գուանի տվյալներով (1952) արևելյի ելքերը լայն տարածված են Մանջուրիայի հարավ-արևելքում, Լյաոդուն թերակղզում, Շանդուն զանգվածում, Շանսի բարձրահարթում, Ինշան, Ալաշան, Նանշան լեռնաշղթաներում, Յինլիշան զանգվածի Հյուսիսային եզրամասում, Սինցզյանից դեպի հարավ, Գուանդունում, Արևմտյան Յուննանում, Սիկանի լեռնային սիստեմում:

Գերակշռում են շերտավոր գնեյսները ու բյուրեղային թերթաքարերը, տեղ-տեղ զարգացած են մարմարներ և ամֆիբոլիտներ: Արևելյի հաստվածքները հատված են կարմրամոխրագույն գրանիտներով, ապլիտներով, պեգմատիտներով, հիմքային ապարներով. բիտոիտային և պեգմատոիդային գրանիտների համար բնորոշ են ոսկեբեր քվարցի երակները (Փխես մարդում և այլն):

Արևելյան գնեյսանման գրանիտները աններդաշնակ ծածկված են ստորին պրոտերոզոյան ուտայ հաստվածքով, որի վրա նույնպես աններդաշնակ տեղադրված են սինիի նստվածքները (վերին պրոտերոզոյ կամ մասամբ ստորին պալեոզոյ):

Ուտայ հաստվածքը լայն տարածված է Հյուսիսային Չինաստանում, որտեղ ներկայացված է մագմատիկ ապարներով ներդրված մետամորֆիկ թերթաքարերով: Այստեղ վարից վեր առանձնացվում են երեք շերտախմբեր՝

1) Շիձոյ՝ փայլարային թերթաքարեր ու գնեյսներ, մագնետիտ պարունակող քվարցիտներ և երկաթային արկոզային ավազաքարեր.

2) Նանտայ՝ կայծքարային մարմարներ, քվարցիտներ, բյուրեղային թերթաքարեր.

3) Սիտայ՝ քլորիտային թերթաքարեր, քվարցիտներ, կոնգլոմերատներ:

Ուտայի հաստվածքի նստվածքներում տեղադրված են երկաթի հանքանյութերի, մագնեզիտի ու դոլոմիտի հանքավայրերը, իսկ այդ հաստվածքը հատող մագմատիկ մարմինների հետ կապված են քվարցային երակներ, երբեմն պղնձի հանքայնացումով:

Սինին ներկայացված է քվարցիտներով ու սև թերթաքարերով, որոնք վերևում փոխարինվում են կայծքարային կրաքարերով, ֆիլիտներով, ավազաքարերով, տիլիտներով: Սինիի սիստեմը աններդաշնակ տեղադրված է ուտայի սիստեմի նստվածքների վրա ու լայն տարածված է Հյուսիսային Չինաստանում:

Սինիի նստվածքներում տեղադրված է երկաթի հանքանյութի մինչև 7 մ կարողություն ունեցող շերտ:

Ստորին պրոտերոզոյի վերջում կարելյան ծալքավորումը լրացնում է Երկրի կեղևի ձևավորումը, որի հետևանքով առանձին զանգվածները միանում են, առաջացնելով խոշոր պլատֆորմներ:

Պրոտերոզոյան նստվածքներում առավել տարածված են տարբեր թեր-

թաքարեր (կավային, գրաֆիտային), ֆիլիտներ, արկոզներ, քվարցիտներ, ալդ թվում երկաթային քվարցիտներ, որոնց հետ կապված են մետամորֆոզեն տիպի երկաթի հարուստ հանքանյութերի խոշոր կուտակումներ:

Չինա-Կորեական վահանին բնորոշ է ալտիվացումը, որը Յանշանյան ժամանակաշրջանում (վերին յուրա—ստորին կավիճ) արտահայտվել է բեկորա-կամարային շարժումներով ու մեզոզոյան (յանշանյան) գրանիտոիդների ներգրումով:

Վերջինների հետ կապված է բազմազան ու հարուստ հանքայնացում Հյուսիսարևելյան Չինաստանում ու Կորեայում և առանձնապես Հարավարևելյան Չինաստանում (վոլֆրամի, անագի, ոսկու, կապարի և ցինկի, ծարիրի և սնդիկի հիգրոթերմալ հանքանյութերի խոշոր կուտակումներ):

Չինա-Կորեական վահանի մինչքեմբրյան (մինչսինիյան) նստվածքներում հայտնի են հետևյալ կարևորագույն հանքավայրերի տիպերը՝

1. Երկաթի հանքանյութերի մետամորֆոզեն հանքավայրեր՝ պրոտերոզոյի երկաթային քվարցիտներում (Կիմկան հանքավայրը Փոքր Խինզանի շրջանում, Մուսան՝ Կորեայում, մի քանի խոշոր հանքավայրեր Մանջուրիայում ու Շանդունում):

2. Բարձր ջերմաստիճանային ոսկեբեր քվարցային երակներ, որոնք կապված են արխեյի ու պրոտերոզոյի գրանիտոիդների հետ և տեղադրված են մինչքեմբրի մետամորֆիկ հաստվածքների մեջ: Արմատական հանքավայրերի հաշվին առաջանում են ցրոններ: Ոսկով հարուստ շրջաններն են՝ Հյուսիսային Կորեան, Հյուսիսարևելյան Չինաստանը, Մանջուրիան:

3. Պեզմատիտային հանքավայրեր, կապված մինչքեմբրի գրանիտոիդների հետ. պեզմատիտներում հաստատված է ուրանային, թորիումային, տանտալ-նիոբիումային ու հազվագյուտհողային հանքայնացում, երբեմն նաև ցիրկոն ու բերիլ:

4. Պղնձի շերտաձև հանքանյութերի հանքավայրեր պրոտերոզոյան հասակի դոլոմիտներում ու կավային դոլոմիտներում (Դունչուան հանքավայրը):

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Չինական պլատֆորմի ալմաստաբերությունը: Յրոններում ալմաստներ հայտնաբերված են Շանդուն թերակղզում, իսկ քիմբերլիտների արմատական ելքեր՝ Հարավային Չինաստանի մեզոզոյան հասակի տեկտոնիկական ալտիվացման ղոնայի բեկորային ստուկտուրաների սահմաններում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՉԻՆԱ-ԿՈՐԵԱԿԱՆ ՎԱՀԱՆԻ ՈՒ ՊԼՍՏՅՈՐՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Вопросы генезиса и закономерности размещения эндогенных месторождений. «Наука», 1966, с. 7—375.

Ли-Сы-гуан. Геология Китая. Изд. ИЛ, 1952, с. 519.

Мазарович А. Н. Основы региональной геологии материков, т. 1. Изд. МГУ, 1951, с. 347. Основы тектоники Китая (под ред. Чжан-Вэнь-ю). Госгеолтехиздат, 1962, с. 5—527.

Смирнов А. М. Сочленение Китайской платформы с Тихоокеанским складчатым комплексом. «Тр. ДВГИ», т. 8, сер. геол., Изд. АН СССР, 1963, с. 159.

Хуан-Бо-цин. Основные черты тектонического строения Китая. Изд. ИЛ, 1952, с. 162.

Chang Wen-You. Grundzüge der geologischen Structur und Entwicklung Chinas. Geologie, H. 5, 1959, S. 471—488.

Huang T. K. The main characteristics of structure of China. Preliminary conclusions. Sc. Sinica, v. 9, № 4, 1960, p. 492—544.

զարգացած են Վերին լճի Յելուունայի, ինչպես նաև Հյուսիսարևմտյան Կանադայում Մեծ արջի ու Ստրուկների մեծ լճի շրջաններում:

Տերների տվյալներով (1955) Կիվատին սերիան կազմված է հրաբխային ապարներից նստվածքային նյութի շնչին զուգակցմամբ. առավել երիտասարդ Տեմիսկամինգ սերիան, ընդհակառակը, կազմված է գլխավորապես գրանավակներից, արկոզներից ու կոնգլոմերատներից:

Կիվատին ու Տեմիսկամինգ սերիաները ուժեղ ծալքավորված և հատված են ալգոմանյան (հասակը 2,5 մլրդ. տ.) գրանիտներով ու հիմքային կազմության ապարների ինտրուզիաներով:

Վերին լճի շրջանում կալիսենտեյան հասակի գրանիտային բաթոլիտները հատում են Կիվատին սերիայի լավաներին, բայց աններդաշնակ ծածկված են Նայֆ-Լեյկ սերիայով, որը համադրվում է Տեմիսկամինգ սերիայի հետ: Այդ նույն շրջանում, հավանաբար ալգոմանյան հասակի ուրիշ գրանիտները հատում են ինչպես Կիվատին, այնպես էլ Նայֆ-Լեյկ սերիաները: Արխեյան կոմպլեքսի վրա աններդաշնակ տեղադրված են պրոտերոզոյի ապարները, ներկայացված քվարցիտներով, երկաթային քվարցիտներով, կավային թերթաքարերով ու գոլոմիտներով, ինչպես նաև գրանավակներով ու արկոզներով, որոնք վերագրվում են վաղ պրոտերոզոյին՝ հուրոնին:

Ավելի երիտասարդ՝ վերին պրոտերոզոյան Կիվինո սերիան ներկայացված է ավազաքարերով, կոնգլոմերատներով ու հրաբխային հիմքային ապարներով. այդ ապարներում ներդրված են հիմքային կազմության շերտային ինտրուզիաները, որոնք կազմում են Սյոդբերի և Դուլուս զանգվածներն ու սեպիսինգ դիաբազային սիլլը: Սյոդբերի ինտրուզիվի բացարձակ հասակը որոշված է 1200—1000 մլն. տ.: Պրոտերոզոյան հասակի գրանիտները (Կիլարնեյան և ավելի երիտասարդ) կտրում են հուրոնյան ու մասամբ Կիվինո սերիայի ստորին հորիզոնների ապարները:

Քադրոմետրիկ թվագրման տվյալներով Կանադական վահանի սահմաններում Ռ. Ֆուլենսբին (1971) առանձնացնում է հետևյալ կոմպլեքսները՝ մինչքեմբրի I (3500—2600 մլն. տ.), արխեյան ապարների միջուկներում 3100—2600 մլն. տ. հասակի գրանիտների ներդրմամբ, որոնց հետ կապված են ոսկու հանքավայրեր սուլֆիդներով ու երբեմն էլ շեխիտով:

Ստորջրյա պիրոկլաստիկ նստվածքների մեջ տեղադրված և հրաբխային սերիաների եզրափակող թթու ապարների հետ կապված են կոլչեզանային տիպի խոշոր հանքավայրեր պղինձ-ցինկային հոծ հանքանյութերով (կապարի, արծաթի, ոսկու խառնուրդներով)՝ Ֆլին-Ֆլոն, Շերրիտ-Գորդոն, Նորանդա և այլն:

Մինչքեմբրի II (2600—2000 մլն. տ.). բնորոշվում է քվարցիտներով ու կոնգլոմերատներով, որոնց հարում է Բլայնդ-Ռիվեր հանքադաշտի ոսկիուրանային հանքանյութերը (հանքավայրի հասակն է 2600—2200 մլն. տ.):

Մինչքեմբրի III (2000—1700 մլն. տ.). բնորոշվում է երկաթային քվարցիտներով ու վերին լճի երկաթի հարուստ հանքանյութերով: Այդ հասակի գրանիտային ինտրուզիաների հետ կապված են, ըստ երևույթին, Գոլդֆիլդ շրջանի ոսկու (բացարձակ հասակը 1950 մլն. տ.), Բիվերլոջ շրջանի ուրանի հանքավայրերը (բացարձակ հասակը 1910 մլն. տ.) և այլն:

Մինչքեմբրի IV (1700—1000 մլն. տ.). այդ ժամանակաշրջանում բազալտ-անդեզիտային հրաբխականության հետ կապված տուֆոգեն նստված-

քային ապարներում առաջանում են բազմամետաղային հոծ հանքանյութերի շերտաձև մարմիններ (Սուլիվանը Բրիտանական Կոլումբիայում): Այդ հասակի գրանիտների հետ են կապված Մեծ արշի լճի շրջանի ուրանային հանքավայրերը (Էյդորագո հանքավայրի բացարձակ հասակը 1400 մլն. տ. է), իսկ հիմքային կազմութան ապարների հետ կապված են Սյոդբերի շրջանի լիկվացիոն պղինձ-նիկելային հանքավայրերը (բացարձակ հասակը 1200—1000 մլն. տ.), Կիվանո հրվանդանի բնածին պղնձի, արծաթ-կոբալտային Կոբալտ հանքավայրերը և ուրիշներ:

Մինչքեմբրի V (1100—570 մլն. տ.). երբ օքսիդացած հին հաստվածքների տարալվացման հետևանքով առաջացել են Ուայտ-Պայն հանքավայրի տիպի պղնձի հանքանյութերի նստվածքային խոշոր կուտակումներ, ինչպես նաև Հյուսիսարևմտյան Կանադայի Կրեստ շրջանի երկաթի ժապավենաձև հանքանյութերի ֆորմացիան (բացարձակ հասակը 1000—700 մլն. տ.):

Պալեոզոյի ու մեզոկայնոզոյի ապարներում, որոնք ծածկում են Կանադական վահանի մինչքեմբրյան հիմքը, արդեն ԱՄՆ-ի տարածքում հայտնի են տեղեթերմալ (կամ նստվածքային ^o) կապար-ցինկային, ֆլյուորիտային ու բարիտային Հարավարևելյան Միսսուրի-Տրիստեյտ-Իլլինոյսի տիպի խոշոր հանքավայրեր, ուրան-վանադիումային հանքանյութեր Յուտա ու Կոլորադո նահանգներում և ստորին-վերին կավճի հասակի քիմբերլիտային խողովակի հետ կապված ալմաստի Պայկ հանքավայրը Արկանզաս նահանգում: Քիմբերլիտներ հայտնի են նաև Կենտուկի, Քվեբեկ, Նյու-Յորք նահանգներում: Արկանզասում քիմբերլիտները կտրում են պալեոզոյի ու ստորին կավճի նստվածքները, իսկ Կենտուկիում վերին պալեոզոյի հաստվածքը: Ալմաստի առանձին բյուրեղներ հայտնի են ԱՄՆ-ի խաղաղօվկիանոսյան ափի ցրոններում, ինչպես նաև Ապալաչյան ծալքավոր զոնայի արևմտյան եզրի երկայնքով (ԱՄՆ-ում և Կանադայում):

Այսպիսով, Կանադայի վահանի, Կանադայի ու ԱՄՆ-ի սահմաններում տարածված հանքավայրերի զլխավոր տիպերը ներկայացված են հետևյալ օգտակար հանածոներով ու հանքավայրերի խմբերով՝

1. Վերին լճի երկաթի հանքավայրեր հիմնականում ԱՄՆ-ում և մասամբ Կանադայում: Հանքայնացման տիպը մետամորֆոզեն է և հարում է հուրոնի ու մասամբ արխեյի հասակի երկաթային քվարցիտներին:

2. Ոսկու հանքավայրեր, ներկայացված բարձր ջերմաստիճանային հիդրոթերմալ քվարց-ոսկեբեր երակներով, զլխավորապես Կանադայում (Յելոուհայֆ, Պորկյուպայն, Կիրկլենդ-Լեյկ շրջանները) ու մասամբ ԱՄՆ-ում (Հոմպրեյս): Այդ հանքավայրերը ծագումով կապված են ալգոմանյան և ավելի ուշ կիլարենյան գրանիտների հետ:

Կանադական վահանը ոսկու հարստությամբ (տարեկան հանույթը մինչև 200—250 տ. ոսկի) զիջում է միայն Աֆրիկական վահանին:

3. Պղինձ-նիկելային (պլատինի ու պալլադիումի խառնուրդով) Սյոդբերի շրջանի լիկվացիոն հանքավայրերը, որոնք տալիս են կապիտալիստական երկրների նիկելի հանույթի մինչև 80%, պլատինի և պալլադիումի շուրջ 50%:

4. Հազվագյուտմետաղային պեղմատիտներ, կապված ալգոմանյան և ուրիշ գրանիտների հետ. պեղմատիտներում լայն զարգացած է լիթիումային, իսկ ավելի թույլ բերելիությամբ ու տանտալ-կոլումբիտային հանքայնացումը: Մի շարք խոշոր հանքավայրեր հայտնի են Կանադայում (Քվեբեկ, Մա-

նիտոբա մարդերում և Ստրուկների մեծ լճից դեպի հյուսիս), ինչպես նաև ԱՄՆ-ի Գալոտա նահանգում (Բլեկ-Հիլլ և ուրիշներ):

5. Կոլչեդանային բազմամետաղային (Սուլիվան) ու պղինձ-ցինկային (Ֆլին-Ֆլոն, Նորանդա, Շերրիտ-Գորդոն) մեծ մասշտաբի հանքավայրեր, որոնք տալիս են ոչ միայն կապար, ցինկ ու պղինձ, այլ նաև զգալի քանակությամբ ոսկի, արծաթ, կադմիում, ինդիում:

Բոլոր այդ հանքավայրերը տեղագրված են մինչքեմբրի մետամորֆացված հրաբխա-նստվածքային հաստվածքներում: Նրանց առաջացման պայմանները լրիվ պարզաբանված չեն. երկրաբաններից ոմանք հանքայնացումը կապում են գրանիտոիդների հետ, մյուսները՝ հնազույն հրաբխականության գործունեության հետ:

6. Ուրանի հինգտարրանոց (Co-Ni-Bi-Ag-U) ֆորմացիայի խոշոր հանքավայրեր Մեծ արջի լճի և ուրանի խեժի մի շարք հանքավայրեր հեմատիտով Ատաբասկա լճի շրջաններում: Մեծ արջի լճի հանքավայրերի խմբի հասակը 1400 մլն. տ. է, մյուս հանքավայրերի հասակը տատանվում է 600 մինչև 1910 մլն. տ., որը վկայում է ուրանաբեր մետաղածնային մի քանի դարաշրջանների գոյության մասին:

7. Ոսկի-ուրանաբեր քվարցիտներ ու կոնգլոմերատներ Հուրոն լճից դեպի հյուսիս՝ Բլայնդ-Ռիվեր շրջանում: Այստեղ կենտրոնացված են ուրանի հսկայական պաշարներ (UO₃-ի միջին պարունակությունը 0,12%), որի հանույթով այդ շրջանը աշխարհում գրավում է առաջին տեղը. միաժամանակ ստացվում է փոքր քանակությամբ ոսկի (միջին պարունակությունը ընդամենը 1 գ/տ):

Առաջացման պայմաններով Բլայնդ-Ռիվերը դասվում է մետամորֆացված բրածո ցրոնների շարքին և նման է Վիտվատերսբանդին, Բլայնդ-Ռիվերի հանքայնացման բացարձակ հասակը 2600—2200 մլն. տ. է:

8. Իմենիտի ու տիտանամագնետիտի հանքավայրեր մինչքեմբրյան հասակի անորտոզիտային զանգվածներում (Սենտ-Ուրբեն, Ալարդ-Լեյկ և ուրիշ.):

9. Միսսուրի, Օկլահոմա, Կանզաս նահանգների վերին քեմբրի-կարբոնի պլատֆորմի ծածկոցում զարգացած են կապար-ցինկային շերտաձև տեղեթերմալ (կամ նստվածքային °) ծագման հանքավայրեր:

10. Յուտա ու Կոլորադո նահանգների նստվածքային ծածկոցի ավազաքարերում ու կոնգլոմերատներում, որոնց հասակը տատանվում է ուշ պալեոզոյից մինչև երրորդական հասակ ներառյալ. գլխավորապես տրիասի ու յուրայի հաստվածքներում կենտրոնացած են ուրան-վանադիումային հանքանյութերի կարևոր հանքավայրեր, ներկայացված կառնոտիտով ու ռոսկոելիտով: Այդ հանքավայրերի առաջացման պայմանների վերաբերյալ մի ընդհանուր տեսակետ գոյություն չունի. երկրաբաններից ոմանք հանքավայրերը համարում են սինգենետիկ, նստվածքային, իսկ մյուս խումբը հիմնավորում է նրանց էպիգենետիկ բնույթը ու կապը երիտասարդ (երրորդական) մագմատիզմի հետ:

Վահանի առանձին տեղամասերի (Քվեբեկ, Գրենվիլ, Միչիգան և այլ մարդերում) ակտիվացման և ուլտրահիմքային-ալկալային ինտրուզիաների ներդրման հետ կապված առաջանում են կարբոնատիտների հանքավայրեր Nb-TR հանքայնացումով (Օկա, Մոնրեալի մոտ, Մանիտու կղզի և ուրիշներ):

- Вильсон М. Е. Классификация и корреляция докембрия Канадского щита. В сб. «Новости зарубежной геологии», вып. 31, Изд. ВСЕГЕИ, 1962, с. 3—40.
- Международный геохимический конгресс. 1971, Москва. Тезисы докладов (тезисы доклада Р. Е. Фолинсби), с. 967—968.
- Пахолков В. Д. Минеральные ресурсы Канады. «Минер. ресурсы зарубежных стран», вып. 11, Госгеолиздат, 1949, с. 67.
- Розин М. С. и др. Минеральные ресурсы США. «Минер. ресурсы зарубежных стран», вып. 20, Госгеолиздат, 1952, с. 113—296.
- Geology and economic Minerals of Canada. Econ. Geol. rp. № 1, Dep. of energy, mines and resources Canada, Ottawa, 1970, p. 838.
- Holmes S. W. The Uranium-bearing conglomerates of the Blind River-Algoma area, Canad. Min. Journ. v. 79, № 4, 1958, p. 103—108.
- Sarcia J. Géologie prévisionnelle et géochronologie. Distribution géochronologique des principales minéralisations du Bouclier Canadien. Bull. du BRGM, № 2, 1967. p. 76—79.
- Structural geology of Canadian ore deposits. C. I. M. Mining geology Division, v. I, 1948; v. II, 1957; v. I, p. 1—948.
- Turneaure F. S. Metallogenetic provinces and epochs. Econ. Geol. Fiftieth Anniversary volume, 1955, p. 38—98.


5. Աֆրիկա-Արարական վահանն ու նրա պլատֆորմն ընդգրկում են Աֆրիկայի մայրցամաքի համարյա ողջ տարածքը, բացի նրա համեմատաբար փոքր մարզերից հյուսիս-արևմուտքում ու հարավային եզրում, որոնք ներկայացված են ծալքավոր զոնաներով: Աֆրիկական վահանին են վերագրում նաև նրա հետ երկրաբանորեն կապված Արարական թերակղզին ու Մադագասկար կղզին: Այսպիսով, Աֆրիկայի վահանի ընդհանուր տարածությունը կազմում է շուրջ 30 մլն. կմ²: Մայրցամաքի հարավային մասում հաստատված են Աֆրիկայի պլատֆորմի հնագույն միջուկի նշանները՝ նրա «նուկլեար» ստադիան, որն արտահայտված է Սեբակվի-Բուկավայի ցիկլի (3,5—3 մլրդ. տ.) առաջացումներով: Առանձնացված է նուկլեար ստադիայի առաջնային կանաչքարային ֆորմացիաների զրանիտացման ստադիա (3—2,5 մլրդ. տ.)՝ զրանիտազնեյսների ու միզմատիտների հսկայական դաշտերի առաջացումով: Հետագայում տեղի է ունեցել նուկլեար ստրուկտուրաների կոտրատումը արխեյի սկզբում, զեոսինկլինալային իջվածքների զոյացումով և առաջին մեծ «նախապլատֆորմի» ձևավորմամբ արխեյի վերջում (նկ. 5):

Հյուսիսային Աֆրիկայում զարգացած է նստվածքային հզոր ծածկոց, որի առանձին տեղամասերում մերկանում են նուկլեար ստրուկտուրաների զրանիտացված հին ապարները:

Կրենկելի տվյալներով (Krenkel, 1957) Աֆրիկայի հյուսիսային կամ «Միջերկրածովային» բլոկի պլատֆորմի վերջնական ձևավորումը տեղի է ունեցել ավելի վաղ, քան Կենտրոնական ու Հարավային Աֆրիկայում: Հաստատվում է Շյուրմանի կողմից (1961) Կարմիր ծովի եզերքի երկայնքով առանձնացված էվզեոսինկլինալը ու նշագծվում է նրա շարունակությունը դեպի «Բայկալյան» զրանիտոիդային ինտրուզիաների Մոզամբիկյան զոնան, որոնք կապված են ուրալյան ռեակտիվացման հետ: «Նրիտասարդ» զրանիտները զարգացած են նաև Նիգերիայում Կամերունյան խոր իջվածքի երկայնքով, ամենուրեք ուղեկցվելով հազվագյուտմետաղային հանքայնացումով:

Աֆրիկական վահանի հանքային ռեսուրսները բաղմազան են ու հարուստ: Աֆրիկան ոսկու (կապիտալիստական երկրների հանույթի 70%), ալմաստի (95%), կոբալտի (80%), պլատինի և պալադիումի (50%) հանույթով աշխարհում զբաղում է առաջին տեղը, իսկ ուրանի, տանտալի, նիոբիումի, բերիլիումի, լիթիումի, գերմանիումի, ցիրկոնիումի, ցեզիումի, հազվագյուտ հողային տարրերի և ուրիշ օգտակար հանածոների հանույթով առաջատար տեղերից մեկը:

Կրենկելի տվյալներով (1957) Աֆրիկական վահանը և պլատֆորմը կարելի է բաժանել երկու բլոկների. հյուսիսային՝ Միջերկրածովային ու հարավային՝ Գոնդվանյան. նրանց միջև սահմանագիծն անցնում է մեծ լինեամեն-



Նկ. 5—Աֆրիկայի տեկտոնական զարգացման սխեման մինչքեմբրում (պրոտոտերոզոյան-ստորին ռիֆեյան փուլը) ըստ Ն. Ս. Կոլտուսիկնայի:
 1—Նուկլեար միջուկը, 2—գրանիտացված կատարխեյան-արխեյան հիմքը, 3—ծալքավոր գոտիներ՝ I Շամվայան (2650 մլն. տ.), II Կավիրոնգի-Կիբալլան (2650 մլն. տ.), III Մալոբե (>2000 մլն. տ.), IV Ֆարուգի-Բիրիմյան (>2000 մլն. տ.), V Ուբենդի-Ուուդիլիյան (1650 մլն. տ.), VI Լուկոչի (1850 մլն. տ.), VII Կարազի-Անկոլե-Կիրարա-Ուրունդի-Դամարյան (1050—800 մլն. տ.), VIII Կարմիրծովյան—Հնդկօվկիանոսյան (1000—800 մլն. տ.), 4—Հարավ-Աֆրիկյան արխեյան պրոտոպլատֆորմ, 5—Պրոտո-աֆրիկական լինեամենտ (ըստ Կրենկելի), 6—Հյուսիս-Աֆրիկական պրոտոտերոզոյան պլատֆորմ, 7—Ստորին ռիֆեյան ստարիլացման մարզ, 8—Մազա-գասկար կղզու ենթազրվող տեղը:

տով Գլխնեական ծովածոցից արևմուտքում մինչև Ադենի ծովածոցը արևելքում։
Հարավային բլուրը իր հերթին կարելի է ենթաբաժանել երկու մեծ՝ Կենտրոնական ու Հարավային Աֆրիկայի ռեգիոնների, որոնք տարբերվում են երկրաբանական կառուցվածքով։

Հիմք ընդունելով Աֆրիկայում աշխատող երկրաբանների հետազոտությունները (Ֆյուրոն և ուրիշներ, 1958) և ապարների բացարձակ հասակի որոշումները, ընդունվում է Աֆրիկայի մինչքեմբրի ստրատիգրաֆիայի հետևյալ սխեման՝

մինչքեմբր I կամ կատարիսեյ (3500—2700 մլն. տ.)

մինչքեմբր II կամ արիսեյ (2700—2000 մլն. տ.)

մինչքեմբր III կամ պրոտերոզոյ (2000—1300 մլն. տ.) և

մինչքեմբր IV կամ ռիֆեյ (1300—600 մլն. տ.),

Աշխարհագրական հատկանիշներով և երկրաբանական կառուցվածքով առանձնացվում են չորս խոշոր ռեգիոններ՝ Հյուսիսային Աֆրիկա, Կենտրոնական Աֆրիկա, Հարավային Աֆրիկա, Արևելյան Աֆրիկան Մազագասկար կղզով։

Հյուսիսային Աֆրիկան (Սահարա, ԵԱՀ, ինչպես նաև Սաուդական Արաբիան) ծածկված է ռիֆեյան ու ավելի երիտասարդ նստվածքներով, որոնց տակից տեղ-տեղ մերկանում են մինչքեմբրյան ծալքավոր հիմքի զանգվածները՝ Ռեգիբատյան, Տուարեգյան վահանները և համեմատաբար ավելի փոքրերը։

Այստեղ ամենահին մինչքեմբրի սերիան՝ Սուգարիյը ներկայացված է գնեյսներով, ամֆիբոլիտներով, շառնոկիտներով, քվարցիտներով, միզմատիզացված գրանիտներով։ Վերջինի վրա աններդաշնակ, տեղադրված է Ֆարուզին՝ կոնգլոմերատներ, թերթաքարեր, ֆելիտներ, ուրիտներ ու անդեզիտներ։

Արևմտյան Աֆրիկայում հնագույնը Դագոմիյ ֆորմացիան է, ներկայացված բյուրեղային թերթաքարերով, գնեյսներով, միզմատիտներով, շառնոկիտներով. այն համադրելի է Սահարայի Սուգարի սերիայի հետ։ Վերը, աններդաշնակ, տեղադրված է Բիրիմի սերիան՝ քվարցիտներ, թերթաքարեր, հրաբխածիններ, իսկ ավելի վեր, նույնպես աններդաշնակ՝ Տարկվիին (հիմքի կոնգլոմերատներ, ավազաքարեր ու քվարցիտներ ոսկեբեր կոնգլոմերատների հորիզոններով)։ Տարկվիի բացարձակ հասակը 1950 մլն. տ. է, իսկ Բիրիմիինը՝ 2200 մլն. տ.։

Կենտրոնական Աֆրիկա (գլխավորապես Զաիրը, այսինքն Կոնգոն, Կինշասա)։ Այստեղ առավել հին ապարները ներկայացված են Արևմտյան նեղոսի ու Բոմու ֆորմացիաների գնեյսներով ու թերթաքարերով (բացարձակ հասակը 3500—3200 մլն. տ.)։ Ավելի վեր տեղադրված է Բանդիվիլ ֆորմացիան, բաղկացած թերթավորված քվարցիտներից, ըլորիտային թերթաքարերից ու ֆելիտներից։ Կասայի մարզում (Զաիրի հարավային մաս) համեմատաբար հին են նույնանուն վահանի հիմքի (բացարձակ հասակը մինչև 3300 մլն. տ.) և Կարունդվե ֆորմացիաները 2650 մլն. տ. բացարձակ հասակով. նրանք կազմված են գնեյսներից, միզմատիտներից, քվարցիտներից, իտաբիտիտներից։

Այդ հնագույն կոմպլեքսների վրա խիստ աններդաշնակ տեղադրված է Կիբարա-Ուրունդի խումբը, որի հետ կապված են պեզմատիտային խոշոր հանքավայրեր անագով, տանտալով, նիոբիումով, լիթիումով, բերիլիումով

և այլն: Կիրարա-Ուրունդի խմբի բացարձակ հասակը 850—1150 մլն. տ. է: Այդ խմբի նստվածքների վրա խիստ աններդաշնակ տեղադրված են ավելի երիտասարդ՝ Կատանգայի խմբի շերտախմբերը, որոնք լայն դարգացած են և ունեն կարևոր մետաղածնային նշանակություն: Այդ նստվածքները (կոնգլոմերատներ, ավազաքարեր, քվարցիտներ, թերթաքարեր և զոլոմիտներ) հանք պարունակող են Կատանգայի ու Հյուսիսային Ռոդեզիայի համաշխարհային նշանակություն ունեցող պղնձի հանքավայրերի, ինչպես նաև կոբալտի, ցինկի, կապարի, կադմիումի, գերմանիումի, սելենի և ուրանի արդյունաբերական կուտակումների համար:

Կատանգայի խմբի նստվածքների ընդհանուր հզորությունը 4—6 կմ է, բացարձակ հասակը՝ 520—530 մլն. տ.:

Հարավային Աֆրիկա (Հարավարևմտյան Աֆրիկա, ՀԱՀ, Հարավային Ռոդեզիա և ուրիշ շրջաններ):

Հարավային Ռոդեզիայում առանձնացվում են վարից վեր մինչքեմբրյան ապարների երեք սխտեմներ՝ Սեբակվյան (երկաթային քվարցիտներ, մագնեզիումային ապարներ, մարմարներ, գրանուլիտներ ու գրանիտոզենոյաններ, բացարձակ հասակը 3390 մլն. տ.), Բուլավյան (կոնգլոմերատներ, բազալտներ, դալիտներ, քվարցիտներ, յաշմաներ, ուլտրահիմքային ինտրուզիաներ, բացարձակ հասակը 2850 մլն. տ.), Շամվայան (կոնգլոմերատներ, ավազաքարեր, գրանուլակներ, ֆելիտներ. բացարձակ հասակը 2650 մլն. տ.):

Հարավ-Աֆրիկյան հանրապետությունում (ՀԱՀ) մինչքեմբրի հիմքում տեղադրված է հնագույն Սվազիլենդ համալիրը 3500 մլն. տ. բացարձակ հասակով. նրանից վեր տեղադրված է Վիտվատերսրանդ սխտեմը (կոնգլոմերատներ, ավազաքարեր, քվարցիտներ 1913—2020 մլն. տ. բացարձակ հասակով, իսկ Շուբերի սվալներով՝ 2540 մլն. տ.), այդ սխտեմին են հարում հայտնի ոսկի-ուրանաբեր կոնգլոմերատները: Ավելի վեր տեղադրված է Տրանսվալյան սխտեմը (թերթաքարեր, քվարցիտներ և զոլոմիտներ), որը ներդրված է Բուշվելդի համալիրի ինտրուզիայով, 1950 մլն. տ. բացարձակ հասակով:

Այդ սխտեմի զոլոմիտներում տեղադրված են կապարի ու ցինկի, Ֆլյուորիտի ու վանադիումի հանքավայրերը: Հարավարևմտյան Աֆրիկայում ու նամակվալենդում զգալի տարածություններ են զբաղեցված ավելի երիտասարդ Գամարա (բացարձակ հասակը 800—1000 մլն. տ.) և Օտավի (760 մլն. տ.) հաստվածքներով: Այդ նստվածքները (քվարցիտներ, թերթաքարեր, զոլոմիտներ) հանք պարունակող են: Գամարա սխտեմը հատված է գրանիտներով, որոնց հետ կապված են հազվագյուտմետաղային պեգմատիտներ (բերիլ, լեպիդոլիտ և ուրիշ.) 800 մլն. տ. բացարձակ հասակով. Օտավի սխտեմի զոլոմիտներում տեղադրված են գերմանիումով հարուստ պղինձ-կապար-ցինկային Յումեր հանքավայրը ու վանադիումի մի շարք հանքավայրեր (Աբենաբ և այլն):

Հարավային Աֆրիկայի մինչքեմբրի կտրվածքը ավարտող ամենաերիտասարդ առաջացումները խմբավորվում են Վատեսբերգ սխտեմում (բացարձակ հասակը 630 մլն. տ.), որը կազմված է բեկորային նյութից ու հիմքային լավաների հոսքերից:

Մ ա դ ա գ ա ս կ ա ր կ ղ ղ ի. Այստեղ ամենահինը Անդրոյ սխտեմն է, որը կազմված է պարագենոյաններից, մարմարներից, պիրոքսենիտներից, շառ-

նովկիտներից: Ավելի վեր տեղադրվում է Գրաֆիտ սիստեմը, որը ներկայացված է գրաֆիտով հարուստ լեպտիտներով, ինչպես նաև գնեյսներով, թերթաքարերով, միզմատիտներով. բացարձակ հասակը մոնացիտի միջոցով որոշված է 2430 մլն. տ.:

Զգալի ընդմիջումից հետո առաջացել են Վոդիբորի սիստեմի նստվածքները՝ գնեյսները, թերթաքարերը, մարմարները: Վոդիբորի սիստեմին հարում են հազվագյուտմետաղային պեզմատիտների դաշտերը բերիլիումով ու հազվագյուտ հողերով: Միստեմի հասակը 2170 մլն. տ. է, իսկ պեզմատիտներինը զգալիորեն ավելի երիտասարդ՝ 485 մլն. տ.:

Մետամորֆացված հիմքի վրա անկյունային աններդաշնակությամբ տեղադրված է Յիպոլինո սերիան (քվարցիտներ, հատված պղինձ-կապարային հանքանյութերի հրակներով), որի բացարձակ հասակը 1050—1125 մլն. տ. է:

Կրենկելի տվյալներով Աֆրիկան **ամբողջությամբ վերցրած** (բացառությամբ Ատլասի զոնայի հյուսիսում ու Կապի ծալքավոր սիստեմի հարավում) իրենից ներկայացնում է մի հսկայական վահան, որի բարդ տեկտոնական կառուցվածքը պայմանավորված է տարբեր սիստեմների խախտումների զարգացմամբ:

Վ. Ե. Խայնը (1960) Աֆրիկան դասելով շարժուն պլատֆորմների շարքը, նրա հիմնական առանձնահատկությունը համարում է խորքային բեկումների զարգացումը, որը պայմանավորել է պլատֆորմի բլոկային կառուցվածքը: Նա գրում է՝ «Շարժուն գոտիների գոյությունը և նրանց համար բնորոշ գծավորությունը կապված են խորքային բեկումների հետ»:

Հարավային Ռոդեզիայի հնագույն կատարիեյան միջուկը կազմված է Սերակվյան-Բուլավյան կոմպլեքսից (3390—3000 մլն. տ.), որի հետ կապված են ոսկու արմատական հանքավայրերն ու հազվագյուտմետաղային պեզմատիտները Be-Li հանքայնացումով: Կատարիեյին են վերագրվում նաև հետևյալ հնագույն համալիրները՝ Գոդոմա-Նիանզյանը Տանզանիայում (3255—2850 մլն. տ.), Մվազիլենդը ՀԱՀ-ում (3500 մլն. տ.), Արևմտյան Նեղոսի ու Բոմոն Զաիր հանրապետության հյուսիսարևելյան մասում (3200—3400 մլն. տ.): Կատարիեյում ձևավորված պինդ բլոկները հետագայում ենթարկվում են բեկորատման. այդ հին բեկվածքների երկայնքով առաջանում են նեղ գեոսինկլինալային տրոգներ՝ ճկվածքներ, որտեղ կուտակվում են գեոսինկլինալային նստվածքներին շատ նման հզոր հաստվածքներ: Այդ տիպի նստվածքների հետ կապված են հզոր ծալքավոր սիստեմներ. Շամվայը՝ Հարավային Ռոդեզիայում, Կավիրոնդի-Կիբալին՝ Զաիրում, Մայումբեն՝ Անգոլայում (նրանց հասակը տատանվում է 2750—2650 մլն. տ. սահմաններում): Գրանիտացված կոշտ հիմքի վրա առաջացել է հնագույն պլատֆորմային ստրուկտուրան՝ «նախապլատֆորմ» տերիզեն, մասամբ հրաբխածին ու կարբոնատային՝ Դոմինյոն Ռիֆ, Վիտվատերսրանդ, Վինտերսդորպ ու Տրանսվալ սիստեմների ծածկոցով: Դոմինյոն Ռիֆ ու Վիտվատերսրանդ սիստեմների կոնգլոմերատները ոսկի- և ուրանաբեր են. նրանց բացարձակ հասակը տատանվում է 3200 ու 2000 մլն. տ. ինտերվալում: Պրոտերոզոյի վերջում առաջանում է բեկվածքների նոր սերիա, որը հատում է արխեյի ու ստորին պրոտերոզոյի ծալքավոր գոտիները և բեկորատում պլատֆորմը: Բեկվածքների ուղղությունը գլխավորապես հյուսիս—հյուսիսարևելյան է, որը համընկնում է Մեծ Աֆրիկական երիտասարդ բեկվածքների զոնայի ուղղության

հետ: Այդպիսի բեկվածքի զոնայի ու ձկվածքի երկայնքով կուտակվում են գեոսինկլինալային նստվածքների հզոր հաստվածքները, որոնք ծալքավորված են զծային ծալքերի ձևով և հատված են զրանիտային ինտրուզիաներով: վերջինների հետ կապված են արդյունաբերական մեծ նշանակություն ունեցող հազվագյուտմետաղային ու անագաբեր պեղմատիտները (Li ու Be Հարավարևմտյան Աֆրիկայի ու Կապի մարզի, Li-Be ու Ta-Nb Զաիրի, Ռուանդա և Ուրունդի պեղմատիտներում): Բացարձակ հասակի որոշումները տալիս են 1200—1300 և 800—1000 մլն. տ., որոնք համապատասխանում են ստորին սիֆեյին:

Ամենաերիտասարդ Կատանգայի սիտեմի նստվածքները վերադրվում են վերինսիֆեյան պլատֆորմի ծածկոցին. նրանց հետ կապված են համաշխարհային նշանակություն ունեցող պղնձի գոտու հանքավայրերը, ինչպես նաև կոբալտի, կապարի, ցինկի, կադմիումի, գերմանիումի, ուրանի խոշոր կուտակումները:

Հարավարևմտյան Աֆրիկայում Կատանգա սիտեմի ֆորմացիայի նմանակը Օտավի սիտեմն է:

Աֆրիկյան մայրցամաքի Հյուսիսային մասը, ըստ Կրենկելի, այսպես կոչված, Միջերկրածովային բլուրը, ձևավորվել է ավելի վաղ, քան հարավային կամ Աֆրիկայի Գոնգվանյան մասը: Հյուսիսային բլուրի սահմաններում հնազույն հիմքը կազմում են Սուգարի սիտեմի նստվածքները, որոնք հայտնաբերված են Սահարայի Տուարեգյան վահանում: Սուգարյան ցիկլի վերջում կոշտ բլուկները ենթարկվել են խորքային բեկվածքների, որոնց երկայնքով առաջացել են գեոսինկլինալային տրոգներ. այդ ձկվածքներում կուտակվել են Ֆարուզիի հրաբխ-նստվածքային հզոր հաստվածքներ, որոնք հետագայում ծալքավորվել և արխայի վերջում—պրոտերոզոյի սկզբում հատվել են զրանիտային ինտրուզիաներով (Ֆարուզի ու Բիրիմի բաթոլիտները): Գրանիտային խոշոր ինտրուզիաները միակցել են առանձին բլուկները ու նպաստել են Երկրի կեղևի այդ տեղամասի վերջնական ձևավորմանը և նրա վերածմանը Հյուսիս-Աֆրիկական պլատֆորմի: Ֆարուզիի վրա աններդաշնակ տեղադրված են ուրոլիտներ և Նիգրիտի սերիայի բեկորային ապարներ, որը վերագրվում է վերին մինչըմբերին վերաբերվող և սիֆեյան պլատֆորմի նստվածքային ծածկոցի կազմի մեջ մտնող Նիգրիտի սերիայի ուրոլիտներին և բեկորային ապարներին:

Աֆրիկայի մայրցամաքի արևելյան մասը բնորոշվում է միանգամայն աչլ տեկտոնական զարգացմամբ՝ ձկվածքում առաջացած սիֆեյան ծալքավոր զոնայով, որն ընդգրկում է Սաուդական Արաբիայի հարավարևմտյան մասը, ՆԱՀ արևելյան մասը, Հյուսիսարևելյան Սուգանը, Հյուսիսարևելյան Նիլովպիան ու Հյուսիսային Սոմալին: Այդ գոտին կազմված է հրաբխածին ու բեկորային և գեոսինկլինալային ֆորմացիաներից, հատված սինօրոգեն (բացարձակ հասակը 1000 մլն. տ., Շետ զրանիտներ) ու հետօրոգեն (բացարձակ հասակը 480—600 մլն. տ., Գատարի զրանիտներ) զրանիտոիդներով: Հարավում այդ գոտին կապվում է «Մոզամբիկյան գոտու» ու Մադագասկարի արևմտյան մասի հետ, որտեղ նույնպես հայտնի են 480—650 մլն. տ. բացարձակ հասակի զրանիտոիդներ:

Այդ ամբողջ զոնան ներկայացնում է իրենից սիֆեյան շարժումներով ռեակտիվացած պլատֆորմի պրոտերոզոյան հիմքի մի մասը:

հորրբային բեկվածքների համանման զոնաներ անցնում են նաև Կենտրոնական Սահարայից Հյուսիսային Նիգերիա ու Կամերուն. այստեղ հաստատված են ալկալային գրանիտների 485—480 մլն. տ. բացարձակ հասակով, որոնք հաստատում են Հյուսիս-Աֆրիկական պլատֆորմի վերին ռիֆեյան ռեակտիվացումը:

Ինչ վերաբերում է Կենտրոնական Աֆրիկական գրաբեկի ու Արևելա-Աֆրիկական ռիֆտային հովիտների զոնաներին, որոնց հարում են նեֆելինային սիենիտների ինտրուզիաները ու նրանց հետ կապված կարբոնատիտների խոշորագույն հանքավայրերը, ապա նրանց զարգացումը տեղի է ունեցել մինչև քեմբրի ու ստորին պալեոզոյից մինչև պալեոգենի դարաշրջանը ներառյալ, կապված հին բեկվածքների պարբերական երիտասարդացման ու ինտրուզիաների բազմակի ներդրման հետ:

Աֆրիկայի մայրցամաքում լայնորեն զարգացած են զրանիտոիդային ինտրուզիաները, որոնք զատվում են մինչև քեմբրյան հիմքի «հին գրանիտների» և ստորին քեմբրյան և ավելի երիտասարդ հասակի «երիտասարդ գրանիտների» ձևավորված ակտիվացած զոնաներում: Հին գրանիտների հետ կապված են հազվագյուտմետաղային բերելիումով, տանտալադոմբիտով, լիթիումային միներալներով պեգմատիտների դաշտերից շատերը:

«Երիտասարդ» գրանիտների բոլոր ինտրուզիաները հարում են վերին ռիֆեյան ռեակտիվացման երկու տեկտոնական զոնաներին: Առաջին զոնան ընկած է Հյուսիսային Նիգերիայից դեպի հյուսիս՝ Սահարա, երկրորդը՝ ձգվում է ԵԱՀ-ից Կարմիր ծովի եզրի երկայնքով և այնուհետև դեպի հարավ՝ Հնդկական օվկիանոսի ափի երկայնքով:

«Երիտասարդ» գրանիտների համար բնորոշ է օղակային կառուցվածքը, բարձր ալկալիությունը, կոլումբիտային ու կասիտերիտային հանքանյութային առկայությունը (Նիգերիայում, Կենտրոնական Սահարայում, ԵԱՀ-ում, Սուդանում, Եթովպիայում, Սոմալիում, Սաուդական Արաբիայում, Մադագասկարում): Այդ գրանիտների բացարձակ հասակը տատանվում է 435—540 մլն. տ. սահմաններում (ստորին քեմբր): Մազագասկարի գրանիտոիդների հետ, որոնց բացարձակ հասակը 485 մլն. տ. է, կապված են ուրանի, թորիումի, բերիլիումի, նիոբիումի, տանտալի ու հազվագյուտ հողերի գործնականորեն հետաքրքիր հանքանյութային պեգմատիտներ: Հարավային, Կենտրոնական ու Արևելյան Աֆրիկայում լայնորեն զարգացած են ալկալային ապարների ինտրուզիաները, որոնց նույնպես բնորոշ է օղակային կառուցվածքը ու կապը մայրցամաքի զարգացման պլատֆորմային փուլի հետ:

Բուշվելդյան մագմատիկ համալիրում ապարները բազմազան են և ըստ իրենց կազմության տատանվում են ուլտրահիմքայինից մինչև թթուն ու ալկալայինը. վերջինները ամենաերիտասարդն են ու պատկանում են հետվատերսբերգյան ալկալային ֆազային: Սպիցկոպ ալկալային համալիրի հետ (հասակը՝ հետկարբոն և մինչկալեդոնի) կապված են կարբոնատիտային հանքավայրերը: Դամարալենդում (Հարավարևմտյան Աֆրիկա), Արևելյան Աֆրիկայում ու Ջաիր հանրապետության արևելյան մասում, ինչպես նաև Ուգանդայում և Քենիայում հայտնի են ուլտրահիմքային-ալկալային ինտրուզիաներ, որոնք հաճախ ուղեկցվում են կարբոնատիտներով. նրանց առաջացման ժամանակաշրջանը կարրուից մինչև երրորդականն է: Ալկալային կոմպլեքսները կարբոնատիտներով ունեն զծային տեղադրում (նկ. 6) և հարում են խոշոր բեկվածքների զոնաներին՝ ռիֆտերին:

Աֆրիկական վահանի հանքավայրերի շարքում մենք առանձնացնում և համառոտ նկարագրում ենք հետևյալ զլխավոր խմբերը՝

Գրանիտոիդների զանգվածներում տեղադրված հանքավայրեր.

Հազվագյուտմետաղային հանքավայրեր.


Կարբոնատիտային հանքավայրեր.

Հիմքային ու ուլտրահիմքային ինտրուզիաների հետ կապված հանքավայրեր.

Fe, Mn, Au-U մետամորֆոզեն հանքանյութերի հանքավայրեր.

Պղնձի և կոբալտի, ուրանի, կապարի ու ցինկի և ուրիշ շերտաձև հանքավայրեր պլատֆորմի ծածկոցի ապարների մեջ.

Քիմբերլիտների հետ կապված արմատի հանքավայրեր:



Նկ. 6—Աֆրիկայի կարբոնատիտային (առավելապես նիոբիում պարունակող) համալիրների զարգացման քարտեզ (ըստ Դե-Կյունի, 1961).


1—Կարբոնատիտ-ալիկալային կոմպլեքսներ, 2—բեկվածքներ:

Գրանիտոիդային զանգվածներում տեղադրված առաջին խմբի հանքավայրերին պատկանում են Հյուսիսային Նիգերիայի կոլումբիտաբեր գրանիտները: Բացի կոլումբիտից գրանիտները պարունակում են կասիտերիտ, մոնացիտ, ցիրկոն, թորիտ, քսենոտիմ, որոնք նույնպես արդյունահանվում են: Կոլումբիտը կապված է Ջոս սարահարթի «երիտասարդ» բիտտիտային գրանիտների հետ, շահագործվում է զլխավորապես գրանիտների հողմնահարման կեղևը՝ կոլումբիտի 1 կգ/տ պարունակովյալը:

Քանի որ կոլումբիտով հարստացած տեղամասերի համար հաստատ-

ված է հանքայնացման կապը արբիտորացման ու բեկորատման զոնաների հետ, ապա ավելի հիմնավորված պետք է համարել ոչ թե բուն մագմատիկ, այլ գրանիտների արբիտորացման հետ կապված կոլումբիտային հանքայնացման մետասոմատիկ ծագման տեսակետը (Սեկերով, 1962):

Ծրկրորդ խմբին են պատկանում Աֆրիկայի բազմաթիվ հազվագյուտ-մետաղային գրանիտային պեգմատիտները, որոնք խմբավորվում են մի շարք գոտիներում (նկ. 7): Ամենահինը Ռոդեզիայի-Տրանսվալի հազվագյուտ-մետաղային պեգմատիտների գոտին է (պեգմատիտների բացարձակ հասակը տատանվում է 2000—3000 մլն. տ. սահմաններում): Ամենահայտնի բիկիտա հանքավայրը Հարավային Ռոդեզիայում բերիլի, լեպիդոլիտի, պետալիտի ու պոլուցիտի պաշարներով խոշորագույնն է աշխարհում:



Նկ. 7—Աֆրիկայի հազվագյուտ-մետաղային պեգմատիտների հանքավայրերի տեղաբաշխման սխեմա ըստ ստրուկտուրային գոտիների. I—V ստրուկտուրային գոտիներ (ըստ Ս. Ե. Կոլտոսիինայի, 1964): I—Ռոդեզիա-Տրանսվալյան գոտի. II—Կենտրոնական-Աֆրիկական գոտի. III—Արևելյան Աֆրիկա-Մադագասկարյան գոտի. IV—Նիգերիա-Սահարայի գոտի, V—Մարոկո-Մալիի գոտի:

Կենտրոնական Աֆրիկական գոտին ընդգրկում է Ուգանդան, Զաիրը, Յուգանդան, Հարավարևմտյան Աֆրիկան ու ՀԱՀ-ը: Գրանիտները ու նրանց հետ կապված պեգմատիտները բերիլի, տանտալ-կոլումբիտի, կասիտերիտի ու լիթիումային միներալների հանքայնացումով ունեն 800—1200 մլն. տ.

բացարձակ հասակ: Այստեղ ամենահայտնի հանքավայրերն են Բուսանգա ու Մանոնո (Կատանգա մարզ, Զաիր), Հյուսիսային Ժուզուլու (Կիվու մարզ, Զաիր), Կարիբիբ (Հարավարևմտյան Աֆրիկա), Նամակվալենդ (Հարավ-Աֆրիկյան Հանրապետություն):

Արևելա-Աֆրիկական-Մադագասկարյան գոտին կապված է վերին ռիֆեյի-ստորին քեմբրի «երիտասարդ» գրանիտների հետ (բացարձակ հասակը 480—550 մլն. տ.): Գրանիտների հետ կապված են հազվագյուտամետաղային պեղմատիտները, որոնք պարունակում են ուրանի, թորիումի, տանտալի, նիոբիումի, բերիլիումի, լիթիումի, հազվագյուտ հողերի գործնականորեն կարևոր հանքայնացում:


Նիդերիա-Սահարայի գոտին, բայկալյան ցիկլի արևելային գրանիտներիով, նույնպես ուղեկցվում է պեղմատիտներով (Be-Li-Ta-Nb հանքայնացումով), սակայն նրանք գործնական նշանակություն չունեն:

Մարեկոյի-Մալիի հազվագյուտամետաղային պեղմատիտների գոտին լիթիումային և բերիլ-տանտալ-կոլումբիտային հանքայնացումով, մասամբ կապված է արխեյան հասակի գրանիտների, մասամբ էլ, հավանաբար, «երիտասարդ» վերին ռիֆեյան հասակի գրանիտների հետ:

Աֆրիկայի կարբոնատիտային հանքավայրերը, ինչպես և ամենուրեք, կապված են ուլտրահիմքային-արևելային կոմպլեքսների հետ և ներկայացնում են մեծ հետաքրքրություն որպես նիոբիումի, ցիրկոնիումի, հազվագյուտ հողերի սկզբնաղբյուր: Աֆրիկայի կարբոնատիտային հանքավայրերի առանձնահատկություններից մեկը նրանց հասակային մեծ ինտերվալն է մինչքեմբրից մինչև երրորդական և նրանց հարումը Մեծ Աֆրիկական բեկվածքների գոնային (նկ. 8): Կարբոնատիտների հանքավայրերի զգալի մասը գտնվում է Զաիրում, Ռուանդայում, Ուգանդայում, Քենիայում, Տանզանիայում, Ռոդեզիայում ու Նյասալենդում: Խոշոր հանքավայրեր են Լուեշը (Կիվու մարզ, Զաիր), որը Քրազիլիայի Բարրեյրու-դի-Արաշա պիրոքլորային հանքավայրի նմանակն է և բաստնեզիտի Կարոնգե հանքավայրը (Ռուանդայում), որը շատ նման է Կալիֆոռնիա նահանգի Մաունտին-Պաս հանքավայրին:

Աֆրիկայի արևելային ու կարբոնատիտային համալիրների շարքում առանձնացնում են երեք տարբեր հասակի խմբեր՝ ա) ներդրված ստորին մինչքեմբրից հետո, Կարրուից առաջ, բ) ներդրված Կարրուից հետո, մինչ երրորդական դարաշրջանը, գ) երրորդական և ժամանակակից համալիրներ:

Հիմքային և ուլտրահիմքային համալիրների հետ կապված հանքավայրեր հայտնի են ՀԱՀ-ում ու Հարավային Ռոդեզիայում, որտեղ նրանք հարում են Բուշվելդի համալիրին ու Մեծ Դայկային: Այդ մագմատիկ համալիրների հիպերբասիտների հետ կապված են քրոմիտի բուն մագմատիկ հանքանյութերի հսկայական կուտակումներ (Սելուկվե հարավային Ռոդեզիայում, Բուշվելդյան խումբը ՀԱՀ-ում) ու պղինձ-նիկելային սուլֆիդային (Co, Pt, Pd խառնուրդով) հանքանյութերի լիկվացիոն հանքավայրեր. վերջինները հարում են Բուշվելդի լոպտիտի Մեքենակու հորիզոնի բրոնզիտիտներին ու անորտոզիտներին (Ռուստենբուրգի և ուրիշ շրջաններ): Քրոմիտի հանույթով նշված հանքավայրերը աշխարհում գրավում են առաջատար տեղերից մեկը, իսկ պլատինի և պալադիումի հանույթով (10—20 տ. տարեկան)՝ առաջին տեղը կապիտալիստական երկրներում: Աֆրիկայի հաջորդ, շատ կարևոր մետաղային հանքավայրերի խումբը պատկանում է մետամորֆոզեն տիպին և ընդ-



նկ. 8—Աֆրիկական ուֆտերի ստրուկտուրային բարեկ (ըստ Մակ-Կոնելի, 1951).
 1—գործող հրաբուխներ, 2—իջված տեղամասեր, 3—բարձրացած տեղամասեր,
 4—արտաուֆտային հրաբխային ապարներ, 5—ուֆտերի հրաբխային ապարներ,
 6—վարենտվածքների զլխավոր սանդղավանդները, 7—Կարագվե-Անկոլեան վիր-
 գացիա, 8—վահանի բլուկների շարժման ուղղությունը, 9—կարբոնատիտների հան-
 քավայրեր, լրացուցիչ նշված Ս. Ն. Կոլտուխինայի կողմից, 10—ուֆտային զո-
 նաների ենթադրելի շարունակությունը:

գրկում է երկաթային քվարցիտների տիպի երկաթի (Տրանսվալում), մանգանի հանքանյութերի (Նոուտա՝ Գանայում, Պոստմասբուրգ՝ ՀԱՀ-ում) և ոսկե-տուրանաբեր կոնգլոմերատների (Վիտվատերսրանդ ու Գանա) խոշորագույն կուտակումներ: Առանձնապես մեծ նշանակություն ունի Վիտվատերսրանդ հանքավայրը ՀԱՀ-ում 10—11 գ/տ Au ու 0,01% U պարունակություններով հանքանյութերում, որը շահագործվում է արդեն ավելի քան հարյուր տարի և տալիս է այժմ տարեկան 900—950 տ. ավելի ոսկի (կապիտալիստական երկրների հանույթի 65% -ից ավելի) և մինչև 7—8 հազար տ. ուրան: Բացի ոսկուց և ուրանից, Վիտվատերսրանդի կոնգլոմերատները պարունակում են նաև մոնացիտ, ցիրկոն, քսենոտիմ, իրիդոսմին, ռուտիլ, ցիրտոլիտ, ալմաստ, որոնք կարող են ունենալ գործնական նշանակություն: Վիտվատերսրանդի կոնգլոմերատների նյութի սկզբնաղբյուրը հավանաբար արխեյի ապարներն են, որոնցում տեղադրված են ոսկեբեր քվարցի երակներ և ուրանաբեր պեզ-մատիտներ:

Զաիր հանրապետությունում և Հյուսիսային Ռոդեզիայում Կատանգա խմբի նստվածքային ապարներին են հարում համաշխարհային նշանակու-թյուն ունեցող պղնձի հանքավայրերը, ինչպես նաև կոբալտի, ցինկի, կապարի, կադմիումի, գերմանիումի, ուրանի և սելենի արդյունաբերական կուտակումները:

Կատանգայի խմբում առանձնացված են (վարից վեր) երեք՝ Ռոան, Մեծ կոնգլոմերատի, Մվաշյա և Կունդելունգու սերիայի սիստեմները: Պղինձ-կոբալտային հանքայնացումը հարում է Ռոան սիստեմի ավազաբարերին ու դոլոմիտներին. կապար-ցինկային (գերմանիումով) հանքայնացումը կապ-ված է Կունդելունգու կարբոնատային ապարների հետ:

Կատանգա խմբի ապարների հասակը 520—630 մլն. տ. է. շրջանի բոլոր գրանիտները հասակով հին են և Ռոան սիստեմից ավելի երիտասարդ են միայն զարրոների սրլերն ու հիմքային կազմության դայկաները: Հանքա-վայրերը հարում են Ռոան սիստեմի որոշակի հորիզոններին ու ներկայաց-ված են ավազաբարերում ու դոլոմիտային թերթաբարերում ցրված պղնձի սուլֆիդների շերտաձև մարմիններով. երկրորդական նշանակություն ունեն կոբալտի սուլֆիդները, երբեմն U, Ni ու Te, ինչպես նաև Cd, Se կամ Ge (ռենյերիտի ձևով) փոքր պարունակությունները:

Նույնատիպ հանքավայրեր հայտնի են նաև Կոնգո (Բրազավիլ) հանրա-պետությունում և Հարավարևմտյան Աֆրիկայի Օտավի լեռներում:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում պղինձ-բազմամետաղային Ցու-մեբ հանքավայրը, որի հանքանյութերը գերմանիումի (գերմանիտ ու ռենյե-րիտ) հանույթի աղբյուր են. ոսպնյակաձև հանքամարմինը տեղադրված է դո-լոմիտների մեջ: Կատանգայի՝ Հյուսիսային Ռոդեզիայի պղնձային գոտու ու Ցումեբ հանքավայրերի ծագման հարցի շուրջը կան տարաձայնություններ: Երկար ժամանակ այդ հանքավայրերը դիտվում էին որպես հիդրոթերմալ, կապված գրանիտային հիպոթետիկ օջախի հետ: Սակայն այժմ ավելանում է տերիգեն ու կարբոնատային ֆացիաներում մետաղների սինգենետիկ կու-տակման տեսակետի կողմնակիցների թիվը: Այդ տեսակետի համաձայն հե-տագայում տեղի է ունեցել մետաղների վերաբաշխում ու վերանստեցում, երբեմն հոծ, էպիգենետիկ հանքամարմինների ձևով:

Աֆրիկայի հետաքրքիր հանքավայրերի վերջին խմբին են դասվում ալ-

մաստի արմատական և ցրտնային բազմաթիվ հանքավայրերը: Աֆրիկյան տա-
լիս է կապիտալիստական երկրների արմատի հանույթի 95% և հանդիսա-
նում է մենաշնորհատեր:

Ըստ երկրաբանական հասակի ու արմատի զրսերման պայմանների,
առանձնացվում են չորս մարզեր. Բիմբերլիտայինը՝ Հարավ-Աֆրիկյան Հան-
րապետությունում, քիմբերլիտային խողովակիկներով ու արմատական հան-
քավայրերով, որոնց հասակը 51—55 մլն. տ. է: Արմատաբեր ապարները
տարածված են Հարավային Աֆրիկայից մինչև Գվինեա և ափերի հյուսիս:
Լյուրիլալայանը՝ Զաիրում, տրիասի հասակի արմատաբեր ավազաքարերի
և կոնգլոմերատների ու հարուստ ալյուվիալ ցրտների ձևով: Բիրիմյանը՝
Գանայում, արմատներով պրոտերոզոյի կոնգլոմերատներում: Վիավա-
տեբուրանդյանը՝ առանձին արմատներով արխեյի կոնգլոմերատներում:

Կարևոր արդյունաբերական նշանակություն ունեն առաջին երկու մար-
զերը: Վերջին տարիներին Աֆրիկայի արմատի հանույթը տարեկան հաս-
նում է 20—25 մլն. կարատի (4—5 տ.):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՅՐԻԿԱ-ԱՐԵՔՍԿԱՆ ՎԱՀԱՆԻ ՈՒ ՆՐԱ
ՊԼԱՏՖՈՐՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Алейнер А. З. Объяснительная записка к карте полезных ископаемых Африки. ВСЕГЕИ, 1970, с. 19—43.
- Дикси Ф. Великие Африканские разломы. Пер. с англ., Изд. ИЛ, 1959, с. 13—123.
- Дю-Тойт А. Геология Южной Африки. Пер. с англ., Изд. ИЛ, 1957, с. 28—454.
- Казн Л. Геология Бельгийского Конго. Пер. с франц., Изд. ИЛ, 1958, с. 477—507.
- Колотухина С. Е., Первухина А. Е., Режанец А. В. Геология месторождений редких эле-
ментов Африки и их экономическое значение. «Наука», 1964, с. 304.
- Меньшиков Н. Н. Сахара. Основные черты геологического строения Сахары, «Бюлл.
МОИП, отд. геол.», 31, вып. 6, 1956, с. 3—11.
- Павловский Е. В. Сравнительная тектоника мезозойских структур В. Сибири и Велико-
го Рифта Африки и Аравии. «Изв. АН СССР, сер. геол.», № 5, 1948, с. 25—38.
- Северов Э. А. К вопросу о генезисе ниобийсодержащих гранитов». Изв. АН СССР, сер.
геол.», № 1, 1962, с. 85—94.
- Тугаринов А. И. Геохронология Западной Африки и Северо-Восточной Бразилии. «Гео-
химия», № 11, 1967, с. 1336—1349.
- Шейнманн Ю. М. Платформы, складчатые пояса и развитие структур земли. «Тр.
ВНИИ-1», вып. 49, Магадан, 1959, с. 1—63.
- Agard J. The carbonatites and the silicate and carbonate rocks associated with the
massif of alkali rocks of Tamazert (High Atlas of Midelt, Morocco) and pro-
blems of their genesis. Int. Geol. Congr. Rept. 21-st Sess., Norden, 1960, pt.
13, Copenhagen, p. 293—303.
- Besairie H. Les ressources minérales de Madagascar. Ann. géol. Madagascar, 1961,
№ 30, p. 116.
- Cousins C. A. The Bushveld igneous complex. The geology of South Africa's plati-
num resources. The South Afr. min. and eng. Journ. v. 70, p. 2, № 3473, 1959,
p. 587—591.
- Daniilo A. Jeenc. Epoque et provinces minérogénétiques de l'Ethiopie (Afrique orien-
tale). Chronique des mines et de la recherche minière. 34 année, № 351, mars
1966, p. 87—104.
- Davidson C. F. The gold-uranium ores of the Witwatersrand. Min. Mag. v. 88, 1953,
p. 73—85.
- Davidson C. F. The present state of the Witwatersrand controversy. Min. Mag. 102,
№ 2, 1960, p. 84—95.

- Davis K. A.* The origin of the Roan-Antelope copper deposit of Northern Rhodesia. *Econ. Geol.* v. 49, № 6, 1954, p. 575—615.
- Douglas G. V.* Origin of the Rhodesian copper deposits. *Econ. Geol.* v. 51, № 4, 1956, p. 391—392.
- Furon R.* Géologie de l'Afrique. 2-eme éd. Paris, 1960, p. 400.
- Furon R.* Les ressources minérales de l'Afrique. 2-eme éd. Paris, 1961, p. 284.
- Garlick W. G.* How the copperbelt orebodies were formed. *S. Afric. Min. and Eng. J.* v. 71. № 3503, pt. I, 1960, p. 903—911.
- Haughton S. H.* The stratigraphic history of Africa south of the Sahara. London, 1963, p. 565.
- John T. U., Paulo K. L.* A note of occurrence of columbite in the younger granites of the Jos Plateau, Nigeria. *Geol. Mag.* v. 91, № 3, 1954, p. 245—248.
- Krenkel E.* Geologie und Bodenschätze Afrikas. Leipzig, 1957, s. 1—597.
- Kun D. N.* Die Niobkarbonatite von Afrika. *Neues Jahrb. Mineral. Monatsh.* № 6, 1961, s. 124—135.
- Kun D. N.* The mineralogenetic provinces of Africa. *Econ. Geol.* v. 58, № 5, 1963, p. 774—790.
- Kun D. N.* The mineral resources of Africa, Elseviers Publ. Co. Amsterdam-London, 1965, p. 740.
- Liebenberg W. R.* On the origin of uranium, gold and osmiridium in the conglomerates of the Witwaterstrand goldfields. *Neues Jahrb. Mineral. Abhandl.* v. 94, № 2, 1960, p. 831—867.
- Schürmann H. M. E.* The Riphean of the Red sea area. *Geol. fören i Stockholm förhandl.* 83, h. 2, № 505, 83, 1961, p. 109—128.
- Schneiderhöhn H.* Zur Erforschungsgeschichte der Erze der Tsumeb-Mine und der geologischen Verhältnisse des Otaviberglands, Süd-West Afrika. *Neues Jahrb. Mineral. Monatsh.* H. 6, 1958, S. 125—136.

6. Հնդկական վահանն ու նրա պլատֆորմը տեղադրված են Ասիայի նույնանուն թերակղզու տարածքում և դրադեղնում են ավելի քան 3 մլն. կմ² տարածություն; ընդգրկելով Հնդկաստանի, Պակիստանի ու Բանգլա-Դեշի պետությունները: Հնդկական վահանին է վերագրվում նաև Շրի-Լանկա (Յեյ-լոն) կղզին: Հնդկական թերակղզին իրենից ներկայացնում է բյուրեղային վահանի հին ապարներից կազմված սարահարթ, որը մասամբ ծածկված է քաղալտի շերտերով (Գեկկանյան բազալտներ): Հյուսիսում այդ սարահարթը հատվում է Վինդիյան լեռներով, որոնք կազմված են մինչքեմբրի մետամորֆիկ ապարներից: Հնդկական վահանի հյուսիսարևմտյան եզրամասում տեղադրված է արխեյան Արավալլի ծալքավոր լեռնաշղթան:

Մինչքեմբրի և պալեոզոյի ամբողջ ժամանակաշրջանում Հնդկական վահանը հարավային հսկա մայրցամաքի՝ Գոնդվանայի մի մասն էր, որն ընդգրկում էր նաև Աֆրիկան, Արաբական թերակղզին, Հարավային Ամերիկան, Արևմտյան Ավստրալիան և, հավանաբար, Անտարկտիդան. այստեղից բխում է այդ մարզերի երկրաբանական կառուցվածքի ու մետաղածնության նման գծերը: Հնդկական վահանի մինչքեմբրյան հաստվածքում Վադիան (Wadia, 1944) և այլ հետազոտողներ առանձնացնում են ապարների երկու խումբ՝ արխեյան և ավելի երիտասարդ պրոտերոզոյան (Պուրանա): Արխեյան խումբը իր հերթին ենթաբաժանվում է հնագույն ստորին արխեյի գրանիտա-գնեյսների և շոնոկիտների ու վերին արխեյի Գարվարյան բյուրեղային թերթաքարերի, քվարցիտների և շերտավոր եղջրաքարերի սիստեմների:

Ստորին արխեյի գրանիտա-գնեյսներն ու պարագնեյսները լայն տա-

րածված են Բենզալիալում, որտեղ նրանք հատված են զրանիտների և ալկալային ապարների ինտրուզիաներով: Գրանիտային պեգմատիտների Բենզալյան հայտնի գոտու հետ կապված են մուսկովիտի աշխարհի խոշորագույն և բերիլի կարևոր հանքավայրերը:

Հարավային Հնդկաստանում (Տրավանկոր և Յեյլոն կղզում) զարգացած են ստորին արխեյան հիպերտենային զրանիտները՝ շառնոկիտները պեգմատիտներով, որոնք պարունակում են մոնացիտ, ցիրկոն, իլմենիտ և այլ արժեքավոր միներալներ. այդ միներալները ակցեսոր խառնուրդի ձևով ցրված են նաև շառնոկիտներում:

Շառնոկիտների և նրանց հետ կապված պեգմատիտների քայքայումը հանգել է ծովային մերձափնյա հարուստ ցրոնների առաջացմանը, որոնք մշակվում են հիմնականում մոնացիտ ստանալու նպատակով. այստեղ զարգացած է թորիումով և ուրանով հարուստ մոնացիտի տարբերակը՝ շերալիտը, որը պարունակում է մինչև 31% ThO₂ ու մինչև 4,1% UO₂:

Արխեյի վերին մասը ներկայացված է Դարվարյան սիստեմի մետամորֆացված նստվածքային ապարներով, հատված զրանիտների ինտրուզիաներով, դոլերիտների դեյկաներով և ուրիշ խորքային ապարներով: Դարվարյան սիստեմի ապարների զարգացման հիմնական մարզերն են Մայսորի շրջանը, Բոմբեյի ու Մադրաս մարզերի հարավային մասերը: Դարվարյան սիստեմը զարգացած է նաև Նագպուրում, Բիհարում, Արավալլի ու Ասամի լեռնաշղթաներում: Դարվարի սիստեմի համար բնորոշ է հարուստ և բազմազան հանքայնացում՝ երկաթ, մանգան, ոսկի, պղինձ, կապար, ուրան, պեգմատիտներ բերիլով, տանտալո-կոլումբիտով, լիթիումի միներալներով: Դարվարի սիստեմի ապարների բացարձակ հասակը հաստատված է 2450—2300 մլն. տ. սահմաններում: Արխեյի ապարների վրա խիստ աննեղաշնակ տեղադրված է ավելի երիտասարդ պրոտերոզոյան հասակի ապարների սերիա (Պուրանա), որը ենթարածանվում է Կուդապախի (ստորին) և Վինդիի (վերին) սիստեմների:

Կուդապախ սիստեմի ապարները լայն զարգացած են Մադրասում, կենտրոնական մարզերում և Չիտտապուրում: Նրանք ներկայացված են ավազաքարերով, թերթաքարերով, կրաքարերով, հիմքային ապարների սիլերով (վերջինների հետ կապված են ասբեստի ու բարիտի խոշոր հանքավայրեր), հեմատիտի կուտակումներով երկաթային քվարցիտներում:

Այդ բոլոր ապարները հատված են բազալտի դեյկաներով, որոնք դիտվում են որպես ավաստի երկրորդային հանքավայրերի (Գոլկոնդայի հանքերի կոնգլոմերատներ) մայր ապարներ: Կուդապախ սիստեմի վերին մասը ներկայացված է քվարցիտներով ու թերթաքարերով, կրաքարերի ենթաշերտերով և պարունակում է կապարի հանքանյութերի կուտակումներ:

Կտրվածքի վերին մասում հանդիպում են հեմատիտային թերթաքարեր տեղ-տեղ երկաթի հանքանյութերի արգյունաբեքական կուտակումներով: Կուդապախ սիստեմին են վերագրվում նաև երկրորդական նշանակություն ունեցող պղինձի շտոկվերկային ու մանգանային հանքանյութերի հանքավայրեր: Սիստեմի հասակը պայմանականորեն համադրվում է Կանադայի վահանի ալգոնկի հասակի առաջացումների հետ:

Հնդկաստանի մինչքեմբրի ամենաերիտասարդ հաստվածքի մի մասը Վինդիի նստվածքային շերտախումբն է. այն զարգացած է վահանի հյուսի-

աային եզրում՝ Վինդիիյան լեռներում: Վինդիի շերտախումբը կազմված է կրաքարերից, թերթաքարերից, ավաղաքարերից, կոնգլոմերատներից: Կորնուլ շրջանում այդ շերտախմբին են դասվում արմաստաբեր ապարները՝ երկաթային կամ դաշտասպաթային Բանագապալի մուգ ավաղաքարին ու կոնգլոմերատները:

Հնդկական վահանի հանքային հարստություններից պետք է նշել երկաթի ու մանգանի հանքանյութերի հարուստ և խոշորագույն մետամորֆոզեն հանքավայրերը, որոնց պաշարներով Հնդկաստանը դիջում է միայն Մովետական Միությունը:

Երկաթի հանքանյութերը ներկայացված են երկաթային քվարցիտներով ու նրանց ենթակա հեմատիտային կամ մագնետիտային հոծ հանքանյութերի կուտակումներով և տեղադրված են Դարվալի ու մասամբ Կուգապախ սիստեմների ապարներում: Ավելի հայտնի են և խոշոր մասշտաբներով շահագործվում են Սինգբումի ու Մայուրբխենդջ շրջանների հեմատիտային բարձրորակ հանքանյութերը:

Հնդկաստանի մանգանային նույնպես մետամորֆոզեն ծագման հանքավայրերը կապված են Դարվարյան սիստեմի գոնդիտային շերտախմբի հետ. գոնդիտները մանգանով հարուստ նստվածքային ապարներ են, որոնք հետագայում ենթարկվել են մետամորֆիզմի և վերածվել են սպիտարտին-ուդոնիտային ապարի: Հողմնահարման հին պրոցեսները բերել են մանգանի կուտակմանը հարուստ բրաունիտ-պսիլոմելանային հանքանյութերի ձևով: Այդ տիպի խոշոր հանքավայրեր շահագործվում են Բալահատի, Բանդարայի, Նագպուրի շրջաններում, ինչպես նաև Բումբել, Բիհար և Օրիսա մարզերում:

Հնդկաստանի գունավոր մետաղների հանքավայրերն ունեն համեմատաբար փոքր նշանակություն: Պղնձի հանքանյութերը տեղադրված են Դարվարյան սիստեմի ապարներում և շահագործվում են Սինգբում շրջանում, որտեղ ներկայացված են պղնձի սուլֆիդների երակներով կամ շտովկերկային գոնաներով: Կապար-ցինկային հանքանյութերը հայտնի են Մադրասում, Ռաջաստանում, Բիհարում և հարում են Վինդիան սիստեմի կրաքարերին կամ բյուրեղային թերթաքարերին:

Տնտեսական մեծ նշանակություն ունեն Հնդկաստանի բոքսիտի հանքավայրերը, որոնք պատկանում են բազալտային ծածկոցների հողմնահարման հետ կապված արգնահողային լատերիտների տիպին: Ամենախոշոր հանքավայրերը գտնվում են կենտրոնական մարզերում՝ Բալահատի ու Զաբալպուրի շրջաններում:

Հնդկաստանն այն երկրներից է, որը վերջին հարյուր տարվա ընթացքում տալիս է ոսկու ոչ մեծ, սակայն կայուն արտադրանք՝ տարեկան մինչև 10 տ., գլխավորապես Կոլար շրջանի Մայսորում քվարց-ոսկեբեր երակներից: Հանքային երակները տեղադրված են Դարվարյան սիստեմի քվարցիտներում ու կրաքարերում, հատված գրանիտներով, որոնց հետ կապված են քվարց-արսենոպիրիտ-ոսկեբեր երակները 1—1,5 մ միջին կարողությամբ: Աս պարունակությունը 5—50 գ/տ (շահագործվող հանքանյութերում միջինը 14—16 գ/տ): Շահագործման աշխատանքները այժմ հասել են 4 կմ խորության. այդ հանքերը ամենախորն են աշխարհում:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Հնդկաստանի արմաստը, Արևելյան Գեկանում, Հայդարաբադում, կենտրոնական մարզերում և հյուսիսում՝ Վինդիայ: լեռնաշղթայի սահմաններում:

Այժմ արմատաբար զլլաավոր հանույթը կատարվում է Պաննա քաղաքի շրջակայքում (հաստատված են քիմիկատային խողովակիկներ) և Մահանադի-Գոդավարի միջագետքում, իսկ հնում հայտնի էին Գոլկոնդա հանքերը Մադրասում:

Արմատաշ ստացվում է Վինդիի կոնգլոմերատներից ու ժամանակակից ցրոններից, մասամբ վերջերս հայտնաբերված արմատական հանքավայրերից, ընդ որում արմատի հանույթը տարեկան չի գերազանցում 2—3 հազար կարատից:

Հնդկաստանում հնում հայտնաբերված ամենահայտնի արմատներից կարելի է նշել՝ Պիտտը (410 կարատ), Մեծ Մոգոլը (280 կարատ), Օրլովը (193 կարատ), Կուլինուրը (186 կարատ):

Հնդկական արմատները մեծ մասամբ միանգամայն մաքուր ու թափանցիկ են. հանդիպում են նաև արտակարգ գեղեցիկության կարմիր, կանաչ, կապույտ և սև արմատներ: Արմատների սկզբնաղբյուր են համարվում Կուդապախ սիստեմի (վերին պրոտերոզոյ կամ սինիյ) հրային ապարները՝ օլիվին պարունակող հիմքային դայկաները և սիլլերը, ինչպես նաև ալկալային ապարները, պիրոքսենիտները ու պիկրիտները, որոնք պատկանում են Գելի (Կուդապախի նմանակ) սիստեմին:

Պաննայի շրջանում հաստատված են ռիֆեյի հասակի քիմիկատային խողովակիկները, բայց կան և պելիի երիտասարդ (մեզոզոյան^o) քիմիկատային: Մյուս թանկարժեք քարերից որոշ նշանակություն ունեն սուտակը (pyрит) և շափյուղան (сапфир), ընդ որում սուտակը արդյունահանվում է Բիրմայի Մոգոկ շրջանի մինչքեմբրյան մարմարներից, իսկ շափյուղան Կաշմիրի զնեյսներից ու պեգմատիտներից: Բերիլը ու նրա թանկարժեք տարբերակները՝ զմրուխտը և ծովակնը (аквамарин), կապված են պեգմատիտների հետ, որոնք հատում են Դարվարյան սիստեմի ու ստորին արխեյի բյուրեղային ապարները և ոչ միայն մոսկովիտի խոշոր մատակարարողներն են, այլև տալիս են նաև բերիլի նշանակալից քանակություններ, որի հանույթով Հնդկաստանը աշխարհում գրավում է առաջատար տեղերից մեկը: Հնդկական վահանի հարավում՝ Տրավանկորում և Յելլոն կղզում մշակվում են մոնացիտի, ցիրկոնի, ռուտիլի ու իւմենիտի ցրոններ, ընդ որում մոնացիտի (թորիումի հիմնական հումք) հանույթով Հնդկաստանը գրավում է առաջին տեղը աշխարհում:

Վերջապես, Յելլոնում մեծ տնտեսական նշանակություն ունեն խոշորաթնփուկավոր գրաֆիտի պնեմատոլիտային հանքավայրերը. հանքամարմինները ներկայացված են երակներով ու շտոկվերկերով, տեղադրված գնեյսներում, որոնք հատված են գրանիտներով ու պեգմատիտներով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ԼԵԿԱԿԱՆ ՎԱՀԱՆՆ ՈՒ ՆՐԱ ՊԼԱՏՅՈՐԲԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Кришнан М. С. Геология Индии и Бирмы. Изд. ИЛ, 1954, с. 424.

Орлова Е. В., Розин М. С. Минеральные ресурсы Индии, Пакистана, Бирмы, Цейлона, Вьетнама, Камбоджи и Лаоса. «Минеральные ресурсы зарубежных стран», вып. 17, Госгеолыздат, 1950, стр. 132.

Brown J. Coggin, Dey A. K. India's mineral wealth. London. Oxford Univ. Press, 1955, p. 761.

Nabayanawami S., Ziauddin M., Ramachandra A. Structural control and localization of gold-bearing lodes. Kolar gold field, India, Econ. Geol. v. 55, № 8. 1960, pp. 1429—1459.

7. Արևմտաավստրալիական վահանն ու նրա պլատֆորմը գրավում են մայրցամաքի արևմտյան և կենտրոնական մասերը, երբայատվելով արևելքից հեքցինյան, իսկ հարավ-արևելքից կալեդոնյան հասակի ծալքավոր զոնաներով: Վահանի բնդհանուր տարածությունը կազմում է շուրջ 5 մլն. կմ²:

Ավստրալիական վահանի հնագույն ապարները ներկայացված են արխեյան գնեյաներով, բյուրեղային թերթաքարերով ու կանաչքարային ապարներով, հատված գրանիտային զանգվածներով, որոնք ուղեկցվում են բազմաթիվ պեգմատիտային երակներով ոսկի-հազվագյուտմետաղային հանքայնացմամբ (Պիլբարա շրջանը Արևմտյան Ավստրալիայում և ուրիշներ):

Այդ շրջանների պեգմատիտների հասակը կազմում է 2700 մլն. տ., գրանց բնորոշ է տանտալ-նիոբիումային, բերիլիումային ու լիթիումային հանքայնացում, որն իր կազմով նման է Աֆրիկայի հազվագյուտմետաղային պեգմատիտներին:

Ավելի վերը, արխեյան հիմքի վրա աննրդաշնակ տեղադրված են պրոտերոզոյան հասակի հաստվածքները՝ Մոսկիտո սերիան, ներկայացված կոնգլոմերատներով, թերթաքարերով, ֆիլիաներով, կտրված գրանիտների ինտրուզիաներով և Նուլաջյան սերիան, կազմված թթու հրաբխածին ապարներից, քվարցիտներից, գոլումիտներից:

Մոսկիտո սերիայի հետ կապված են Կալգուրլի շրջանի ոսկեբեր քվարցային երակները, իսկ ավելի երիտասարդ Նուլաջյան սերիայի ստորին մասը ներկայացված է ոսկեբեր կոնգլոմերատներով: Արևմտյան Ավստրալիայում հարավից հյուսիս՝ Ֆիլիպ Ռիվերից մինչև Մարբլ Բոր ձգվում է ոսկու հանքավայրերի զոնա, որը տեղադրված է նստվածքային ու կանաչքարային մինչքեմբրի գրանիտոիդներով ներդրված ասլարներում (Նորսեման, Լեոնորա, Վելլոուն և ուրիշ հանքավայրեր):

Պրոտերոզոյի հաստվածքների հետ կապված են բազմաթիվ մետամորֆոզեն տիպի՝ երկաթային քվարցիտների խոշոր հանքավայրեր, ինչպես նաև կապար-ցինկային, պղնձի և ուրանային հանքանյութերի հանքավայրեր (նկ. 9): Պրոտերոզոյան հաստվածքների հասակը որոշվում է 1800—1600 մլն. տ.:

Ավստրալիայի վահանի հանքային շրջաններից ու հանքավայրերից ամենահետաքրքիրն են՝

1. Արևմտյան Ավստրալիայի Պիլբարա շրջանի արխեյան հասակի հազվագյուտմետաղային պեգմատիտների մարզը՝ տանտալ-նիոբիումային, բերիլիումային ու լիթիումային, ինչպես նաև ոսկու հանքայնացումով:

2. Արևմտյան Ավստրալիայի ոսկեբեր մարզը՝ ոսկի-քվարցային երակներով, կապված պրոտերոզոյան գրանիտոիդների հետ (Կալգուրլի, Կուլգարդի, Մուրչիսոն, Իլիվարն հանքային դաշտերը) և հանքայնացման տիպով նրանց նման Հյուսիսային Ավստրալիայի մարզը (Կիմբերլեյ և ուրիշներ):

3. Արևմտյան ու Հարավային Ավստրալիայի երկաթաբեր մարզերը մետամորֆոզեն խոշոր հանքավայրերով պրոտերոզոյի հաստվածքներում (Այ-

տոն նոր, Այրոն Մոնարխ և ուրիշներ): Ավստրալիան երկաթի հարուստ հանքանյութերի պաշարներով մրցում է Հնդկաստանի ու Բրազիլիայի հետ:

Նոր խոշորագույն հանքավայրեր են հայտնաբերված Օֆտալմիա ու Համերսլեյ լեռնաշղթաների սահմաններում (Մաունթ Քոմ Պրայս, Մաունթ Նյու Մեն և ուրիշ հանքավայրեր):

4. Հարավարևմտյան Ավստրալիայի Պերտի շրջանը պղինձ-նիկելային (Co, Pt, Pd խառնուրդով), որտեղ վերջերս հայտնաբերվել են լիկվացիոն տիպի խոշոր հանքավայրեր կապված պրոտերոզոյի հասակի հիմքային-ուլտրահիմքային կոմպլեքսների հետ (Կամբալա, Կուինանա և այլն):



Նկ. 9—Ավստրալիական վահանի հիմնական մետաղային հանքավայրերը (ըստ Ա. Բ. Էդվարդսի). 1—Մինչքեմբրյան հանքային զոնաներ, 2—Տետքեմբրյան հանքային զոնաներ, 3—ոսկի, 4—կապար, ցինկ, արծաթ, 5—պղինձ, 6—անագ:

5. Բրոկեն Հիլի կապար-ցինկային մարզը վահանի հարավարևելյան մասում վերին արխեյան կամ ստորին պրոտերոզոյան գնեյսներով, անդալուզիտային ու ստավրոլիտային թերթաքարերով ներկայացված նստվածքներում:

Բրոկեն Հիլ հանքավայրը կապարի պաշարներով խոշորագույնն է աշխարհում և առավել խոշորներից մեկը ցինկի պաշարներով:

Նույնանման երկրաբանական պայմաններում է գտնվում Ավստրալիայի երկրորդ շատ մեծ հանքավայրը՝ Մաունթ-Այզան Կվինսլենդում, որը շահագործվում է պղնձի ու կապար-ցինկային հանքանյութեր ստանալու նպատակով:

Հ. Շնեյդերհենը Բրոկեն Հիլ ու Մաունթ Այզա հանքավայրերը համարում է Ռամելսբերգի (ԳՖՀ) հնագույն նմանակները. հանքայնացման հասա-

կը 1700—1300 մլն. տ. է: Ըստ Ս. Ռիչարդսի (1966) նրանց ծագումը հրաբխա-նստվածքային է:

6. Ավստրալիական վահանը հարուստ է ուրանային հանքանյութերով (Մաունթ-Պայնտեր, Ռեդիում Հիլ և Յլարի). նրանք պատկանում են տարբեր որոնք հայտնի են հյուսիսում (Ռամ-Ջանգլ Արմզեմ թերակղզում), հարավում գենետիկական տիպերի՝ պեգմատիտային, հիդրոթերմալ, նստվածքային մետամորֆացված:

Նոր հայտնագործումներից հարկ է նշել բարձրորակ բոքսիտների արդ-նահողային լատերիտների տիպի խոշոր հանքավայրերը Կարպենտարիա ծովածոցի ու Դարլինգ լեռնաշղթայի շրջաններում:

Մինչքեմբրյան վահանի եզրային մասում, որտեղ նա զուգակցվում է սինիի (Ադելաիդա դարաշրջան), կալեդոնյան ու հերցինյան ծալքավոր ստրուկտուրաների հետ, ծալքավորված պալեոզոյի վրա վերադրված են տեկ-տոնական ակտիվացում և նոր Հարավային Ուելսի ուլտրահիմքային-ակա-լային ինտրուզիաների ներգրումը: Հավանաբար, վերջինների հետ կապված է այդ մարդի գետաբերվածքներում արմատի առանձին բյուրեղների հայտնա-բերումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՎՄՏԱԱՎՍՏՐԱԼԻԱԿԱՆ ՎԱՀԱՆԻ ՈՒ ՆՐԱ
ՊԼԱՏՈՐՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Беляевский Н. А. Минеральные ресурсы Австралии. «Развед. и охрана недр», № 10, 1969, с. 59—62.
- Вильнер А. И. Минеральные ресурсы Австралии, «Минеральные ресурсы зарубежных стран», вып. 14, Госгеоліздат, 1949, с. 3—77.
- Райан Дж. Р. Геология и минеральные ресурсы вольфрамового месторождения Хетчес-Крик, северная территория. В кн. «Вопросы геологии Австралии». «Мир», 1965, с. 201—228.
- Davidson P. Massive Wealth in Australia's Hamersley Iron Province. Journ. of Mines, Metals and Fuels, v. XVII, № 6, 1969, p. 189—192.
- Fisher N. H., Sullivan C. I. Uranium exploration in the Rum Jangle province (Australia). South Afr. Min. and Eng. Journ. № 66, pt № 1, № 3241, 1955, p. 133—155.
- Geology of Australian ore deposits. Sec. ed., edited by John Mc. Andrew, Australia, 1965, p. 547.
- Parkin L. W., Glasson K. R. Geology of the Radium Hill uranium area, South Australia. Econ. Geol. v. 49, 1954, p. 815—825.
- Petrasccheck W. E. Kontinentalverschiebung und Erzprovinzen. Mineralium deposita, v. 3, № 1, 1968, s. 56—65.
- Richards S. M. The banded iron formation of Broken hill, Australia, and their relationship to the lead-zinc orebodies. Econ. Geol. № 1, 1966, p. 72—96.


8. Գվիանական վահանն ու նրա պլատֆորմը տեղադրված են Հարավա-յին Ամերիկայում՝ Ամազոն գետից հյուսիս: Նրանք ընդգրկում են Արևելյան Վենեսուելայի, Հարավարևելյան Կոլումբիայի, Հյուսիսարևմտյան Բրազիլիա-յի, Գվիանայի (նախկինում Բրիտանական), Սուրինամի, Ֆրանսիական Գվիա-նայի տարածքները ավելի քան 1 մլն. կմ² ընդհանուր տարածությամբ:

Ս. Ե. Կոլոտուխինայի և ուրիշների տվյալներով (1968) սա Հարավային Ամերիկայի տեկտոնական ստրուկտուրայի ամենահնագույն մասն է: Նրա կառուցվածքում մասնակցում են ստորին պրոտերոզոյան պլատֆորմը և ար-

Ֆինլում ու ստորին պրոտերոզոյում ձևավորված ծալքավոր գոտիները: Արևելյի վերջում կամ պրոտերոզոյի սկզբում այդ սարածքը լրիվ ձևավորվել է ու անցել է պլատֆորմային ռեժիմի:

Գլխանական վահանը նրանից դեպի հարավ տեղադրված Բրադիլական վահանից առանձնացված է արևելք-հյուսիս-արևելք ուղղությամբ լինեամեն-տով, որի երկայնքով անցնում է Ամազոնյան իջվածքը (նկ. 10):

Գլխանական վահանի հնագույն ապարները վերագրվում են Ռուպունու-նի սերիային, որը ներկայացված է գնեյաներով, շառնոկիտներով, փայլարա-յին թերթաքարերով, մետաքվարցիտներով ու կանաչքարային ապարներով և ներդրված է Հարավային Սավաննա սերիայի գրանիտներով (գրանիտների բացարձակ հասակը, որոշված ուրան-թորիում-կապարային եղանակով, կազմում է 2300 մլն. տ.): Ռուպունունի խմբի նմանակն է Ֆրանսիական Գլխա-նայում դարգացած Իլ-դե-Կայեն սերիան, ներկայացված ամֆիբոլիտային քվարցիտներով, գնեյաներով ու միգմատիտներով. սերիայի բացարձակ հա-սակը, որոշված թորիում-կապարային եղանակով, շուրջ 4000 մլն. տ. է (Choubert, 1964):



Նկ. 10—Գլխանական վահանի տեկտոնական կառուցվածքը (ըստ Ս. Ե. Կոլտոլինյայի, 1968). 1—Կատարինյան-արխեյան գրանիտա-գնեյային հիմքը, 2—Գլխանայի արխեյան օրոգենիկ գոտի (Իմատակա-Պաստորա, Բարամա-Մազարունի, Պարամակա ֆորմացիաները, 2550—2590 մլն. տ.), 3—Կարիբյան ստորին պրոտերոզոյան գոտի (Բարտիկա, Ռոզեբել, Օրապու ֆոր-մացիաներ, 1900—2200 մլն. տ.), 4—ստորին պրոտերոզոյան պլատֆորմ (Ռորայիմա ֆորմա-ցիա, 2000—1700 մլն. տ.), 5—կավճից մինչև ժամանակակից նստվածքներ, 6—բացարձակ հասակ (մլն. տ.):

Հնագույն ապարների այդ երկու սերիաները՝ Ռուպունունին ու Իլ-դե-Կա-յենը վերագրվում են կատարինյին (3000 մլն. տ.—4000 մլն. տ.): Կտրված-քով ավելի վեր, աններդաշնակ տեղադրված է ստորին արխեյի հաստ-վածքը (հասակը 3000—2550 մլն. տ.), ներկայացված ստորին մասում եր-

կաթալին քվարցիտներով կամ իտաբիրիտներով, որոնք պարունակում են երկաթի հարուստ հանքանյութեր (Վենեսուելայում), ինչպես նաև արգիլիտներով, մանգանաբեր ֆիլիտներով կամ գոնդիտներով ու դոլոմիտներով (Գվիանայում). հաստվածքի վերին մասում նրանք փոխարինվում են հիմքային լավաներով, գրաուվակներով, ուրիտներով, դացիտներով, ավազաքարերով ու կոնգլոմերատներով:

Ստորին արխեյի հաստվածքի վրա անկյունային աններդաշնակությամբ տեղադրված են վերին արխեյի նստվածքները (բացարձակ հասակը 2550—1900 մլն. տ.), ներկայացված գլխավորապես կոնգլոմերատներով, ավազաքարերով, քվարցիտներով, բիտոիտ-ամֆիբոլային գնեյսներով: Ստորին ու վերին արխեյի նստվածքները խիստ աններդաշնակ ծածկված են հերթափոխվող շեղշերտավոր ավազաքարերի, քվարցիտների, յաշմաների, թերթաքարերի, կոնգլոմերատների հաստվածքով, որը կազմում է Ռորաիմա ֆորմացիան՝ ստորին պրոտերոզոյի պլատֆորմի ծածկոցը (բացարձակ հասակը 1900—1700 մլն. տ.):

Գվիանական վահանի կտրվածքը պսակվում է դոլերիտային ֆորմացիայով, դոլերիտի դայկաներով ու սիլերով (դիաբազներ, գաբրո, որոնց բացարձակ հասակը 1700 մլն. տ. է և որոշված է փայլարներով, կալիում-արգոնային ու ռուբիդիում-ստրոնցիումային եղանակներով):

Կտրվածքի խիստ աններդաշնակութունները վկայում են առնվազն երեք հզոր օրոգենզների մասին՝ Հիլեյան կատարխեյի ու ստորին արխեյի սահմանում, Գվիանական ստորին ու վերին արխեյի սահմանում և Կարիբյան՝ վերին արխեյի ու ստորին պրոտերոզոյի սահմանում: Օրոգենիկ շարժումները ամեն անգամ ուղեկցվել են զրանիտոիդների ներդրմամբ, ընդ որում ամենակարևոր մետաղածնային նշանակություն ունեցել են այսպես կոչված «երիտասարդ» կամ Կարիբյան զրանիտները, որոնք ներդրվել են երկու ֆազերում համապատասխանաբար 2200 ու 1900 մլն. տ. բացարձակ հասակով: Գվիանական վահանի հազվագյուտմետաղային պեղմատիտների գլխավոր հանքավայրերը տանտալակոլումբիտային, բերիլիումային ու լիթիումային հանքայնացումով, ինչպես նաև ոսկու կարևոր հանքավայրերը կապված են Կարիբյան զրանիտների հետ:

Ստորին արխեյի երկաթային քվարցիտների (իտաբիրիտների) ու մանգանաբեր ֆիլիտների (գոնդիտների) հաստվածքի հետ կապված են երկաթի հարուստ մետամորֆոզեն հանքավայրեր (էլ-Պաո Վենեսուելայում և այլ հանքավայրեր) ու մանգանի հանքանյութերի մետամորֆոզեն բազմաթիվ հանքավայրերը (Ամազոն գետից մինչև Կենտրոնական Վենեսուելա ձգվող հանքային գոտին, նախկին Բրիտանական Գվիանայի հանքավայրերը):

Որոշ հետաքրքրություն են ներկայացնում արմատի ցրոնները, որոնք մշակվում են Վենեսուելայում ու նախկին Բրիտանական Գվիանայում. արմատի արմատական աղբյուրը մինչև այժմ հայտնի չէ:

Հսկայական տնտեսական նշանակություն ունեն Սուրինամի ու Գվիանայի բոքսիտի խոշոր հանքավայրերը, որոնք մինչբեմբրյան ապարների լատերիտային հողմնահարման արդյունքն են:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՎԻԱՆԱԿԱՆ ՎԱՀԱՆԻ ՈՒ ՆՐԱ ՊԼԱՏՖՈՐՄԻ ՎԵՆԵՍԵԼԱ

Колотухина С. Е. и др. Геология месторождений редких элементов Ю. Америки. «Наука», 1968, с. 279.

- Мурагов М. В. Главнейшие эпохи складчатости и мегастадии развития земной коры. «Геотектоника», № 1, 1965, с. 6—29.
- Мурагов М. В. Сравнительная тектоника фундамента древних платформ и история их формирования, «Изв. высш. учебн. завед., сер. геол. и разв.», № 3, 1966, с. 8—48.
- Ферман А. Е., Коган Б. И. Минеральное сырье зарубежных стран. Изд. АН СССР, 1947, с. 566.
- Choubert B. Géochronologie.—Ages absolus du Précambrien guyanais. C. r. Acad. sci. 258, № 1—2, 1964, p. 631—634.

9. Բրազիլական վահանն և նրա պլատֆորմը տեղադրված են Հարավային Ամերիկայում Ամազոն գետից դեպի հարավ. նրանք ընդգրկում են Բրազիլիայի տարածքը (բացի հյուսիսից), Պարագվայի, Ուրուգվայի, Արգենտինայի (համարյա ամբողջությամբ բացի արևմտյան մասից, որը մտնում է Անդյան ծալքավոր գոնայի կազմության մեջ), ինչպես նաև Բոլիվիայի արևելյան մասի տարածքները. Բրազիլական վահանի ընդհանուր տարածությունը շուրջ 9 մլն. կմ² է:

Բրազիլական վահանի ստրատիգրաֆիան առաջիմ շատ թույլ է ուսումնասիրված և հիմնվում է զլխավորապես արևելքում Մինաս-Փերայիս ու հյուսիս-արևելքում Ռիու-Գրանդի-դու-Նորտի և Պարաիբա լեռնահանքային նահանգներում կատարված ուսումնասիրությունների վրա:

Ս. Ե. Կոլոտուխինայի և ուրիշների ամփոփիչ աշխատանքում (1968) առաջարկված է մինչքեմբրի հետևյալ ստրատիգրաֆիական սխեման:

Ամենահին ապարները (ստորին արխեյ) վերագրվում են Մանտիկեյրա սերիային, ներկայացված քվարց-բիտտիտ-օլիգոկլադաչին գնեյսներով ու գրանատ պարունակող պլազիոկլադ-ամֆիբոլիտներով. այդ ապարները օրոգենիզի ժամանակ գրանիտացվել են. նրանց բացարձակ հասակը 2500 մլն. տ. է:

Ստորին արխեյյան ապարների վրա զգալի աններդաշնակությամբ տեղադրված են Բարբասենա սերիայի ապարները, ներկայացված քվարց-փայլարային թերթաքարերով ու գնեյսներով. նրանք հավանաբար, առաջացել են քվարցիտների և գրաուվակների հաշվին: Կտրվածքի վերին մասում գերակշռում են քվարցիտները, գրաուվակները, տուֆերն ու դիաբազները, որոնք հրեմն առանձնացվում են որպես Լաֆայետ ֆորմացիա. նրա հետ կապված են մանգանային հանքանյութերը, որոնք ներկայացնում են մանգան պարունակող սիլիկատա-կարբոնատային ապարների հողմնահարման զլխարկներ: Ռոդոնիտով հարուստ քվարցիտները՝ Հնդկաստանի գոնդիտների նմանակները, այստեղ նույնպես հանդիսանում են մանգանային հանքանյութերի մայրապարները:

Բարբասենա սերիայի (Լաֆայետի ֆորմացիան ներառյալ) հասակը կազմում է 2500 մլն. տ.: Ավելի երիտասարդ՝ 1350 մլն. տ. հասակային խմբի գրանիտները մետամորֆիզմի են ենթարկել Բարբասենա սերիայի ապարները:

Բրազիլիայի հետազոտողների մեծամասնությունը այդ սերիան վերագրում են վերին արխեյին:

Վերին արխեյի ապարների վրա խիստ աններդաշնակ տեղադրված է ավելի երիտասարդ Մինաս սերիան, որը վերագրվում է ստորին ալգոնկին: Մինաս սերիային հարում են երկաթի, ոսկու և ուրիշ օգտակար հանածոների

կարևորագույն հանքավայրերը և այդ իսկ պատճառով այն ուսումնասիրված է ավելի մանրամասն:

Վարից վեր նրա մեջ առանձնացված են Կարասա (հիմքի կոնզլոմերատներ, քվարցիտներ, ֆիլիտներ, թերթաքարեր) Իտաբիրա (երկաթային քվարցիտներ հեմատիտային հարուստ հանքանյութերով ու դոլոմիտներ), Պիրասիկաբա (ֆիլիտներ, քվարցիտներ, դոլոմիտներ, դրաուվակներ, մետամորֆացված էֆուզիվներ ու տուֆեր) ֆորմացիաները:

Մինաս սերիայի ընդհանուր կարողությունը հասնում է 7 կմ, նրա հասակը տատանվում է 1650-ից մինչև 1340 մլն. տ. (1340 մլն. տ. հասակի իտաբիրիտա գրանիտները կտրում են այդ սերիան):

Համարում են, որ Մինաս սերիայի նմանակը Բայա նահանգում ժակոբինա սերիան է. նահանգի կենտրոնում ժակոբինա սերիային բնորոշ են հզոր քվարցիտներ ու կոնզլոմերատներ (ոսկի և ուրանաբեր, իր տիպով Հարավ-Աֆրիկյան Վիտվատերսուրանդ ու Կանադայի Բլայնդ-Ռիվեր հանքավայրերի նման):

Պ. Ռամզոսը այդ բոլոր ոսկի և ուրանաբեր քվարցիտների ու կոնզլոմերատների հաստվածքները համարում է հասակային նմանակներ և վերադրում է ստորին ալգոնկին: Սակայն հետագայում պարզվեց, որ Վիտվատերսուրանդի կոնզլոմերատների հասակը 2500 մլն. տ. է (և ոչ թե 800—1000 մլն. տ., ինչպես համարվում էր առաջ), ուրեմն կարելի է ենթադրել, որ Մինաս ու ժակոբինա սերիաները նույնպես ավելի հին հասակի են կամ այդ սերիաները զգալի շափով ավելի երիտասարդ են քան Վիտվատերսուրանդի սերիան: Մինաս սերիայի վրա աններգաշնակ տեղագրված է Լավրաս ֆորմացիան (վերին մինչքեմբրի քվարցիտներ, ֆիլիտներ, կոնզլոմերատներ), ավելի վեր, նույնպես աններգաշնակ տեղագրված է Բամբուի ֆորմացիան (վերին մինչքեմբրի—ստորին պալեոզոյի կրաքարեր, կավային թերթաքարեր, ավազաքարեր), իսկ ամենից վեր, նույնպես աններգաշնակ՝ Տոմբազոր ֆորմացիան (ստորին պալեոզոյի ավազաքարեր ու թերթաքարեր):

Այսպիսով, Լավրաս սերիան ամբողջությամբ պատկանում է վերին ուֆելյին (վենդին), Բամբուի սերիան իր ստորին մասում հավանաբար պատկանում է վենդին, իսկ վերին մասում՝ ստորին պալեոզոյին:

Ըստ Ս. Ե. Կոլոտուխինայի, Լավրաս ու Բամբուի սերիաների նստվածքները կազմությանը շատ նման են Աֆրիկայի Կատանգայի խմբի նստվածքներին, որոնք իրենց հասակով համապատասխանում են վենդի համալիրին ու ստորին պալեոզոյին: Մինաս-Ժերաիս նահանգի սահմաններից դուրս, Մատու-Գրոսու և Գոյաս նահանգների հսկայական տարածքներում զարգացած են արխեյի գնեյսային հիմքի շտորաբաժանված ապարները, որոնք անցնում են ամֆիբոլիտների և միզմատիտների, հաճախ նաև շարենոկիտների:

Սեարա, Ռիու-Գրանդի-դու-Նորտի, Պարաիբա ու Պերնամբուկու նահանգներում զարգացած է ավելի երիտասարդ Սեարա ապարների սերիան, կազմված փայլարային թերթաքարերից, կոնզլոմերատներից, հաճախ սկանալացած կրաքարերից և մերգելներից: Սեարա սերիան ենթարկվել է գրանիտացման ու հատված է բազմաթիվ պեզմատիտային մարմիններով, շատ հետաքրքիր բերիլ-տանտալիտային և ուրանիիտային հանքայնացումով: Ուրանիիտի միջոցով պեզմատիտների բացարձակ հասակի որոշումները տալիս են 460—

510 մինչև 780 մլն. տ. հասակ: Այդ որոշումների համաձայն Սևարա սերիան վերագրվում է վերին ռիֆեյին:

Մատու-Գրոսու նահանգի արևմտյան մասում արխեյան ապարների մեջ, բացի հին գրանիտոիդներից, հայտնի են «երիտասարդ» կալիումային գրանիտներ, որոնք ձգված են միջօրեակների մոտ ուղղությամբ և ուղեկցվում են պեգմատիտներով:

Պեգմատիտների մեջ հայտնաբերված է հետաքրքիր հանքայնացում՝ տուպազ, կոլումբիտ, բերիլ, մոնացիտ, ֆլյուորիտ, հազվագեյտ՝ ֆերգյուսոնիտ:

Բրազիլիայի մերձափնյա խիստ բյուրեղացած ապարների զոնան, ըստ երևույթին, ունի արխեյան հասակ. նրանից դեպի արևմուտք վերին ռիֆեյան տեկտոնիկական շարժումները առաջացրել են ռեակտիվացման պրոցեսներ, որոնց հետ կապված են ակալալային գրանիտոիդների ինտրուզիաները ու նրանց ուղեկցող պեգմատիտները:

Բրազիլիայի արևելյան ու հյուսիսարևելյան պեգմատիտային մարզերի հանքային զուգակցումները (բերիլի ու տանտալա-նիոբատների գերիշխում, հաճախ ուրան պարունակող միներալներ) զարմանալիորեն նման են Արևելա-Աֆրիկական-Մազագասկարյան և Նիգերիա-Սահարյան գոտիների հազվագյուտ մետաղային պեգմատիտների ու գրանիտոիդների հանքային զուգակցումներին (Կոլոտուխինա և ուրիշ., 1964): Այդ երիտասարդ գրանիտոիդների ու պեգմատիտների գոտիների ձևավորումը զուգադիպում է ոչ թե գետնինկինալներին, այլ կապված է վերին ռիֆեյան ու ավելի երիտասարդ ռեակտիվացման պրոցեսների հետ, որոնք զարգացել են հարատև խորքային խախտումներով հատված արդեն ձևավորված ծալքավոր կարծր ստրուկտուրաների շրջաններում:

Աֆրիկայում այդ ակալալային գրանիտոիդների ու նրանց հետ կապված հազվագյուտ մետաղային պեգմատիտների գոտիների բացարձակ հասակը տատանվում է 600 մինչև 460 մլն. տ. սահմաններում:


Բրազիլիայի Մինաս-ժերաիս նահանգի կենտրոնական պեգմատիտային մարզի համար, վերին արխեյի ու ալգոնկի ապարների մեջ տեղադրված պեգմատիտների բացարձակ հասակի որոշումները ենթաբաժանվում են երկու խմբի՝ առաջինը միջին հաշվով շուրջ 550 մլն. տ., երկրորդը՝ շուրջ 360 մլն. տ.: Բոբբորեմա սարահարթի պեգմատիտների համար միջին բացարձակ հասակը կազմում է 500 մլն. տ.:

Այսպիսով, եղած երկրաբանական նյութը բերում է այն եզրակացության, որ Բրազիլիական վահանը կազմված է արխեյան միջուկներից ու ծալքավոր գոտիներից, որոնք առաջացել են Ալգոմանյան (միջինպրոտերոզոյան) ու Ասինտյան (Բայկալյան) ծալքավորման հետևանքով:

Վերջնական ձևավորումը և անցումը պլատֆորմային փուլին այստեղ տեղի են ունեցել Գվինեական վահանից շատ ավելի ուշ, այն է՝ ռիֆեյի վերջում: Բրազիլական վահանի կառուցվածքի ու մետաղածուխյան համար կարևոր նշանակություն ունեն չորս լինեամենտներ՝ Ամազոնյան՝ արևելք-հյուսիսարևելյան ուղղությամբ, Սան-Ֆրանցիսկո՝ հյուսիս-հյուսիսարևելյան ուղղությամբ, որը ձգվում է հյուսիսում՝ Ման-Լուիսից մինչև Պորտու-Ալեգրի հարավում, Արգենտինյան, Նախորդին զուգահեռ, որն անցնում է Հարավային

Բոլիվիայի ու Արգենտինայի տարածքներով և Պերու-Բոլիվիականը՝ Հյուսիսարևմտյան ուղղությամբ (նկ. 11):

Այս բոլոր լինեամենտները Բրազիլական վահանում հիմնադրվել են դեռ



Նկ. 11—Հարավային Ամերիկայի գեոտեկտոնական շրջանացում (ըստ Ս. Ն. Կոլոտովսիինայի)։

1—Մինչքեմբրյան վահաններ ու զանգվածներ, 2—պլատֆորմային իջվածքներ (I—Ամազոնյան, II—Սան-Ֆրանսիսկու-Պարնաիրա-Մարանյան, III—Պարանյան, IV—Չակո-Պամպասյան, V—Պատագոնյան), 3—Անդյան ծալքավոր սիստեմի լեռներ, 4—Հին լինեամենտներ, 5—գրաբեկներ, լցված նեոգենյան ու չորրորդական նստվածքներով։

մինչքեմբրում ու, հավանաբար, իրենցից ներկայացնում են հարատև խոր-
քային խախտումներ, որոնց երկայնքով զարգացել են Հարավ-ամերիկյան
պլատֆորմի զարգացման երկրաբանական պատմության ընթացքում բազմիցս
ակտիվացած թուլացած զոնաներ: Բրազիլական վահանում արխեյի, պրոտո-
րոզոյի և ուֆեյի ընթացքում գլխավոր լինեամենտներին զուգընթաց ձևավոր-
վել են ծալքավոր գոտիներ ու պլատֆորմային ծածկոցի կամարային բարձ-
րացումներ և իջվածքներ:

Առանձնացնում են Բրազիլական պլատֆորմի հինգ գլխավոր՝ Ամազոն-
յան, Սան-Ֆրանցիսկո-Պարնաիբա-Մարանյան, Պարնաի, Չակո-Պամպաս-
յան (Լապլատյան) ու Պատագոնյան իջվածքներ: Նրանց սահմաններում,
սկսած վենդից ու ստորին պալեոզոյից մինչև կայնոզոյ կուտակվել են
նստվածքների հզոր հաստվածքներ:

Բրազիլական վահանի համարյա բոլոր հազվագյուտմետաղային պեգմա-
տիտային ու կարբոնատիտային հանքավայրերի տեղաբաշխումը պայմանա-
վորված է տեկտոնական խոշոր ստրուկտուրաներով՝ լինեամենտներով:

Բրազիլական վահանի հնագույն գրանիտոիդային ինտրուզիաներից են
Մինաս-ժերաիս նահանգի էնժենյերա-Կորրեիա գրանոդիորիտները, որոնց
բացարձակ հասակը 2600 մլն. տ. է՝ ստորին պրոտերոզոյ. այս գրանոդիո-
րիտների հետ զուգակցվող պեգմատիտները զուրկ են հազվագյուտմետաղային
հանքանյացումից:

Բրազիլիայում (Մինաս-ժերաիս, Ռիո-դե-ժանեյրո, Ռիու-Գրանդի-դու-
Սուլ, Սեարա, Պարաիբա ու Ռիու-Գրանդի-դու-Նորտի նահանգներում), ինչ-
պես նաև Արգենտինայում լայն զարգացած են վերինպրոտերոզոյան և ստո-
րինպալեոզոյան գրանիտոիդները: Մինաս-ժերաիս նահանգի իտաբերիտա
խմբի գրանիտներն ունեն 1340 մլն. տ., իսկ նրանց նման «երկաթահանքա-
յին քառանկյան» արևմտյան մասի գրանիտները 1360 մլն. տ. բացարձակ
հասակ: Հերցր ու նրա համահեղինակները (1961) գտնում են, որ այդ հասա-
կային խմբի գրանիտները առաջացել են ռեգիոնալ գրանիտացման հետևան-
քով լուծույթների մոբիլիզացման շնորհիվ, որոնք պայմանավորել են ներ-
փակող կավային ապարների ու հին գրանիտոիդների վերաբյուրեղացումը:
Այդ գրանիտների հետ կապված պեգմատիտները հազվագյուտմետաղային
հանքանյացում չեն կրում: Ավելի երիտասարդ «երկաթահանքային քառանկյան»
գրանիտոիդները Մինաս-ժերաիս նահանգում ունեն 550—450 մլն. տ. բա-
ցարձակ հասակ. «Երկաթահանքային քառանկյան» սահմաններից դուրս այդ
գրանիտոիդների հետ զուգակցվում են հազվագյուտմետաղային պեգմատիտ-
ներ: Մինաս-ժերաիս կենտրոնական պեգմատիտային մարզում պեգմատիտ-
ները կապված են այդ գրանիտների հետ, որոնք մի շարք հեղինակների կար-
ծիքով պայմանավորված են կալիումային մետասոմատոզով:

Այդ մարզի պեգմատիտների բացարձակ հասակի որոշումները տալիս են
տարբեր թվեր 926—340 մլն. տ. սահմաններում (ամենահուսալի որոշում-
ներն են 520—510 մլն. տ.): Այսպիսով, հաստատվում է պեգմատիտների կա-
պը պրոտերոզոյի վերջի (ուֆեյի) ու պալեոզոյի գրանիտոիդների հետ:

Շյուսիսարևելյան Բրազիլիայում Բորբորեմա սարահարթում գրանիտ-
ներն ու նրանց հետ կապված հազվագյուտմետաղային պեգմատիտները ունեն
շուրջ 500 մլն. տ. բացարձակ հասակ:

Բրազիլիայի հարավային ծայրամասում, Ռիու-Գրանդի-դու-Սուլ նահանգում ռապակիվի գրանիտի բացարձակ հասակը որոշված է 506 մլն. տ.:

Նկարագրված գրանիտներին նման կալիումային գրանիտոիդներ զարգացած են Արգենտինայի Պամպյան սերիաների կենտրոնական մասում՝ Լա-Ռիոխա, Կատամարկա, Սան-Խուան, Սան-Լուիս ու Կորդոպա մարզերում: Այդ գրանիտոիդները ներդրվել են վերին պրոտերոզոյի վերջում և ստորին պալեոզոյում. նրանց հետ կապված են հազվագյուտմետաղային պեգմատիտներ բերիլի, սպոդումենի, տանտալա-նիոբատների հանքայնացումով, որը շատ նման է Բրազիլիայի Մինաս-ժերաիս նահանգի ու Բորբորեմա սարահարթի պեգմատիտներին:

Սան-Վիտորիո հանքի պեգմատիտի ուրանինիտի բացարձակ հասակը, որոշված ուրան-կապարային եղանակով, տվել է 385 մլն. տ.՝ թիվը, որը համապատասխանում է՝ ստորին դևոնին:


Հարավարևելյան Բոլիվիայում, Բրազիլիայի սահմանին մոտ, նկարագրված են վերին պրոտերոզոյան (°) կալիումային գրանիտներ, որոնք ուղեկցվում են ապլիտներով, պեգմատիտներով և ոսկեբեր քվարցային երակներով: Պեգմատիտներում զարգացած է հազվագյուտմետաղային հանքայնացում (կոլումբիտ, բերիլ, տուպազ, մոնացիտ, ֆլյուորիտ, հազվադեպ ֆերզոստնիտ, բնդ որում բերիլը ու կոլումբիտը շահագործվում են):

Բերված տվյալներից կարելի է եզրակացնել Բրազիլական վահանի սահմանում վերին պրոտերոզոյան—ստորին պալեոզոյան կալիումային գրանիտոիդների լայն զարգացման մասին, որոնք կապված են ռեակտիվացման ու կալիումային մետասոմատոզի պրոցեսների հետ: Հենց այդ, համեմատաբար երիտասարդ գրանիտոիդների հետ, որոնք հարում են վահանի հին հիմքը հատող խորքային խախտումներին, կապված են բազմաթիվ պեգմատիտային դաշտեր հազվագյուտմետաղային հանքայնացումով (նկ. 12) Ռեակտիվացումը տեղի է ունեցել որոշ լինեամենտների երկայնքով. ավելի ուշ, մեզոկայնոզոյում Սան-Ֆրանցիսկո լինեամենտի երկայնքով տեղի է ունեցել հին խախտման երիտասարդացում և նրա հետ կապված ուլտրահիմքային-ալկալային համալիրների ներդրում, որոնք ուղեկցվել են հազվագյուտմետաղային կարբոնատիտային հանքայնացումով (նկ. 13) Որոշ ինտրուզիվ զանգվածների ու կարբոնատիտային հանքանյութերի բացարձակ հասակի որոշումները տալիս են հետևյալ թվերը՝ 147—110 մլն. տ. (Պոսու-դե-Կալդաս նեֆելինային սիենիտների համար) ու 133—51 մլն. տ. (Բարեյրու-դի-Արաշա կարբոնատիտների համար):

Այս տեսակետից ևս Բրազիլական և Աֆրիկական վահանների նմանություն կա, քանի որ Արևելյան Աֆրիկայի բեկվածքների երկայնքով նույնպես ներդրվում էին ուլտրահիմքային-ալկալային համալիրներ կարբոնատիտներով:

Ստորև բերում ենք Բրազիլիայի հազվագյուտմետաղային պեգմատիտային զլխավոր դաշտերի ու կարբոնատիտային խոշոր հանքավայրերի համառոտ բնութագիրը:


Հազվագյուտմետաղային պեգմատիտները կենտրոնացված են զլխավորապես երեք խոշոր մարզերում՝ Մինաս-ժերաիս նահանգում, Բորբորեմա սարահարթում ու Բոլիվիա-Արգենտինյան գոտում: Այդ երեք մարզերում հազվագյուտմետաղային պեգմատիտները տեղագրված են արխեյի և ստորին



Նկ. 12—Հարավային Ամերիկայի հազվագյուտմետաղային պեղմատիտների հանքավայրեր (ըստ Ա. Ե. Պերվուխինայի ու Լ. Ա. Գրիգորեայի)։

I—մինչքեմբրյան վաճաններ ու զանգվածներ՝ Ա.—Գլխանական, Բ.—Բրազիլական, Գ.—Պամպինյան, Դ.—Պատագոնյան, Ե.—Դենեպոլ, VI—պլատֆորմային իջվածքներ, III—լինեամենտների՝ աա—Սան-Ֆրանցիսկո, բբ—Արգենտինյան, գգ—Պերուական-Բոլիվյան, IV—ստրուկտուրային գոտիների սահմանները՝ զզ—Գլխանական, եե—Արևելյան Բրազիլական, զզ—Արգենտինա-Բոլիվյան, V—հազվագյուտմետաղային պեղմատիտների հանքավայրեր։ Գլխանայում՝ 1—Սուրինամի ու Ֆրանսիական Գլխանայի սահմանում, Բրազիլիայում՝ 2—Կասկավել-Կրիստալ (Սեարա նահանգ) շրջան, 3—Կիշերամոբին ու Կաշուէյրա (Սեարա նահանգ) շրջաններ, 4—Պլատո Բոլբոբեմա (Ռիու-Ֆրանզոզի-դու-Նորտի ու Պարաիբա նահանգներ), 5—Սերատան շրջան (Բայա նահանգ), 6—Սալիկաս, Իտինգա, Արասուաի և ուրիշ շրջաններ (Մինաս-ժերաիս նահանգ), 7—Իտամբե շրջան (Մինաս-ժերաիս նահանգ), 8—Ռիու-Դոսի (Էսպիրիտու-Սանտու նահանգ), 9—Բոա-Վիտա (Մինաս-ժերաիս նահանգ), 10—Ուբա, Պոմբա, Մորիաէ շրջաններ (Մինաս-ժերաիս նահանգ), 12—Անգրադոա-Ռեյս շրջան (Ռիո-դե-ժանեյրո նահանգ), 13—Մոժիբաս-Կրուզեիս շրջան (Սան-Պաուլու նահանգ)։ Բոլիվիայում՝ 14—Լա-Բելլա, Արգենտինայում՝ 15—Կատամարկա ու Լա-Ռիոխա մարզերում, 16—Կորդոլա ու Սան-Լուիս մարզերում, 17. Ռիո-Նեգրո ու Չուրուս մարզերում։

պրոտերոզոյի բյուրեղային ապարներում, բայց կապված են հետոֆեյան ու ղևոնի հասակի ռեակտիվացման հետ: Մինաս-ժերախո նահանգի պեգմատիտներում առկա է բերիլ-տանտալ-կոլումբիտային հարուստ հանքայնացում, լիթիումի միներալների, հազվագյուտ հողերի, ցիրկոնի, կասիտերիտի խառնուրդով: Բորբորեմա սարահարթի պեգմատիտները իրենցից ներկայացնում



Նկ. 13—Հանքավայրեր, կապված Բրազիլիայի կարբոնատիտների ու նեֆելինային սիենիտների հետ (ըստ Ա. Ն. Պերվուխինայի ու Լ. Ա. Գրիգորևայի): 1—միներալների վահաններ ու զանգվածներ, 2—պլատֆորմային իջվածքներ, 3—պիրոքլորային հանքավայրեր, կապված կարբոնատիտների հետ՝ ա—Բաբելու-դի-Արաշա, բ—Տապիրա, գ—Փակու-պիրանգա, 4—երևակումներ, ենթադրաբար կապված կարբոնատիտների հետ (Պատրոսինիու, Իպանեմա, Փուկիա, Անիրապուիս, Սերա-Նեգրա, Սերա-դե-Սալիտորա), 5—բազելիտային հանքավայրեր նեֆելինային սիենիտներում, դ—Պոսու-դի-Կալդաս:

են արժեքավոր կոմպլեքսային հումք բերիլի, տանտալ-նիոբատների և լիթիումային միներալների համար, ընդ որում այստեղ բնորոշ են սպողումենի մինչև 1.5 մ երկարության, տանտալիտի մինչև 0,5 տ. կշռի, բերիլի մինչև 1 մ երկարության հսկա բյուրեղներ:

Բոլիվիա-Արգենտինյան գոտու պեգմատիտներն ունեն հանքայնացման

նույն բնույթը (բերիլ, լիթիումային միներալներ, տանտալ-կոլումբիտ) և շահագործվում են զլխավորապես բերիլի համար:

Բրազիլական վահանի պեգմատիտային դաշտերն ամբողջությամբ վերցրած պարունակում են աշխարհի բերիլի ու տանտալիտի պաշարների ճնշող մասը, լիթիումային հումքի զգալի պաշարները և այդ արժեքավոր միներալների հանույթով գրավում են առաջատար տեղ:

Բրազիլիայի կարբոնատիտային հանքավայրերի շարքում լայն ճանաչում են գտել Պոսուս-դի-Կալդաս, Բարեյրու-դի-Արաշա, Տապիրա ու Ժակուպիրանդա հանքային դաշտերը, որոնք հարում են Սան-Ֆրանցիսկո լինեամենտին:

Պոսուս-դի-Կալդաս հանքավայրերը տեղադրված է արխեյի գնեյսներն ու թերթաքարերը հատող ալկալային ու նեֆելինային սիենիտներում: Հանքայնացումը ներկայացված է բազելիտային ուրան պարունակող հարստագույն հանքանյութերով, որոնք պարունակում են մինչև 70% ZrO_2 , 0,64% U_3O_8 և 1,1% TiO_2 : Մեծ նշանակություն ունեն բազելիտի էլյուվիալ ցրոնները:

Բարեյրու-դի-Արաշա հանքավայրը ներկայացված է կարբոնատիտային միջուկով, որը շրջապատված է ստորին պրոտերոզոյի ֆենիտացված ապարների օղակով: Սա աշխարհի պիրոքլորային հանքանյութերի խոշորագույն կուտակումն է (պիրոքլորի միջին պարունակությունը կազմում է 6%, որը համապատասխանում է 3% Nb_2O_5), մագնետիտի, ցիրկոնի, ապատիտի ու բարիտի, հազվագյուտմետաղային և ուրան ու թորիում պարունակող միներալների խառնուրդով:

Արմատական հանքանյութերի ու էլյուվիալ ցրոնների շահագործման ժամանակ ստացված հարստությունները պարունակում են 58% Nb_2O_5 , 0,1% Ta_2O_5 , 2% ThO_2 , 15% BaO , 5% TR ու 4% TiO_2 :

Տապիրա հանքավայրերը պիրոքլորային հանքանյութերի պաշարներով Բարեյրու-դի-Արաշայից հետո համարվում է երկրորդը աշխարհում. այստեղ ալկալային ապարների հետ կապված կարբոնատիտներն ունեն պարզ արտահայտված էքսպլոզիվ (էքստրուզիվ) բնույթ:

Ժակուպիրանդա հանքավայրն ունի օղակային կառուցվածք պերիդոտիտային միջուկով, շրջապատված յակուպիրանդիտներով (ալկալային ուլտրաբազիտներ) ու պիրոքսենիտներով: Կարբոնատիտները հարուստ են պիրոքլորով, բազելիտով, ապատիտով և նման են Աֆրիկայի ալկալային կոմպլեքսների հանքավայրերին՝ Սուկուլու (Ուգանդայում) Գորովա (Հարավային Ռոդեզիայում) և Պալաբարա (ՀԱՀ-ում): Բրազիլիայի կարբոնատիտային, ինչպես նաև Աֆրիկայի նույնատիպ հանքավայրերը ունեն օղակային կառուցվածք և հանքայնացման ինտրուզիվ բնույթ:

Ինչ վերաբերում է Բրազիլական վահանի այն հանքավայրերին, որոնք տեղադրված են արխեյան և ստորինպրոտերոզոյան հիմքի ապարներում և առաջացել են նրանց հետ սինգենետիկորեն, հարկ է առանձնացնել երկաթի մետամորֆոզեն հանքավայրերի մեծ խումբ (Իտաբիրա և այլն), մանգանի հանքանյութերի (Մորրո-դի-Մինաս և այլն), ինչպես նաև ոսկու և ուրանաբեր կոնգլոմերատների ու քվարցիտների Ժակուբինա հանքավայրը: Երկաթի հանքանյութերի ամենախոշոր Իտաբիրա, Իտաբիրիտա, Պարաուպերո հանքավայրերը գտնվում են Մինաս-ժերաիս նահանգի կենտրոնական մասում

և վերագրվում են երկաթային քվարցիտների տիպին. հեմատիտային հարուստ հանքանյութերի կուտակումները, տեղադրված են ստորինպրոտերոզոյան հասակի Մինաս հաստվածքում: Բրազիլիայի մետամորֆոզեն հարուստ (Fe 50% և ավելի) հանքանյութերի պաշարները 15 մլրդ. տ. ավելի են և ինտենսիվորեն շահագործվում են: Երկաթի հանքանյութերի ընդհանուր պաշարներով Բրազիլիան զիջում է միայն Սովետական Միությանն ու Հնդկաստանին:

Նույնպիսի մետամորֆոզեն ծագման մանգանային հանքանյութերի խոշոր հանքավայրեր կենտրոնացած են Մատո-Գրոսո, Բայա ու Մինաս-ժերաիս նահանգներում՝ ստորինպրոտերոզոյան Մինաս հաստվածքում: Մանգանային հանքանյութերի պաշարներով ու հանույթով Բրազիլիան աշխարհում գրավում է առաջատար տեղերից մեկը:

Մեծ նշանակություն ունեն նիկելի սիլիկատային հանքանյութերի հանքավայրերը (Սան-ժոզե դե Տոկանտիս՝ Գոյա նահանգում, Լիվրամենտո՝ Մինաս-ժերաիս նահանգում և այլն), կապված մինչքեմբրի ուլտրահիմքային ապարների հողմնահարման կեղևի հետ: Ni պարունակությունը հանքանյութերում հասնում է 5%, բացի նիկելից այստեղ միաժամանակ շահագործվում են կոբալտային (ասբոլանային) հանքանյութերը, նույնպես կապված հողմնահարման կեղևի հետ: Համեմատաբար ոչ մեծ պաշարներ ունեն քրոմիտային հանքանյութերը, տեղադրված ուլտրահիմքային ապարների զանգվածներում:

Բրազիլիան արտակարգ հարուստ է բոքսիտային հանքանյութերով. կավահողային տիպի լատերիտները, առաջացել են գլխավորապես Մինաս-ժերաիս ու Սան-Պաուլո նահանգների ալկալային ապարների զանգվածների հողմնահարման հաշվին: Բրազիլական վահանի սահմաններում հայտնի են նաև բազմաթիվ ոսկեբեր քվարցային երակների հանքավայրեր (Մորրո-Վելյո, Պասսագեմ և ուրիշ.) քվարց-կասիտերիտային ու քվարց-վոլֆրամիտային երակներ ու շտովկերկներ. այդ արմատական հանքավայրերի հետ կապված են ոսկու, կասիտերիտի, վոլֆրամիտի ալյուվիալ ցրոնները:

Նշանակալի արդյունաբերական հետաքրքրություն են ներկայացնում արմատաբեր ալյուվիալ ցրոնները (Դիամանտինա գետի ավազան և ուրիշ.), որոնք շահագործվում են 1730 թվից և առ այսօր տվել են համարյա 30 մլն. կարատ արմատ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին և այժմ տարեկան հանույթը կազմում է 300 հազ. կարատ արմատ: Այդ արժեքավոր միներալի հանույթով Բրազիլիական վահանը գրավում է երկրորդ տեղը Աֆրիկական վահանից հետո:

Արմատները Բրազիլիայում հայտնաբերված են մինչքեմբրի կոնգլոմերատներում ու ավազաքարերում և գետերի ալյուվիայում: Բրազիլական վահանում հաստատված են քիմբերլիտանման ապարներ, բայց մի շարք շրջաններում արմատի արմատական աղբյուրները ստույգ հայտնի չեն:

Մինչքեմբրի ընթացքում հիմքային ապարները ներդրվել են երկու փուլով՝ Մինաս ֆորմացիայի ձևավորման ժամանակաշրջանում, երբ նրանք ներկայացված են եղել բազալտներով և դիաբազներով և ավելի ուշ Իտակոլումի գաբաշրջանում դիաբազների ու մեզ հայտնի հնագույն արմատաբեր քիմբերլիտների ձևով: Պարանա գետի ավազանում, ինչպես նաև Վենեսուելայի շրջանում ու Բրիտանական Գվինանյում տրիասի վերջում—յուրայի սկզբում

տեղի է ունեցել պլատոբազալտների արտավիժում: Այդ բազալտների հետ զուգակցվում են ալկալային և ուլտրահիմքային լիմբուրգիտները, մոնչիկիտները և ուրիշ ապարներ, այդ թվում Մինաս-ժերաիս նահանգի արևմտյան մասի քիմբերլիտները:

Այսպիսով, Բրազիլիայում հաստատվում են արևմտաբեր ապարների երկու՝ մինչքեմբրյան (զարգացած է նաև Հնդկաստանում և մասամբ Հարավային Աֆրիկայում) և մեզոզոյան (լայն զարգացած նաև Աֆրիկայում ու Միբիրում) ֆորմացիաներ:

Բայա նահանգում շահագործվում է ուրան և ոսկեբեր քվարցիտների (կոնգլոմերատների ոսպնյակներով) հանքավայրը, որը տեղադրված է Ժակոբինա սերիայում (դիտվում է որպես Մինաս սերիայի նմանակ. սակայն իտաբիրիտների ենթաշերտերի առկայությունը չի կարող համարվել այդ նմանությունների վերջնական ապացույցը): Հանքայնացած ապարներում առկա է պիրիտը (միջին հաշվով 3—5%), քլորիտը, քվարցը, բնածին ոսկին և ուրանինիտը (վերջինը մանր չհղկված հատիկների ձևով): Ոսկու և ուրանի մաքսիմալ պարունակությունը հարում է պիրիտի ոսպնյակներին, որոնք տեղադրված են սերիցիտացված ապարներում: Ոսկու միջին պարունակությունը հանքանյութում 12,8 գ/տ, ուրանինը՝ 0,15%: Ըստ Ա. Բետմանի ու Պ. Ռամդորի, Ժակոբինա հանքավայրը վերագրվում է մետամորֆոզեն տիպին: Վերջերս Բրազիլիայի վահանի ծածկոցի ապարներում հայտնաբերված են կապար-ցինկային խոշոր ու արդյունաբերական հետաքրքրություն ներկայացնող Ժանուարիա ու Վիզանտի հանքավայրերը, որոնք ներկայացված են Բամբուի սերիայի (վերին մինչքեմբրի-ստորին պալեոզոյ) դոլոմիտներում ու կավային թերթաքարերում տեղադրված երակներով ու մետասոմատիկ մարմիններով:

Վիզանտի հանքավայրի հանքանյութերում հաստատված է գերմանիումի, կադմիումի, պլատինի խառնուրդ, իսկ կապար-ցինկային հանքավայրերի օքսիդացման զոնաները հարուստ են վանադիումով. այդ հատկանիշներով նրանք նման են Հարավարևմտյան Աֆրիկայի Օտավի լեռների (Յումբե և այլն) բազամետաղային շերտաձև հայանի հանքավայրերին:

Ավարտելով Բրազիլական վահանի մետաղածնության բնութագրությունը, պետք է նշել Ատլանտյան օվկիանոսի մերձափնյա ծովային ցրոնների մասին: Այդ ցրոնները առաջացել են վահանի գրանիտոիդային ապարների և նրանց հետ կապված պեգմատիտների քայքայման հաշվին. շահագործվում են՝ մոնացիտ (թորիումի ու հազվագյուտհողային հումքի աղբյուր), ինչպես նաև ցիրկոն ու իլմենիտ ստանալու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԲՐԱԶԻԼԱԿԱՆ ՎԱՀԱՆԻ ՈՒ ՆՐԱ ՊԼԱՏՅՈՐՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Kolotukhina C. E.* и др. Геология месторождений редких элементов Южной Америки. «Наука», 1968, с. 279.
- Bateman A. D.* Uranium-bearing auriferous Reefs at Jacobina, Brazil. *Econ. Geol.* v 53, 1958, p. 417—425.
- Cox D. P.* Regional environment of the Jacobine auriferous conglomerate, Brazil, *Econ. Geol.* v. 62, № 6, 1967, p. 773—780.
- Grabert H.* Zur Tektogenese Nordost Brasiliens. *Z. Deutsche Geol. Ges.* 11, Teil 3 1960, S. 619—631.
- Herz N., Hurley P. M., Pinson W. H., Fairbairn H. W.* Age measurements from a part of the Brazilian shield-Bull. *Geol. Soc. America*, 72, № 7, 1961, p. 1111—1119.

Tolbert G. E. The uraniferous zirconium deposits of the Pocos de Caldas plateau. Brazil. U. S. Geol. Surv. Bull. № 1185-C, 1966, p. 28.

White M. G. Origin of uranium and gold in quartzite-conglomerate of the Serra de Jacobine, Brazil. U. S. Geol. Surv. Prof. Paper, № 424-B, 1961, p. B₈—B₉.

10. Անտարկտիդայի վահանն ու նրա պլատֆորմը՝ երկրի յոթերորդ* մայրցամաքը շուրջ 14 մլն. կմ² տարածքով իրենից ներկայացնում է Գոնդվանայի մի բեկորը ու իր երկրաբանական կառուցվածքով նման է Բրազիլական, Աֆրիկական, Հնդկական և Արևմտաավստրալիական պլատֆորմներին (նկ. 14):

Անտարկտիդայի տարածքի զգալի մասը (70%) ներկայացված է մինչ-նիֆեյան բյուրեղային հիմքով, որը կազմված է տարբեր գնեյսներից ու բյուրեղային թերթաքարերից, հասված՝ գրանիտոիդներով, շարնոկիտներով և դաբրոներով: Այդ հիմքի վրա տեղադրված է ուֆեյեյի-ստորին պալեոզոյի հրաբխանստվածքային ֆորմացիան: Հիմքի ապարների բացարձակ հասակի որոշումները կազմում են 1600—1500-ից մինչև 450—500 մլն. տ. տարբեր տեղամասերի համար. որոշ հետազոտողների այդ առիթ տվեց պլատֆորմի հիմքը համարել հետերոգեն, ձևավորված շոքս փուլերում՝ վերին պրոտերոզոյի սկզբից մինչև ստորին պալեոզոյը ներառյալ: Սակայն, ինչպես իրավացիորեն նշում է Մ. Գ. Ռավիչը (1966), Անտարկտիդայի բյուրեղային հիմքը համասեռ է, իսկ իր երկրաբանա-պետրոգրաֆիական առանձնահատկություններով (գնեյսներ, շարնոկիտներ) այն վերագրվում է տիպիկ արխեյան դոլադոմներին: Այդ կապակցությամբ հիմքի ապարների համար ստացած բացարձակ հասակի թվերը, ըստ երևույթին չեն համապատասխանում մագմատիկ և մետամորֆիկ ապարների ձևավորման իսկական հասակին, արտացոլելով հետագա պրոցեսների (գրանիտացում, հիմքի բլոկների բեկորային տեղափոխություններ) ազդեցությունը, որը բերել է ապարների հասակի զգալի երիտասարդացմանը:

Ավելի ստույգ են ու համընկնում են իսկական հասակի հետ ավելի երիտասարդ ապարների՝ միջին պալեոզոյան պլատֆորմի գրանիտոիդների (320—350 մլն. տ.), վերին պալեոզոյան նեֆելինային սիենիտների (185—200 մլն. տ.), տրիասի դոլերիտների (165—175 մլն. տ.), Անտարկտիկական թերակղզու մեզոզոյան գրանիտոիդների (75—100 մլն. տ.) և կայնոզոյան բազալտային հրաբխածինների (9—10 մլն. տ.) թվական տվյալները:


Հիմքի գնեյսներն ու թերթաքարերը կազմում են լայնակի ծալքեր ու հյուսիսարևելյան և հյուսիսարևմտյան ուղղություն խախտումներով ջարդված են մի շարք մեծ բեկորների:

Արևմուտքից Անտարկտիդայի մինչքեմբրյան պլատֆորմը եզրապատվում է սկզբում հերցինյան, ապա մեզոկայնոզոյան հասակի ծալքավոր կառուցվածքներով: Վերջին տվյալներով (Պ. Ս. Վորոնով, 1966), Վինսոն դանգվածը Արևմտյան Անտարկտիդայում (էլսուէրտի լեռներ) ոչ թե հերցինյան, այլ արլիական ծալքավոր-բեկորային կառուցվածք է:

Անտարկտիդայի սահմաններում հայտնի են տրիաս-յուրայի մինչև 1000 մ հզորության տրապների ծածկոցներ, ինչպես նաև երրորդական ու

* Ըստ Պ. Ս. Վորոնովի ընդունվում է երկրի յոթ մայրցամաքների գոյությունը՝ Ասիա, Եվրոպա, Հյուսիսային Ամերիկա, Հարավային Ամերիկա, Աֆրիկա, Ավստրալիա, Անտարկտիդա:

չորրորդական (էրեբուս հրաբուխ) հասակի բազալտներ: Ռոսսի ծովի շրջանում հայտնի է պերմո-կարբոնի հզոր ածխաբեր հաստվածք, որը նման է Կարբու (Աֆրիկա) կամ Տունգուսկայի (Սիբիր) հաստվածքներին: Անտարկտիդայի մետաղածնություն վերաբերյալ կան միայն կցկտուր տվյալներ. այստեղ հաղվազուտ մետաղային պեղմատիտների (Be, Nb, Zr-ումով), ուրանի հան-



Նկ. 14—Հարավային մայրցամաքների բեկորների ենթադրական խմբավորումը Գոնզվանայի զանգվածում մինչև նրա արոհումը յուրալի դարաշրջանում (ըստ Պ. Ս. Վորոնովի, 1968).

1—Գոնզվանայի բեկորների մայրցամաքային սալերի ծանրության կենտրոնի ժամանակակից դիրքը. 2—նրանց ընդհանուր ծանրության կենտրոնի հաշվարկված դիրքը, Աֆրիկայի ժամանակակից ուրվագծի համեմատ. 3—դիտվող մայրցամաքային սալերի ծանրության կենտրոնների նախկին դիրքը Գոնզվանայի զանգվածում. 4—Գոնզվանայի ֆիզուրայի ընդհանուր ծանրության կենտրոնը. 5—Գոնզվանայի բեկորների ծանրության կենտրոնների տեղափոխման հիմնական ուղղությունը մեկոկայնոլոյի ժամանակաշրջանում, 6—Գոնզվանայի բեկորների պտույտների ուղղությունները, 7—հերցինյան ծալքավորման ու օրոգենների արտահայտման դոնաները՝ ա) սահմանված, բ) ենթադրվող. 8—ալպիական ծալքավորման ու օրոգենների արտահայտման դոնաները՝ ա) սահմանված, բ) ենթադրվող, 9—Գոնզվանայի պալեոգոյան ստոցապատման մաքրածալ տարածման ուրվագիծը, 10—հարավային աշխարհագրական բևեռի ենթադրվող տեղադրամասն հետագիծը միջին դեոնից մինչև այժմ, տեղադրված պալեոկլիմայական ու պալեոմագնիսական տվյալներով Աֆրիկայի ուրվագծերի ժամանակակից տարածական դիրքի նկատմամբ, 11—իրական միջօրեագծի ուղղությունը Աֆրիկայի ժամանակակից ուրվագծերի նկատմամբ, 12—Գոնզվանայի գլխավոր բեկորների մայրցամաքային սալերի ժամանակակից ուրվագծերը՝ ԱՖ—Աֆրիկա, Ար—Արարիա, Հն—Հնդկաստան, Ավ—Ավստրալիա, ՀԱ—Հարավային Ամերիկա, Մ—Մադագասկար, Ան—Անտարկտիդա:

D₂—Հարավային աշխարհագրական բևեռի ենթադրվող դիրքը միջին դեոնում, P₁—նույնը ստորին պերմում ու յուրայում. Q—հարավային աշխարհագրական բևեռի այժմյան դիրքը:

քավայրերի, սուլֆիդային պղինձ-նիկելային (վերջինները կապված են տրապային ֆորմացիայի զաբրո-նորիտների հետ), պղնձային և բազմամետաղային հանքանյութերի (մեղդոլոյան զրանիտոիդների հետ կապված) առկայության մասին:

Ելնելով Անտարկտիդայի երկրաբանական կառուցվածքի նմանությունից Գոնզվանայի մյուս մասերի՝ առաջին հերթին Հարավային Աֆրիկայի, Հարավային Ամերիկայի, Հնդկաստանի և Արևմտյան Ավստրալիայի հետ, այստեղ կարելի է հանդիպել արմատի հանքավայրերի, ոսկու և ուրանի տարբեր գենետիկական տիպերի հանքավայրերի (այդ թվում ոսկի-ուրանաբեր կոնգլոմերատներին, հիդրոթերմալ երակների բնածին ոսկով կամ ուրանային խեժով), հավանաբար նաև երկաթի ու մանգանի մետամորֆոզեն հանքավայրերի, որոնք ընդհանրապես բնորոշ են վահանների պլատֆորմներին:

Անտարկտիդայի երկրաբանական կառուցվածքը ղեռ շատ թույլ է ուսումնասիրված, քանի որ մայրցամաքի տերիտորիայի 95% ծածկված է հզոր սառցադաշտով, իսկ երկրաբանական հանույթները ընդգրկել են սառցադաշտից մերկացած տարածության 25%-ից ոչ ավելին: Սովետական երկրաբանական հետազոտությունները ընդգրկել են դիսալորապես Արևելյան Անտարկտիդան և, ըստ Մ. Գ. Ռավիլի (1966), ստացել են հետևյալ արդյունքները՝

1. Առաջին անգամ կատարված է բյուրեղային հիմքի ապարների ֆորմացիոն ենթաբաժանում ու պետրոլոգիական նկարագրում 200-ից ավելի բացարձակ հասակի որոշումներով: Հաստատված են նախկինում այստեղ անհայտ մետաբազիտներ, անորթոզիտներ, մարմարներ, կալցիֆիրներ, հիմքային երկպիրոքսենային թերթաքարեր: Պարզվել է, որ հիմքի ապարները առաջացել են հզոր նստվածքա-հրաբխային գեոսինկլինալային հաստվածքի հաշվին, որը ենթարկվել է գրանուլիտային և մասամբ նրա վրա վերադրված ամֆիբոլիտային ֆացիայի ռեգիոնալ մետամորֆիզմի և ուլտրամետամորֆիզմի:

2. Ուսումնասիրված են զրանիտացման պրոցեսները, նկարագրված են բյուրեղային հիմքի տարբեր ապարներից զրանիտացման հետևանքով առաջացած «ստվերային» զրանիտներն ու միզմատիտները:

3. «Անտարկտիկական շարնոկիտային մարզ» անվան տակ առանձնացված են շարնոկիտների հսկայական զանգվածների (մի քանի հազար կմ² տարածությամբ) երևք տիպեր՝ ա) «ստվերային» (հիպերստենային զրանիտագնեյաներ), առաջացած հիմքային կազմության պիրոքսենային բյուրեղային թերթաքարերի զրանիտացման հետևանքով. բ) «ռեոմորֆիկ, լայն տարածված և առաջացած ուլտրամետամորֆիզմի պրոցեսների ժամանակ բյուրեղային հիմքի զրանուլիտային ֆացիայի ապարների մոբիլիզացման և մասնակի վերաձուլման հետևանքով, ընդ որում ռեոմորֆիզմի պրոցեսները դիտվում են որպես անցողիկ՝ մետասոմատիկ զրանիտացման ու մազմատիզմի միջև. գ) «մետասոմատիկ», քիչ տարածված, առաջացած հիմքի ներփակող ապարների զրանիտացման ժամանակ հնագույն զրանիտոիդային-նորիտային ինտրուզիաների վերաբյուրեղացման հետևանքով:

4. Քաղուհի Մոդ երկրի արևմտյան մասում, Անտարկտիկական պլատֆորմի ծածկի հիմքում առանձնացված են ռիֆեյի—ստորին քեմբրի նստվածքահրաբխածին հաստվածք:

5. Առաջին անգամ հաստատված է ալկալային ու նեֆելինային սիենիտ-

ների առկայությունը (նրանց հետ ենթադրվում է հազվագյուտամետաղային հանքայնացում):

6. Հայտնաբերված են մի շարք օգտակար հանածոների՝ կրկաթի (ջեւպիլիտներ), ֆլոգոպիտի, գրաֆիտի, լեռնա-բյուրեղապակու, տիտանամագնետիտի և այլ հանքավայրեր ու երևակումներ:

Այսպիսով, Անտարկտիդան իրենից ներկայացնում է հին պլատֆորմ, միայն մասամբ նաղաղօվկիանոսյան մերձափնյա զոնայում եզրապատված պալեոզոյան ու մեզոզոյան կառուցվածքներով: Պլատֆորմի տարածությունը ավելի քան 12 մլն. կմ² է և իր երկրաբանական կառուցվածքով շատ նման է Ավստրալիայի, Հարավային Ամերիկայի, Աֆրիկայի ու Հնդկաստանի Հին Գոնդվանյան պլատֆորմներին. այդ կապակցությամբ էլ Անտարկտիկական պլատֆորմը հարկ է անվանել «Գոնդվանյան»:

Հարավ-Ամերիկյան Անդերին շատ նման Անտարկտիդայի ծալքավոր կառուցվածքները ունեն ավելի քան 1 մլն. կմ² տարածություն. դրանք հարկ է անվանել «Անդյան» («Անտարկանդեր»), որոնք ընդգրկում են Ջոնս և էլսուեյրտ լեռների շրջաններն ու Անտարկտիկական թերակղզին, այն դեպքում, երբ Անտարկտիդայի մնացած մասը՝ Արևելյան Անտարկտիդան, արևմտյան Անտարկտիդայի կենտրոնական շրջաններն ու Մերի Բեդդ երկիրը վերագրվում են պլատֆորմի:

Գոնդվանյան Անտարկտիկական պլատֆորմը կազմված է արխեյի ու ստորին պրոտերոզոյի բյուրեղային հիմքից, տեղ-տեղ ծածկված ռիֆեյի-ստորին պալեոզոյից մինչև կավձի հասակի նստվածքա-հրաբխային ֆորմացիայով: Չարնոկիտների ինտրուզիվ զանգվածները կազմում են բյուրեղային հիմքի ծավալի 10-ից մինչև 30%-ը: Հիմքի ապարները հատված են ինտրուզիաներով՝ ա) մինչքեմբրյան գրանիտոիդներով, բ) ստորին պալեոզոյան սինօրոգեն գրանոդիորիտներով ու հետօրոգեն գրանիտներով, գ) միջին պալեոզոյան պլատֆորմային բնույթի գրանիտներով և գրանոդիորիտներով (բացարձակ հասակը 350—320 մլն. տ.):

Միջին պալեոզոյան-մեզոզոյան պլատֆորմի ծածկում (Բիկոն սերիա) զարգացած են ավազաքարերը, գոլերիտները, բազալտոիդները և ուրիշ ապարներ, որոնց կտրվածքը վարից վեր հետևյալն է՝ ստորին Բիկոնյան հաստվածք (ավազաքարեր, ալերոլիտներ D₂ ու D₃ քաղցրահամ ջրերի ձկների մնացորդներով), վերին Բիկոնյան հաստվածք (ավազաքարեր, կավային թերթաքարեր, ածխաբեր նստվածքներ, տիլիտներ P ու T գլոսոպտերիտային ֆլորայով). տոլեիտային բազալտներ, տիլիտներ, տրապներ (բացարձակ հասակը 170 մլն. տ.) T-J հասակի դոլերիտային սիլերով ու գաբրո-նորիտներով (վերջինների հետ կապված է խոշոր մասշտաբի Cu-Ni հանքայնացում):

Անդյան ծալքավոր զոտին («Անտարկանդեր») միակցվում է Հարավային Ամերիկայի Անդերի հետ ու ենթաբաժանվում է երկու՝ ա) հերցինյան (?) էլսուեյրտ լեռների ու էյոսի ափի ծալքավոր, բ) Անտարկտիկական թերակղզու, Ալեքսանդր I երկրի ու նրան կից կղզիների մեզոզոյան ծալքավոր շրջանների: Բնորոշ են բեկորային շարժումներն (ինչպես և Անդերում գեոսինկլինալային ծալքավորումը բացակայում է) ու Cr₂-Tr₁ հասակի (բացարձակ հասակը 100—85 մլն. տ.) գաբրոների և գրանիտների ինտրուզիաները:

- Антарктика. Доклады комиссии 1967 г. АН СССР. Междуведомственная комиссия по изучению Антарктики, «Наука», 1969, с. 125—144.
- Воронов П. С. Абсолютный возраст пород и структура Антарктиды. «Инф. бюлл. Сов. антарктич. экспед.», № 31, 1961, с. 15—21.
- Воронов П. С. Антарктида и проблема распада Гондваны. «Инф. бюлл. Сов. антарктич. экспед.», № 65, 1967, с. 44—57.
- Воронов П. С. Очерки о закономерностях морфометрии глобального рельефа Земли. «Наука», 1968, с. 5—122.
- Вялов О. С. Предварительные данные по геологии побережья Антарктиды между 89 и 107° в. д. «Геол. сб. Львов. геол. об-ва», № 4, 1957, с. 187—195.
- Лебедев В. Л. Антрактика. Географгиз, 1957, с. 187.
- Новейшие геологические исследования в Антрактиде. «Мир», 1966, с. 15—205.
- Равич М. Г., Климов Л. В., Соловьев Д. С. Докембрий Восточной Антарктиды. «Недра», 1965, с. 5—470.
- Равич М. Г. Предисловие к книге «Новейшие геол. исследования в Антрактиде». «Мир», 1966, с. 5—14.
- Равич М. Г. Геологическое строение Антарктиды. «Инф. бюлл. Сов. Антарктич. экспед.», № 57, 1966, с. 28—42.
- Равич М. Г., Соловьев Д. С. Геология и петрология центральной части гор Земли Королевы Мод. «Тр. НИИГА», т. 141, 1966, с. 290.
- Ушаков С. А., Хаин В. Е. Строение Антарктиды по геолого-географическим данным. «Вестн. Моск. ун-та», № 1, 1965, с. 3—27.
- Шалимов А. И. К вопросу структурно-тектонического районирования Антарктиды. ДАН СССР», т. 116, № 4, 1957, с. 667—670.
- Шалимов А. И. Полезные ископаемые Антарктики. «Инф. бюлл. НИИГА», вып. 8, 1958, с. 53—61.

ՎԱՀԱՆՆԵՐԻ ՈՒ ՆՐԱՆՑ ՓՈԼՏՏՈՐՄՆԵՐԻ ՄԵՏԱՂԱՄՆՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

Վահանների ու նրանց պլատֆորմների մետաղածնության առանձնահատկությունների ամփոփումն անկասկած հաստատում է այդ տիպի ստրուկտուրաների հանքայնացման զարգացման որոշակի օրինաչափությունները՝ վահանների և պլատֆորմների համար բնորոշ մետաղային հանքավայրերի նմանության գծերը ու մետաղների համալիրը: Առանձին վահանների հանքայնացման տարբերությունները հիմնականում քանակական են ու կապված են նրանց երկրաբանական ուսումնասիրության տարբեր աստիճանի հետ:

Այսպես, համեմատաբար վերջերս հայտնաբերված են երկաթի հանքանյութերի մետամորֆոզեն հանքավայրերի ու լիկվացիոն պղինձ-նիկելային հանքանյութերի խոշոր կուտակումներ Արևմտաավստրալիական վահանի սահմաններում, լիկվացիոն պղինձ-նիկելային հանքանյութեր Անտարկտիդայում, արմատաբեր քիմբերլիտներ Սիբիրական պլատֆորմի սահմաններում, կարբոնատիտային հանքանյութեր Աֆրիկական, Բրազիլական, Կանադական, Սիբիրական վահաններում և ուրիշ: Այդ բոլոր հանքավայրերի տիպերը բնորոշ են տվյալ ստրուկտուրաների համար և նրանց հայտնաբերման հնարավորությունները շատ դեպքերում կանխատեսվել են:

Վահանի ու նրա պլատֆորմի մետաղածնության մեջ որպես կանոն ստույգ տարբերվում են երեք հերթափորվող փուլեր (երկրորդ ու երրորդ փուլերը մասամբ վերադրված են մեկը մյուսի վրա):

1. Վահանի արխեյի ու ստորին պրոտերոզոյի հիմքի մետաղածնությունը:

2. Պլատֆորմի ծածկոցի մետաղածնությունը վերին պրոտերոզոյից մեզոկայնոզոյի հասակի հրաբխածին-նստվածքային ապարներում:

3. Վահանի ու նրա պլատֆորմի ակտիվացած տեղամասերի վերին պրոտերոզոյից մեզոկայնոզոյի հասակի մետաղածնությունը:

Այդ փուլերից յուրաքանչյուրը բնութագրվում է ապարների ու հանքայնացման բնորոշ կոմպլեքսով:

Վահանի հիմքի արխեյան—ստորին պրոտերոզոյան դարգացման փուլի հետ է կապված հնագույն գրանիտոիդներով ու հիմքային ուլտրահիմքային ապարներով ներդրված զնեյսների, միզմատիտների, բյուրեղային թերթաքարերի ու քվարցիտների լայն տարածումը: Վահանների հիմքի ապարների հարում են մի շարք գործնականորեն կարևոր հանքավայրերի տիպեր.

ա) երկաթի մետամորֆոզեն հանքանյութերը երկաթային քվարցիտներում, որոնց ենթակա են հոծ հանքանյութերի մարմիններ (Կրիվոյ Ռոզ ու ԿՄՍ-ն՝ Սովետական Միությունում, Վերին լիճը՝ ԱՄՆ-ում, Իտաբիրան՝ Բրազիլիայում, Հնդկաստանի, Ավստրալիայի, Չինաստանի, Հարավային Աֆրիկայի խոշոր հանքավայրերը). բ) մանգանի մետամորֆոզեն հանքանյութեր Հնդկաստանի, Բրազիլիայի, Հարավարևմտյան ու Հարավային Աֆրիկայի պրոտերոզոյան հասակի զոնդիտների ու քվարցիտների մեջ. գ) ոսկի-ուրանաբեր քվարցիտներ ու կոնզլոմերատներ (Բլայնդ-Ռիվեր՝ Կանադայում, Վիտվատեսբանգ՝ ՀԱՀ-ում, Ժակոբինա՝ Բրազիլիայում, Ավստրալիայի, Սկանդինավիայի և ուրիշ հանքավայրեր). դ) հազվագյուտմետաղային պեզմատիտներ (տանտալա-կոլումբիտային, բերիլիումային, լիթիումային, ուրանաթորիումային հանքանյացումով) ու բարձր շերմաստիճանային հիդրոթերմալ ոսկեբեր և ուրանաբեր քվարցային երակներ. հազվագյուտ մետաղները, ուրանը ու ոսկին կապված են հնագույն գրանիտոիդների հետ և, հավանաբար, ոսկու և ուրանի սկզբնաղբյուրներ են քվարցիտների և կոնզլոմերատների «ք» տիպի հանքավայրերի համար:

Հազվագյուտմետաղային պեզմատիտներն ու ոսկեբեր քվարցային երակներն առանձնապես լայն զարգացած են Աֆրիկական, Կանադական, Բրազիլական, Արևմտաավստրալիական ու Հնդկական վահանների սահմաններում, բայց բնորոշ են նաև մյուս բոլոր վահաններին: Արխեյան-ստորինպրոտերոզոյան վահանի հիմքի պլատֆորմային ծածկոցը ներկայացված է նստվածքային (ավազաքարեր, թերթաքարեր, կոնզլոմերատներ, ավելի քիչ կրաքարեր ու դոլոմիտներ) ու հրաբխածին (դիաբազներ, տրապներ, պորֆիրիտներ, նրանց պիրոկլաստիկ տարբերակներ) ապարների համալիրով, որոնց հասակը տատանվում է լայն ինտերվալում՝ վերին պրոտերոզոյից (կամ ուիֆեյից, սինիից) մինչև մեզոկայնոզոյանն ու շորթորդականը ներառյալ: Շատ տեղերում այդ կոմպլեքսում ներգրված են պրոտերոզոյան և գլխավորապես ավելի երիտասարդ գրանիտոիդային, բազիտ-ուլտրաբազիտային և ալկալային ապարների ինտրուզիաներ: Վերջինները ինչպես նաև գրանիտոիդների և բազիտների-ուլտրաբազիտների մի մասը հարում են խախտումներին և կապված են վահանի ու նրա պլատֆորմի ռեակտիվացման հետ: Պլատֆորմի ծածկոցի ապարների մեջ տեղադրված են համաշխարհային նշանակություն ունեցող մի շարք հանքավայրերի տիպեր՝

ա) ստրատիֆորմ (շերտաձև, նստվածքային կամ տեղեթերմալ ^o) պղնձի

հանքանյութերի հանքավայրեր Կատանգա սիստեմի ավազաքարերում ու թերթաքարերում (Զաիրի ու Հյուսիսային Ռոդեզիայի վերին պրոտերոզոյում) և մոտավորապես նույն հասակի հանքավայրեր Ռոդեզիայի Սովետական Միությանում (Զիտայի մարզ) և Ուայտ-Պայն Կանադայում, այդ հանքավայրերից մի քանիսը (Զաիրում) միաժամանակ կոբալտի, կապարի ու ցինկի, կադմիումի, գերմանիումի, սելենի և ուրանի աղբյուրներ են, որոնց հանքանյութերը սերտորեն կապված են հիմնական մետաղի՝ պղնձի հետ:

բ) ստրատիֆորմ կապար-ցինկային ու ֆլյուորիտային հանքանյութեր քեմբրի-կարբոնի կարբոնատային հաստվածքներում (Միսսուրի-Միսսիսիպի՝ ԱՄՆ-ում, Հարավարևմտյան Աֆրիկայի, Բրազիլիայի, Սովետական Միության և ուրիշ հանքավայրեր):

գ) կոլչեզանային (պղնձի, բազմամետաղային, ծծմբակոլչեզանային) հանքավայրեր պրոտերոզոյան հասակի հրաբխածին հաստվածքներում՝ Կանադական վահանում (Ֆլին-Ֆլոն, Նորանգա, Շերրիտ-Գորդոն, գուցե նույնպես Սուլլիվանը ?), Արևմտավստրալիական վահանում (Բրոկեն-Հիլլ, Մաունտ-Ալդա և այլն), Բալթյան վահանում (Բոլիգեն, Յուստոկոմսկո, Պարանգոլո և այլն), որոնք ներկայացված են էքսհալյացիոն-նստվածքային գոյացումներով կապված հին հրաբխականության հետ:

դ) պղինձ-նիկելային (Co, Pt, Pd խոնուրդով) լիկվացիոն հանքավայրեր, կապված գլխավորապես պրոտերոզոյի հասակի (Աֆրիկայում, Կանադայում, Ավստրալիայում, մասամբ ՍՍՀՄ-ում) և ավելի հազվադեպ մեզոզոյան հասակի (ՍՍՀՄ-ում ու Անտարկտիդայում) բազիտների-ուլտրաբազիտների հետ: Այդ խմբին են պատկանում պրոտերոզոյան հասակի հայտնի Սյոդբերին՝ Կանադայում, Ռուստենբուրգը՝ ՀԱՀ-ում, Մոնչեգորսկը, Պեչենգան՝ ՍՍՀՄ-ում, Պերտը՝ Ավստրալիայում ու ստորինմեզոզոյան հասակի՝ Նորիսկ-Տալնախը՝ ՍՍՀՄ-ում, Ինսիզվան՝ Հարավային Աֆրիկայում, Անտարկտիդայի հանքավայրերը:

Ինչ վերաբերում է հանքայնացմանը, որը կապված է պլատինոիդի ծածկոցի և նրա հիմքի ռեակտիվացման հետ, այն պայմանավորված է բեկվածքներով, որոնց երկայնքով ներդրվում են զրանիտոիդներն ու ալկալային-ուլտրահիմքային կոմպլեքսները և նրանց հետ կապված հանքավայրերը: Ռեակտիվացման ինտրուզիվ կոմպլեքսների ու նրանց հետ սերտորեն կապված հանքավայրերի հասակը տարբեր է, բայց սովորաբար նրանք դասվում են երեք գլխավոր հասակային՝ ռիֆեյ-քեմբրի, դեոն, մեզոկայնոզոյի խմբերին:

Այսպես կոչված «երիտասարդ» (ռիֆեյան ու ավելի ուշ) զրանիտոիդների հետ են կապված Աֆրիկայի, Բրազիլիայի և այլ վահանների բազմաթիվ և խոշոր հազվագյուտմետաղային պեզմատիտների դաշտերը, սսկու, ուրանի, կապարի և ցինկի, մոլիբդենի հիդրոթերմալ հանքավայրերից շատերը:

Ալկալայային-ուլտրահիմքային, հաճախ «օղակային» ինտրուզիաների տիպի համալիրների հետ կապված են Աֆրիկական, Բրազիլական, Կանադական և ուրիշ վահանների կարբոնատային հանքանյութերի խոշորադոյն հանքավայրերը, որոնցում կենտրոնացված են նիոբիումի, ցիրկոնիումի, հազվագյուտ հողերի, ապատիտի, ֆլուգոպիտի և այլ արժեքավոր օգտակար հանածոների հսկայական պաշարները (Բարեյրու-դի-Արաշա, Պոսուս-դի-Կալդաս, Տապիրա ու Ժակուպիրանգա հանքավայրերը Բրազիլիայի Սան-Ֆրան-

ցիսկո լինեամենտում, Լուեշ, Կարոնգե՝ Մեծ Աֆրիկյան բեկվածքների գոնացում, Մաունտին-Պաս և Օկա՝ Կանադական վահանի սահմաններում և այլն):

Նշված կարբոնատախալին հանքավայրերի հասակը գտնվում է լայն ինտերվալում՝ ռիֆեյից մինչև երրորդականը ներառյալ, բազմիցս արտացոլելով ախտիվացման պրոցեսները:

Ախտիվացման պրոցեսների և ուտրահիմքային-ալյալային ապարների ներդրման հետ կապված են ալմաստի Աֆրիկական, Բրազիլական, Սիբիրական, Հնդկական և այլ վահանների բոլոր խոշոր հանքավայրերը: Քիմբերլիտների հասակը գլխավորապես մեզոկայնոզոյան է (կավիճ, պալեոզեն), սակայն հայտնի են և ավելի հին՝ վերինպալեոզոյան ու ռիֆեյ-ստորինպալեոզոյան հասակի քիմբերլիտներ:

Եթե նշելու լինենք վահանների ու նրանց պլատֆորմների առանձնահատկությունները, ապա հարկ է ընդգծել այդ տիպի ստրուկտուրաներում՝ երկաթի, մանգանի, ոսկու-ուրանի մետամորֆոզեն հանքանյութերի, նիկելի ու պղնձի (կոբալտի, պլատինի, պալադիումի խառնուրդով) լիկվացիոն հանքանյութերի, հազվագյուտմետաղային պեզմատիտների (բերիլիումով, տանտալով և նիոբիումով, լիթիումով, անագով, ուրանով և թորիումով), հազվագյուտմետաղային կարբոնատիտների (նիոբիումով, ցիրկոնիումով, հազվագյուտ հողերով, ֆլուդոպիտով, ապատիտով), պղնձի, կապարի ու ցինկի (կոբալտով, գերմանիումով, կադմիումով, ուրանով) ստրատիֆորմ հանքամարմինների, պղնձի ու բազմամետաղային կոլչեդանային հանքանյութերի, ոսկու հանքավայրերի (քվարցային երակներում) և ուրանի (զուգակցվում է Co, Ni, Bi, Ag հետ, կամ պղնձի, կամ էլ հեմատիտի հետ) հիդրոթերմալ, ալմաստաբեր քիմբերլիտների հանքավայրերի գենետիկ տիպերի լայն զարգացումը:

Նշված հանքավայրերի տիպերից շատերը յուրահատուկ են միայն վահաններին ու պլատֆորմներին կամ գլխավորապես զարգացած են նրանց սահմաններում և բացակայում, կամ թույլ են զարգացած ծալքավոր շարժուն գոտիներում:

Հետևաբար վահաններն ու նրանց պլատֆորմները արտակարգ հարուստ են հետևյալ մետաղներով՝ Fe, Mn, Au, U, Ni, Co, Pt, Pd, Be, Ta, Nb, Zr, TR, ինչպես նաև ավելի նվազ չափով պղնձով, կապարով, ցինկով, գերմանիումով: Ոչմետաղային օգտակար հանածոներից բնորոշ են ալմաստը ու ֆլուդոպիտը և ավելի քիչ ապատիտն ու գրաֆիտը:

VI. ԾԱԼՔԱՎՈՐ ՇԱՐՃՈՒՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՄԵՏԱՂԱԾՆՈՒԹՅՈՒՆԸ

Ծալքավոր շարժուն ու նրանց հետ համընկնող մետաղածնային գոտիներն առաջանում են գեոսինկլինալային իջվածքների սահմաններում և, սովորաբար, ժամանակակից ռելյեֆում արտահայտված են այս կամ այն չափով լվացված լեռնաշղթաներով: Մետաղներով և ուրիշ օգտակար հանածոներով առավել հարուստ են երկրագնդի երկու խոշոր գոտիները՝ Միջերկրածովայինն ու Խաղաղօվկիանոսյանը, որոնք իրոք գոտեւորում են Երկիրը, առաջինը՝ լայնակի, իսկ երկրորդը՝ միջօրեականին մոտ ուղղություններով:

Ավելի նվազ նշանակություն ունեն Ուրալյան, Ալթայ-Սայանյան, Ղա-

գախստանյան, Միջինասիական (ՍՍՀՄ-ում), Արևմտաեվրոպական, Նորվեգիա-Ապալաչյան, Ատլասյան ու Արևելաամերալիական ռեզիտնալ գոտիները. համեմատաբար փոքր մասշտաբի են Թայմիրյան, Կապի (ՀԱՀ), Կամ-Յունանյան (ՉԺՀ) ու Արգենտինյան հանքային գոտիները:

1. Միջերկրածովային մետաղածնային գոտին ընդգրկում է Միջերկրական ծովի ավազանը Հարավային Եվրոպայի ու Հյուսիսարևմտյան Աֆրիկայի երկրների սահմաններում, տարածվելով դեպի արևելք՝ Փոքր Ասիա, Կովկաս-Անդրկովկաս, Աֆղանստան, Հյուսիսային Հնդկաստան (Հիմալայներ), Ինդոնեզիա մինչև Բանկա և Բիլիտոն կղզիները, որտեղ նա միակցվում է Խաղաղօվկիանոսյան գոտուն (նկ. 15):



Միջերկրածովային մետաղածնային գոտու տարածումը լայնակի է, ընդհանուր ձգվածությունը շուրջ 18 հազար կմ, 800—1000 կմ գոտու միջին լայնություններ: Տարածականորեն այն համընկնում է Տետիսի հսկայական գետախիլինալի հետ, որի սահմաններում ծալքավորման պրոցեսները, մագմատիզմը ու հանքայնացումը ավելի ինտենսիվ տեղի են ունեցել մեզոկայնոզոյում: Արևմուտքից դեպի արևելք անհրաժեշտ է նշել Միջերկրածովային գոտու հետևյալ հանքային շրջանները՝

Իսպանիայի հարավ-արևելքն ու Պիրենեյները, որտեղ հայտնի են կրրոդական հասակի բազմամետաղային խոշոր հանքավայրեր (Մացարոն, Կարթագեն և այլն), ինչպես նաև սնդիկի կարևոր հանքավայրեր (Ալմերիա մարզ). ինչ վերաբերում է սնդիկի աշխարհի խոշորագույն Ալմարեն հանքավայրին՝ Նոր Կաստիլիայի հարավում, որը տեղադրված է սիլուրի նստվածքային հաստվածքում, ապա նրա հանքայնացման հասակի հակասական տվյալների կապակցությունը (վերին պալեոզոյ կամ մեզոկայնոզոյ) այդ հանքավայրը ալպիական միջերկրածովային գոտուն կարելի է վերագրել միայն պայմանականորեն: Իսպանիայի և Պորթուգալիայի մյուս մետաղային հարստությունները (անագ-վոլֆրամային, ուրանային, ծծմբա-պղնձակոլչեղանային, երկաթային և ուրիշ հանքանյութերը) տեղադրված են հերցինյան ստրուկտուրաներում և կղիտվեն ավելի ուշ: Կարևոր ու բազմազան հանքավայրեր հայտնի են Հյուսիսային Աֆրիկայի ալպիական զոնայում՝ Ալժիրում, Թունիսում, Հյուսիսային Մարոկկոյում, որտեղ աչքի են ընկնում կապար-ցինկային շերտաձև (Բու-Բեկեր-Տուիսսի, Միբլադեն, Զեյդա), երկաթային հանքանյութերի մետասոմատիկ (Ջերիսա, Ուենցա և այլն), մանգանի էքսհալյացիոն-նրստվածքային հանքավայրերը (Իմինի, Բու-Արֆա և այլն), ինչպես նաև ծարիրի ու սնդիկի արդյունաբերական հետաքրքիր կուտակումները, ռեալգար-աուրիպիզմենտային հանքանյութերի երևակումները:

Իտալիան համեմատաբար աղքատ է մետաղներից, այնտեղ հայտնի են միայն սնդիկի ու ծարիրի խոշոր հանքավայրեր Տոսկանա մարզի Մոնտե-Ամիատա շորրորդական հրաբխի լանջերում. բացի դրանից որոշ նշանակություն ունեն նաև Մասա-Մարիտիմա ու Ռայլը շրջանների բազմամետաղային հանքավայրերը, էլբա կղզու երկաթաբեր սկանոնային դաշտերը, Լիգուրիայի մանգանային ու Ալպերի նիկել-կոբալտային հանքավայրերը:

Մետաղային հանածոներով հարուստ է Կարպատա-Բալկանյան մարզը, որն ընդգրկում է Հարավսլավիան, Բուլղարիան, Ռումինիան, Ալբանիան, Հունաստանը, ինչպես նաև Հունգարիան և Սլովակիան: Այդ մարզի մետաղածնային առանձնահատկությունները լավ նկարագրված են Ցիսարցի

(Cissarz, 1956), Կոստովի (Kostov, 1943), Պետրաշեկի (Petrachek, 1963), Շումահերի (Schumacher, 1954), Յանկովիչի (Jankovič, 1967), Ռամովիչի (Ramovič, 1968) և ուրիշների աշխատություններում: Բուլղարիայի և Հուն-



Նկ. 15—Գոնդվանայի օղակի ալպիական ծալքավորման տարածման սխեման (ըստ Վ. Ն. Սոբոլևիչի 1965).

1—Գոնդվանայի հին կրատոնների արտաքին սահմանները, 2—Գոնդվանայի սիստեմի հին պլատֆորմներ՝ I—Բրազիլական, II—Աֆրիկա-Արաբական, III—Հնդկական, IV—Ավստրալիական, V—Անտարկտիկական, 3—Գոնդվանայի շրջանում բալկայան ու պալեոզոյան ծալքավորումները՝ միջերկրածովային տիպի ալպիական ծալքավորման զարգացման մարզերում տեղ-տեղ մակերես դուրս եկող էլքերով, 4—Միջերկրածովային տիպի ալպիաների տարածման զոնաներ, զարգացած պալեոզոյան ծալքավորման վրա (Խաղաղօվկիանոսյան եզրապատման հարավային կեսը), 5—կայնոզոյան ծալքավորման զարգացման մարզեր, կապված ռեգեներացված մեզոզոյան ծալքավորման հետ (Խաղաղօվկիանոսյան եզրապատման հյուսիսային կեսը), 6—Անտարկտիդալ երիտասարդ (կայնոզոյան) բազալտային հրաբխականության արտահայտման մարզեր, 7—խորշրյա փոդրակներ, 8—բեկվածքներ:

գարիայի, Հարավսլավիայի ու Սլովակիայի մի շարք հանքավայրեր վերջերս ուսումնասիրվել են հեղինակի կողմից:

Հարավսլավիայի տարածքը ամենահարուստն է տարբեր տիպի մետաղային հանքավայրերով, այդ տեսակետից աչքի են ընկնում Դինարիդները, որտեղ արտահայտված են մագմատիզմի ու հանքայնացման բազմաթիվ փուլեր:

Կալեդոնյան ու հերցինյան ցիկլերի մագմատիզմը և հանքայնացումն այստեղ համեմատաբար թույլ են արտահայտվել: Արևմտյան Մակեդոնիայում զարգացած ստորինպալեոզոյան դիաբազների հետ սերտորեն կապված են Լան-Ռիլի տիպի էքսհալյացիոն-նստվածքային հեմատիտային հանքավայրեր ու ծծմբակոլչեդանային հանքանյութերի շերտաձև կուտակումներ:

Հերցինյան մագմատիզմը ու մետաղածուլթյունը արտահայտված են ավելի ուժեղ. հեղինակներից շատերը հերցինյան հիպերբազիտների հետ են կապում քրոմիտային հանքանյութերի ամենախոշոր հանքավայրերը (Օրադա, Լյուբոտին և այլն), որոնք, սակայն, ուրիշների կարծիքով մեզոկալցոզոյան հասակի են: Հերցինյան գրանիտոիդների հետ կապված են երկաթի սկառնային հանքանյութերի համեմատաբար փոքր հանքավայրեր (Ռուզնա Գլավա), անագի երևակումներ պեզմատիտներում, շեկիտի ու մոլիբդենիտի երևակումներ սկառններում, երակային պղինձ-բիսմութային, ոսկի-շեկիտային ու նիկել-կոբալտային հանքանյութեր. ցրոններում հանդիպում են բնածին պլատին և օսմիումային իրիդիում:

Հարավսլավիայի տարածքում ինտենսիվորեն արտահայտվել են մեզոկալցոզոյան, հատկապես վերին կավճի—երրորդական հասակի մագմատիզմը ու մետաղածուլթյունը: Վերին կավճի մագմատիզմը ներկայացված է հիպերբազիտային գոտիներով, որոնց մեջ տեղադրված են քրոմիտի հանքանյութերի բազմաթիվ հանքավայրեր, ինչպես նաև հիպաբիտալ գրանիտոիդների զանգվածներով՝ գրանոզիորիտներով ու քվարցային դիորիտներով, որոնց հետ կապվում են երկաթի հանքանյութերի և երկրորդական նշանակություն ունեցող որոշ պղնձային ու բազմամետաղային հանքանյութերի հանքավայրեր:

Լայն զարգացած են ավելի երիտասարդ, գլխավորապես օլիգոցեն-միոցենի սուբհրաբխային անդեզիտները, դացիտները, պորֆիրիտները, որոնց զանգվածները գրավում են մինչև 1500 կմ² տարածություն: Մագմատիզմի այդ երիտասարդ արտահայտությունների հետ ծագմամբ ու տարածականորեն սերտորեն կապված են բազմաթիվ և երկրի համար շատ կարևոր պղինձ-կոլչեդանային (Բոր), պղինձ-մոլիբդենային շտոկվերկային (Մայգանպեկ և այլն), բազմամետաղային (Տրեպչա), մոլիբդենի (Մաչկատիցա), ծարիրի (Կոստայնիկ-Կրուպանի), սնդիկի (Ավլա, հավանաբար Իդրիան), ռենիում-աուրիպիզմենային (Լոյանա), երբեմն տալիում պարունակող (Ալշար) հանքանյութերի հանքավայրեր. հանդիպում են նաև ոսկու, նիկել-կոբալտային, բիսմութի, վոլֆրամի (շեկիտի) առանձին, համեմատաբար ոչ մեծ հանքավայրեր:

Այս բոլոր հանքավայրերը հիզրոթերմալ սուբհրաբխային են, երբեմն անցնում են պլուտոնիկի՝ այն զեպերում, երբ հանքայնացում պարունակող էֆուզիվներն ու էքստրուզիաները խորքում աստիճանաբար վերափոխվում են պլուտոնիկ ինտրուզիվ զանգվածների: Փոքր-ինչ ուրույն են երկաթի (հեմատիտային)՝ Վարեշ, մանգանի՝ Յեր ու Չելյանովիչ, ծծմբակոլչեդանային՝

Բորովիցա հանքավայրերը, որոնք տեղադրված են տրիասի հրաբխանստվածքի հաստվածքում ու վերագրվում են էքսհալյացիոն-նստվածքային տիպին:

Զերնոգորիայում տրիասի պորֆիրիտների հետ սերտորեն կապված են կապար-ցինկային ու սնդիկային հանքավայրեր: Իզրիա սնդիկի խոշոր հանքավայրը Կրայնայում մի շարք հետազոտողներ նույնպես կապում են տրիասի պորֆիրիտների հետ:

Հանքաբեր մագմատիկ համալիրներն ու նրանց հետ կապված հանքայնացումը բնորոշում են նաև Հարավսլավիային հարեան երկրներին՝ Ալբանիայի, Բուլղարիայի ու Հունաստանի տարածքները, որտեղ պահպանվում է հանքայնացման նույն բնույթը (նկ. 16, նկ. 17):


Հյուսիսային Ալբանիայում մեզոզոյան հիպերբազիտների հետ կապված են քրոմիտի բավականին խոշոր հանքավայրեր, իսկ պլեոգենի հրաբխածինների մեջ տեղադրված է պղինձ-կոլչեդանային Մերդիտա հանքավայրը:

Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետությունում հանքայնացման տեսակետից մեծ հետաքրքրություն են ներկայացնում Միջնալեոնային ու Ռոգոպյան զոնաները: Միջնալեոնային զոնայում լայն տարածված են վերին կավձի հասակի հրաբխականությունը ու սուբհրաբխային ինտրուզիաները (պորֆիրիտներ, անդեզիտներ, դացիտներ), ինչպես նաև օլիգոցեն-միոցենի (մի շարք երկրաբանների կարծիքով Լարամյան) հասակի գրանոդիորիտների, մոնցոնիտների, քվարցային դիորիտների, հիպաբիսալ ինտրուզիաների:


Վերին կավձի հրաբխականության ու սուբհրաբխային ինտրուզիաների հետ սերտորեն կապված են Միջնալեոնային զոնայի բազմաթիվ պղինձ-կոլչեդանային արդյունաբերական հանքանյութերի հանքավայրեր՝ Ռադկա, Զելուպեչ, Նլշիցա և ուրիշներ՝ պղնձով հարուստ և ոսկու ու արծաթի բարձր պարունակությամբ: Հանքանյութերի կազմությամբ ու նրանց տեղադրման պայմաններով (շտոկներ, ոսպնյակներ, շտոկվերկներ սերիցիտացված էֆուզիվներում տարածականորեն սերտ կապված փոքր սուբհրաբխային ինտրուզիաների հետ) այդ հանքավայրերը Անդրկովկասյան կոլչեդանային հանքավայրերի (Մադնեուլի՝ Վրացական ՍՍՀ, Շամլուղ ու Ալավերդի՝ Հայկական ՍՍՀ) նմանակներն են:

Վերին կավձի հրաբխականության հետ կապված են նաև մանգանի էքս-հալյացիոն-նստվածքային արդյունաբերական հանքանյութերի ոչ մեծ հանքավայրեր, որոնք հարում են մերգելների ու նրանց ծածկող վերին կավձի պորֆիրիտների կոնտակտներին (Պոժարևո, Գոլյամա Ռակովիցա և ուրիշ հանքավայրեր):

Օլիգոցեն-միոցենի (այլ տվյալներով Լարամյան ⁶) հասակի գրանիտոիդների զանգվածների հետ կապված են երակիկա-ցանավոր պղնձի աղբատ հանքանյութերի (մոլիբդենի խառնուրդով) այսպես կոչված «porphyry copper» տիպի հանքավայրեր: Այդ տիպին են պատկանում Մեդետ, Վլայկով Վրիխ, Ասարել շահագործվող, ինչպես նաև Ռոսեն ու Վրիխ Բրյազ երակային պղինձ-մոլիբդենային հանքավայրերը, որոնք Հայկական ՍՍՀ-ի պղինձ-մոլիբդենային հանքավայրերի (Քաջարան, Ազարակ և ուրիշներ) նմանակներն են: Բուլղարական հանքավայրերը ավելի աղքատ են մոլիբդենից (միջինը շուրջ 0,01%) և պղնձից (0,36%), չնայած Մեդետ և այլ հանքային դաշտերում դայկային ապարների սերիաների խտացման տեղամասերում ու գրանիտոիդների տարբերակներում, որոնք հարստացած են մուգ հանքանյութերով



Նկ. 16— Վերին կավճի—պալեոգենյան մագմատիկ (մետաղածնային) զոնաներ, գտարներ ու Միջերկրածովային երկրների հանքային շրջաններ (ըստ Մ. Ռամովիչի):



Նկ. 17—Օլիտոցեն-միոցեն-պլիոցեն-չորրորդական մագմատիկ (մետաղածնային) զոնաներ, գոտիներ ու Միջերկրածովային երկրների հանքային շրջաններ (ըստ Մ. Ռամովիչի):

(որոնցից փոխառվում է պիրիտի և խալկոպիրիտի երկաթը) կարելի է սպասել ավելի հարուստ հանքանյութերի առկայություն:

Պղինձ-մոլիբդենային հանքադաշտերի եզրային տեղամասերը կարող են հետաքրքրություն ներկայացնել ոսկի-բազմամետաղային հանքայնացման տեսակետից:

Այդ տիպի հանքավայրերի շահագործման շահավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է անցկացնել հանքանյութերի ու հարստանյութերի (պղնձային, մոլիբդենային, պիրիտային) մանրադնին ուսումնասիրություններ, պարզելով նրանց մեջ ցրված տարրերի՝ սելենի, տելուրի, կադմիումի, դերմանիումի, ռենիումի, ինչպես նաև արծաթի ու ոսկու առկայությունը, հանքանյութերի բոլոր բաղադրամասերի կոմպլեքսային կորզման համար:

Բուլղարական Ժողովրդական Հանրապետության պղինձ-մոլիբդենային հանքայնացման հասակի հարցը լուծված չի կարելի համարել. գոյություն ունի տեսակետ գրանիտոդիորեն ու հանքայնացումը, հետևաբար, պղնձային կոլչեդանային ու երակիկա-ցանավոր պղինձ-մոլիբդենային հանքանյութերի հասակը կարամջան համարելու. այժմ մենք չունենք ստույգ տվյալներ այդ տեսակետը հերքելու համար, սակայն չենք կարող նաև համամիտ լինել և զտնում ենք, որ մի կողմից կոլչեդանային տիպի Չելոպեշ—Ռադկա—Ելչիցա, իսկ մյուս կողմից՝ երակիկա-ցանավոր տիպի Մեդետ—Ասարել հանքավայրերի առաջացումը տեղի է ունեցել երկրաբանական տարբեր ժամանակաշրջաններում: Բուլղարիայի կոլչեդանային հանքավայրերը վերագրվում են վերին Վլավձի, իսկ երակիկա-ցանավոր պղինձ-մոլիբդենային հանքավայրերը՝ օլիգոցեն-միոցենի հասակին. հարցը կարող է լուծվել Մեդետ գրանիտոդիորային փնտրուղիի բոլոր փուլերի ապարների բացարձակ հասակի որոշումներով: Միջնալեռնային զոնայի պղնձի կոլչեդանային ու երակիկա-ցանավոր պղինձ-մոլիբդենային հանքավայրերից բացի, այստեղ հայտնի են նաև երկաթի մետասոմատիկ տիպի սիդերիտային հանքանյութերի առանձին հանքավայրեր (Կրեմիկովցի), տելեթերմալ կապար-ցինկային շերտաձև հանքանյութերի (ժոզեն, Սեդմոշիսկնիցի), երակային ոսկի-սուլֆիդային (Սվիշտի պլազ, Զլատիցա քաղաքից դեպի հյուսիս) հանքավայրերը:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում նստվածքային (կամ էքսհալյացիոն-նստվածքային) մանդանային կոնկրեցիոն հանքանյութերի Օբրոշիշտե հանքավայրը Վառնա քաղաքի շրջանում, որը հարում է օլիգոցենի հիմքին:

Ինչ վերաբերում է Ռոդոպյան զոնային, այն ներկայացված է միոցենի հասակի գրանիտոդիորենով ու ալկալային փոքր ինտրուզիաներով և բնութագրվում է Մադանի և Մաչարովո հանքային դաշտերի բազմամետաղային հարուստ հանքավայրերով (երակային և մետասոմատիկ հանքանյութերի կուտակումներով), Ֆլյուորիտի խոշոր հանքավայրերով, ուրանի և մանավանդ ոսկու հանքանյութերի հեռանկարներով:

Ոսկու հանքայնացման տեսակետից Բուլղարական Ժողովրդական Հանրապետության տարածքն ունի զգալի հեռանկարներ: Այն հաստատվում է ոչ միայն ոսկու հանույթի մասին պատմական տվյալներով և քաղաքների ու տեղամասերի անվանումներով (Златица, Златка, Златишки և այլն), այլև ոսկու առկայությամբ մի քանի գետերի ալյուվիայում ու սուլֆիդային շատ հանքավայրերի՝ Չելոպեշ, Ռադկա, Ելչիցա, Մեդետ, Ռոդոպի շրջանների հանքանյութերում: Ոսկին հայտնի է նաև Սվիշտի պլազ հանքավայրի սուլֆի-

գային երակներում, Զիպրովցի հանքավայրի շրջանում նրա Կոպիլովցի-Կոմ տեղամասում և ուրիշ տեղերում:

Ոսկու համար հատուկ որոնումներ պետք է կազմակերպել առաջին հերթին Բուլղարիայի հարավարևմտյան մասում՝ Ռոդոպներում՝ և Ստրումա գետի ավազանում, որտեղ կարելի է սպասել Բուլղարիայի համար առայժմ անհայտ էպիթեմմալ ոսկի-տելուրիդային հանքանյութերի հանքավայրեր, որոնք լայն տարածված են Կարպատա-Բալկանա-Կովկասյան զոնայում (Տրանսիլվանիայի, Սլովակիայի, Հունաստանի, Քուրքիայի, Հայաստանի հանքավայրերը): Միջնալեռնային ու Ռոդոպյան հանքային զոնաներից բացի պետք է նշել Բուլղարիայի հյուսիսարևմտյան մասի հերցինյան հասակի գրանիտոիդային հանքաբեր համալիրները, որոնց հետ Զիպրովցի-Մարտինովո շրջանում տարածված են սկաննային հանքավայրեր մագնետիտով, շեելիտով և բիսմութիտով, իսկ սկանների վրա վերադրված է ավելի ուշ բազմամետաղային և ոսկի-սուլֆիդային հիպրոթեմմալ հանքայնացումը: Բուլղարիայի հարավարևելյան մասում (Ստրանջա) հեռաքրքրովթյուն են ներկայացնում կոլչեզանային հանքավայրերը (Փրամատիկովո և ուրիշ հանքավայրեր), տեղադրված միջին-վերին յուրայի հասակի հրաբխածին հաստվածքներում, որոնք հավանաբար Միջնալեռնային զոնայի կոլչեզանային հանքավայրերի համեմատությամբ ավելի հին են:

Ի. Իյովչևը (1965) Բուլղարիայի տարածքի համար առանձնացնում է երեք ճիմնական ստրուկտուրա-մետաղածնային զոնաներ՝ Ռոդոպյան, Միջնալեռնային ու Բալկանյան (Կրաիշտիդներով), որոնք թվարկված են հարավից հյուսիս:

Ռոդոպյան զոնան ներկայացնում է հին միջնազանգված, հատված խախտումներով, որոնց երկայնքով ներդրվել են օլիգոցեն-միոցենի գրանիտոիդները, անդեզիտները, դացիտները, դրանց հետ կապված է Մադանի, Մաջարովի, Գավիդոկոսկի շրջանների բազմամետաղային հարուստ հանքայնացումը, որը ներկայացված է երակներով և մետասոմատիկ մարմիններով: Այստեղ լայն զարգացած է նաև ֆլյուորիտային հանքայնացումը (Միխակովո), կապված պլիոցենի տրախիանդեզիտների հետ (Սլավյանկա հանքը), ինչպես նաև պղնձի, մկնդեղի, ծարիրի, մանգանի, ոսկու մի շարք հանքաերևակումներ:

Միջնալեռնային զոնան (Ստրանջան ներառյալ) բնորոշվում է կավճի հրաբխանստվածքային ու լարամյան գրանիտոիդների լայն զարգացմամբ. վերին կավճի անդեզիտային հրաբխականության հետ սերտորեն կապված են Բադկա, Զելոպեշ, Ելշիցա և ուրիշ պղնձակոլչեզանային ու Պոժարևո, Գոլյամա-Ռակովիցա մանգանի էքսհալյացիոն-նստվածքային հանքավայրերը: Լարամյան գրանիտոիդների հետ կապված են երակիկա-ցանավոր պղինձ-մոլիբդենային Մեդետ, Ասարել և ուրիշ հանքավայրերը: Ստրանջայում (Հարավարևելյան Բուլղարիա) յուրայի հրաբխածին հաստվածքի հետ կապված է Փրամատիկովո կոլչեզանային հանքավայրը:

Բալկանյան զոնայում, որը միակցված է Կրաիշտիդների հետ, հերցինյան գրանիտոիդների հետ կապված են մագնետիտի ու բազմամետաղային հանքանյութերի սկաննային ու հիպրոթեմմալ հանքավայրերը, վոլֆրամի ու մոլիբդենի, պղնձի, մկնդեղի, ոսկու երևակումները (Զիպրովսկի-Մարտինովսկի հանքային շրջան):

Բուլղարիայի հյուսիսարևելյան ծայրամասում Վարնայի ու Դոբրուչայի

շրջաններում օլիգոցենի հիմքին են հարում նստվածքային, պլազմորապե-
մանգանի կարբոնատային հանքանյութերի Օբրոշիշտե հանքավայրը, իսկ
Միջնալեռնային զոնայում Սոֆիա քաղաքի շրջանում շահագործվում է տեղե-
թերմալ մետասոմատիկ սիդերիտային (բարիտի, մանգանի, կապարի խառ-
նուրդով) Կրեմիկովցի հանքավայրը, որը մագմատիզմի հետ տեսանելի կապ
չունի. հանքայնացման հասակը համարվում է յուրայից ավելի երիտասարդ,
բայց վերինկավճից ավելի հին:


Բուլղարիայի և հատկապես Հարավսլավիայի հանքաքեր զոնաների շա-
րունակությունը ձգվում է դեպի հարավ՝ Հունաստանի տարածքում՝ Հելլենիդ-
ներում: Այստեղ հայտնի են քրոմիտի բավականին խոշոր հանքավայրեր,
տեղագրված մեզոզոյի հասակի հիպերբազիտային զանգվածներում: Կարամ-
յան հասակի գրանիտոիդների և ավելի երիտասարդ օլիգոցեն-միոցենի հա-
սակի սուբհրաբխային ինտրուզիաների հետ կապված են հանքավայրեր՝ բազ-
մամետաղային հանքանյութերի (կավրիոն), երկաթի հանքանյութերի (Նալկե-
դոնյան թերակղզի) պղինձկոլչեղանային հանքանյութերի (Օտրիս), մոլիբդե-
նի (Ակնոպոլիս), ինչպես նաև ծարիրի (Խիոս, Լեսբոս կղզիները և ուրիշ.)
ու ոսկու էպիթերմալ հանքանյութերի (Ստրումա զետի ավաղանը) ոչ մեծ
հանքավայրերը: Վերջինները ձգտում են Ստրումայի միջօրեական խախտմա-
նը, որի հյուսիսային շարունակության շրջանում արդեն Բուլղարիայի տա-
րածքում, մենք խորհուրդ ենք տալիս որոնել այստեղ առայժմ անհայտ ոսկու
էպիթերմալ հանքավայրեր:

Հարավսլավիայի ու Բուլղարիայի նկարագրված հանքաքեր տարածքնե-
րից դեպի հյուսիս—հյուսիս-արևելք տեղագրված են Կարպատների ալպիա-
կան ստրուկտուրաները, որոնք ընդգրկում են Ռումինիայի (Տրանսիլվանիա),
մասամբ Հունգարիայի (Մատրա լեռները) ու Սլովակիայի տարածքները: Այս-
տեղ իշխում է միոպլիոցենի հասակի սուբհրաբխային մագմատիզմը, ներ-
կայացված ֆելզիտների, դացիտների, տրախիտների էքստրուզիաներով ու
հրաբխային խառնարաններով, որոնց հետ սերտ կապված է ցածր ջերմաս-
տիճանային հիդրոթերմալ գլխավորապես ոսկի-արծաթային (տելուրիդնե-
րով), մասամբ էլ բազմամետաղային ու սնդիկ-ծարիրային հանքայնացում:
Լոկալ զարգացած են նաև վերին-կավճի-պալեոգենի գրանիտոիդային ինտրու-
զիվներն ու նույն հասակի սուբհրաբխային և էֆուզիվ առաջացումները. առա-
ջինների հետ կապված են երկաթի սիդերիտային հանքանյութերի (Ռուդբա-
նիա, Հունգարիա) ու մագնետիտային սկաննային հանքանյութերի (Բանատ,
Ռումինիա) համեմատաբար ոչ մեծ հանքավայրերը, իսկ երկրորդների հետ՝
պղինձկոլչեղանային հանքանյութերի հանքավայրերը (Մատրաբանյա, Հուն-
գարիա):

էական արժեք են ներկայացնում ոսկու ցածր ջերմաստիճանային հան-
քավայրերը, տեղագրված մասամբ Սլովակիայի սահմաններում (Բանսկա
Շտիվնիցա, Կրեմնիցա, Շեմնիցա, Զլատա Իդա և այլն), իսկ գլխավորապես
Ռումինիայում (Տրանսիլվանիա և Արևմտյան Կարպատներ), որտեղ վաղուց
ի վեր շահագործվում են Նագիբանյա, Ֆելդբանյա, Բալա-Մարե, Բրադ,
Զլանտա և ուրիշ հայտնի հանքավայրերը: Երկրորդական նշանակություն ունեն
ծարիրի, սնդիկի, ռեալգար-աուրիպիզմենտային էպիթերմալ հանքանյութերի
փոքր հանքավայրերը, որոնք հայտնի են Սլովակիայում, Տրանսիլվանիայում
ու Բանատում: Բալկանների հանքաքեր ստրուկտուրաները ձգվում են հա-

քավ—հարավ-արևելք ուղղությամբ դեպի Փոքր Ասիա, որտեղ նրանք ընդգրկում են Կիպրոս կղզին, Անատոլիան, Հայկական լեռնաշխարհը, Հյուսիսային Կովկասը—Անդրկովկասը և ապա ձգվում են դեպի արևելք (նկ. 18):

Կիպրոս հանրապետությունում սնրպինտինացված հիպերբազիտների զանգվածներում հայտնի են քրոմիտի կարևոր հանքավայրերը (Տրոդոսի զանգված), իսկ վերին կավձի կամ պալեոգենի (°) հասակի անդեզիտների հաստվածքին հարում են Սկոուրիտիսա և Մավրոպոտունի պղնձակուլչեդանային հանքանյութերի բավականին խոշոր հանքավայրերի ոսպնյակներն ու շտոկները:



նկ. 18 — Բալկանների, Անատոլիայի ու Կովկասի-Անդրկովկասի ստրուկտուրա-մետազանային պլանը:

| | | | | | |
|-------|-------------------------------|---------------------|---------------|---|------------|
| — | գլխավոր ծալքերը | } բառ Ռ. Ետաուցի ու | | | |
| - - - | բեկվածքների գլխավոր գոնաները | | Ֆ Մախաչկի | | |
| — | գլխավոր մետաղների հանքավայրեր | | | | |
| ▲ | Ջրոմիտ | ⊕ | Պրիմ | ⊙ | Ոսկի |
| ■ | Նրկաթ | ● | Պրիմ-մոլիբդեն | ○ | Ծաիր-սևրիկ |
| ⊠ | Նանաձ | ◆ | Կապար-ցինկ | ⊖ | Մանգոլ |

Նկ. 18—Բալկանների, Անատոլիայի ու Կովկասի-Անդրկովկասի ստրուկտուրա-մետազանային պլանը:

Փոքր Ասիայում ալպիական ծալքավոր ստրուկտուրաները, մի կողմից Անատոլիդները ու Պոնտիդները, մյուս կողմից Տավրոսի լեռները հարուստ են մետաղային հանքավայրերով. առաջինները հյուսիսից, իսկ երկրորդները հարավից եզրապատում են Կենտրոնական ու Արևելյան Անատոլիայի պալեոգոյան Լիդիա-Կարիյան, Լիկանիան և ուրիշ կոշտ միջնազանգվածները: Անատոլիդներում ու Տավրոսի լեռներում լայն զարգացած են վերին կավձի հասակի հիպերբազիտները, որոնց հետ կապված են քրոմիտի շատ խոշոր հանքավայրեր (Դագ-Արդի, Գյուլեման և այլն):

Լարամյան շարժումների հետ կապված են զրանիտոիդային զանգվածների ներդրումներն ու նրանցով պայմանավորված մագնետիտային սկանդիային (Դիլվրիկ), մի շարք բազմամետաղային (Բալյամադեն, Կեբանամադեն, Գյումուլխանա) հանքավայրերը:

Լայն տարածված են նաև յուրայի-կավձի հրաբխածին հաստվածքները

և նույն հասակի պորֆիրիտների, ալբիտոֆիրների սուբհրաբխային փոքր ինտրուզիաները. մի շարք շրջաններում հայտնի են շատ երիտասարդ՝ միոցեն-օլիգոցենից մինչև պլիոցենի հասակի ֆելզիտների, դացիտների և տրախիտների էքստրուզիաները: Կավձի և մասամբ պալեոգենի հասակի սուբհրաբխային փոքր ինտրուզիաների հետ կապված են բավականին խոշոր և շահագործվող պղնձակուլչեդանային հանքավայրերը (էրզանիմադեն, Մուրգուլ կամ Չանսուլ, Քվարցխանա և այլն):

Վերին կավձի մերգելների և նրանց ծածկող պորֆիրիտների կոնտակտում տեղադրված են մանգանային հանքանյութերի էքսալյացիոն-նստվածքային համեմատաբար ոչ մեծ, սակայն արդյունաբերական հանքավայրեր՝ էրեզլի, Կարթլա, Կեուլ և ուրիշներ, որոնք նման են Բուլղարիայի ու Անդրկովկասի նույնատիպ հանքավայրերին: Թուրքիայի մյուս մետաղային հանքավայրերից հիշատակման արժանի են ծարիրի (Թուրխալ), սնդիկի (Կարաբուրուն), ուսալարի-աուրիպիգմենտի (Կաղզվան), մոլիբդենի (Վեշկինմադեն) հանքերը. կան տեղեկություններ Վանա լճի ավազանում նախկին Բողչաղ (Շիրվանդաղ) ոսկու հանքի շահագործման մասին:

Անատոլիայի պալեոգոյան միջնազանգվածների սահմաններում համեմատաբար վերջերս հայտնաբերված են վալբրամիտի ու ֆլյուորիտի խոշոր հանքավայրեր (Բրուսայի շրջան), ուրանի երևակումներ. կան նաև հին ավյալներ անադի հանքանյութերի շահագործման մասին: Հավանաբար այդ բոլոր օգտակար հանածոները (W, Sn, U, ֆլյուորիտ) կապված են միջնազանգվածների ակտիվացման պրոցեսների հետ:

Փոքր Ասիայի հանքային մարդից հյուսիս-արևելք ու արևելք, արդեն ՍՍՀՄ-ի սահմաններում տեղադրված են Հյուսիսային Կովկասի ու Անդրկովկասյան հանրապետությունների (Ադրբեջանական, Հայկական, Վրացական ՍՍՀ) ու հարավից հարակից Ղարադաղի (Իրան) մետաղներով հարուստ մարդերը:

Այդ ընդարձակ մարդի կրկրաբանական կառուցվածքն ու մետաղածնությունը մանրազնին ուսումնասիրված են երկրաբանների մեծ կոլեկտիվի կողմից, որոնցից հարկ է նշել Շ. Ազիզբեկովին, Ա. Ասլանյանին, Գ. Աֆանասևիչին, Գ. Բաղդասարյանին, Վ. Բելոուսովին, Լ. Վարդանյանցին, Ա. Գաբրիելյանին, Պ. Գամկրելիձեին, Ա. Գերասիմովին, Վ. Գրուշևցին, Գ. Չոսենիձեին, Գ. Չարիձեին, Մ. Կաշկային, Վ. Կոտլյարին, Ի. Կուզնեցովին, Ս. Մկրտչյանին, Ս. Մովսիսյանին, Կ. Պաֆենհոլցին, Վ. Ռենգարտենին, Պ. Սահակյանին, Վ. Սմիռնովին, Ն. Թաթրիշվիլուն, Գ. Թվալձրելիձեին, Վ. Խայնին, Լ. Խարչուկին, Ն. Խրուշչովին, Կ. Ճիճինաձեին, Գ. Էֆենդիևին և ուրիշներին (տե՛ս գրականության ցանկը):

Նրեսուն տարվա (1942—1972 թթ.) ընթացքում գլխավորապես Փոքր Կովկասի մետաղածնությունը մանրազնին ուսումնասիրել է սույն աշխատության հեղինակը:

Մեծ ու Փոքր Կովկասը հյուսիսարևմտյան—հարավարևելյան տարածման խոշոր անտիկլինորիումներից են, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները. դրանք կբննարկվեն առանձին:

Մեծ Կովկասի սահմաններում մագմատիզմն ու նրա հետ կապված ներծին հանքային պրոցեսները արտահայտվել են բազմիցս, սակայն տարբեր

ինտենսիվությամբ՝ միջին ու վերին պալեոգոյում ավելի թույլ, իսկ մեզո-կայնոգոյում արտակարգ ուժեղ:

Կալեդոնյան փուլում առաջացել են երեք մագմատիկ համալիրներ ու նրանց ուղեկցող համապատասխան հանքայնացում:

Ստորինպալեոգոյան, գլխավորապես հյմքային կազմության էֆուզիվների հետ կապված են կոլչեդանային փոքր երևակումներ, հիպերբազիտների ու բազիտների հետ քրոմիտի (Բեդեն) ու տիտանամագնետիտի երևակումներ, իսկ պլազիոգրանիտների հետ՝ պեգմատիտների ու ապլիտների, անագ-վոլֆրամային և մոլիբդենային թույլ հանքայնացումով (Բելյագիդոն և այլն):

Այսպիսով, կալեդոնյան մագմատիզմն ու հանքայնացումը համապատասխանում են գլխավորապես գեոսինկլինային զարգացման վաղ, մասամբ էլ ուշ փուլերին:

Զգալիորեն ավելի լրիվ ու ինտենսիվ է զարգացած հերցինյան շրջանը, որը ներկայացված է երեք փուլով:

Վաղ փուլում ձևավորվել է հզոր միջինպալեոգոյան (ղեոն—ստորին կարբոն), պորֆիրիտների ու սպիլիտա-կերատոֆիրների հրաբխածին հաստվածքը, որը ներփակում է պղնձակոլչեդանային ու պղինձ-ցինկային Ուրուպ, հուդես, Բեսկես և ուրիշ հանքավայրերը:

Մեծ Կովկասի կոլչեդանային հանքավայրերի համար բնորոշ են՝ 1) նրանց տեղադրումը միջին պալեոգոյի հրաբխածին հաստվածքներում, ներդրված ալբիտոֆիրների փոքր ինտրուզիաներով, որոնց հետ սերտորեն զուգակցվում են հանքային մարմինները. 2) ոսպնյակաձև կամ շերտաձև հանքամարմինները, որոնք թերթավորված են նույնպես ինտենսիվ, ինչպես և նրանց ներփակող հրաբխածին հաստվածքները. 3) հանքանյութերի հոծ կառուցվածքը, էազմված գլխավորապես պիրիտից ու խալկոպիրիտից (սֆալերիտի, գալենիտի, խոունացած հանքանյութերի և ուրիշ սուլֆիդների խառնուրդով). 4) հանքամարմինների կախված և պառկած կողում ներփակող ապարների հիդրոթերմալ փոփոխությունների նշանների առկայությունը (սերիցիտացում, քլորիտացում, քվարցացում): Այս բոլոր հատկանիշներով Մեծ Կովկասի կոլչեդանային հանքավայրերը նման են Ուրալի, հատկապես Միջին Ուրալի, հանքավայրերին, որոնց նրանք մոտ են նաև հասակով:

Կոլչեդանային տիպի հանքավայրերի ծագման հարցը ընդհանրապես, և իհարկե Ուրալի ու Մեծ Կովկասի համար նույնպես, լուծված չէ ու վիճելի է:

Վ. Ի. Սմիռնովի ու Տ. Յա. Գոնչարովայի տվյալներով (1960) Մեծ Կովկասի հանքայնացումը էքսհալյացիոն-նստվածքային տիպի է և սինգենետիկ է ներփակող ապարների հետ. համարյա մյուս բոլոր հետազոտողների կարծիքով այն վերագրվում է հիդրոթերմալ փոքր խորուխյունների գոյացումներին, էպիգենետիկ է ու կապված է ներփակող հրաբխածինների ու ալբիտոֆիրների փոքր ինտրուզիաների խորքային օջախի հետ. տարածականորեն հանքայնացումը սերտորեն զուգակցվում է ալբիտոֆիրների հետ: Ինչպես և Ուրալում, Մեծ Կովկասի կոլչեդանային հանքավայրերն առաջացել են մինչև հերցինյան ծալքավորման գլխավոր փուլի արտահայտումը և միաժամանակ դրանք զննից հին շեն (ըստ Մ. Մ. Ռուբինշտեյնի՝ հանքայնացման բացարձակ հասակը 324—374 մլն. տ. է): Այդ նույն փուլում ներդրվել են հիպերբազիտներն ու բազիտները քրոմիտային հանքայնացումով:

Միջին փուլում ներդրվել են գրանիտների խոշոր ինտրուզիաներ, որոնց

հետ սերտորեն զուգակցվում են հաղվագյուտամետաղային պեղմատիտների և վոլֆրամի, անագի, մոլիբդենի, մկնդեղի (արսենոպիրիտի), բիսմուտի առանձին բարձր ջերմաստիճանային հանքավայրեր և երևակումներ (Կտի-Տեբերգա, Չեգեմ և ուրիշներ):

Ուշ փուլում ներդրվել են գրանոդիորիտների, գրանիտ-պորֆիրների, սիև-նիտ-պորֆիրների փոքր հիպաբիտալ ինտրուզիաները, որոնց խորքային օջախի հետ կապված է կապար-ցինկային Տիզիլ, էլբրուս, Չոշուկուլակ հանքավայրերի հանքայնացումը:

Հերցինյան մետաղածուխյունն ամբողջությամբ վերցրած արդյունաբերական մեծ նշանակություն չունի. որոշ հետաքրքրություն է ներկայացնում միայն Ուրուպի կոլչեդանային հանքավայրը:

Մեծ Կովկասի զարգացման քիմերյան շրջանը նույնպես ներկայացված է ևրեք փուլով՝ վաղ, միջին և ուշ:

Վաղ փուլում ստորին ու միջին յուրայում առաջացել է հրաբխանստվածքային սպիրիտ-կերատոֆիրային համալիրը կոլչեդանային հանքայնացման երևակումներով. վաղ փուլին են վերագրվում նաև միջին յուրայի հասակի դիաբազների շտոկներն ու դայկաները, որոնք կազմում են Մեծ Կովկասի հայտնի դիաբազային գոտիները: Դիաբազների հետ տարածական ու պարագենետիկ սերտ կապի մեջ են գտնվում պղինձ-պիրոտինային ու պղինձ-պիրոտին-բազմամետաղային (կոբալտի խառնուրդով լինելիտի ձևով) Կախեթի (Վրաստան), Զաքաթալայի (Ադրբեջան) և Դաղստանի հանքավայրերը, որոնցից Ֆիլիզայի հանքավայրը (Ադրբեջան) ամենահետաքրքիրն է:

Միջին փուլում ներդրվել են գրանիտոդային ինտրուզիաները՝ Կելասուրի զանգվածի տիպի Աբխազիայում, էլշուրտյանը՝ (?) Տիրնիաուզի շրջանում (վերջինը հեղինակների մեծամասնության կարծիքով երրորդական է): Կելասուրիի զանգվածի համար հաստատորեն որոշված է վերին յուրայի հասակը (զանգվածը պատռում է բայոսի ապարներն ու ծածկված է քիմերիջի հաստվածքով), իսկ Տիրնիաուզի շրջանի ինտրուզիվների բացարձակ հասակի որոշումները տալիս են հակասական թվեր: Կելասուրի և ուրիշ զանգվածների հետ կապված են գլխավորապես բազմամետաղային հանքայնացում, ինչպես նաև մոլիբդենիտի, արսենոպիրիտի, կասիտերիտի, շեելիտի ու ոսկու երևակումներ:

Ուշ փուլին ենթադրաբար վերագրում են դիաբազների, դիորիտների, կերատոֆիրների փոքր ինտրուզիաները, որոնք տարածված են Հյուսիսային Օսեթիայում ու Վրաստանի հարևան շրջաններում, և նրանց հետ կապված զարգացած է մինչկելուվեյան հասակի բազմամետաղային հանքայնացումը (Սագոն, Զգիդ, Տխմորի և այլն):

Մեծ Կովկասի զարգացման ալպիական էտապը ներկայացված է երկու փուլով՝ ուշ և վերջնական: Ուշ փուլում, պալեոգենում, տեղի է ունենում Ստորին Սվանեթիայի, Տիրնիաուզի ու Տեպլիի գրանիտոդային կոմպլեքսների ներդրումը, որոնց հետ կապված են Տիրնիաուզի մոլիբդենիտ-շեելիտային հանքազաշտը և արսենոպիրիտ-հաղվագյուտամետաղային հիդրոթերմալ բարձր ջերմաստիճանային ֆորմացիայի մի շարք հանքավայրեր՝ արսենոպիրիտի (Մանա), կասիտերիտի, շեելիտի և ոսկու (Ճորոխի, Զեսխի և ուրիշ հանքավայրեր):

Վերջնական հետժալքավոր փուլը ներկայացված է լիպարիտների, դա-
ցիտների, ալբիտոֆիրների բազմաթիվ փոքր ինտրուզիաների ներդրումով,
որոնք հակվում են սեզոնալ տեկտոնական խզումներով, որոնց ձևավորումը
սկսվել է յուրայում և հետագայում ակտիվացել է միոպլիոցենում: Ամենաերի-
տասարդ փոքր ինտրուզիաների հետ տարածականորեն կապված և նույն տեկ-
տոնական ստրուկտուրաների երկայնքով ձևավորվել են ցածր շերմաստիճա-
նային բազմամետաղային ու հազվագյուտմետաղային հանքային ֆորմացիա-
ները:

Սրանց են վերագրվում տալիում պարունակող բազմամետաղային (Կվայ-
սա և ուրիշներ), ռեալգար-աուրիպիգմենտային (Ղուխումի ու Կոդիսձիրի),
սնդրիկի (Ախեչ, Տալախիանի, Խպեկ, Պերեվալնի, Սախալինսկի և ուրիշ-
ներ), անտիմոնիտ-ֆերրերիտային (Ջուպիտո, Նոցարա) հանքավայրերը:

Մեծ Կովկասի հանքաքեր մագմատիկ համալիրներն ու նրանց հետ կապ-
ված հանքային ֆորմացիաներն ամփոփված են աղ. 2-ում:

Փոքր Կովկասը, ինչպես և Մեծ Կովկասը, իրենից ներկայացնում է խո-
շոր անտիկլինորիում, ձգված Հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք:
Այդ ստրուկտուրայի միջուկը կազմված է մինչքեմբրյան ու պալեոզոյան հա-
սակի գրանիտոիդներից ու բյուրեղային թերթաքարերից, իսկ անտիկլինալի
թևերը՝ յուրայի, կավձի ու պալեոգեն-նեոգենի հրաբխանստվածքային հաստ-
վածքներից: Կաչեդոնյան ու հերցինյան մագմատիզմի ու մետաղածնության
ցիկլերը Փոքր Կովկասում ներկայացված են շատ թույլ ու հաստատվում են
միայն ենթադրաբար:

Մագմատիզմի ու մետաղածնության գլխավոր ցիկլերն են քիմբրյանն ու
առանձնապես, ալպիականը, որոնք պայմանավորում են մարզի հիմնական
հարստությունները:

Փոքր Կովկասի (Հայկական ՍՍՀ, նրան կից Վրացական ՍՍՀ և Ադրբե-
ջանական ՍՍՀ) մետաղային հանքավայրերին վերաբերող կուտակված նյութը
ամփոփելու նպատակով հեղինակը դեռ 1943—1944 թթ. ձեռնամուխ եղավ
աչդ տարածքի առաջին մետաղածնային քարտեզը կազմելուն, տալով երկրա-
բանա-ստրուկտուրային հիմքի վրա տարբեր հանքային ֆորմացիաների հան-
քավայրերը: Այդ ձևով ներկայացված փաստական նյութը անաչառորեն և
որոշակի արտահայտեց Փոքր Կովկասի տարածքում տարբեր հանքային ֆոր-
մացիաների առաջնային գոտևոր զոնալականությունը, կախված երկրաբանա-
ստրուկտուրային առանձնահատկություններից:

Հաստատվեցին երեք իրար զուգահեռ ընդհանուր կովկասյան Հյուսիս-
արևմտյան—հարավարևելյան ուղղության հանքային գոտիները՝

Աղյուսակ 2

Մեծ Կովկասի հանքաքեր մագմատիկ համալիրներն
ու հանքային ֆորմացիաները

| Մագմատիկ համալիրները | Հասակը (և փուլը) | Հանքային ֆորմացիաները | Հանքավայրերի ու երեսակումների օրինակները |
|----------------------|---------------------|-----------------------|--|
| Հիպերբազիտներ | Կալեդոնյան (վաղ) | Քրոմիտային | Բեդեն |

| | | | |
|--|--|--|--|
| Գրանիտոիդներ | Կալեդոնյան (n.2) | Հազվագյուտմետաղային պեզմատիտներ (Sn, W, Mo) Սկանային (Fe, W շեկի- տի ձևով) | Բելլագիզոն Երևակումներ |
| Պորֆիրիտներ ու սպիլիտ- ներ, կերատոֆիրներ ալ- բիտոֆիրների դալկանե- րով | Հերցինյան D-C ₁ (վաղ) | Կոլչեդանային | Ուրուպ, Բեսկես, Խուդես |
| Գրանիտներ (բաթոլիտներ) | Հերցինյան C ₂ -C ₃ (միջին) | Հազվագյուտմետաղային պեզմատիտներ Քվարց-վոլֆրամիտ-մոլիբ- դենիտային | Ուրուպ, Չեզմ, Չերեկ Կտի-Տերերդա |
| Գրանիտոիդներ (Փոքր ին- տրուզիաներ) | Հերցինյան C ₃ -P (n.2) | Բազմամետաղային | Ելբրուս, Տիզլի, Չոչուկուլալի |
| Փոքր սուբհրարային պոր- ֆիրիտների ու դիաբազ- ների ինտրուզիաներ | Քիմերյան J ₁ -J ₂ (վաղ) | Կոլչեդանային (պինձ-պի- րոտին-բազմամետաղա- յին) Բարիտային | Ֆիլիզալ, Բելո- կանի, Արտանի Քուլմախի |
| Գրանիտոիդներ | Քիմերյան J ₃ (միջին) | Բազմամետաղային, հազ- վագյուտմետաղային | Երևակումներ Աբխա- զիայում (Կեյսուրիի շրջան) |
| Կերատոֆիրների, դիորիտ- ների փոքր ինտրուզիա- ներ | Քիմերյան J ₃ (n.2) | Բազմամետաղային | Սադոն, Չգիդ, Տիմոքի |
| Գրանիտոիդներ | Ալպիական Pg (n.2) | Սկանային W-Mo Արսենոպիրիտ-հազվա- գյուտմետաղային (Sn, W, Mo, Au) | Տիրիխուդ Մանա, Ճորոխի, Ջեսիխ |
| Հիպարիտների, դացիտնե- րի, ալբիտոֆիրների փո- քր ինտրուզիաներ | Ալպիական N միոպլինոցեն (մերջինական) | Բազմամետաղային, անտի- մոնիտ-ֆերրիտ-ոնալ- գար-ատրիպիզմենտային Կինովար | Կվայաս, Զոպխիտո, Նոցարա, Լուխումի, Կոդիս-ձիրի Ախեյ, Տալախիանի, Խպնկ, Պերեվանի, Սախալինսկի |

Սոմխեսթա-Ղարաբաղյանը (կոլչեդանային ֆորմացիայի գերիշխմամբ), Հա-
լաստանի ծալքավոր զոնան (պլինձ-մոլիբդենային ֆորմացիայի ինտեն-
սիվ զարգացմամբ) և Սևան-Ամասիայի զոնան (հիմնականում Cr ու Au հան-
քայնացումով): Այդ գոտիներից յուրաքանչյուրը ըստ տարածության, ընդհա-
տումներով ձգվում է 300—400 կմ մի քանի տասնյակ կմ լայնության դեպ-
քում: Առանձին հանքային գոտիների հետագա մանրազննի ու նպատակա-
սլաց ուսումնասիրությունը հաստատեց նրանց հանքայնացման յուրահատ-

կությունը ու հանգեցրեց նոր հանքավայրերի հայտնաբերմանը այդ գոտիների ընդհատված տեղամասերում:

Հաջողվեց նաև հաստատել Սևան—Ամասիայի քրոմիտաբեր գոտում ոսկեբեր հանքայնացման վերադրման հանգամանքը և ապացուցել, որ հանքայնացման յուրահատկությունը կապված է առանձին գոտիների երկրաբանական կառուցվածքի առանձնահատկությունների ու Փոքր Կովկասի ստրուկտուրաների տարբեր փուլերի զարգացման պրոցեսում հանքայնացման տարածական մեկուսացման հետ:

Փոքր Կովկասի երկրաբանական ու մետաղածնային զարգացման փուլերը ներկայացված են հետևյալ ձևով՝

Քիմերյան դարաշրջանը ներկայացված է զարգացման վաղ ու միջին փուլերով: Վաղ փուլում, միջին ու վերին յուրայում տեղի է ունենում հրաբխանստվածքային հզոր հաստվածքի առաջացում, որը ներկայացված է սպիլիտա-կերատոֆիրներով ու պորֆիրիտներով (տուֆա-ավազաքարերի ու կարբոնատային ապարների երկրորդական դերով), ներդրված պորֆիրների և ալբիտոֆիրների սուբհրաբխային փոքր ինտրուզիաներով: Միջին յուրայի հրաբխանստվածքային հաստվածքում ալբիտոֆիրների ու պորֆիրիտների սուբհրաբխային փոքր ինտրուզիաների հետ տարածականորեն ու պարագենետիկորեն սերտ կապված առաջացել են ծծմբակոլչեդանային (Ճրագիծոր), պղնձակոլչեդանային (Ալավերդի, Շամլուղ, Ղափան, Կեղաբեկ և այլն), բարիտ-բազմամետաղային (Ախթալա) բավականին հայտնի հանքավայրերը, որոնք պարունակում են ոսկու, արծաթի և մի շարք ջրված տարրերի խառնուրդ: Ապարների այդ համալիրը ու կոլչեդանային տիպի հանքայնացումն առանձնանում են Սոմխեթա-Ղարաբաղյան (ՀՍՍՀ-ում նրա՝ Ալավերդի—Ղափան հատվածում) գոտում և բացակայում են նրանից հարավ գտնվող հարեվան մարզերում, որտեղ ամբողջ յուրայի ընթացքում տեղի է ունեցել գեոանտիկլինային ռեժիմ:

Միջին փուլում Սոմխեթա-Ղարաբաղյան զանդակող ծալքավոր ստրուկտուրաներում ներդրվում են վերին յուրայի—ստորին կավձի հասակի գրանոզիորիտների, քվարցային դիորիտների զանգվածներ, որոնց հետ սերտորեն կապված են մագնետիտային հանքանյութերի սկառնային հանքավայրեր (Դաշքեսան, Ծակերի-դոշ, Միսխանա, Շիշկերտ և այլն), կորալտի հիդրոթերմալ (Դաշքեսան) հանքավայրերը, պղնձի, բազմամետաղային հանքանյութերի ու բարիտի երևակումներ: Միջին փուլի հանքայնացումը տարածականորեն տեղադրվում է Սոմխեթա-Ղարաբաղյան գոտու սահմաններում, նույն շրջաններում, որոնց համար առավել բնորոշ է վաղ փուլի կոլչեդանային հանքայնացումը:

Հարկ է նշել, որ այդ գոտու մագմատիզմի ու հանքայնացման մեկոլոյան հասակը հաստատվում է ինտրուզիվ ապարների ու փոփոխված մերձհանքային ապարների բացարձակ հասակի բազմաթիվ որոշումներով: Այսպես, Ալավերդու հանքային շրջանի սուբհրաբխային քվարցային պլազիոպորֆիրիտների հասակը կալիում-արգոնային եղանակով որոշված է 162—165 մլն. տ. (բայոսի ու բաթի սահմանը), փոքր սուբհրաբխային ալբիտոֆիրների ինտրուզիաներինը 141 ± 6 մլն. տ., Հաղպատի հիպաբիսալ պլազիոգրանիտի ինտրուզիայի հասակը 142 ± 6 մլն. տ. (վերին յուրա) Կողբ—Շնողի գրանոզիորիտ-

ների ու քվարցային դիրորտների զանգվածի հասակը 128—133 մլն. տ. (ստորին նեոկոմ): Միևնույն ժամանակ, մերձհանքային փոփոխված ապարների սերիցիտի բացարձակ հասակի որոշումները կոլչեղանային հանքավայրերի համար տալիս են 136—155 մլն. տ., երևի ճիշտ պետք է համարել այստեղ մինիմալ թվերը, իսկ ինչ վերաբերում է ավելի բարձր թվերին, նրանք պայմանավորված են ներփակող ապարների մնացորդներով: Այսպիսով, հաստատվում է կոլչեղանային հանքայնացման վերին յուրայի-նեոկոմի հասակը, որը շատ մոտ է ալբիտոֆիրների սուբհրաբխային փոքր ինտրուզիաների հասակին. կոլչեղանային հանքայնացումը վերջինների հետ զուգակցվում է տարածականորեն և կապված է նրանց հետ պարագենետիկորեն (օջախի ընդհանրություն): Հարկ է նշել, որ ծծմբակոլչեղանային, պղնձակոլչեղանային ու բարիտ-բազմամետաղային հանքանյութերի ձևավորման ժամանակը առանց էական ընդմիջումների համընկնում է և այդ հանքանյութերը համապատասխանում են միասնական հանքային պրոցեսի առանձին փուլերին (Գ. Պ. Բաղդասարյան և ուրիշներ, 1962):

Ալպիական փուլը ներկայացված է մազմատիզմի ու հանքայնացման զարգացման վաղ, միջին և վերջնական փուլերով:

Վաղ փուլը ներկայացված է Սևան—Ամասիայի հանքային գոտու հիպերբազիտներով ու զաբրոներով, որոնք ներդրվել են վերին կավճի ժամանակաշրջանում ռեգիոնալ խորքային խախտման երկայնքով: Հիպերբազիտների զանգվածներում տեղագրված են քրոմիտի ոչ մեծ հանքավայրեր (Շորժա, Զիլ, Հեյդարա և ուրիշ.), հայտնի են պլատինի, նիկելի, ազբեստի երևակումներ: Կան ենթադրություններ հիպերբազիտների հետ ալմաստի կապի մասին և, իրոք, դոնիտ-պերիդոտիտային զանգվածները քայքայող գետերի ալյուվիում գտնված են ալմաստի առանձին մանր բյուրեղիկներ:

Վաղ փուլին են պատկանում նաև գրանոդիրիտ-պորֆիրների ու զացիտների փոքր սուբհրաբխային ինտրուզիաները, որոնց հետ տարածականորեն ու պարագենետիկորեն սերտ կապված է Վրաստանում Բոլնիսի շրջանի (Սոմխեսթա-Ղարաբաղյան գոտու սահմաններում) ու Սևան-Ամասիայի գոտու կոլչեղանային հանքայնացումը. Բոլնիսի շրջանում զացիտների ու հանքայնացման (Մադնեուլի, Ծիթելի սոփելի) հասակը վերին կավճի է, Սևան—Ամասիայի գոտու սահմաններում (Զիրուխի, Տանձուտ հանքավայրեր) վերին էոցենյան է (բացարձակ հասակը կալիում-արգոնային եղանակով որոշված է 38—40 մլն. տ.):

Վերին կավճի հասակի են և ալպիական դարաշրջանի վաղ փուլին են վերագրվում Անդրկովկասի երեք հանրապետություններում լայն զարգացած մանդանի էքսհալյացիոն-նստվածքային ոչ մեծ հանքավայրերը (Մուլաշալի ու էլվոր՝ Ազրբեջանական ՍՍՀ-ում, Սարիգյուղ, Սևբար, Սվարանց՝ Հաչկական ՍՍՀ-ում, Թեթրիձղարո և ուրիշ. Վրացական ՍՍՀ-ում), ինչպես նաև հեմատիտային հանքանյութերի առանձին հանքավայրերը (Չատախի, Վրացական ՍՍՀ):

Զարգացման միջին փուլը ներկայացված է գրանիտոիդների բազմաթիվ ինտրուզիաների զանգվածներով, որոնք գրավում են մի քանի կմ² մինչև 1000 կմ² (Մեղրիի զանգված) տարածություն: Այդ ինտրուզիաները կտրում են էոցենի ու մասամբ օլիգոցենի հրաբխանստվածքային հաստվածքները,

ներդրվելով երեք հիմնական ֆազերով՝ գաբրո, մոնցոնիտային, գրանոդիորիտ-գրանիտային: Ինտրուզիաների ներդրումն ընդգրկում է ժամանակի լայն հատված վերին էոցենից (գաբրո ու մոնցոնիտային ֆազերի համար, բացարձակ հասակը 39—40 մլն. տ.) մինչև օլիգոցեն-միոցեն (Քաջարանի պորֆիրանման գրանիտների ու գրանոդիորիտների ֆազի համար, բացարձակ հասակը 20—22 մլն. տ.): Ամենավաղ գաբրոյի ֆազի հետ կապված են տիտանամագնետիտային հանքանյութերի (Սվարանց, Կալաբար և այլն) կուտակումները, ներկայացված մագնետիտային օլիվինիտների հզոր դայկաներով Սվարանցում և ցանավոր տիտանամագնետիտային ու շտոկվերկային ապատիտ-մագնետիտային հանքայնացումով Կալաբարի պիրոքսենիտային զանգվածներում:

Մոնցոնիտների ու գրանոսիենիտների փուլի հետ կապված են սկառնային մագնետիտային հանքանյութերի ոչ մեծ հանքավայրերը, ինչպես նաև շեկիտային, պղինձ-մոլիբդենային ու բաղմամետաղային հանքանյութերի երևակումները:

Պղինձ-մոլիբդենային ամենահինտենսիվ հանքայնացումը հարում է երրորդ, ամենաերիտասարդ պորֆիրանման գրանոդիորիտների-գրանիտների ինտրուզիվ ապարների ելքերին և ներկայացված է միջին ջերմաստիճանային հիդրոթերմալ երակիկա-ցանավոր հանքայնացումով մոնցոնիտների ու գրանոսիենիտների զանգվածներում, երբեմն քվարցհանքաբեր երակներով, սկառնային զոնաներով ու բրեկչանման հանքանյութերի տեղամասերով: Պղինձ-մոլիբդենային գլխավոր հանքավայրերի շարքում հարկ է նշել Քաջարանը, Ագարակը, Հանքավանը, Դաստակերտը, որոնք տեղադրված են Հայաստանի ծալքավոր զոնայի (Փամբակ-Զանգեզուրի հանքային գոտու) սահմաններում:

Պղինձ-մոլիբդենային հանքադաշտերի հետ սերտորեն կապված է ոսկի-բազմամետաղային հանքայնացումը, որը տեղադրված է այն հանքադաշտերի եզրերում, որոնց կենտրոնական մասերում զարգացած են պղինձ-մոլիբդենային հանքանյութերը (Աթկիզ-Փխրուտ Քաջարանի հանքադաշտի եզրում, Թեյ-Լիճքվազ, Ագարակի ու Ջինգարայի հանքադաշտերի միջև):

Կարելի է խոսել մեկ միասնական պղինձ-մոլիբդեն-ոսկի-բազմամետաղային հանքային ֆորմացիայի մասին, որը առաջացել է մեկ միասնական հանքային պրոցեսի ընթացքում, ընդ որում սկզբնական հանքայնացման փուլերում ձևավորվել են պղինձ-մոլիբդենային, իսկ եզրափակող փուլերում՝ ոսկի-բազմամետաղային հանքանյութերը:

Զարգացման միջին փուլի հետ կապված են նաև Մարմարիկ, Արփա և այլ գետերի ավազանների վերին էոցենի բազմաթիվ գրանիտոիդային ինտրուզիաները, որոնց հետ զուգակցվում են մագնետիտային բարձրորակ հանքանյութերի հանքավայրեր (Հրաղդան, Աղավնաձոր և այլն), ինչպես նաև ոսկի-սուլֆիդային (Մեղրաձոր, Կաչալու-Գեղարչին) ու բազմամետաղային (Ղազմա, Գյումուշխանա և այլն) հանքանյութերը: Փոքր Կովկասում անագվոլֆրամաբեր թթու գրանիտների զարգացման ուշ փուլը լրիվ բացակայում է. սովորաբար, այստեղ ուժեղ արտահայտված է վերջնական հետծալքավոր փուլը ներկայացված թթու ապարներով, որը հարում է ամենաուշ (միոպլոցենյան) տեկտոնական խախտումներին հատող տարբեր հանքային գոտիներին, կամ՝ Սևանի խորքային խախտման կրկին բացվող կարին:

Վերջնական փուլի մագմատիզմը ներկայացված է շահավոր թթվության բազմաթիվ մանր ինտրուզիաներով (դացիտներ, գրանոդիորիտ-պորֆիրներ և այլն), որոնց հետ տարածականորեն և պարագենետիկորեն զուգակցվում է ցածր ջերմաստիճանային հիդրոթերմալ հանքայնացումը՝ Զոդի ոսկի-տելուրիդային հանքանյութերի, ռեալգար-աուրիպիզմենտային Դարի-դաղի (Զուլֆայի) ու Սալվարդի, սնդիկի (Սարիլանջ, Խոսրով, Սովետաշեն և այլն) հանքավայրերը, ծարիրի երևակումները և այլն:

Դեռևս թույլ է ուսումնասիրված համեմատաբար վերջերս հայտնաբերված Տիգրանաբերդի (Վարդենիսի շրջան) պղնձի ու Աբովյանի ապատիտ-մագնետիտային (Փամբակ-Ջանգեզուրի հանքային գոտի) հանքավայրերի գենետիկական դիրքը:

Նախնական տվյալների համաձայն այս հանքավայրերը մենք վերագրում ենք զարգացման վերջնական փուլին, ընդ որում Տիգրանաբերդի հանքավայրը կապվում է շատ երիտասարդ ստրուկտուրաների ու մագմատիզմի հետ՝ վերադրված վերին կավձի հասակի հրաբխանստվածքային հաստվածքի վրա, իսկ Աբովյանի հանքավայրը՝ էրոզիայով շմերկացած երիտասարդ գաբրոյի ինտրուզիայի կամ էֆուզիվների օջախի հետ (Աբովյանի հանքանյութերի հասակը, որոշված բիտախաով, կազմում է 7 մլն. տ., այսինքն համապատասխանում է միոպլիոցենին):

Փոքր Կովկասի հանքաբեր մագմատիկ համալիրներն ու հանքային ֆորմացիաները տե՛ս աղ. 3-ում:

Յուրաքանչյուր հանքային գոտու սահմաններում տեղի է ունենում հանքանյութերի առանձին տիպերի ու մետաղների տեղաբաշխման զոնալականություն, որը, սակայն, էպիս տարբերվում է Վ. էմմոնսի առաջարկած ունիվերսալ սխեմայից:

Առանձին հանքային զոտիների սահմաններում տվյալ գոտուն բնորոշ հանքանյութերի տիպերի ու մետաղների տեղադրման մեջ նշվում է և՛ ուղղահայաց, և՛ հորիզոնական զոնալականություն:

Աղյուսակ 3

Փոքր Կովկասի հանքաբեր մագմատիկ համալիրներն ու հանքային ֆորմացիաները

| Մագմատիկ համալիրները | Հասակը (և փուլը) | Հանքային ֆորմացիաները | Հանքավայրերի ու երևակումների օրինակները |
|---|---|---|---|
| Լեյկոկրատ գրանիտներ ու քվարց. դիորիտներ | Հերցեյնյան (ու 2) | Պղինձ-հեմատիտային, բազմամետաղային, բարիտային. սկվածքներում Աս, կասիտերիտ, վոլֆրամիտ | Երևակումներ |
| Փոքր սուբհրաբխային ալբիտոֆիրներ ու քվարց. պորֆիրների ինտրուզիաներ | Քիմերյան J ₂ -J ₃ (Վաղ) | Կոլչեղանային (ՇԱ, բազմամետաղային, պիրիտ, բարիտ) | Ալավերդի, Շամլուղ, Ղափան, Կեղարեկ, Ծրագիծոր, Տաղանալի |
| Գրանիտոիդներ | Քիմերյան J ₃ -C ₁ (մեջին) | Սկանդային (Fe), բազմամետաղային, Աս-սուլֆիդային, արսենոպիրիտ-կորալտինային | Դաշքեսան, Կողբ, Շիկահող, Ռսիեփար-Կաշաշկուտ, Մեխմանա |

| | | | |
|--|--|--|--|
| Հիպերբազիտներ | Ալյուիական Cr ₂ (վաղ) | Քրոմիտային (պլատինոիդներ, ալմաստ) | Շորժա, Հելյարա |
| Պորֆիրիտների փոքր ինտրուզիաներ | Ալյուիական Cr ₂ (վաղ) | Կայծքար—Մո (էքսհալյացիոն-նստվածքային) | Սեբար-Սարիգյուղ, Մուլաշալի, Էլվոր |
| Գրանիտոիդներ, սուրհրաբխային պորֆիրներ | Ալյուիական Cr ₂ -էոցեն (ժեջին ու վաղ) | Սկանային (Fe), Աս-սուլֆիդային, կոլչեդանային, տիտանամագնետային | Հրազդան, Մեղրածոր, Տանձուտ, Չիրուխի, Մաղնեուի, Սվարանց |
| Գրանիտոիդներ | Օլիգոցեն-միոցեն (միջին և ուշ) | Պղինձ-մոլիբդենային, ոսկի-բազմամետաղային | Քաջարան, Ագարակ, Հանքավան, Դաստակերտ, Թեյ-Լիճքվազ, Ղաղմա |
| Դաշիտների, ֆելզիտների, գրանիտ-պորֆիրների, դիաբազների փոքր սուրհրաբխային ինտրուզիաներ | Միոցեն-պլիոցեն (վերջնական) | Ոսկի-տելուրիդային (Ag, Bi-ով), կինովարի, ոսկաբար-աուրիպենետային, ալատիտ-մագնետային | Ջող, Սարիլանջ, Սովետաշեն, Դարիդաղ, Աբովյան |

Այսպես, Ալավերդի—Ղափանի կոլչեդանային գոտու համար լավ արտահայտված է ուղղաձիգ զոնալականությունը հետևյալ զոնաներով (վերից վար)՝ հիպոցեն գիպս ու բարիտ, բազմամետաղային հանքանյութեր, պղնձ-կոլչեդանային, ծծմբակոլչեդանային հանքանյութեր, որոնք համապատասխանում են միասնական կոլչեդանային ֆորմացիայի ձևավորման առանձին փուլերին: Փամբակ-Ջանգեղուրի գոտու պղնձամոլիբդենային (ոսկի-բազմամետաղային հանքայնացման երկրորդական դերով) հանքայնացման համար պարզորոշ առանձնացվում են երկու զոնաներ. վերին՝ ոսկի-բազմամետաղային ու ստորին՝ պղինձ-մոլիբդենային, որոնք նույնպես համապատասխանում են միասնական պղինձ-մոլիբդեն-ոսկի-բազմամետաղային ֆորմացիայի զարգացման առանձին փուլերի հերթականությանը: Սևան-Ամասիայի հանքային գոտու համար (նրան բնորոշ ոսկու հանքայնացումով) ուղղաձիգ կտրվածքում անշատվում են երկու զոնաներ. վերին՝ ոսկի-տելուրիդային ու ստորին՝ ոսկի-սուլֆիդ-արսենոպիրիտային:

Որոշ դեպքերում բավականին լավ արտահայտված է նաև հորիզոնական զոնալականությունը, առանձնապես վաղ ստրուկտուրաների համեմատ. սովորաբար, հանքադաշտի կենտրոնական մասում կամ հիմնական հանքաբեր ստրուկտուրայի մոտ կուտակվում են հանքայնացման վաղ փուլերի հանքանյութերը (պղինձ-մոլիբդենային, ծծմբ-պղինձ-կոլչեդանային), որոնք հորիզոնական ուղղությամբ, նույն հանքադաշտերի եզրերում, կամ ավելի ուշ տեկտոնական ստրուկտուրաների երկայնքով փոխարինվում են ավելի ուշ հանքայնացման փուլերի հանքանյութերով (ոսկի-բազմամետաղային, ոսկի-տելուրիդային, բարիտ-բազմամետաղային): Սակայն պետք է ընդգծել, որ դեռևս մենք չենք դիտել, որ խորքում պղինձ-կոլչեդանային զոնան փոխարինվի պղինձ-մոլիբդենայինով. դեռ ավելին, խորքային հորիզոններում անագի կամ վոլֆրամի հանքանյութեր զարգացած չեն, քանի որ այդ մետաղները բնորոշ չեն նկարագրված մարդի մետաղածնության համար:

Փոքր Կովկասում հանքային պրոցեսները բոլոր դեպքերում զարգանում են բազմաթիվ փուլերով, որը հաստատում է Ս. Ս. Սմիռնովի հայտնի պոլ-սացիոն տեսության հիմնական դրույթները: Միասնական հանքային պրոցեսի առանձին փուլերի հանքանյութերը առանձնանում են տարածության մեջ կամ վերադրվում են մեկը մյուսի վրա համատեղվելով, կամ տալով փոխադարձ հատումներ:

Տեղի է ունենում մագմատիկական օջախից տարրերի դուրս բերման որոշակի հերթականություն, որը պայմանավորված է մի շարք գործոններով՝ տարրի կոնցենտրացիայով օջախում, նրա ցնդող միացությունների մասնակի ճնշումով, հանքաբեր ինտրուզիվի ձևավորման ու բյուրեղացման ռեժիմով և այլն: Սովորաբար, կոլչեդանային հանքայնացման զարգացման մարզերում հաստատվում է տարրերի դուրս բերման հետևյալ հերթականությունը՝ S, Cu, Pb-Zn (Ag ու Au խառնուրդով), Ba. պղինձ-մոլիբդենային հանքայնացման զարգացման մարզերում տարրերի դուրս բերման հերթականությունն է՝ S, Cu, Mo, Pb-Zn (Ag ու Au խառնուրդով), ոսկեբեր հանքայնացման մարզերում՝ S, As, Pb-Zn, Au-Te-Bi-Ag, Sb, Hg:

Մծմբի վաղ անջատումը պայմանավորում է սիրիտացման զոնաների լայն զարգացումը (երկաթը փոխառվում է ներփակող ապարների մոլգ միներալներից), որոնց ուրվագծերում լուկալ զարգանում են հանքայնացման արդյունավետ փուլերը: Զարգացման տարբեր փուլերն ու նրան բնորոշ հանքավայրերի գենետիկական տիպերը մեկուսանում են ժամանակի ու տարածության մեջ, ստեղծելով ստրուկտուրա-մետադածնային զոնաներ, հանքային գոտիներ իրենց յուրահատուկ հանքայնացումով. դա օժանդակում է որոշակի գենետիկական տիպերի ու հանքային ֆորմացիաների հանքավայրերի նպատակասլաց որոնումներին:


Այսպես, Մեծ Կովկասի սահմաններում հյուսիսից հարավ առանձնացվում են համակովկասյան տարածման հետևյալ հանքային գոտիները.

1. Նախակովկասյան՝ Pb-Zn թույլ հանքայնացումով,
2. Առաջավոր լեռնաշղթայի՝ պղնձակոլչեդանային հանքայնացումով,
3. Գլխավոր լեռնաշղթայի՝ բազմամետաղային ու հազվագյուտամետաղային (W, Mo, As, Hg) հանքայնացումով:
4. Մեծ Կովկասի հարավային լանջի՝ պղինձ-պիրոտին-բազմամետաղային ու Hg-Sb-As հանքայնացումով,
5. Գագրա-Ջավայի բարիտ-բազմամետաղային, սնդիկային ու հազվագյուտամետաղային հանքայնացումով,
6. Զիրուլյան պեղմատիտներով ու մանգանի նստվածքային հանքանյութերով՝ ինտրուզիվ զանգվածի եզրում:

Փոքր Կովկասի սահմաններում, նույնպես հյուսիսից հարավ, առանձնացվում են հետևյալ հանքային գոտիները (նկ. 19)՝

1. Սոմխեթա-Ղարաբաղյան՝ պղնձակոլչեդանային ու սկառնային երկաթաբեր հանքայնացումով.
2. Սևան-Աբերյան՝ քրոմիտով ու վերադրված Au-Hg-Sb-As հանքայնացումով.
3. Փամբակ-Ջանգեղուրյան՝ պղինձ-մոլիբդենային հանքայնացումով.
4. Մերձարաքսյան՝ կապար-ցինկային ու ռեալգար-աուրիպիզմենտային տեկեթերմալ հանքայնացումով:

Փոքր Կովկասի հանքային զոտիները (առանձնապես Փամբակ-Ջանգեղուրյան պղինձ-մոլիբդենային, գոտին) ձգվում են դեպի հարավ-արևելք և անցնում են Ղարադաղի լեռները (Իրան):



Նկ. 19—Հավկասի ՍՍՀ (Վրացական ՍՍՀ ու Ադրբեջանական ՍՍՀ կից մասերի) տարածքի ստրուկտուրա-մետաղածնային զոտաները.

1—II Ալավերդի-Ղափանի, II—II Փամբակ-Ջանգեղուրի, III—III Սևանա-Ամասիայի հանքայնացման տեղաբաշխումը առանձին փուլերի ու մետաղածնային դարաշրջանների սահմաններում. քիմերյան դարաշրջանը՝ 1—կոլչեղանային հանքայնացում J_1 - J_2 (վաղ փուլ), 2—երկաթ, ոսկի J_3 - Cr_1 (միջին փուլ): Ալավիական դարաշրջան՝ 3—քրոմիտային հանքայնացում Cr_2 - Pg_1 (վաղ փուլ), 4—կոլչեղանային հանքայնացում Cr_2 - Pg_1 (վաղ փուլ), 5—պղինձ, բազմամետաղներ Pg_2 (միջին փուլ), 6—պղինձ-մոլիբդենային հանքայնացում Pg_3 - N_1 (ուշ փուլ), 7—ոսկի-սնդիկ-ծարիր-մկնդեղային հանքայնացում N_1 - N_2 (վերջնական փուլ), 8—հանքային զոտաների սահմանները, 9— N_2 - Q լավաներով ծածկված տարածություններ:

Իրանական Ղարադաղում հայտնի են գրանիտոիդների խոշոր ելքեր (Մեղրիի դանդավածի շարունակությունը), որոնց մեջ ու էկզոկլինտալտային զոտաներում զարգացած են սկառնային ու հիդրոթերմալ պղինձ-մոլիբդենային հանքանյութերի հանքավայրեր (Մեսկանե, Սյունդյուն, Գուլան և այլն): Մեծ նշանակություն ունեն Pb - Zn շերտաձև հանքավայրերը (Օղբակ-Կու, Անդուրան և այլն): Ավելի քիչ են զարգացած ոսկով ու արծաթով հարստացած բազմամետաղային հանքավայրերը, երկաթաբեր ու շեկիտաբեր սկառնները: Հայտնի են նաև սնդիկի, ռեալգար-աուրիպիլիմենտային ու ծարիրի հանքա-

նյութերի երևակումներ: Այդ ամբողջ մետաղային հանքավայրերի համալիրը ձևավորվել է ալպիական մագմատիզմի ցիկլի հետ կապված (կավիճ-վերին էօցեն-օլիգոցեն մինչև միոպլիոցենը ներառյալ):

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Իրանի կենտրոնական մեկ այլ հանքային շրջան (Անարեկ անապատում), որտեղ հրորդական գրանիտոիդների հետ կապված են նիկելի ու կոբալտի արսենիդների հիդրոթերմալ խոշոր հանքավայրեր, որոնք ուղեկցվում են պղնձի սուլֆիդներով, բազմամետաղային հանքանյութում և ուրանային խեժով: Այստեղ հայտնի են նաև ծարիրի արդյունաբերական հանքավայրեր:

Իրանի մյուս հանքավայրերից կարելի է նշել քրոմիտի ոչ մեծ կուտակումները երկրի հարավ-արևելքում տարածված հիպերբազիտներում (Բելուջիստանում), բյուրեղային պիրոլուզիտի հիդրոթերմալ երակային փոքր հանքավայրերը երրորդական անդեզիտներում (Ռոբաաքերիմ՝ Թեհրան քաղաքի շրջանում), ինչպես նաև ոչ ստույգ տվյալներով անագային հանքանյութեր Ղարադաղում ու էլբուրս լեռնաշղթայի շրջանում: Նոր հայտնագործություններից հարկ է նշել հարուստ պղնձաքեթ (ու ՄՕ-քեթ) գոտու հաստատումը Քերման մարզում ու Հարավարևելյան Պակիստանում, որը կապված է պալեոգենի (°) հասակի մոնցոնիտային ինտրուզիաների հետ:

Դեպի արևելք Միջերկրածովային ալպիական գոտին ընդգրկում է Աֆղանստանի ու Սովետական Միջին Ասիայի հարավային մասը (Կոպետդաղ, Պամիր), Հինդուկուշի ու Հիմալայան լեռնաշղթաները, անցնելով դեպի Բիրմա և Ինդոնեզիա:

Աֆղանստանի տարածքի մետաղածնությունը թույլ է ուսումնասիրված. այստեղ հրորդական ու ալվելի հին գրանիտոիդների հետ կապված հայտնի են երկաթի հանքանյութերի սկառնային հանքավայրեր, պղնձի, բազմամետաղային հանքանյութերի, ծարիրի, արծաթի ու ոսկու (Քաբուլի ու Կանդահարի շրջաններում) երակային հիդրոթերմալ հանքավայրերը:

Թուրքմենական ՍՍՀ-ում Կոպետդաղի լեռներում հրորդական գրանիտոիդների հետ կապված են բարիտի ու վիտերիտի բավականին խոշոր հանքավայրեր, հայտնի են ծարիրի ու սնդիկի երևակումներ: Պամիրում մեզոզոյի ու երրորդական հասակի գրանիտոիդների հետ զարգացած են բազմամետաղային հանքանյութերի, ոսկու և պլեդոքվարցի հանքավայրերը: Շատ քիչ են տեղեկությունները Հինդուկուշի ու Հիմալայան լեռնաշղթաների մետաղային հարստությունների մասին, որտեղ հայտնի են նիկելի ու կոբալտի արսենիդների (Նեպալում) ու պղնձի հանքանյութերի (Աֆղանստանում, Հյուսիսային Հնդկաստանում, Բուտանում) ոչ մեծ հանքավայրերը: Հյուսիսային Բիրմայում, Շան իշխանությունում, շահագործվում է Բաուդվին խոշոր բազմամետաղային հանքավայրը, որը տեղադրված է ստորին պալեոզոյի հասակի հրաբխածին հաստվածքում. հանքանյութերն այստեղ հոծ են, հավանաբար կոլչեզանային տիպի, արտակարգ հարուստ են կապարով ու ցինկով և պարունակում են պղնձի, նիկելի, կոբալտի, ծարիրի ու արծաթի խառնուրդ: Ինչ վերաբերում է Բիրմայի անագ-վոլֆրամաքեթ շրջաններին, դրանք վերագրվում են արդեն խաղաղօվկիանոսյան մետաղածնային գոտուն և այստեղ չեն քննարկվում:

Բավականին հարուստ են մետաղներով Ինդոնեզիայի՝ Սումատրա, Ճավա, Սուլավեսի (Յելեբես), Կալիմանտան (Բոռնեո) կղզիները, որոնք կազ-

մում են Միջերկրածովային մետաղածնային գոտու արևելյան եզրային թևը: Երիտասարդ երրորդական հասակի գրանիտոիդների հետ կապված են պղնձի հանքանյութերի բազմաթիվ հանքավայրեր, ոսկու էպիթերմալ հանքավայրերը (Ռեջանդ-Լեբոնդ Սումատրա կղզում և այլն): Հիպերբազիտային զանգվածների հետ կապված են լատերիտային տիպի երկաթի հանքանյութերի հանքավայրերը (Сг, Ni, Со-ի խառնուրդով), նիկելի սիլիկատային հանքանյութերը Սուլավեսի (Յելեբես) կղզում ու ավաստի հանքավայրերը Կալիմանտան (Քոռնեո) կղզում:

Որոշ հետաքրքրություն են ներկայացնում էքսճալյացիոն-նստվածքային պիրոլիտիտի շերտավոր հանքավայրերը Ճավա կղզում (Չոկակարտայի շրջանում): Ինչ վերաբերում է Բանկա ու Բիլիտոն կղզիների անագի հարուստ հանքավայրերին, նրանք ներկայացնում են Մալայայի անագային դոտու շարունակությունը և Հարավարևելյան Ասիայի մյուս անագաբեր շրջանների հետ կապվում են խաղաղօվկիանոսյան մետաղածնային գոտու մի մասը, որն այստեղ միակցվում է Միջերկրածովայինի հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԵՐԿՐԱԾՈՎԱՅԻՆ ՄԵՏԱՂԱԾՆԱՅԻՆ ԳՈՏՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Абдуллаев Р. Н., Азизбеков Ш. А., Кашкай М. А., Керимов Г. И., Мустафабейли М. А., Ситковский И. Н., Шихалибейли Э. Ш. Металлогения Азербайджана. Изд. АН Азерб. ССР, 1962, с. 3—117.
- Азизбеков Ш. А. Геология Нахичеванской АССР. Госгеолтехиздат, 1961, с. 502.
- Азизбеков Ш. А., Магакьян И. Г. и др. Металлогения Кавказа. Сб. «Законом. размещения полезных ископаемых», т. VII, «Недра», 1964, с. 5—47.
- Архипов И. В., Муратов М. В., Постельников Е. С. Основные черты строения и история развития Альпийской геосинклинальной области. Докл. сов. геол. на XXII Межд. геол. конгр., пробл. II-й Гималайский и Альпийский орогенез. «Недра», 1964, с. 18—22.
- Асланян А. Т. Региональная геология Армении. Изд. «Айпетрат», 1958, с. 332—359.
- Афанасьев Г. Д. Геология магматических комплексов Северного Кавказа и основные черты связанной с ними минерализации. «Тр. Ин-та геол. рудных м-ний, петр., минер. и геохим.», вып. 20, 1958, с. 5—135.
- Афанасьев Г. Д., Борсук А. М. и др. Конкретные магматические формации Северного Кавказа. «Изв. АН СССР, сер. геол.», № 7, 1971, с. 3—27.
- Багдасарян Г. П., Гукасян Р. X. и др. Итоги определения абсолютного возраста отдельных магматических комплексов Арм. ССР. «Тр. X сессии Комиссии по опред. абс. возраста геол. формаций». Изд. АН СССР, 1962, с. 283—303.
- Бавляков М. С. Геологическое строение и перспективная оценка касситерит-колчеданных месторождений Буронского типа и их положение в структуре Центрального Кавказа. «Тр. Северо-Кавказ. горно-металлург. ин-та», вып. 15, 1957, с. 11—23.
- Бархатов Б. П. Тектоника Памирского сектора Альпийского складчатого пояса. «Геотектоника», № 6, 1966, с. 12—20.
- Белов А. А. Тектоническое развитие альпийского складчатого пояса в палеозое (Балканский п-ов — Иранское нагорье — Памир). «Геотектоника», № 3, 1967, с. 19—31.
- Белуосов В. В. Большой Кавказ. Опыт геотектонического исследования. «Тр. ЦНИГРИ», ч. I, вып. 108, 1938; ч. II, вып. 121, 1940; ч. III, вып. 126, 1939; ч. I, с. 98, ч. II, с. 174; ч. III, с. 90.
- Биро П., Дреж Ж. Средиземноморье. т. I, II, Изд. ИЛ, 1962, с. 13—111.
- Богданов Б. Д. Стадии на минерализации, минералогенеза и зональность в оловяноцинковите месторождения от Маданския и Неделинския руден. район. Списание на Бьелгарского геологического дружество, год XXII, кн. 2, 1961, с. 133—160.
- Варданянц Л. А. Неинтрузии, их оруденение и связь с тектоникой в Главном Кавказе. «Изв. АН СССР, сер. геол.», № 2, 1939, с. 83—92.

- Варданяц Л. А.* Тектоническая карта Кавказа. Изд. ВСЕГЕИ, 1955, с. 4—72.
- Выдрин В. Н.* Геологическое строение свинцового месторождения Трепча в Югославии. «Сов. геол.», № 6, 1958, с. 157—174.
- Габриелян А. А.* Основные вопросы тектоники Армении. Изд. АН Арм. ССР, 1959, с. 5—185.
- Габриелян А. А.* Положение Армении в тектонической структуре Кавказско-Анатолийско-Иранского сегмента Альпийской складчатой области. «Изв. АН Арм. ССР, науки о Земле», № 3, 1970, с. 11—41.
- Гамкрелидзе П. Д.* Основные черты тектонического строения Грузии. «Тр. ГИН АН Груз. ССР, сер. геол.», X, 1957, с. 69—98.
- Гамкрелидзе П. Д.* Основные черты тектонического строения Кавказа. «Геотектоника», № 3, 1966, с. 3—14.
- Герасимов А. П.* Тектоника, вулканические циклы и металлогения Северного Кавказа. «Геол. на фронте индустр.», № 7—9, 1933, с. 6—13.
- Грушевой В. Г.* Краткий очерк металлогении Закавказья. «Пробл. сов. геол.», № 10, 1935, с. 922—949.
- Гукасян Р. Х.* Возрастное расчленение интрузивов Мегринского плутона по данным аргонового метода. «Тр. XII сессии ком. абс. возраста», 1966, с. 41—50.
- Дзоценидзе Г. С., Твалчредидзе Г. А.* Сравнительная характеристика магматизма и металлогении Кавказа, Крыма и Карпат. «Изв. АН СССР, сер. геол.», № 3, 1968, с. 3—17.
- Димитров Стр.* О развитии магматизма и размещении связанных с ними рудных месторождений Болгарии. «Изв. АН СССР, сер. геол.», № 8, 1959, с. 3—9.
- Доков Р. Д. и др.* Особенности морфологии метасоматических залежей некоторых свинцово-цинковых месторождений Маданского рудного района. «Геология рудных м-ний», № 4, 1962, с. 29—47.
- Ершов А. Д.* Рудоносность Верхней Рачи и Сванетии. «Сов. геол.», № 8, 1940, с. 24—37.
- Ефремов Г. М.* Два типа гранитоидов Главного хребта Кавказа и особенности их металлогении. «Сов. геол.», № 2, 1941, с. 27—37.
- Заридзе Г. М., Татришвили Н. Ф.* Магматизм Грузии и связанные с ним рудообразования. Госгеолтехиздат, 1959, с. 254.
- Йовчев Й.* Полезны ископаемы на НР Бъелгария. Цветни метали. Изд. «Техника», 1961, с. 3—132.
- Йовчев Й.* Основы геологии и полезные ископаемые территории НР Болгарии. VII конгр. Карпато-Балканской геол. асоц. София, 1965, с. 224.
- Кашкай М. А.* К вопросу о формировании колчеданных месторождений северо-восточного склона Малого Кавказа. «Изв. Азерб. АН», № 10, 1951, с. 3—17.
- Кашкай М. А.* О генетической связи колчеданных и некоторых медных и полиметаллических руд с кислыми магмами. «Сов. геол.», сб. 50, 1956, с. 102—124.
- Кашкай М. А.* Петрология и металлогения Дашкесана и других железорудных месторождений Азербайджана. «Недра», 1965, с. 888.
- Кетин И.* Тектонические структуры Анатолии (Малая Азия). «Геотектоника», № 3, 1966, с. 61—71.
- Котляр В. Н.* Памбак. Геология, интрузивы и металлогения Памбакского хребта и смежных районов Армении. Изд. АН Арм. ССР, 1958, с. 228.
- Котляр В. Н., Сейранян В. Б.* Некоторые особенности вулканогенных месторождений Алаверди—Кафанской металлогенической зоны. «ДАН СССР», т. 196, № 1, 1971, с. 169—171.
- Кузнецов И. Г.* Тектоника, вулканизм и этапы формирования структуры Центрального Кавказа. «Тр. ГИН АН СССР, сер. геол.», вып. 131, 1951, с. 1—116.
- Магакьян И. Г.* Основные черты металлогении Армении. «Сов. геол.», № 7, 1959, с. 105—116.
- Магакьян И. Г.* Структурно-металлогенические зоны Малого Кавказа. В сб. «Закон. размещ. полез. ископ.», т. III, Изд. АН СССР, 1960, с. 341—348.
- Магакьян И. Г.* О первичной зональности в расположении отдельных рудных формаций

- на территории Арм. ССР. «Тр. Конф. «Проблемы постмагматического рудообразования», т. I, Прага, 1963, с. 114—117.
- Мерлич Б. В.* Закономерности формирования ртутного оруденения в Закарпатье «Сов. геол.», № 2, 1958, с. 73—89.
- Милановский Е. Е., Хаин В. Е.* Геологическое строение Кавказа. Изд. МГУ, 1963, с. 190—356.
- Мкртчян С. С.* Закавказская рудоносная область Армянской ССР. Изд. АН Арм. ССР, 1958, с. 287.
- Муратов М. В.* Тектоника и история развития альпийской геосинклинальной области юга Европейской части СССР и сопредельных стран. Тектоника СССР, т. II, Изд. АН СССР, 1949, с. 5—510.
- Нетреба А. В.* О возрасте колчеданного оруденения Северо-Западного Кавказа. «Изв. АН СССР, серия геол.», № 3, 1959, с. 91—103.
- Ордова Е. В.* Минеральные ресурсы Турции. «Минер. рес. заруб. стран», вып. 12, 1949, с. 3—76.
- Паффенгольц К. Н.* Геологический очерк Кавказа. 1959, Изд. АН Арм. ССР, с. 506.
- Петрашек В. Э.* (младший). Магматизм и металлогения Юго-Восточной Европы. В сб. «Рудные регенерированные месторождения». Изд. ИЛ, 1957, с. 212—234.
- Ренгартен В. П.* Общий очерк тектоники Кавказа. Тр. XVII сесс. МГК, т. II, 1939, с. 415—428.
- Саакян П. С., Лягин К. И.* Основные черты металлогении Центрального Кавказа. Госгеолгиздат, 1941, с. 3—204.
- Славин В. П., Яранов Д.* Срединные массивы европейской части альпийской геосинклинальной области. Докл. сов. геол. на XXI сессии МГК. Пробл. 18, Изд. АН СССР, 1960, с. 137—149.
- Смирнов В. И.* Некоторые черты металлогении Большого Кавказа. В кн. «Матер. по геологии и металл. Центр. и Зап. Кавказа», т. II, 1960, с. 7—25.
- Сопко П. Ф.* Геология колчеданных месторождений Алавердского рудного района. Изд. АН Арм. ССР, 1961, с. 5—170.
- Твалчрелидзе Г. А.* Эндогенная металлогения Грузии. Госгеолтехиздат, 1961, с. 344.
- Твалчрелидзе Г. А.* Рудные провинции мира. Средиземноморский пояс. «Недра», 1972, с. 344.
- Тезисы докладов выездной сессии на Кавказе. «Наука», 1966, с. 22—61.
- Ушев Антон.* Медно-молибденовое месторождение Медет в НБР. «Разв. и охрана недр», № 4, 1964, с. 61—63.
- Фаворская М. А.* Неонитрузии Верхней Сванетии. «Тр. ИГН, петр. серия», вып. 84, 1947, с. 26—62.
- Хаин В. Е.* Главнейшие черты тектонического строения Кавказа. «Сов. геол.», сб. 39, 1949, с. 29—49.
- Хаин В. Е.* Основные черты структуры Альпийского пояса Евразии в пределах Ближнего и Среднего Востока. «Вестник МГУ. сер. геол.», № 6, 1968, с. 3—18, и № 1, 2, 1969, с. 3—25 (в. № 1) и 3—30 (в. № 2).
- Харчук Л. П.* Поперечные структуры Северного Кавказа и их роль в контроле оруденения. «Сб. научно-технич. информ. МГ и ОН СССР», № 1 (6), 1957, с. 5—9.
- Харчук Л. П.* Размещение эндогенного полиметаллического оруденения на Северном Кавказе. «Тр. геол. и полезн. ископ. Сев. Кавказа», вып. IX, 1959, с. 26—41.
- Хрущев Н. А.* Тырны-Ауз (скарновое вольфрам-молибденовое месторождение на Северном Кавказе). «Сов. геол.», № 2, 1958, с. 51—72.
- Чичинадзе К. И.* Металлогения Горной Рачи и Сванетии. Изд. АН СССР, 1945, с. 3—96.
- Штеклин Дж.* Тектоника Ирана. «Геотектоника», № 1, 1966, с. 3—21.
- Щербаков Д. И.* Высокотемпературные рудные формации Центрального Кавказа. Сб., посвящ. акад. А. Е. Ферсману. Изд. АН СССР, 1946, с. 219—227.
- Эренгоз К.* Краткий обзор геологии Анатолии. «Геотектоника», № 2, 1967, с. 31—47.

- Эфендиев Г. Х.* Гидротермальный рудный комплекс северо-восточной части Малого Кавказа. Изд. АН Азерб. ССР, 1957, с. 342.
- Янишия А. Л.* Проблема средних массивов. «БМОИП, отд. геол.», т. XI, вып. 5, 1965, с. 8—39.
- Bartand P.* Contribution a la mineralogie de L'Iran. Thèses présentées a la faculté des sciences de l'univ. de Paris. Bull. Soc. franç. Minér. Crist. v. 76, 1963, p. 17—65.
- Bemmelen von R. W.* Geology of Indonesia. Pt. I, II, Hague, 1949, pt. I, p. 265.
- Bonnet P.* Description géologique de la Transcaucasie méridionale (Chaines de l'Araxe Moyen). Mém. de la Soc. géol. de France, t. XXV, № 53, 1947, p. 1—25.
- Boyadjiew St.* Über die Entwicklung des magmatismus in Bulgarien. Acta Geol. Acad. Sc. Ungarica, t. II, (1—3), 1967, s. 95—114.
- Cissarz A.* Lagerstätten und Lagerstättenbildung in Jugoslawien in ihren Beziehungen zu Vulkanismus und Geotektonik. Rasprave Zavoda za geoloska istrazivanja, Beograd, 1956, s. 149.
- Diehl E.* Beitrag zur Kenntnis der Erzfundstellen Irans. Schweiz. Miner. und Petrog. Mitt. Bd. 24, № 1—2, 1944, s. 33—371.
- Fermor L.* The Mineral Resources of Malaya. Min. Journ. London, 1949, v. 233, № 5955, p. 938.
- Jankovic S.* Metallogenetic epochs and ore districts in Yugoslavia. Inst. of Mines. Belgrade, 1967, p. 202.
- Khaden H.* Summary on the base metal resources in Iran. Geol. Surv. of Iran, 1964, p. 1—14.
- Kovenko V.* La métallogénie de l'ancien gîte de pyrite cuivreuse de Küre, du gîte nouvellement trouvé a d'Asiköy et de la zone cotière de la Mer Noire. MTA, sene 9, sayi 2. 1944, p. 180—211.
- Ladame G.* Les ressources métallifères de L'Iran. Schweiz. mineral. und petr. mitt. Bd. XXV, 1945, p. 165—298.
- Petraschek W.* Die alpin-mediterrane Metallogenese. Geologische Rundschau Bd. 53, Stuttgart, 1963, p. 376—389.
- Raguin E.* La mine de cuivre de Kosaka (Japon) et le progrès des études sur la métallogénie des gisements métallifères volcanogènes. Chron. mines, Paris, an. 35, № 359, 1967, p. 31—35.
- Ramović M.* Jursko-kredno paleogene metalogene zone i po jasevi. Geoloski glasnik br. II, Sarajevo, 1966, p. 103—130.
- Ramović M.* The significance of the geologic time factor in metallogeny and petrology. Bull. of the mineral research and exploration institute of Turkey, № 67, 1966, p. 23—35.
- Sarcia Jean et Sarcia Jacqueline.* Indices uranifères dans la région d'Anarek (Plateau central Iranien). C. R. Somm. des séances Soc. géol. Fr. fasc. 4, 1960, p. 76—78.
- Schneiderhöhn H.* La position génétique des gîtes métallifères post-triasiques de l'Afrique du Nord française. XIX^e—Session, Congr. géol. Intern. Sect. XII, fasc. XII, 1954, p. 78—90.
- Schumacher F.* The Ore Deposits of Jugoslavia and the Development of its Mining industry. Econ. Geol. v. 49, № 5, p. 451—492.
- Sirel M. A.* Die Kupfererzlagerstätte Ergeni-Maden in der Türkei. Neues Ib. Abt. A. Bd. 80, H. 1, 1952, S. 36—100.
- Stöcklin I., Nabavi M. and Samimi M.* Geology and mineral resources of the Solta nieh Mountains (Northwest Iran) Geol. Survey Iran. Rep. № 2, 1965, p. 44.
- Tromp S. W.* Main structural unite of the Anatolien orogenic belt. Journ. geol. № 4, 1947, p. 265—266.
- Williams D.* Further reflections on the origin of the porphyries and ores of Rio Tinto, Spain. Bull. Inst. min. and Metallurgy, v. 71, № 5, 1962, p. 265—266.
- Wilson N.* Iran and its Mineral Deposits. Min. Mag. LXXIV, № 5, 1946, p. 277—289.

2. Խաղաղօվկիանոսյան մետաղածնային գոտին գոտևորում է Խաղաղօվկիանոսյան երկու ճյուղերով, որոնցից մեկը գրավում է Ասիայի մայրցամաքի արևելյան եզրը և նրան շրջապատող կղզիները, իսկ մյուսն ընդգրկում է Հյուսիսային ու Հարավային Ամերիկայի արևմտյան մասերը, վերջանալով հարավում Գրեյամի երկրում, Անտարկտիդայում:

Խաղաղօվկիանոսյան մետաղածնային գոտու տարածությունը միջօրեականի մոտ է, ընդհանուր ձգվածությունը դերազանցում է 40 հազ. կմ, իսկ միջին լայնությունը տատանվում է 200-ից մինչև 2000 կմ: Տարածականորեն այն համընկնում է Խաղաղօվկիանոսյան գեոսինկլինալային զոնայի հետ, որի սահմաններում, ինչպես և Միջերկրածովային գոտու համար, ծալքավորման մագմատիզմի ու հանքայնացման ամենաուժեղ երևույթները տեղի են ունեցել մեզոկայնոզոյում:

Առաջին անգամ 1946 թ. Ս. Ս. Սմիռնովը հիմնավորեց Խաղաղօվկիանոսյան հանքային գոտու ստրուկտուրայի պլանետար կոնցեպցիան, որը բաղկացած է երկու խիստ տարբերվող արտաքին՝ էպլեա անագային ու ներքին՝ էպլեա պղնձային մետաղածնային զոնաներից: Այդ տարբերությունները յուրաքանչյուր զոնայի մետաղածնության մեջ Սմիռնովը բացատրում է նրանց դիրքով օվկիանոսի իջվածքի համեմատ, որը «համարյա զուրկ է սիալից»:

Հետագայում Խաղաղօվկիանոսյան հանքային գոտու ուսումնասիրման գործում կարևոր դեր խաղացին երկրաբաններ՝ Մ. Ի. Իցիկսոնը, Վ. Ս. Կորմիլիցինը, Լ. Ի. Կրասնին, Վ. Տ. Մատվեենկոն, Ն. Ա. Բելյակսկին, Բ. Ա. Պետրուշևսկին, Ե. Ա. Ռադկևիչը, Ե. Ն. Ուստիևը, Ե. Տ. Շատալովը, Ա. Գ. Շչեդրովը և ուրիշներ:

Ի լրացումն այն բնութագրին, որը տվել էր Ս. Ս. Սմիռնովը Խաղաղօվկիանոսյան հանքային գոտու Ասիական ճյուղի սահմաններում, հաստատվեց երկրի կեղևի երեք տիպ՝ 1) օվկիանոսյան, 2) անցումնային, 3) մայրցամաքային, իսկ նրան ասիմետրիկ Ամերիկյան ճյուղի համար միայն երկու տիպ՝ օվկիանոսյան ու մայրցամաքային, որոնք հատկորեն համակցվում են մեկը մյուսին: Այդ կապակցությամբ այժմ Խաղաղօվկիանոսյան հանքային գոտու համար առանձնացվում են ոչ թե երկու զոնա, ինչպես այդ համարում էր սկզբում Ս. Ս. Սմիռնովը այլ երեք զոնա ու համապատասխանաբար մետաղածնային մարզերի երեք տիպ՝ Ա) Մերձխաղաղօվկիանոսյան, Բ) եզրամայրցամաքային հրաբխածին գոտիների, Գ) Արևելա-Ասիական: Ընդ որում Մերձխաղաղօվկիանոսյան տիպը համապատասխանում է Ս. Ս. Սմիռնովի կողմից առանձնացված ներքին, իսկ Արևելա-Ասիականը՝ Արտաքին զոնային. ինչ վերաբերում է նոր առանձնացված եզրամայրցամաքային հրաբխածին գոտիների տիպին, ապա նրա համար անջատած երկու ենթատիպերից առաջինը ավելի մոտ է Արտաքին, իսկ երկրորդ ենթատիպը՝ ներքին զոնային:

Աղյուսակ 4-ում ամփոփված են Խաղաղօվկիանոսյան մետաղածնային մարզերի տվյալներն ըստ տիպերի: Հիմնավորելով ու առանձնացնելով արտաքին և ներքին զոնաները Ս. Ս. Սմիռնովը հաշվի էր առնում հիմնականում հակադիր տարրերը՝ անագը և պղինձը. այժմ տրված է անջատված մարզերի երեք տիպերի համար բնորոշ մետաղների ավելի լրիվ բնութագրումը (աղ. 5):

Ս. Ս. Սմիռնովի պատկերացումները և նրա զաղափարների հետագա

| | | |
|---|---|--|
| Երկրակեղևի տիպերը | Մետաղածնային զոնաներն ըստ Ս. Ս. Սմիռնովի | Մետաղածնային մարզերի տիպերը ըստ՝ Մ. Բ. Իցիկսոնի ու Ե. Տ. Շատալովի |
| Օվկիանոսյան | — | — |
| Անցումային (Էտորոգեն խճանկար կեղևային) | Ներքին | Ա. Մերձխաղաղօվկիանոսյան |
| Մայրցամաքային (կոն- տինենտալ) | Արտաքին | Բ. Եղրա-մայրցամաքային հրաբխածին- զոտիների Ենթատիպ 1. կոնտինենտալից օվկիա- նոսյանին անցման մարզում, միջան- կալ զոնայով և հետերոգեն կեղևով (Արևելա-Ասիական հրաբխածին զո- տի) Ենթատիպ 2. կոնտինենտալից օվկիա- նոսյան կեղևի կտրուկ անցման մար- զում (Արևմտա-Ամերիկյան հրաբխա- ծին զոտի) Գ. Արևելա-Ասիական (կոնտինենտալ) |

Խաղաղօվկիանոսյան հանքային մարզերի տիպերի մետաղածնության
համեմատական բնութագիրը (ըստ Բ. Ա. Անդրեևի, Մ. Բ. Իցիկսոնի,
Վ. Տ. Մատվենկոյի, Ե. Տ. Շատալովի)

| Մետաղային տարրերը | Արևելա-Ասիական (կոնտինենտալ) | Եղրային-մայրցա- մաքային հրաբխա- ծին զոտիներ (առանց ենթաբա- ժանման) | Մերձխաղաղօվկիա- նոսյան |
|--------------------------------|---|--|--|
| Գլխավոր | Au (մեղր- և էպիթեթ- մալ հանքավայրեր), Sn, W | Hg } էպիթեթմալ, Au } Cu, Mo, S | Cu, Cr, Hg |
| Բնորոշ | B (տուրմալին), As, Pb, Zn, F, Mo | B, Li (տուֆատարա- յին), B (դատուլիտ), Pb, Zn, Bi, Al (ալու- նիտ), F | Pt ու պլատինոիդներ, Ti, աւրեւստ, S, Au, Ag (էպիթեթմալ) |
| Երկրորդական | Hg, Sb, Cu, Be, Li, Ta, Nb, Fe | Sb, In, Cd, Ge, Fe (կոլչեղանային), Se, Te, W | Fe, Ba, Ni, Se, Te, Pb, Zn |
| Թույլ ներկայաց- ված | Co, TR, Bi, Jn, Cd, Ag, Ba | Be, As | Mo, Sb, Sn, F |
| Գործնականորեն բացակայում են | Sr, Pt, Cr, Ti, Ni, Al, P, Se, Te, V, աւրեւստ | Sr, Ni, Co, TR, Ti, աւրեւստ, Cr, V, Ba, Ta, Nb, P | Sr, B, TR, Be, W, Al, Co, As, Bi, Ta, Nb, Jn, Cd, P |

պարգացումը գիտական կանխատեսումների տեսական հիմք հանդիսացան ու նպաստեցին խաղաղօվկիհանոսյան հանքային գոտու սովետական հատվածում որոնման աշխատանքների հաջողութւյանը: Այսպես, հրաբխածին տիպի մետաղածնային գոտիների սահմաններում տեսականորեն հիմնավորված էր և հետազայում իրոք հայտնաբերվեցին պղինձ-մոլիբդենային, պղինձ-բազմամետաղային, ոսկի-արծաթային, սնդիկային և ուրիշ հանքանյութերի հանքավայրեր:

Խաղաղօվկիհանոսյան հանքային գոտու (ԽՀԳ) մետաղածնութւյան քննարկումը նպատակահարմար է կատարել Ասիական ու Ամերիկյան ճյուղերի համար, իսկ նրանցից յուրաքանչյուրի սահմաններում արտաքին ու ներքին զոնաների համար առանձին (լրացուցիչ անջատելով հրաբխածին գոտիների մետաղածնութւյունը):

ԽՀԳ մայրցամաքային (արտաքին) զոնայի Ասիական ճյուղի հանքային մարզերի սիստեմատիկ դիտումը թույլ է տալիս հյուսիսից հարավ, որպես խոշոր մարզեր, առանձնացնել Սովետական Միութւյան հյուսիս-արևելքը, Անդրբայկալը, Սովետական Հեռավոր արևելքը ու Ասիայի հարավ-արևելքը: Ասիական ճյուղի ներքին զոնայի համար համապատասխանաբար նույնպես հյուսիսից հարավ առանձնացվում են հետևյալ հանքային մարզերը՝ Կամչատկա-Կորյակյան լեռնաշխարհը Կուրիլներով ու Սախալին կղզով, Ճապոնիան, Տայվանը, Ֆիլիպինները, Նոր Գվինեան, Նոր Զելանդիան ու Օվկիանային կղզիները (Նոր Կալեդոնիա, Ֆիջի և ուրիշներ):

Համառոտակի քննարկվում են նաև Օխոտսկ-Չուկոտյան հրաբխածին գոտու մետաղածնութւյունը իր առանձնահատկութւյուններով (ոսկի-արծաթային ու սնդիկային էպիթերմալ հանքայնացման իշխում), որը լավ նկարագրված է Ա. Ա. Միգորովի, Լ. Ն. Պլյաշկեի, Ս. Ֆ. Լուզովի և ուրիշների աշխատութւյուններում:

Սովետական Միութւյան հյուսիս-արևելքն քննարկում է Հյուսիսարևելյան Ասիայի եզրի թերակղզին (Լենա գետից դեպի արևելք), Յանա, Ինդիգիրկա, Կոլիմա ու Անադիր գետերի ավազանները:

Սովետական Միութւյան հյուսիս-արևելքի երկրաբանական կառուցվածքը ու մետաղածնութւյունը մեզ հայտնի են գլխավորապես Ս. Ս. Սմիռնովի, Յու. Ա. Բիլբեինի, Վ. Տ. Մատվեենկոյի, Ե. Տ. Շատալովի, Մ. Ի. Իցիկսոնի, Ե. Կ. Ուստիևի, Յա. Մ. Պուշարովսկու աշխատանքներից: Հյուսիս-արևելքի ծալքավոր կառուցվածքների, մագմատիզմի ու մետաղածնութւյան ձևավորման գործում կարևոր նշանակութւյուն է ունեցել քիմերյան օրոգենիկ դարաշրջանը, որը ստեղծել է Վերխոյանա-Կուլիմյան ու Չուկոտյան ծալքավոր զոնաները, եզրապատելով Կուլիմայի կարծր զանգվածը: Նրանցից դեպի արևելք տեղադրված է Օխոտսկ-Չուկոտյան հրաբխածին գոտին, որը հյուսիս-արևելքի մեզոզոյան ստրուկտուրաները սահմանազատում է Կամչատկա-Կորյակյան ալպիական զոնայից:

Հյուսիս-արևելքում քիմերյան մագմատիզմը սկսվում է միջին-վերին յուրայի ժամանակաշրջանում մինչքաթոլիտային քվարց-ալբիտոֆիրների ու քվարց-գիորիտային պորֆիրիտների դայկաների երկարածոված գոտու ձևավորումով, որի հետ պարագենետիկորեն սերտ կապված են Վերխոյանսկ-Կուլիմայի հանքային մարզի ոսկեբեր հանքաղաշտերը:

Ոսկեբեր գոտին ձգված է հյուսիսարևմտյան ուղղութւյամբ 1000 կմ-ից

ավելի Կոլիմա գետի ակունքներից մինչև Աղիշա (Յանա գետի վտակ) գետի ավազանը. այստեղ հայտնաբերված են ոսկու հարյուրավոր արմատական հանքավայրեր ու նրանց հետ կապված շատ արդյունավետ ցրոններ: Ոսկեբեր հանքամարմինները, ներկայացված են երակներով, շտովկերկներով, աստիճանաձև երակներով դայկաներում, թամբաձև երակներով տրիասի ու ստորին ու միջին յուրայի ծալքավորված նաև ձեղքերով ջարդված ավազաքարաթերթաքարային հաստվածքներում:

Ոսկու հանքավայրերը հիդրոթերմալ են, հիմնականում միջին ջերմաստիճանային, տարբեր միներալային զուգակցություններով՝ ոսկի-քվարցային, ոսկի-արսենոպիրիտային, ոսկի-բազմամետաղային, ոսկի-շեելիտային, ոսկի-անտիմոնիտային:

Ավելի ուշ, քիմերյան ծալքավորման գլխավոր փուլում, վերին յուրայի—ստորին կավձի ընթացքում տեղի է ունեցել բաթոլիտների ու խոշոր շտովկերի ներդրումը, որոնք ներկայացված են չափավոր թթվություն ու թթու կազմի գրանիտոիդներով (133—138 մլն. տ. բացարձակ հասակով, վերին յուրա)։ Ինչպես նաև անդեզիտա-դացիտների փոքր շտովկերի ներդրումը, որոնց բացարձակ հասակը 105 մլն. տ. է (ստորին կավիճ): Չափավոր թթվություն գրանիտոիդների հետ կապված են մոլիբդենի, բազմամետաղային հանքանյութերի, մկնդեզիտ ու ոսկու սովորաբար ոչ մեծ մասշտաբի հանքավայրեր. թթու գրանիտոիդների հետ կապված են անագային ու անագ-վոլֆրամային հանքանյութերի խոշոր հանքավայրեր, որոնք խմբավորվում են հարստագույն ու երկարաձգված հանքային գոտիներում:

Հյուսիս-արևելքի գլխավոր անագաբեր գոտիներն են՝ Ինդիգիրկա-Կոլիմյանը, Յանա-Աղիշյանը, Չաունյանը, Հյուսիս-Չուկոտյանը, որոնք կիսաօդակաձև գոտևորում են Կոլիմյան կարծր զանգվածը հարավից, արևմուտքից ու հյուսիսից: Ս. Ս. Սմիռնովը (1945) դրանց իրավացիորեն համարում է մեկ հսկայական միասնական անագաբեր զոնայի առանձին մասեր:

Անագաբեր շրջաններում գլխավորապես զարգացած են վերին տրիասի ու ստորին-միջին յուրայի ավազաքարա-թերթաքարային շերտախմբերը, որոնք ձևավորված են մանր զտոթիվ միջօրեականի մոտ տարածություն ունեցող ծալքերի: Հիմնական ծալքավորումը և նրա հետ կապված հանքաբեր գրանիտոիդների ներդրումը տեղի է ունեցել ստորին կավձում:

Ինտրուզիվները հարում են հյուսիսարևելյան, մասամբ հյուսիսարևմտյան տարածում ունեցող բեկվածքներին և կազմում են ծալքավորումը հատող շղթաներ: Բեկվածքների հետ կապված են ջարդման զոնաները, որոնց հարում է գրանոգիորիտային ինտրուզիտների էկզոկոնտակտային զոնաներում տեղադրված հանքավայրերի ճնշող մեծամասնությունը:

Հանքավայրերի համար ավելի բնորոշ են անագաբեր ավազաքարա-թերթաքարային բրեկչիտները, որտեղ բեկորները ցամաքացված են քվարցով, տուրմալինով, երկաթային քլորիտներով ու ւլիբոտիտով, արսենոպիրիտի, սֆալերիտի, խալկոպիրիտի, կասիտերիտի, ստանինի և ուրիշ միներալների երկրորդական դերով: Հանքային հանգույցները տեղադրվում են գրանիտոիդների վանդվածների շուրջը, դայկաների խտացման տեղամասերում ու եղջրաքարային դաշտերի սահմաններում: Հանքայնացումը զարգանում է մի քանի փուլերով սովորաբար հետևյալ հերթականությամբ՝ 1) քվարց, երկաթային տուրմալին, 2) քվարց, տուրմալին (նվազ երկաթային), արսենոպիրիտ,

կասիտերիտ, քլորիտ, իսկ մի փոքր ավելի ուշ պիրոտին, սֆալերիտ, ստանին, խալկոպիրիտ, 3) քվարց, կալցիտ, սիդերիտ, գալենիտ, կապարի սուլֆամանտիմոնիտներ:

Հանքայնացման առանձին փուլերը կամ առանձնանում են տարածակա- նորեն, կամ էլ վերադրվում են նույն ջարդման գոնաներին: Որպես կանոն, որքան ուժեղ են ջարդված ապարները, այնքան ինտենսիվ են նրանք հանքայնացված:

Ս. Ս. Սմիռնովը (1941) նշել է, որ լուծույթները, որոնք ներթափանցում են մանր ջարդված ապարների մեջ անթիվ և տարբեր ուղղության ճեղքերով ու ճեղքիկներով, ունեցել են հսկայական «ոռակցիոն մակերես» (շփման մակերես) ներփակող ապարի հետ և հաճախ, այսպիսի դեպքերում, մանր ջարդված բրեկչիան ամբողջությամբ տեղակալվել է հանքանյութով: Ընդհակառակը, խոշորաբեկոր ջարդման դեպքերում, լուծույթները, որոնք ներթափանցում էին նոսր ցանցի ճեղքերով, հանքայնացում էին միայն այդ ճեղքերը, թողնելով նրանց միջանկյալ տարածություններում թույլ հանքայնացված ներփակող ապարների բլոկներ:

Հյուսիսային Չուկոտկայի, Պեկի, Իուլտինի, Պիրկակայի, Հյուսիսային և ուրիշ հանքային հանգույցների անագային ու անագ-վոլֆրամային հանքանյութերի հանքավայրերը պատկանում են քվարց-կասիտերիտային, կասիտերիտ-սիլիկատային ու կասիտերիտ-սուլֆիդային տիպերին ու կապված են մասամբ ստորին կավճի, բայց զլխավորապես վերին կավճի գրանիտոիդների հետ: Չուկոտկայում առանձնացվում են հինգ հանքային գոտիներ՝

I. Հյուսիսային՝ Sn-W հանքայնացումով, կապված ստորին կավճի Իուլտինյան տիպի գրանիտոիդների հետ (քվարց-կասիտերիտ-վոլֆրամիտային երակներ) ու կասիտերիտ-սուլֆիդային հանքավայրեր, կապված վերին կավճի գրանիտոիդների հետ:

II. Կենտրոնական՝ Au-Mo հանքայնացումով, զոտու արևմտյան մասում՝ նաև կասիտերիտ-սիլիկատային հանքավայրերով, կապված վերին կավճի գրանիտոիդների հետ:

III. Հարավային՝ Au-Ag ու Hg էպիթերմալ հանքայնացումով, կապված երրորդական գրանիտոիդների հետ: Երկրորդական նշանակություն ունի այստեղ բիսմուտային ու ծարիրային հանքայնացումը:

IV. Հարավարևելյան՝ հին ապարների լայն զարգացումով, ներդրված պալեոզենի հասակի գրանիտոիդներով, որոնց հետ կապված է սկառնային բազմամետաղային հանքայնացումը:

V. Հյուսիսարևելյան սկառնային մագնետիտային ու բազմամետաղային հանքավայրերով, կապված ստորին-միջին յուրայի ու կավճի գրանիտոիդների հետ:

Ս. Ս. Սմիռնովը դեռ 1946 թ. ընդգծել է Սովետական Միության հյուսիսարևելքի անագաբեր գոտիների ռեզիոնալ զարգացումը երկարաձգված բեկվածքների երկայնքով, ինչպես նաև վերխոյանսկ-Կոլիմայից մինչև Չաուն-Չուկոտկա ոսկեբեր (մինչև վերին յուրա) և անագաբեր (վերին յուրայից հետո) հանքավայրերի հիմնական մասը տարահասակ ձևավորումը:

Անագի հանքավայրերից որպես ամենահեռանկարայինը նա նշել է էգե-հայա ու Ալիս-հայա կասիտերիտ-սուլֆիդային հանքավայրերը, Կոստեր գրեյզենային հանքավայրը ու Իուլտին, Չաունա ու Ամգուեմա քվարց-կասի-

տերիտ-վոլֆրամիտային հանքային հանգույցների հանքավայրերը: Բազմա-
թիվ ոսկեբեր հանքավայրերից ամենահեռանկարայինները գտնվում են Կո-
լիմա ու Ինդիգիրկա գետերի վերին ու միջին հոսանքներում ու Չուկոտկայում:

Անագաբեր ու ոսկեբեր հանքավայրերի մեջ կարելի է անջատել տարբեր
հասակի խմբեր: Այսպես, բիոտիտային ու ալյասկիտային գրանիտների հետ,
որոնց հասակը 138—105 մլն. տ. է, ծագմամբ կապված են կասիտերիտ-
քվարցային ու կասիտերիտ-սիլիկատ-սուլֆիդային (Դեպուտատական և ուրիշ.)
հանքավայրերը: Դեպուտատական հանքավայրում լայն տարածված են քվարց-
պորֆիրների դայկաները (բացարձակ հասակը 102 մլն. տ.), իսկ նրանց հետ
սերտորեն կապված անագային հանքայնացումն ունի 105—115 մլն. տ. հասակ:

Տակալկանի հանքավայրում քվարց-կասիտերիտային հանքանյութերը
հատված են ավելի երիտասարդ կասիտերիտ-սուլֆիդային հանքանյութերով,
որոնց հասակը 89 մլն. տ. է: էզե-Խաչա կասիտերիտ-սուլֆիդային հանքա-
նյութերի խոշոր հանքավայրերի համար հասակը որոշված է (սերիցիտի մի-
ջոցով)՝ 67 մլն. տ.: Իլին-Տաս կասիտերիտ-սուլֆիդային հանքավայրում
գրանիտոիդները հատված են դիորիտային պորֆիրիտների ու կերսանտիտ-
ների դայկաներով, որոնց բացարձակ հասակը 93—95 մլն. տ. է, այդ դայ-
կաները իրենց հերթին հատված են կասիտերիտ-սուլֆիդային երակներով,
որոնք ունեն 64 մլն. տ. հասակ:

Այգախտով, կասիտերիտ-սուլֆիդային հանքայնացումը ժամանակի տե-
սակետից զգալիորեն կտրված է գրանիտոիդների ու դայկաների ներգրումից
և ենթադրաբար նկատվում է ավելի հիմքային կազմության Cr_1 - Cr_2 հասակի
մագմատիկ օջախների հետ:

Անագաբեր կասիտերիտ-սիլիկատ-սուլֆիդային ֆորմացիայի որոշ հան-
քավայրերի համար, որտեղ J_3 - Cr_1 ու Cr_2 հասակի մագմատիկ առաջացում-
ները համընկնում են տարածականորեն, ձևավորման ընթացքը ավելի
բարդ է:

Այդպիսի երկար գործող տարբեր հասակի շարժուն անագային հանքայ-
նացման տարածական վերադրման շնորհիվ դարգացած գոնաները դիտվում
են որպես բարենպաստ ստրուկտուրաներ անագի հարուստ ու խոշոր հանք-
ավայրերի առաջացման համար: Դրանցից են վաղուց գործող Դերբեկե-Նել-
գելիչանը, Արգա-Ինիխ-Խաչան, Դեպուտատական, Իրգիլանյան և այլ գոնա-
ներ, որտեղ լայն տարածված են վերը նշված տարբեր հասակի մագմատիկ
ապարներն ու հանքայնացումը:

Հաստատվում են նաև ոսկու հանքայնացման տարբեր հասակները. վե-
րին յուրայի մինչբաթոլիտային դայկաների սերիայի հետ կապված բազմա-
թիվ հանքավայրերից բացի, հայտնի են նաև ստորին ու վերին կավճի հա-
սակի ոսկու և երրորդական հասակի ցածր ջերմաստիճանային ոսկի-արծաթա-
յին հանքավայրեր: Վերջինների համար բնորոշ է նրանց հարումը ուղ եր-
րորդական հասակի բեկվածքներին, որոնց երկայնքով ձևավորվում է Օխո-
տա-Չուկոտկայի հրաբխածին գոտին միոպլիոցենի հասակի էֆուզիվների ու
չափավոր թթու և սուբհրաբխային մանր շտոկների լայն զարգացմամբ: Ըստ
Ս. Ֆ. Լուգովի (1962) Չուկոտկայի հարավային և հարավարևելյան շրջաննե-
րում լայն զարգացած են երրորդական գրանիտոիդները, որոնց հասակը
25—50 մլն. տ. է և նրանց հետ սերտորեն կապված է Au-Ag ու Hg հանքայ-
նացումը:

Հանքավայրերը տեղադրված են վերին կավձի ու գլխավորապես պալեո-
գենի հասակի հրաբխածին հաստվածքներում ու ներկայացված են երակիկա-
ցանավոր էպիթերմալ հետևյալ կազմության հանքանյութերով՝ էլեկտրում,
պիրարգիրիտ, անտիմոնիտ, արծաթի սուլֆատներ, իսկ երակային միներալ-
ներից խալցեդոն, ադուլար, կարբոնատներ (Ա. Ա. Սիդորով, 1966). այդ
տիպի հանքանյացումը ձգվում է ամբողջ Օխոտա-Չուկոտյան հրաբխածին
զոտու սահմաններում. Չուկոտկայի հարավային զոնան հարավ-արևելքից
գոտևորում է Կոլիմյան պլատֆորմը և ձգվում է Օխոտյան ծովի եզրով մին-
չև Ամուր գետի ավազանի ստորին հոսանքը. ոսկու հետաքրքիր հանքավայ-
րերից նշենք Ագատյանը, Հանքային բլուրն ու Սպիտակ լեռը, իսկ անդիկի
համար՝ Ռաուչայի և Պալյավամաի հանքանյացման զոնաները, Վ. Տ. Մատ-
վենկոն առանձնապես շեշտում է հանքավայրերի գծային զոնալ տեղադրու-
մը, որը կապված է հանքաբեր մագմատիկ համալիրների ներդրումը հսկող
խախտումների հետ:

Մետաղածնային զոնաներից առավել կարևոր նշանակություն ունեն
նրանք, որոնք ձևավորվել են շարժուն գոտու Յանա-Կոլիմյան ու Չուկոտկա-
յի ճյուղերի տեկտոնա-մագմատիկական զարգացման միջին և ուշ փուլե-
րում: Զարգացման միջին փուլի մետաղածնային զոնաները Յանա-Կոլիմյան
ճյուղի սահմաններում լավ ներկայացված են ոսկու հանքանյացման Յանա-
Ինդիգիրկա-Կոլիմյան զոնայով, որը կապված է միջին յուրայի վերջի—վե-
րին յուրայի սկզբի մինչբաթոլիտային փոքր ինտրուզիաների հետ: Այդ նույն
փուլին է պատկանում Ալախ-Յունյան ոսկեբեր զոնան, նույնպես կապված
մինչբաթոլիտային դայկաների սերիայի հետ:

Չուկոտկայի ճյուղում միջին փուլի (յուրայի հասակ) զարգացման ոսկե-
բեր զոնաներից են Փոքր-Անյուակյանը ու Իշուվենյանը, կապված, ըստ երե-
վութի, մինչբաթոլիտային դայկաների ու գիրոբիտային պորֆիրիտների
շտակների հետ:

Յանա-Կոլիմյան ճյուղում միջին (ուշ յուրայի) զարգացման փուլի մե-
տաղածնային զոնաների թվին են պատկանում Պոլոունենեակա-Կոլիմյան,
Սեյմչանյան, Տակիստաբիտյան ու Կուլարյան հազվագյուտմետաղայինները
(Sn, W, Mo և ուրիշ հանքավայրերը), որոնք կապված են Կոլիմյան ինտրու-
զիվ համալիրի բաթոլիտանման գրանիտների հետ: Չաունյան ճյուղում այդ
տիպին են պատկանում Իչատկինյան, Չաունյան ու Ամզուեմյան զոնաները,
կապված թթու գրանիտների հետ:

Միջին էտապի զոնաներն ունեն կարևոր նշանակություն Au, Sn, W-ի
(ինչպես նաև Mo, Co, Pb-Zn և այլն) համար:

Ոչ պակաս կարևոր արդյունաբերական նշանակություն ունեն զարգաց-
ման ուշ շրջանի (գլխավորապես վերին կավձի հասակի) զոնաները, հատկա-
պես լայն տարածված Յանա-Կոլիմյան ճյուղում, որտեղ նրանք տեղադրված
են հրաբխածին դաշտերի ու հետժալքավոր ձեղքային գրանիտոիդների փոքր
ինտրուզիաների տեղաբաշխումը որոշող խախտումների սխեմաների եր-
կայնքով:

Ուշ շրջանի զոնաներին բնորոշ են կասիտերիտ-սուլֆիդային, արծաթ-
կապար-ցինկային (երբեմն անագով), պղինձ-վոլֆրամային ու ծարիր-անդի-
կային հանքային համալիրները:

Յանա-Կոլիմյան ճյուղի սահմաններում հայտնի են Գեպուտատականը՝ Պոլտուանի լեռնաշղթայում (Գեպուտատական, Միրնի, Գալնի և ուրիշ կասիտերիտ-սուլֆիդային ախլի հանքավայրեր), Էգեխայան (Էգեխայա, Խատոնխայա և ուրիշ կասիտերիտ-սուլֆիդային ախլի հանքավայրեր), Նելգեխև-Գերբեկյան (կասիտերիտ-սուլֆիդային ու բազմամետաղային հանքավայրեր) և Ույանդինա-Յասաչևինյան (ծարիր-անդիկային, բազմամետաղային, կասիտերիտ-սուլֆիդային ու ոսկու հանքայնացման համատեղ զարգացման զոնա) զոնաները: Այդ բոլոր զոնաները կապված են վերին կավձի հասակի Օմսուկչանյան գրանիտոիդների ինտրուզիվ համալիրի հետ:

Չուկոտկայի ճյուղում ուշ էտապի (վերին կավիձ) մետաղածնային զոնաները ներկայացված են Վալկումեյան կասիտերիտ-սուլֆիդային հանքայնացումով ու դեռևս սկզբածքային պսակներով ենթադրաբար ուրվագծվող Մեծ-Անյուսկյան ոսկեբեր զոնաներով: Զարգացման ուշ փուլի հետ է կապված նաև Ռաուչանի զոնայի սնդիկային, ինչպես և Կիբեր հրվանդանի ծարիրային հանքայնացումը:

Անդրբայկալը մետաղածնության ընդհանուր բնույթով շատ նման է Սովետական Միության հյուսիսարևելյան մարզին:

Անդրբայկալի հրկրաբանությունն ու մետաղածնությունը ուսումնասիրել են սովետական հրկրաբաններ Ս. Ս. Մմիռնովը, Օ. Գ. Լևիցկին, Մ. Մ. Տետյանը, Վ. Ա. Օբրուչևը, Ա. Գ. Շչեգլովը, Վ. Ս. Կորմիլիցինը, Գ. Ի. Գորժևսկին, Վ. Ն. Կոզեբենկոն, Ռ. Մ. Կոնստանտինովը և ուրիշներ:

Անդրբայկալի հանքային մարզը ընդգրկում է Արևմտյան ու Արևելյան Անդրբայկալը և Մերձբայկալի մի մասը, որոնք գտնվում են Բայկալ լճից հարավ-արևելք ու արևելք՝ ընդհուպ մինչև հարավ—հարավ-արևելքում Մոնղոլական ու Չինական Ժողովրդական Հանրապետությունների հետ պետական սահմանը (նկ. 20):


Անդրբայկալյան հանքային մարզը ներկայացնում է մի ավելի ընդարձակ հանքային ռեզիոնի հարավարևմտյան մասը, որն ընդգրկում է Անդրբայկալից դեպի արևելք ու հյուսիսարևելք գտնվող հսկայական տարածությունները ընդհուպ մինչև Խաղաղ օվկիանոսն ու Սովետական Միության ամբողջ հյուսիս-արևելքը: Այդ մետաղածնային գոտին, որն առաջին անգամ առանձնացրել է Ա. Ն. Ֆերսմանը Մոնղոլա-Օխոտյան անվան տակ, հետազայում որպես Խաղաղօվկիանոսյան մեզոկայնոզոյան մետաղածնային գոտու հյուսիսարևմտյան մասը նկարագրել է Ս. Ս. Մմիռնովը:

Անդրբայկալը իրենից ներկայացնում է բազմափուլ զարգացման և բարդ կառուցված ռեզիոն, շորս տարբեր հասակի ծալքավոր շրջաններով, որոնք հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք հերթափոխվում են հետևյալ հաջորդականությամբ՝ բայկալյան (պրոտերոզոյան), կալեդոնյան, հերցինյան, քիմերյան, չուրաբանյուրն իրեն բնորոշ մետաղածնությամբ, կապված նստվածքառաջացման, տեկտոնիկայի ու մագմատիզմի առանձնահատկությունների հետ:

Բայկալյան ծալքավոր մարզում, որն անմիջապես հարակից է Սիբիրական պլատֆորմին (Մերձբայկալ), լայն տարածված են պրոտերոզոյան հասակի մետամորֆիկ հաստվածքներն ու գրանիտոիդները. վերջինների հետ կապված են բազմաթիվ պեգմատիտներ (հազվագյուտ մետաղներով ու մուս-

կովիտով), ինչպես նաև մագնետիտային հանքանյութերի առանձին սկանոնային հանքավայրեր:

Կալեդոնյան ծալքավոր մարզը, որը տեղադրված է զլխավորապես արևմրտյան, մասամբ Կենտրոնական ու Արևելյան Անդրբայկալում, բնութագրվում է քեմբրի ու Օրդովիկի (°) հրաբխածին ու ծովային նստվածքների լայն տարածմամբ, որոնք ներդրված են վաղպալեոզոյան գրանիտոիդներով և հիպերբազիտներով: Վերջինները տեղադրված են կալեդոնյան խորքային բեկվածքների երկայնքով: Ստորին քեմբրի հրաբխածին հաստվածքների հետ կապված է Օդերնի հրաբխածին-նստվածքային տիպի Cu-Zn կոլչեդանային հանքավայրը:



Նկ. 20—Արևելյան Անդրբայկալի ռեգիոնալ զոնալականության ու մետաղային հանքավայրերի տեղաբաշխման սխեման (ըստ Ս. Ս. Սմիռնովի և ուրիշների):

1—մինչմեզոզոյան ծալքավորման մարզ, 2—Ազիյան զանգված, 3—մեզոզոյան գեոսինկլինալի կենտրոնական մաս, 4—մեզոզոյան գեոսինկլինալի եզրային մասեր:

Կալեդոնյան գրանիտոիդների հետ կապված են սկանոնային (ժելեզնի Կրյաժ) և երկաթի, պղնձի, բազմամետաղային հանքանյութերի հիդրոթերմալ ոչ մեծ հանքավայրեր, իսկ բազիտների-հիպերբազիտների հետ տիտանամագնետիտային հանքանյութերի հանքավայրեր (Կրուչինինյան և ուրիշներ) և քրոմիտի երևակումներ:

Հերցինյան ծալքավոր մարզը նույնպես տեղադրված է հիմնականում Արևմտյան Անդրբայկալում, որտեղ տարածված են դեռնի ու ստորին կարբոնի Ֆլիշոիդային ու մասամբ հրաբխածին նստվածքները, հատված միջին պալեոզոյան հասակի բազմաթիվ գրանիտոիդային ինտրուզիաներով: Վերջինների հետ կապված են վաղհերցինյան հասակի որոշ ոսկու հանքավայրեր (Վոսկրեսենսկի և այլն), որոնք հարում են չափավոր թթու մինչբաթոլիտային փոքր ինտրուզիաներին, միջինհերցինյան անագ-վոլֆրամային (Շումիլովսկի) ու քվարց-մոլիբդենիտային (Գուտայ) հանքավայրեր, կապված ուշ ծալքավոր գրանիտոիդների հետ, ուշհերցինյան վոլֆրամ-մոլիբդենիտային (անագազուրկ) հանքավայրեր, կապված հետծալքավոր ճեղքային գրանիտոիդների հետ:

Արևելյան Անդրբայկալում լավ արտահայտվում են մեզոզոյան ծալքավոր ստրուկտուրաները և լայն տարածված են պալեոզոյան հասակի ալյումոսիլիկատային ու կարբոնատային հաստվածքները, որոնք վերագրվում են նաև Արևմտյան ու Կենտրոնական Անդրբայկալի հին ստրուկտուրաների վրա:

Ռ. Մ. Կոնստանտինովի (1966) տվյալներով Արևելյան Անդրբայկալի հանքավայրերի հիմնական մասը առաջացել է վերին յուրայում—ստորին կալեճում, որը հաստատվում է K-Ar եղանակով հասակի որոշումներով: Անագ-վոլֆրամային հանքավայրերը սովորաբար կապվում են Կուկուլբեյան գրանիտոիդների կոմպլեքսի հետ, ոսկի-մոլիբդենային հանքայնացումը՝ Շախտամյան ինտրուզիաների կոմպլեքսի հետ, իսկ բազմամետաղայինը՝ հարում է վերջին կոմպլեքսի հետ կապված փոքր ինտրուզիաներին:

Ս. Ս. Սմիռնովը (1944) Արևելյան Անդրբայկալի համար ապացուցեց հանքայնացման գոտևոր տեղադրումը և առանձնացրեց Կենտրոնական անագ-վոլֆրամային, Հարավարևմտյան ոսկի-մոլիբդենային և Հարավարևելյան բազմամետաղային գոտիները: Հետագայում այդ սխեման ճշտվեց Գ. Ի. Գորժևսկու ու Վ. Ն. Կոզերենկոյի (1956) կողմից, որոնք առանձնացրին արդեն յոթ գոտևոր զոնաներ՝

1. Կենտրոնական Արևելյան-Անդրբայկալյան սինկլինալային զոնա քվարց-կասիտերիտային ու քվարց-վոլֆրամիտային (էտիկա, Բուկուկա, Բելուխա և այլն) հանքավայրերով:

2. Անցողիկ զոնա մոլիբդեն-բազմամետաղային հանքայնացումով:

3. Հյուսիսարևմտյան սինկլինալային զոնա անագաբեր պեգմատիտներով (Ջավիտինսկի և ուրիշ հանքաղաշտեր):

4. Մերձարգունյան հարավարևելյան եզրային զոնա բազմամետաղային հանքայնացումով:

5. Գազիմուր-Ուրլումկանի բարձունքների մարզ՝ բարդ կազմովյան բազմամետաղային հանքավայրերով:

6. Մերձշիկայի հյուսիսարևմտյան եզրային զոնա ոսկի-մոլիբդենային հանքայնացումով:

7. Ազինյան դանգվածը քվարց-վոլֆրամիտ-կասիտերիտային հանքավայրերով (Շերլովայա լեռը):

Մ. Ի. Իցիկսոնի ու Վ. Ս. Կորմիլիցինի ուսումնասիրությունների համաձայն (1960) նույնպես առանձնացվում են յոթ հանքային գոտիներ, սակայն նրանք գտնում են, որ ոսկի-մոլիբդենային, բազմամետաղային ու ֆլյուորիտային հանքայնացման գոտիները կրկնվում են (զույգ են), ու միայն անագ-վոլֆրամային հանքավայրերի գոտին չունի իր նմանակը: Տարբեր հանքայնացում ունեցող գոտիներն առաջացել են որոշակի հերթականությամբ՝ սկզբում ձևավորվել է Sn-W գոտին, ապա՝ Au-Mo, ապելի ուշ՝ Pb-Zn և, վերջապես՝ ֆլյուորիտային հանքավայրերի գոտիները:

Անագ-վոլֆրամային գոտին առաջացել է ստորին-միջին յուրայի իջվածքի նախկին տեղում ու հանքավայրերը ծագմամբ կապված են վերին յուրայի հասակի լեյկոկրատային ճեղքային պորֆիրանման գրանիտների ու գրանիտ-պորֆիրների ինտրուզիաների հետ: Ոսկու ու մոլիբդենի հանքավայրերը անագ-վոլֆրամային գոտու նկատմամբ հյուսիս-արևմուտքում ու հարավ-արևելքում կազմում են երկու՝ Շիկա-Օլեկմիսյան ու Ալենգուե-Ուրովյան գոտիներ: Հանքայնացումը այդ երկու գոտիներում էլ կապված է գրանիտոիդ-

ների փոքր շտովները հետ, ընդ որում բնորոշ է Mo ու Au սերտ զուգակցումը (նրանց հետ հաճախ հանդիպում են Pb, Zn, Cu և ուրիշ մետաղներ):

Կապար-ցինկային գոտիները տեղադրված են ոսկի-մոլիբդենայիններից դեպի հարավ-արևելք (Մերձարգունյան գոտին) ու հյուսիս-արևմուտք (Շիլկինյան գոտին) և տարածականորեն կապված են միջին ու թիթու կազմովյալ փոքր ինտրուզիաների ու դայկաների, ավելի սերտորեն՝ մինչև կավճի հասակի լամպրոֆիրների դայկաների հետ (Կորմիրիցին, 1956):

Կապար-ցինկային հանքավայրերից շատերը հարստացած են As, Au, Sn-ով:

Ֆլյուորիտային հանքավայրերը համակենտրոնացված են գլխավորապես Արևելյան Անդրբայկալի հյուսիսային ու հարավային մասերում, որտեղ համապատասխանաբար առանձնացվում են ֆլյուորիտային հանքայնացման ներշա-տիկային ու Զաուրուլյունգյան գոտիներ, որոնք առաջացել են վերին յուրայի ու ստորին կավճի սահմանում յուրայի հասակի հրաբխ-նստվածքային շերտախմբերից կազմված նեղ իջվածքներում:

Նշված երկու գոտիներից բացի ֆլյուորիտային բավականին մեծ հանքավայրեր (Կալանգուսկի, Սոլոնեչնի և ուրիշ.) գտնվում են անագ-վոլֆրամային գոտում, որտեղ նրանք հարում են ուշմեզոզոյան հասակի իջվածքներին: Ավելի ուշ (վերին կավիճ-այալեոգեն ^o) աճում է Au, Sb, Hg էպիթերմալ հանքայնացման դերը, որը, սակայն, կապված է ակտիվացման երևույթների հետ ու կքննարկվի առանձին: Հստ երևույթին, յուրայի դարաշրջանի ակտիվացման պրոցեսների հետ պետք է կապել նաև Արևմտյան Անդրբայկալի ու Մերձբայկալի վոլֆրամ-մոլիբդենային հիմնական հանքայնացումը (Ջիրգայի հյուսիսարևմտյան ու Պերվոմայսկի մոլիբդենային հանքադաշտերը):

Հարավարևելյան Անդրբայկալի անագի հանքավայրերի տեղաբաշխման վերաբերյալ հետաքրքիր տվյալներ է բերում Ն. Ի. Տիխոմիրովը, իսկ վոլֆրամի հանքավայրերի համար՝ Ա. Գ. Շչեգլովը: Անագի բոլոր արդյունաբերական հանքավայրերը տեղադրված են մեզոզոյան անտիկլինալային ստրուկտուրաների սահմաններում ու հարում են խորքային բեկվածքներին, որոնց երկայնքով արտավիժել են էֆուզիվներն ու ներդրվել են անագաբեր գրանիտոիդները: Առանձնացվում են, հասակով իրար մոտ երկու անագաբեր ինտրուզիաների համալիրներ՝ Ասական-Շումիրովյան ու Կուկուլբեյան (J₂) քվարց-կասիտերիտային և գրեյզենային հանքավայրերով, ու ավելի երիտասարդ Գրբ-Գոլունյան կոմպլեքսը (J₂-J₃), որի հետ կապված են կասիտերիտ-սուլֆիդային (Խապչերանգա, Տարբալչեյ և այլն) հանքավայրեր: Վոլֆրամի համար Ա. Գ. Շչեգլովը (1960) առանձնացնում է տարբեր հասակի և տարբեր տեկտոնա-մագմատիկական պայմաններում տեղադրված հանքավայրերի հինգ խմբեր:

1. Au—շեկիտային երակներ արսենոպիրիտով ու ստիբնիտով, կապված մասամբ PZ₃, մասամբ ուշ T բայց մինչ J₂ հասակի գրանոդիորիտային-քվարցդիորիտային շտովների հետ: Հանքայնացումը զարգացած է Անդրշիկոյան լեռնային երկրում ու Շիլկա-Արգունի միջադեղատում:

2. Շեկիտի սկառնային հանքավայրեր, հաճախ մագնետիտի զուգակցումով, կապված PZ ու մասամբ մինչ J₃ հասակի գրանիտոիդային բաթոլիտների հետ (Բիստորինսկի հանքավայրը Շիլկա-Արգունի միջագետքում):

3. Պեղմատիտային, գրեյզենային ու բարձր ջերմաստիճանային հիդրո-

Ֆերմալ քվարց-վոլֆրամիտային երակներ, հաճախ կասիտերիտի խառնուրդով, կապված (ըստ Յու. Ա. Բիլբերնի) միջին թթվության գրանիտային բաթոլիտների ու ավելի ուշ գրանիտոդենների հետ, որոնց հասակը հետ J₂, բայց մինչ J₃ է:

4. Վոլֆրամիտային ու վոլֆրամիտ-շեելիտային (սուլֆիդներով հարուստ, բայց անադազուրկ) հանքավայրեր, որոնք կապված են հետբաթոլիտային փոքր խորուխուների գրանիտ-պորֆիրների ու պորֆիրանման գրանիտների փոքր ինտրուզիաների հետ (Բելուխա, Բուկուկա, Անտոնովա լեռը և ուրիշ հանքավայրեր): Հանքավայրերը տեղադրված են հիմնական անտիկլինալների թևերում, նրանց հասակը հետ J₃ է ու առաջացել են, ըստ երևույթին, ուշ փուլում:

5. Ցածր ջերմաստիճանային ֆերբերիտ-շեելիտային (ստիբնիտով, կինովարով, երբեմն ոսկով) հանքավայրեր, սովորաբար առանց տեսանելի կապի ինտրուզիաների հետ, երբեմն կապված ՇԴ-ՄԴ հասակի դացիտային դաշկանների հետ: Հանքավայրերը տեղադրված են Ունդինյան իջվածքի սահմաններում կալմի հասակի կոնզոլմերատներում և ավազաքարերում ու, հավանաբար, առաջացել են վերջնական փուլում: Այդ հանքավայրերի ձևավորման հերթականությունն է՝ Au (Բալիյ-Տասեկյան տիպ), Sb ու W (ֆերբերիտ, ավելի հազվադեպ՝ շեելիտ նովո-Իվանովսկի ու Բարուն-Շիվեինսկի հանքավայրերում), Hg (կինովարի երևակումներ):

Ա. Գ. Շչեգովը (1966, 1968) իր հետազոտ աշխատություններում Անդրբայկալի Au-Sb-W-Hg ցածր ջերմաստիճանային հանքայնացումը կապում է ակտիվացման պրոցեսների հետ:


Հեռավոր արևելք: Հեռավորարևելյան հանքային մարզն ընդգրկում է Անդրբայկալից դեպի արևելք գտնվող տարածքը Սիխոտե-Ալինի լեռնաշղթան ներառյալ ու հանքայնացման բնույթով մոտ է Տյուսիս-արևելքին ու Անդրբայկալին: Մակայն, նմանության հետ մեկտեղ կա էական տարբերություն՝ Հեռավորարևելյան մարզի մետաղածնությունը հիմնականում ալպիական հասակի է մեղողոյան հանքայնացման շատ փոքր դերով. ընդ որում վերջինը Տյուսիս-արևելքի ու Անդրբայկալի համար ունի վճռական նշանակություն:

Հեռավոր արևելքի երկրաբանությունն ու մետաղածնությունը ուսումնասիրել են բազմաթիվ երկրաբաններ, որոնցից հարկ է նշել՝ Ն. Ա. Բելյակսկուն, Գ. Պ. Վոլարովիչին, Ի. Յ. Գրիգորևին, Է. Պ. Իզոխին, Մ. Ի. Իցիկսոնին, Լ. Ի. Կրասնին, Ն. Ա. Ռադկևիչին, Մ. Գ. Ռուբին, Մ. Ա. Փավորսկայային, Յ. Կ. Շիպուլինին, Ա. Ա. Յակովինին և ուրիշներ:

Ն. Ա. Ռադկևիչի (1956) տվյալներով Հեռավոր արևելքի ծալքավոր հանքաքար մարզը (նկ. 21) ձևավորվել է հիմնականում մեզոզոյի վերջում—կալնոզոյում: Այստեղ արևմուտքից արևելք առանձնացվում են հետևյալ ստրուկտուրային միավորները՝ Տուրանյան հին զանգված, Բուրեխինյան անտիկլինորիում, Ներքինամուրյան իջվածք, Խանկայան զանգված, Դաուբիխինյան սինկլինալային զոնա, Սիխոտե-Ալինյան անտիկլինորիում, Սիխոտե-Ալինյան սինկլինորիում, Մերձափնյա անտիկլինալային բարձրացում:

Հանքաքար են պրոտերոզոյից մինչև երրորդական հասակի (վերջինների խիստ գերակշռմամբ) գրանիտոդեյալին ինտրուզիաները:

Մարզի արևմտյան մասերում մետաղածնությունը պալեոզոյան, մասամբ



Նկ. 21—Հարավային Պրիմորյեի մետաղածնային շրջանացման սխեմա (բառ Ն. Ա. Ռադկևիչի)։

1—վերին կավճի ու երրորդական էֆուզիվներ, 2—պլեոզոյան գրանիտներ, 3—մեզոզոյան (յուրայի ու վերին կավճի, մասամբ, Հավանաբար, երրորդական գրանիտներ), 4—երրորդական գրանիտոիդներ, 5—առաջնաակ Հանքային գոտիների սահմաններ, 6—մետաղածնային զոնաների ու ենթազոնաների սահմաններ, 7—տեկտոնական ստրուկտուրաների (իջվածքների ու բարձրացումների) սահմաններ։

Հանքային գոտիներ ու մետաղածնային զոնաներ՝

I—արևմտյան Հանքային գոտի պլեոզոյան ու վերադրված մեզոզոյան Հանքայնացմամբ, Iա—սահմանամերձ ոսկերեր գոտի, Iբ—Խանկայան հին զանգվածի մարզ պլեոզոյան Հազվագյուտմետաղային Հանքայնացմամբ։

II—Կենտրոնական Հանքային գոտի մեզոզոյան ու վերադրված երրորդական Հանքայնացմամբ, IIա—Դաուրիխիյան անագաբեր մետաղածնային զոնա, IIբ—Ուլախիյան անագազ-վոլֆրամ-ոսկերեր մետաղածնային զոնա։

III—Արևելյան Հանքային գոտի մեզոզոյան ու երրորդական Հանքայնացմամբ, IIIա—Սիդատունյան անագ-վոլֆրամ-ոսկերեր ենթազոնա, IIIբ—Սիխտոե-Ալինյան անագաբեր ենթազոնա, IIIգ—Մերձափնյա անագա-բազմամետաղային ենթազոնա։

մեզոզոյան (°) հասակի է, կենտրոնական մասերում՝ մեզոզոյան, երրորդական հանքայնացման վերադրումով, արևելյան մասերում՝ հիմնականում երրորդական հասակի:

Բոլոր դարաշրջանների համար ամենից բնորոշ մետաղը անագն է, լոկալ և երկրորդական նշանակություն ունեն Mo, W, Au, Fe, ինչպես նաև Pb, Zn, Sb, Hg:

Արևմտյան կամ Ուսուրի-խանկայան զոնայում քեմբրի ստորին մասում հայտնի են երկաթային քվարցիտների (Կիմկան, Գարինսկի) ու մետամորֆացված մանգանի հանքանյութերի (Հարավ-Նինգանյան) հանքավայրեր: Մտորին-միջին պալեոզոյան զրանիտների հետ կապված են անագի (քվարցկասիտերիտային ու զրեյզենների տուպազով, տուրմալինով, ֆլյուորիտով), ոսկու ոչ մեծ (երբեմն ստիբնիտի ու շեելիտի զուգակցմամբ) հանքավայրերը: Կենտրոնական կամ մեզոզոյան զոնայում (վերադրված երրորդական հանքայնացումով) ուշմեզոզոյան հանքաբեր գրանիտոիդների հետ կապված են Sn ու Sn-W, իսկ հեաբաթոլիտային դիորիաների փոքր ինտրուզիաների հետ՝ ոսկու հանքավայրեր, որոնք տարածականորեն ու ժամանակի տեսակետից առանձնանում են Sn-W հանքայնացումից:

Երրորդական հասակի Արևելյան հանքային գոտին ընդգրկում է Սիխոտե-Ալինի սինկլինորիումն ու Մերձափնյա անտիկլինալային բարձունքը. այստեղ առանձնացվում են հետևյալ հանքային ենթազոնաները.

1. Սիդատունյան Sn-W ու Au հանքայնացումով, կապված վերին կալվճի ու զլխավորապես երրորդական հասակի ինտրուզիաների հետ, ընդ որում Sn-W հանքայնացումը կապված է զրանիտների, իսկ ոսկին՝ հեաբաթոլիտային դիորիտների փոքր ինտրուզիաների հետ:

2. Սիխոտե-Ալինյան սուլֆիդ-կասիտերիտային, այդ թվում կասիտերիտ-բազմամետաղային (առանց W ու Au) հանքավայրերով:

3. Մերձափնյա, կազմված հրաբխածին հաստվածքներից ու կրաքարերից, որոնց հասակը տատանվում է տրիասից մինչև վերին կավիճ ու պալեոզեն, հատված երրորդական զրանոզիորիտներով: Կրաքարերում տեղադրված են սկառնային կապար-ցինկային հանքավայրեր (Տետյուխ և ուրիշներ), իսկ հրաբխածին ու ավազաքար-թերթաքարային ապարներում՝ սուլֆիդ-կասիտերիտային (անագ-բազմամետաղային) մերձակերեսային հանքավայրեր փայտանման կասիտերիտով, որոնք նման են Բոլիվիայի հանքավայրերին: Պալեոզոյան նստվածքային համալիրում զրանիտոիդների մերձկոնտակտային տեղամասերում առաջանում են երկաթաբեր սկառներ, որոնց վրա վերադրված է անագային ու բազմամետաղային հանքայնացում, իսկ տրիասի կրաքարերում զրանիտոիդների ելքերից ավելի հեռու զարգանում են հեղենբեր-գիտ-բազմամետաղային հանքանյութեր:

Կասիտերիտ-սուլֆիդային հանքավայրերը բազմազան են՝ մեզոզոյան նստվածքային ապարների մեջ հանքանյութերում առատ են երկաթի սուլֆիդներն ու քլորիտը, իսկ վերին կավճի ու պալեոզենի էֆուզիվներում առատ են կապարի ու ցինկի սուլֆիդները, փայտանման կասիտերիտը, սուլֆոստանանները, որը խոսում է հանքայնացման մերձակերեսային պայմանների մասին:

Այսպիսով, Հեոավորարևելյան հանքային մարզի մետաղածնությունը բնութագրվում է անագային հանքայնացման եռակի դրսևորմամբ (պալեոզո-

յում, մեզոզոյում, կաչնոզոյում): Արևմտյան, Կենտրոնական ու Արևելյան հանքային գոտիները, որոնց հասակը համապատասխանաբար Pz, Mz ու Pg է, առաջացել են մայրցամաքի ընդլայնման ընթացքում, ի հաշիվ օվկիանոսյան իջվածքը եզրապատող լայն գետտինկլինալային զոնայի: Արևմուտքից արևելք մետաղածնային զոնաների հասակը երիտասարդանում է, սակայն պետք է հաշվի առնել, որ խախտումների երկայնքով պալեոգենյան մետաղածնությունը տարածվում է դեպի արևմուտք մինչև Փոքր Խինգանը, որտեղ հայտնի են հետերոգեն գրանիտոիդների ինտրուզիաներն ու երրորդական հասակի անագային հանքայնացումը (Խինգանյան և ուրիշ հանքավայրեր): Հանքայնացումը ձգտում է խախտումների, որոնք մասամբ անցնում են զոնաների սահմաններով, մասամբ էլ հատում են նրանց, դրանով իսկ աններդաշնակորեն խախտելով հանքայնացման գոտերը տեղաբաշխումը:

Միջօրեականի մոտ ուղղության խորքային բեկվածքները հակում են էֆուզիվ ապարների զարգացման գոտիները, հիպաբիսալ ինտրուզիաները ու հիպոգեն հանքայնացումը: Բեկվածքների մոտ տեղադրված են բարդ կազմություն կասիտերիտ-սուլֆիդային հանքավայրերը. ամենաերիտասարդ խախտումներին են հարում ծարիրի ու սնդիկի հանքավայրերը:

Անտիկլինալային ստրուկտուրաների բարձրացման տեղամասերում մերկանում են գրանիտոիդների խոշոր զանգվածներն ու նրանց հետ կապված քվարց-կասիտերիտային ու անագաբեր սկանոնային հանքավայրերը. անտիկլինալների առանցքի սուղման տեղամասերում ավազաքարա-թերթաքարային հաստվածքներում զարգացած են կասիտերիտ-սուլֆիդային, իսկ կրաքարերում՝ հեդենբերգիտ-բազմամետաղային հանքավայրերը: Կտրվածքի վերևում, վերին կավճի ու պալեոգենի էֆուզիվներում, տեղադրված են կասիտերիտ-բազմամետաղային մերձակերեսային հանքավայրերը (Սինանչա և ուրիշ.): Առավել երիտասարդ հանքաբեր ինտրուզիաները ներկայացված են նեոգենյան տրախիաներով, անդեզիտներով, պորֆիրներով, շրջապատված դիկիտ-ալունիտային ապարների պսակներով, որոնց մեջ տեղադրված է ցածր ջերմաստիճանային Au-Ag հանքայնացումը (Սպիտակ լեռը, Մաեմի Ուստ-Ամուրյան շրջանում և ուրիշներ) ու ամբողջ Սիխոտե-Ալինյան սինկլինորիումի համար շատ սովորական սնդիկի բազմաթիվ երևակումներ:

Ըստ Ն. Ա. Բելյակևի (1955) Կենտրոնական սիխոտեալինյան ստրուկտուրայի կարին հարում է Sn-W-Mo հանքայնացման զոնան, որը հյուսիսային ուղղությամբ անցնում է ստորին կավճի հասակի ոսկեբեր զոնայի:

Ա ս ի ա յ ի հ ա ր ա վ - ա ր և և լ ք ն ընդգրկում է Չինական ժողովրդական Հանրապետության հարավային մարզերի տարածքը, Մալազիան, Հնդկաչին թերակղզու երկրները, ինչպես նաև Բիրմայի արևելյան մասը և Ինդոնեզիայի Բանկա ու Բիխոտոն կղզիները:

Մետաղածնային տեսակետից սա աշխարհի Sn-W-ի հարստագույն մարզն է, որը տալիս է անագի ու վոլֆրամի համաշխարհային հանույթի մինչև $\frac{2}{3}$ մասը. հսկայական նշանակություն ունեն նաև ծարիրի հանքավայրերն (ծարիրի համաշխարհային հանույթի $\frac{1}{2}$) ու սնդիկի, մոլիբդենի, բիսմութի խոշոր կուտակումները: Այստեղ լայն զարգացած են ավազաքարա-թերթաքարային, մասամբ կարբոնատային պալեոզոյան ու մեզոզոյան հասակի հաստվածքները, որոնք առաջացնում են հյուսիս-արևելյան ուղղության ծալքեր ու ներդրված են Յանշանյան կոմպլեքսի (J₃-C₁) գրանիտներով, տեղ-

տեղ ավելի երիտասարդ երրորդական գրանիտոիդներով: Անագային ու վոլֆրամային հանքանյութերի հանքավայրերը տեղադրված են Յանշանյան կոմպլեքսի գրանիտոիդային զանգվածներում կամ նրանց էկզոկոնտակտային զոնաներում՝ շատ կալուն տեկտոնական ճեղքերի երկայնքով:

Հանքավայրերի զլխավոր գենետիկական տիպը բարձր շերմաստիճանային հիդրոթերմալայինը կամ գրեյզենայինն է, ներկայացված քվարց-վոլֆրամիտային կամ քվարց-կասիտերիտային երակներով, որոնք հաճախ պարունակում են փոքր քանակությամբ մոլիբդենիտ, բիսմուտին, բերիլ, տոպազ, ֆլյուորիտ և մի շարք այլ միներալներ. ավելի փոքր նշանակություն ունեն համեմատաբար ցածր շերմաստիճանային (մեզոթերմալ) սուլֆիդ-կասիտերիտային կամ սուլֆիդ-վոլֆրամիտային հանքանյութերի, ինչպես նաև շեյլիտային, կամ կասիտերիտ-ստանինային հանքանյութերի սկանային հանքավայրերը:

Քվարց-վոլֆրամիտային երակները, վոլֆրամային հանքավայրերի զլխավոր տիպը լինելով, ըստ խորություն հարստանում են մոլիբդենիտով, իսկ երակների վերին հորիզոններում աճում է կասիտերիտի, բիսմուտինի ու բնածին բիսմուտի գերը:

Քվարց-կասիտերիտային երակներն ու անագաբեր գրեյզենները անագային հանքավայրերի զլխավոր տիպն են ու ներկայացնում են կոմպլեքսային հետաքրքրություն՝ զլխավոր մետաղից բացի (անագ) նաև ուղեկցող W, Bi, Mo, Be-ի տեսակետից. երկրորդական նշանակություն ունեն կրաքարերում տեղադրված սուլֆիդ-կասիտերիտային հանքավայրերը (Բեստրիս-Մաչն հանքավայրը Կինտա շրջանում, Մալազիայում), որոնք ներկայացված են տրեմոլիտ-արսենոպիրիտ-կասիտերիտային հանքանյութերի (սուլֆիդների ու մագնեզիումի բորատի խառնուրդով) խողովակաձև կոտակումով:

Վոլֆրամիտային հանքանյութերի առավել մեծ կրտակումները գտնվում են Ցզյանսի մարզում (ՉԺՀ), իսկ համեմատաբար փոքրերը՝ Բիրմայում, Տաիլանդում ու Մալազիայում: Անագով արտակարգ հարուստ է Մալազիան, Յունան մարզը (ՉԺՀ), Բանկա ու Բիխտոն կղզիները (Ինդոնեզիա): Հարկ է նշել, որ և վոլֆրամի, և հատկապես անագի համար, ժամանակակից հանույթում մեծ դեր են խաղում էլյուվիալ ու ալյուվիալ ցրոնները, կապված արմատական հանքավայրերի քայքայման հետ (կասիտերիտային հարստանյութերի համաշխարհային հանույթի 60%-ը, իսկ վոլֆրամիտային հարստանյութերի 20—25%-ը բաժին է ընկնում Ասիայի հարավ-արևելյան շրջանների ցրոններին):

ՉԺՀ հարավարևելյան մարզերը (Խունան, Գուանսի, Յունան և այլն) հարուստ են նաև ծարիրով ու սնդիկով. ծարիրի աշխարհի խոշորագույն Սի-Գուան-Շան հանքավայրը (ծարիրի համաշխարհային հանույթի մինչև 50%) ու բազմաթիվ ծարիր-սնդիկային ավելի փոքր հանքավայրերը հարում են Կուէյժոու քիմերյան հանքային գոտուն, որը ձգվում է լայնակի 700 կմ-ից ավելի:

Հանքայնացումը տեղադրված է սիլուրի բրեկչացած ու կայծքարացած կրաքարերում, որը ծածկված է էկրանավորող թերթաքարերով: Հանքանյութերի շերտաձև հզոր (50 մ-ից ավելի) կոտակումները ներկայացված են կայծքարային բրեկչիայով, ներթափանցված ու ցեմենտացված ստիբնիտի հոժ նյութով ու ասեղնաձև բյուրեղներով. տեղ-տեղ ծարիրային հանքայնաց-

ման վրա վերադրվում է ավելի ուշ սնդիկային հանքայնացումը կալցիտի, քիմիկարի ու պիրիտի հատող բարակ երակիկների ձևով:

Մագմամբ հանքայնացումը կապվում է վերին յուրայի (Յանշանյան) էլամ երրորդական (°) հասակի գրանիտոիդների հետ:

Մարիբի, սնդիկի ու մկնդեղի (ռեալգար-աուրիպիզմենտային հանքանյութեր) բավականին խոշոր հանքավայրեր, տեղադրված երրորդական հասակի կարմիր կավերում, հայտնաբերված են Գուանսի մարզում, ինչպես նաև Յուն-նանի մարզի տրիասի նստվածքներում: Այդ ցածր ջերմաստիճանային Sb-Hg-As հանքավայրերի համալիրը կապվում է երիտասարդ երրորդական գրանիտոիդների հետ:

Հարավարևելյան Ասիայի մետաղածնային մարզին է վերագրվում նաև Հայնան կղզին (ՉժՉ), որտեղ մերկանում է Յանշանյան գրանիտների մեծ զանգվածը և նրա հետ կապված քվարց-կասիտերիտային բազմաթիվ հանքավայրերը:

Խաղաղօվկիանոսյան հանքային գոտու Ասիական Ճյուղի արտաքին ղոնային ղուգահեռ ձգվում է ներքին ղոնան, որը հյուսիսից հարավ ներկայացված է հետևյալ հանքային մարզերով՝ Կամչատկա-Կորյակյան լեռնաշխարհը Կուրիլյան ու Սախալին կղզիներով, Ճապոնիան, Տայվանը, Ֆիլիպինյան կղզիները, նոր Գվինեան, նոր Զելանդիան և Օվկիանիայի կղզիները:

Կամչատկայան լեռնաշխարհը, Կուրիլյան, Սախալին կղզին: Այս մարզի երկրաբանությունը ու մետաղածնությունը հայտնի են մեզ Մ. Վ. Բոգիդակի, Գ. Մ. Վլասովի, Մ. Մ. Վասիլևսկու, Գ. Պ. Վերգունովի, Ս. Զ. Գորբաչևի, Բ. Խ. Նդրազարովի, Վ. Տ. Մատվենկոյի, Ի. Մ. Ռուսակովի և ուրիշների աշխատություններից:

Մարզի ձևավորումը տեղի է ունեցել ալպիական դարաշրջանում (C₁₂-Pg). այդ նույն հասակին է վերագրվում նաև հանքայնացումը:

Գեոսինկլինալային իջվածքի վաղ փուլում տեղի է ունեցել վերին կավճի ու պալեոգենի հոր հրաբխանստվածքային հաստվածքի կուտակում, որի մեջ տեղագրված են կոլչեգանային, գլխավորապես պղնձի հանքանյութերի, բազմաթիվ հանքավայրեր ու երևակումներ. այդ նույն հաստվածքին են հարում էքսհալյացիոն-նստվածքային, մասամբ ցածր ջերմաստիճանային հիդրոթերմալ ծագման մանգանային բյուրեղային հանքանյութերի կուտակումները: Հանքավայրերի այդ տիպերը (կոլչեգանային պղնձի ու էքսհալյացիոն-նստվածքային մանգանի) լայն դարգացած են ոչ միայն Կամչատկայում այլև Սախալին կղզում (Կրիլոն թերակղզին հարավում), Կուրիլյան կղզիներում և շարունակվում են Ճապոնիայում: Կամչատկայի վերին կավճի-պալեոգենի էֆուզիվներում հայտնի են պղինձ-կոլչեգանային հանքավայրերը, որոնցից առավել նշանակալիցը Կիմլինյան երակային հանքադաշտն է. վերջինը հանքամարմինների ձևով ու հանքանյութերի կազմով նման է Հայկական ՍՍՀ Ղափանի հանքավայրին:

Մի շարք շրջաններում (Պետրոպավլովսկ քաղաքի շրջակայքում, Նիկոլսկի լեռան քարափը, Նատայա ծովածոցը և այլն) վերին կավճի հրաբխածին ու տուֆա-կալծքարային ապարներում հայտնի են պիրոլուզիտ-պսիլոմիլանային բյուրեղային հանքանյութերի հանքավայրերը, որոնք նման են Փոքր Կովկասի, Թուրքիայի ու Բուլղարիայի նույնատիպ հանքավայրերին: Վաղ փուլին է վերագրվում նաև բազիտների-հիպերբազիտների ներդրումը,

որոնք հարում են Պենսիլվանիայի ծովախորշի շրջանի, Միջնալեռնաշղթայի ու Արևելյան Կամչատկայի խորքային բեկվածքներին: Արևմուտքից դեպի արևելք հիպերբազիտների հասակը փոխվում է Cr_1 և Cr_2 -ից մինչև վերին էոցեն. նրանց հետ ծագմամբ սերտորեն կապված են քրոմիտի ոչ մեծ հանքավայրեր, ասբեստի ու պլատինի խմբի մետաղների երևակումներ: Միջին փուլն ուժեղ արտահայտվել է Կամչատկայի Միջնալեռնաշղթայի հարավային մասում ու Փանալյան լեռնաշղթայում, անտիկլինորիումի (հին ապարներով միջուկում) սահմաններում, ներդրված օլիգոցեն-միոցենի հասակի չափավոր թրոփոլիտների գրանիտոիդներով, որոնց հետ կապված է $Ca-Mo$ հանքայնացումը (Վորովսկի, Տումանի և ուրիշ հանքավայրեր): Նրանք նման են Հայկական ՄՍՀ-ի պղինձ-մոլիբդենային հանքավայրերին (Քաջարան, Ագարակ, Հանքավան և այլն):

Ըստ Գ. Մ. Վլասովի և Մ. Մ. Վասիլևսկու (1959) պղինձ-մոլիբդենային հանքավայրերը տեղադրված են խորքային բեկվածքին հարող նեոգենի հասակի երկրորդական քվարցիտների հանքային ղոնայում, որն անցնում է Կամչատկա-Կորյակյան լեռնաշղթաների հարավարևելյան լանջերով 1000 կմ-ից ավելի: Զոնայի սահմաններում զարգացած են գլխավորապես պալեոգենի ու միոցենի հրաբխածին նստվածքները, որոնք ներդրված են գրանիտոիդներով (գրանոզիտիտներ, մոնցոնիտներ և այլն):

Վորովսկայա ու Լունտոս գետերի պլուտոններում, փոփոխված գրանոզիտիտ-պորֆիրներում շուրջ 1 կմ լայնությույն և մինչև 10 կմ երկարությույն ունեցող ղոնայում դիտվում են խալկոպիրիտի ցան ու քվարց-մոլիբդենիտային բարակ երակիկներ: Հանքայնացումը ձգտում է գրանոզիտիտ-պորֆիրների դալկաներին, ընդ որում հարստացած տեղամասերը ձգվում են դալկաների երկայնքով (ինչպես Հայկ. ՄՍՀ Քաջարանի հանքավայրում):

Կամչատկայի Միջնալեռնաշղթայում լավ է արտահայտված ուղղաձիգ ղոնալականությունը հանքայնացման հետևյալ ղոնաներով (վերից վար)՝ բնածին ծծումբ ու կինովար (As, Sb, Se -ի խառնուրդով), ոսկի-ծարիրային, արծաթ-կապար-ցինկային, պղինձ-մոլիբդենային, որը կրկնում է Ճապոնիայի նեոգենյան հանքային ղոնաների ղոնալականությունը (T. Kato, 1940):

Հաշվի առնելով էրոզիոն խորությունը և ուղղաձիգ ղոնալականությունը, հեղինակները հանքայնացման համապատասխան տեսակների հայտնաբերման կանխատեսումներ են անում Կամչատկայի Միջնալեռնաշղթայում ու Կորյակյան լեռնաշխարհում, ըստ երևույթին, նաև Սախալինում ու Կուրիլյան կղզիներում: Վերջնական փուլն արտահայտված է շատ ուժեղ: Այդ փուլում տեղի է ունեցել դացիտների ու անդեզիտների փոքր ինտրուզիաների ներդրումը, որոնք հարում են պալեոգենի հրաբխածին հաստվածքը հատող բեկվածքներին. փոքր ինտրուզիաների հասակը միոցեն-պլիոցենյան է: Այդ օջախի փոքր ինտրուզիաների հետ է կապված երկրորդային քվարցիտների առաջացումը, որոնք ներփակում են $Hg, Au-Ag$ (Կիտկոյ), As (աուրիպիգմենտ և ուսալգար) ցածր ջերմաստիճանային հանքայնացումը:

Բ. Խ. Եղիազարովի և ուրիշների (1965) տվյալներով, Կորյակյան լեռնաշխարհում, ինչպես և Կամչատկայում, լայն տարածված են վերին կավձի-էոցենի հիպերբազիտներն ու օլիգոցեն-միոցենի հասակի գրանիտոիդների փոքր ինտրուզիաները. նրանց մետաղածնության բնույթը նույնն է, քանի որ Կամչատկայից հանքային ղոնաները շարունակվում են դեպի Կորյակյան լեռ-

նաշխարհը, կազմելով սնդիկային ու ոսկի-արծաթային շատ մեծ տարածություն ընդգրկող (ռեզիոնալ) հանքայնացման գոտի:

Կինովարը հաճախ ղուգակցվում է անտիմոնիտի, ռեալգարի, աուրիպիգմենտի հետ, կազմելով ցանավոր և երակիկա-ցանավոր հանքայնացման տեղամասեր ավազաքարերում ու թերթաքարերում. բավականին բնորոշ է նաև ոսկի-արծաթային հանքայնացումը (արմատական երևակումներն ու ոսկու ցրոնները):

Վերին կավձի ու պալեոգենի հրաբխածին-կայծքարային նստվածքներում տեղադրված են կոլչեդանային պղնձի ու բյուրեղային բրաունիտ-պիրոլյուզիտ-հեմատիտային հանքանյութերը (նաշայվայամյանը և ուրիշ երևակումներ), որոնք ունեն էքսհալյացիոն-նստվածքային ու հիդրոթերմալ ծագում:

Բազիտների ու հիպերբազիտների հետ կապված են բրոմիտի հանքավայրերը, տիտանամագնետիտի, ասբեստի ու պլատինի խմբի մետաղների (Պենժինա գետի ավազանի և ուրիշ ցրոնները) երևակումները:

Ծարիրա-սնդիկային հանքայնացումն ավելի արտահայտված է Կորյակլյան անտիկլինորիումում, կազմելով էնիշայվեեմյան, Նայվալ-Վանիտատյան, Վիվնիկովյան առավել հարուստ կուտակման զուրբը: Ծարիր-սնդիկային հանքազատներում երբեմն զարգանում են մկնդեղային (ռեալգար-կինովարով), արծաթ-կապար-ցինկային (ոսկով) ու բարիտային հանքավայրերը, որոնք տարածականորեն հարում են անդեզիտների ու դացիտների դականերին ու շտոկներին (նեբերին °) և վերջինների հետ կապված են, հավանաբար, մագմատիկական օջախի ընդհանրությամբ:

Ըստ Գ. Մ. Վլասովի դիտումների, Կամչատկայի Միջնալեոնաշղթայում, այսինքն ցածր ջերմաստիճանային Hg-Sb-As-Au-Ag հանքայնացման զոտու հարավային մասում, հանքայնացումը մեկուսանում է երկրորդային քվարցիտներում, որոնք առաջացել են ուշպլիոցենյան հրաբխածին ապարների հաշվին, նրանց վրա սովորաբար-հիդրոթերմալ լուծույթների ազդեցության հետևանքով: Հաշվի առնելով այդ տվյալները, ցածր ջերմաստիճանային հանքայնացման հասակը պետք է համարել ուշպլիոցենյան և այն կապել մարզի զարգացման վերջնական փուլի հետ:

Կամչատկայի սնդիկային հանքայնացումն ունի պլիոցենի հասակ. սակայն կան տվյալներ այն մասին, որ սնդիկային հանքայնացումը շարունակվում է նույնիսկ շորրորդական դարաշրջանում ու որոշ տեղամասերում կինովարի նստեցումը տեղի է ունենում այժմյան պայմաններում: Այսպիսով, Գ. Մ. Վլասովի և ուրիշների ենթադրությունը (1958) հաստատվեց: Պարզվեց, որ Ապապեկյան տաք աղբյուրներում դիտվում է կինովարի ժամանակակից կուտակում. այդ աղբյուրների ջրերը պատկանում են ազոտա-արկալային թերմերի քլորիդա-սովֆատային տիպին 96°C ջերմաստիճանով և համեմատաբար բարձր արկալային ռեակցիայով ($\text{PH} \geq 8$). նրանք նման են Կալիֆոռնիայի որոշ աղբյուրների ջրերին, որոնք նույնպես ներկայումս նստեցնում են կինովար:

Կորյակ-Կամչատկայի մարզի սնդիկային հանքայնացումը վերագրվում է բուն սնդիկային հանքային ֆորմացիային (հանքանյութերում ռեալգարի, պիրիտի, խալկոպիրիտի, սֆալերիտի շնչին ներկայությամբ) ու, հավանաբար, կապված է նեոգենի հրաբխային գործունեության հետ:

Գ. Մ. Վլասովի տվյալներով, ծարիր-սնդիկային ու մկնդեղային (ռեալգա-

բային) հանքայնացումը հարում է նույն երկրորդային քվարցիտների նեոգեն-
յան զոնային, որոնց մեջ տեղագրված են պղինձ-մոլիբդենային, կապար-
ցինկային, ոսկու հանքայնացման երևակումներն ու բնածին ծծմբի հանքա-
վայրերը: Մի շարք տվյալների համաձայն հանքայնացումը տեղի է ունեցել
փոքր խորություններում, բայց մի փոքր ավելի խորը քան հրաբխածին ծծմբի
մերձակերեսային հանքավայրերի ձևավորումը:

Կուրիլյան կղզիների ու Սախալինի մետաղածնություն մասին տվյալ-
ները դեռ քիչ են (Вергунов, 1962). միոցենի—ստորին պլիոցենի գրանի-
տոիդների հետ կապված են բազմամետաղային ու ոսկի-արծաթային հան-
քանյութերի բազմաթիվ երևակումներ (Կունաշիր, Պարամուշիր և ուրիշ կղզի-
ներում), ինչպես նաև սնդիկի, մկնդեղի, պղինձ-կոլչեդանային հանքանյու-
թերի երևակումներ ու մոլիբդենի նշաններ:

Չորրորդական հրաբուխների հետ կապված են բնածին ծծմբի հանքա-
վայրերը:

Սախալին կղզում կավճի հասակի ուլտրահիմքային ապարների հետ կապ-
ված են քրոմիտի, պլատինի, նիկելի երևակումները, իսկ պալեոգենի շափա-
վոր թթու գրանիտոիդների հետ՝ ոսկու և արծաթի, պղինձ-կոլչեդանային,
սնդիկի ու ծարիրի բազմաթիվ երևակումները:

Կամչատկա-Կորյակյան զոնայի, Կուրիլների ու Սախալինի երկրաբանա-
կան զարգացումն ավարտում են ուշմիոցենյան անդեզիտա-բազալտների ու
ուշպլիոցենյան և չորրորդական դացիտների ու լիպարիտների արտավիժում-
ները, տուֆալավաների (իգնիմբրիտների) ու պեմզաների մեծ քանակու-
թյունների կուտակումը, տաք հանքային աղբյուրների գործունեությունը:

Հանքայնացման առանձին փուլերի վարգացման տարածքները մեկուսա-
նում են տարածականորեն, կազմելով Կամչատկայում պարզ արտահայտված
զոտիներ (նկ. 22):


Նկարագրված մարզը (Կամչատկա-Կորյակյան լեռնաշխարհը, Կուրիլները,
Սախալին կղզին) նման է Փոքր Կովկասին (Магакьян, 1964) ու հեռանկա-
րային է համարվում պղինձ-մոլիբդենային, պղինձ-կոլչեդանային, ոսկի-ար-
ծաթային հանքավայրերի տիպերի տեսակետից:

Նոր հանքավայրերի որոնումներն պետք է նպատակաուղղել, հաշվի առ-
նելով պղինձ-կոլչեդանային հանքայնացման սերտ կապը զարգացման վաղ
փուլի փոքր ինտրուզիվների հետ (վերին կավճի ու պալեոգենի էֆուզիվների
մեջ), պղինձ-մոլիբդենային հանքայնացման կապը միջին էտապի միոցենի
գրանիտոիդների հետ, վերջապես ցածր ջերմաստիճանային ոսկի-արծաթա-
յին ու սնդիկ-ծարիր-մկնդեդային հանքայնացման կապը միոցենի և ստորին
պլիոցենի հասակի անդեզիտների և դացիտների փոքր ինտրուզիաների ու
էքստրուզիաների հետ:

Օ խ ո տ ս կ-Չ ու կ ո տ յ ա ն հ Ր ա բ խ ա ծ ի ն զ ո տ ի ն նկարագրված է
ն. Կ. Ուստիևի, Վ. Տ. Մատվենկոյի և ուրիշների աշխատանքներում և գրա-
վում է միջանկյալ դրություն՝ Յանա-Կուլիմյան ու Չուկոտյան մեզոզոյան
ծալբավոր զոնաների և Կամչատկա-Կորյակյան կայնոզոյան զոնայի միջև:

Օխոտսկ-Չուկոտյան հրաբխածին գոտու մետաղածնությունը կապված է
էֆուզիվների ու էքստրուզիաների, ինչպես նաև գրանիտոիդային ինտրուզիա-
ների հետ, որոնք պատկանում են Օխոտսկյան վերին կավճային համալիրին
ու ավելի երիտասարդ գրանիտոիդներին: Կավճի հասակի էֆուզիվների ու

էքստրուզիաների հետ զուգակցված հայտնի են ծարիր-սնդիկային երևակումներ (Պլամենի, Պոլյանսկի, Օմլերկայսկի հանքավայրերը), էպիթերմալ ոսկիարծաթային երևակումներ (Ռուդնայա բլուրը, Ագատովսկի, Օտոելնի և այլն), կասիտերիտ-ստանինային հանքանյութերի առանձին հանքավայրեր (Խետինսկի, Կանդիչանսկի), բնածին պղնձի երևակումներ էպիդոտացված անդեզիտներում, ինչպես նաև կապար-ցինկային հանքանյութեր ու ալունիտ:



Նկ. 22—Կամչատկա-Կորյակյան զոնայի մետազանության զարգացման փուլերը (ըստ Գ. Մ. Վլասովի ու Հ. Գ. Մադարյանի). հանքայնացման Ալպիական դարաշրջան՝ վաղ փուլը (C₁₂-P_ց) 1—կոլչեզանային (պղինձ), մանգանային ու քրոմիտային հանքայնացում. միջին փուլ (Olg-Mioc) 2—պղինձ-մոլիբդենային հանքայնացում. վերջնական փուլ (Plioc) 3—ցածր ջերմաստիճանային Hg, Au, Ag, Sb, As հանքայնացում, 4—գլխավոր բեկվածքներ:

Օխոտսկյան ինտրուզիվ կոմպլեքսի հետ կապված են ոսկու երևակումներ (Օխոտսկ, Ոսկյա լեռնաշղթա և այլն), քվարց-վոլֆրամիտ-մոլիբդենային և այլն). գրանոզիորիտային զանգվածներում հանդիպում են առանձին հանքային հանգույցներ (Մագադանյան, Երոպոլյան, Չաանտալյան, Տելեկայան և այլն). գրանոզիորիտային զանգվածներում հանդիպում են առանձին երակներ խալկոպիրիտով, արսենոպիրիտով, բիսմութինով, շեելիտով և մագ-

նետիտի առանձին հզոր երակներ, բազմամետաղային հանքավայրերի երակներ ու ոսկեբեր (Աս մինչև 4 գ/տ) պիրիտի ոսպնյակներ: Օխոտակ-Չուկոտյան հրաբխածին դոտուն բնորոշ է սկզբնական (վերին կավձի էֆուզիվներ ու էքստրուզիվներ, հավանաբար Օխոտակյան մինչսենոմանյան ինտրուզիվ կոմպլեքս) ու միջին կամ ուշ (վերին կավձի-պալեոգենի ինտրուզիվ կոմպլեքս) դարդացման փուլերի արտահայտում: Մետաղածնային տեսակետից պետք է ընդգծել մոլիբդենի, վոլֆրամի, կապարի ու ցինկի առաջատար, ոսկու, արծաթի, սնդիկի, ծարիրի, անագի երկրորդական ու երկաթի, պղնձի, մկնդեղի, ալյումինի և այլ հանքանյութերի փոքր դեբը (ըստ Վ. Տ. Մատվենկոյի, 1960):

Ճապոնիա: Ճապոնական կղզիների (Հյուսիսից հարավ՝ Հոկայդո, Հոնսյու, Միկոկու, Կյուսյու և այլն) շրջայի երկրաբանությունն ու մետաղածնությունը մեզ հայտնի են Մ. Սաթոյի, Ի. Սեկինեի, Տ. Տատսումիի, Տ. Վատանաբեի (M. Sato, I. Sekine, T. Tatsumi, T. Watanabe) և ուրիշների աշխատություններից: Ճապոնիայի տարածքի համար առանձնացվում են էնդոգեն հանքանյութային շրջա դարաշրջաններ՝ 1) ուշպալեոզոյանից մինչև վաղմեզոզոյան, 2) ուշմեզոզոյանից մինչև վաղերրորդական, 3) ուշերրորդական, 4) շորրորդական: Մետաղածնային առաջին երկու դարաշրջանների համար բնորոշ են երկաթի ու մանգանի բարձր ջերմաստիճանային երակային, սկառնային, ինչպես նաև նստվածքային ու մետամորֆոզեն հանքավայրերը, իսկ երկու ավելի երիտասարդ դարաշրջանների համար՝ պղնձի, գունավոր ու հազվագյուտ մետաղների ցածր ջերմաստիճանային հիդրոթերմալ երակային ու մետասոմատիկ հանքավայրերը (նկ. 23): Երկրի համար բնորոշ են պղնձաբեր պիրիտի շերտաձև կուտակումները բյուրեղային թերթաքարերում (Բեսսի և ուրիշներ) ու գունավոր մետաղների «Կուրոկո» տիպի հանքավայրերը (սև հանքանյութ, կազմված մուգ սֆալերիտից, գալենիտից, ինչպես նաև խալկոպիրիտից, բարիտից ու գիպսից), որոնք հարում են Հյուսիսարևելյան Ճապոնիայի միոցենի հասակի հրաբխածին ֆորմացիաներին (Կոդակա, Միրենտոկո և ուրիշ հանքավայրեր):

Ճապոնիայի պղնձի երակային ու մետասոմատիկ միոցենի ու ավելի հին հասակի հանքանյութերը հաճախ սերտ կապված են կապար-ցինկային, իսկ երբեմն էլ անագ-վոլֆրամային հանքանյութերի հետ (Իկունո-Ակենտրե, Օբիրա, Յուգու, Ասիա և այլն):

Ճապոնիայում լայն տարածված են ոսկի-արծաթային ցածր ջերմաստիճանային միոպլիոցենյան հասակի հանքավայրերը:

Պալեոզոյան հանքավայրերը ներկայացված են մանգանի ու երկաթ-մանգանային հանքանյութերի շերտաձև կուտակումներով, երբեմն էլ պղնձաբեր պիրիտի, հավանաբար էքսհալացիոն-նստվածքային տիպի հանքանյութային:

Մեզոզոյան հանքավայրերն իրենց բնույթով պալեոզոյան շմետամորֆացված հանքավայրերի նմանակներն են և նույնպես ներկայացված են երկաթի, մանգանի կամ պղնձաբեր պիրիտի էքսհալացիոն-նստվածքային կուտակումներով: Յուրայի հասակի բազիտների-հիպերբազիտների հետ կապված են քրոմիտի, նիկելի արսենիդների ու նիկել պարունակող պիրոտինի ցածրորակ հանքանյութերի հանքավայրերը:

Ոսկու, բազամետաղային հանքանյութերի (պղինձ, կապար ու ցինկ), ծծմբակոլչենդանային ու երկաթի հանքավայրերի կավձի հասակի մետաղա-

հետ: Ավելի երիտասարդ վերին կավճի ու պալեոգենի հասակի թթու գրանիտների հետ կապված են անագ-վոլֆրամային ու մոլիբդենային հանքանյութերի բարձր ջերմաստիճանային երակային ու սկառնային հանքավայրերը. Հոկայդո կղզում կավճի բազիտ-հիպերբազիտների հետ կապված են քրոմիտի ու նիկել պարունակող պիրոտինային հանքանյութերի կուտակումները:

Առավել ուժեղ է արտահայտվել Ճապոնիայի տերիտորիայում ուշ երրորդական հանքանյացումը, կապված անդեզիտների ու ռիոլիտների փոքր ինտրուզիաների և վերին միոցեն-պլիոցենի հրաբխականության հետ: Այդ դարաշրջանում առաջացել են ոսկի-արծաթային հանքանյութերի բազմաթիվ հանքավայրեր, գտնավոր մետաղների «Կուրոկո» տիպի կուտակումներ, ինչպես նաև անագի, վոլֆրամի, մոլիբդենի, մանգանի, ծարիրի ու սնդիկի հանքանյութերը որոշ մարզերում:

Ոսկի-արծաթային հանքավայրերում գլխավոր միներալներն են բնածին ոսկին (սովորաբար նրա էլեկտրում տարբերակը), պիրարգիրիտը, արգենտիտը, բնածին արծաթը, երբեմն ոսկու և արծաթի տելուրիդները, իսկ երակային միներալներից խալցեդոնը, կալցիտը, ազուլյարը: Ոսկի-արծաթային որոշ հանքավայրերում հանքանյացումը ըստ խորության անցնում է պղնձային ու բազմամետաղային հանքանյութերի էնարգիտի ու զալենիտի լայն դարգացմամբ, երբեմն անագի ու վոլֆրամի միներալների խառնուրդով (Ակենոբե, Իկունո, Աշիո և այլն):

1970 թ. մեզ հաջողվեց դիտել ոսկի-արծաթային երկու շահագործվող հանքավայրեր Կյուսյու կղզում՝ Կուշիկինո ու Կազուգա:

Կուշիկինո հանքը շահագործվում է հարյուրավոր տարիներ շարունակ և համարվում է Ճապոնիայի ոսկի-արծաթային ամենաարդյունավետ հանքավայրերից մեկը (մինչև պարունակությունը հանքանյութերում՝ Au 5—6 գ/տ, Ag 50—60 գ/տ): Միոցենի հրաբխածին ապարների մեջ տեղադրված են մինչև երկու տասնյակ հանքային երակներ, որոնք ըստ տարածման հետամտվում են 2,5 կմ և ունեն մինչև 60 մ հզորություն (նո. առաջին գլխավոր երակի համար):

Երակների տարածումը լայնակի ու հյուսիսարևելյան է, տարածման խորությունը 400—500 մետրից ավելի: Երակների ձևավորումը ընթացել է շորս փուլով:

1. Քվարցացում՝ խալցեդոնանման քվարցի, ազուլյարի, պիրիտի, սերիցիտի ու կալցիտի նստեցումով. այս փուլը աղքատ է ոսկուց (1-ից մինչև մի քանի գ/տ Au):

2. Երակային քվարցի ու նրա հետ ոսկու ու արծաթի գլխավոր մասի նստեցում: Բնորոշ է երակային ու հանքային միներալների կրուտոֆիկացիոն տեքստուրան, որն արտահայտված է ճեղքերի պատերին կամ բրեկչիայի բեկորների շուրջը հանքային միներալների նստեցումով, այսինքն «Օղակային հանքանյութերի» («ring ores») առաջացմամբ: Հանքանյութերում առկա են էլեկտրումը, պիրարգիրիտը, ստեֆանիտը, արգենտիտը, տետրաէդրիտը և ուրիշ սովորյալներ, որոնք ներթափանցում են քվարցի մեջ, առաջացնելով մինչև մի քանի մմ հզորության բարակ մուգ գույնի շերտիկներ:

Ոսկիով ու արծաթով հարուստ այդ շերտիկները կոչվում են «գինգուրո» ու պարունակում են մի քանի տասնյակ-հարյուրավոր գլտ Աս:

3. Կալցիտի ու մանգանա-կալցիտի նստեցումը բարակ երակիկների ձևով, որոնք հատում են առաջին երկու փուլերի հանքանյութերի ազրեզատները:

4. Ուշ հանքավորիկ քվարց, որը լցնում է ամենաուշ բարակ ձեղքիկները: Կազուգա բաց հանքում շահագործվում են շտովերկային ոսկի-արծաթային հանքանյութերը, որոնք տեղադրված են միոցենի քվարցացած տուֆերում ու տուֆոբրեկչիաներում:

Այստեղ գլխավոր հանքային միներալներն են էլեկտրումն ու էնարգիտը, լյուցոնիտի, պիրիտի, բոռնիտի խառնուրդով. ոսկու պարունակությունը տեղտեղ հասնում է մի քանի հարյուր գլտ:

Դացիտայինից մինչև ուիլիտային կազմության միոցենի էքստրուզիվների հետ, բացի ոսկի-արծաթային հանքավայրերից, սերտորեն կապված են նաև պղնձի, կապարի ու ցինկի բազմաթիվ հանքավայրեր, երբեմն անագի ու վոլֆրամի խառնուրդով:

Ճապոնացի երկրաբաններ Տ. Վատանաբեի ու Տ. Տատսումեի տվյալներով (1970) սուլֆիդային սինգենետիկ շերտաձև մարմինները հանդիպում են այստեղ էպիգենետիկ շտովերկների ու մետասոմատիկ առաջացումների հետ միասին, հաճախ միևնույն հանքավայրում: Հանքանյութերի զուգակցումները տարբեր են՝ կուրոկո կամ սև հանքանյութեր—(սֆալերիտ, գալենիտ, տետրաեդրիտ, բարիտ), օկո կամ դեղին հանքանյութեր (խալկոպիրիտ, պիրիտ) ու կեյկո կամ կալքոբարային հանքանյութեր (քվարց, պիրիտ, խալկոպիրիտ): Կուրոկո տիպի բոլոր հանքավայրերը սերտորեն կապված են միոցենի ստորջրյա թթու հրաբխականության հետ, ներկայացված դացիտ-ուիլիտների շարքի լավանների ծածկոցներով, հրաբխային բրեկչիաներով ու պիրոկլաստիկ ապարներով:

Գեոսինկլինալային փուլի հանքանյացման մեջ առանձնացվում է երեք տիպ՝ պղնձ-պիրիտային, երկաթ-մանգանային, երկուսն էլ կապված ավելի հիմքային կազմության (անդեզիտա-դացիտների) ստորջրյա հրաբխականության հետ և պղնձ-բազմամետաղային, կապված թթու (ուիլիտներ) հրաբխականության հետ. հին գեոսինկլինալներում այդ երեք տիպերը սովորաբար առանձնացված են, իսկ միոցենյան հանքավայրերում նրանք վերադրված են կեյկո, ուիլիտ և օկո (պղնձ-պիրիտային), կուրոկո (պղնձ-կապար-ցինկային) ու տետրաեդրիտ (երկաթ-մանգանային) զուգակցումների ձևով:

Կարելի է նշել, որ Ճապոնիայի ոսկի-արծաթային հանքավայրերը (Կուշիկինո, Կազուգա և այլն) ըստ տիպի նման են Սովետական Միության Բալեյ, Սպիտակ լեռ ու Զոդ էպիթերմալ հանքավայրերին, իսկ կուրոկո տիպի հանքավայրերը Ուրալի ու Կովկասի—Անդրկովկասի կուլչեղանային ու երկաթ-մանգանային հանքավայրերի երիտասարդ նմանակներն են: Միոցենի թթու ինտրուզիաների հետ (գրանիտների բացարձակ հասակը 11—13 մլն. տ. է) կապված են վոլֆրամիտ-կասիտերիտային երակային հանքավայրերը, որոնց վրա վերադրված է պղնձի հանքանյացումը: Դա հանքանյացման երկու փուլերի՝ պղնձային ու անագ-վոլֆրամային վերադրման ու երկու ներհակ մետաղների՝ պղնձի ու անագի համատեղ գտնվելու (Իկունո-Ակենոբե հանքային մարզ) եզակի դեպք է:

Միոցենի մետաղածնային դարաշրջանը բնութագրվում է նաև ծարիրի ու սնդիկի հանքայնացումով (Կիտամի՝ Հոկայդո կղզում, Յամատո ու Միդարա՝ Հոնսյու կղզում, Արևելյան ու Արևմտյան Սիկոկու, Միյաձավա Կյուսյու կղզում): Ծարիր-սնդիկային հանքայնացումն երբեմն ուղեկցվում է ոսկով:

Միոցենյան դարաշրջանին են վերագրվում նաև մանգանային հանքանյութերի կուտակումները՝ երակային (ռոդոսրոդիտ-ալաբանդինային հանքանյութեր) ու շերտային (սինգենետիկ պիրոլյուզիտ-պսիլոմելանային), կապված սոորջրյա հրաբխականության ու տաք հանքային աղբյուրների հետ: Զորրորդական ժամանակաշրջանի հանքայնացումը, որը կապված է անդեզիտներ ու բազալտներ արտավիժող հրաբուխների հետ, ներկայացված է բնածին ծծմբի հանքավայրերով ու լիմոնիտի երևակումներով: Պլեյստոցենից մինչև ժամանակակից հասակի բնածին ծծմբի հանքավայրերը պարունակում են պիրիտի ու ալյ սուլֆիդների որոշ քանակություն: Ըստ առաջացման պայմանների տարբերվում են՝ սուբլիմացիայի նյութեր, ձուլված ծծմբի հոսքեր, կուտակումներ լճային նստվածքներում, ներփակումներ տեղակալման տիպի հանքավայրերում: Ծծմբի գլխավոր աղբյուր են վերջին տիպի հանքավայրերը:

Լիմոնիտային հանքանյութերի կուտակումները մասամբ կապված են ծծմբի հանքավայրերի սուլֆիդների օքսիդացման, իսկ գլխավորապես տաք հանքային աղբյուրներից երկաթի հիդրօքսիդների նստեցման հետ:

Տալվան (Ֆորմոզա): Այս կղզին վարչական տեսակետից ԶԺՀ մի մասն է, իսկ մետաղածնության բնույթով վերագրվում է խաղաղօվկիանոսյան գոտու ներքին մասին և ունի նմանության գծեր Ճապոնիայի հետ: Այստեղ, միոցենի հասակի հրաբխանստվածքային հաստվածքներում տեղադրված են պղնձի կոլչեդանային հանքավայրեր, որոնք ներկայացնում են գործնական հետաքրքրություն. պղինձ-ծծմբակոլչեդանային հանքավայրերի ձևավորումը տեղի է ունենում նաև ներկա դարաշրջանում, սերտորեն կապված ֆումարոլների ու տաք հանքային աղբյուրների գործունեության հետ:

Լայն տարածված ու արդյունաբերական հանքայնացման երկրորդ տիպին են դասվում ցածր ջերմաստիճանային ոսկի-արծաթային հանքանյութերը, որոնք առաջացման պայմաններով նման են Ճապոնիայի հանքավայրերին:

Ֆիլիպիններն իրենցից ներկայացնում են կղզիների ընդարձակ արշիպելագ, որը ձգված է միջօրեականի ուղղությամբ և կազմում է խաղաղօվկիանոսյան գոտու ներքին զոնայի մի մասը: Մետաղածնության բնույթով Ֆիլիպինները նման են Ճապոնիային ու Տալվան կղզուն:

Հանքայնացման գլխավոր տիպերին են դասվում երրորդական զրանիտոիդների ինտրուզիաների հետ կապված պղնձի կոլչեդանային ու ցածր ջերմաստիճանային ոսկի-արծաթային հանքավայրերը:

Պղնձային (խալկոպիրիտ-էնարգիտային) հարուստ հանքանյութերի ոսպնյակներն ու երակները շահագործվում են Լուսոն կղզու Պարակալե շրջանում, որտեղ հայտնի են Լեպանտո ու Հեկսբար հանքերը. պղնձի հանքավայրեր հայտնի են նաև Պանեյ, Մինդանաո և ուրիշ կղզիներում:

Ցածր ջերմաստիճանային հիդրոթերմալ ոսկի-արծաթային հանքավայրերը շահագործվում են Լուսոն կղզու Բանգեզ և Պարակալե շրջաններում ու արշիպելագի շատ ուրիշ կղզիներում (Մինդանաո, Կամարինես, Մասբատ և այլն): Առավել հայտնի են Բալատոկ, Անտոմոկ, Ակուպան հանքավայրերը:

վերջինը միայն 1929—1966 թթ. ժամանակամիջոցում տվել է 100 տ-ից ավելի ոսկի:

Ֆիլիպինների համար մեծ տնտեսական նշանակություն ունեն քրոմիտի ու երկաթի հանքանյութերի (նիկելի ու կոբալտի խառնուրդով) բազմաթիվ ու հաճախ բավականին խոշոր հանքավայրերը, կապված մեզոկայնոզոյան հասակի հիպերբազիտային զանգվածների հետ: Քրոմիտի խոշորագույն հանքավայրերը գտնվում են Մասինլոկ շրջանում (Սամբալեսի մարզ, Մինդանաո կղզի): Երկաթային լատերիտների տիպի առանձին տեղամասերում նիկելի հիդրոսիլիկատներով ու կոբալտով (ասբոլանով) հարստացած հանքանյութերը կազմում են խոշոր կուտակումներ Մինդանաո ու Լուսոն կղզիներում: Ֆիլիպինների համար բնորոշ են նաև բազմաթիվ պիրոլուզիտ-պոխլոմելանային բյուրեղային հանքանյութերի փոքր հանքավայրեր, որոնք երրորդական հասակի հրաբխածին-նստվածքային ապարներում կազմում են ոսպնյակներ կամ երակներ. ծագման պայմաններով նրանք վերագրվում են էքսհալյացիոն-նստվածքային ու մասամբ հիդրոթերմալ ցածր ջերմաստիճանային տիպին: Ամենից ավելի հայտնի են ու շահագործվում են Բուսուանգ ու Կորոն կղզիների հանքավայրերը:

Մյուս օգտակար հանածոներից հայտնի են բազմամետաղային հանքանյութերի, մոլիբդենի, ինչպես նաև պլատինի խմբի մետաղների երևակումները (վերջինները կապված են հիպերբազիտների հետ): Նեգրոս կղզում հայտնի է հրաբխային ծծմբի հանքավայր:

Նոր Գվինեան ու հարևան կղզիները (Նոր Բրիտանիան, Նոր Իռլանդիան, Բուգենվիլը, Սոլոմոնյան կղզիները և ուրիշներ) կազմված են երրորդական հրաբխածին-նստվածքային հաստվածքներից՝ միոպլիոցենյան քվարցային դիորիտների և ինտրուզիվ դացիտների ու պորֆիրների մեծ դերով (Macnamara, 1968), որոնք հանքազաշտերի սահմաններում պրոպիլիտացված են: Քվարցային դիորիտների զանգվածներում զարգացած է ինտենսիվ երակիկա-ցանավոր պղինձ-մոլիբդենային «porphyry copper» տիպի հանքայնացում (Պանգոնա Բուգենվիլ կղզում և այլն), իսկ դացիտների ու պորֆիրների հետ տարածականորեն սերտ կապված է ցածր ջերմաստիճանային ոսկի-արծաթային հանքայնացում:

Հիպերբազիտների հետ կապված են քրոմիտի ու պլատինի խմբի մետաղների (բնածին պլատին ու օսմիումային իրիդիում ցրոններում) երևակումները:

Նոր Զելանդիան ներկայացնում է մի տարածք, որտեղ մի կողմից լայն տարածված են մեզոկայնոզոյան հիպերբազիտների ինտրուզիաները (սովորաբար սերպենտինացված), մյուս կողմից միոպլիոցենյան գրանիտոիդների փոքր ինտրուզիաներն ու շորրորդական հրաբխային ապարները, որոնց հետ կապված են բազմաթիվ տաք հանքային աղբյուրներ ու սոլֆատարներ:

Հիպերբազիտների հետ կապված են քրոմիտի, ասբեստի, պլատինի խմբի մետաղների երևակումները, որոնք մեծ տնտեսական նշանակություն չունեն: Շատ ավելի հետաքրքիր են ու բավականին ինտենսիվորեն շահագործվում են ցածր ջերմաստիճանային հիդրոթերմալ ոսկի-արծաթային ու սնդիկային հանքավայրերը, կապված միոպլիոցենյան ինտրուզիվ դացիտների ու անդեզիտների հետ:

Պուխի-պուխի շրջանում (Հյուսիսային կղզի) ժամանակակից հանքային աղբյուրների ու սուլֆատարների ելքերի շուրջը տեղի է ունենում ոսկի-արծաթային ու սնդիկային հանքանյութերի նստեցում:

Այլ օգտակար հանածոների հանքավայրերից կարելի է նշել բնածին ծծմբի հրաբխածին ծագման կուտակումներն ու մանգանի էքսհալյացիոն-նստվածքային ծագման ոչ մեծ հանքավայրերը:

Նոր Կալեդոնիա ու Ֆիջի կղզիները: Նոր Կալեդոնիա կղզու զգալի մասը կաղմված է հիպերբեազիտների զանգվածներից, որոնց հետ սերտ կապված են բրոմիտի հանքավայրերն ու երկաթային լատերիտների, նիկելի հիդրոսիլիկատային (գարնիերիտային) հանքանյութերի ու կոբալտային (ասբոլանային) հանքանյութերի խոշոր կուտակումներ: Փոքր նշանակություն ունեն գրանիտոիդային ինտրուզիաների հետ կապված գունավոր մետաղների ու ոսկի-արծաթային հանքանյութերի համեմատաբար ոչ մեծ հանքավայրերը: Ֆիջի կղզիներում լայն զարգացած են միոպլիոցենի էքստրուզիվներն ու դացիտի և անդեզիտա-դացիտների փոքր ինտրուզիաները, որոնց հետ սերտորեն զուգակցվում են ցածր ջերմաստիճանային ոսկի-արծաթային (տեխուրիդներով) հանքավայրերը (Վատուկուլա և ուրիշներ):

Այսպիսով, իտալիական զոտու ներքին զոնայի ամբողջ տարածության համար (Կամչատկա-Կորյակյան լեռնաշխարհ, Ճապոնիա, Տայվան, Ֆիլիպիններ, Նոր Գվինեա, Նոր Զելանդիա, Նոր Կալեդոնիա ու Ֆիջի կղզիները) բնորոշ է նույնատիպ մետաղածնությունը՝ պղինձ-կոլչեդանային ու ցածր ջերմաստիճանային հիդրոթերմալ ոսկի-արծաթային հանքավայրերի գերակշռումը, բրոմիտի, երկաթի լատերիտային տիպի հանքանյութերի, նիկելի հիդրոսիլիկատային (ասբոլանով) հանքավայրերի մեծ դերը, մանգանի էքսհալյացիոն-նստվածքային հանքանյութերի առկայությունը, ավելի փոքր նշանակություն ունեն լոկալ զարգացած պղինձ-մոլիբդենային «porphyry copper» տիպի հանքանյութերը, սնդիկի, ծարիրի, մկնդեղի (ռեալգարի ու աուրիպիգմենտի) հանքավայրերը, միաժամանակ նշենք, որ ամբողջ զոնայում համարյա բացակայում են իտալական զոտու արտաքին զոնայի համար բնորոշ անագ-վոլֆրամային հանքանյութերը:

Խաղաղօվկիանոսյան զոտու արևմտյան՝ Ամերիկյան ճյուղը մեր կողմից քննարկվում է հյուսիսից դեպի հարավ հետևյալ հերթականությամբ՝ Ալյասկա, Բրիտանական Կոլումբիա (Կանադայում), ԱՄՆ-ի արևմտյան նահանգներ, Մեքսիկա, Կենտրոնական Ամերիկա, Անտիլյան կղզիներ, Վենեսուելա, Կոլումբիա, Պերու, Բոլիվիա, Արգենտինա, Չիլի:

Ամերիկյան ճյուղի համար բնորոշ է ներքին զոնայի ինտենսիվ զարգացումը, որը սահմանակցվում է երկու Ամերիկաների իտալական զոնայի հարավում, այն դեպքում, երբ արտաքին զոնան լավ է ներկայացված միայն Բոլիվիայում ու Հյուսիսարևմտյան Արգենտինայում. այստեղ այն հարում է Բրազիլական վահանին և շատ թույլ ու լոկալ արտահայտված է Ալյասկայում, Բրիտանական Կոլումբիայում, ԱՄՆ-ի արևմտյան նահանգներում ու Մեքսիկայում, որոնք իրենց հերթին հարում են Կանադական վահանին:

Խաղաղօվկիանոսյան զոտու ամերիկյան ճյուղի երկրաբանության ու մետաղածնության հիմնական գծերը հայտնի են մեզ Վ. Գարֆիասի ու Տ. Չապինի (Гарфиас и Чапин, 1959), Գ. Գերտի (Герг, 1959), Բ. Նդիազարովի (Егизаров, 1969), Կոլոտուխինայի (Колотухина և ուրիշ, 1968), Գ.

Շտրկեր (Штрлле, 1964), Ֆ. Ալֆելդեր (Alfeld, 1957, 1967), Թ. Դուգլասի (Douglas, 1970), Ս. Ռուիցի (Ruiz, 1962), Վ. Շտոլլի (Stoll, 1964, 1965), Ա. Շնեյդեր-Շչերբինայի (Schneider-Scherbina, 1963) և ուրիշ. ամփոփիչ աշխատություններից:

Ինչպես նշում էր Ս. Ս. Սմիռնովը (1946) Խաղաղօվկիանոսյան հանրաշին գոտու Ամերիկյան ճյուղը Ասիական ճյուղի նկատմամբ ասիմետրիկ է, իսկ Ամերիկյան մայրցամաքի անցումը օվկիանոսային պլատֆորմի էսպես տարբերվում է Ասիականից: Այստեղ լրիվ բացակայում է միջանկյալ բուկն ու մայրցամաքային կեղևը կտրուկ շփվում է օվկիանոսային կեղևի հետ:

Այսպիսով, ի տարբերություն Ասիական ճյուղի, Ամերիկյանում ներկայացված են միայն կեղևի երկու տիպերը: Ամերիկյանում ներկայացված է միայն մեկ (Կորդիլիերա-Անդյան) հրաբխածին գոտին, որը մագմատիզմի ու մետաղածնության բնույթով ավելի մոտ է ներքին (կղզային) Ասիական անդեդիտային գծի հրաբխածին գոտուն:

Կորդիլիերա-Անդյան գոտու հետ են կապված համաշխարհային նշանակություն ունեցող պղնձի, մոլիբդենի, ոսկի-արծաթային, բազմամետաղային հանքանյութերի Բրիտանական Կոլումբիայի, ՄՄՆ-ի արևմտյան նահանգների, Մեքսիկայի, Պերուի, Չիլիի և ուրիշ երկրների հանքավայրերը:

Ալյասկա: Ըստ Քինգի (1964, 1966) Ալյասկայի տարածքում առանձնացվում են երեք տեկտոնական մարզեր՝

1. Պլատֆորմային նստվածքների մարզ, տեղադրված մեզոզոյան հիմքի վրա (Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի մերձամինյա հարթավայրը ու Կանադայի արկտիկական կղզիները):

2. Կորդիլիերային ծալքավոր գոտի՝ հիմնականում մեզոզոյան հասակի (Հյուսիսային Ամերիկայի արևմտյան մասը):

3. Խաղաղօվկիանոսյան ծալքավոր գոտի՝ հիմնականում կայնոզոյան հասակի (Հյուսիսային Ամերիկայի արևմտյան եզրը):

Ինտրուզիվ մագմատիզմն ուժեղ արտահայտվել է J₃-C₁ ժամանակաշրջանում (հիպերբազալտներ ու բազալտներ, իսկ մի փոքր ավելի ուշ չափավոր թթվության գրանիտոիդներ), նաև C₂-երրորդական ժամանակաշրջանում (գրանիտոիդներ): Հիպերբազալտների հետ կապված են քրոմիտի բազմաթիվ, բայց ոչ խոշոր հանքավայրեր ու պլատինի երևակումներ (պլատինը հանդիպում է ցրտներում, որից արտահանվում է զգալի քանակություններով). չափավոր թթվության գրանիտոիդների հետ սերտ կապված են ոսկու, պղնձի ու բազմամետաղային հանքանյութերի և մոլիբդենի հանքավայրերը:

Այուրազ թերակղզում հայտնի են սուլֆիդ-կասիտերիտային հանքանյութերի ոչ մեծ հանքավայրեր, իսկ Կենտրոնական Ալյասկայի գետերի ալյուվիալում հայտնաբերված է կասիտերիտ. սակայն անագի դերը Ալյասկայի մետաղածնության մեջ փոքր է և չի կարելի համեմատել Չուկոտկայի, Յանա-Ինդիգիրկայի, Կոլիմայի Ասիական ճյուղի անագաբեր հարուստ շրջանների հետ:

Բրիտանական Կոլումբիա: Կանադայի սահմաններում Կորդիլիերներն բնդգրկում են Բրիտանական Կոլումբիան ու Յուկոնը, Ալբերտա մարզի ու Հյուսիսային տարածքների մի մասը:

Սովորաբար ընդունված է Կորդիլիերները բաժանել Արևմտյանի ու Արևելիայանի, որոնց մեջ սահմանն անցնում է ժայռոտ լեռներով. ժայռոտ լեռ-

ներից դեպի արևմուտք, Բրիտանական Կոլումբիայում ու Յուկոնում զարգացած են Մերձափնյա, Նելսոն, Կասիար, Օմինեսկա գրանիտոիդների բաթոլիտները, որոնց հետ սերտորեն կապված են համարյա բոլոր մետաղների հանքավայրերը: Արևելյան Կորդիլիերներում մագմատիզմի դերը մեծ չէ ու հանքայնացումը շատ ավելի թույլ է:

Գրանիտոիդների ինտրուզիաների ձևավորումն սկսվել է տրիասում, բայց նրանց մեծ մասն ունի ուշմեզոզոյան (J_3-C_{T1} ու C_{T2}) հասակ, իսկ որոշ մասը ներդրվել է երրորդական դարաշրջանում:

Լստ Լանգի (Lang, 1948) գրանիտոիդները ներկայացված են գլխավորապես գրանոդիորիտներով ու քվարցային դիորիտներով, ավելի թթու և ավելի հիմքային տարբերակների ենթակա դերով:

Կորդիլիերների գլխավոր տեկտոնական ստրուկտուրաներն ունեն միջօրեականին մոտ՝ հյուսիսարևմտյան տարածում և այդ նույն ուղղությամբ նեղ զուլերի ձևով երկարաձգված են Մերձափնյա ու Կասիար-Օմինեսկա գլխավոր գրանիտային բաթոլիտները: Հանքայնացումը սերտորեն կապված է գրանիտոիդների բաթոլիտների կամ նրանց սատելիտների, շտոկների հետ, և հանքավայրերը տեղադրված են ինտրուզիվների ելքերի շուրջը:

Հանքավայրերի երեք քառորդը իրեն տիպով վերագրվում է երակային ու շտոկվերկային ձևերին, մեկ քառորդը՝ մետասոմատիկ տիպին. վերջինների մասշտաբները ավելի մեծ են, որի կապակցությամբ նրանց դերը հանույթի մեջ ավելի բարձր է, քան երակայինների դերը, սակայն զիջում է շտոկվերկային տիպին:

Իրենց արդյունաբերական նշանակությամբ (արժեքի) արդյունահանվող մետաղների շարքը կարելի է ներկայացնել հետևյալ ձևով՝ Pb, Cu, Au, Zn, Ag. բացի այս հինգ գլխավոր մետաղներից, զգալի քանակությամբ արդյունահանվում են նաև՝ Mo, Hg, Cd, Jn, Sn, Bi, W, Pt, As, ընդ որում նրանց զգալի մասը կորզվում է զուգընթացաբար: Առաջարկվում է Կանադայի Կորդիլիերների արևմտյան մարզերի մետաղային հանքավայրերի հետևյալ դասակարգումը՝

1. Ոսկի-քվարցային երակներ բնածին ոսկով, կամ սուլֆիդների ու տելուրիդների հետ կապված ոսկով. հանքավայրերից կարելի է նշել Բրիջ Ռիվեր, Կարիբու, Յեբալոս, Շիպկրիկ:

2. Բարդ կադմոսթյան սուլֆիդային երակներ (մշակվում են գլխավորապես արծաթի համար) Au-Ag, Cu-Ag, Pb-Zn-Ag ենթատիպերով: Օրինակներ՝ Սլոկան ու Բեերգել շրջանների հանքավայրերը:

3. Քվարց-շեելիտային ու քվարց-վոլֆրամիտային երակներ. օրինակ՝ Ռեդ-Ռոդ հանքը:

4. Քվարց-մոլիբդենիտային երակներ ու շտոկվերկներ (էնդակո և այլն):

5. Ոսկու մետասոմատիկ հանքավայրեր արսենոպիրիտի, պիրիտի, պիրոտինի զուգակցմամբ (Խեդլեյ մայն):

6. Au-Cu հանքավայրեր մետասոմատիկ պիրոտին-խալկոպիրիտային հանքանյութերով, որոնցից ստանում են Au, Cu ու Ag:

7. Պղնձի մետասոմատիկ հանքավայրեր ոսկու խառնուրդով. հանքանյութերի կադմոսթյունն է՝ պիրիտ, պիրոտին, խալկոպիրիտ, բոռնիտ, որոնցից ստանում են Cu և միաժամանակ քիչ քանակությամբ Au ու Ag (օրինակ՝ Բրիտանիա, Կոպեր Մաունտին, Անիոկս, Ֆենիքս հանքավայրերը. Բրիտա-

նրա հանքավայրի հանքանյութերից, բացի նշված մետաղներից, ստանում են նաև Zn):

8. Ag-Pb-Zn մետասոմատիկ հանքավայրեր բարդ կազմութեան հանքանյութերով՝ չալենիտ, սֆալերիտ (մարմատիտ), պիրիտ, պիրոտին, արսենոպիրիտ, մագնետիտ, կասիտերիտ. հանքանյութերից, բացի գլխավոր մետաղներ Pb ու Zn-ից, զուգընթացաբար ստանում են նաև Ag, Sn, Cd, Jn, Bi. օրինակ՝ Սուլիվան հանքը:

Այդ ութ գլխավոր տիպերից բացի հարկ է նշել Hg-ի (Պինչի Լեյկ, Քլագորն, Տակլա և այլն), Ni-ի (Պասիֆիկ Նիկելմայն՝ պիրոտին-պենտլանդիտային հանքանյութերով հիպերբազիտներում), Cr-ի (հիպերբազիտների մեջ), Fe-ի (սկանոնային), W-ի (շեելիտով ու քվարց-վոլֆրամիտային երակային), V-ի (նստվածքային տիպի, թերթաքարերում) հանքավայրերը:

Յրոններում տեղի է ունենում ոսկու, պլատինի (Կլոնդայկ), հազվագեղ կասիտերիտի ու վոլֆրամիտի (Յուկոն) կուտակում:

Արևելյան Կորդիլիերների մարզերում շահագործվում են միայն առանձին հանքավայրեր՝ Պայն-Պոյնտ (տելեթերմալ Pb-Zn հանքավայրը զոլոմիտներում), Մոնարխ ու Կիկինգ-Նորս (Պայն-Պոյնտին նման): Մուլլիգանի (Mulligan, 1966) աշխատանքներում ժայռոտ լեռներից դեպի արևմուտք, առանձնացվում է գրեյզենային տիպի Sn-W-Mo-Be մարզը, որը բնորոշ է Խաղաղ-օվկիանոսյան հանքային զոտու (ԽՂԳ) արտաքին զոնայի համար: Այդ կապակցությամբ պետք է հիշել, որ դեռ 1943 թ. հայտնաբերված էր անագի Դեբլին-Գելչ հանքավայրը (տուրմալին-քլորիտ-կասիտերիտ-սուլֆիդային հանքանյութերով)՝ տեղադրված Բրիտանական Կոլումբիայի արևելյան եզրում, որտեղ երևան է գալիս, հավանաբար, ԽՂԳ թույլ արտահայտված արտաքին զոնան:

ԱՄՆ-ի արևմտյան նահանգները լեռնագրական տեսակետից ներկայացված են միջօրեականի ուղղության երկու՝ Մերձափնյա ու Ժայռոտ լեռների լեռնաշղթաներով, որոնք Հյուսիս-Ամերիկյան Կորդիլիերների մի մասն են:

Այդ մարզի մետաղածնությունը պայմանավորված է ստորին կավձի հիպերբազիտներով, որոնց հետ զուգակցվում են քրոմիտի փոքր հանքավայրեր, պլատինի ու ալմաստի (ցրոններում) երևակումներ, ինչպես նաև զրանիտոիդների ինտրուզիաներով, որոնց ներդրման ժամանակը ընդգրկում է վերին կավձ-պալեոգենից մինչև միոպլիոցեն:

Գրանիտոիդների հետ կապված են հանքայնացման երկու ինտենսիվ ժամանակաշրջաններ՝

1. Վերին կավձի-պալեոգենյան, ժայռոտ լեռներում՝ կապված Բաուլդեր ու Այդահո զրանոդիորիտ-քվարցային դիորիտի կազմության բաթոլիտների ներդրման հետ: Գրանիտ հետ կապված են պղնձի խոշոր (Քյուտ), բազմամետաղային հանքանյութերի (Լեդվիլ, Տինտիկ և այլն), ոսկու (Մայր երակ, Գրես-Վալեյ և ուրիշներ), շեելիտաբեր սկանոնների (Պայն-Կրիկ), ինչպես նաև ծարիրի և ուրանի (Ջիլպին, Կոլորադո սարահարթի առաջնային հանքայնացումը ⁶) հանքավայրերը:

2. Վերիներորդական Մերձափնյա լեռնաշղթայում, ինչպես նաև հանքայնացման առաջին փուլի վրա երիտասարդ բեկվածքների երկայնքով վերադրված հանքայնացում: Ինտրուզիաներն ու էքստրուզիաները ներկայաց-

ված են այստեղ գրանդիրորիտ-պորֆիրներով, մոնցոնիտ-պորֆիրներով, ուր-
լիտներով, անդեզիտներով և ունեն միոպլիոցենյան հասակ: Գրանց հետ կապ-
ված են մոլիբդենի խոշոր հանքավայրեր (Կլայմաքս), պղինձ-մոլիբդենային
հանքանյութեր (Բինհեմ, Մայամի, Չինո և ուրիշներ), ոսկի-արծաթային հան-
քանյութեր (Կոմաչո, Գոլդֆիլդ, Կրիպլ-Կրիկ և այլն), սնդիկի (Նյու-Ալմա-
դեն, Նյու-Իգրիա), ծարիր-վոլֆրամային հանքանյութեր (Բոուլդեր, Ստոլյա),
ուրանի հանքավայրեր (Մերիսվելլ, որտեղ հանքայնացման հասակը 10 մլն.
տ. է) և ուրիշներ: Hg ու W-ի որոշ հանքավայրերի համար, որոնք սերտ կապ-
ված են տաք հանքային աղբյուրների հետ, հաստատվում է հանքայնացման
չորրորդական հասակը (Ստիմբոտ-Սպրինգս սնդիկի և Գոլդոնդա վոլֆրամի
հանքավայրերը):

Անագի հանքայնացումը ներկայացված է փայտանման անագի (կասի-
տերիտի) մանր երևակումներով պլիոցենի ուրլիտներում (Լանդեր Քաունտի,
Նևադա ու Տայլոր-Կրիկ, Հարդկաստլ-Կրիկ և ուրիշ. Նյու-Մեքսիկո նահանգ-
ներ), ինչպես նաև Այրոն-Մաունտին հելվինային հանքավայրի անդրադիրտի
մեջ առկա անագի խառնուրդով (Sn 0,3%):

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում պիրոլյուզիտ-պսիլոմելա-
նային հանքանյութերից կազմված ցածր շերմաստիճանային երակներն ու
շտոկվերկները բարիտով, կալցիտով, գիպսով, քվարցով, որոնք գտնվում են
Նյու-Մեքսիկո նահանգի պլիոցենի ուրլիտներում (Լուի-Լոպեց և ուրիշ հան-
քավայրեր):

ԱՄՆ-ի տարածքում հանքայնացումը վերահսկվում է ծալքավոր ստրուկ-
տուրաներին հատող լայնակի խորքային բեկվածքներով, ընդ որում այդ բեկ-
վածքների մի մասը ներկայացնում է խաղաղօվկիանոսյան բեկվածքների
(Մենդոսինո, Մերեյ և ուրիշներ) շարունակությունը մայրցամաքում:

Մեքսիկա: Մեքսիկայի տարածքում ձգվում են Կորդիլիերների ու ԱՄՆ-ի
արևմտյան նահանգների հանքային գոտիների շարունակությունը:

Մետաղածնությունը կապված է մագմատիզմի երկու փուլերի հետ՝

1. Վերին կավճի-պալեոգենի փուլի գրանոզիորիտների, դիրորիտների,
գաբրոների ներդրումը ուղեկցվել է պղնձային ու բազմամետաղային ինտեն-
սիվ հանքայնացումով (պղինձ-կոլչեդանային Լոս-Պիլարես հանքավայրը,
բազմամետաղային Սանտա Եվալյա, Գուրանգո և այլ հանքավայրեր):

2. Միոպլիոցենյան մոնցոնիտ-պորֆիրների, անդեզիտների, ուրլիտների
ներդրման փուլ. մոնցոնիտների հետ կապված են պղինձ-մոլիբդենային հան-
քավայրերը (Կանանես, Ռեֆորմա Մայնս և ուրիշներ), ոսկի-ուրանային
հանքանյութերի հանքավայրերը (Չիուաուա շրջանը):

Անդեզիտների ու ուրլիտների հետ սերտորեն կապված են ոսկի-արծա-
թային խոշոր հանքավայրեր (Էլ-Օրո), արծաթային (Վետա Մադրե, Պաչու-
կա), ծարիրային (Սան-Լուիս-Պոտոզի), սնդիկային (Ուիչցուկո) հանքանյու-
թերի, ինչպես նաև փայտանման անագի (կասիտերիտի) բազմաթիվ մանր
երևակումներ, որոնք զուգակցվում են սպեկուլյարիտի հետ և տեղադրված են
ուրլիտներում:

Ստորին Կալիֆոռնիա նահանգում պլիոցենի տուֆերում հայտնի է ման-
գանային շերտածե հանքանյութերի հանքավայր (Լյուցիֆեր), իսկ Սան-Լուի-
Պոտոզի նահանգում մանգանի երակային ու մետասոմատիկ հանքավայր
(Մոնտանա-դի-մանգանեզո):

Կ ե ն տ ր ո ն ա կ ա ն Ա մ եր ի կ ա ն, որտեղ շարունակվում են Կորդիլիերները, ընդգրկում է մի քանի փոքր հանրապետություններ՝ Գվատեմալա, Նիկարագուա, Հոնդուրաս, Սալվադոր, Կոստա-Ռիկա, Պանամա, որոնց երկրաբանությունն ու հանքային հարստությունները ուսումնասիրված են անբավարար: Այստեղ հանքայնացման գլխավոր տիպն է ցածր ջերմաստիճանային ոսկի-արծաթային հանքավայրերը, որոնք բավական ինտենսիվորեն մշակվում են նիկարագուայում, Սալվադորում և ուրիշ երկրներում:

Վերջերս Հոնդուրասում Սան-Լորենցո նավահանգստի մոտ հայտնաբերվել են մանգանի նոր հանքավայրեր:

Անտիլյան կղզիներ (Կուրա, Հայիթի և ուրիշներ): Կուրայի հանրապետությունում ՇԵՉ-երրորդական հասակի հիպերբազիտների հետ կապված են քրոմիտի խոշոր հանքավայրեր, լատերիտային տիպի երկաթի հանքանյութեր ու նիկելի հիդրոսիլիկատային հանքանյութեր ասբոլանով:

Պինար-դել-Ռիո մարզում հայտնի է կոլչեգանային պղնձի Մատախամբր հանքավայրը, իսկ Պինոս կղզում ֆերրերիտ-շեևիտային երակներ, կապված երրորդական դրանիտոիդների հետ:

Կուրաի Օրիենտա մարզում ու Հայիթիում հայտնի են էքսհալյացիոն-նստվածքային ու հիդրոթերմալ մանգանային հանքանյութերի ոչ մեծ հանքավայրեր, որոնք տեղագրված են ՇԵՉ ու երրորդական հասակի հրաբխանստվածքային ապարներում:

Հ ա ր ա վ-Ա մ եր ի կ յ ա ն մ ա յր ց ա մ ա ք ի սահմաններում ալպիական ստրուկտուրաները ներկայացված են միջօրեականի մոտ տարածության Անդյան ծալքավոր գոտիով: Հյուսիսից հարավ Անդյան գոտին ընդգրկում է Վենեսուելայի ու Կոլումբիայի հյուսիսարևմտյան մասերը, էկվադորը, Պերուն, Բոլիվիայի արևմտյան մասը, Չիլին ու Արգենտինայի արևմտյան շրջանները, ավարտվելով Անտարկտիդայի կղզիներում ու Գրեյամի երկրի լեռներում:

Խաղաղօվկիանոսյան հանքային գոտու Անդյան հատվածը աշխարհի հարստագույն մետաղածնային մարզերից մեկն է: Այն մատակարարում է հսկայական քանակությամբ պղինձ ու անագ, մեծ քանակություններով վոլֆրամ, ծարիր, մոլիբդեն, ոսկի, արծաթ, պլատին, տելուր: Անդյան ծալքավոր գոտուց դեպի արևելք տեղադրված Բրազիլական վահանից Անդերը բաժանված են Պերուական-Բոլիվիական ու Արգենտինյան լինեամենտներով, որոնք հատվում են Սանտա-Կրուսի շրջանում բուլժանկյան տակ: Հատման տեղում առաջացել է ուժեղ խախտված զոնա, որի հետ կապված են Հարավային Բոլիվիայի ու Հյուսիսարևմտյան Արգենտինայի առավել նշանակալից հանքային մարզերը (Sn, W, Sb, Bi): Այդ մարզը, որը հարակցվում է վահանին, մետաղածնության բնույթով համապատասխանում է ԽՉԳ արտաքին զոնային, այն ժամանակ, երբ մերձօվկիանոսյան Անդերի մնացած մասը համապատասխանում է ԽՉԳ ներքին զոնային (Cu, Au-Ag, Pb-Zn, Pt):

Վերին ռիֆայի ժամանակաշրջանից Անդյան զոնայում գոյություն են ունեցել գետնիկլինալային պայմաններ, որոնք ավարտվել են հերցինյան ծալքավորումով:

Մեզոզոյում արտահայտվել են ակտիվացում և ուղղաձիգ շարժումներ, որոնք պայմանավորել են բեկորային տեկտոնիկական և հրաբխային ու ինտրուզիվ գործունեությունը:

Ալպիական ցիկլը նույնպես ներկայացված է բեկորային ծալքավորումով՝ ու վերին կավձում (ալբի ու սենոնի միջև) Անդյան հսկայական բաթոլիտի, հիմնականում գրանիտոիդների զանգվածի ներդրումով, որը ձգվում է 6000 կմ² Հյուսիսային Պերուից մինչև Հրո երկիրը:

Նրխտասարդ խորքային բեկվածքների երկայնքով տեղի է ունեցել օլիգոցեն-միոցենի հասակի գրանիտոիդների ներդրում, որն ուղեկցվել է էֆուզիվ գործունեությամբ: Մագմատիզմի հետ սերտ կապված է Անդերի էնդոգեն հանքայնացումը: Երկրաբանական դիտումներն ու ինտրուզիվ ապարների բացարձակ հասակի որոշումները բերում են այն եզրակացություն, որ Անդյան հսկա բաթոլիտի ինտրուզիաներն առաջացել են հիմնականում վերին կավձում, սակայն ոչ մեկ միասնական պրոցեսի հետևանքով: Ամենավաղ ներդրումները տեղի են ունեցել վերին պալեոզոյում ու յուրայում, իսկ վերջինը՝ երրորդական ժամանակաշրջանում, այդ եզրակացությունը դիտվում է որպես նախնական (Колотухина и др. 1968). Համենայն դեպս, հաստատված է, որ Պերուի-Բոլիվիայի-Արգենտինայի վոլֆրամ-անագ-բիսմութային հարուստ հանքայնացման գոտին կապված է ստորին յուրայի գրանոդիորիտների հետ (հասակը, որոշված K-Ar եղանակով, տատանվում է 180—199 մլն. տ. ինտերվալում) ու միայն Հարավային Բոլիվիայի—Հյուսիսային Արգենտինայի բուն անագային և անագ-արծաթային մարզն ավելի երիտասարդ է (երրորդական հասակի է ու կապված է սուբհարբիային անդեզիտա-դացիտների հետ): Սերրո-դե-Պասկո հայտնի կոլչեդանային շրջանի գրանոդիորիտների փոքր ինտրուզիաները մինչև վերջերս դիտվում էին որպես երրորդական, սակայն նրանք կարող են վերագրվել նաև ստորին յուրային (*):

Այսպիսով, յուրայի, վերին կավձի ու երրորդական տեկտոնամագմատիկական ցիկլերը պայմանավորել են Անդյան ծալքավոր գոտու ստրուկտուրայի, մագմատիզմի ու մետադեմոնոսթյան հիմնական առանձնահատկությունները: Անդերի հանքային մարզերը նկարագրված են Ալֆելդի (Ahlfeld, 1965), Տերների (Turneur, 1960), Շնեյդեր-Շչերբինայի (Schneider-Scherbina, 1964), Ռուիցի (Ruiz, 1966), Շտոլլի (Stoll, 1965) և ուրիշների աշխատություններում:


Մի փոքր լրացնելով նրանց ավյալները առանձնացնում ենք հետևյալ հանքային մարզերը:

1. Վենեսուելան ու Կոլումբիան Au-Ag ու Hg ցածր ջերմաստիճանային հանքավայրերով, կապված վերին երրորդական ռիոլիտների ու անդեզիտա-դացիտների էքստրուզիվների հետ (Անտիոքյա ոսկեբեր շրջանը Կոլումբիայում և ուրիշներ):

2. Կենտրոնական Պերուն կոլչեդանա-բազմամետաղային (Սերրո-դե-Պասկո, Մարակոչա, Կասապալկա և ուրիշ.), հավանաբար, երրորդական հասակի հանքավայրերով և պղնձի ու կապարի շատ արդյունավետ ու ցինկի, ինչպես նաև բիսմութի, արծաթի, կադմիումի, ինդիումի, սելենի, տելուրի և ուրիշ ցրված տարրերի համընթաց կորզմամբ:


3. Չիլին ու հարավային Պերուի պղնձային գոտին (նկ. 24) պղինձ-պորֆիրային հանքանյութերի համաշխարհային նշանակության հանքավայրերով (Չիլիկամատա, Պոտերիլյոս, էլ-Տենիենտե և ուրիշներ) ու «մանտո» տիպի պղնձի խոշոր հանքավայրերով (Լլոս-Մակիս, Գոալայական և այլն): Բացի պղնձից, այս մարզը տալիս է զգալի քանակությամբ մոլիբդեն, իսկ ցրված մետաղներից՝ ունիում, սելեն, տելուր:

4. Բոլիվիան ու Հյուսիսարևմտյան Արգենտինայի անագային գոտին. այս գոտու սահմաններում Հյուսիսից հարավ առանձնանում են երեք տարբեր հասակի մետաղաձնային մարզեր՝ Հյուսիսային Բոլիվիայի (հասակը վերին տրիաս-ստորին յուրա), Կենտրոնական ու մասամբ Հարավային Բոլիվիայի



Նկ. 24—Չիլիի գլխավոր մետաղային հանքավայրերը (ըստ Սալամանկի, 1964): 1—նեոլոմի ապարներ, 2—պորֆիրիտներ ու բրեկչիաներ, 3—Մանտո տիպի պղնձային հանքավայրերի տարածման զոնա, 4—պղնձային մետաղաձնային մարզի սահմաններ: Հանքավայրեր՝ 5—պղնձի, 6—վոլֆրամի, 7—արծաթի:

(միոցեն), Հյուսիսային Արգենտինայի ու Հարավային Բոլիվիայի (միոցեն-պլիոցեն): Հյուսիսային Բոլիվիայում հանքավայրերը պեգմատիտային են ու բարձր ջերմաստիճանային հիդրոթերմալ, Կենտրոնական ու Հարավային Բո-



Նկ. 25—Բուլիվիայի անագալին գոտին (բառ Ahlfeld-ի)։ 1—գրանիտային ապարներ, 2—սուրճրաբխային ապարների շտոկներ, 3—պլիոցենի տուֆեր ու լավաներ, 4—անագալին գոտու սահմաններ, 5—գլխավոր մետաղային հանքավայրեր։

լիվիայում զարգացած են հիդրոթերմալ մերձավերսային հանքավայրերը: Առաջինները կապված են գրանոդիորիտների խոշոր խնտրուլիվների հետ (T₂-J₁), իսկ երկրորդները՝ քվարց-սյորֆիդների փոքր շտակների հետ (միոցեն):

Հյուսիսային Բոլիվիայի համար բնորոշ է Sn-W-Bi հանքայնացումը (Պեպիտա, Անտոֆագաստա, Պակունի, Տասնա, Չորուլիե հանքերը), Կենտրոնական ու Հարավային Բոլիվիայի, ինչպես նաև Հյուսիսային Արգենտինայի համար բնորոշ է Sn-Ag հանքայնացումը (Պոտոսի, Օրուրո, Պիրկիտաս հանքերը) (նկ. 25): Հարավային Բոլիվիայի ու Հյուսիսարևմտյան Արգենտինայի հասակով ամենաերիտասարդ հանքավայրերը ներկայացված են փայտանման անազի փոքր կուտակումներով պլիոցենի հասակի ռիոլիտադաջիտային լավաներում: Հարավային Բոլիվիայում տարածված անազ-արծաթային հանքայնացումից բացի այստեղ հայտնի են նաև բազմամետաղային հանքանյութերի բավականին խոշոր հանքավայրեր (Կոլիեչակա, Բերենգելա), սելենի յուրահատուկ հանքավայրեր (Պակախակե), ծարիրային հանքայնացում (Պաբելյոն): Ծարիրի խոշոր հանքավայրեր շահագործվում են նաև Հյուսիսային Բոլիվիայում (Տուպիսա, Օրուրո և այլն), որի շնորհիվ Բոլիվիան ծարիրի հանույթով աշխարհում գրավում է երկրորդ տեղը (ՉժՀ-ից հետո):

5. Կորոկորո գոտին (Բոլիվիա) ու Նեգրա-Ուանուշ հանքային շրջանը (Պերու) պղնձաբեր, նստվածքային շերտաձև հանքավայրերով միոպլիոցենի հասակի ավազաքարերում ու կոնգլոմերատներում: Հանքանյութերի կազմությունն է՝ խալկոզին, բնածին պղինձ ու մի քիչ բնածին արծաթ, արծաթի սուլֆատներ, գալենիտ, սֆալերիտ, զոմեյկիտ և ուրիշներ:

Բացի այդ հինգ խոշոր հանքային մարզերից պետք է նշել նաև Կոլումբիայում պլատինի զգալի երևակումների առկայությունը հիպերբազիտներում (Չոկո մարզի ցրոնները Ռիո-Պինտո գետի ավազանում տալիս են տարեկան 1,5 տ. մետաղ), Պերուում ֆերբերիտ-անտիմոնիտային Լա-Լիբերտադ խոշոր հանքավայրը (հայտնաբերված է 1944 թ.), Պերուում ու Չիլիում Au-Ag և սնդիկային (երբեմն Au-Hg) բազմաթիվ ցածր շերմաստիճանային հանքավայրերը: վերջինները կապված են միոպլիոցենյան անդեզիտների ու ռիոլիտների հետ: Մեծ նշանակություն ունի Խուանկավելիկա սնդիկի խոշոր հանքավայրը Պերուում:

Չիլիում շահագործվում է իր հանքանյութերի կազմով յուրահատուկ Պունիտակի հանքավայրը, որը տալիս է ֆլոտացիոն հարստանյութեր 20% Hg և 200 գ/տ Au պարունակությամբ:

Արգենտինայում հայտնի են (Կատամարկա մարզ) մանգանի երակային հիդրոթերմալ հանքանյութերի ոչ մեծ հանքավայրեր, իսկ Բոլիվիայում՝ W պարունակող պսիլոմելանի ու լիմոնիտի նստվածքներ Ունցիա տաք հանքային աղբյուրների շրջանում: Չիլիի, Բոլիվիայի ու Արգենտինայի գործող և վերջերս հանգած հրաբուխների հետ կապված են բնածին ծծմբի էքսհալյացիոն հրաբխային ծագման խոշոր հանքավայրեր (Տակորա, Չուպիկինա, Կոպիապո, Նապա, Լոս-Անդես և ուրիշներ):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԽԱՂԱՂՕՎԿԵԱՆՈՍՅԱՆ ԳՈՏՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Алявдин В. Ф. Месторождения вольфрама СВ СССР и их размещение в геологических структурах. «Тр. ВСЕГЕИ», т. 92, 1963, с. 61—63.

Апельцин Ф. Р. Малые интрузии, генезис и закономерности размещения золоторуд-

- ных месторождений Северо-Востока СССР. В сб. «Закон. размещ. полезн. ископ.», т. 2, 1959, с. 425—460.
- Бабкин П. В., Дабкин И. Е.* Геологические особенности ртутного оруденения Северо-Востока СССР. В сб. «Эндогенные рудные формации Сибири и Дальнего Востока». 1966, с. 203—208.
- Банкетов А. К.* Медно-порфировые руды Северной и Южной Америки. Изд. ВНИЦМ, 1961, с. 84.
- Богдаева М. В., Матвеев В. Т.* Основные и ультраосновные интрузии Корякско-Анадырского района. «Тр. ВНИИ-1», вып. 59, Магадан, с. 1—72.
- Болдырев А. К.* Мировые месторождения золота. «Матер. по геол. и полезн. ископ. СВ СССР», вып. II, 1946, с. 2—23.
- Вергунов Г. П.* О металлоносности Курильских о-вов и Сахалина. «Геол. и геофиз.», № 4, 1962, с. 13—20.
- Власов Г. М.* Новые данные по геологии Камчатки и перспективы ее рудоносности. «Сов. геол.», № 5, 1958, с. 3—18.
- Власов Г. М., Василевский М. М.* Геология и некоторые вопросы генезиса медно-молибденовых м-ний Среднего Камчатского хребта. «Информ. сб. ВСЕГЕИ», № 17, 1959, с. 97—105.
- Волярович Г. П.* Типы эндогенных месторождений золота Дальнего Востока. «Тр. ЦНИГРИ», вып. 52, 1963, с. 199—218.
- Гарфиас В., Чапин Т.* Геология Мексики. Госгеолтехиздат, 1956, с. 7—150.
- Герг Г.* Геология Анд. Изд. ИЛ, 1959, с. 9—289.
- Геология и минеральные ресурсы Японии. Изд. ИЛ, 1961, с. 13—287.
- Геология, минералогия и геохимия Комсомольского района. «Наука», 1971, с. 3—335.
- Геология зарубежных оловорудных месторождений. «Недра», 1969, с. 328.
- Горбачев С. З.* и др. Молодая золото-серебряная минерализация Камчатки «Матер. к I Всес. конф. по геол. и металл. Тихоок. рудного пояса», вып. 1, 1960, с. 3—139.
- Дистанов Э. Г.* и др. Геологическое строение и генезис Озерного свинцово-цинкового кольчатанного месторождения (Зап. Забайкалье). «Геология рудных м-ний». № 2, 1972, с. 3—22.
- Егизаров Б. Х., Русаков И. М.* Магматические циклы Корякского хребта и связанные с ними полезные ископаемые. «Матер. к I Всес. конф. по геологии и металл. Тихоок. рудного пояса», вып. 1, 1960, с. 3—139.
- Егизаров Б. Х.* и др. Геология и полезные ископаемые Корякского нагорья. «Тр. НИИГА», т. 148, 1965, с. 212—342.
- Егизаров Б. Х.* Геологическое строение Аляски и Алеутских островов. «Тр. НИИГА», «Недра», 1969, с. 226—259.
- Иванов В. В.* Минералого-геохимические черты и некоторые физико-химические особенности формирования касситерит-силикатно-сульфидных месторождений Северной Якутии. «Геохимия», № 9, 1963, с. 830—842.
- Изох Э. П., Колмак Л. М., Наговская Г. И., Русс В. В.* Позднемезозойские интрузии Центрального Сихотэ-Алиня и связь с ними оруденения. «Тр. ВСЕГЕИ, нов. сер.», т. 21, 1957, с. 7—247.
- Ицксон М. И.* Типы подвижных поясов Тихоокеанской окраины СССР. «Сов. геол.», № 1, 1964, с. 10—38.
- Ицксон М. И.* Новые аспекты металлогении подвижных поясов восточно-азиатского типа в связи с особенностями глубинного строения Тихоокеанской окраины СССР. «Сов. геол.», № 1, 1966, с. 6—23.
- Ицксон М. И., Тихомиров Н. И., Шаталов Е. Т.* Основные черты магматизма и связанной с ним минерализации СЗ части Тихоокеанского подвижного пояса. В сб. «Закон. размещения полезных ископаемых», т. 8, 1967, с. 177—195.
- Ицксон М. И., Тихомиров Н. И., Шаталов Е. Т.* Основные черты эволюции магматизма и связанной с ним минерализации северо-западной части Тихоок. подвижного пояса. В кн. «Особенности магматизма и метаморфизма Советского Дальнего Востока». «Наука», 1968, с. 15—23.

- Ицксон М. И., Бергер В. И.* Металлогенический анализ Восточно-Азиатского и Аляска-Канадского звеньев севера Тихоокеанского пояса. «Сов. геол.», № 5, 1972, с. 38—48.
- Казанский В. И.* О размещении верхнемезозойских гранитоидных интрузивов и очертаниях рудоносных площадей в Тихоокеанском рудном поясе. «Геология рудных м-ний», № 4, 1961, с. 3—18.
- Козеренко В. Н.* Значение структурно-фациальных зон для металлогенического анализа на примере Вост. Забайкалья. В сб. «Закон размещ. полезн. ископ.», т. III, 1960, с. 441—459.
- Константинов М. М.* К металлогении Тихоокеанского пояса. «Изв. АН СССР, сер. геол.», № 7, 1959, с. 6—15.
- Кормилицын В. С.* Основные черты мезозойской металлогении В. Забайкалья. «Сов. геол.», № 11, 1959, с. 96—109.
- Кормилицын В. С.* Мезозойская металлогения В. Забайкалья. «Геология и полезн. ископ. СССР», т. 4, 1968, с. 230—238.
- Красный Л. И.* и др. Геологическое строение северо-западной части Тихоокеанского подвижного пояса. «Недра», 1966, с. 513.
- Кропоткин П. Н., Шахварстова К. А.* Геологическое строение Тихоокеанского подвижного пояса. «Тр. ГИН АН СССР», вып. 134, 1965, с. 366.
- Левицкий О. Д.* Геология рудных м-ний Забайкалья. «Наука», 1964, с. 336.
- Литвин А. Л., Матвеевко В. Т.* О молибденовом оруденении Северо-Востока СССР. «Тр. ВНИИ-1», вып. 34, Магадан, 1958, с. 1—26.
- Лугов С. Ф.* Основные черты геологического строения и металлогении Чукотки. Госгеолтехиздат, 1962, с. 5—224.
- Магакьян И. Г.* Сравнительная характеристика металлогении Малого Кавказа и Камчатско-Корякской зоны. В сб. «Закон. размещ. полезн. ископ.», т. VII, «Наука», 1964, с. 288—294.
- Маринов Н. А.* Закономерности размещения магматогенных месторождений полезных ископаемых Монголии. Матер. по геологии МНР, Госоптехиздат, 1963, с. 149—170.
- Матвеевко В. Т., Шаталов Е. Т.* Разрывные нарушения, магматизм и оруденение СВ СССР. В сб. «Закон. размещ. полезн. ископ.», т. I, Изд. АН СССР, 1958, с. 169—240.
- Нагибина М. С.* Тектоника и магматизм Монголо-Охотского пояса. «Тр. ГИН», вып. 79, Изд. АН СССР, 1963, с. 5—464.
- Некрасов Н. Я.* Магматизм и рудоносность СЗ части Верхояно-Чукотской складчатой области. «Тр. Якутского ФСО АН СССР», Сб. № 12, 1962, с. 335.
- Некрасов Н. Я.* Первичная зональность в рудных месторождениях СВ Якутии и ее значение для скрытых рудных тел. В кн. «Вопросы изучения и методы поисков скрытого оруденения», Госгеолтехиздат, 1963, с. 314—333.
- Новые данные по магматизму и минерализации в рудных районах Востока СССР. «Наука», 1971, с. 316.
- Падалка Г. Л.* Об общем направленном геологическом развитии Забайкалья в связи с его металлогенией. «Изв. АН СССР, сер. геол.», 1969, № 12, с. 14—25.
- Пуцаровский Ю. М.* Тихоокеанский тектонический сегмент земной коры. «Геотектоника», № 5, 1967, с. 50—102.
- Радкевич Е. А.* Металлогения Ю. Приморья. «Тр. ИГЕМ», вып. 19, Изд. АН СССР, 1958, с. 5—107.
- Радкевич Е. А.* К вопросу о типах металлогенических провинций и рудных районов. В сб. «Закон. размещ. полезн. ископ.», т. II, Изд. АН СССР, 1959, с. 25—59.
- Радкевич Е. А., Томсон И. Н., Лобанова Г. М.* Геология и металлогения типовых рудных районов Приморья. Изд. АН СССР, 1962 (Тр. ИГЕМ, вып. 58), с. 128.
- Радкевич Е. А.* Полицикличность оруденения и явления активизации в металлогенических провинциях В. Азии. В кн. «Вопросы металлогении», «Недра», 1965, с. 218—229.

- Радкевич Е. А.* Генетические типы, условия образования и закономерности размещения месторождений слюда и вольфрама северо-западного пояса. Владивосток, 1966, с. 28—31.
- Рожков И. С.* и др. Позднемезозойский магматизм и золотое оруденение Верхне-Индигирского района. Ин-т геол. Якут. фил. СО АН СССР, «Наука», 1971, с. 240.
- Руб М. Г.* Граниты гродековского и марьяновского интрузивных комплексов в Южном Приморье и основные черты их металлоносности. «Тр. ИГЕМ АН СССР», вып. 3, 1956, с. 114—187.
- Салоп Л. И.* Геология Байкальской горной области, т. II. Магматизм, тектоника, история геол. развития. «Недра», 1967, с. 7—699.
- Сидоров А. А.* Золото-серебряное оруденение центральной Чукотки. «Наука», 1966, с. 5—145.
- Смирнов В. И.* Особенности металлогении северо-западной части Тихоокеанского пояса. «Вестн. МГУ», сер. IV, № 5, 1966, с. 3—12.
- Смирнов С. С.* Очерк металлогении Восточного Забайкалья. Госгеолгиздат, 1944, с. 89.
- Смирнов С. С.* О тихоокеанском рудном поясе. «Изв. АН СССР, сер. геол.», № 2, 1946, с. 13—28.
- Смирнов С. С.* Рудные месторождения и металлогения восточных районов СССР. Изд. АН СССР, 1962, с. 360.
- Соколова Е. А.* Комплекс малых интрузивов верхне-сейсмчанского района и связанная с ним рудоносность. «Матер. по геол. и полезн. ископ. Северо-Востока СССР», вып. 10, 1956, с. 69—93.
- Соболевская Е. Н.* К вопросу о положении альпийской складчатой системы островов восточного обрамления Австралии в «Тихоокеанском кольце Гондваны». «Геотектоника», № 5, 1966, с. 66—86.
- Страна П. А.* О некоторых закономерностях в распределении флюоритовых месторождений в южной части Вост. Забайкалья. «Изв. высш. учеб. завед., сер. геол. и разведка», № 4, 1960, с. 89—92.
- Томсон И. Н., Константинов Р. М., Полякова О. П.* О генетических рядах рудных формаций Забайкалья. «Геол. рудн. м-ний», № 2, 1964, с. 38—51.
- Устиев Е. К.* Основные черты магматизма северо-западной части Тихоокеанского пояса. В кн. «Матер. к Всес. конф. по геологии и металлогении ТРП», «Примориздат», 1960, с. 94—107.
- Фаворская М. А.* Отношение редкометального и полиметаллического оруденения к интрузивным и эффузивным формациям в некоторых районах Тихоокеанского пояса. «Сов. геол.», № 12, 1959, с. 74—87.
- Фирсов Л. В.* Формация золото-кварцевых месторождений Яно-Колымского пояса. В сб. «Энд. рудные формации Сибири и Дальнего Востока», 1956, «Наука», с. 132—144.
- Флеров Б. Л.* и др. Геология и генезис оловорудных месторождений Якутии. «Наука», 1971, с. 308.
- Чайковский В. К.* Геология оловоносных месторождений Северо-Востока СССР. Госгеолтехиздат, 1960, с. 9—333.
- Шипулин Ф. К.* Интрузивные породы юго-восточного Приморья и связь с ними оруденения. «Тр. ИГЕМ АН СССР», вып. 8, 1957, с. 5—280.
- Штилле Г.* Тектоническое развитие Америки как восточного обрамления Тихого океана. Избр. труды. «Мир», 1964, с. 15—887.
- Щеглов А. Д.* Эндогенная металлогения Западного Забайкалья. «Недра», 1966, с. 278.
- Якшин А. А.* Особенности металлогении золото-молибден-турмалинового пояса Забайкалья и южной части Дальнего Востока. «Тр. МГРИ», т. 28, 1955, с. 15—23.
- Якшин А. А.* Особенности металлогении золото-молибден-турмалинового пояса Забайкалья. «Сов. геол.», № 50, 1956, с. 125—133.
- Ahlfeld F.* Die zonale Verteilung der Erzlagertstätten in der Bolivianischen Metallprovinz. Neues Jahrb. für Mineralogie, bd. 91, H 1—3, 1957, s. 329—350.

- Ahlfeld F. Metallogenic epochs and provinces of Bolivia. Mineralium deposita, v. 2, № 4, 1967, p. 291—311.
- Geology and economic minerals of Canada. Economic Geology report, № 1, Dep. of Energy, mines and resources Canada, 1970, p. 838.
- Handbook of South American Geology. Washington, 1956, p. 378.
- Ho C. S. and Lee C. N. Economic minerals of Taiwan. Geol. Surv. of Taiwan, Taipei, 1963, XVI, p. 495.
- Howell F. H., Moloy I. S. Geology of the Braden Orebody, Chile, South America. Econ. Geol. v. 55, № 5, 1960, p. 863—905.
- King P. B. The Tectonic map of North America 1:5000000. Scient. communications read to the geological map of the world, Paris, 1966, p. 17—31.
- Macnamara P. M. Rock types and mineralization at Panguna porphyry copper prospect, upper Kaverong valley Bougainville island. Proc. Austr. Inst. Min. Met. № 228, december 1968, p. 71—79.
- Raguin E. La mine de cuivre de Kosake (Jaron) et le progrès des études sur la métallogénie des gisements métallifères volcanogènes. Chron. mines, Paris, an. 35, № 359, 1967, p. 31—35.
- Ruiz C. F., Ericksen G. F. Metallogenic provinces of Chile. Econ. Geol. v. 57, № 1, 1962, p. 91—106.
- Schneider-Scherbina A. Bolivian tin mineralization and evolution. Econ. Geol. v. 58, № 3, 1963, p. 456—459.
- Stoll W. C. Metallogenetic belts, centers and epochs in Argentina and Chile. Econ. Geol. v. 59, № 1, 1964, p. 126—135.
- Stoll W. C. Metallogenic provinces of South America. Min. Mag. 112, № 1—2, 1965, № 1, p. 22—31; № 2, p. 90—99.
- Tatsumi T., Sekine I., Kanehira K. Mineral Deposits of Volcanic affinity in Japan. Metallogeny. Volcanism and ore genesis, Tokyo, 1970, p. 3—47.
- Watanabe T. and Tatsumi T. Geological environment of formation of the Kuroko deposits. Collected abstracts. IMA-IACOD Meetings' 70, p. 91.

3. Ուրալյան մետաղածնային գոտին տեղադրված է Եվրոպայի ու Ասիայի սահմանում, եզրապատելով արևելքից Ռուսական վահան-պլատֆորմը: Ուրալյան գոտու տարածումը միջօրեական է, նրա ընդհանուր երկարությունը Պայխոյից մինչև Մուսոշարի լեռները կազմում է 4 հազար կմ, 500 կմ միջին լայնության դեպքում: Տարածականորեն նա համընկնում է Ուրալյան գեոսինկլինալային զոնայի հետ, որի սահմաններում ծալքավորման, մագմատիզմի և հանքայնացման ինտենսիվ պրոցեսները տեղի են ունեցել մասամբ կալեդոնյան, իսկ գլխավորապես հերցինյան օրոգենիկ դարաշրջաններում: Մինչդիժեյան մագմատիզմը և մետամորֆիզմը հարում են Ռուսական պլատֆորմի արտաուրալյան ծալքավոր հիմքի ստրուկտուրաներին ու հանդիպում են միայն Տարատաշյան ելուստում և խոր հորատանցքերում: Անդրուրալյան ու Պեչորյան սինկլիլիդի հետպալեոզոյան մագմատիզմը համապատասխանում է Ուրալի պլատֆորմային փուլի զարգացմանը և ներկայացված է ստորին տրիասյան տրապային մագմատիզմով, որն ընդգրկում է հսկայական տարածություն:

Ռիֆեյի-պալեոզոյի շրջանակներում մագմատիզմի ու մետաղածնության յուրահատկություններով առանձնացվում են (Վ. Ս. Штейнберг и др., 1969) Ուրալի ստրուկտուրայի հետևյալ ամենախոշոր միավորները՝

1. Կենտրոնական Ուրալյան բարձունքը (Կենտրոնական զոնա) ու նրան կից արևմտյան լանջի մասը:

2. Ուրալի արևելյան լանջը և նրան կից Արևելյան Անդրուրալի մի մասը:

Կենտրոնական զոնան արևմտյան լանջի հետ ներկայացնում է պլեոցենյան միոգենոսինկլինալի մարզ, այն ժամանակ, երբ Ուրալի արևելյան լանջը ու նրան կից Արևելյան Անդրուրալի մասն ունեն Օրդովիկյան-ուշպալեոզոյան էվգենոսինկլինալի բոլոր առանձնահատկությունները (նկ. 26):

Կենտրոնական զոնայի ու արևմտյան լանջի համար բնորոշ է տարբեր հասակի (վաղոիֆեյանից մինչև միջին պալեոզոյան) տրապային մագմատիզմի լայն զարգացումը, փոքր քանակությամբ արտահայտված են ուլտրահիմքային ու թթու ածանցյալները: Բազիտների ինտրուզիվ ֆացիաների հետ կապված են տիտանամագնետիտային հանքանյութերի հանքավայրերը, դիֆերենցված ուլտրաբազիտային-բազիտային ինտրուզիաների հետ՝ պղինձ-նիկելային սուլֆիդային հանքանյութերի երևակումները:

Ըստ Պրոնինի (А. А. Пронин, 1962), ուլտրահիմքային և հիմքային ապարների տեղաբաշխումն Ուրալում հսկվում է միջօրեականի ուղղության բեկվածքներով, որոնց մի մասը ըստ երևույթին հասնում էր բազալտային շերտին, իսկ մյուս մասը պերիդոտիտայինին: Միևնույն խորքային բեկվածքների զոնաների սահմաններում ուլտրահիմքային ապարների ներդրումը պարբերաբար ուժեղանալով ու դադարելով շարունակվում էր ստորին պալեոզոյից մինչև կարբոնի վիզյան դարը: Գլխավոր պերիդոտիտային գոտին (Կեմպիրսայանը) 2000 կմ-ից ավելի երկարությամբ ձգվում է Մուհոջարների հարավային ծայրամասից մինչև Հյուսիսային սառուցյալ օվկիանոս ու հարում է երկարատև գործող խորքային բեկվածքին. ինտրուզիվների հասակն է S_1 —մինչև D_1 ներառյալ: Պերիդոտիտային ֆորմացիաները կազմված են հիմնականում հարցբուրգիտներից զոնիտների ենթակա դերով:


Միջին Ուրալի արևմտյան լանջում երևան է գալիս հին (մինչդևոնյան) ալկալային ուլտրահիմքային մագմատիզմի ավաստաբեր մարզը:

Կենտրոնական զոնայի արևմտյան եզրի երկայնքով ու նրա Տիմանի հետ միակցության շրջանում արտահայտված է, ըստ երևույթին, ստորին-պալեոզոյան հասակի պլատֆորմային քիմբերլիտային մագմատիզմը լիմբուրգիտ-մայմեչիտի շարքի ուլտրահիմքային բազալտոիդներով ու քիմբերլիտների առանձին էլքերով (Տիմանում): Վերջապես, կենտրոնական զոնայում քեմբրի-ստորին օրդովիկի ինտերվալում զարգացած են հիպաբիսալ գրանիտները, գրանիտ-պորֆիրները, լիպարիտ-պորֆիրները, իսկ մինչօրդովիկի-ուշպալեոզոյի ինտերվալում արտահայտվել են գրանիտոիդային ինտրուզիաները հազվագյուտմետաղային հանքայնացումով:

Արևելյան էվգենոսինկլինալային զոնայի զգալի տարածքում օրդովիկում և վաղ սիլուրում ձևավորվել է վաղ փուլերի համար բնորոշ հրաբխա-նստվածքային ֆորմացիա՝ դիաբազներ, սպիրիտներ, կավային ու կայծքարային թերթաքարեր:

Ավելի ուշ առանձնացվել են մի կողմից սիմատիկ, մյուս կողմից գրանիտոիդային մագմատիզմի զարգացման զոնաները: Ամենաերիտասաբղ գրանիտոիդային ինտրուզիաները հատում են միջին կարբոնը, սակայն բացարձակ հասակի որոշումների տվյալներով գրանիտոիդների ներդրումը տեղի է ունեցել մինչև ուշ պերմը. պերիդոտիտներն ու գաբրոները հատում են տեղ-տեղ ստորին կարբոնը և իրենք հատվում են գրանիտոիդներով:

Ուրալի էնդոգեն մետաղածնությունն ուսումնասիրել է երկրաբանների



Նկ. 26—Ուրալիզների ու մինչուրալիզների ստրուկտուրաների հարաբերակցության սխեմա (ըստ Վ. Ս. Փուրավլևի, Ա. Ս. Պերֆիլևի ու Ն. Պ. Խերասկովի)

1—Ռուսական պլատֆորմայի էպիկարելյան բլուկ, 2—պլատֆորմի և Ուրալյան ծալքավոր սիստեմի հիմքի մինչուրալիզներ, 3—պլատֆորմի հիմքի զլխավոր բեկվածքներ, 4—պլատֆորմի եզրային կարեր, 5—ուրալիզների գեոսինկլինալային կոմպլեքս, 6—տյանշանիզների գեոսինկլինալային կոմպլեքս նստվածքային թիկնոցի տակ, 7—նախաուրալյան իշվածք, 8—վերին պալեոզոյան-տրիասի մոլաններ մեզոկայնոզոյան նստվածքային թիկնոցի տակ, 9—Մանգիշլակի վերինպալեոզոյան-տրիասի մոլաններ, 10—մինչուրալիզների հիմնական ստրուկտուրաների տարածում, 11—Արևմտ-Սիրիական սալի մեզոկայնոզոյան թիկնոց:

մեծ կոլեկտիվ. նրանցից հարկ է նշել Ն. Կ. Վիտոցկուն, Ա. Ն. Զավարիցկուն, Ա. Գ. Բետեխտինին, Ս. Ն. Իվանովին, Վ. Մ. Սերգեևսկուն, Լ. Ն. Օվչիննիկովին, Գ. Ա. Սոկոլովին, Դ. Ս. Շտեյնբերգին, Բ. Մ. Ռոմանովին և ուրիշ:

Համաձայն Պ. Ս. Պրյամոնոսովի և ուրիշների (1969) ու Վ. Մ. Սերգեևսկու (1971) նոր ամփոփիչ աշխատությունների, Ուրալի մետաղածնության համար հատկապես բնորոշ են՝ երկաթը, տիտանը, վանադիումը, պլատինը, քրոմը, պղինձը, ոսկին, արծաթը, ցինկը, ինչպես նաև տանտալը, նիոբիումը, բերիլիումը, վոլֆրամը, ցիրկոնիումը և հազվագյուտ հողերը: Ոչ մետաղային օգտակար հանածոներից հայտնի են ասբեստի եղակի ու պլեզո-բվարցի, բարիտի, կորունդի, գրաֆիտի, փայլարի, թանկարժեք քարերի խոշոր կուտակումներ:

Ուրալում են գեոսինկլինալային զարգացման բնույթով տարբեր երկու մեգացիկլեր՝ 1) ուշ մինչքեմբրյան-քեմբրյան՝ Ուրալի արևմտյան լանջում ու նրա առանցքային զոնայում և 2) օրդովիկ-ուշպալեոզոյան՝ Ուրալի արևելյան լանջում ու նրան կից Անդրուրալի մասում:

Ուրալի արևմտյան լանջին, միոգեոսինկլինալային ու կիսապլատֆորմային պայմաններում՝ առաջացել են բազմամետաղային հանքանյութերի տեղեթերմալ հանքավայրեր և ոսկու փոքր երևակումներ:

Ուրալի առանցքային մասում կան քրոմիտի, երկաթի, պղնձի, ոսկու, բազմամետաղների ու հազվագյուտ մետաղների արդյունաբերական հանքավայրեր: Շատ ավելի հարուստ է ու բազմազան Ուրալի արևելյան լանջի մետաղածնությունը, որտեղ զարգանում է պալեոզոյան (օրդովիկ-վերին պալեոզոյ) էվգեոսինկլինալը և տեղի է ունենում բազալտոիդային, հիպերբազիտային ու գրանիտոիդային ֆորմացիաների ասպարների բազմաթիվ ներդրումներ:

Ուրալի արևելյան լանջին ավելի բնորոշ են երկաթի, պղնձի, տիտանի, վանադիումի, քրոմի, պլատինի, ոսկու, հազվագյուտ մետաղների, ասբեստի, պլեզոբվարցի, փայլարի ու տալիի հանքավայրերը:

Ուրալի էնդոգեն հանքայնացումը կապված է շրջ ֆորմացիոն խմբերի հետ՝ բազալտոիդային, հիպերբազիտային, գրանիտոիդային, գնեյսա-միգմատիտային: Բազալտոիդային ֆորմացիաները բազմիցս արտահայտվել են ստորին պրոտերոզոյից մինչև ստորին կարբոնը ներառյալ, բայց ամենամեծ զարգացումն ունեցել են օրդովիկում, սիլուրում և դևոնում:

Սրանք ներկայացված են զաբրոներով, դիորիտներով, սիենիտներով, պլազիոգրանիտներով ու նրանց համապատասխանող հրաբխածին կոմագմատներով: Բազալտոիդային ֆորմացիաների հետ կապված են բազմաթիվ մետաղային հանքավայրեր՝ ա) բունմագմատիկ տիտանամագնետիտային ու իլմենիտ-մագնետիտային պիրոքսենիտներում, զաբրոներում, զաբրոդիաբազներում (Կաշկանար, Կուսին-Կոպան, Բայանովսկ), բոռնիտ-տիտանամագնետիտային զաբրոներում (Վոլկովյան), բ) սկառնային մագնետիտային (Կուստանայի խումբը, Մազնիտոգորսկ, Բլազոդատ և ուրիշներ), պղինձ-մագնետիտային (Տուրինյան հանքերը, Մեղնորուդյանսկ), մանգանային (Լիպովայա լեռը, Կադանսկի), գ) հիդրոթերմալ, մասամբ, հավանաբար, էքսհալյացիոն-նստվածքային մուշկետովիտ-հեմատիտային (Կուտիմյան), հաուս-մանիտ-ռոզոխրոդիտային (Սապալսկ), ինչպես նաև կոլչեդանային միջին ու թթու կազմության հրաբխա-նստվածքային ասպարներում (բազմաթիվ խոշոր

հանքավայրեր Գլխավոր, Արևմտյան ու Արևելյան Ուրալի կանաչքարային զոնաներում), պղինձ-կոբալտային (Պիշմինյան), պղինձ-պորֆիրային (Բիր-գիդինյան) և ուրիշ:

Սպիլիտա-կերատոֆիրների ու պորֆիրիտների (օրդովիկ-միջին դեռնի, Մուհոջարներում ստորին կարբոնի հասակի) ու նրանց ենթակա և նույն հասակի սուբհրաբխային ալբիտոֆիրների ու պորֆիրների փոքր ինտրուզիաների հետ տարածականորեն ու զենետիկորեն կապված են բազմաթիվ պղինձ-կոլչեդանային հանքավայրեր, որոնք կազմում են Ուրալի պղնձի արդյունաբերության գլխավոր հումքային բազան:

Հարավային Ուրալում նրանք տեղադրված են էֆուզիվներում ու բնութագրվում են հանքային մարմինների անկանոն ձևերով և կողմորֆ հանքանյութերով (Սիբայ, Բլյավա, Ուշալի, Գայ և ուրիշներ), իսկ Միջին Ուրալում՝ նույն էֆուզիվների թերթավորված դինամոմետամորֆացված տարբերակներում գտնվում են ոսպնյակասալաձև, կարծես թե ձմլված հանքային մարմիններ բյուրեղային հանքանյութերով (Կիրովոգրադ, Կարպուշիխա, Դեգոտյարկա և ուրիշ):

Շատ ղեպքերում (Կաբանսկի V հանքավայրը, Լեխիսա և ուրիշներ) կարելի է դիտել կոլչեդանային հանքամարմինների սերտ տարածական կապը ալբիտոֆիրների ու պորֆիրների սուբհրաբխային փոքր ինտրուզիաների հետ, որը թույլ է տալիս հիմնավորված եզրակացություն անել այդ երկուսի խորքային մագմատիկ օջախի ընդհանրության մասին: Ուրալի կոլչեդանային հանքավայրերի հիդրոթերմալ մետասոմատիտների (սերիցիտների) բացարձակ հասակը տատանվում է 300—420 մլն. տ. սահմաններում (Մ. Ա. Գարիսի տվյալներով, 1964), որը համընկնում է հանք պարունակող ապարների հասակի (օրդովիկ-D₂) հետ:

Ուրալի կոլչեդանային հանքայնացումը ներփակող հզոր հրաբխանստվածքային հաստվածքների ձևավորումը տեղի է ունեցել մինչ գլխավոր հերցինյան ծալքավորումը, այսինքն զարգացման վաղ փուլում:

Հերցինյան ծալքավորման հետևանքով հանք պարունակող հաստվածքներն ու կոլչեդանային հանքավայրերը ենթարկվել են մետամորֆիզմի՝ ավելի ուժեղ Միջին Ուրալում և համեմատաբար թույլ՝ Հարավային Ուրալում. դրանով էլ բացատրվում է մի կողմից Միջին, մյուս կողմից՝ Հարավային Ուրալի կոլչեդանային հանքավայրերի ներփակող ապարների, հանքամարմինների ձևերի ու հանքանյութերի բնույթի տարբերությունը:

Ուրալում ամենաարդյունավետը եղել են պրոտերոզոյան-քեմբրյան (Կուսինի-Կոպանի ու Յուբրիշկինի իլմենիտ-մագնետիտային տիտանով հարուստ հանքավայրերը, Բաչկալի սիդերիտային ու Սատկալի մագնեզիտային հանքավայրերը), օրդովիկյան-վաղդեռնյան (սկառնային երկաթի, պղինձ-կոլչեդանային, պղինձ-տիտանամագնետիտային հանքավայրերը), միջինդեռնյան-վաղտորնեյան (սկառնային երկաթի ու պղնձի, պղինձ-կոլչեդանային հանքավայրերի մի մասը), ուշտորնեյան-նամյուրյան (Մադնիտոգորսկի սկառնային հանքավայրերը) փուլերը:

Ուրալի բազալտոիդային ֆորմացիաների մեջ առանձնացնում են ապարների երկու սերիաներ՝ էպպես նատրիումային, որի հետ կապված է պղինձ-կոլչեդանային հանքայնացումը (սիլուրում, միջին դեռնում և մասամբ ստորին կարբոնում) և ավելի ուշ կալիում-նատրիումային, որի հետ կապված են

սկանա-մագնետիտային խոշոր հանքավայրերը (վերին սիլուրի վերջում, ստորին դևոնում, վերին դևոնի վերջում ու ստորին կարբոնում):

Ուրալի կոլչեդանային հանքավայրերը տարածականորեն ու զենետիկորեն սերտ կապված են սպիլիտա-կերատոֆիրային (դիարադա-քվարցալիտոֆիրային) ֆորմացիայի հետ և միայն Միջին Ուրալի ամենահյուսիսում հանքավայրերը տեղադրված են ալբիտացված պորֆիրիտա-դիարադային ապարներում, որոնք հերթափոխում են սպիլիտա-կերատոֆիրներին:

Պղինձ-կոլչեդանային ամենախոշոր հանքավայրերը տարածականորեն կապված են տուֆերի ու բրեկչիաների և քվարցային ալբիտոֆիրների էքստրուզիաների հետ. հանքավայրերից շատերը տեղադրված են բրախի-անտիկլինալների սահմաններում, որոնք իրենցից ներկայացնում են հին հրաբխային կառուցվածքներ:

Հիպերբազիտային ֆորմացիաներն արտահայտվել են Ուրալում վաղ պալեոզոյում, սիլուրում, միջին և ուշ դևոնում և վաղ կարբոնում:

Առանձնացվում են երկու ֆորմացիաներ՝ դունիտ-հարցբուրգիտային (պերիդոտիտային) ու դունիտ-կլինոպիրոքսենիտային, որոնք մետաղածուխյամբ տարբերվում են միմյանցից: Պերիդոտիտային ֆորմացիայի հետ կապված են քրոմիտի, խրիզոտիլ ու ամֆիբոլասբեստի, տալիի խոշոր հանքավայրերը, օսմիումային իրիդիումի երեակումները, նիկելի հիդրոսիլիկատային հանքանյութերի հանքավայրերը: Դունիտ-կլինոպիրոքսենիտային ֆորմացիայի հետ կապված են տիտանամագնետիտային հանքանյութերի ու պլատինի հանքավայրերը, ցանավոր քրոմիտի հանքանյացումը:

Քրոմիտային հանքանյացումը ենթաբաժանվում է մետաղածնային մի քանի փուլերի. օրդովիկի-վադդեոնի ժամանակ առաջացել են մասշտաբներով ու հանքանյութերի որակով եզակի Կեմպիրսյան հանքավայրերը Մուհոնջարներում, ինչպես նաև Սարանա հանքավայրը Միջին Ուրալում: Միջին-դևոնյան-վաղտուրնեյան էտապում ձևավորվել են Միջին Ուրալի փոքր հանքավայրերը, իսկ վաղկարբոնյան էտապում՝ հոծ ու ցանավոր հանքանյութերի կարևոր հանքավայրերը (Ալապակսկի և Կլյուչսկի խմբերը, վերելուծեգորսկի հանքավայրը և այլն):

Խրիզոտիլ-ասբեստի ամենամեծ հանքավայրերը (Բաժենովո) տեղադրված են սերպենտինացված պերիդոտիտներում, բայց առաջացել են ուշ պալեոզոյում հերցինյան գրանիտոիդների ներդրման հետ կապված: Ինչ վերաբերում է դունիտ-կլինոպիրոքսենիտային ֆորմացիային, ապա նրա բազադրոթյան մեջ մտնող տարբեր մագմատիկ ապարների համար մետաղածուխյունը տարբեր է՝ զարբոններում ու գաբրո-ամֆիբոլիտներում տեղադրված են իլմենիտ-մագնետիտային հանքավայրերը, պիրոքսենիտներում (դիալագիտներ), խոշորահատիկ հոռնբլենդիտներում ու օլիվինիտներում՝ տիտանամագնետիտային հանքավայրերը, դունիտներում՝ պլատինի կուտակումները քրոմիտի ու օսմիումային իրիդիումի դուզակցուլյամբ:

Պլատինաբեր դունիտ-կլինոպիրոքսենիտային (գաբրո-պերիդոտիտային) դոտու ձևավորումը ավարտվում է վաղ մինչծալքավոր էտապում, ստորին դևոնում. դա բազալտոիդային ծագման բարդ դիֆերենցված ինտրուզիվ համալիր է, որը տեղադրված է օրդովիկի ու մասամբ ստորին դևոնի հրաբխածին-նստվածքային հաստվածքներից կազմված Տագիլի սինկլինորթիումում (Сергиевский, 1960).

Գոտու ընդհանուր երկարությունը շուրջ 900 կմ է, ընդ որում նրա զանգվածներում առանձնացվում են հրեք հերթափոխվող համալիրներ (ներդրման ֆազաներ)՝ 1) դունիտ-պերիդոտիտային քրոմիտով ու պլատինով (Սոլովյովա լեռ և այլն), 2) գաբրոյի ֆազա տիտանամագնետիտային հանքայնացումով (Կաչկանար լեռը, Գուսևի լեռները և այլն), 3) սիենիտ-գրանիտ-գրանոդիորիտ-պլագիոգրանիտային երկաթի կոնտակտ-մետասոմատիկ հանքավայրերով (Բլագոդատ ու Վիսոկայա լեռները, Լեբյաժինսկի, Եվստյունինսկի, Օսոկինո-Ալեքսանդրիևսկի և այլն) ու պղնձի (Մեղնորուդյանսկ և այլն) հանքանյութերով:

Գրանիտոիդային ֆորմացիաներն Ուրալում արտահայտվել են բազմիցս՝ վաղ և ուշ պրոտերոզոյում, քեմբրում, ուշ պալեոզոյում, հավանաբար և միջին պալեոզոյում: Գրանիտային ֆորմացիաների հետ կապված են ոսկու, մկնդեղի, վոլֆրամի, բերիլիումի, նիոբիումի, տանտալի, մոլիբդենի, հազվագյուտ հողերի, ցիրկոնիումի, ծարիրի, սնդիկի, ֆլյուորիտի, թանկարժեք բարերի հանքավայրերը:

Գրանիտոիդների մեջ առանձնացվում են ենթաֆորմացիաներ իրենց յուրահատուկ մետաղածուխյամբ՝ գրանոդիորիտային ենթաֆորմացիա Աս, Հց (°), արսենոպիրիտի, շեելիտի, կոլումբիտի, մոնացիտի հանքավայրերով. ալյասկիտային ենթաֆորմացիա վոլֆրամիտի, բերիլի, տանտալիտի-կոլումբիտի, քսենոտիմի հանքավայրերով և միասկիտային ենթաֆորմացիա՝ պիրոքլորի, ցիրկոնի, հազվագյուտհողային միներալների հանքավայրերով: Ուրալում լայն զարգացած է հերցինյան գրանիտային ֆորմացիան, այն դեպքում, երբ ավելի հնրի դերը չնշին է:

Գրանիտոիդների հետ կապված են ոսկի-սուլֆիդային հանքանյութերի այնպիսի խոշոր հանքավայրեր, ինչպիսիք են Բերյոզովսկի, Կոչկարսկի, Զետիգարինսկի, ոսկի-շեելիտային հանքանյութերի Այդիրլինսկի ու Նոյո-Բերյոզովսկի, շեելիտային սկաոնային Գումբեյսկի, քվարց-վոլֆրամիտային Յուգո-Կոնսկի, ինչպես նաև տանտալ-նիոբիում-ֆլյուորիտային, բերիլ-ֆլյուորիտային, կոլումբիտ-բերիլային, ցիրկոն-պիրոքլորային ու պլեզոքվարցի հանքավայրերը:

Համաձայն բացարձակ հասակի որոշումների (Դարրիս և Դր., 1964), Կոչկարի ոսկի-արսենոպիրիտային հանքավայրի հասակը 300 մլն. տ. է, այսինքն միջինհերցինյան է:

Ուրալի ոսկու մյուս հանքավայրերը, այդ թվում՝ Բերյոզովսկի, Կլյուշևսկի, Կամանսկի, ուշհերցինյան (250—260 մլն. տ.) հասակի են:

Հասակով միջինհերցինյան են (300 մլն. տ.) գրանիտային պեգմատիտների հանքավայրերը, այն ժամանակ, երբ Իլմենյան լեռների ալկալային զանգվածներն ու նրանց հետ կապված հանքայնացումն ունեն ուշհերցինյան (250—270 մլն. տ.), հիմնականում P_1 հասակ:

Նույն հեղինակը (Դարրիս, 1964) Ուրալի կոլչեդանային հանքայնացման բացարձակ հասակի վերաբերյալ հետաքրքիր տվյալներ է բերում: Առանձնացվում են կոլչեդանային հանքայնացման տարբեր հասակի դարաշրջաններ՝ միջինկալեդոնյան (410—430 մլն. տ., Սիբայ, Բլյավա, Գայ, Յաման-Կասի և ուրիշ հանքավայրեր), միջինհերցինյան (285—325 մլն. տ., Դեգույար-կա, XIX Կոսհամագոմարի անվան, Ուշալի և ուշ փուլերը Բլյավա, Սիբալ, Գայ հանքավայրերում):

Կոլչեդանային հանքայնացման ամենախնտենսիվ արտահայտությունը ուշկալեդոնյան դարաշրջանում է, D_1 ու D_2 սահմանում, սակայն մինչև միջին դեռնը. կոլչեդանային հանքայնացման ավելի երիտասարդ միջինհերցինյան դարաշրջանը տարածականորեն զուգակցվում է ուշկալեդոնյանի հետ, կամ էլ առաջացնում է ինքնուրույն բազմամետաղային (Ջյուզեխի) տիպի հանքավայրեր:

Ըստ Գ. Վ. Ռունդկվիստի (1964), Ուրալի արևելյան լանջում Արևելյան-Ուրալյան անտիկլինորիումի Մուրզինա-Ադամովյան միջօրեականի գոտու սահմաններում լայն տարածված են հետմիջինկարբոնի գրանիտոիդները, որոնց հետ տարածականորեն ու ծագմամբ սերտ կապված են բազմաթիվ քվարց-հանքաքեր երակներ Au, W, Mo, As և ուրիշ մետաղների հանքայնացումով: Այդ հանքավայրերի համար առանձնացվում են երկու խմբեր՝ առաջինը կապված է շափավոր թթվության գրանիտոիդների հետ ու ներկայացված է քվարց-ոսկեքեր, քվարց-ոսկի-արսենոպիրիտային ու քվարց-ոսկի-շենիտային երակներով. երկրորդը կապված է ամենաուշ լեյկոկրատային գրանիտների հետ ու ներկայացված է քվարց-վոլֆրամիտային, քվարց-մոլիբդենիտային, կոմպլեքսային քվարց-հազվագյուտամետաղային երակներով: Երկու խմբերի հանքայնացումն էլ հարում է միջօրեականի ու նրանց կցորդվող անկյունագծային խախտումների զոնաներին ու տեղադրվում է գրանիտոիդային զանգվածների էնդո- և էկզոկոնտակտային զոնաներում, սովորաբար օրդովիկի-ստորին կարբոնի էֆուզիվ-նստվածքային մետամորֆացված ապարներում:

Բևեռային ու մերձբևեռային Ուրալում հաստատված է նույն մագմատիկ ֆորմացիաների՝ բազալտոիդային, հիպերբազիտային ու գրանիտային զարգացումը, որոնք սահմանված են նրա արևելյան լանջում և բնութագրվում են հանքայնացման բնորոշ կոմպլեքսով:

Ամենահեռակարայինը այստեղ մոլիբդենիտի ու վոլֆրամիտի հանքավայրերն են, որոնք կապված են վերինպրոտերոզոյան-քեմբրի տեկտոնամագմատիկական ցիկլի հետ. հետաքրքիր են նաև հազվագյուտամետաղային (Ta-Nb) հանքավայրերը, տեղադրված վերինպալեոզոյան մետասոմատիկորեն վերամշակված գրանիտներում:

Բևեռային Ուրալում Մեծ Խարբեա և Հյուսիսային Ուրալում Վիշերա գետերի ավազաններում վերջերս հաստատված է ստորին պալեոզոյի գրանիտա-լիպարիտային ֆորմացիայի արտահայտումը, որի հետ կապված են արծաթի, պղնձի և այլ մետաղների հեռանկարային հիդրոթերմալ երևակումներ:

Այսպիսով, բնութագրելով Ուրալյան գոտու մետաղածնության հիմնական առանձնահատկությունները, պետք է ընդգծել մի կողմից բազիտների-հիպերբազիտների, իսկ մյուս կողմից գրանիտոիդների լայն զարգացումը:

Արևմտյան լանջի ու կենտրոնական զոնայի միոգենոսինկլինալային մարզի ունի ուշպրոտերոզոյան-օրդովիկյան հանքայնացում (Mo, Sb, As, Cu, Fe, Pb, Zn), որը կապված է Բևեռային Ուրալի Խարբեայան և ավելի հարավ տեղադրված ուրիշ գրանիտային համալիրների հետ:

Այստեղ լայն տարածված են նաև հիպերբազիտները քրոմիտային հանքայնացումով (Սարանա և այլն)՝ ու գաբրոիդները վանադիումաքեր տիտանամագնետիտային հանքանյութերով (Կուսինսկի):

Կերատոֆիրա-սպիրիտային ֆորմացիայի հետ կապված է կոլչեդանային:

պղինձ-ցինկային հանքայնացումը, իսկ վերին պրոտերոզոյի տերիգեն-կար-քոնատային հաստվածքներում տեղադրված են տելեթերմալ (կամ նստված-քային ²) սիդերիտային (Բակալ) ու մագնեզիտային (Սատկա) հանքանյութերի հանքավայրերը:

Զարգացման վերջնական փուլի տելեթերմալ հանքայնացման զոնաներն ունեն վաղմեզոզոյան հասակ ու տեղադրվում են միոզեոսինկլինալային մար-չի արևմտյան եզրում: Այդ զոնաներից խոշորագույնը Պայ-Նոյ-Վայցաչյանն է, որը շարունակվում է Նոր երկրում: Օրգովիկի ու սիլուրի կրաքարերում ու գրոմիտներում տեղադրված են կապար-ցինկային հանքանյութերի բազմա-թիվ (Վառնեկա ծովախորշ), պղնձի հանքանյութերի (Սոբոլեսկի) երևա-կումներ ու ֆլյուորիտի մեկ շատ խոշոր հանքավայր (Ամդերմա): Կապար-ցինկային, պղնձի ու ֆլյուորիտի հանքավայրերի այդ գոտին ձգտում է միմյանց զուգահեռ խախտումների զոնային, որը հատում է ծալքավորու-թյունը փոքր անկյան տակ:


Նույն տիպի հանքայնացում դիտվում է Պոլյուզովա Կամեն անտիկլինա-լային ստրուկտուրայի կարբոնի ու պերմի նստվածքներում (Նիրոբյան խումբ), իսկ Մերձուրալի վերին պերմի նստվածքներում հայտնաբերված են բարի-տային երակներ:

Ուրալի արևելյան լանջի էվգենսինկլինալային մարզը: Այստեղ ինտեն-սիվ զարգացած է սկզբնական ու վաղ փուլերի հանքայնացումը: Դունիտ-հարցբուրգիտային մաղմատիկ համալիրի հետ կապված են քրոմիտի ու ասբեստի խոշոր հանքավայրեր, երբեմն Cu և Co, հիպերդեն Ni և Co հան-քայնացում: Գաբրո-պիրոքսենիտ-դունիտային համալիրի հետ կապված են պլատինի, տիտանից աղքատ մագնետիտային հանքանյութերի, պղնձի ցանավոր հանքանյութերի հանքավայրեր: Գաբրո-պլազիոգրանիտների հետ սերտ կապված են մագնետիտային սկառնային հանքանյութերի հանքավայրերը (Cu, Co, Mo-ի խառնուրդով), ինչպես նաև ոսկու և ոսկի-արսենոպիրիտային հանքավայրերը. գաբրո-սիենիտներին հարում են մագ-նետիտային սկառնային հանքավայրեր Cu ու Co խառնուրդով, ինչպես նաև մանգանային սկառնային հանքավայրեր:

Դիաբազ-ալբիտոֆիրային կամ անդեզիտ-դացիտ-լիպարիտային համա-լիրների հետ կապված են էքսհալյացիոն-նստվածքային ու հիդրոթերմալ սուբհրաբխային ծագման կոլչեղանային հանքավայրեր: էվգենոսինկլինալի սահմաններում առանձնանում են հանքայնացման մի քանի զոնաներ (նկ. 27):

1. Տագիլա-Մագնիտոգորսկի մետաղածնային զոնա սկզբնական ու վաղ փուլերի ֆեմիկ տիպի հանքայնացմամբ: Կիմպերսայի կոմպլեքսի (հասա-կը S₁) հիպերբազիտների հետ կապված են քրոմիտի եղակի հանքավայրեր, Տագիլա-Կիտլիմյան գաբրո-պիրոքսենիտ-դունիտային պլատինաբեր կոմպլեք-սի հետ՝ բնածին ու պլազիոմային պլատինի համաշխարհային ճանաչում գտած արմատական ու ցրոնային հանքավայրերը, ինչպես նաև տիտանից աղքատ մագնետիտային ու պղինձ-վանադիում-տիտանային հանքանյութերի կուտակումները:

Սիլուրի ու դեռնի գաբրո-պլազիոգրանիտային համալիրների հետ զու-գակցվում են երկաթի սկառնային հանքանյութերի հանքավայրերը (Cu, Co, Mo-ի խառնուրդով) և ոսկու մի քանի ոչ մեծ հանքավայրերը: Տագիլա-Կոլչ-վինսկի վաղդեռնյան գաբրո-սիենիտային համալիրը պարունակում է մագ-



Նկ. 27—Ուրալի գոտեղ կառուցվածքի սխեմա (ըստ Ս. Ա. Վախրոմենի, 2. Գ. Մաղաքյանի լրացումներով)։ 1—խորքային թթու հրային ապարներ (գրանիտներ, գրանոդիորիտներ, սիենիտներ, միասկիտներ) ու նրանց հետ կապված ոսկերեք ու հազվագյուտ մետաղային հանքավայրեր, 2—հիմքային ու ուլտրահիմքային ապարներ (զարրո, պիրոքսենիտներ, պերիդոտիտներ, դունիտներ, օձաքարեր) և նրանց հետ կապված տիտանամագնետիտի, բրոմիտի, պլատինի, արսենտի և ուրիշ հանքավայրեր, 3—Ուրալի Արևելյան լանջի կանաչքարային զոլը (էֆուզիվներ, տուֆեր, ստորին պալեոզոյի ֆերթաքարեր ու նստվածքային ապարներ), 4—պլեյստոցենի հանքավայրեր, տեղադրված կանաչքարային զոլում, 5—տիտանամագնետիտային հանքավայրեր, 6—երկաթի սկառնային հանքավայրեր, 7—ոսկերեք հանքավայրեր, 8—պլատինի հանքավայրեր, 9—բրոմիտի հանքավայրեր։

նետիտային սկառնային հանքանյութերի խոշոր հանքավայրեր (Բլագոդատ, Վիսոկայա լեռները և ուրիշ.): Այստեղ առանձնացվում են նաև երեք տարբեր հասակի կոլչեդանային համալիրներ՝ օրդովիկյան, վաղսիլուրյան (°) ու միջինդեոնյան:

Միջին փուլի հանքայնացման զոնաները ներկայացված են Մագնիտո-գորսկի գոլում, կապված են գրանիտոդիորիտների ներգրման հետ և կազմում են երկաթի սկառնային խոշոր հանքավայրեր, շեելիտի հանքավայրեր սկառներում և քվարցային երակներում (Mo ու Bi խառնուրդով), երակային ոսկեբեր, կապարի, բարիտի հանքավայրեր: Ավելի երիտասարդ ալյասկիտային գրանիտների հետ կապված է W-Mo-Bi հանքայնացումը:

Արևելյան Ուրալյան անտիկլինորիումի արևմտյան գոտու գրանիտոդիորիտի հետ կապված են ոսկի-քվարցային, ոսկի-շեելիտային, ոսկի-արսենոպիրիտային հանքավայրերը և ուրիշ.: Ուշ փուլի հանքայնացման զոնաները հարում են հետբաթոլիտային դալկային գրանիտոդիորիտներին, ուշ փուլի հանքավայրերի համար բնորոշ են Au, Co ու Cu, մասամբ նաև Mo, Pb, Bi, As, Sb, Hg, երբեմն W:

Հանքայնացման բոլորովին ալլ տիպ ներկայացված է հազվագյուտմետաղային հանքայնացումով (Nb, Zr, TR), կապված ալկալային ինտրուզիաների հետ: Ուշ փուլի գրանիտոդիորիտի հետ կապված հանքայնացման զոնաների օրինակներ են Բերչոգովսկին ու Կոմանսկին: Նրանցից առաջինում լայն տարածված են դալկային սերիաներն ու նրանց հետ կապված ոսկի-պիրիտային երակները (Բերչոգովսկի հանքավայրը), ինչպես նաև շեելիտաբեր երակները, պիրոտինային պղինձ-կոբալտային չուրահատուկ հանքավայրերը ու քվարց-մոլիբդենիտային երևակումները: Երկրորդ (Կոմանսկայա) զոնայում հետբաթոլիտային գրանիտոդիորիտի ու պորֆիրիտների հետ կապված է էպսեմ ոսկեբեր (տելուրիդներով) և պղինձ-տուրմալինային հանքայնացումը:

Արևելյան Ուրալին կից Արևմտյան Տուրգայի զոնայում լայն տարածված են անդեզիտա-բազալտները և նրանց հատող գաբրո-դիորիտային ու քվարցդիորիտ-գրանոդիորիտային կազմովյան ուշբաշկիրյան (°) հասակի ինտրուզիաները: Այստեղ ինտենսիվ զարգացած է սկառնային երկաթաբեր հանքայնացում Կուստանայի խմբի (Սոկոլովսկի, Սարբայսկի, Կաչարսկի և ուրիշ հանքավայրեր):

Բլագոդատ, Վիսոկայա լեռների ու Լեբյաժինսկի հանքի գրանիտոդիորային զանգվածների բացարձակ հասակի որոշումները տալիս են 370—380 մլն. տ., այսինքն՝ ուշկալեդոնյան են: Մագնիտնայա լեռան ու Կուստանայի խմբի սկառնային հանքավայրերի համար հաստատվում է 295—315 մլն. տ. հասակ, որը համապատասխանում է միջինհերցինյան դարաշրջանին (բոլոր տվյալները ըստ М. А. Гаррис, 1964):

Վ. Ի. Սմիռնովը (1963) Ուրալի համար ամբողջությամբ վերցրած առանձնացնում է տարածականորեն մեկուսացված շորս տեկտոնական միավորումների իրենց չուրահատուկ մետաղածնությամբ:

1. Գեոսինկլինալային խրամներ ստործովյա էֆուզիվներով (կոլչեդանային հանքայնացում) և վաղ փուլի պլազիոգրանիտների և սիենիտների ինտրուզիաներով (Fe ու Cu սկառնային հանքավայրեր):

2. Խորքային բեկվածքներ ուլտրահիմքային-հիմքային ապարներով և

Նրանց հետ կապված Cr, Fe-Ti-V, Pt-ի ու նրա խմբի մետաղների և ավա-
տի հանքավայրերով:

3. Ներքին զեռանտիկլինորիումներ միջին փուլի գրանիտային ինտրու-
զիաներով ու Au, As, W և ուրիշ հազվագյուտ մետաղների հիգրոթերմալ
հանքայնացումով:

Աղյուսակ 6

Ուրալի էնդոգեն մետաղածնության հիմնական գծերը

| Մագմատիկ համալիրներ | Հասակն ու զարգացման փուլը | Հանքային բնորոշ ֆորմա- ցիաներ | Հանքավայրերի օրինակներ |
|--|--|--|---|
| Բազալտո- լավային | Պրոտերոզոյ-ստորին կար- բոն (գլխավորապես O, S, D), վաղ փուլեր | Տիտանամագնետիտային, իլմենիտ-մագնետիտային Բոնիտ-տիտանամագնե- տիտային Սկանոնային տիպերով՝ ա) Մագնետիտային բ) Պղնձաբեր Կոլչիդանային Պղինձ-կոբալտային Պղինձ-սրբֆիրային Քրոմիտային Ասբեստային Պլատինի (Os և Ir) Տիտանամագնետիտային | Կաշկանար, Կուսինսկի, Կոպանսկի Վոլկովսկի Կուստանայի խումբը Քլազոդատ լեռը, Մագնիտնայա լեռը Տուրինսկի հանքեր Մեդնորոզյանսկ Բլյավա, Սիբայ, Ուշալի, Փայ, Կեզոյարկա, Կիրո- վոգրադ ու ուրիշ. Պիշմինսկի Բիբգիլդինսկի Կեմպիրսայի խումբը Սարանա Քաժենոլո և ուրիշ. Նիժնի Տագիլ Պերվուրալսկի (*) |
| Հիպերբազի- տային գու- նիտ-հաբց- րուրգիտա- յին (պերի- դոտիտային) | Վաղ պալեոզոյ, վաղ կար- բոն, վաղ փուլեր | Ոսկի-արսենոսպիրիտային Ոսկի-սուլֆիդային Սկանոնային (շեկիտային տիպ) Քվարց-վոլֆրամիտային Ֆլուորիտային Կապար-ցինկային, քվարց- մոլիբդենիտային, տան- տալիտ-կոլումբիտային, պղինձ-տուրմալինային | Կոշկար, Զետիգարա Բեբյոզովսկի Գուսմբյակի Յուզո-Կոնեակի և ուրիշ. Ամդերմա և ուրիշ. Բազմաթիվ երևակումներ, հանքավայրեր Mo (հար- բեյ), Sn ու Bi (Տոր- զովսկի), Pb ու Zn (Վար- նեկա, Պայ-Նոյ, Վայգաշ կղզի) |
| Գրանիտոի- դային | Պրոտերոզոյ-վերին պալեո- զոյ Միջին և ուշ փուլերը | | |

4. Գեոսինկլինալային շրջանի ուշ փուլի գրանիտոիդների փոքր ին-
տրուզիաներով ու Ֆլյուորիտի, Pb ու Zn, Sb ու Hg տեղեթերմալ հանքա-
վայրերով:

Ուրալի մետաղածնության հիմնական գծերը ներկայացված են աղյու-
սակ 6-ում:

- Аленко М. А., Матсегва Г. В., Плотнокова М. И. Открытие алмазов на Тимане и перспективы его алмазоносности. «Матер. ВСЕГЕИ, нов. серия», вып. 4, 1960, с. 5—13.
- Билибина Т. В. Металлогения южной части Южного Урала. «Сов. геол.», № 6, 1960, с. 26—40.
- Вербицкая Н. П., Ганеева Г. М. О возможных источниках алмазов в россыпях зап. склона Урала. «Разв. и охрана недр», № 3, 1959, с. 8—12.
- Воробьева О. А. и др. Габбро-пироксенит-дунитовый пояс Урала. «Тр. ИГЕМ АН СССР», вып. 65, 1962, с. 319.
- Гаррис М. А. Геохронологическая шкала Урала и основные этапы его развития в докембрии и палеозое (по данным калий-аргонового метода). Докл. сов. геол. на XXII сессии МГК. Пробл. III—Абсолютный возраст геологических формаций. «Наука», 1964, с. 128—156.
- Горохов С. С. и др. К вопросу о возрасте гипербазитовых интрузий Южного Урала. «ДАН СССР», т. 142, № 3, 1962, с. 643—646.
- Заварицкий А. Н. Коренные месторождения платины на Урале. «Матер. по общ. и прикл. геол.», вып. 108, 1928, с. 56.
- Заварицкий А. Н. Некоторые основные вопросы геологии Урала. «Изв. АН СССР, сер. геол.», № 3, 1941, с. 36—111.
- Заварицкий А. Н. О генезисе колчеданных месторождений. «Изв. АН СССР, сер. геол.», № 3, 1943, с. 3—18.
- Сахаров Е. Е. Металлогенетический очерк Урала. «Тр. Геол. ин-та», вып. 3, 1938, 107—150.
- Знаменский Н. Д. Гранитоидные массивы габбровой формации Среднего Урала. В кн. «Магматизм, метаморфизм, металлогения Урала», т. I, Изд. Урал. фил. АН СССР, 1963, с. 485—490.
- Иванов А. А. Месторождения осмистого иридия. «Тр. Горно-геол. ин-та УФАИ», вып. 6, 1944, с. 1—88.
- Иванов С. Н. Обсуждение некоторых современных вопросов образования колчеданных месторождений Урала. «Тр. Горно-геол. ин-та УФАИ», вып. 43, 1959, с. 7—77.
- Иванов С. Н. Генезис рудных месторождений колчеданного типа в связи с развитием геосинклинального магматизма и метаморфизма. В сб. «Проблемы генезиса руд». Докл. сов. геологов на XXII сессии МГК. «Недра», 1964, с. 118—127.
- Кашин С. А. Коренная платина уральских дунитов. «Тр. НИГРИЗолото», вып. 21, 1956, с. 93—102.
- Колчеданные месторождения Урала. Сб. статей. Изд. АН СССР, 1950, с. 7—18.
- Коржинский Д. С. Вопросы колчеданного оруденения в вулканогенных толщах. В сб. «Магматизм, метаморфизм, металлогения Урала». Изд. УФАИ СССР, 1963, с. 19—25.
- Ленных И. В., Лазарев П. В. Геологическая позиция и возраст колчеданных залежей Южного Урала. «Мат. по геол. и полезн. ископ. Ю. Урала», вып. 3, 1962, с. 7—27.
- Махалов А. Е., Пышминско-Ключевское медно-кобальтовое рудное поле. «Тр. Свердловск. горного ин-та», вып. XXXV, 1960, с. 65—81.
- Мальшев И. И., Пантелеев П. Г., Пэк А. В. Титаномагнетитовые месторождения Урала. «Тр. СОПС СССР», сер. Уральск., вып. I, 1934, с. 264.
- Овчинников Л. Н. К вопросу определения абсолютного возраста рудных месторождений Урала. «Геохимия», № 6, 1958, с. 545—552.
- Овчинников Л. Н., Баклаев Я. П. О закономерностях размещения контактово-метасоматических месторождений Урала в связи с составлением крупномасштабных карт металлогении и прогноза. В сб. «Закон. размещ. полезн. ископ. на Урале». Изд. УФАИ СССР, 1962, с. 79—110.
- Пронин А. А. О геотектонической основе металлогении Урала. «Тр. Горно-геол. Ин-та УФАИ», вып. 58, 1962, с. 3—78.

- Пронин А. А. Основные черты истории тектонического развития Урала. Каледонский цикл. «Наука», 1971, с. 216.
- Романов Б. М. Гранитная формация Урала и ее рекомендательная металлогения. «Геол. и полезн. ископ. Урала», вып. 1, 1947, с. 178—184.
- Романов Б. М. Габбро-перидотитовая формация Урала. «Сов. геол.», сб. 40, 1949, с. 72—85.
- Рундквист Д. В. О структурах и закономерностях размещения кварц-редкометалльных жильных месторождений восточного склона Урала. «Геология рудных месторождений», № 2, 1964, с. 21—37.
- Сергиевский В. М. Магматизм и металлогения Урала. Сб. «Магм. и связь с ним полезн. ископ.», Госгеолтехиздат, 1960, с. 672—679.
- Сергиевский В. М., Петрова И. А. Основные особенности развития тектоники, структур, магматизма Урала и закономерности минерализации. «Тр. ВСЕГЕИ, нов. серия», т. 86, 1962, с. 3—33.
- Соболев И. Д. Основные черты магматизма Урала. «Матер. по геол. и полезн. ископ. Урала», вып. 8, Госгеолтехиздат, с. 5—21.
- Соколов Г. А. Хромиты Урала, их состав, условия кристаллизации и закономерности распределения. «Тр. ИГН, сер. рудных м-ний», вып. 97 (№ 12), 1948, с. 1—128.
- Херасков Н. П., Перфильев А. С. Основные особенности геосинклинальных структур Урала. Сб. «Проблемы региональной тектоники Евразии. Тр. ГИН АН СССР», вып. 92, 1963, с. 35—63.
- Штейнберг Д. С. Основные черты петрологии и металлогении интрузивных формаций Урала. В сб. «Магматизм, метаморфизм, металлогения Урала», Изд. УФАН СССР, т. 1, 1963, с. 99—110.
- Яницкий А. Л., Сергеев О. П. Бакальские железорудные месторождения и их генезис. «Тр. ИГЕМ АН СССР», вып. 73, 1962, с. 5—105.

4. Թայմիրյան մետաղածնային գոտին իր Հյուսիսային երկիր շարունակությունով տեղագրված է Սիբիրական պլատֆորմից դեպի Հյուսիս, Թայմիրյան գեոսինկլինալի տեղում, որը հիմնադրվել է վաղմինչքեմբրյան ժամանակաշրջանում ու վերապրել է կալեդոնյան և հերցինյան դարաշրջանների ծավալորումը:

Այդ մարզի երկրաբանությունն ու մետաղածնությունը ուսումնասիրվել են Վ. Ա. Վակարի, Բ. Խ. Եղիազարովի, Մ. Ֆ. Լոբանովի, Ֆ. Գ. Մարկովի, Մ. Գ. Ռավիչի, Ն. Ն. Ուրվանցևի, Օ. Լ. Էյնորի կողմից:


Պրոտերոզոյան ու կալեդոնյան փուլերում տեղի է ունեցել գրանիտների և գաբրո-գիբբազների ինտրուզիաների ներդրումը, առաջինների հետ կապված են պեգմատիտների (մոսկովիտով) ոչ մեծ հանքավայրեր, անագի ու վոլֆրամի (զլխավորապես շեկիտի, վոլֆրամիտի՝ մասամբ Հյուսիսային երկրում), մոլիբդենի ու սկու երևակումներ. գաբրոգիբբազների հետ զուգակցվում են պղնձի ու երկաթի հանքանյութերի երևակումներ, որոնց հեռանկարները դեռ պարզ չեն:

Հերցինյան ծավալվորումը արտահայտվել է Բիրանգե սուբալյանակի լեռնաշղթայում և ուղեկցվել է հիպաբիտալ սուբալկալային գրանիտոիդների ներդրումով (սրանց բացարձակ հասակը 230—240 մլն. տ. է), իսկ ավելի ուշ՝ տրապային գաբրո-դոլերիտային մագմատիզմով: Ամենաերիտասարդը վերին պալեոզոյի-ստորին տրիասի սուբալկալային փոքր ինտրուզիաներն են (նեֆելինային սիենիտներ ու ալկալային գրանիտոիդներ), որոնք հավանաբար ներկայացնում են տրապների դիֆերենցիատներ: Գրանիտոիդների հետ կապված են շեկիտ-մոլիբդենիտային, բազմամետաղային ու կինովար-ոնեալգար-

անտիմոնիտային հանքանյութերի երևակումներ, իսկ արկալային դիֆերենցիատների հետ՝ Թայմիրյան լճի հյուսիսային ափի ֆլյուորիտի հանքավայրերը:

Վերին պալեոզոյի-մեզոզոյի տրապային մագմատիզմի հետ կապված են երկաթի (մագնետիտային) հանքանյութերի Սիբիրական պլատֆորմի Անդաբա-Իլիմյան տիպի երևակումները, պղինձ-նիկելային լիվլացիոն հանքանյութերի երևակումները, ինչպես նաև փայլաբային քիմբերլիտները, որոնք հեռանկարային են արմատաբերության տեսակետից (սկզբածքներում հանդիպում են արմատի ուղեկիցներ՝ պիրոպը ու քրոմդիոպսիդը):

Բիրանգի ստրուկտուրա-մետաղածնային զոնայի սահմաններում լայն տարածված է տելեթերմալ բազամետաղային (Սուրովի լճի ու Պարտիզան գետի շրջան) ու ռեալգար-կինովար-ստիբնիտային (Իզլիլիստայա և Ուրոյնայա գետերի ավազանները) հանքայնացումը, որը հավանաբար կապված է տրիասի սուբարկալային ինտրուզիաների հետ (նկ. 28): Հյուսիսային երկրի Հոկտեմբերյան հեղափոխության անվան կղզում միջլիսպալեոզոյան սուբարկալային գրանիտների հետ կապված են քվարց-տուրմալինային երակներ ու գրեյզեններ Տո-Վ-Մո հանքայնացումով (Лобанов, 1960):




Նկ. 28—Հարավարևելյան Թայմիրի ստրուկտուրա-մետաղածնային զոնաները (ըստ Մ. Յ. Լոբանովի, 1968):

- 1—Թայմիրի—Հյուսիսային երկրի Բալիկայան ձալքավոր մարզ, 2—Թայմիրյան պալեոզոյան ձալքավոր մարզ, 3—Բիրանգայան ստրուկտուրա-մետաղածնային զոնա (Pb-Zn, Cu, Fe, Hg, Sb, As), 4—Տուլալ-Վիրզկատայան ստրուկտուրա-մետաղածնային զոնա (Cu, Ni):

ԿՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ԹԱՅՄԻՐՅԱՆ ԿՈՏՈՒ ՎԵՐԱՐՅՈՒՄ

Вакар В. А. Эволюция Таймырской геосинклинали. «Сов. геология», № 11, 1961, с. 109—120.

Егизаров Б. Х. Геологическое строение архипелага Северная Земля. «Тр. НИИГА», т. 94, 1959, с. 138.



Նկ. 29—Ալթայա-Սայանյան ծալքավոր մարզի ստրուկտուրա-մետազածային սխեմա (ըստ Վ. Ս. Կուզնեցովի)։
1—Սիբիրական պլատֆորմի հիմքի եզրային ըարձրացումներ (արևելյան դնչյուններ, զրանիտային իտրոլիտներ, փայլարաբեր պեգմատիտներ)։

2—պրոտերոզոյան (Բալկալյան) ծալքավորման զոնաներ (պրոտերոզոյի մետամորֆիկ թերթաբարեր ու սինիլ տերիզեն-կարբոնատային հաստվածքներ մինչքեմբրյան գրանիտոզիներով, վերադրված կալեդոնյան ու հերցինյան (°) ինտրուզիաներով ու նրանց հետ կապված հանքայնացումով (երկաթ, ոսկի, մոլիբդեն, կարբոնատիտային հանքանյութեր և ուրիշ), 3—քեմբրյան (Սալաիրյան) ծալքավորման զոնաներ՝ վաղ քեմբրի ու սինիլ կապես էֆուզիվ-նստվածքային ու կարբոնատային հաստվածքներ. հիպերրազիտների, գաբրոիդների, գաբրո-պլազիոգրանիտների, գրանիտոիդների Սալաիրյան կոմպլեքսներ ու նրանց հետ կապված երկաթի, ոսկու, տիտանի, քրոմի, նիկելի, աքսետի և ուրիշ հանքավայրեր վերադրված ուլկալեդոնյան ու հերցինյան ինտրուզիաներով ու հանքայնացումով (երկաթ, կոբալտ, սնդիկ և ուրիշ.), 4—կալեդոնյան ծալքավոր զոնաներ, էպպես Ֆիլիշոիդային քեմբր-օրգովիկի հաստվածքներ. տակոնյան գրանիտոիդային ինտրուզիաներ վոլֆրամ-մոլիբդենիտային հանքանյութերով, 5—կալեդոնա-հերցինյան ծալքավորման զոնա (Չարիշա-Տերեկտինյան), էպպես Ֆիլիշոիդային քեմբր-օրգովիկի հաստվածքներ, տակոնյան գրանիտոիդներ. դևոնի էֆուզիվ-նստվածքային հաստվածքներ հեմատիտային հրաբխածին-նստվածքային հանքանյութերով. հերցինյան գաբրոիդային ու գրանիտոիդային ինտրուզիաներ ու նրանց հետ կապված երկաթի, կոբալտի, հազվագյուտ մետաղների, վոլֆրամի ու մոլիբդենի հանքավայրեր, 6—Անույա-Չուսկյան կալեդոնյան-հերցինյան զոնա, քեմբր-օրգովիկի և սիլուրի տերիզեն-կարբոնատային ֆորմացիաներ, դևոնի էֆուզիվ-նստվածքային ֆորմացիաներ. ինտրուզիվ, պլազիոռապես գրանիտային կոմպլեքսներ վոլֆրամի, մոլիբդենի, բազմամետաղային հանքանյութերով, բազմամետաղային ու սնդիկային հանքանյութերի հանքավայրեր, կապված բեկվածքների հետ, 7—հերցինյան գրանիտոիդային կոմպլեքսներ, 8—հերցինյան Զայսանյան սիստեմի ծալքավոր զոնաներ, 9—հերցինյան եզրային ու միջլեռնային իջվածքներ, 10—մեզոկալյուզոյան իջվածքներ, 11—խորքային բեկվածքների զոնաներ, ավելի փոքր մասշտաբի բեկվածքներով:

Лобанов М. Ф. Металлогения севера Сибирской платформы. «Сов. геол.», № 7, 1960, с. 28—39.

Марков Ф. Г., Равич М. Г., Вакар В. А. Геологическое строение Таймырского п-ова, Сб. «Геол. Сов. Арктики». Тр. НИИГА, т. 81, 1957, с. 313—387.

Равич М. Г. Металлогения малых интрузий Горного Таймыра. Сб. «Закон. размещ. полезн. ископ.», т. II, Изд. АН СССР, 1959, с. 289—307.

5. Արաչա-Սայանյան մետաղածնային գոտին եզրապատում է հարավարևմուտքից Սիբիրական պլատֆորմը, ընդգրկելով Ալթայի, Արևմտյան ու Արևելյան Սայանների տարածքները արևելյան ուղղությամբ շարունակվելով դեպի Տուվա. գոտին տարածվում է լայնակի, որի երկարությունը 3 հազար կմ է 200—250 կմ միջին լայնության դեպքում:

Տարածականորեն նա համընկնում է Ալթայա-Սայանա-Տուվայի գեոսինկլինալային գոնայի հետ, որի սահմաններում ինտենսիվ ծալքավորման, մագմատիզմի ու էնդոգեն հանքայնացման երևույթները տեղի են ունեցել կալեդոնյան և հերցինյան օրոգենիկ դարաշրջաններում:

Համաձայն Վ. Ա. Կուզնեցովի, Ալթայա-Սայանյան մարզի կազմի մեջ մենք ընդգրկում ենք Սիբիրական պլատֆորմի հարավարևմտյան եզրի ծալքավոր կառուցվածքները՝ Արևելյան Սայանները, Տուվան, Արևմտյան Սայանները, Տանու-Օլան, Կուզնեցկի Ալատաուն լեռնային Շորիայի հետ, Լեոնային Ալթայը, ինչպես նաև Մինուսինսկի, Տուվայի ու Կուզնեցկի գոգահովիտները. արևմուտքից նրան կցվում է Զայսանյան ծալքավոր սիստեմը (Հանքային Ալթայ ու Կալբա), որին մենք կանդաղառնանք ավելի ուշ:

Ալթայա-Սայանյան մարզի երկրաբանական կառուցվածքի և մետաղածնության ուսումնասիրման գործում մեծ ավանդ ունեն երկրաբաններ Ա. Յա. Բուլինիկովը, Վ. Ս. Դոմարևը, Տ. Ն. Իվանովան, Ա. Ն. Կենը, Վ. Ա. Կուզնեցովը, Գ. Ս. Լաբազինը, Վ. Ա. Ունկսովը, Մ. Ա. Ուսովը, Ֆ. Ն. Շախովը և ուրիշներ:

Ալթայա-Սայանյան մարզը դասվում է բարդ հետերոգեն կառուցվածքի և բազմաէտապ պոլիցիկլիկ ստրուկտուրաների, մագմատիզմի ու հանքայնացման զարգացման մարդերի շարքին:

Մարզի ամենաընդունելի ստրուկտուրա-մետաղածնային ուրվագիծը, որն ընդգծում է նրա հիմնական առանձնահատկությունները առաջարկվել է վերջերս Վ. Ա. Կուզնեցովի կողմից (նկ. 29):

Ալթայա-Սայանյան մետաղածնային մարզը քննարկվում է որպես մագմատիզմի ու էնդոգեն հանքայնացման զարգացման երեք տեկտոնա-մագմատիկ ցիկլերի՝ պրոտերոզոյան (Բայկալյան), կալեդոնյան (ավելի ստույգ սալաիրո-կալեդոնյան) ու հերցինյան մարզ (Кузнецов, 1967):

Պրոտոերոզոյան (Բայկալյան) տեկտոնա-մագմատիկ ցիկլն ընդունվում է ամբողջ պրոտերոզոյի և սինիի լայն սահմաններում (արտահայտվել է Արևելյան Սայաններում ու Տուվայում): Այդ ցիկլի ինտրուզիվ ապարները ներկայացված են տիտանամագնետիտային հանքայնացման զարթոններով ու փայլարաբեր ու հազվագյուտմետաղային պեգմատիտներով ուղեկցվող ավելի ուշ գրանիտներով:

Սալաիրա-կալեդոնյան տեկտոնա-մագմատիկ ցիկլն ընդգրկում է սինիի վերջից մինչև միջին դեռն ընկած ժամանակաշրջանը ու լայնորեն է արտահայտվել ամբողջ Ալթայա-Սայանյան մարզի տարածքում:

Ալթայա-Սայանյան գեոսինկլինալային մարզի զարգացման վաղսալաիր-յան փուլում (ուշ սինի-քեմբրի կեսը) նրա հիմքը օվկիանոսյան տիպի կեղևն էր, համեմատաբար բարակ սիալիկ թաղանթով ու խոր պերիդոտիտային սուբստրատի դիրքով. այդ եզրակացության օգտին է խոսում այդ ժամանակ սպիլիտա-դիաբազային ու կերատոֆիրային ֆորմացիաների, նաև դաբրոդ-դային և հիպերբազիտային ինտրուզիաների, իսկ նրանցից հետո զաբրո-պլազիոգրանիտների լայն զարգացումը:

Հետագայում, սկսած զարգացման կալեդոնյան փուլից (քեմբրի վերջը— սիլուր, միջին փուլ) տեղի է ունեցել սիալիկ կեղևի հզորութայն էական ան, որն ուղեկցվել է տերիգեն հզոր հաստվածքների նստեցմամբ ու գրանիտային բաթոլիտային ինտրուզիաների ներդրմամբ:

Վերջապես, Սալաիրա-կալեդոնյան ցիկլի ուշ փուլում (սիլուր-դևոն) տեղի է ունենում հրաբխածին հաստվածքների կուտակում, որոնք ուղեկցվում են բազիտներով-հիպերբազիտներով ու գրանիտ-պորֆիրների և գրանիտ-գրանոսիենիտների սուբհրաբխային ինտրուզիաներով:

Սալաիրա-կալեդոնյան ցիկլի վաղ փուլի բազիտ-հիպերբազիտային ին-տրուզիաների հետ կապված է քրոմիտի, ասբեստի, տիտանամագնետիտի բազմաթիվ հանքավայրերի առաջացումը, իսկ միջին և ուշ փուլերի գրանի-տոդենների հետ՝ երկաթի, ոսկու, պղինձ-մոլիբդենային և ուրիշ, հանքանյութերը:

Հերցինյան տեկտոնա-մագմատիկ ցիկլը (միջին դևոն-վերին պերմ) ար-տահայտվել է զլխավորապես Լեռնային Ալթայում ու Սալաիրում:

Հերցինյան ցիկլի վաղ փուլը, որը հայտնի է դևոնյան կամ տելբեսյան անվան տակ, բնութագրվում է գեոսինկլինալային հրաբխածին համալիրների կուտակումով ու նրանց հետ կոմագմատիկ գրանիտոդենների ու զաբրո-դիաբազ-ների ներդրումով, երկաթային, զլխավորապես սկառնային հանքայնացումով:

Միջին փուլը ներկայացված է միջին ու վերին դևոնի տերիգեն հաստ-վածքների կուտակմամբ, որոնք ինտենսիվ ծալքավորված ու ներդրված են ստորին-միջին կարբոնի հասակի գրանիտոդեններով բազմամետաղային ու հազվագյուտմետաղային հանքայնացմամբ:

Ուշ փուլը ներկայացված է ետորոգեն դիաբազների ու լամպրոֆիրների փոքր ինտրուզիաներով բազմամետաղային, ֆլյուորիտային, սնդիկային հան-քայնացումով:

Ալթայա-Սայանյան մարզի զարգացման առանձին փուլերի մագմատիզ-մի ու հանքայնացման առանձնահատկությունները ամփոփված են Վ. Ա. Կուզ-նեցովի կողմից (աղ. ?):

Ինչպես բխում է Ալթայա-Սայանյան մարզի ստրուկտուրա-մետաղածնա-յին ուրվագծից կոնսոլիդացիայի տեսակետից այն բաղկացած է տարահասակ ծալքավոր ստրուկտուրաներից:

Մարզի արևելքում Միբիրական պլատֆորմի հարավարևմտյան եզրի եր-կայնքով առանձնանում է Բայկալյան (պրոտերոզոյան) ծալքավորման ամե-նահին զոնան: Բայկալիդները կազմում են Արևելյան Սայանների առանցքա-յին մասն ու Տուվայի արևելյան-հարավարևելյան շրջանները: Այստեղ բնո-րոշ են պրոտերոզոյի մետամորֆիկ թերթաբարերի հաստվածքները, ներդրված մինչքեմբրյան գրանիտներով: Դեպի արևմուտք տեղադրված է կալեդոնյան ծալքավոր ստրուկտուրաների ընդարձակ մարզը, որոնք կազմում են Ալթայա-

Ալիքայա-Սալանյան ծալքավոր մարդի էնդոգեն մետաղային հանքավայրերի ֆորմացիաները (ըստ Վ. Ա. Կուզնեցովի, փոքր կրճատումներով)

| Տեկտոնա-մագմատիկական ցիկլը ու փուլը | Հանքարեր մագմատիկ ֆորմացիաներ | Հանքային ֆորմացիաներ ու օգտակար հանածոներ | Հանքային շրջանների ու առանձին հանքավայրերի օրինակներ |
|-------------------------------------|---|---|--|
| 1 | 2 | 3 | 4 |
| Բալկալյան | Գրանիտներ Գարրոիդներ Հիպերբազիտներ | Հազվագյուտմետաղային պեգմատիտներ Տիտանամագնետիտային Ասբեստ, նեֆրիտ, ՇՏ, Քէ-ի խումբ | Արևելյան Սալանների, Հարավ-արևելյան Տուվա Արևելյան Սալաններ Արևելյան Սալաններ |
| Սալախրա-կալեդոնյան վաղ փուլ | Սպիլիտա-կերատոֆիրներ Հիպերբազիտներ Գարրո-դիորիտներ, դիաբազներ Գարրո-պիրոքսենիտներ, դոնիտներ Գարրո-պլազիոգրանիտներ, զարրո-սիենիտներ, պլազիոգրանիտներ | էքսհալյացիոն-նստվածքային Fe, կոլչեդանային Քրոմիտային, ասբեստ Տիտանամագնետիտ, քվարց-Աս Տիտանամագնետիտային, Cu-Ni սուլֆիդային կոլչեդանային, սկանդային (Fe տիպ), Աս-քվարց, Աս-սուլֆիդային | Արևելյան Սալաններ, Լեոնային Շորիա, Տուվա Սալախր, Տուվա, Կուզնեցկի Ալատաու Արևելյան ու Արևմտյան Սալաններ Արևելյան ու Արևմտյան Սալաններ, Լեոնային Շորիա, Կուզնեցկի Ալատաու |
| Միջին փուլ | Գրանիտներ ու գրանոսիենիտներ Գրանիտներ | Սկանդային (Cu, Mo, W), քվարց-Աս Հազվագյուտմետաղային պեգմատիտներ, քվարց-Մո գրեյզենային | Կուզնեցկի Ալատաու, Ուլեն-Տուիմի շրջան Արևելյան ու Արևմտյան Սալաններ |
| Ուշ փուլ | Գրանիտ-պորֆիրներ Գրանիտներ-գրանոսիենիտներ Գարրո-սիենիտներ Ալկալային ու նեֆելինային սիենիտներ Գարրո-սիենիտներ Գիորիտ-դիաբազներ | Cu-Mo Քվարց-վոլֆրամիտ-մոլիբդենիտային Տիտանամագնետիտային Կարբոնատիտներ Սկանդային (Fe տիպ) Քվարց-Աս Կոլչեդանային (բազմամետաղ. տիպ) Կապար-ցինկային տելեթերմալ | Կուզնեցկի Ալատաու (Սոր) Տուվա Լեոնային Շորիա Տուվա Տուվա Սալախր Սալախր Մինուսինսկի գոգահոլիտը |
| Հերցինյան վաղ փուլ | Քվարցկերատոֆիրներ (հրաբխածիններ) Գրանիտներ Գարրո-դիաբազներ | էքսհալյացիոն-նստվածքային (Fe տիպ) Սկանդային (Fe տիպ) Սկանդային (Fe ու As-Co տիպեր) | Կալուտա, Կորզոն և ուրիշ հանքավայրեր Լեոնային Ալթայ Ինսկի (Fe) Վլադիմիրսկի (Co) հանքավայրեր |
| Միջին փուլ | Գրանիտոիդներ | Սկանդային (բազմամետաղային տիպ), հազվագյուտմետաղային | Լեոնային Ալթայ |

| 1 | 2 | 3 | 4 |
|----------|--|---|---|
| Ուշ փուլ | Գրանիտներ Գիարազներ, լամպրոֆիրներ | Հազվագյուտ մետաղային պեգմատիտներ, սկանային (W), քվարց-մոլիբդենիտ-վոլֆրամիտային Բազմամետաղային, բարիտ-բազմամետաղային, ֆլուորիտային Սնդեկային | Տիգերեցկի, Բելորեցկի, Լեոնային Ալթայ Ուրսուլսկի, Չուլի, Կիզիլչինյան, Կայաչինի հանքավայրեր Ակտաշի ու Լեոնային Ալթայի և ուրիշ հանքավայրեր |

Սայանի մարզի տարածքի գլխավոր մասը: Կալեդոնիզներում առանձնացվում են Սալաիրիդները, որոնք ավարտել են զարգացման գեոսինկլինալային փուլը քեմբրի երկրորդ կեսում, և ավելի ուշ՝ բուն կալեդոնիզները, որոնք վերապրել են կոնսոլիդացիա օրգոլիկի վերջում ու սիլուրի սկզբում:

Սալաիրիդները կազմում են Արևելյան Սայանների հարավարևելյան մասը, Կուզնեցկի Ալատաուն ու Լեոնային Շորիան, ձգվելով Լեոնային Ալթայ, Արևելյան Տուվա ու Արևելյան Տանու-Օլա:

Սալաիրյան ծալքավոր ղոնաների համար բնորոշ է ստորին ու միջին քեմբրի կարբոնատային և էֆուզիվ-նստվածքային ֆորմացիաների լայն զարգացումը, որոնք ներդրված են քեմբրի հասակի հիպերբազիտների, գաբրոպերիդոտիտների ու գաբրո-պլագիոգրանիտների ինտրուզիաներով:

Բուն կալեդոնիզների զարգացման մարզում, ի տարբերություն Սալաիրյան ղոնաներից, զարգացած են հզոր տերիգեն ֆլիշոիդային ուլ քեմբրի ու օրգոլիկի ֆորմացիաները, որոնք ծածկում են հրաբխածին-նստվածքային քեմբրի ստորին ստրուկտուրային հարկը. այստեղ բնորոշ են բաթոլիտային տիպի վազկալեդոնյան սինօրոգեն գրանիտային ինտրուզիաները, իսկ ռեզիդուալ խորքային բեկվածքների երկայնքով տեղ-տեղ արտահայտված է նաև հերցինյան մագմատիզմը (գրանիտային ու հետերոգեն փոքր ինտրուզիաներ): Կալեդոնիզների շարքին են դասվում Արևմտյան Սայանները, ինչպես նաև Լեոնային Ալթայի մի մասը (Չարիշա-Տերեկտինյան ղոնա):

Հերցինյան Չայսանյան ծալքավոր սիստեմին հարող Ալթայա-Սայանյան ծալքավոր ղոնայի արևմտյան մասում, առանձնացվում են ղոնաներ, որոնք ենթարկվել են կոնսոլիդացման զարգացման վաղհերցինյան փուլում. նրանց են վերագրվում Սալաիրն ու Լեոնային Ալթայի Անուլ-Չուլյան ղոնան: Այստեղ բնորոշ է կտրվածքի ստորին մասում սալաիրիդների ու կալեդոնիզների համար հրաբխածին-նստվածքային և տերիգեն ֆորմացիաների, իսկ կտրվածքի վերևում դեոնի ու ստորին կարբոնի կավային թերթաքարերի ու կարբոնատային ֆորմացիաների առկայությունը:

Լավ արտահայտված է կալեդոնյան ու հերցինյան խորքային մագմատիզմը, մասնավորապես ուշհերցինյան գրանիտային բաթոլիտները Հանքային Ալթայի ու Կալքայի ինտրուզիվ համալիրի նմանակները:

Ալթայա-Սայանյան մարզի կառուցվածքի ու մագմատիզմի ածանցյալների և էնդոգեն հանքավայրերի տեղադրման մեջ մեծ դեր են խաղում Գլխա-

վոր Արևելյան-Սայանյան, Ինչպես նաև Սիսիմա-Կազիրյան, Սայանա-Մինուսինսկի, Սայանա-Տուվայի, Կուզնեցկի, Չարիշա-Տերեկտինյան և այլ խորքային բեկվածքները:

Այսպիսով, Ալթայա-Սայանյան ծալքավոր մարզի սահմաններում հաստատվում է հետևյալ երեք տեկտոնա-մագմատիկական ցիկլերի զարգացումը, որոնք առանձնանում են ժամանակի ու տարածության մեջ և ունեն մագմատիկմի ու մետաղածուլթյան յուրահատուկ գծեր:

I Բայկալյան ցիկլ:

II Սալաիրա-կալեդոնյան ցիկլ երկու փուլով, սալաիրյան ու կալեդոնյան:

III Հերցինյան ցիկլ երկու փուլով՝ վաղհերցինյան ու ուշհերցինյան:

Տեկտոնա-մագմատիկ յուրաքանչյուր ցիկլի համար առանձնացված են երեք գլխավոր փուլեր՝ վաղ (գեոսինկլինալային), միջին (օրոգեն), ուշ (հետօրոգեն): Այդ փուլերից յուրաքանչյուրը բնորոշվում է իրեն հատուկ մագմատիկ համալիրներով ու նրանց հետ կապված էնդոգեն հանքավայրերի սերիաներով: Մինչքեմբրյան գրանիտները զարգացած են բայկալիդների զոնայում, Արևելյան Սայանների առանցքային մասում և Հարավարևելյան Տուվայում. նրանց հետ ծագմամբ սերտ կապված են հազվագյուտմետաղային պեգմատիտները: Տուվայում ստորին քեմբրի էֆուզիվներում, սուբհրաբխային լիպարիտների հետ պարագենետիկորեն կապված հայտնի է Կրզիլ Տաշիդ կուլչեդանային (Cu-Pb-Zn) հանքավայրը, որը նման է Ուրալի հանքավայրերին:

Ստորին-միջին քեմբրի հիպերբազիտները խորքային բեկվածքների երկայնքով կազմում են գոտիներ, որոնք հատում են Արևելյան Սայանների, Կուզնեցկի Ալատաուի, Լեոնային Շորիայի, Լեոնային Ալթայի ու Արևելյան Տուվայի սալաիրիդների ծալքավոր զոնաները: Հիպերբազիտների հետ կապված են քրոմիտի, աքեստի ու տիտանամագնետիտի հանքավայրերը, Ni, Co, պլատինոիդների երևակումները: Կուզնեցկի Ալատաույում զարգացած օրոգովիկի համեմատաբար ավելի երիտասարդ զրանիտոիդների հետ ծագմամբ կապված են ոսկու (As, Co, Ni-ի խառնուրդով) Բերիկուսկի, Օլխովսկի, Անդրեևսկի և ուրիշ հետաքրքիր հանքավայրեր:

Գևոնի գաբրո-դիաբազային գրանոդիորիտային կազմության սուբհրաբխային փոքր ինտրուզիաների համալիրի հետ կապված են բարձր ջերմաստիճանային հիդրոթերմալ Mo, W, Bi, Au հանքավայրեր, ինչպես նաև As, Cu-Ni-Co խոշոր հանքավայրեր (Խովախսի Տուվայում և այլուր) ու սկանդինային երկաթի հանքավայրերի մեծ մասը (Աբական, Տելբես, Տեմիր-Տաու և այլն):

Սալաիրի բազամետաղային հանքավայրերի ծագման ու հասակի վերաբերյալ դեռ պարզություն ու միասնական կարծիք չկա: Երկրաբանների մի խումբ (Մ. Ա. Ուսով, Ա. Ի. Սեմչոնով և ուրիշներ) նրանց առաջացումը կապում են քեմբրի կամ միջին դեոնի հրաբխային օջախների հետ, իսկ մյուս խումբը (Գ. Ս. Լաբազին, Վ. Ս. Գոմարև)՝ հերցինյան գրանիտոիդների հետ: Չկա նաև միասնական կարծիք Լեոնային Ալթայի ու Տուվայի սնդիկի հանքավայրերի հասակի վերաբերյալ, որոնք, որոշ երկրաբաններ կապում են դեվոնի հասակի մագմատիկմի հետ, իսկ մյուսները՝ վերին պալեոզոյան կամ նույնիսկ (ըստ Վ. Ա. Կուզնեցովի, 1969) մեզոզոյան հասակի ակտիվացման զոնաների մագմատիկմի հետ:

Ջ ա յ ս ա ն յ ա ն ծ ա յ ք ա վ ո Ր ս ի ս տ ե մ Ր (Հանքային Ալթայ ու

Կալբա) տեղադրված է Ալթայա-Սայանյան մարզից դեպի արևմուտք, դրա-
դեցնելով Իրտիշ գետի ավազանի վերին հոսանքը:

Հանքային Ալթայի ու Կալբայի երկրաբանական կառուցվածքի ու մետա-
ղածնություն ուսումնասիրման գործում մեծ դեր ունեն երկրաբաններ Գ. Ի.
Գործևակին, Ի. Ֆ. Գրիգորևը, Պ. Ֆ. Իվանկինը, Ն. Ն. Կուրեկը, Վ. Պ. Նեխո-
րոշևը, Գ. Ն. Շչերբան և ուրիշներ:

Համաձայն Վ. Պ. Նեխորոշևի (1951) և ուրիշների պատկերացումների,
Ջայսանյան ծալքավոր սիստեմը առաջացել է նույնանուն գեոսինկլինալի տե-
ղում, գլխավորապես հերցինյան ժամանակաշրջանում:

Դեռ միջին սլալեոզոյում գեոսինկլինալային սիստեմը բաժանվել է մի
շարք գեոսինկլինալային ու գեոանտիկլինալային զոնաների, որոնց սահման-
ներում վերին սլալեոզոյում տեղի է ունեցել գրանիտային բաթոլիտների
ներդրումը հազվագյուտմետաղային պեգմատիտներով ու քվարց-կապտերի-
տային, վոլֆրամիտային, մոլիբդենիտային գրեյզենային հանքավայրերով
(գեոսինկլինալային զոնաների սահմաններում), ու հիպաբիսալ գրանիտոիդ-
ների ներդրումը բազմամետաղային, պղնձի ու ոսկու հանքայնացումով
(գեոանտիկլինալային զոնաների սահմաններում):

Այսպես, Ալեյսկի ու Սինյուշինսկի անտիկլինորիումներում կենտրոնա-
ցած է բազմամետաղային հանքայնացումը, իսկ Բելուբինսկի ու Կալբայան
գեոսինկլինալային զոնաներում՝ հազվագյուտմետաղային (Sn, W, Mo),
հանքայնացումը: Հանքային Ալթայի բազմամետաղային հանքավայրերը
տեղադրված են գլխավորապես միջին դևոնի հրաբխա-նստվածքային հաստ-
վածքներում (Լենինոգորսկի ու Զմեինոգորսկի հանքավայրերը D_2^1 հաստ-
վածքում, Զիրյանովսկի, Զոլոտուշինսկի և ուրիշ. D_2^2 հաստվածքում, Նիկո-
լաևսկի ու Շեմոնախիսկի D_3^3 հաստվածքում) ու միայն Բելուստովսկի
և Բերյոզովսկի հանքավայրերը տեղադրված են D_3 հաստվածքում, իսկ
Բուխտարմինսկի ու Զավոդինսկի հանքավայրերը ենթարկվում են ստորին
կարբոնի հաստվածքին: Բազմամետաղային հանքավայրերի ռեզիոնալ տե-
ղաբաշխման մեջ վճռական դերը պատկանում է ռեզիոնալ ճմլման զոնա-
ներին՝ Մերձիրտիշյան ու Հյուսիսարևելյան, առանձնացած առաջին անգամ
Վ. Պ. Նեխորոշևի կողմից, որոնց երկայնքով ներդրվել են հերցինյան գրանի-
տոիդների փոքր ինտրուզիաները: Հանքավայրերի մեծ մասը հարում է բրա-
խիանտիկլինալային ծալքերին, ընդ որում հանքայնացումը զարգանում է
գլխավորապես այդ ծալքերի մերձկամարային մասերում, մետասոմատիկ
ձևով՝ թրթու էֆուզիվների տուֆերում ու էկրանավորվում է թերթաքարերով:

Հանքայնացման հասակը համարվում է ուշհերցինյան, քանի որ հան-
քայնացումը հարում է ուշհերցինյան բեկվածքներին, որոնք տեղ-տեղ հա-
տում են Զմեինոգորսկի գրանիտոիդներին: Համաձայն այդ տեսակետի, բազ-
մամետաղային հանքանյութերի հանքավայրերը պարագենետիկորեն սերտ
կապվում են Զմեինոգորսկի ինտրուզիվ կոմպլեքսի ածանցյալների քվարցա-
յին ալբիտոֆիրների, պլազիոգրանիտ-պորֆիրների, միկրոզիորիտների փոքր
հիպաբիսալ ինտրուզիաների հետ: Զմեինոգորսկի կոմպլեքսի գրանիտոիդ-
ների հետ սերտ կապված են նաև մագնետիտային հանքանյութերի ոչ մեծ
սկառնային, գրեյզենային շեյլիտային հանքավայրերը (Կոլիվանսկի և ուրիշ-
ներ), քվարց-մոլիբդենիտային ու քվարց-խալկոսիլիտային երակները:

Պ. Ֆ. Իվանկինի (1960) տվյալներով տնտեսական տեսակետից Հանքա-

յին Ալթայի ամենակարևոր կոլչեդանային պղինձ-ցինկային ու բազմամետաղային հանքավայրերը ձևավորվել են տեկտոգենեզի ու մագմատիզմի ուշ փուլում և պարագենետիկորեն կապված են ուշ փոքր ինտրուզիաների հետ:

Գ. Ի. Գորժևսկին (1956, 1966) Ալթայի (Հարավային ու Լեռնային Ալթայը ներառյալ) բազմամետաղային հանքավայրերի շարքում առանձնացնում է հետևյալ հանքային ֆորմացիաները:

1. Պղինձ-պիրոտինային՝ Կալբայի զոնայի ու Իրտիշյան զոնայի արևմրտյան մասի տերիգեն հաստվածքներում (Վավիլոնսկի և ուրիշ հանքավայրեր):

2. Բազմամետաղային՝ Հանքային Ալթայի հրաբխածին-նստվածքային հաստվածքներում, որը ենթարթանվում է երկու տիպի՝ ա) կոլչեդանաբազմամետաղային՝ պիրիտի ու խալկոպիրիտի զերակշռմամբ գալենիտի ու սֆալերիտի նկատմամբ (Բելոուսովսկի, Նիկոլաևսկի ու Հանքային Ալթայի Մերձիրտիշյան զոնայի ուրիշ հանքավայրեր) ու բ) բուն բազմամետաղային՝ գալենիտի ու սֆալերիտի զերակշռմամբ (Զմեննոգորսկի, Զիրյանովսկի, Լենինոգորսկի ու Հյուսիսարևելյան զոնայի ուրիշ հանքավայրեր):

3. Կապարային՝ Հարավային ու Լեռնային Ալթայի հրաբխածին հաստվածքներում:

4. Կապարային՝ կարբոնատային նստվածքներում:

Զմեննոգորսկի ինտրուզիվ կոմպլեքսից հետո Կալբայի լեռնաշղթայի սահմաններում ներդրվում են ավելի երիտասարդ Կալբայի վերին պերմի զրանիտներն ու ադամանիտները: Նրանց հետ կապված է Կալբայի հազվագյուտամետաղային (Տո, Վ, Մո) ու ոսկու հանքայնացումը: Մի շարք աշխատություններում Գ. Ի. Գորժևսկին ու Վ. Ի. Կոզերենկոն ընդգծում են Ալթայի-Կալբայի հանքային գոտիների զոնալ տեղադրումը, բացատրելով այդ երևվույթը տարբեր ստրուկտուրաների հանքայնացման ու նրանց հարող ինտրուզիվ կոմպլեքսների տարբերություններով:

Իրոք, Լեռնային Ալթայի եզրային հյուսիսարևելյան գոտին բնութագրվում է քվարց-վոլֆրամիտ-մոլիբդենիտային հանքայնացմամբ, որից ղեպի հարավարևմուտք տեղադրված է Հանքային Ալթայի բազմամետաղային գոտին: Ավելի հեռու դեպի հարավ-արևմուտք գտնվում է Կալբայի հանքային զոնան Տո-Վ հանքայնացումով, պղինձ-պիրոտինային ու առանձին ոսկեքեր հանքավայրերով: Էլ ավելի դեպի արևմուտք երևան է գալիս Վ-Մո գոտին, իսկ արևմտյան եզրում, Չինգիլ լեռնաշղթայում ՇԱ-ԱՍ բազմամետաղային գոտին՝ պղնձի սկանդային ու կոլչեդանային, բազմամետաղային, բարիտային ու ոսկու հանքանյութերով: Կառուցվածքային տեսակետից Հանքային Ալթայի բոլոր արդյունաբերական բազմամետաղային հանքավայրերը տեղադրված են անտիկլինորիտային ստրուկտուրաների սահմաններում, իսկ Կալբայի հազվագյուտամետաղային (Տո, Վ, Մո) հանքավայրերը թթու գրանիտներով ներդրված սինկլինորիտներում: Կալբայի սինկլինորիտներից ղեպի հարավ-արևմուտք տեղադրված է Չարսկի անտիկլինորիտը, ներկայացված հիպաբիտալ գրանոդիորիտներով—քվարցային դիորիտներով ու նրանց հետ կապված Աս-Տբ հանքայնացումով:

Հարավարևմտյան եզրում գտնվում է Չինգիլի զոնան, որը ներկայացվում է ներքին գեոստիկլինալով հատված չափավոր թթվության ուշ հերցինյան գրանիտոիդներով և նրանց հետ կապված Աս-ՇԱ հանքայնացումով:

Այսպիսով, պարզորոշ հաստատվում է էմպիրիկ օրինաչափություն՝ գեոսինկլինալային ստրուկտուրաներում զարգացած է $Cu-Au$ —բազմամետաղային, իսկ գեոսինտիկլինալային ստրուկտուրաներում՝ $Sn-W-Mo$ հանքայնացումը:

Հանքային Ալթայի համար Պ. Ֆ. Իվանկինը և ուրիշներ (1960) առանձնացնում են տեկտոնական ու մետաղածնային զարգացման երեք գլխավոր փուլեր՝

1. Վաղ մինչօրոգենյան (էֆեյ-ստորին վիզե)՝ թթու և հիմքային էֆուզիվներով ու սուբհրաբխային ինտրուզիաներով առանց արդյունաբերական հանքայնացման:

2. Միջին օրոգենյան՝ Զմեհինոզոսկի ինտրուզիվ կոմպլեքսով (վիզե-Р), որի տարբեր փուլերի հետ կապված են սկառնային Cu, Fe, W (շեելիտի), Cu —պորֆիրային, Cu —տուրմալինային, Au —շեելիտային և ուրիշ ոչ մեծ հանքավայրեր:

3. Ուշ՝ բեկորային շարժումներով, փոքր հիպաբիտալ քվարցային ալբիտոֆիրների, պլազիոզոանիտ-պորֆիրների, պորֆիրիտների, դիաբազների ինտրուզիաների ներդրումով. նրանց հետ պարագենետիկորեն զուգակցվում են Հանքային Ալթայի գլխավոր բազմամետաղային հանքավայրերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂԹԱՅԱ-ՍԱՅԱՆՑԱՆ ԳՈՏՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Арсентьев В. П., Хренов П. М. Структурно-металлогенические зоны центральной части Саяно-Байкальской горной области. В кн. «Вопросы генезиса и закономерности размещения эндогенных м-ний», «Наука», 1966, с. 257—276.
- Бульнико́в А. Я. Золотоносные формации и золотоносные провинции Алтае-Саянской горной системы. «Тр. Томск. гос. ун-та», т. 102, 1948, с. 298.
- Вахрушев В. А. Вопросы минералогии, геохимии и генезиса железорудных руд Кондомского р-на Горной Шории. «Зап. ВМО», ч. 87, вып. 2, 1958, с. 151—158.
- Додин А. Л. Основные черты геологического строения и металлогении Алтае-Саянской складчатой области. В кн. «Природные условия Красноярского края». Изд. АН СССР, 1961, с. 99—124.
- Домарев В. С. Условия образования метасоматических сульфидных и сульфидно-баритовых залежей Салаира. «Зап. ВМО», ч. 85, вып. 4, 1956, с. 498—508.
- Железорудные месторождения Алтае-Саянской горной области, т. 1, гл. 1, 2. Под ред. акад. И. П. Бардина, 1958—1959, с. 11—81.
- Иванкин П. Ф. Вопросы геологии и металлогении Рудного Алтая. Изд. АН Каз. ССР, 1960 (Тр. Алт. горно-мет. научно-исслед. ин-та, т. VIII), с. 219.
- Иванова Т. Н. Закономерности развития раннепалеозойского магматизма в различных структурах Тувы. Госгеолтехиздат, 1963, с. 5—166.
- Иванова Т. Н. Магматические формации центральной части Алтае-Саянской области и связанные с ними рудные комплексы. В кн. «Магматические формации», 1964, с. 167.
- Калугин А. С., Мухин А. С. Итоги работ по железным рудам Западной Сибири. «Вестник ЗСГУ», № 2, 1957, с. 9—23.
- Кузнецов В. А. Закономерности образования и пространственного размещения ртутных м-ний в Алтае-Саянской складчатой области. Сб. «Законом. размещ. полезн. ископ.», т. 1. Изд. АН СССР, 1958, с. 302—314.
- Кузнецов В. А. Тектоническое районирование и основные черты эндогенной металлогении Горного Алтая. «Тр. ИГИГСО АН СССР», вып. 13, 1963, с. 5—68.
- Кузнецов В. А., Дистанов Э. Г., Оболенский А. А. и др. Основы формационного анализа эндогенной металлогении Алтае-Саянской области. «Наука», СО АН СССР, 1966, с. 156.

- Кузнецов В. А. Алтае-Саянская металлогеническая провинция и некоторые вопросы металлогении полициклических складчатых областей. Сб. «Законом. размещ. полезн. ископ.», т. VIII, Изд. АН СССР, 1967, с. 275—303.
- Кузнецов В. А., Оболенский А. А. Проблема возраста ртутного оруденения Алтае-Саянской складчатой области. «Геол. и геофиз.», № 5, 1969, с. 3—10.
- Кузнецов Ю. А. Об особой роли гранитоидных интрузий в истории магматизма Алтае-Саянской складчатой области. «Геол. и геофиз.», № 1, 1960, с. 23—37.
- Лабазин Г. С. Структурно-морфологические особенности месторождений Салаирских рудников и геологические условия их нахождения. «Цв. металлы», № 3 и 4, 1940, с. 14—20 (в № 3) и с. 7—15 (в № 4).
- Пинус Г. В. и др. Гипербазиты Алтае-Саянской складчатой области. Изд. АН СССР, 1958, с. 295.
- Покалов В. Т., Паслухова Е. С. Возраст и генетические особенности Сорского молибденового месторождения. «Сов. геол.», № 7, 1961, с. 107—122.
- Смирнов В. И. О металлогении каледонид Западного Саяна. «Геол. и геофиз.», № 2, 1963, с. 12—18.
- Уяков В. А. Типы медно-никель-кобальт-мышьяковой минерализации в Алтае-Саянской складчатой области. «Зап. ВМО», ч. 87, вып. 5, 1958, с. 554—556.
- Шахов Ф. Н. Меднорудные месторождения Хакасско-Минусинского района. Сб. «Полезные ископ. Зап.-Сиб. края», т. 1, ОГИЗ, 1934, с. 160—186.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԶԱՅՄԱՆՅԱՆ ԾԱԺՔԱՎՈՐ ՄԱՐԶԻ,
ՀԱՆՔԱՅԻՆ ԱԺՔԱՅԻ ՈՒ ԿԱԺՔԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Горжевский Д. И., Козеренко В. Н. О закономерностях размещения полиметаллических и редкметалльных зон и поясов (на примерах Алтая, Вост. Казахстана и Забайкалья). «Геол. сб. Львов об-ва при ун-те им. И. Франко», 2—3, 1956, с. 36—61.
- Горжевский Д. И. Свинцово-цинковые рудные формации Алтая и Забайкалья и их геотектоническая позиция. В сб. «Эндогенные рудные формации Сибири и Дальнего Востока». 1966, с. 156—162.
- Григорьев И. Ф. Основные черты металлогении Рудного Алтая и Калбы. «Большой Алтай», т. 1, Изд. АН СССР, 1934, с. 37—53.
- Иванкин П. Ф. О генетических типах и этапах сульфидного оруденения на Рудном Алтае. «Тр. Алт. горно-мет. НИИ АН Каз. ССР, геол. секция», т. IX, 1960, с. 29—49.
- Курек Н. Н. Серцитолиты Риддерских месторождений на Алтае. «Матер. ВСЕГЕИ, Полезн. ископ.», сб. № 4, 1948, с. 48—64.
- Материалы по геологии и металлогении Рудного Алтая. «Тр. Всес. аэро-геол. треста», вып. 3, 1957, с. 188.
- Щерба Г. Н. О двух гипотезах образования полиметаллических месторождений Рудного Алтая. «Изв. АН СССР, сер. геол.», № 5, 1954, с. 46—65.

6. Ղազախստանյան մետաղածնային գոտին գրավում է Ղազախական ՍՍՀ-ի հսկայական տարածքը, շարունակվելով դեպի արևելք ու հարավ-արևելք՝ Մոնղոլական Ժողովրդական և Չինական Ժողովրդական Հանրապետությունները: Գոտու ընդհանուր ուղղությունը լայնակի է, երկարությունը 6000 կմ, մինչև 2000 կմ լայնության դեպքում:

Այդ տարածությունում առավել ինտենսիվ ծալքավորման, մագմատիզմի ու հանքայնացման պրոցեսները տեղի են ունեցել հերցինյան օրոգենիկ դարաշրջանում և միայն գոտու հյուսիսարևմտյան փոքր մասում գերիշխել է կալեդոնյան օրոգենիկ դարաշրջանը:

Ղաղախատանի երկրաբանական կառուցվածքն ու մետաղածնութիւնն ռուսումնասիրել են երկրաբաններ Ն. Գ. Կասինը, Կ. Ի. Սատպակը, Ա. Ա. Բոգդանովը, Խ. Ա. Բորուկակը, Մ. Պ. Ռուսակովը, Վ. Պ. Նեխորոշևը, Ն. Գ. Շլիպինը, Յ. Ի. Վոլֆսոնը, Ն. Ի. Նակովնիկը, Ի. Ի. Բոկին, Գ. Ն. Շչերբան, Ա. Ի. Սեմենովը, Ա. Կ. Կայուպովը, Շ. Է. Նսենովը, Վ. Ս. Կոպտև-Դվորնիկովը, Ի. Ի. Կնյազևը, Պ. Ն. Կրոպոտկինը և ուրիշներ: Երկար տարիներ շարունակ Ղաղախատանի մետաղածնութիւնն ու քարտեզների կազմման գծով աշխատանքները զխավորել է Կ. Ի. Սատպակը, որի տվյալներով և շարագրվում են այդ ընդարձակ տարածքի մետաղածնութիւնն հիմնական գծերը:

Առանձնացվում են էնդոգեն մետաղածնութիւնն հետևյալ ստրուկտուրա-մետաղածնային զոնաները.

1. Զայսանյան, Հանքային Ալթայի ու Կալբայի բազմամետաղային, ոսկերեր ու հազվագոյումետաղային հանքայնացումով.

2. Կենտրոնական Ղաղախատանյան խճանկար կառուցվածքով ու գունավոր և հազվագոյումետաղների խոշոր հանքավայրերով.

3. Տուրքայան, խոշորագույն Սոկոլովսկո-Մարբայան հանքային դաշտի երկաթի սկանային հանքավայրերով.

4. Մուհոշարներ՝ Ուրալյան գոտու հարավային շարունակութիւնը քրոմիտային, պղինձկոլչեդանային ու ասբեստային հանքայնացումով.

5. Կարատաուլյան՝ Աշխայի-Միրզալիմսայի տիպի կապար-ցինկային տելիթերմալ հանքավայրերով.

6. Հյուսիսային Տյան-Շանի բազմամետաղային, ոսկերեր ու հազվագոյումետաղային հանքայնացումով:

Հարուստ փաստացի նյութի վերլուծութիւնը թույլ է տալիս երկրաբանական ստրուկտուրաների, մազմատիղմի ու մետաղածնութիւնն զարգացման մեջ առանձնացնել հետևյալ փուլերը՝ 1) մինչպակեոզոյան, վերին պրոտերոզոյը (ոիֆեյը ներառյալ), 2) վաղկալեզոնյան (քեմբրի ու օրդովիկ), 3) ուշկալեզոնյան (զոտյանդ ու ստորին դեոն), 4) վաղհերցինյան (միջին դեոն—միջին կարբոն), 5) ուշհերցինյան (վերին կարբոն ու պերմ).

6) քիմերա-ալպիական:

Ստորև համառոտ բնութագրվում է թված ստրուկտուրա-մետաղածնային զոնաների էնդոգեն մետաղածնութիւնը:

Զայսանյան զոնան, որը գրավում է Ղաղախատանի հյուսիսարևելքը, Ալթայա-Սայանյան ծալքավոր մարզի մի մասն է և ընդգրկում է Հանքային Ալթայն ու Կալբան, որոնք արդեն համառոտ նկարագրված են Ալթայա-Սայանյան մարզի կազմում:

Կենտրոնական Ղաղախատանյան զոնան ընդերքի հարստութեամբ դերազանցում է հանրապետութիւնն բոլոր մյուս ռեգիոններին: Այստեղ կենտրոնացած են պղնձի, կապարի ու ցինկի, հազվագոյումետաղների խոշորագույն հանքավայրերը, որոնք առաջացել են մարզի մազմատիղմի բազմաէտապ զարգացման հետ կապված:

Կենտրոնական Ղաղախատանում հաստատված է ժամանակի ընթացքում ինտրուզիվ գործունեութիւնն բնույթի փոփոխման հստակ օրինաչափութիւն՝ առավել հիմքային և ուլտրահիմքային ապարներից դեպի թթու: Այսպես, պրոտերոզոյի համար բնորոշ են ուլտրաբազալտները, կալեզոնյան էտապների համար՝ հիմքային ու միջին հիմքայնութիւնն մազմաները, վաղհերցինյան

էտապի համար՝ բազմաֆազային գրանոդիորիտային համալիրները, ուշհեր-
ցինյան փուլի համար՝ ուլտրաթթու ալյասիտային ինտրուզիաները:

Բնականաբար, տարահասակ տարբեր կազմության մագմատիկ համալիր-
ների հետ կապված է յուրահատուկ հանքայնացում՝ հիպերբազիտների հետ
բրոմիտ, աբեստ, գրանոդիորիտների ու միջին հիմքայնության ապարների
հետ պղինձ, կապար, ցինկ, ոսկի, երկաթ և այլն, ուլտրաթթու ալյասիտային
ինտրուզիաների հետ կապված են հազվագյուտ մետաղները (W, Mo, Sn, Be):

Տ ու ռ Գ ա յ ա ն ղ ո ն ան բնութագրվում է չափավոր թթվության գրա-
նիտոդիտներով և Սոկոլովսկու-Սարբայան խմբի երկաթի սկառնային խոշոր
հանքավայրերով (հանքանյութերում Co ու Ni խառնուրդով), որոնք տե-
ղադրված են մեգոկայնոդոլյան ապարների հզոր թիկնոցով ծածկված պալեո-
գոյան հիմքի ապարներում:

Վերին հանքաբեր փուլը թիկնոցում առանձնանում են արտածին՝ հիպեր-
բազիտների հողմնահարման նիկելաբեր կեղևի, բոքսիտների ու երկաթի
օօլիտային հանքանյութերի, ոռտիլի և իլմենիտի ցրոնների հանքային ֆու-
մացիաներ:

Մ ու Ն ո ջ ա ռ ն երը կազմում են Ուրալյան մետաղածնային գոտու հա-
րավային շարունակությունը, բնութագրվում են Ուրալյան հանքայնացման
տիպերով և արդեն նկարագրված են Ուրալին նվիրված բաժնում:

Հ ա Ր ա վ ա յ ի ն Ղ ա զ ա խ ս տ ա ն Ե (Կարատաու ու Տյան-Շանի հյուսի-
սային ճյուղերը) բնութագրվում են կապարի ու ցինկի տելեթերմալ հանքա-
վայրերի առաջատար դերով, Աբախլի հանքադաշտի սիդերիտային (նույնպես
տելեթերմալ) հանքայնացման մեծ դերով, Տալասի շրջանի սնդիկ-բազմա-
մետաղային հանքայնացումով ու Կարատաու լեռնաշղթայի միջին քմբերում
տեղադրված վանադիումի ու մոլիբդենի նստվածքային խոշորագույն կուտա-
կումներով: Կենտրոնական ու Հարավային Ղազախստանի մետաղածնության
բնութագիրն ամփոփված է համապատասխանաբար 8 և 9 աղյուսակներում:


Կենտրոնական Ղազախստանի հազվագյուտմետաղային հանքայնացումը
մանրակրկիտ ուսումնասիրված է Գ. Ն. Շչերբայի կողմից, որը հանքայնա-
ցումը սերտորեն կապում է Ակշատաույան ուշհերցինյան, ավելի ստույգ՝
պերմի հասակի լեյկոկրատային (ալյասիտային) գրանիտների հետ: Կենտ-
րոնական Ղազախստանի հազվագյուտմետաղային հանքայնացման տեղա-
դրման կարևոր գործոն են խորքային խախտումները, որոնք հատում են
բյուրեղային հիմքը, ապահովելով հանքաբեր ինտրուզիաների ներդրումը
ստրուկտուրային վերին հարկերում: Որպես արդյունք ձևավորվում են հազվա-
գյուտմետաղային գոտիներ՝ Կուու-Կզիլտաու-Մամանտասյան և այլն (նկ. 30):

Առավել արդյունավետ են շտոկվերկային հանքավայրերը, արդյունաբե-
րական նշանակություն ունեն նաև ոչհազվադեպ երակային հանքավայրերը:
Շտոկվերկային հանքավայրերի շարքում առաջին հերթին հարկ է նշել վոլ-
ֆրամիտ-մոլիբդենիտային հանքայնացման Շալգիա, Զանեստ, Արևելյան
Կոունրադ*, Ակշատաու, Բայնադար հանքադաշտերը, ինչպես նաև Վերին
Կալրակաի տիպի շեկիտաբեր շտոկվերկները, հանքայնացման բնույթով

* Ռ. Ն. Սոբոլևի և ուրիշների (1966) տվյալներով Արևելյան Կոունրադի հանքավայրը
կապված է ոչ թե պերմի, այլ ավելի հին (C₂-C₃, բացարձակ հասակը 310 մլն. տ.) գրանի-
տոդիտների հետ:

նրանց մոտ են քվարց-երակային Կոու, Արշալի, Կարաբա և ուրիշ հանքավայրեր (վոլֆրամիտ-մոլիբդենիտային, բիսմութի, կասիտերիտի, արսենոպիրիտի և ուրիշ խառնուրդներով):

Կենտրոնական Ղաղախստանի համար ամբողջությամբ վերցրած, և մասնավորապես Հյուսիսային Մերձբալխանյան մարզի համար, բնորոշ են մոլիբդենը ու վոլֆրամը և նրանց ուղեկցող անազն ու բիսմութը (ուշ փուլերի հանքայնացում):



Նկ. 30—Արևելյան Ղաղախստանի հազվագյուտմետաղային գոտիների ու շրջանների սխեմա (ըստ Գ. Ն. Շչերբայի, 1960). 1—հանքերը տարածություններ:

Գ. Ն. Շչերբան հազվագյուտմետաղային տիպին վերագրում է նաև երկրորդային քվարցիտների պղինձ-մոլիբդենային տիպի Կոուերազ, Բորլի, Սուկուրկոյ և ուրիշ հանքավայրերը, որոնք սերտ կապված են վերինպալեոզոյան փոքր ինտրուզիաների ու ֆելզիտների և պորֆիրների էքստրուզիաների հետ:

Պարզ շեն վոլֆրամիտ-մոլիբդենիտային ու պղինձ-մոլիբդենային հանքավայրերի փոխհարաբերությունները, սակայն դժվար է ենթադրել, որ նրանք նույն հասակի են ու կապված են նույն ինտրուզիվ կոմպլեքսի հետ: Կոուերազի հանքավայրի մանրազնին ուսումնասիրությունը Կ. Ս. Գաղիզովային (1957) բերում է այն եզրակացության, որ պղինձ-մոլիբդենային հանքավայր-

Կենտրոնական Ղազախստանի մետաղածնության հիմնական գծերը

| Մետաղա- ծնային զա- րաշրջան- ները | Հանքային ֆորմացիաները | Հանքավայրերի դեներտիկական տիպերը | Հանքավայրերի օրինակները | Հանքանյութերի զլխավոր բա- ղադրամասերը |
|---|--|---|------------------------------|--|
| Մինչքեմբր- յան | ոսկերեր | հիդրոթերմալ | Բորովսկի | Au (Sn, W) |
| Վաղկալե- դոնյան | սկանային (Cu տիպ) պղինձ-մոլիբդենային | սկանային հիդրոթերմալ | Կմանտու Բոշլեկուլ | Cu, (Fe) Cu, Mo (Au, Co, Re, Pt) |
| | բարիտ-կոլչեդանային | " | Մայկաին | Ba, Au, (Pb, Cu, Ag) |
| Ուշկալեդոն- յան | սկանային (Fe տիպ) ոսկերեր | սկանային հիդրոթերմալ | Ատանուր Ստանյակ | Fe (Co) Au, Ag, (Pb, Zn, Cu) |
| | կոլչեդանային | " | Ակբաստու | Cu, Au, (Pb) |
| Վաղհերցին- յան | սկանային (բաղմամետա- ղային տիպ) կրկաթ-մանգանային ու բարիտ-բաղմամետաղա- յին | սկանային Լբահայլադիոն- նստվածքային | Կզիլ-էսպին Աթասու | Pb, Zn, (Cu, Cd, Ag) Fe, Mn, (Ba, Pb, Zn, Ag) |
| | պղինձ-մոլիբդենային պղնձաբեր ավազաքարեր | հիդրոթերմալ տեկլեթերմալ (նստվածքային ^o) | Կոկտասկալ Ջեզկազգան | Cu, Mo Cu, Pb, Zn, (Ag, Re) |
| Ուշհերցին- յան | պղինձ-մոլիբդենային սկանային (բաղմամետա- ղային) | հիդրոթերմալ սկանային | Կոուերադ Ակտրան- Ակշալ | Cu, Mo (Ag, Re) Pb, Zn, (Cd) |
| | սկանային (Cu-Co տիպ) սկանային (բաղմամետա- ղային) | սկանային սկանային | Սայակ Կարագայլի | Fe, Cu, Co (Mo) Pb, Zn, Ba |
| | քվարց-վոլֆրամիտ-մոլիբ- դենիտային | հիդրոթերմալ ու զրեչլենային | Ակշատու, Կալրակտի | W, Mo, (Bi, Sn) |
| | սնդիկ-ծարիրային | հիդրոթերմալ | Տուրգայան զոնա | Hg, Sb, (As, Bi) |
| Պրոտերոզո- յան | մետամորֆոզեն (Fe) | մետամորֆոզեն | Կարսակպայ | Fe |
| Վաղկալե- դոնյան | մետամորֆոզեն (V-Mo) | նստվածքային- մետամորֆոզված | Կիլյակտի | V, Mo |
| Վաղհերցին- յան | պղնձաբեր կարմրագույն ավազաքարեր | նստվածքային | Ատրասար | Cu, (Pb) |
| Ուշհերցին- յան | " | " | Տարսական | Cu, (Ba, Sr) |
| Քիմերա-ալ- պիական | բոքսիտային | " | Ամանդեիլի | Al |
| | ռուսիլ-իլմենիտային | նստվածքային (բրածո ցրոններ) | Տուրգայ | Ti |

Հարավային Ղազախստանի մետաղածնության հիմնական գծերը

| Մետաղածնային դասաբաժան | Հանքային ֆորմացիաները | Հանքավայրերի գենետիկական տիպը | Հանքավայրերի օրինակներ | Հանքանյութերի գլխավոր բաղադրամասերը |
|------------------------|---|-------------------------------|------------------------|-------------------------------------|
| Վաղկայն-դոնյան | ոսկերեր | հիդրոթերմալ | Բայանաուլ | Au, Ag |
| Ուշկալեզոնյան | բազամմետաղային սիդերիտային | տեղեթերմալ | Կենդիկտաս Արախիլ | Pb, Zn, Cu Fe |
| | ոսկերեր | հիդրոթերմալ | Ռանգ | Au, Ag, (Pb, Cu) |
| Վաղհերցինյան | հազվագյուտմետաղային բազամմետաղային | հիդրոթերմալ | Տեկելի | Ta, Nb Pb, Zn, Ag (Sb, Cd) |
| | բարիտ-ֆլյուորիտային սկառնային (Fe-Cu-Co տիպ) | հիդրոթերմալ սկառնային | Քաղամ Իրիսու | Ba, F, Ag Fe, Cu, (Co) |
| Ուշհերցինյան | կապար-ցինկային | տեղեթերմալ | Միրգալիմսայ, Աչխասյ | Pb, Zn, (Ag, Ba) |
| Վաղկայն-դոնյան | անդիկ-բազամմետաղային վանադիումաբեր թերթաբարեր | նստվածքային | Տալաս | Hg, Pb, (Zn) |
| Քիմերա-ալպիական | երկաթաբեր | նստվածքային | Մերձարալյան | V, (Mo) Fe |

րերն առաջացել են ավելի ուշ ու կապված են վերջնական էտապների փոքր սուբհորաբխային պորֆիրների ու ֆելզիտների ինտրուզիաների հետ:

Ինչ վերաբերում է Կենտրոնական ու Հարավային Ղազախստանի զոնավոր մետաղների հանքավայրերին, ապա նրանց մեջ հարկ է առանձնացնել մի քանի տիպեր՝ տարբեր հասակի ու առաջացած տարբեր երկրաբանական պայմաններում:

1. Կարագալլի-Կայրակտյան բարիտ-գալենիտային հանքավայրերի տիպը, առավել արդյունավետ կապարի տեսակետից ու կապված ուշհերցինյան գրանիտոիդների հետ, տեղադրված է բեկվածքների զոնաների երկայնքով:

2. Ակսորան-Ակչալյան սկառնային-կարբոնատային հանքավայրերի տիպը ուշհերցինյան (այլ տվյալներով վաղհերցինյան °) գրանիտոիդների կոնտակտային զոնաներում, այստեղ կարելի է առանձնացնել երկու ենթատիպ՝ Ակսորանյանը երակիկա-ցանավոր գլխավորապես գալենիտային հանքայնացումով ու Ակչալյան գալենիտ-սֆալերիտային հանքանյութերով մանրաստիկ բաց-կանաչ կիսաթափանցիկ սֆալերիտով ու ավելի վաղ, կադմիումով հարուստ (պրշիբրամիտ) գորշ-նարնջագույն սֆալերիտի խոշոր բյուրեղներով:

3. Կզիլ-էսպյան բուն սկառնային բազամմետաղային հանքավայրերի տիպ (Կզիլ-էսպե, Գուլշագ և այլն), կապված վաղհերցինյան գրանիտոիդների հետ:

4. Ջեղկազգանյան տեղեթերմալ (կամ նստվածքային °) պղնձաբեր ավազաքարերի տիպը, որի վրա վերադրված է ցածր ջերմաստիճանային գալենի-

տային հանքայնացումը: Պղնձի ու կապարի հանքայնացումը ենթադրաբար կապվում է խորքում տեղադրված ուշհերցինյան հասակի գրանիտոիդների հետ:

5. Ալիսայ-Միրզալիմսայան Կարատաու լեռնաշղթայի կապար-ցինկային տելեթերմալ հանքավայրերի տիպը, որը տեղադրված է D_3-C_1 հասակի կարբոնատային հաստվածքներում և ենթադրաբար կապված է ուշհերցինյան գրանիտոիդների հետ:

6. Կոչեղանային Մայկային բարիտ-բազմամետաղային տիպի հանքավայրեր, կապված վաղկալեզոնյան հասակի մագմատիզմի հետ:

Չազախստանի մետաղածնային բնութագրի լրիվ պատկերման նպատակով անհրաժեշտ է նաև նշել նրա տարածքում էքսհալյացիոն-նստվածքային, հետագայում մի փոքր մետամորֆացված խոշոր հանքավայրերի առկայությունը՝ հեմատիտ-մադնետիտային (Աթասուի խումբը) ու մանդանիտ-բրաունիտային (Ջեզգի, Կարաշալ, Կտալ, Կլիչ և այլն) հանքավայրերը, տեղադրված D_3-C_1 հասակի կարբոնատային հաստվածքներում:

Ուշկալեզոնյան թթու գրանիտների հետ կապված են ալքիտացման զոնաները, նիոբիումի կոնցենտրացիաներով (W, Sn, Zr-ի հետ), իսկ մի շարք երկրաբաններ (Ն. Գ. Կասին, Յու. Ա. Բիլիբին և ուրիշներ) ուշկալեզոնյան հասակի (S_2-D_1) դիորիտների փոքր ինտրուզիաների հետ կապում են Ստեպնյակ շրջանի ոսկու հանքավայրերը: Կարսապկայի շրջանի պրոտերոզոյի հաստվածքին հարում են երկաթային քվարցիտների տիպի երկաթի մետամորֆոզեն հանքանյութերի հանքավայրեր, իսկ գրանիտոիդների փոքր ինտրուզիաների հետ կապված երկրորդային քվարցիտներին՝ անդալուզիտի ու կորունդի խոշոր կուտակումներ (Սեմիզ-Ֆուզու և այլն):

Չազախստանի ժողովրդական տնտեսության զարգացման համար մեծ նշանակություն ունի Կարազանդայի քարածխի խոշոր հանքավայրը (հասակն է C_3) և պերմի ու յուրայի հասակի մի շարք ավելի փոքր քարածխաբեր ավազաններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՂԱԶԱՆԱԿԱՆ ՄԵՏԱՂԱՄԵՆՆԻՆ ԳՈՏՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Анкинович С. Г. Нижний палеозой ванадиеносного бассейна Северного Тянь-Шаня и западной окраины Центрального Казахстана. Алма-Ата, 1961, с. 272.
- Богданов А. А. Основные черты палеозойской структуры Центрального Казахстана. «Бюлл. МОИП, отд. геол., нов. сер.», т. 64, № 1, 1959, с. 3—38.
- Борукбаев Р. А. Некоторые закономерности металлогении допалеозоя и нижнего палеозоя северо-востока Центр. Казахстана. «Изв. АН Каз. ССР, серия геол.», вып. 20, 1955, с. 36—51.
- Вольфсон Ф. И. Главнейшие полиметаллические и некоторые медные месторождения Центр. Казахстана. «Тр. ИГН АН СССР, сер. рудн. м-ний», № 7, вып. 70. 1945, с. 119.
- Газизова К. С. Медное месторождение Коунрад. Госгеолтехиздат, 1957, с. 5—130.
- Геологическое строение Центрального и Южного Казахстана. «Матер. ВСЕГЕИ», вып. 41, 1961, с. 496.
- Геология и металлогения Успенской тектонической зоны (Центральный Казахстан), тт. I—VI, Изд. «Наука», Каз. ССР, 1967—1969 гг.: т. I, 1967 (с. 305—362); т. II, 1967 (с. 10—300); т. III, 1967 (с. 13—253); т. IV, 1968 (с. 94—143); т. V, 1969 (с. 150—161); т. VI, 1968 (с. 5—173).
- Есенов Ш. Е. и др. К металлогении тектоно-магматических циклов Казахстана. «Изв. АН Каз. ССР, серия геол.», № 2, 1969, с. 65—72.

- Захаров Е. Е. Металлогения Каратау. В сб. «Закон. размещ. полезн. ископ.», Изд. АН СССР, т. III, 1960, с. 380—417.
- Кассин Н. Г. Металлогенические циклы Казахстана. «Пробл. сов. геологии», № 2, 1935, с. 169—181.
- Коноплянцев М. А. Молибденовые месторождения Центр. Казахстана. «Сов. геол.», № 2, 1959, с. 85—104.
- Коптев-Дворников В. С. К вопросу о некоторых закономерностях формирования интрузивных комплексов гранитоидов (на примере Центр. Казахстана). «Изв. АН СССР, сер. геол.», № 4, 1952, с. 63—80.
- Материалы научной сессии по металлогеническим и прогнозным картам. Алма-Ата, 1958, с. 319.
- Михайлов Н. П. Интрузивные офиолитовые комплексы Восточного Казахстана. «Тр. ВСЕГЕИ, нов. сер.», т. 80, Гостоптехиздат, 1962, с. 109—223.
- Основные идеи Н. Г. Кассина в геологии Казахстана. Изд. АН Каз. ССР, 1960, с. 420.
- Половинкина Ю. Ир. Основные и ультраосновные породы Карсакпая. Госгеолиздат, 1952, с. 3—88.
- Рундквист Д. В. и др. О закономерностях размещения редкометальных месторождений Центр. Казахстана. «Тр. ВСЕГЕИ, нов. серия», т. 133, «Недра», 1966, с. 5—44.
- Русаков М. П. и Фремд Г. М. Некоторые вопросы генезиса, состава, локализации и оруденения вторичных кварцитов Казахстана. «Ученые зап. Казах. гос. ун-та, сер. геол. и геогр.», т. 37, вып. 4, 1958, с. 61—81.
- Сапожников Д. Г. Медистые песчаники западной части Центрального Казахстана. «Тр. ИГН АН СССР, сер. геол.», вып. 93, № 28, 1948, с. 1—122.
- Сатпаев К. И. Главные закономерности пространственного размещения зон эндогенного оруденения в Центр. Казахстане. «Сов. геол.», № 58, 1957, с. 93—109.
- Сатпаев К. И. О специфике и основных этапах развития металлогении Центр. Казахстана. «Изв. АН СССР, сер. геол.», № 3, 1957, с. 3—14.
- Сатпаев К. И. Металлогенические особенности и закономерности в проявлении эндогенной концентрации меди в недрах Центрального Казахстана. В сб. «Металлогенические и прогнозные карты», Изд. АН Каз. ССР, Алма-Ата, 1959, с. 145—151.
- Сатпаев К. И. Избранные труды, т. III, проблемы металлогении и минеральные ресурсы Казахстана. Изд. «Наука», Каз. ССР, 1968, с. 5—312.
- Семенов А. И. Принципы и методика составления металлогенической карты Восточного Казахстана. «Сов. геол.», сб. 58, 1957, с. 110—127.
- Соболев Р. Н. и др. Абсолютный возраст гранитной интрузии Восточный Коунрад (Центральный Казахстан). В сб. «Абс. датирование тектоно-магм. циклов и этапов оруденения по данным 1964 года». Тр. XIII сессии Ком. по опред. абс. возраста. «Наука», 1966, с. 240—244.
- Шатский Н. С. О тектонике Центрального Казахстана. Изд. АН СССР, 1938, № 5—6, с. 737—769.
- Щерба Г. Н. Формирование редкометальных месторождений Центрального Казахстана. Изд. АН Каз. ССР, 1960, с. 381.
- Щерба Г. Н. Связь рудных месторождений Казахстана с герцинским вулканизмом. Матер. межвед. совещ. по пробл. «Рудоносность вулканогенных формаций». «Недра», 1966, с. 71—87.

7. Միջինասիական մետաղածնային գոտին հարավից կից է Ղազախստանյան գոտուն ու ձգվում է լայնակի, բնորոշվելով սովետական շորս՝ Ուզբեկական, Տաջիկական (նրա հարավային մասից բացի, որը վերագրվում է Միջերկրածովային գոտուն), հիրզիդական ու Թուրքմենական հանրապետու-

թյունների տարածքները: Գոտու ընդհանուր ձգվածությունը 2000 կմ է, միջին լայնությունը՝ 400 կմ:

Մալքավորման, մագմատիզմի ու հանքայնացման ամենաինտենսիվ պրոցեսներն այստեղ արտահայտվել են զլխավորապես հերցինյան, իսկ մարդի հյուսիսային մասում՝ կալեդոնյան օրոգենիկ դարաշրջաններում:

Միջին Ասիայի երկրաբանական կառուցվածքի ու մետաղածնության ուսումնասիրման գործում մեծ ներդրում են արել երկրաբաններ Հ. Մ. Աբդուլաևը, Յու. Ա. Արապովը, Խ. Ի. Բայմուխամեդովը, Ռ. Բ. Բարատովը, Ֆ. Ի. Վոլֆսոնը, Վ. Գ. Գարկովեցը, Ե. Ն. Գորեցկայան, Ե. Գ. Կարպովան, Ա. Վ. Կորոլևը, Ա. Պ. Մարկովսկին, Ս. Ֆ. Մաշկովցևը, Դ. Վ. Նալիվկինը, Բ. Ն. Նապեդովը, Վ. Ա. Նիկոլաևը, Ա. Վ. Պեյվեն, Վ. Ի. Պոպովը, Վ. Է. Պոլյարկովը, Ն. Մ. Սինիցինը, Վ. Ի. Սմիռնովը, Յա. Գ. Տեր-Յանեզովը, Ա. Ե. Ֆերսմանը, Ի. Խ. Խամրաբաևը, Պ. Ա. Շեխումանը, Դ. Ի. Շչերբակովը և ուրիշներ, որոնց նյութերի հիման վրա կազմված է ստորև բերված համառոտ ակնարկը:

Միջինասիական գոտու հյուսիսային մասում կալեդոնյան ծալքավորումն արտահայտվել է ինտենսիվ, ուղեկցվելով հիպերբազիտների ու գրանիտոիդների ներդրումով, որոնց հետ, սակայն, կապված են միայն փոքր երևակումներ. քրոմիտը և պլատինոիդները կապված են հիպերբազիտների, իսկ հազվագյուտմետաղային պեգմատիտները ու քվարցային երակները W, Mo, Au հանքայնացումով՝ գրանիտոիդների հետ:

Ամենաարդշուկապետը հերցինյան մագմատիզմն է, որը լայն արտահայտված է Միջինասիական գոտու միջին ու հարավային մասերում:


Ավելի վաղհերցինյան հիպերբազիտների ու գաբրոների ինտրուզիաների (բացարձակ հասակը 300—320 մլն. տ., Ի. Խ. Խամրաբաև, 1966) հետ կապված են քրոմիտի ու օսմիումային իրիդիումի (վաղ փուլի հանքայնացում) մանր երևակումներ:

Զարգացման միջին փուլի շափավոր թթու գրանիտոիդների հետ (գրանիտոիդների հասակը C₂-C₃ է, բացարձակ հասակը 260—270 մլն. տ.) կապված են սկառնային շեկիտային բազմաթիվ հանքավայրեր, տեղ-տեղ կասիտերիտի կամ մոլիբդենիտի կուտակումների ենթակա դերով: Նրանց հետ կապված են նաև բարձր ջերմաստիճանային հիդրոթերմալ մետասոմատիկ արսենոպիրիտային հանքանյութերի (ոսկու, բիսմութի, կոբալտի խառնուրդով) հանքավայրեր:

Հերցինյան մագմատիզմի ուշ փուլի գրանիտոիդների փոքր ինտրուզիաների հետ, որոնց հասակը P մինչև MZ-ի սահմանն է, կապված են բազմամետաղային, քվարց-կասիտերիտային և սուլֆիդ-կասիտերիտային, պղինձ-մոլիբդենիտային, պղինձ-բիսմութային, ոսկեբեր բազմաթիվ հանքավայրեր ու երևակումներ: Հետազոտողներից շատերը նույն ուշհերցինյան ցիկլին են վերագրում Ֆլյուորիտի ու ծարիր-սնդիկային հանքանյութերի հանքավայրերը, թեև վերջերս կուտակված նոր փաստացի նյութը թույլ է տալիս այդ հանքավայրերի առնվազն մի մասը վերագրել ավելի երիտասարդ՝ քիմերյան կամ, նույնիսկ, ալպիական ցիկլին:

Վ. Ի. Սմիռնովի Հարավային Տյան-Շանի սնդիկ-ծարիրային ու վոլֆրամ-անագային գոտիների հարաբերակցության ուրվագիծը, որտեղ սնդիկ-ծարիրային գոտին շեղ անկյան տակ կտրում է հերցինյան գրանիտոիդային ինտրու-

դիաներն ու նրանց հետ սերտ կապված գլխավորապես սկաննային W-Sn-As հանքանյութերի հանքավայրերը, նույնպես խոսում է սնդիկ-ծարիրային հանքայնացման համեմատաբար ավելի երիտասարդ լինելու օգտին (նկ. 31): Այսպիսի մագմատիզմը ու էնդոգեն հանքայնացումը հայտնի են Կուզիտանգ ու Կոպետ-Գաղ լեռնաշղթաներում, ինչպես նաև Գարվազում ու Պամիրում, որտեղ այսպիսի գրանիտոիդների ոչ մեծ մարմինների հետ կապված են բազմամետաղային հանքանյութերի, բարիտի ու վիտերիտի, կինովարի և ոսկու հանքավայրերը:



Նկ. 31—Հարավային Տյան-Շանի սնդիկ-ծարիրային ու վոլֆրամ-անագ-մկնդեղա-
յին հանքավայրերի գոտիների հարաբերակցության սխեմա (բստ Վ. Ի. Սմիռնովի):
I—Հնրցիկյան գրանիտոիդների ինտրուզիվներ, I—սնդիկի ու ծարիրի հանքա-
վայրերի ղոնա, II—վոլֆրամի, անագի ու մկնդեղի հանքավայրերի ղոնա:

Ըստ Ն. Գ. Կարպովայի, Միշին Ասիայի պալեոգոյան ծալքավոր մարզի տարածքում առանձնանում են հինգ ստրուկտուրա-ֆորմացիոն ղոնաներ՝ Հյուսիս-Տյանշանյան, Կուրամինյան, Հարավ-Գիսարյան (վաղպալեոգոյան կոնսոլիդացիայի մարզեր), Ալայ-Կոկչալայան ու Կարատաու-Չատկալա-Նարինյան (ուշպալեոգոյան կոնսոլիդացիայի մարզեր). անկախ կոնսոլիդացիայի հասակից, բոլոր հինգ ղոնաների համար կարևոր նշանակություն է ունեցել ուշպալեոգոյան հանքայնացումը:

Հյուսիս-Տյանշանյան ղոնայի մետաղածնությունը բնութագրվում է կապար-ցինկային հիդրոթերմալ հանքայնացման գերիշխմամբ, որն առաջացել է վաղպալեոգոյան ծալքավոր ստրուկտուրաների հետգեոսինկլինալային կոնսոլիդացիայի փուլում: Զոնայի վարդացման գեոսինկլինալային փուլը ընդգրկում է ուշպրոտերոզոյից մինչև օրդովիկ ժամանակաշրջանը ներառյալ. լայն արտահայտվել է մագմատիզմը՝ ուշմինչքեմբրյան ու քեմբրյան սպիլիտա-գիաբազներ, անդեզիտներ, կերատոֆիրներ. քեմբրյան՝ ղիորիտ-պլագիոգրանիտների ինտրուզիաներ. ուշօրդովիկյան գրանոդիորիտների-գրանիտների բաթոլիտներ: Մագմատիզմի հետ կապված հանքայնացումը թույլ է արտահայտված. միայն ուշօրդովիկյան գրանոդիորիտների-գրանիտների բաթոլիտների հետ կապված են անագի, վոլֆրամի ու մոլիբդենի փոքր երևակումներ պեգմատիտներում, գրեյզներում ու քվարցային հրակներում:

էնդոգեն հանքայնացումն արտահայտվել է գլխավորապես ստրուկտու-

քայի կոնսոլիդացիայից հետո, միջին ու վերին պալեոզոյում, գրանիտոիդային ինտրուզիաների հետ կապված:

Դեռնի հասակի գրանիտների հետ կապված են սկանդինավյան մագնետիտ-խալկոպիրիտային ոչ մեծ հանքավայրեր՝ վերադրված ոսկու հանքայնացմամբ (Ակտաշ), երակային քվարց-մոլիբդենիտային ու քվարց-վոլֆրամիտ-մոլիբդենիտային երևակումներ: Ուշպալեոզոյան մոնցոնիտ-սիենիտային ու զլխավորապես գրանիտ-ալյասկիտային համալիրների գրանիտոիդների հետ կապված են հազվագյուտմետաղային-բազմամետաղային հանքավայրերը. Ակտյուզ՝ կապար-ցինկ-մոլիբդեն-անագային հանքայնացումով, Կուրգան՝ պիրոտին-գալենիտ-սֆալերիտ-կասիտերիտային հանքանյութերով, Ուշ-Իմչակ՝ արսենոպիրիտային Pb, Zn, Bi պարունակող հանքանյութերով:

Կ ու ր ա մ ի ն յ ա ն զ ո ն ա յ ի մետաղածնությունը շատ հարուստ է և ներկայացված է կապարի ու ցինկի, պղնձի, ֆլյուորիտի, մկնդեղի, բիսմութի, ոսկու, վոլֆրամի, մոլիբդենի, երկաթի սկանդինավյան ու զլխավորապես հիդրոթերմալ տիպի խոշոր կուտակումներով, կապված ուշհերցինյան գրանիտոիդների հետ: C_2-C_3 հասակի գրանիտոիդների մեծ ինտրուզիաներն ուղեկցվում են սկանդինավյան մագնետիտային (Տուրանգլի, Գավասայան խումբը) ու պղինձ-ոսկիեբեր հանքայնացումով:

Հիպաբիսալ C_3 ու զլխավորապես պերմի հասակի գրանիտոիդների փոքր ինտրուզիաների հետ կապված են հանքավայրերի հետևյալ տիպերը՝

- 1) շեելիտաբեր մոլիբդեն պարունակող սկանդեր (Չորուխ-Գայրոն).
- 2) պղինձ-մոլիբդենային երակիկա-ցանավոր հանքայնացում (Ալմալիկ).
- 3) բազմամետաղային սկանդային տիպի հանքավայրեր (Ալտին-Տոպկան, Կանսայ, Գարբազա).
- 4) միջին ջերմաստիճանային մետասոմատիկ բազմամետաղային հանքանյութեր կարբոնատային ապարներում (Կուրգաշին-Կան և այլն):

Ամենաերիտասարդ ուշպերմյան գրանիտոիդների փոքր ինտրուզիաների հետ կապված են ցածր ու միջին ջերմաստիճանային Au-Ag (Չադակյան խումբը), կապարի ու կապար-արծաթային (Տարի-էկան, Լաշկերեկ), գալենիտ-ֆլյուորիտային (Կան-ի-Մանսուր, Նաուգարզան), մկնդեղ-բազմամետաղային (Տակեի), բիսմութ-մկնդեղային (Բրիչմուլլա), պղինձ-բիսմութային (Աղլասաման, Ջելտիմաս) հանքավայրերը: Այդ զոնայի համար բնորոշ են նաև կապար-ցինկային հանքանյութերի խոշոր տեղեթերմալ հանքավայրերը (Ուշ-Կալաշ, Սումսար), որոնք նման են Ղազախստանի Կարատաու լեռնաշղթայի հանքավայրերին:

Հ ա ր ա վ - Գ ի ս ա ր յ ա ն զ ո ն ա յ ի մետաղածնությունը ներկայացված է երեք տարբեր մագմատիկ ու հանքային համալիրներով:

Միջին պալեոզոյի կերատոֆիրների հետ սերտ կապված ու տեղադրված են նրանց տուֆերի ու վերջինների հետ շերտավորվող բիտումային կրաքարերի մեջ բազմամետաղային, հավանաբար, կոլչեղանային տիպի հանքանյութերի շերտածե կուտակումներ (Խանգիզա հանքավայրը), Հյուսիս-Վարզոբյան պորֆիրանման գրանիտների-գրանոզիորիտների կոմպլեքսի (հասակը C_2 է) հետ կապված են շեելիտի, արսենոպիրիտի, երբեմն կասիտերիտի խոնուրդով սկանդինավյան հանքավայրերը: Հարավ-Վարզոբյան ավելի երիտասարդ գրանիտների կոմպլեքսների (հասակը C_3 է) հետ կապված են անագաբեր

պեզմատիտներն ու գրեյզենները, ինչպես նաև քվարց-շեելիտ-կասիտերիտային երակները:

Մագմատիզմի ամենաերիտասարդ արտահայտությունները ներկայացված են ալկալային-լամպրոֆիրային ապարների դայկաներով (նրանց հասակը P_2 է, կամ նույնիսկ՝ Mz), որոնց հետ պարագենետիկորեն կապված են գալենիտի երևակումներ ու ֆլուորիտի հանքավայրեր (Տակոբ, Կանդարա և ուրիշներ):

Ալյա-Կոկոշալյան զոնայի մետաղածնությունը բնութագրվում է ոսկու, վոլֆրամի, անագի, ծարիրի ու սնդիկի կարևոր հանքավայրերի առկայությամբ: Ամբողջ մինչքեմբրի ու պալեոզոյի ընթացքում այս մարզը եղել է միոգենոսինկլինալային զարգացման տիպիկ շրջան, խոշոր ուշալեոզոյան գրանիտների ինտրուզիաներով, որոնց հետ կապված են Au , W , Sn , As , Co -ի կարևոր հանքավայրեր: Ավելի երիտասարդ են ծարիրի ու սնդիկի հանքավայրերը (նրանց հասակը P է, կամ նույնիսկ Mz), որոնք վերագրվում են հետգենոսինկլինալային զարգացման փուլին:

Գրանիտ-գրանոդիորիտային զանգվածների հետ կապված են շեելիտաբեր սկառնների հանքավայրեր (Լյանգար, Կոյտաշ) ու հիդրոթերմալ քվարց-ոսկի-սուլֆիդային երակներ ու շտոկվերկներ (Մուրունտաու): Սակայն, Մուրունտաուի խոշորագույն ոսկեբեր հանքաղաշտի առաջացման պայմանների վերաբերյալ առաջ է քաշվում մի այլ տեսակետ (Гарьковец, 1971), որի համաձայն Մուրունտաուն առանձնացվում է որպես ինքնուրույն Կղրլկուձյան տիպ՝ հին մետամորֆացված ցրոնների խմբի սինգենետիկ-էպիգենետիկ հանքավայրեր: Այս տիպի հանքայնացման համար կարևոր է ընդգծել նրա հարումը միայն մինչքեմբրյան հասակի (հանք պարունակող ապարների բացարձակ հասակը 900 մլն. տ. է՝ պրոտերոզոյ) մետամորֆիկ հաստվածքներին, որոնք հարստացած են ոսկով:

Այսպիսով, Մուրունտաուի հանքաղաշտի առաջացումը դիտվում է դինամոթերմալ մետամորֆիզմի վարկածի դիրքերից:

Ջիրաբուլակ-Կարատյուբյան շրջանում ուշալեոզոյան բիոտիտային գրանիտների-գրանոդիորիտների հետ կապված են սկառնային շեելիտային խոշոր հանքավայրեր (Ինգիշկե, Կարատյուբե) ու քվարց-սուլֆիդ-կասիտերիտային հանքանյութերի ոչ մեծ երևակումներ (Լապաս):

Ջերավշանա-Գիսարյան լեռնային մարզում C_3-T հասակի գրանիտոիդների հետ կապված են սկառնային-շեելիտային հանքավայրեր գրեյզենային-կասիտերիտային վերադրված հանքայնացումով (Մայխուրա), սկառնային ու բարձր ջերմաստիճանային արսենոպիրիտ-լյուինգիտային հիդրոթերմալ հանքանյութերի, երբեմն ոսկու, բիսմութի, կոբալտի (Մոսրիֆ, Կազնոկ, Չալկույրուկ, Սարիմատ և ուրիշ.), կամ անագի խառնուրդով (Տակֆոն և այլն) հանքավայրեր:

Ալյան լեռնաշղթայի հյուսիսային լանջում միջին ալեոզոյի կարբոնատային ապարներում հայտնի են սնդիկային (Խաղարկան), ծարիրային (Կաղամջալ), սնդիկ-մկնդեղային (Չաուվալ) տեղեթերմալ հանքանյութերի խոշոր հանքավայրեր վերինպերմյան կամ ենթադրաբար մեզոզոյան հասակի:

Նույն տիպի ծարիր-սնդիկային հանքայնացում հայտնի է նաև Ջերավշանա-Գիսարյան լեռնային սիստեմում (Ջիջիկրուտ, Ռարզ, Մագիան և ուրիշ

հանքավայրեր), ընդ որում հանքայնացման այս տիպը սովորաբար ուղեկցվում է ֆլյուորիտով ու ավելի հազվադեպ՝ բարիտով:

Ֆլյուորիտը, բարիտը, ինչպես նաև կալցիտը (խլանդական սպաթ), երբեմն կազմում են ինքնուրույն շատ արժեքավոր օպտիկական տարբերակների ոչ մեծ կուտակումներ, տեղադրված կարբոնատային ապարներում (օպտիկական ֆլյուորիտի Կուլի-Կայուն, օպտիկական բարիտի Պարվին, իսլանդական սպաթի Մագիան հանքավայրերը):

Կարատառ-Չատկալանարինյան զոնայի մետաղածնությունը կապված է զլիավորապես գաբրո-մոնցոնիտ, գրանոգիորիտների ու գրանիտների ուշալուեղոյան ինտրուզիաների հետ: C_3 հասակի գաբրո-մոնցոնիտ-գրանոգիորիտների համալիրի հետ կապված են սկանոային շեկիտային ոսկեբեր հանքավայրերը (Կումբել), սկանոային մագնետիտային պղինձային հանքայնացումով վերադրված հանքավայրերը (Սուսինգեն), հիդրոթերմալ քվարցային երակներ մոլիբդենիտով, վոլֆրամիտով, ոսկով: Մի քիչ ավելի երիտասարդ պերմյան հասակի լեյկոկրատային գրանիտների հետ կապված են անագաբեր պեգմատիտները, քվարց-վոլֆրամիտային, քվարց-կասիտերիտ-վոլֆրամիտային երակներն ու գրեյզենային զոնաները (Սարգարդոն, Ուլուն-Բուլակ):

D_3-C_1 հասակի կարբոնատային ապարներում, հաճախ պերմյան հասակի փոքր ինտրուզիաների ու դալկաների հետ պարագենետիկորեն կապված, գտնվում են բազմամետաղային, ֆլյուորիտային և ոսկի-ծարիրային տելեթերմալ հանքավայրերը:

Կասան գետի ավազանում մինչքեմբրյան թերթաբարերի մեջ տեղադրված են հանքայնացման նշանակալից քվարց-ստրենիտային, ոսկի-ստրենիտային, ոսկի-արսենոպիրիտային շերտածե հանքանյութերի հանքավայրեր, որոնց կապը մագմատիզմի հետ պարզ չէ:

Միջինասիական գոտու մետաղածնության հիմնական գծերը տե՛ս աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10՝

Միջին Ասիայի մետաղածնության հիմնական գծերն ըստ զոնաների

| 1 | 2 | 3 | 4 |
|----------------------------|---|--|--|
| Զոնաները | Մագմատիկ համալիրների կազմն ու հասակը | Հանքային ֆորմացիաները | Հանքավայրերի օրինակները |
| 1. Հյուսիսային Տյան-Շանյան | ուշ օրդովիկի գրանոգիորիտներ-գրանիտներ զոննի գրանիտներ մոնցոնիտ-սինիտներ ու ալյասկիտային գրանիտներ | Պեգմատիտներ, գրեյզեններ Sn, W, Mo-ով սկանոային Fe-Cu-Au քվարցային երակներ W, Mo-ով Բազմամետաղային, հազվադուր-մետաղ-բազմամետաղ. (Pb, Zn, Mo, Sn) | Երեկուսներ Ակտաշ Երեկուսներ Ակտուզ, Կուրգան |
| 2. Կուրամիայան | գրանիտոիդային բաթոլիտներ C_2-C_3 | Արսենոպիրիտային Pb, Zn, Bi-ով, սկանոային մագնետիտային, պղինձ-ոսկերեր | Ուլ-Իմչակ Տուրանզիլի, Գավասայ |

| 1 | 2 | 3 | 4 |
|---------------------------------|--|--|---|
| | <p>հիպարիսալ գրանիտոիդ- ների փոքր ինտր. C₃ ու զլլխավորապես P</p> <p>գրանիտոիդների փոքր ին- տրուդ. ուշպերմյան- տրիասի հասակի</p> | <p>սկանային շեկիտով ու Mo</p> <p>պղինձ-մոլիբդեն. սկանային-բազմամ. բազմամետաղ.- կարբոն. սպարներում ոսկե-արծաթային</p> <p>կապար-արծաթային կապար-ֆլյուորիտ. մկնդեղ-բազմամետաղ. բիսմութ-մկնդեղ. պղինձ-բիսմութային կապար-ցինկային տելեթեր- մալ</p> <p>կոլչեղանա-բազմամետաղ.</p> | <p>Չորուխ-Գայրոն</p> <p>Ալմալիկ Ալտին-Տուրկան, Կանսայ Կուրդաշին-Կան</p> <p>Չադակյան խումբ</p> <p>Տարի-Էկան, Լաշկերեկ Կան-ի-Մանսուր, Կան- գարգան Տակելի Բրիչմուլա Ազրասման, Ջեկտիմաս, Ուշ-Կուլաշ, Մուսար</p> |
| <p>3. Հարավ- Գիսարյան</p> | <p>Կերատոֆիրներ</p> <p>Հյուսիս-Վարդոբյան կոմպլ- պորֆիրանման գրանիտ. գրանոզիտրիտ. Հարավ-Վարդոբյան կոմպլ- լեքսի C₃ գրանիտներ</p> <p>ալկալային լամպրոֆ. ա- պարների դայկաներ P₂ (կամ MZ^o)</p> | <p>սկանային շեկիտի, արսե- նոպիրիտի, երբեմն կա- սիտերիտով հանք. պեզմատիտներ ու գրեյդեն- ներ Sn-ով, քվարց-շեկ- լիտ-կասիտ. երակներ ֆլյուորիտային, երբեմն գալենիտով</p> | <p>Խանգիզա</p> <p>Երեհուտներ</p> <p>Երեհուտներ</p> <p>Տակոբ, Կանդարա</p> |
| <p>4. Ալաշ-Կոկ- չալայան</p> | <p>ուշպալեոզոյի գրանոզիտ- րիտներ</p> <p>C₃-P գրանիտոիդների փոքր զանգվածներ</p> <p>գրանիտոիդների մագմ. օջախներ P₂ կամ MZ (^o) հասակի</p> | <p>շեկիտաբեր սկաններ</p> <p>քվարց-ոսկի-սուլֆիդ. երակներ ու շտոկվերկ. շեկիտաբեր սկաններ Ջի- րարուլակ-Կարատյուրե- լի շրջան քվարց-սուլֆիդ-կասիտ- րիտ. հանքավայրեր շեկիտաբեր սկաններ վե- րադրված գրեյդ. կասիտ. հանք. սկանային ու բարձր-շեր- մաս. մետասոմ. արսե- նոպիրիտ-լյոլինգիտ. հանք. Au, Bi, Co, Sn խառնուրդով Sb, Hg, As (ոնալգ.- աուրիդ.) սովորաբար ֆլյուորիտով տելեթերմալ հանքավ.</p> | <p>Լյանգար, Կոյտաշ</p> <p>Մուրունտաու (^o)</p> <p>Ինգիչկե, Կարատյուրե</p> <p>Կապաս</p> <p>Մայխուրա</p> <p>Մսորիֆ, Կազնոկ, Չալկույրյուկ, Սարիմատ, Տակֆոն</p> <p>Կադամչալ, Խալգար- կան, Չաուվաշ, Թարդ, Մագիան</p> |

| 1 | 2 | 3 | 4 |
|--------------------------------|--|--|---|
| 5. Կարատաու-Չատկա-լա-Նա-րինյան | գարրո-մոնցոնիտ-գրանոզիորիտներ C_3 գրանիտոիդների փոքր ինտրուզիաներ ու դաշկաներ | ցածր ջերմ. հիդրոթերմ. օպտիկ. ֆլյուորիտի, բարիտի, իսլանդ. սպաթի հանք. շեկլիտաբեր սկաններ վերադրված Au-ով մագնետիտային սկաններ վերադրված Cu-ով հիդրոթերմալ քվարցային երակներ Mo, W, Au-ով պեղմատիտներ ու գրեյնդներ Sn, W-ով բազմամետաղային, Au-Sb, ֆլյուորիտային տեղեթերմալ | Կուլի-Կալոն, Պարվին, Մազիան Կումբել (Սոնկուլ) Սուսինգեն Էրեակումներ Մարգարզոն, Ուզուն-Բուլակ Կասան գետի ավազանը (°) և ուրիշ շրջաններ |

Մուրունտաու ոսկու հսկայական հանքադաշտի առաջացման վերաբերյալ հիմնավորվում է հետևյալ հիպոթեզը. այն ձևավորվել է պրոտերոզոյան հասակի ցրտների դինամոթերմալ մետամորֆիզմի հետևանքով, իսկ ոսկեբեր քվարցի երակներն ու երակիկները գոյացել են վերինպալեոզոյան գրանիտոիդների հետ կապված հիդրոթերմալ գործունեության կապակցությամբ ու ոսկու վերանստեցման հետևանքով (Гарьковец, 1971):

Այսպիսով, Միջին Ասիայի համար նշանակություն ունեն շեկլիտի սկանային հանքավայրերը (հաճախ Mo, Sn, Au, Bi, As-ի վերադրված հանքայնացումով), բազմամետաղային սկանային ու հիդրոթերմալ կապար-ցինկային հանքանյութերի, ֆլյուորիտի, ծարիրի, սնդիկի, ինչպես նաև պղինձ-մոլիբդենային ու ոսկու երակիկա-ցանավոր հանքանյութերի հանքավայրերը:

Ոսկին ներկայացված է ինչպես հիդրոթերմալ, այնպես էլ մետամորֆոզեն (դինամոթերմալ մետամորֆացված Կլըլկումյան հին ցրտներ) հանքավայրերով:

Ե. Դ. Կարպովայի աշխատություններից մեկը (1960) նվիրված է Միջին Ասիայի հանքավայրերի տեղաբաշխման օրինաչափություններին, որոնք կապված են այդ ռեգիոնում ստրուկտուրաների զարգացման ու մագմատիզմի էվոլյուցիայի հետ:

Առանձնացված են հետևյալ ինտրուզիվ ու հանքային կոմպլեքսները. 1) գարրո-պերիդոտիտներ ու գարրո-գիաբաղներ, 2) գրանիտոիդներ հազվագյուտմետաղային հանքայնացումով, 3) բարձր ալկալիություն հիպաբիտալ ինտրուզիաներ բազմամետաղային ու ծարիր-սնդիկային հանքայնացումով:

Լավ հիմնավորված է այն գրույթը, որ հազվագյուտմետաղային հանքայնացման ինտենսիվ զարգացումը տարահասակ ստրուկտուրաներում ամենուրեք կապված է ծալքավորման գլխավոր ժամանակաշրջանների ու խոշոր գրանիտոիդային բաթոլիտների ներդրման հետ. բազմամետաղային ու ծա-

ըրիր-անդիկային հանքայնացման զարգացումը տեղի ունի ծալքավորման գլխավոր փուլի ավարտից հետո, կապված փոքր ինտրուզիաների ներդրման հետ: Պարզորոշ բացահայտվում են մետաղածնության տարբերությունները գեոսինկլինալային ու գեոանտիկլինալային զոնաների միջև. առաջինների համար առաջատար նշանակություն ունի հազվագյուտմետաղային հանքայնացումը նրա վրա ծարիրա-անդիկային ավելի ուշ հանքայնացման վերադրումով, իսկ գեոանտիկլինալային զոնաների համար ավելի բնորոշ է բազմամետաղային հանքայնացումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԻՆԱՍԻԱԿԱՆ ՄԵՏԱԳԱՍՇՆՈՒԹՅԱՆ ԳՈՏՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Абдуллаев Х. М. Геология шеелитоносных скарнов Средней Азии. Изд. АН Узб. ССР, 1947, с. 399.
- Абдуллаев Х. М. Магматизм и связанные с ним металлогенические процессы в Средней Азии. В сб. «Магматизм и связь с ним полезных ископаемых». Госгеолтехиздат, 1960, с. 11—21.
- Абдуллаев Х. М. Магматизм и оруденение Средней Азии. Изд. АН Узб. ССР, 1960, с. 6—147.
- Бадалов С. Т. Минералогия, геохимия и генетические особенности эндогенных месторождений Алмалыкского рудного р-на. Автореф. докт. дисс. Ташкент, 1962, с. 3—40.
- Баратов Р. Б. Особенности магматизма и металлогении Центр. Таджикистана. «Магм. и связь с ним полезн. ископ. Тр. 2 Всес. совещ.», 1960, с. 272—284.
- Богданов А. А. Тектоническое районирование палеозойд Центрального Казахстана и Тянь-Шаня. Ст. 1—Строение Каледонского срединного массива. «БМОИП, отд. геол.», т. XL, вып. 5, 1965, с. 40—58.
- Богданов А. А. Тектоническое районирование палеозойд Центрального Казахстана и Тянь-Шаня. Ст. 2—Варисийские складчатые системы. «БМОИП, отд. геол.», т. XI, вып. 6, 1965, с. 8—42.
- Вольфсон Ф. И. Основные черты металлогении западного Тянь-Шаня. «Изв. АН СССР, сер. геол.», № 3, 1940, с. 65—83.
- Вольфсон Ф. И., Кушнарев И. П. Некоторые особенности структур мышьяковых месторождений Мосрифской группы Зеравшано-Гиссарской горной системы. «Сб. научных трудов Моск. ин-та цв. мет. и золота», № 19, 1947, с. 20—37.
- Гарьковец В. Г. Структурно-металлогеническое районирование и перспективы некоторых видов эндогенного оруденения Узбекистана. Докл., представленный на соиск. ученой степени канд. геол.-минер. наук по совокупности опублик. работ. Ташкент, 1972, с. 3—74.
- Карпова Е. Д. О рудоносных скарнах Карамазара и Моголтау. «Зап. ВМО», т. 75, № 3, 1946, с. 217—232.
- Карпова Е. Д. Металлогеническое районирование Тянь-Шаня и Памира. «Сов. геол.», № 8, 1959, с. 81—101.
- Карпова Е. Д. Типы металлогенических зон Тянь-Шаня и Памира. В сб. «Законом. размещ. полезн. ископ.», т. 3, 1960, с. 418—440.
- Королев А. В. Структура и металлогения Амалыка. Изд. ФАН Узб. ССР, 1941, с. 280.
- Королев А. В. Условия локализации ртутных месторождений Средней Азии и методы их изучения. «Тр. Среднеаз. индустр. ин-та», вып. 2, 1947, с. 26—64.
- Крейтер В. М., Смирнов В. И. Полиметаллические месторождения Средней Азии. Изд. АН СССР, 1937, с. 392.
- Магакьян И. Г. Металлоносность скарновых зон Зеравшано-Гиссарской горной области. «Изв. АН СССР, сер. геол.», № 2, 1941, с. 63—83.
- Материиков М. П., Павловский А. В. и др. Оловоносность Ср. Азии. «Недра», 1964, с. 84.
- Наследов Б. Н. Металлогения западного Тянь-Шаня и Узбекистана. Госгеолтехиздат, 1961, с. 330.


- Синицын Н. М. Тектонические закономерности размещения ртутного оруденения Тянь-Шаня. В сб. «Закон. размещ. полезн. ископ.», Изд. АН СССР, т. II, 1959, с. 396—410.
- Смирнов В. И. Образование различных типов гидротермальных месторождений Тянь-Шаня в связи с эволюцией магмы. «Сов. геол.», № 1, 1944, с. 46—68.
- Смирнов В. И. Геология ртутных месторождений Средней Азии. Госгеолиздат, 1947, с. 78.
- Тер-Оганесов Я. Г., Лейтес Л. А. «Сульфидные месторождения Зеравшано-Гиссарской горной системы». В сб. «Геология и полезные ископаемые Зеравшано-Гиссарской горной системы». Госгеолтехиздат, 1940, с. 128—154.
- Чупилин И. И. Генетические типы мышьяковых месторождений Средней Азии. В сб. «Научные итоги ТПЭ», 1936, ст. 420—470.
- Шербаков Д. И. Особенности металлогении Средней Азии. ТПЭ в 1934. Изд. АН СССР, 1935, с. 504.

8. Արևմտաեվրոպական մետաղածնային զոտին ընդգրկում է Պիրենեյան թերակղզու (Պորտուգալիայի ու Իսպանիայի), Ֆրանսիայի, Հարավ-արևմտյան Անգլիայի, ԳՅԷ-ի, ԳԴԷ-ի ու Զեխտալովսկիայի զգալի մասերը և արտակարգ ինտենսիվ արտահայտված է Մեսետայի, Կենտրոնական Ֆրանսիայի զանգվածներում, Վոզեզներում ու Շվարցվալդում, Բոհեմյան, ինչպես նաև Արմորիկյան զանգվածներում ու Կոռնուել թերակղզում: Գոտու ընդհանուր ուղղութիւնը լայնակի հյուսիս-արևելյան է, երկարութիւնը հասնում է 2000 կմ, 600—700 կմ միջին լայնության դեպքում: Ծալքավորման, մազմատիղմի ու հանքայնացման ինտենսիվ պրոցեսներն այստեղ տեղի են ունեցել հերցինյան օրոգենիկ դարաշրջանում (նկ. 32): Մեզոկայնոզոյում շատ տեղերում արտահայտվել են ակտիվացման պրոցեսները, որոնք ուղեկցվել են մագմատիզմով ու յուրահատուկ հանքայնացումով:

Ի ս պ ա ն ա կ ա ն Մ է ս է տ ա յ ու մ, որն ընդգրկում է Իսպանիայի կենտրոնական մասը (Կաստիլիան) ու համարյա ողջ Պորտուգալիան, Գ. Թադեու (Thadeu, 1965) հետպերմյան պորֆիրանման գրանիտների հետ կապում է անագ-վոլֆրամային հանքայնացումը (քվարց-վոլֆրամիտ-կասիտերիտային Պանասիլիյրա, Բարալյա և ուրիշ հանքավայրերը). տեղ-տեղ անագ-վոլֆրամային հանքայնացման հետ զուգակցվում են քվարց-ոսկի-արսենոպիրիտային հրակները: Իսպանիայի տարածքում ուրանային հանքայնացումը ներկայացված է U-Cu-Co-Ni Ալբուկերկ, Լա-Վիրխեն և ուրիշ հանքավայրերի զուգակցումով, որոնք հասակով մոտ են անագ-վոլֆրամային հանքավայրերին: Պորտուգալիայում ուրանի հանքավայրերի տիպն ու հասակը այլ է՝ հանքայնացումը ներկայացված է ուրանային խեժ, մարկազիտ, ֆլյուորիտ պարունակող, խալցեդոնանման քվարցի էպիթերմալ երակներով, որոնք երբեմն զուգակցվում են անտիմոնիտի ու բարիտի, բազմամետաղային հանքանյութերի հանքավայրերի հետ. նրանք տեղադրված են պալեոզոյան ապարներում, սակայն նրանց մի մասը հատում է մեզոզոյան ու նույնիսկ երրորդական նստվածքները:

Արմորիկյան զանգվածն ընդգրկում է Ֆրանսիայի հյուսիս-արևմտային ու Կոռնուել թերակղզին Անգլիայում, որոնք բաժանված են միմյանցից Լամանշ նեղուցով: Այստեղ իշխում են լայնակի տարածության սարուկտուրաները, հատված գրանիտոիդներով, որոնց բացարձակ հասակը 320—290 մլն. տ. է. այդ սարուկտուրաների հիմքը ներկայացված է մինչքեմբրյան գնեյսնե-

րով, բյուրեղային թերթաքարերով, ֆիլիտներով, գրանիտոիդներով և ուրիշ ինտրուզիվ ապարներով: Մինչքեմբրյան սերպենտինիտներում հայտնաբերված են քրոմիտի ու բնածին պլատինի մանր երևակումներ, իսկ գնեյսներում և բյուրեղային թերթաքարերում՝ պղնձի ու իլմենիտ-ոուտիլային հանքայնացման երևակումներ: Գրանիտոիդների հետ, որոնց հասակը որոշված է 550—450 մլն. տ. ինտերվալում, կապված են կասիտերիտի ու վոլֆրամիտի երևակումներ ցրոններում ու Sn-W հանքանյութերի Մոնթեիլ արմատական հանքավայրը:



Նկ. 32—Եվրոպայի հերցինիդների ստրուկտուրային սխեմա (ըստ ժ. Օրուենի, 1967). նրբագծերով առանձնացված են միջնադադվածները ու հերցինիդների գետնտիկլինալային բարձրացումները, որոնց հետ տարածականորեն ու գենետիկորեն կապված զարգանում են գրանիտները (սև) ու գրեյզենային հանքայնացման զոնաները: Զոնաներ (թվեր շրջանակներում)՝ 1—Կոնտուլյան, 2—Արմորիկյան, 3—Կենտրոնական-Ֆրանսիական, 4—Հանքայինային, 5—Իբերյան: Նշանակներով նշված է գետնտիկլինալային իջվածքների դարգացման տեղաշարժման ուղղությունը:

Ստորին պալեոզոյի ավազաքարերում, որոնք ծածկում են մինչքեմբրյան հիմքը, վերջերս հայտնաբերված են ոուտիլի, իլմենիտի ու մոնացիտի բրածո ցրոններ, իսկ օրդովիկի ու ստորին դեոնի ապարներում տեղադրված են Նորմանդիայի ու Բրետանի երկաթի նստվածքային հանքավայրերը: Արդյունաբերական տեսակետից ամենահետաքրքիրը Արմորիկյան զանգվածի (Կոնտուլի՝ Անգլիայում, Բրետանի, Նորմանդիա ու Վանդեա՝ Ֆրանսիայում) էնդոգեն հանքայնացումն է, որը կապված է հերցինյան (բացարձակ հասակը 300—290 մլն. տ.) երկփայլարային գրանիտների հետ: Դրանց հետ սերտ

կապված են պեղմատիտները բերիլով, քվարց-մոլիբդենիտային երակիկները, պլեմատոլիտային անագ-վոլֆրամային (բիսմութի, նիկելի ու կոբալտի խառնուրդներով) հանքավայրերը և, հավանաբար նույնպես ուրանային, ոսկի-ծարիրային ու ֆլյուորիտային ցածր ջերմաստիճանային հանքայնացումը:

Հնագույն ժամանակներից մեծ նշանակություն են ունեցել անագ-վոլֆրամային հանքավայրերը, որոնցից մի քանիսը շահագործվում են մինչև այժմ. լայնորեն հայտնի են Կոռնուելի անագի հանքավայրերը, ինչպես նաև Աբարեցը Վանդեայում ու Մոնբելեն՝ Նորմանդիայում: Ներկայումս շահագործվում են ալյումիլա (Սենտ-Ռենան) ու մերձափնյա ծովային (Պիրիակ) ցրոնները, որոնք տալիս են տարեկան 600 տ. կասիտերիտային կոնցենտրատներ: Անցյալում արդյունաբերական մեծ նշանակություն են ունեցել ոսկի-ծարիրային հանքավայրերը, հատկապես Կա-Լյուսետը, որը XX դ. սկզբում տալիս էր ծարիրի համաշխարհային հանույթի $\frac{1}{4}$ մասը և ոսկու նշանակալից քանակություններ. այժմ որոշ գրանիտային զանգվածների շուրջը ալյումիլայում հաստատված են ոսկու պսակներ:

Արմորիկյան զանգվածի ֆրանսիական մասում Բրետան ու Վանդեա ուրանային հանքավայրերը հայտնաբերված են վերջին քսան տարվա (սկսած 1951 թ.) ընթացքում իսկ Կոռնուելում հայտնի են եղել վաղուց, քանի որ ուրանային հանքայնացումը այնտեղ տարածականորեն համատեղված է անագ-վոլֆրամայինի ու պղնձայինի հետ:

Ամենահետաքրքիր Վանդեայի հանքավայրերն են, որոնք տեղադրված են Պարֆենայ-Մորտան գրանիտային զանգվածի եզրում և ներկայացնում են Լիմուզին շրջանի (Ֆրանսիայի կենտրոնական զանգված) ուրանաբեր գրանիտների հյուսիսարևմտյան շարունակությունը:

Շորիսի և Գյուգեսի (Chauris, Guigues, 1969) տվյալներով, հանքայնացումը ներկայացված է ուրանային խեժով կարմրավուն խալցեդոնի, ապելի հազվադեպ ֆլյուորիտի զուգակցությամբ. հանքանյութերում փոքր քանակություններով առկա են պիրիտը, մարկազիտը, գալենիտը, սֆալերիտը, Pb-Bi-Ag ապելի ստույգ շորոշված սուլֆիդը: Հանքավայրերը երակային ու շտոկվերկային են, տեղադրված են հերցինյան գրանիտների զանգվածների անմիջական էնդո- երբեմն էլ էկզոկոնտակտում և ըստ նկարագրությունների շատ նման են Կենտրոնական-Ֆրանսիական զանգվածի նույնատիպ հանքավայրերին (Բուա-Նուար և այլն), որը մեզ հաջողվել է դիտել 1971 թ.:

Արմորիկյան զանգվածի հարավային ու արևելյան եզրում հայտնի են կապար-ցինկային շերտաձև խոշոր հանքավայրեր՝ (Մել և այլն) տեղադրված մեզոզոյան ծածկոցի ապարներում:

Կենտրոնական Ֆրանսիայի զանգվածը նկարագրվում է մանրամասն (ոչ միայն գրականությամբ, այլ մի շարք հանքավայրեր մեր անձնական դիտումների տվյալներով):

Այդ զանգվածի երկրաբանական կառուցվածքն ու մետաղածուծությունը շատ գծերով կրկնում են այն, ինչ դիտվում է Արմորիկյան զանգվածում: Մինչքեմբրյան հիմքը հատված է ուշհերցինյան կալիումային գրանիտների զանգվածներով և մի փոքր ավելի երիտասարդ գրանիտ-պորֆիրներով: Վերջինները Գրուրի շրջանում (զանգվածի հյուսիսարևելյան մասը) հատում են պերմի հասակի հաստվածքն և հավանաբար ներդրվել են արդեն տրիասում: Գրանիտոիդների հետ սերտորեն կապված է անագ-վոլֆրամային հանքայնա-

ցումը, ներկայացված քվարց-վոլֆրամիտային երակներով ու շտովկերկներով և կասիտերիտ, վոլֆրամիտ, լիթիումային միներալներ, երբեմն էլ բերիլ ու տանտալա-կոլումբիտ պարունակող գրեյզենացված գրանիտներով:

Այստեղ ամենահայտնի էջասյեր ու Մոնտեբրա հանքավայրերը տեղադրված են փոքր գրանիտային շտովկերի զանգվածներում ու նրանց էկզոկոնտակտային զոնաներում և շատ նման են Հանքային լեռների Ալտենբերգ ու Յինվալդ հանքավայրերին: Էջասյերի ու Մոնտեբրայի գրանիտների բացարձակ հասակն է 293—305 մլն. տ.:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ֆորե շրջանի ուրանային հանքայնացումը (Բուա-Նուար հանքը և ուրիշներ), որը Ֆրանսիայի ու Եվրոպայի ուրանաբեր գլխավոր շրջաններից մեկն է:

Մինչքեմբրի ու ստորին պալեոզոյի գնեյաներում ու բյուրեղային թերթաբարերում տեղադրված են պորֆիրանման կալիումային գրանիտների զանգվածներ, որոնց հասակը 250 մլն. տ. է. այստեղ զարգացած են նաև համեմատաբար ավելի երիտասարդ միկրոգրանիտների շտովկերը:

Հարուստ, իսկ տեղ-տեղ հարստագույն (Ս 1—2 մինչև 6% և ավելի) երակներն ու շտովկերկային հանքանյութերը հարում են պորֆիրանման գրանիտների բեկորատման զոնաներին: Ուրանային խեժը սերտորեն զուգակցվում է կարմրագորշ (հեմատիտով ներծծված) խալցեդոնանման քվարցի, երբեմն օպալի ու ֆլյուորիտի հետ. ուրիշ հանքային միներալներից փոքր քանակություներով ներկա են պիրիտը, մարկազիտը, գալենիտը, սֆալերիտը, խալկոպիրիտը: Հանքային տիպն էպիթերմալ է, որի բացարձակ հասակը 260 ± 5 մլն. տ., այսինքն՝ ուշհերցինյան է. ալպիական օրոգենեզի դարաշրջանում ակտիվացման պրոցեսների կապակցությամբ ուրանի մի մասը վերանստեցվել է ավելի ուշ երակներում, որոնք ունեն 70 ± 5 մլն. տ. բացարձակ հասակ:

Ուրանային խեժի ինտենսիվ օքսիդացման հետևանքով հանքավայրի վերին հորիզոններում զարգացած են տորբենիտը, աուտունիտը և ուրանի ուրիշ սուպերգեն միներալները:

Ֆորե շրջանից դեպի հյուսիս՝ Մորվանում հայտնի են ուրանային խեժի նման հանքավայրեր, որոնք ավարտում են հետևյալ հերթականությամբ զարգացած՝ հիպոթերմալ անագ-վոլֆրամ-արսենոպիրիտ-մոլիբդենիտային, միջին ջերմաստիճանային քվարց-ֆլյուորիտ-բարիտային, կարմիր խալցեդոնով և սև ֆլյուորիտով ուրանաբեր երակային ու շտովկերկային հանքավայրերի շարքը:

Ուշ-Մասիակ շրջանում հայտնի են ստիբնիտի ու բերտչերիտի նշանավոր երակային հանքավայրեր, տեղադրված գրանիտոիդային զանգվածների հեռավոր էկզոկոնտակտներում: Դիտվում է հանքայնացման զոնալականություն՝ Au-Sb ու բազմամետաղային հանքանյութեր (հանքաղաշտերի եղրային մասերում) և անագ-արսենոպիրիտային հանքայնացում հանքաղաշտերի կենտրոնական շրջաններում:

Մարիբային, բազմամետաղային, ֆլյուորիտային, հավանաբար նաև ուրանային հանքավայրերի մի մասը տեղադրված է բայոսի ապարներում, որի կապակցությամբ էլ հանքայնացման այդ մասի հասակը վերագրվում է վերին յուրային-կավճին (°):

Վոգեզները ու Շվարցվալդը կազմում են վերին Հոենոսի զանգվածը: Հոենոս գետից արևմուտք Ֆրանսիայում տեղադրված են Վոգեզ-

ները, իսկ դեպի արևելք ԳՅՀ-ում Շվարցվալդը: Իր երկրաբանական կառուցվածքով ու մետաղածնութայն բնույթով այս մարզը մոտ է վերը նկարագրված զանգվածներին: Մինչքեմբրյան—ստորին պալեոզոյան մարզի հիմքը հատող հերցինյան գրանիտների հետ Վոզեզներում կապված են մագնետիտային ու շեկիտային սկանային հանքանյութերի (Ֆրամոն-Գրանֆոնտեն և այլն), բազմամետաղային, ֆլյուորիտային, քվարց-բարիտային երակային հանքավայրեր: քվարց-ֆլյուորիտ-բարիտային երակների հետ սերտորեն զուգակցվում է ուրանային խեղճ: Շվարցվալդում հերցինյան գրանիտների հետ կապված են հինգտարրանոց՝ Co-Ni-Bi-Ag-U ֆորմացիայի հանքավայրերը (Վիտեխեն և ուրիշներ), որոնք բացարձակ հասակը որոշված է 235 ± 6 մլն. տ., այսինքն, մոտավորապես, պերմի ու տրիասի սահմանը: նրանք տեղադրված են հին ապարներում և տրիասի նստվածքներում հայտնի շին: Այստեղ կան նաև բազմամետաղային հանքավայրեր ֆլյուորիտով և բարիտով, որոնք շատ ավելի երիտասարդ են ու տեղադրված են մասամբ տրիասի, մասամբ էլ ավելի երիտասարդ մինչև օլիգոցենյան նստվածքները ներառյալ: Ամենաերիտասարդ բարիտային երակների հետ զուգակցվում են անտիմոնիտի ու պիրոլյուզիտ-պսիլոմելանային հանքանյութերի երևակումներ (էյ-զենբախ շրջանը):

Ա. Գ. Շչեգովը (1971) այդ հետհերցինյան հանքանյւացումը կապում է ավտոնոմ ակտիվացման պրոցեսների հետ:

Բ ո հ ե մ յ ա ն զ ա ն գ վ ա ծ ր տեղադրված է Սաբսոնիայի ու Չեխիայի տարածքում, մասամբ էլ Հարավարևմտյան Լեհաստանում:

Ամբողջ Բոհեմյան զանգվածի սահմաններում լայն զարգացած են մինչքեմբրյան հասակի ու քեմբրի փալլարային թերթաբարերը և ֆիլիտները, տեղ-տեղ գնեյանները, ծածկված սիլուրի ու դեոնի կրաքարերով, դիաբազնեյտով և նրանց տուֆերով, ինչպես նաև ավելի երիտասարդ կարբոնի ու պերմի նստվածքներով:

Ստորին կարբոնից սկսվում է հերցինյան ծալքավորումը, որը ուղեկցվում է գրանիտոիդների ներդրումով. վերին կարբոնում-պերմում ներդրվում են ավելի երիտասարդ գրանիտներ, որոնք կազմում են էյբենշտոկ-Կարլսբադյան և ուրիշ զանգվածները. այդ ժամանակ Հանքային լեռների արևելյան մասում առաջանում են թթու էֆուզիվ «տեպլիցյան պորֆիրները» (հասակը P է) ու նրանց հատող գրանոգիորիտ-պորֆիրների դաշկանները:

Ամենաերիտասարդ ու թթու գրանիտների ինտրուզիաները փոքր շտոկների ու խողովականման մարմինների ձևով ներթափանցում են էյբենշտոկ-Կարլսբադյան զանգվածի ու տեպլիցյան պորֆիրների մեջ. նրանց հասակն է՝ վերին պերմ-տրիաս (?):

Այդ գրանիտների հետ, որոնք հարուստ են ցնդող բազալիտներով ու մետաղներով (B, F, Li, Sn, W, Bi, As և այլն) ու կազմում են տուրմալինային, տոպազային, անագաբեր տարբերակներ, կապված է, հավանաբար, Հանքային լեռների ամբողջ ուշհերցինյան մետաղածնությունը:

Երրորդական ժամանակաշրջանում, Հանքային լեռների ռեզիոնալ վարնետվածք-բեկվածքի երկայնքով տեղի ունեն ալկալային բազալտոիդների էքստրուզիաներ ու արտավիժումներ, որոնք ուղեկցվում են յուրահատուկ հանքայնացումով:

Բոհեմյան զանգվածի ուշհերցինյան մետաղային հանքավայրերի շարքում կարելի է անջատել հետևյալ գլխավոր տիպերը.

1. Երկաթային մագնետիտային սկանդյան հանքանյութեր կասիտերիտի, արսենոպիրիտի և ուրիշ սուլֆիդների խառնուրդներով: Այդ տիպին են պատկանում Շվարցենբերգ հանքավայրը ԳԳՀ-ում, Կուպֆերբերգն ու Պրեսնիցը Չեխոսլովակիայում. այդ տիպի արդյունաբերական նշանակությունը մեծ է:

2. Անագ-վոլֆրամային գրեյզենային բարձր շեքմաստիճանային հանքավայրեր (բերիլի, լիթիումային միներալների, մոլիբդենի, բիսմութի խառնուրդով). այդ տիպին են պատկանում մի շարք խոշոր հանքավայրեր՝ Ալտենբերգ, Յինվալդ, Գեյեր, Տանենբերգ, Չորլաու և ուրիշներ Սաքսոնիայում (ԳԳՀ), Յինովեց, Կրուպկա՝ Չեխոսլովակիայում և ուրիշներ:

3. Ուրանի տեսակետից մեծ հետաքրքրություն ներկայացնող հինգ-տարրանոց ֆորմացիայի (Co-Ni-Bi-Ag-U) միջին շեքմաստիճանային հանքավայրեր (Աննաբերգ, Շենեբերգ, Իոգանգեորգենշտադտ և ուրիշներ Սաքսոնիայում և Յախիմովը (Իոախիմստալ) Չեխոսլովակիայում):

4. Բազմամետաղային Pb-Zn-Ag հանքավայրեր, երբեմն անագի կամ գերմանիումի, ոսկու, ուրանի և ուրիշ մետաղների խառնուրդներով. այդ տիպի հանքադաշտերի դասական օրինակներ են Ֆրեյբերգը՝ ԳԳՀ-ում ու Պրշիբրամը՝ Չեխոսլովակիայում:

Ֆրեյբերգի հանքադաշտի համար հաստատվում է դայկային ապարների ու հանքանյութերի տարբեր ֆորմացիաների ձևավորման հետևյալ հերթականությունը՝

- 1) վերին կարբոնի հասակի կերսանտիտների ու միներալների դայկաներ.
- 2) քվարց-կասիտերիտային երակներ (թույլ զարգացած). 3) ազնիվ քվարցային ֆորմացիայի երակներ գալենիտով, մինչև 2% Ag-ի պարունակությամբ և մեծ քանակությամբ արծաթի սուլֆատներ, որոնք պարունակում են մինչև 1 գ/տ Au.
- 4) ստորին պերմի հասակի քվարց-պորֆիրների դայկաներ.
- 5) պիրիտ-գալենիտային ֆորմացիայի երակներ արծաթաբեր գալենիտով, անագաբեր սֆալերիտով, արսենոպիրիտով.
- 6) ազնիվ կապարային ֆորմացիայի երակներ արծաթաբեր գալենիտով ու սֆալերիտով, արծաթային կարմիր հանքանյութերով ու գերմանիումի միներալ արգիրոգիտով (Ag_8GeS_6).
- 7) ֆլյուորիտ-բարիտ-գալենիտային ֆորմացիայի երակներ, որոնցում գալենիտը աղքատ է արծաթից: Ձևավորման այդ հերթականությունը հաստատված է հանքային ֆորմացիաների փոխադարձ հատումներով, իսկ ողջ հանքայնացման հասակը սահմանափակվում է C_3-P ինտերվալով: Հարկ է նշել, որ ամբողջ հանքային ռեզիդենների համար հանքաբեր զրանիտոիդային զանգվածների շուրջը հաստատվում է հանքանյութերի տեղադրման լավ արտահայտված հորիզոնական զոնալականություն՝ Sn-W (զանգվածների մեջ), նրանցից ավելի հեռու՝ Ni-Co-Bi-Ag-U ֆորմացիան, իսկ ամենահեռուն՝ բազմամետաղայինը:

Հանքային լեռների ողջ հանքայնացման միևնույն հասակի վերաբերյալ վերջերս լուրջ կասկածներ են հայտնվել ու մի շարք հեղինակներ (Бауман, Ванечек, Мрня և ուրիշներ) հանքավայրերի մի մասը համարում են հետհերցինյան:

Ըստ Լ. Բաումանի, օրինակ, երկրաբանական դիտումները (հանքային երակների մի մասի տեղադրումը տուրոնյան նստվածքներում, նրանց հարու-

մը երիտասարդ խախտումներին), ինչպես նաև հանքանյութերի բացարձակ հասակի որոշումները, հնարավորություն են տալիս առանձնացնել հանքավայրերի երկու խումբ՝ հերցինյան ու հետհերցինյան (տրիաս-երրորդական):

Հերցինյան խմբին նա վերագրում է անագ-վոլֆրամ-մոլիբդենային Ալ-տենբերգ, Յինվալդ, Գեյեր և ուրիշ հանքավայրեր. ոսկի-քվարցային՝ Գուդկրոնախը՝ Թյուրինգիայում. բազմամետաղային՝ Ֆրեյբերգն ու Աննաբերգը. ուրան-քվարց-կալցիտ-հեմատիտային հանքայնացումը Յախիմովում, Շենեբերգում, Աննաբերգում և այլն, արծաթ-ծարիրային հանքայնացումը՝ Ֆրեյբերգում և Հարցում:

Հետհերցինյան խմբին են վերագրվում Co-Ni-Bi-Ag-U-ին հանքայնացումը Աննաբերգ, Շենեբերգ, Իոզանգեորգենշտագտ հանքադաշտերում, հեմատիտ-բարիտային երակները Ֆլյուորիտով ու մանգանի օքսիդներով Շվարցենբերգում, քվարց-հեմատիտ-մանգանային հանքանյութերի երևակումները:

Հաճախ երկու խմբերի հանքային մարմինները տարածականորեն համատեղված են, որը դժվարացնում է նրանց անջատումը: Ֆ. Մոնյան (Мрня, 1963) բերում է տվյալներ հինգտարրանոց ֆորմացիայի վազմեզոզյան հասակի վերաբերյալ, կապելով այն հետպերմյան գրանիտների հետ, իսկ Մ. Վանչեկը, հիմնվելով կապարի իզոտոպային կազմի որոշումների վրա Պրշիբրամի բազմամետաղային հանքադաշտը կապում է տրիասում և յուրայում տեղի ունեցած ակտիվացման պրոցեսների հետ: Բոհեմյան զանգվածից հյուսիս-արևմուտք, Հարցում (ԳԳՀ) դեռնի նստվածքային հաստվածքում, որը հատված է հերցինյան հասակի քվարց-պորֆիրների, ֆելզիտ-պորֆիրների ու դիաբազների դակլաներով, տեղադրված են ֆլյուորիտի երակային խոշոր հանքավայրեր՝ Ֆլյուշախտ, Հերցոգսշախտ և այլն. այդ հանքավայրերի հասակն իրականում կարող է լինել հերցինյանից ավելի երիտասարդ: Հարցի գլխավոր մետաղային հանքավայրը Մանսֆելդի հանքադաշտն է՝ պղնձային հանքանյութերով կենտրոնում ու կապար-ցինկային հանքայնացմամբ թևերում, որը հարում է Յեխշտեյնի հիմքի (P₂ ստորին մասը) մերգելային բիտումային թերթաքարերին: Պղնձի, կապարի ու ցինկի (Ag, Co, Ni, V, Mo, Re, Pt, Pd խառնուրդով) հանքանյութերի նստվածքային սինգենետիկ ծագումն այստեղ կասկածներ չի առաջացնում: Շատ տեղերում հանքաբեր թերթաքարերը հատված են ձեղքերով, լցված կոբալտի ու նիկելի արսենիդների, մոլիբդենիտի ու բնածին բիսմութի, ուրանային խեժի երակիկներով, որոնք համարվում են Հանքային լեռների հինգտարրանոց հիդրոթերմալ հետհերցինյան ֆորմացիայի նմանակը:

Լեհաստանի հարավարևմտյան հատվածը երկրաբանական տեսակետից ներկայացնում է Բոհեմյան զանգվածի մի մասը. այստեղ հերցինյան (C₃) գրանիտոիդների հետ կապված են պեղմատիտներ (Nb-Ta, U, Th, TR, Zr հանքայնացումով), գրեյզենային Sn-W-Mo հանքանյութեր, պղինձ-բազմամետաղային ու Ni-Co-Bi-Ag-U հանքավայրեր:

Ամենաերիտասարդ պերմի պորֆիրների, մելաֆիրների, դիաբազների, լամպրոֆիրների հետ զուգակցվում են բարիտի, ֆլյուորիտի, բազմամետաղային, պղնձային (Ni ու Co խառնուրդով), մկնդեղային, սիդերիտային հանքանյութերի հանքավայրերը:

Հանքանյութերի ամենախոշոր կուտակումները ներկայացված են պղնձի հանքավայրերով (Լյուբին և ուրիշներ Յեխշտեյնի հիմքի թերթաքարերում ու

մերգեղներում, որոնք ծագմամբ նման են Մանսֆելդին) ու կապար-ցինկային հանքանյութերի արդյունաբերական կուտակումներով Սիլեզիա-կրակովի շրջանի միջին տրիասի դոլոմիտային ապարներում (Բիտոմ, Բլայշարեյ, Օլկուշ, Խրժանով և այլն):

Կապար-ցինկային այդ հանքավայրերի ծագման վերաբերյալ գոյություն ունի մի նոր տեսակետ, որը սակայն դեռ հիմնավորված չէ:

Այսպես, Գալկևիչը (Т. Galkiewicz, 1957, 1960) ընդգծում է հանքանյութային կենտրոնացումը տրիասի հիդրոթերմալ դոլոմիտացված կարբոնատային հորիզոններում, և հանքանյութային բացակայությունը գիպսի շերտերով հերթափոխվող նստվածքային դոլոմիտներում: Շերտային հանքանյութային հետ մեկտեղ նշվում է երակային հանքամաքիմիաների առկայությունը, որոնք հատում են յուրայի ապարները և հսկվում են հանքաբեր ստրուկտուրաներով: Այդ փաստերի հիման վրա Գալկևիչը Սիլեզիա-կրակովի հանքադաշտը դասում է տելիթերմալ տիպին և ենթադրաբար հանքանյութային կապում է քրիստալի կամ ալպիական մագմատիզմի հետ:

Բոհեմիայի Հյուսիսարևելյան սահմանի երկայնքով Չելսոսլովակիայի սահմաններում առանձնացվում է Սրեդնեգորսկի երիտասարդ հրաբխածին մարզը (Кореску, 1968), ալկալային բազալտային հրաբխականությունը ու խորքային բեկվածքին հարող էսեկսիտների ինտրուզիաներով:

Երրորդական դարաշրջանում բեկվածքի երկայնքով բարձրանում էին ալկալային ֆլյուիդներ, որոնք առաջացրել են ֆենիտացում, նեֆելինային սիենիտների ձևավորում $Zr-Nb-Ta$ հանքանյութային, ալկալային պիրոքսենիտների, հոունբլենդիտների ու կարբոնատիտների առաջացում:

էսեկսիտների հետ կապված է բազամետաղային հանքանյութային (Pb-Zn-Ag հանքանյութերը, որոնք անցյալում այստեղ շահագործվել են):

Բազալտային ապարների, ինչպես նաև սերպենտինացված պերիդոտիտների դիստրեմների հետ կապված են Բոհեմիայի վաղուց հայտնի պիրոպենները (նարնչագույն-կարմիր, մուգ-կարմիր, ալ-կարմիր, վերջինները ամենաբարձր՝ 7% Cr_2O_3 պարունակությամբ): Բազալտային բրեկչիաներում պիրոպի հետ միասին գտնվում են ցիրկոն, կորունդ, շպիննել, տիտանամազնետիտ, քրոմ-դիոպսիդ, ալմանդին, ապատիտ, սֆեն, մոնացիտ, օլիվին, մուսսանիտ, հավանաբար նաև ալմաստ (վերջինը հայտնաբերված է կոլլուվիայում ու ալյուվիայում): Հայտնի են մելիլիտային բազալտների ու քրիստալիտանման ապարների զայկաներ, որոնց հետ կապված են վերջերս հայտնաբերված ալմաստի արմատական ոչ մեծ երևակումներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՎՄՏԱՆՎՐՈՊԱԿԱՆ ԳՈՏՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Лаффи П., Перманжа Ф., Рутье П. Металлогеническое картирование, металлотекты и региональная геохимия. В сб. «Проблемы геохимии», «Наука», 1965, с. 669—672.
- Лаффи П. Металлогения Франции. «Вестн. МГУ, геология», № 1, 1969, с. 26—41.
- Мрня Ф. К вопросу генезиса рудных жил в Яхимове. В кн. «Contributions of the symposium on the problems of postmagmatic ore deposition», v. 1, Prague 1963, p. 446—449.
- Павловский Е. В. Стадии геосинклинального развития «герцинских массивов» Франции и Ю. Германии. «Изв. АН СССР, сер. геол.», № 11, 1960, с. 20—46.
- Цветная металлургия центральной и восточной Германии. Металлургиздат, 1947, с. 3—117.

- Штемпрок М. Оловянно-вольфрамовое и литиевое месторождения Циновец. В кн. «Некоторые рудные месторождения Чешского массива». Прага, 1963, с. 26—43.
- Шеглов А. Д. Металлогения срединных массивов. «Недра», 1971, с. 148.
- Assmann P. Zur Frage der Entstehung der oberschleisisch-polnischen Blei—Zinkerzlagernstätten. „Zeit. d. Dt. Geol. Ges.“. Bd. 98 (1946), Berlin, 1948, s. 30—69.
- Aubert Guy. Les couples granitiques de Montebbras et d'Echassiers (massif central français) et la genèse de leurs mineralisations en etain, lithium, tungstène et beryllium. Mém. du BRGM, № 46, 1969, p. 349.
- Baumann L. Zur Frage der varistischen und postvaristischen Mineralisation im sächsischen Erzgebirg. Freib. Forschungsh. (C), № 209, 1967, s. 15—38.
- Bauman L., Rösler H. I. Zur genetischen Einstufung varistischer und postvaristischer mineralisationen in Mitteleuropa. Bergakad. Dtsch., № 11, 1967, s. 660—664.
- Chauris L. et Guigues J. Gîtes minéraux de la France. v. 1, Massif Armoricaïn. Mém. du BRGM, № 74, 1969, p. 3—94.
- Galkiewicz T. Geneza slasko-krakowskich zloz cynkoolowowych w ujeciu K. Keila. Przegląd geologiczny, № 7, (52) 1957, c. 314—319.
- Galkiewicz T. Schemat metalogenii Polski, „Rudy i Metal Niezelazne“, № 12, 1960, p. 494—501.
- Geffroy J. et Sarcia J. A. La notion de „gîte épithermal uranifère et les problèmes qu'elle pose, Bull. Soc. Géol. Fr. t. VIII, № 3, 1958, p. 173—190.
- Kopecky L. The Ceske Stredohori Mountains. Vestnik Ustredniho ustavu geologického, XLIII, № 4, 1968, p. 313—320.
- Laffite P. La métallogénie de la France. Bull. Soc. Géol. Fr. ser. 7, t. VIII, 1966, p. 53—72.
- Les Minerals uraniferés français et leurs gisements. Publié sous la direction de M. Roubault, t. I, 1962, p. 322.
- Osika R. Programme of complex regional geologic research and reconnaissance of geology of Poland. Warszawa, 1969, p. 1—21.
- Périchaud J. J. Les gisements métalliques du district à antimoine de Brioude-Massiac. Bull. du BRGM, sect. 11, № 2, 1971, p. 1—55.
- Rösler H. I., Baumann L., Jung W. Postmagmatic mineral deposits of the Northern Edge of the Bohemian Massif (Erzgebirge-Harz). Int. Geol. Congr. XXIII Secc. Prague 1968, Guide to excurs. 22 AC (c), c. 5—57.
- Sarcia J. A. The Uraniferous province of Northern Limousin and its three principal deposits. II Int. Conf. Peaceful uses Atomic energy. Proc. vol. 2, 1958, p. 578—591.
- Satran V. and other. Problems of metallogeny of the Bohemian Massif. Sbor. Geol. věd. LG 8, Praha, 1966, p. 7—112.
- Thadeu D. Carte minière du Portugal (notica explicative), Lisboa, 1965, p. 46.
- Tollon F. Le district aurifère de Salsigne-Aude. 1970, p. 13—171.
- Wimmenauer W. Métallogénie de la Foret Noire. Chronique des mines, recherche minière, № 313, 1962, p. 303—308.

9. Նորվեգա-Ապալաչյան մետաղածնային գոտին ընդգրկում է Նորվեգիայի (բացի նրա եզրային հարավային մասից), Շոտլանդիայի ու Անգլիայի և էլբեի հյուսիսային մասերի տարածքները, ձգվելով դեպի Նյուֆաունդլենդ, հարավարևելյան Կանադա ու ԱՄՆ-ի արևելյան նահանգները (Ապալաչյան լեռները ու Ֆլորիդա): Գոտու ընդհանուր տարածությունը 10 հազար կմ է, 200—400 կմ միջին լայնության դեպքում:

Ծալքավորման, մագմատիզմի ու հանքայնացման ինտենսիվ պրոցեսները գոտու հյուսիսարևելյան մասում արտահայտվել են կալեդոնյան, իսկ հարավարևմտյան մասում՝ հերցինյան օրոգենիկ դարաշրջաններում:

Կալեդոնյան ծալքավոր ստրուկտուրան ձգվում է Նորվեգիական ծովի երկայնքով, եզրապատելով արևմուտքից ու հյուսիս-արևմուտքից Ֆենո-Սկանդինավյան միջբեմբրյան զանգվածը: Կալեդոնյան ցիկլի գաբրոնների, պիրոքսենիտ-պերիդոտիտների ու գրանիտոդիորների հետ կապված են բազմաթիվ և հաճախ բավականին խոշոր հանքավայրեր: Ուլտրահիմքային ապարներում տեղադրված են քրոմիտի բներ, շլիբներ, ցանավոր հանքանյութերի տեղամասեր (Հարավային Նորվեգիայում), իսկ գաբրոնների հետ սերտորեն կապված են լիկվացիոն պղինձ-նիկելային սովորաբար ոչ մեծ հանքավայրեր:

Գաբրոնների հետ, ըստ երևույթին, կապված են նաև բնածին արծաթի նշանավոր հանքավայրերը կալցիտային երակներում (Կոնգսբերգ) ու կոբալտի արսենիդների հանքավայրերը (Սկոտեբուդ ու Մնարում): Կալեդոնյան գրանիտոդիորների հետ սերտորեն զուգակցվում են պղինձ-մոլիբդենային հանքավայրեր հանքանյութերում Au, Ag, Bi խառնուրդով (Օմդալ և այլն) ու քվարց-մոլիբդենիտային երակային հանքավայրեր (Կնաբեն): Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Նորվեգիայի կոլչեդանային հանքավայրերը, որոնք տեղադրված են ստորին պալեոզոյի թերթաբարերում ու մետամորֆացված էֆուզիվներում. Շ. Շնեյդերսենը (Шнейдерсен, 1958) նկարագրում է նրանց մետամորֆոզեն հանքավայրերի խմբում ու առանձնացնում է մի շարք տիպեր՝

1. Լեքսդալ տիպ. ներկայացված է գլխավորապես ծծմբային կոլչեդանով, երբեմն պիրոտինով (Ստորդե հանքը) կանաչքարային ապարների վերամշակված օրդովիկի դիաբազներում. հանքավայրերը ձևավորվել են ստորջրյա պայմաններում և վերագրվում են հավանաբար էքսհալյացիոն (ավելի ճիշտ էքսհալյացիոն-նստվածքային) առաջացումներին:

2. Ռյորոս տիպը, որը ամենաարդյունավետն է և ներկայացված է պղինձ-ծծմբակոլչեդանային կամ պղինձ-ցինկային հանքանյութերով Cu-ի (1—4%) ու Zn-ի (1—4%) բարձր պարունակություններով: Հանքանյութերի կազմում գլխավոր դերը կատարում է պիրիտը, բայց արդեն խալկոպիրիտի, սֆալերիտի, գալենիտի, երբեմն պիրոտինի զգալի մասնակցությամբ: Հանքային մարմինները տեղադրված են փայլարային թերթաբարերում ու կանաչքարային քլորիտացված ապարներում, երկարաձգվում են ծալքերի առանցքների ուղղությամբ և շերտաձև են, որոնց երկարությունը մինչև 2500 մ է, լայնությունը՝ 50—100 մ, իսկ հզորությունը՝ 1—4 մ. երկրաբանների մի մասը այդ հանքավայրերը համարում է հիդրոթերմալ, կապելով գաբրոնների ինտրուզիաների հետ:

Սակայն, ավելի շատ հիմքեր կան նշված հանքավայրերը դիտել որպես կոլչեդանային, սերտորեն կապված կալեդոնյան հրաբխականության հետ. այդ տիպին են պատկանում հայտնի Ռյորոս, Սուլիթելմա, Գրոնդ, Լյոկեն և ուրիշ հանքավայրերը, որոնք կազմում են Նորվեգիայի պղինձի արդյունաբերության հիմքը և նկարագրված են ձեռնարկներում: Նրանք շատ նման են հյուսիսային Ապալաչների Նյուֆաունդլենդի ու Քվեբեկի (Կանադա) կոլչեդանային հանքավայրերին:

3. Ռյոդհամեր տիպը, պիրիտի ու խալկոպիրիտի (բոռնիտի խառնուրդով) հիդրոթերմալ ոչ մեծ հանքավայրերով գրանիտների ու տրոնդեմիտների մերձկոնտակտային գոտաներում. չեն շահագործվում:

4. Ֆլյուտում տրպը, ներկայացված ծծմբակոլչեդանային (սֆալերիտի խառնուրդով) հիդրոթերմալ ոչ մեծ հանքավայրերով և տեղադրված թերթաբարերի մեջ անկախ ինտրուզիաներից. շեն շահագործվում:

Հետաքրքիր է նշել Հարավային Նորվեգիայում ուլտրահիմքային-ալկալային ապարների կոմպլեքսի առկայությունը, որոնց հետ սերտորեն կապված են կարբոնատիտային հանքավայրերը. նրանց մի մասը (Ֆյոն և այլն) հավանաբար կալեդոնյան հասակի են:

Նորվեգիայի կալեդոնյան ստրուկտուրաները ձգվում են դեպի հարավ-արևմուտք՝ Շոտլանդիա, Հյուսիսային ու Կենտրոնական Անգլիա ու էյրե, որտեղ նույնպես հայտնի են կալեդոնյան հասակի բազիտներ և գրանիտոդային ինտրուզիաներ: Զարմանալի է, սակայն, թե որքան աղքատ են այդ տարածքները մետաղային հանքավայրերով: Շոտլանդիայի լեռներում հայտնի են վաղուց լքված բազմամետաղային հանքանյութերի փոքր հանքեր. կան տեղեկություններ վաղ անցյալում ոսկու և արծաթի շահագործման վերաբերյալ: էյրեում հայտնի են ու այժմ շահագործվում են ծծմբակոլչեդանային հանքավայրեր, որոնցից մեկը՝ Ավոկան բավականին խոշոր է:

Ասլանդայան օվկիանոսի արևմտյան ափերին Նորվեգիայի ու Շոտլանդիայի կալեդոնյան ստրուկտուրաները լավ են պահպանվում Կանադայի ու ԱՄՆ-ի արևելյան նահանգների Ապալաչյան ռեգիոնում: Ընդարձակ Ապալաչյան լեռնային սիստեմը ձգվում է հարավ-արևմուտքից (Ալաբամա նահանգ) մինչև Հյուսիս-արևելք (Նյուֆաունդլենդ) 3000 կմ-ից ավելի տարածությամբ:

Կանադայի սահմաններում նրա մեջ են մտնում երեք մարզեր՝ Նոր Շոտլանդիան, Նոր Բրունսվիկը ու արքայազն էդվարդի կղզին, ինչպես նաև Քվեբեկ մարզի մի մասը, որը տեղադրված է Լոգան վարնետվածքից դեպի հարավ ու արևելք:

Այս շրջանը կազմված է գլխավորապես պալեոզոյի, մասամբ ավելի հին ու ավելի երիտասարդ ապարներից, որոնք ուժեղ ծալքավորված ու ջարդված են վարնետվածքներով: Ապալաչյան սիստեմի կանադական մասում ծալքավորման ու ինտրուզիաների ներդրման գլխավոր դարաշրջանը դեռնյանն է (կալեդոնյանը), այն դեպքում, երբ ԱՄՆ-ի արևելյան նահանգների տարածքում, Ապալաչյան սիստեմի հարավարևմտյան մասում, ինտենսիվորեն արտահայտվել են կարբոնի-պերմի (հերցինյան) ծալքավորումն ու մագմատիզմը:

Ըստ Ալկոկի (F. Alcock, 1948) հնագույն արխեյան հաստվածքներն աններդաշնակ ծածկված են պրոտերոզոյան հրաբխածին հաստվածքով ու ստորին քեմբրի ֆաունայով բնութագրված նստվածքներով: Պրոտերոզոյի հաստվածքին են պատկանում նաև Մեզումա ոսկեբեր թերթաքարերն ու Նոր Շոտլանդիայի քվարցիտները: Լայնորեն զարգացած են օրդովիկի նստվածքները, տեղադրված ամենահին առաջացումների վրա. օրդովիկի վերջում Նոր Շոտլանդիայում տեղի է ունեցել ծալքավորում ու ինտրուզիաների ներդրում, իսկ վերին օրդովիկի վերջում ինտենսիվ արտահայտվել է կալեդոնյան ծալքավորման տակոնյան փուլը ու ներդրվել են «սերպենտինային սերիայի» բազիտները-հիպիբեազիտները:

Ստորին դեռնը ներկայացված է նստվածքա-հրաբխածին հաստվածքով, որը միջին դեռնում ծալքավորվել է ու ներդրվել է գրանիտոիդներով (վերջին-

ների գլաքարերը հանդիպում են վերին դեռնի կոնգլոմերատներում, որով ստույգ որոշվում է նրանց ներդրման ու տարավիացման ժամանակը):

Կարբոնից մինչև մեզոզոյ ընկած ժամանակաշրջանում տեղի է ունեցել տարբեր նստվածքային հաստվածքների (այդ թվում ածխաբեր ու զիպս պարունակող հաստվածքներ) կուտակում և միայն տրիասում նորից վերսկսվել է հրաբխականությունը (տրասյներ):

Բազիտների-հիպերբազիտների հետ սերտորեն զուգակցվում են համաշխարհային խոշոր նշանակություն ունեցող ասբեստի հանքավայրերը (Տետֆորդ Մայն և ուրիշ. Քվեբեկում), քրոմի ու նիկելի երևակումները: Գրանիտոիդների հետ կապված են ոսկու, պղնձի, կապարի ու ցինկի, մոլիբդենի, վոլֆրամի, բիսմութի և ուրիշ հանքավայրեր ու երևակումներ: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում կոլչեղանային տիպի բազմամետաղային Բատուրստ, Բուխան, Բյուչենս խոշոր հանքավայրերը, բարիտ-բազմամետաղային Ուալտոն հանքավայրը, Հարավային Քվեբեկի ու Նոր Շոտլանդիայի ոսկի-քվարցային երակները (Գոլդենվիլ, Գոլդ-Ռիվեր և այլն), պղինձ-նիկելային հանքանյութերը (Ռոզեր հանքավայրը Նյու-Բրունսվիկում):

Քվեբեկ մարզում կալեդոնյան հասակի զրանիտոիդների (բացարձակ հասակը 390 մլն. տ.) կոնտակտում առաջացել է սկառնային պղինձ-մոլիբդենային հանքանյութերի Մուրդոհվիլ խոշոր հանքավայրը:

Հանքայնացման տեղաբաշխումն ըստ մետաղածնության փուլերի ունի հետևյալ պատկերը՝

Ս կ զ ր ն ա կ ա ն ու վ ա դ փ ու լ ե ր (օրդովիկ ու սիլուր)՝ ասբեստ, քրոմիտ, նիկել, կոլչեղանային Բատուրստ, Բուխան, Բյուչենս բազմամետաղային հանքավայրեր:

Մ ի ջ ի ն փ ու լ ե ր (ստորին ու միջին դեռն)՝ պղինձ-մոլիբդենիտային, մոլիբդենիտ-շեելիտային երակներ, սկառներ մագնետիտով ու խալկոպիրիտով, ստիբնիտի երակներ, ոսկի-քվարցային երակներ, պեզմատիտներ հազվագյուտ մետաղներով:

Ուշ և վերջնական փուլեր (Չ3-Տ)՝ ֆլյուորիտ, բարիտ, բնածին պղինձ՝ բազալտներում, գալենիտ՝ ավազաքարերում, խալկոզին՝ ավազաքարերում, ոսկի՝ հիմքի կոնգլոմերատներում, ֆլյուորիտի երակներ՝ ուրանային խեժով, կասիտերիտ-ստանին-գալենիտ-սֆալերիտ կազմության երակիկներ:

ԱՄՆ-ում, Ապալաչյան ծալքավոր գոտու հարավարևմտյան շարունակությունում, արևելյան նահանգներում (Մերիլենդ, Նոր Անգլիա, Ալաբամա, Նյու-Հեմպշիր, Մասաչուսեթս և ուրիշ) դեռնի հասակի զրանիտոիդների հետ կապված են ոսկու բազմաթիվ, բայց ոչ մեծ հանքավայրեր. արևելյան նահանգների ոսկու հանքավայրերի մյուս մասը, ինչպես նաև բազմամետաղային հանքանյութերի ու վոլֆրամի երևակումները ծագմամբ կապվում են ավելի երիտասարդ Շ-Ք հասակի զրանիտոիդների հետ:

Պենսիլվանիա նահանգի հարավարևմտյան մասում տրիասի հասակի դիաբազների կոնտակտում հայտնի է ՇՕ-պարունակող մագնետիտային հանքանյութերի Կոռնուոլ հանքավայրը, իսկ Մերիլենդ, Պենսիլվանիա ու Հյուսիսային Կարոլինա նահանգներում կալեդոնյան հասակի հիպերբազիտներում տեղադրված են քրոմիտի փոքր բներ:

Минеральные ресурсы зарубежных стран. Вып. 20, США, Госгеолиздат, 1952, с. 113—296.

Холтедаль У. Геология Норвегии, т. I, Изд. ИЛ., 1957, с. 424.

Шейнманн Ю. М. Некоторые черты каледонид Евразии. Докл. сов. геол. на XXI сессии МГК. Пробл. XIX—Каледонская орогения. Изд. АН СССР, 1960, с. 16—27.

Шнейдерхен Г. Рудные месторождения. Изд. ИЛ., 1958, с. 14—474.

Alcock F. J. Mineral occurrences in the Appalachian region of Canada: their origin and relation to structure. Structural geology of Canadian ore deposits. A symposium, 1948, t. I, p. 49—64.

Béland J., Marlacu R., Pérusse J. and Duquette G. Metallic mineralization in the Appalachians of southern Quebec. Canad. Min. Journ. № 83, 1962, p. 97—100.

Gabelman J. Metalloectonic Zoning in the North American Appalachian Region. Report of the XXIII Sess. Int. Geol. Congr. v. 7, Prague, 1968, p. 17—33.

Geology and Economic Minerals of Canada. Econ. Geol. report № 1, Depart. of energy, mines and resources Canada, 1970, p. 838.

10. Ատլասյան մետաղածնային գոտին գտնվում է Հյուսիսարևմտյան Աֆրիկայում ու տեղադրված է Միջերկրածովային ալպիական ծալքավոր գոտայի ու Աֆրիկայի բյուրեղային վահանի միջև: Գոտու ընդհանուր տարածությունը լայնակի է, ձգվածությունը ընդամենը 1600 կմ է, միջին լայնությունը 200—300 կմ: Գոտու երկրաբանական ու մետաղածնային բնույթը պայմանավորված է հերցինյան դարաշրջանի ծալքավորման, մագմատիզմի ու հանքայնացման ուժեղ արտահայտմամբ, որի վրա վերադրվում է ավելի երիտասարդ Mz-Kz հասակի հանքայնացումը: Ատլասյան գոտու, գլխավորապես Մարոկկոյի տարածքի մետաղածնությունը, մեզ հայտնի է ֆրանսիացի երկրաբանների աշխատություններից, որոնցից կարելի է նշել Ագարին, Բուլադոնին, Շուբերտին, Ամբերթեին, Ժուրավսկուն, Պերմինժեին, Պուիին (J. Agard, J. Bouladon, C. Choubert, A. Emberger, G. Juravsky, F. Permingeat, G. Pouit): Հետաքրքիր աշխատանքներ են կատարել այստեղ նաև Շնեյդերհոհները (H. Schneiderhöhn) ու սովետական երկրաբաններ Գ. Ա. Կրուտովն ու Ի. Վ. Կունակը:

Ատլասյան գոտում լայնորեն զարգացած են Աֆրիկական վահանի հյուսիսային եզրային մասի մինչքեմբրյան համալիրն ու միջին-վերին պալեոզոյի մետամորֆացված հրաբխածին-նստվածքային ապարները, ծածկված մեզոզոյան հասակի տերիգեն (ավազաքարեր, կոնգլոմերատներ) ու կարբոնատային (կրաքարեր, դոլոմիտներ) հաստվածքներով:

Հնագույն մագմատիկ ապարները ներկայացված են արխեյան հիմքի մուսկովիտային գրանիտներով (Sr-Rb եղանակով որոշված հասակը 2600 ± 130 մլն. տ. Cahen, 1965) ու զրանիտներով, որոնք ուղեկցվում են ստորին պրոտերոզոյան հասակի (բացարձակ հասակը 1800—1600 մլն. տ.) պեղմատիտներով: Մինչքեմբրյան ապարները հատված են Անտի-Ատլասի արևելք—հարավ-արևելք—արևմուտք—հյուսիս-արևմուտք տարածության գլխավոր բեկվածքով, որի երկայնքով մերկանում է պրոտերոզոյան հասակի հիպերբազիտների ինտրուզիաների փոքր շղթան:

Մինչմեզոզոյան հիմքի գրանիտոիդների ու մետամորֆացված ապարների բացարձակ հասակի որոշումները տալիս են 1200—900 մլն. տ. (միջին-

վերին պրոտերոզոյ) մինչև 700—600 մլն. տ. (վերին պրոտերոզոյ—ինֆրա-քեմբրի ու 500—250 մլն. տ. մինչև վերին պալեոզոյ ներառյալ). վերջին թվերը հաստատում են ուշ հերցինյան հասակի զրանիտոիդների ու մետամորֆիզմի պրոցեսների առկայությունը:

Մինչքեմբրյան կոմպլեքսն ու ստորին պալեոզոյի ապարները տեղ-տեղ հատվում են հավանաբար հերցինյան հասակի գոլերիտների ու գաբրոների դաշկաներով:

Ատլասյան գոտու գլխավոր հարստություններն են բազմամետաղային հանքանյութերի շերտաձև շատ խոշոր ու մասամբ երակային հանքավայրերը (Բու-Բեկեր-Տուխսիտ, Միբլադեն և ուրիշներ). ավելի փոքր նշանակություն ունեն մանգանի (Իմինի, Բու-Արֆա և ուրիշներ) ու պղնձի հանքավայրերը. մեծ հետաքրքրություն են ներկայացնում կոբալտի ու նիկելի արսենիդների Բու-Ադեր տիպի ու Ադեգուր շրջանի սկանդինավյան մոլիբդենիտ-շեելիտային հանքավայրերը:

Բազմամետաղային հանքանյութերի ամենախոշոր հանքավայրերը տեղադրված են լեյասի արգիլիտա-կարբոնատային ֆորմացիայում (Միբլադեն) ու զոգերի դյուրիտներում (Բու-Բեկեր-Տուխսիտ). այդ ֆորմացիաների տակ գտնվող հիմքի ապարներում հայտնի են բազմամետաղային հանքայնացման բազմաթիվ երակներ ու ցանավոր զոնաներ, որոնք դիտվում են որպես շերտաձև տելեթերմալ հանքավայրերի սկզբնաղբյուր:

Հիմքի երակային հանքավայրերի համար կապարի իզոտոպների բացարձակ հասակի որոշումները տալիս են 520 ± 70 մինչև 290 ± 50 մլն. տ., որը համապատասխանում է ներփակող ապարների հասակին. կապարի բացարձակ հասակի որոշումները շերտաձև հանքավայրերից ու մեզոզոյան ծածկոցի ջարդման զոնաներից տալիս են 430 ± 60 մինչև 280 ± 60 մլն. տ., որոնք հասակով միշտ շատ ավելի հին են քան ներփակող ապարները և մոտ են հիմքի երակային հանքավայրերի հասակին (Emberger, 1969). դա խոսում է այն մասին, որ յուրայի ծածկոցի շերտաձև հանքավայրերը հիմքի հանքավայրերի նկատմամբ երկրորդական են՝ նրանք առաջացել են մետաղների ռեմոբիլիզացման ու վերանստեցման հետևանքով:

Որպես ռեմոբիլիզացման ապացույց Ամբերժեն (A. Emberger) բերում է հանքայնացման մի շարք փուլերի առկայությունը (բարիտի երկու տարբեր տիպեր Միբլադենում, հանքայնացման չորս տարբեր տիպեր Ալի-ու-Ռաուդում և ուրիշ.), ինչպես նաև հիմքի երակային հանքավայրերի գալենիտի համեմատ վերանստեցված զալենիտում տարբեր խառնուրդների (Ag-ի ու Bi-ի) քանակի խիստ նվազումը:

Պղնձի հանքավայրերն ունեն շատ ավելի փոքր նշանակություն և ավելի վատ են ուսումնասիրված. պղինձը Մարոկկոյի հարավարևմտյան մասում առաջացնում է կուտակումներ պրոտերոզոյի, ինֆրաքեմբրի, պալեոզոյի ու պերմ-արիասի հաստվածքներում: Ավելի կարևորները շերտաձև բնույթի են ու հարում են սենոմանի ավազաքարա-կոնգլոմերատային ֆորմացիային (Բու-Սելամ). շատ դեպքերում տեղի է ունենում պղնձի երկրորդային կուտակում, որը երակաձև մարմինների ձևով, զուգակցվում է հերցինյան գոլերիտային դաշկանների հետ:

Սաադիի (M. Saadi, 1968) տվյալներով, Անտի-Ատլասի, բարձր Ատլասի և Զեբիլեի (Հարավային Մարոկկո) պղնձի բազմաթիվ հանքավայրերի

մի մասը շահագործվում էր հնում և միջին դարերում, իսկ նրանցից մի քանիսը շահագործվում են այժմ: Սովորաբար հանքավայրերը տեղադրված են ինն ապարներում (մինչքեմբրից մինչև պերմ-տրիաս) ու պատկանում են տարբեր գենետիկական տիպերին՝ երակային, շերտաձև, ցանավոր (հրաբխածին ապարներում), կոնտակտ-մետասոմատիկ, պղնձաբեր պիրոտինի կոտակներ և այլն: Տարածականորեն, պղնձի գլխավոր հանքավայրերը հարում են (հատկապես պարզորոշ Անտի-Ատլասում) հերցինյան դոլերիտների երկու հզոր դայկաներին, որոնք ձգվում են հարավարևմտյան-հյուսիսարևելյան ուղղությամբ և նույն ուղղությամբ բեկվածքների հետ կազմում են 100 կմ-ից ավելի տարածվող պղնձային հանքագոտի: Հարկ է նշել, որ այդ «պղնձաբեր լինեամենտը» հատում է հիմքային ու ուլտրահիմքային հրաբխային ապարների (գոլերիտների, ֆոնոլիտների, բազալտների, պերիդոտիտների և այլն) հաստվածքը, որն ուղղակի կամ անուղղակի կարող է խոսել այդ հրաբխականության ու նրան համապատասխանող պղնձային հանքայնացման միջև եղած գենետիկական կապի մասին:

Պղնձային հանքայնացման վերը նշված հսկման գործոնները (գոլերիտների գալիաները, պղնձաբեր լինեամենտը, ներփակող հիմքային-ուլտրահիմքային հրաբխածին հաստվածքները) օգնում են պղնձի որոնման ուղղությամբ տարվող աշխատանքներին և քարտեզների կազմմանը. վերջինները կհուշեն, թե Մարոկկոյում էլ որտեղ կարելի է հայտնաբերել պղնձային հանքայնացում:

Մանգանի համար նույնպես ամենահետաքրքիրը շերտաձև հանքավայրերն են, որոնք հարում են տարբեր հասակի ֆորմացիաներին՝ վերին պրոտերոզոյի հրաբխածին-բեկորային ապարներին, ներթափանցված մանգանային հանքայնացումով (Տիուին ու Իդիկել), լեյասի կարբոնատային ֆացիային (Բու-Արֆա), սենոմանի գոլմիտ-ավազաքարային ֆացիային (Իմինի): Արդյունաբերական նշանակություն ունի պիրոլյուզիտային հանքանյութերով հարուստ Իմինի նստվածքային հանքավայրը. շերտաձև հանքավայրերի կողքին, բարձր Մոլյուլիայի մարզում պերմ-տրիասի հաստվածքներում հայտնի են պոլիմորֆ հանքավայրեր՝ երակային ու շերտաձև (Աուլի, Ակեբաբ և այլն):

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ազեգուրի շեյլիտաբեր ու տեղտեղ մոլիբդենաբեր սկանների խոշոր հանքավայրը, առաջացած հերցինյան գրանիտների ու պալեոզոյան նստվածքային ապարների սերիայի կոնտակտում. բացի W ու Mo-ից որոշ արդյունաբերական հետաքրքրություն է ներկայացնում սկանների վրա վերադրված ուրանախեժային հիդրոթերմալ հանքայնացումը:

Արդյունաբերական մեծ նշանակություն ունի նաև Բու-Ազեր-Ազբար շրջանը՝ արսենիդային կոբալտ-նիկելային (Au, Ag-ի խառնուրդով) հանքայնացումը Ատլասի գլխավոր բեկվածքի փոփոխված սերպենտինիտներում: Հանքավայրերը տեղադրված են քվարց-կարբոնատային ապարներում (լիտովենիտներում), բրեկչիացած զոնաներում ու ճեղքերի երկայնքով երակների ձևով. հանքայնացումը ներկայացված է Co, Fe ու Ni-ի արսենիդներով, որոնցից կարևոր են սկուտերոլիտի խմբի միներալները, սաֆլորիտի-լյուլինգիտի, ռամելսբերգիտի ու նիկելինի հետ: երկրորդական միներալներից խառնուրդի ձևով ներկա են խակոպիրիտը, բոռնիտը, խակոզիլը, կովլինը, մագնետիտը, հեմատիտը, քրոմիտը ու ավելի հազվադեպ խոնացած հանքանյու-

թերը, գալենիտը, սֆալերիտը, բիսմութի սուլֆատները և ուրիշ: Ներփակող ապարների սերպենտինացումը մասամբ ավտոմետամորֆիկ է, բայց զլխավորապես կապվում է ավելի ուշ (միջին-վերինպրոտոերոզոյան ^o) գրանիտոիդների ազդեցության հետ: Հանքային պրոցեսում անջատում են երեք ստադիաներ. 1) բրաներիտ-մոլիբդենիտային, 2) արսենիդային Co, Ni, Fe արսենիդներով, 3) սուլֆիդային: Բու-Ազեր-Ազբար շրջանի արսենիդային հանքավայրերի գենեզիսի ու հասակի վերաբերյալ կան երկու տարբեր տեսակետներ:

Առաջին. ֆրանսիացի երկրաբանների մի մասի տեսակետը, որը հավանություն է դտել նաև Կրուտովի (Крутов, 1970) կողմից, հանքավայրերը կապում է վերին պրոտոերոզոյան-բեմբրյան ակալային Ջերել Բոխ հրաբխածին-պլուտոնիկ համալիրի հետ. մետաղները դուրս են բերված սերպենտինիտներից, ընդ որում բարձր ջերմաստիճանային պայմաններում տեղի է ունեցել առավելապես կոբալտի դուրս բերումը (սերպենտինիտներում Co:Ni հարաբերակցությունը հավասար է 1:10, իսկ հանքանյութերում՝ խիստ այլ է 5:1):

Երկրորդ տեսակետի համաձայն, որն առաջարկել է ֆրանսիացի երկրաբան Ժուրավսկին (Jouravsky, 1949), շրջանի արսենիդային հանքայնացումը հերցինյան հասակի է, զուգակցվում է հերցինյան դոլերիտների ու զարրոների դալկանների հետ և հավանաբար նրանց հետ ունի ընդհանուր խորքային մագմատիկական օջախ: Որպես հերցինյան հասակի հանքայնացման ապացույց, բերվում են առաջին փուլի բրաներիտի բացարձակ հասակի որոշումները, որոնք տվել են 240 ± 10 մլն. տ.:

Արդյունաբերական նշանակություն ունեն հեմատիտային ու սիդերիտային հանքանյութերի մետասոմատիկ հանքավայրերը ստորին կավճի հասակի կրաքարերում (Ջերիսան՝ Թունիսում և Ուենցան՝ Ալժիրում):

Ատլասյան մետաղածնային գոտու համար համեմատաբար փոքր նշանակություն ունեն մագնետիտային հանքանյութերի սկտոնային հանքավայրերը յուրայի հասակի կրաքարերի ու միկրոգրանիտների կոնտակտում (Ունշան Արևելյան Ռիֆում), հազվագյուտհողային կարբոնատիտները Բարձր Ատլասում, պեգմատիտները բերիլով ու տանտալա-կոլումբիտով Անտի-Ատլասի մինչբեմբրում, ստիբնիտային ու սնդիկային Հյուսիսային Ռիֆի հանքավայրերը (Բիր-Բենի-Սալախ, Ուէդ-Մադեն և այլն) ու ֆլյուորիտային էլ-խաման երակային հանքավայրը կենտրոնական Մարոկկոյում:

Հաստատված են կավճի հասակի կոնզոմբրատիտների հատող կալցիտային երակներ մանգան-կոբալտային հանքայնացումով:

Նշված հանքայնացման տիպերից մի քանիսը՝ կարբոնատիտները, ստիբնիտային, ֆլյուորիտային, կալցիտային (Mn-Co հանքայնացումով) երակները մենք հակված ենք կապել Mz-Kz ակտիվացման պրոցեսների հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՏԼԱՍՅԱՆ ՄԵՏԱԳԱԾԵԱՅԻՆ ԳՈՏՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Виноградова Р. А., Еремян Н. И., Брызгалов И. А. Природный диарсенид кобальта из месторождения Бу-Аззер (Марокко), «Геология рудных м-ний», т. XIII, № 2, 1971, с. 116—120.

Крутов Г. А. Месторождения никель-кобальтовых руд района Бу-Аззер (Марокко). «Геология рудных м-ний», т. XII, № 4. 1970, с. 27—40.

Bouladon J. Un aspect de l'héritité en métallogénie: Recurrence et polymorphisme de la minéralisation dans quelques districts plombo-zincifères de Méditerranée

occidentale. Report of XXIII, Sess. Int. Geol. Congr. Proceed. of section 7-Endogenous Ore Deposits, Prague, 1968, p. 11—16.

Emberger A. Caracteres polygénétiques des minéralisations plombifères de la haute Moulouya (gisements d'Aouli, de Mibladen et de Zeida, Maroc). Comptes rendus des séances de l'Acad. des Sciences, v. 260, 1965, p. 3433—3436.

Emberger A. Problème des remobilisations dans les gîtes de plomb et de Zinc. Meet. on remobilization of ores and minerals. Cagliari, August, 1969, p. 37—57.

Permingeat F. Le gisement de molybdène, tungstène et cuivre d'Azegour (Haut Atlas). Etude pétrographique et métallogénique. Notes Serv. Géol. Maroc. N° 141, 1957, p. 284.

Pouit G. Mise en place pénecontemporaine du manganèse au Maroc, par rapport aux formations qui le contiennent ou aux surfaces topographiques au moment de son dépôt. C. R. Ac. Sc. Vol. 262, N° 6, 1966, p. 623—625.

Schneiderhöhn H. La position génétique des gîtes métallifères post-triasiques de l'Afrique du Nord française. XIX Congr. Géol. Int. Alger, 1952, (publ. 1954), p. 73—90.

11. Կապի մետաղածնային գոտին գտնվում է Աֆրիկական մայրցամաքի հարավում, որտեղ նա եզրապատում է Աֆրիկական վահանի բյուրեղային զանգվածը:

Գոտու տարածությունը լայնակի է, ձգվածությունը ոչ մեծ՝ ընդամենը 1000 կմ, 200 կմ միջին լայնության դեպքում: Համաձայն Ջյու-Տոյտի (Дю-Тойт, 1957) գոտին կազմված է պլավորապես Կապի սիստեմի նստվածքներիով (համապատասխանում են S_2 - D_1 մինչև C_1) ու մասամբ տրանսվալյան սիստեմով (պրոտերոզոյ): Քեյսիթաուն քաղաքի ու Մոսելբեյ շրջաններում մերկանում են Կապի մարզի, այսպես կոչված «երիտասարդ» գրանիտները:

Հյուսիսում Կապի սիստեմի նստվածքները ծածկված են Կաոու հաստվածքով (C_3 - P մինչև ռետ-լեյաս ներառյալ):

Կապի սիստեմը վարից վեր ներկայացված է երեք շերտախմբերով՝ 1) Ստոլովայա լեռան (քվարցիտանման ավազաքեր, S_2). 2) Բոկեկեղ (թերթաքարեր, D_1). 3) Վատերերգ (քվարցիտներ, C_1):

Ողջ Կապի սիստեմը բավականին ինտենսիվ ծալքավորված է պերմտրիասի ու կավձի և երրորդական ժամանակաշրջաններում, սակայն այդ հասակի մագմատիկական առաջացումներ այստեղ հայտնի չեն (բացի Կաոու ինտրուզիվ գոլերիտներից գոտու արևելյան մասում):

Ինչ վերաբերում է «երիտասարդ» գրանիտներին, ապա նրանց բացարձակ հասակը որոշված է 510 ± 40 մլն. տ. (համապատասխանում է բայկալիդներին): Գրանիտների հետ կապված է Ստեկենբոու ու Կապի շրջանների անագային հանքայնացումը, ներկայացված գրեյզեններով ու քվարց-տուրմալինային կասիտերիտ, վոլֆրամիտ, արսենոպիրիտ պարունակող երակներով: Ստոլովայա լեռան հաստվածքի (Կապի սիստեմի ստորին մասը) կոնգլոմերատներում հաստատված է ոսկի, սակայն նրա կոնցենտրացիան ցածր է:

Կապի թերակղզու գետերի ալյուվիալում կան արդյունաբերական հետաքրքրություն ներկայացնող կասիտերիտի ցրոններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԻ ԳՈՏՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Дю Тойт А. Геология Южной Африки. Изд. ИЛ., 1957, с. 28—454.

Haughton S. H. Geological history of Southern Africa. Publ. by the Geol. Soc. of South Africa, 1969, Cap. Town, p. 535.

12. Կամ-Յուննանյան մետաղածնային գոտին դրավում է Չինական Ժողովրդական Հանրապետության հարավարևմտյան մասը և տեղագրված է MZ-KZ ու PZ հասակի ծալքավոր ստրուկտուրաների սահմանում: Գոտու տարածությունը մոտ է միջօրեականին, ձգվածությունը ընդամենը 800 կմ, միջին լայնությունը 300 կմ:

Այստեղ ամենահինտեսիվ ձևով արտահայտվել են կալեդոնյան ու ավելի թույլ՝ հերցինյան դարաշրջանների ծալքավորումը, մազմատիզմը և հանքայնացումը:

Նյնիով մեր արամադրության տակ եղած զրականության սակավ տվյալներից, որոնք չինարենից թարգմանել ու սիրով մեզ արամադրել է Ա. Գ. Շպրինցինը, Կամ-Յուննանյան գոտին զարգացած ապարների բնույթով (էֆուզիվներ, միջին ու վերին պալեոզոյի հասակի բազիտներ ու հիպերբազիտներ) ու հանքայնացման տիպով առավել մոտ է Ուրալյան գոտուն:

Բազիտներն ու հիպերբազիտները հարում են խորքային բեկվածքին, որն անցնում է ստրուկտուրայի արևելյան եզրով:

Այստեղ գունիտներում ու պերիդոտիտներում հայտնի են քրոմիտի համեմատաբար ոչ մեծ հանքավայրեր, տիտանամագնետիտային V-պարունակող հանքանյութեր, Ni ու Co-ի հանքավայրեր, կապված դաբրոպիրոքսենիտների հետ:

Սիլուրի-դեոնի հրաբխածին հաստվածքները ներփակում են բազմաթիվ կոլչեդանային (զլխավորապես պղնձի, մասամբ բազմամետաղային) Ուրալյան տիպի հանքավայրեր, ինչպես նաև պղնձի հանքանյութերի երակային ու հրակիկա-ցանավոր, Fe ու Mn-ի էքսհալյացիոն-նստվածքային հանքավայրեր:

Հանքայնացման շորս հաջորդող փուլերից լավ զարգացած է միայն առաջինը (վաղ փուլը), որի հետ կապված գոտու մետաղածնության համար բնորոշ են՝ Cr, Fe, Ti, V, Cu, Ni, Co:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ-ՅՈՒՆՆԱՆՅԱՆ ԳՈՏՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Ли Юнь-чунь «Сображения о тектонике «Кам-Юньнаньской оси». Инф. бюлл. Мин. геол. КНР», № 1, 1959, с. 8—11.
- Син Фэн-мин. О генезисе титаномагнетитового месторождения Начжихуа в юго-западном Китае. «Dizhi Lunping», т. 19, № 9, 1959 (на кит. языке, пер. А. Г. Шпринцина в библи. ВСЕГЕИ). 421—425.
- Lee K. Y. Some rare-element mineral deposits in Mainland China. Geol. Surv. bull. № 1312 US Dept. of interior, 1970, p 34.

13. Արևելաավստրալիական մետաղածնային գոտին հզրապատում է արևելքից Արևմտաավստրալիական վահան-պլատֆորմը, ձգվելով միջօրեականին մոտ ուղղությամբ 4500 կմ գոտու 1000 կմ միջին լայնության դեպքում:

Ինտենսիվորեն արտահայտվել են հերցինյան օրոգենիկ դարաշրջանի ծալքավորումը, մագմատիզմն ու հանքայնացումը, իսկ գոտու հարավային ծայրամասում (Նոր Հարավային Ուելսում, Վիկտորիայում ու Տասմանիա կղզում)՝ կալեդոնյան օրոգենիկ դարաշրջանի ծալքավորումը: Կուրնսլենդի

արևելյան մերձափնյա շրջաններում տեղ-տեղ արտահայտվել են մեզոզոյան ծալքավորումը, մագմատիզմն ու հանքայնացումը:

Արևելաավստրալիական մետաղածնային գոտու սահմաններում, որն ընդգրկում է մերձխաղաղօվկիանոսյան Կուինսլենդի ու Նոր Հարավային Ուելսի շրջանները, ինչպես նաև Վիկտորիա մարզն ու Տասմանիա կղզին, հասակային հատկանիշով ավելի հնրից մինչև երիտասարդ, ատանձնացվում են հետևյալ մագմատիկ ու նրանց հետ կապված միներալային համալիրները՝

1. Տասմանիա կղզում միջին ու վերին քեմբրի հիպերբազիտներ ու բազիտներ՝ պղինձ-նիկելային հանքավայրերով ու պլատինոիդները (Pt, Os, Jr) երևակումներով:

2. Հետորդովիկյան հասակի գրանիտոիդներ՝ ոսկու, անագի, պղնձի հանքավայրերով Կուինսլենդի հարավային մասում ու Վիկտորիա մարզում:

3. Գեոնյան հասակի (վաղգեոնյան Նոր Հարավային Ուելսում ու հեոմիջինգեոնյան Վիկտորիա մարզում) գրանիտոիդներ, որոնց հետ կապված են Նոր Հարավային Ուելսի ոսկու, պղնձի, բազմամետաղային և անագ-վոլֆրամային հանքանյութերի հանքավայրերն ու Վիկտորիա մարզի Բենդիգո և Բալարատ ոսկու հայտնի խոշոր հանքավայրերը:

Գեոնի մետաղածնությանն են վերագրվում, հավանաբար, Տասմանիայի պղնձային Մաունտ-Լայել, բազմամետաղային Զիխան ու Ռոզերբի, անագային Մաունտ-Բիշոֆ, Մաունտ-Կլիվլենդ, Աբերֆոլյ ու Ռենիսոն-Բել խոշոր հանքավայրերը:

4. Վազհերցինյան ցիկլի (C₂) գրանիտոիդները լավ են ներկայացված Կուինսլենդում ու Նոր Հարավային Ուելսում. նրանց հետ են կապված պղնձի նշանակալի հանքավայրեր (Մաունտ Մորգան, Զիլագոն և ուրիշ հանքավայրեր), ինչպես նաև ոսկու մի շարք հանքավայրեր, բազմամետաղային ու վոլֆրամ-մոլիբդենային հանքանյութեր խոզովակաձև մարմինների ձևով գրեյդենացված գրանիտներում (Վոլֆրամ-Քէմպ, Բէմֆորդ):

5. Ուշհերցինյան ցիկլի (P-T) գրանիտոիդները զարգացած են գլխավորապես Հյուսիսային Կուինսլենդում, մասամբ Կուինսլենդի ավելի հարավային շրջաններում ու Նոր Հարավային Ուելսում. նրանց հետ կապված են անագի բավականին նշանավոր (Հերբերտոն, Մաունտ-Գառնետ, Կուկտովի և այլն), ինչպես նաև ոսկու (Կրեյդոն, Պալմեր Ռիվեր) հանքավայրերը: Կուինսլենդի-Տասմանիայի անագ-վոլֆրամային հանքավայրերի գոտին նման է Արգենտինայի ֆրոնտալ Կորդիլիերների նույնատիպ գոտուն (Stoll, 1965), իսկ Կուինսլենդի սուլֆիդ-կասիտերիտային խոզովակները Ալֆելդը (Ahfeld) համեմատում է Բոլիվիայի նման առաջացումների հետ:

6. Մեզոզոյան (ուշկավձային) գրանիտոիդները, հայտնի են միայն Կուինսլենդի հարավարևելյան մերձափնյա մասում, Բունդեբերգ ու Մարիբորո մարզերում, որտեղ նրանց հետ կապված են պղնձի, ոսկու, ծարիրի հանքավայրեր ու սնդիկի երևակումներ: Տասմանիայում հայտնի են ոսկու ոչ մեծ հանքավայրեր կապված երրորդական մագմատիզմի հետ, իսկ Նոր Հարավային Ուելսում վերջերս հայտնաբերված են շեկլիտի ու մոլիբդենիտի հավանորեն հերցինյան հասակի սկառնային խոշոր հանքավայրեր (Ռեյ-Պարկ): Շեկլիտաբեր սկառների նշանավոր հանքավայր վաղուց հայտնի է Քինգ կղզում, Տասմանիայից դեպի Հյուսիս-արևմուտք:

Ոսկու, անագի, պղնձի, բազմամետաղային ու վոլֆրամ-մոլիբդենիտա-

յին հանքանյութերի շահագործվող խոշոր արժատական հանքավայրերի կող-
քին հայտնի են կասիտերիտի, վոլֆրամիտի, ոսկու (ոսկու հետ միասին ստա-
նում են մի քիչ օսմիումային իրիդիում) արդյունաբերական ցրոններ:

Մեծ նշանակություն ունեն կուինսլենդի մերձափնյա ծովային ցրոնները,
որոնք պարունակում են ուտիլ, ցիրկոն, իմենիտ, մոնացիտ և այլ արժեքա-
վոր միներալներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՎԵԼԱՍՎՍՏՐԱԻԱԿԱՆ ԳՈՏՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Беляевский Н. А. Минеральные ресурсы Австралии. «Разв. и охрана недр», № 10, 1969, с. 59—62.
Blanchard R. Some pipe deposits of Eastern Australia, Econ. Geol. v. 42, 1947, pp. 265—304.
Geology of Australian ore deposits. Sec. ed., edited by John Mc Andrew, Australia, 1965, p. 547.
Hills E. Sherbon. The Metalliferous geochemical zones of Australia, Econ. Geol. v. 42, № 5, 1947, p. 478—491.
Richards S. M. The banded iron formation of Broken hill, Australia, and their relationship to the leadzinc orebodies. Econ. Geol., v. 61, № 1, 1966, p. 72—96.

14. Արգենտինյան մետաղածնային գոտին տեղագրված է Բրազիլական վահանի ու Խաղաղօվկիանոսյան ալպիական ծալքավոր գոտու Անդյան ճյուղի միջև, Արգենտինայի սահմաններում: Գոտին ձգվում է միջօրեականի ուղղությամբ մոտ 2000 կմ, 400 կմ միջին լայնության դեպքում: Այստեղ ինտենսիվ արտահայտվել են հետհերցինյան բեկորային շարժումները, մագմատիզմն ու մեզոկայնոզոյան դարաշրջանի հանքայնացումը, իսկ Բրազիլական վահանի մինչքեմբրյան հիմքի տեղամասերում (Պամպյան զանգված)՝ պրոտոերոզոյան ու մասամբ միջին-վերին պալեոզոյան հասակի գրանիտոիդներն իրենց յուրահատուկ հանքայնացմամբ:

Անդերի գետսինկլինալային դարգացումը սահմանափակվում է ռիֆեյով, ստորին ու միջին պալեոզոյով ու ավարտվում է վերին պալեոզոյում թույլ արտահայտված հերցինյան ծալքավորումով, մագմատիզմի ու հանքայնացման նվազ դրսևորումով: Հետհերցինյան ժամանակ տեղի է ունեցել ինտենսիվ բեկորային տեկտոնիկա, կապված ակտիվացման հետ, առաջացել են բեկվածքներ ու նրանց երկայնքով ներդրվել է բաղմաֆազային «Անդյան» բաթոլիտը:

Գրանիտոիդային հսկայական բաթոլիտը ներդրվել է մի քանի փուլերում սկսած պերմ-տրիասից մինչև կավիճ ու երրորդական դարաշրջան:

Եւրեպավոր շարժումների հետևանքով, որոնք տեղի են ունեցել վերին կարբոնի ու պերմի սահմանում, Արգենտինայի Կորդիլիերներում (Գլխավոր Կորդիլիերներ) ստորին պալեոզոյը ինտենսիվորեն ճմլված է:

Հյուսիսարևմտյան Արգենտինայում, Արգենտինյան Պունայի միջնազանգվածի ու Պամպյան զանգվածի սահմաններում, Բրազիլական վահանի մինչքեմբրյան հիմքի ապարներում, հայտնի են հազվագյուտմետաղային պեղմատիտների բազմաթիվ խոշոր հանքավայրեր, որոնց մի մասը կապված է մինչքեմբրյան գրանիտների հետ, իսկ մյուս մասն, անկասկած, շատ ավելի երիտասարդ է ներփակող ապարներից (պեղմատիտից անջատված ուրանիտիտի

բացարձակ հասակը 325 մլն. տ. է) ու կապված է դեռնի ակտիվացման պրոցեսների հետ:

Հազվագյուտամետաղային պեզմատիտները հատկապես առատ են Կորդովա, Սան-Լուիս, Կատամարկա, Լա-Ռիոխա մարզերում ու պարունակում են բերիլի, լիթիումի միներալների, տեղ-տեղ նաև Ta ու Nb-ի, հազվագյուտ հողերի, անագի, ուրանի ու թորիումի նշանակալից կուտակումներ: Հյուսիսարևմտյան Արգենտինայի Առաջավոր Կորդիլիերներում հերցինյան մետաղածնային դարաշրջանի հանքավայրերից ամենաէականներն են անագ-վոլֆրամ-բիսմուտային, բազմամետաղային, ոսկի-արծաթային ու պղնձային հիդրոթերմալ երակները, սակայն նրանք հանքայնացման մասշտաբով զգալիորեն զիջում են հասակով ավելի երիտասարդ և բնույթով նման հանքավայրերին:

Բոլիվիայի ու Արգենտինայի Sn-W-Bi գլխավոր, ինչպես նաև բազմամետաղային, ոսկեբեր ու ծարիրային հանքավայրերը կապված են Անդյան բաժրլիտի վաղյուրայի տոնալիտային փուլի հետ, այն ժամանակ, երբ Կենտրոնական-հարավային Բոլիվիայի ու Հյուսիսային Արգենտինայի բուն անագային ու անագ-արծաթային հանքավայրերը կապված են երրորդական սուբհրարխային ռիոլիտների փոքր ինտրուզիաների հետ (Stoll, 1965. Schneider-Scherbina, 1964):

Ենթադրաբար մինչքեմբրյան հասակի են համարվում Կենտրոնական Արգենտինայի Պամպյան գանգվածի W-Bi և Sn-W-Bi խոշոր հանքավայրերը (Լոս-Կոնդորս և այլն), ինչպես նաև Կորդովա (Լա-Ռոբեալ, Սանտո-Դոմինգո, Լա-Արգենտինա հանքերը) ու Սան-Լուիս մարզերի (Լոս-Ամիգոս և Լա-Էստանս-սիա հանքերը) բազմամետաղային հանքավայրեր, ներկայացված սֆալերիտ, գալենիտ, խալկոսիրիտ, գրինոկիտ ու հեմատիտ պարունակող քվարցային երակներով:

Յուրահատուկ է Ադիլյարի բազմամետաղային խոշոր հանքավայրը, տեղադրված քեմբրի ու օրգովիկի մետամորֆացված ապարներում. նրան վերագրում են նստվածքային-սինգենետիկ ծագում, ընդ որում հերցինյան գրանիտային ինտրուզիայի ազդեցության տակ (Stoll, 1965) հանքանյութերը ու ներփակող ապարները ենթարկվել են հետագա մետամորֆիզմի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՐԳԵՆՏԻՆԱՆ ՄԵՏԱՂԱՇՆԱՅԻՆ ԳՈՏՈՒ ՎԵՐԱԵՐՅԱԼ

- Анджелелли В. Распределение и характеристика месторождений и рудопроявлений в Аргентине. «Матер. межд. конф. по мирному использованию атомной энергии (Женева, 8—20 августа, 1955 г.)». т. 6. Геология урана и тория», Госгеолтехиздат, 1958, с. 77—89.
- Колотухина С. Е. и др. Геология месторождений редких элементов Южной Америки. «Наука», 1968, с. 279.
- Очерки по геологии Южной Америки. Изд. ИЛ., 1959, с. 342.
- Ферсман А. Е., Коган Б. И. Минеральное сырье зарубежных стран. Изд. АН СССР, 1947, с. 566.
- Braitsch O. Das Paläozoikum von Sierra Grande (Provincia de Rio Negro, Argentina) und die altkaledonische Faltung in östlichen Anden-Vorland-Geol. Rundschau, v. 54, H. 2, 1965, s. 698—714.
- Schneider-Scherbina A. Über metallogenetiche Epochen Boliviens und dem gibriden Charakter der sogenannten Zinn-Silber formation. Geol. Jahrb, Bd. 81, 1964, s. 157—170.

- Smith W. C., Gonzalez E. M. Tungsten investigations in the Republic of Argentina 1942-1943. US Geol. Surv. Bull. № 954-A, 1947, p. 37.
- Stoll W. C. Metallogenetic belts, centers and epochs in Argentina and Chile. Econ. Geol. v. 59, № 1, 1964, p. 126-135.
- Stoll W. C. Metallogenetic provinces of South America. Min. Mag. v. 112, № 1-2, 1965, p. 22-31 (№ 1), p. 90-99 (№ 2).
- Whiting F. B. Structural belts and mineral deposits of northwestern Argentine. Econ. Geol. v. 54, № 5, 1959, p. 903-912.

**ՍԱԼՔԱՎՈՐ ՇԱՐՓՈՒՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՄԵՏԱՂԱԾՆՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ**

Առանձին ծալքավոր շարժուն գոտիների մետաղածնության փաստացի նյութի համառոտ ակնարկը հնարավորություն է տալիս կատարել որոշ ընդհանրացումներ ու ընդգծել նրանց մետաղածնության հիմնական գծերը:

Առաջին հերթին հաստատվում է, որ Երկրի նկարագրված տասնչորս զբլխավոր ծալքավոր գոտիների սահմաններում, նրանց ծալքավորման ու հանքայնացման հասակից անկախ, սյարդորոշ առանձնանում են հանքաքիմիայի երկու հակադիր տիպեր, որոնք մագմատիզմի ու ներծին հանքայնացման բնույթով խիստ տարբերվում են մեկը մյուսից:

Նրանցից մեկը, որին պատկանում է համարյա ամբողջությամբ Ուրալյան մետաղածնային գոտին, Միջերկրածովային ու Խաղաղօվկիանոսյան գոտիների ներքին մասերը, ինչպես նաև Նորվեգա-Ապալաչյան և Կամ-Յոննանյան գոտիները, բնութագրվում է բազիտների-հիպերբազիտների ու չափավոր-թթու գրանիտոիդների լայն զարգացումով, բազալտային մագմայի ածանցյալներով, որոնք արտահայտում են ծալքավոր զոնաների զարգացման վաղ ու միջին փուլերի իշխող գերը: Հիմք կա ենթադրելու, որ մետաղածնային գոտիների այդ խմբին հատուկ է օվկիանոսային տիպի կեղևը և նա մոտ է Ռադկևիչի (E. A. Радкевич, 1959) ֆեմիկ գոտիների տարբերակին. այդ տիպի մետաղածնության համար բնորոշ են՝ Fe, Ti, V, Cr, Pt-ի խումբը, Cu, ինչպես նաև պակաս չափով, Mo, Pb-Zn, Au, Ag, Sb, Hg, երբեմն էլ U-ը: Հանքաքիմիայի տարածությունների երկրորդ տիպին են պատկանում Միջերկրածովային ու Խաղաղօվկիանոսյան գոտիների արտաքին (վահաններին կից) մասերը, ինչպես նաև Արևմտաեվրոպական, Արգենտինյան գոտիները, Ղազախստանյան և Արևելաասիայի գոտիների նշանակալի մարզերը, որոնք բնութագրվում են թթու գրանիտոիդների մեծ դերով ու ծալքավոր զոնաների զարգացման ուշ փուլերի իշխումով:

Մետաղածնային գոտիների այդ խմբի տակ հավանաբար տարածված է մայրցամաքային տիպի կեղևը և մոտ է Ռադկևիչի (E. A. Радкевич, 1959) առանձնացրած գոտիների սիպիկ տարբերակին. նրա մետաղածնությանը բնորոշ են՝ Sn, W, Mo, Be, Ta-Nb, ինչպես նաև Au, Pb-Zn, Sb, U: Առանձնացված այդ երկու հակադիր տիպերի կողքին նկատվում է նաև երրորդը՝ միջինը, որին կարելի է վերագրել այնպիսի մետաղածնային գոտիներ, ինչպիսիք են Ալթայ-Սայանյանը, Միջինասիականը, ինչպես նաև Թայմիրյանը, Ատլասյանն ու Կապինը (վերջինը դեռևս քիչ է ուսումնասիրված): Այդ գոտիների ձևավորման ընթացքում փոխվում է կեղևի բնույթը (օվկիանոսայինից մայրցամաքայինի), լավ են արտահայտված ինչպես վաղ ու միջին, այն-

պես էլ ծալքավոր զոնաների զարգացման ուշ փուլերը. այդ կապակցությամբ ներծին հանքայնացումը կապված է մասամբ բազիտների-հիպերբազիտների ու շափավոր թթու գրանիտոիդների, մասամբ էլ թթու գրանիտների հետ և ունի բարդ բնույթ՝ հակադիր տիպերի միջև: Ծալքավոր գոտիների բոլոր երեք տիպերի առանձին տեղամասերում, արդեն նրանց ձևավորման ավարտից հետո, կիսապլատֆորմային պայմաններում, վերադրվում է զարգացման վերջնական փուլը, որը ներկայացված է խայտաբղետ կազմության ճեղքային փոքր ինտրուզիաներով իրենց յուրահատուկ մետաղածնությամբ: Այստեղ բնորոշ են բարձր ջերմաստիճանային պղինձ-տուրմալինային (մոլիբդենով), ավելի հազվադեպ՝ պղինձ-անագային հանքանյութերը, և առանձնապես՝ ցածր ջերմաստիճանային ոսկի-արծաթային, սնդիկ-ծարիրային, ֆերբերիտ (կամ շեկիտ)-ստրենիտային, ռեալգար-աուրիպիգմենտային, երբեմն էլ ուրանա-խեժային հանքանյութերը:

Ծալքավոր շարժուն գոտիների ծալքավորումն արդեն ավարտած մարզերը այնպես, ինչպես նաև միջնազանգվածներն ու վահաններն իրենց պլատֆորմներով ենթարկվում են բեկորային շարժումներին, այսինքն ակտիվացման, որն իր հերթին ուղեկցվում է ուղղածիզ կամարա-բեկորային շարժումներով, մագմատիզմով ու հանքայնացումով: Այդ պրոցեսները բնութագրվում են աշխատության 7-րդ գլխում:

VII. ԱԿՏԻՎԱՅԱԾ (ԱՇԽՈՒԺԱՅԱԾ) ՇՐՋԱՆՆԵՐԻ ՄԵՏԱՂԱԾՆՈՒԹՅՈՒՆԸ

Սովետական երկրաբան Գ. Ֆ. Միրչինկը գեոևս 1940 թ., հիմնվելով Ալդանի գանգվածի, Հեռավոր արևելքի ու Սովետական Միության այլ տարածքների ուսումնասիրման վրա, հիմնավորեց գեոսինկլինալային զոնաների ու պլատֆորմների հետ մեկտեղ երրորդ խոշոր տեկտոնական ստրուկտուրաների տիպի՝ բեկորային զոնաների առանձնացման անհրաժեշտությունը. վերջինների համար բնորոշ են ուղղածիզ դիֆերենցիալ մասսաների շարժումները, որոնք ուղեկցվում են ապարների խախտմամբ, ճեղքերով, լավաների արտափիժումով ու ալկալային գրանիտների և նեֆելինային սինիտների ներդրումով (Мирчинк, 1940): Նա միաժամանակ նշել է, որ այդ կարգի շարժումները տարածվում են ոչ միայն հին պլատֆորմների տեղամասերում այլև ծալքավորումն ավարտած գեոսինկլինալային զոնաներում նրանց պլատֆորմների վերափոխման ընթացքում:

Ուսումնասիրելով Չինաստանի երկրաբանությունը, որտեղ այդ տիպի բեկորային ստրուկտուրաներն արտահայտված են առավել պարզորոշ, երկրաբան Չեն Գո-դան «Դիվա» անվան տակ առանձնացրեց Երկրի կեղևի երրորդ հիմնական ստրուկտուրային էլեմենտը (Чень Го-да, 1958, 1965):

«Դիվա» տիպի ստրուկտուրաների գեոտեկտոնական ու մետաղածնային առանձնահատկություններին են նվիրված Բելուսովի (Белюсов, 1964), Կարպովայի (Карпова, 1968), Մասայտիսի և Ստարիցկու (Масайтис, Старицкий, 1964), Նագիրինայի (Нагибина, 1967), Ռադկևիչի (Радкевич, 1965), Խաինի (Хайн, 1965), Շեգլովի (Щеглов, 1968, 1971) և ուրիշների աշխատությունները:


Վ. Վ. Բելուսովը իր աշխատանքներում ցույց տվեց, որ ակտիվացման պրոցեսները նշանավորում են Երկրի կեղևի էվոլյուցիայի հատուկ փուլ, երբ նրա՝ պլատֆորմային վիճակի հասած որոշակի տեղամասերը, հետագա-

յում ենթարկվում են տեկտոնական ակտիվացման ու ձեռք են բերում պլատֆորմներին ոչ բնորոշ շարժունակություն: Վ. Վ. Բելոուսովի կարծիքով ակտիվացած մարզերի ձևավորումը Երկրի կեղևի զարգացման նոր՝ «բազալտային» փուլի բնորոշ առանձնահատկությունն է:

Ե. Գ. Կարպովան նշում է, որ Ասիական մայրցամաքի արևելքում, բացի ծալքավոր մարզերից ու պլատֆորմներից գոյություն ունի երրորդ ռեգիոնալ ստրուկտուրային էլեմենտ՝ իր յուրահատուկ տեկտոնական ռեժիմով, որը հարկ է առանձնացնել «կամարա-բեկորային» շրջաններ անվան տակ:

Կամարա-բեկորային ստրուկտուրաները զարգանում են հին և երիտասարդ պլատֆորմներում, ինչպես նաև ծալքավոր շրջանների սահմաններում. ռեգիոնալ զարգացման տարածմամբ նրանք համարժեք են պլատֆորմներին ու ծալքավոր շրջաններին, ընդ որում նրանց ձևավորումը տեղի է ունենում անկախ գեոսինկլինալային մարզերի միաժամանակյա ծալքավորումից, ուղեկցվելով հազվագյուտ, գունավոր ու ազնիվ մետաղների կարևորագույն հանքավայրերի առաջացմամբ:

Մայրցամաքային տիպի Երկրի կեղևի զարգացման բնթացքը ըստ Ե. Գ. Կարպովայի ներկայացված է հետևյալ սխեմայով՝




Ա. Գ. Շչեգլովի կարծիքով ակտիվացման պրոցեսները կապված չեն անմիջականորեն Երկրի ստրուկտուրային մյուս ձևերի հետ, ուստի ընդգծելով նրանց այդ կարևորագույն առանձնահատկությունը, նա նպատակահարմար է գտնում այդ պրոցեսների արտահայտման տարածքների համար մտցնել նոր՝ «ինքնավար ակտիվացման մարզեր» տերմինը (Шеглов, 1968): Սակայն ոչ բոլոր հետադոտողներն են համաձայնվում ակտիվացման ինքնավար բնույթի կարծիքի հետ. օրինակ Մ. Ս. Նագիրինան, Անդրբայկալի կամարա-բեկորային շարժումները կապում է հարևան մեզոզոյան գեոսինկլինալներում տեղի ունեցած տեկտոնական շարժումների հետ (Нагибина, 1967):

Ներկայումս կուտակված փաստացի նյութը վկայում է, որ ակտիվացած մարզերն անպտուղ չեն և բնութագրվում են հարուստ ու յուրահատուկ մետաղածնությամբ:

Այդ մարզերի մետաղածնության բնութագրումը երբեմն տալիս են ըստ ակտիվացման երկրաբանական հասակի, առանձնացնելով մինչմեզոզոյան, մեզոզոյան ու ալպիական ակտիվացման մարզեր (Геологическое строение СССР, т. IV, 1968). սակայն, հավանաբար, ավելի նպատակահարմար է այդ նկարագրումը տալ մի փոքր այլ ձևով, առանձնացնելով ու բնութագրելով առանձին՝ 1) վահանների ու պլատֆորմների. 2) միջնազանգվածների ու 3) ծալքավորումն ավարտված մարզերի մետաղածնությունը (նկ. 33):

1. Վահանների ու նրանց պլատֆորմների ակտիվացած տեղամասերի մետաղածնությունը: Հաստատված է, որ ակտիվացման պրոցեսները յուրահատուկ մետաղածնությամբ ընդգրկում են ինչպես վահանների արխեյան-ստորին պրոտերոզոյան հիմքը, այնպես էլ նրանց վրա տեղադրված ավելի երիտասարդ ապարների ծածկոցը:



- 1 
- 2 
- 3 

- I 
- II 
- III 
- IV 
- V 

Նկ. 33—Ակտիվացած մարզեր. 1. վաճառների ու պլատֆորմների ակտիվացած մարզեր, 2. միջնազանգվածների ակտիվացած մարզեր, 3. ծալքավորումն ավարտած շարժուն ստրուկտուրաների ակտիվացած մարզեր.

Ակտիվացման պրոցեսները կապված են խոշոր բեկվածքների (լինեամենտներ, ուֆտալին զոնաներ) աշխուժացման հետ, որոնց երկայնքով տեղի է ունեցել մագմատիկ՝ ամենից հաճախ ալկալային գրանիտոիդների և ուլտրահիմքային-ալկալային, ավելի հազվադեպ՝ հիմքային-ուլտրահիմքային համալիրների ներդրումը, որոնց հետ կապված է հարուստ ու բազմազան հանքայնացում:

Ակտիվացման, մագմատիկ կոմպլեքսների ու հանքայնացման հասակը տատանվում է շատ լայն ինտերվալում՝ ուֆեից մինչև մեզո-կայնոզոյ:

Ստորև բերվում են համառոտ տեղեկություններ առանձին վահանների և նրանց պլատֆորմների ակտիվացման ու գրա հետ կապված մետաղածնութայն վերաբերյալ:

Ռ ու ս ա կ ա ն (Արևելավրոպական) վահանն ու նրա պլատֆորմը: Բեկվածքների ու բեկորային շարժումների հետ կապված ակտիվացման պրոցեսներն բազմիցս արտահայտվել են Ֆենո-Սկանդինավյան կամ Բալթիկան վահանի սահմաններում և առանձնապես լավ ուսումնասիրված են Կոլա թերակղզում. այստեղ առանձնացնում են ակտիվացման (համապատասխանաբար, մագմատիզմի ու հանքայնացման) առնվազն երեք փուլեր՝ վերինպրոտերոզոյան, միջինպալեոզոյան ու վերինպալեոզոյան:

Կոլա թերակղզու հյուսիսարևմտյան ու մասամբ կենտրոնական մասերում ակտիվացման վերինպրոտերոզոյան փուլի հետ կապված է Պեչենգայի ու Մոնչեգորսկի շրջանների ուլտրահիմքային-հիմքային կոմպլեքսների ներդրումը, պղնձա-նիկելային (կոբալտի, պլատինի, պալադիումի խառնուրդով) հանքայնացմամբ:

Միջինպալեոզոյան հասակի (բացարձակ հասակը 305—375 մլն. տ.) ակտիվացման հետ կապված է Կոլորդի, Աֆրիկանդայի, Վուրի-Յարվիի ուլտրահիմքային-ալկալային համալիրների ներդրումը ախտանամագնետիտային, ապատիտ-մագնետիտային, հազվագյուտմետաղային կարբոնատիտային ինտենսիվ հանքայնացումով, ֆլոգոպիտի ու վերմիկուլիտի հետաքրքիր հանքավայրերով:

Վերջապես, վերինպալեոզոյան (հերցինյան) փուլի ակտիվացման հետ համընկնում է Երբինի ու Լովոզերի ալկալային համալիրների ներդրումը, որոնց հետ կապված են ապատիտի ու լոպարիտային հանքանյութերի խոշոր կուտակումները: Հավանաբար, ակտիվացման պրոցեսների հետ (հասակը անհայտ է) կապված է նաև Հյուսիսային Շվեդիայի ու Կոլա թերակղզու քիմբերլիտանման ապարների ներդրումը, որոնց հետ կապված են արմաստի եզակի հայտնաբերումները սկզբածքներում. ակտիվացման երևույթների հետ պետք է կապել նաև Բալթիկան վահանի արևելյան մասում հայտնաբերված շենիտ-մոլիբդենիտային հանքանյութերի խոզովակած և հանքավայրերի ու ծարիրի ու սնդիկի երևակումների հայտնաբերումը (Ա. Գ. Շեգլովի բանավոր հաղորդումը):

Ռուսական պլատֆորմի հյուսիս-արևելքում, նրա Տիմանի և Ուրալի ստրուկտուրաների միակցութայն շրջանում ակտիվացման հետ կապված ներդրվել են ալկալային բազալտոիդների հիպաբիսալ ինտրուզիաները (հասակը վենդ-բեմբրի), որոնց հետ զուգակցվում են արմաստի ու պիրոպի երևակումները:

Հարավում, Սարմատյան (Ուկրաինա-Վորոնեժյան) զանգվածի սահմաններում նույնպես տեղի է ունեցել մի շարք տեղամասերի ակտիվացում. վահանի Վորոնեժյան տեղամասում պրոտերոզոյան ակտիվացման հետ կապված է ուլտրահիմքային-հիմքային կոմպլեքսի ներդրումը, որը ինչպես և Կոլա թերակղզում, պարունակում է պղինձ-նիկելային (կոբալտով, պլատինով, պալադիումով) հարուստ հանքայնացում: Սարմատյան զանգվածի հարավային եզրում, Մերձագոլում դարգացած է ալկալային կոմպլեքսը (նրա հասակը մոտ 1 մլրդ. տ. է, վերինպրոտերոզոյան) կարբոնատիտային ու հազվադյուտմետաղային հանքայնացմամբ: Վերջպես, Դոնբասում ու Մերձագոլի հետ նրա միակցման զոնայում կան վերինսյալեոզոյան-մեզոզոյան հասակի ակտիվացման բոլոր նշանները, ալկալիներով հարստացած անդեզիտների ներդրումը, որոնց հետ պարագենետիկորեն կապված են բազմամետաղային հանքանյութերի (Նագոլնի Կրյաժ), ծարիրի ու սնդիկի (Նիկիտովկա և ուրիշ) հանքավայրերը, ֆլյուորիտային ինտենսիվ հանքայնացում (Վոլնովախյան տարածությունը), ոսկու ու հավանաբար ալմաստի երևակումները (վերջինը հաստատված է առայժմ միայն սկվածքներում):

Ակտիվացման հետ կապված հրային ապարներում առանձնացնում են (Бутурлинов и Панов, 1959) երկու տիպեր՝ հիմքային (հասակը, հավանաբար, վերին պերմ—ստորին տրիաս) ու միջին կազմության (հասակը, հավանաբար, վերին յուրա—ստորին կավիժ):

Հանքաներևակումները հարում են երկրորդ տիպի ապարներին ու սերտորեն կապված են ալկալիներով հարստացած միջին կազմության ապարների հետ (տրախիանդեզիտներ, անդեզիտային պորֆիրներ, անդեզիտներ, դիորիտային պորֆիրիտներ), որոնցում քիմիական անալիզներով հաստատված են սնդիկի խիստ բարձր պարունակություններ:

Ռեզիոնի հանքավայրերը՝ սնդիկ-ծարիրային (Նիկիտովկա), բազմամետաղային (Նագոլնի Կրյաժ), ոսկու երևակումները (Օստրոգո Բուզրա և այլն) հավանաբար վերին յուրայի—ստորին կավձի հասակի են: Ինչ վերաբերում է Վոլնովախա զոնայի ֆլյուորիտային հանքայնացմանը, ապա նրա հասակը համարվում է վերինսյալեոզոյան (Скаржинский, 1968, 1971):

Սիբիրական վահանն ու նրա պլատֆորմը: Ակտիվացման պրոցեսները հատկապես լավ արտահայտված են Ալդանյան վահանի սահմաններում, նրա հարավային մասում, որտեղ վերին յուրայի—ստորին կավձի դարաշրջանի ակտիվացման ու կամարա-բեկորային շարժումների հետ կապված են Ստանովոյ լեռնաշղթայի գրոնիտոիդային ու Ալդանյան ալկալային համալիրները:

Ստանովոյ լեռնաշղթայի թթու գրանիտոիդների հետ կապված են մոլիբդենի, բազմամետաղային հանքանյութերի ու ոսկու բազմաթիվ հանքավայրերը, իսկ Ալդանյան կոմպլեքսի ալկալային ինտրուզիաների հետ՝ ոսկու նշանակալից կուտակումներ (Լեբեդինսկի հանքավայրը) ու ֆլյուորիտ:

Ալդանյան վահանի սահմաններում տեղի է ունեցել նաև ավելի հին պրոտերոզոյան ակտիվացում, որն արտահայտվել է ուլտրահիմքային-ալկալային ապարների ինտրուզիաներով (Ինագլի, Կոնդեր) և նրանց հետ կապված հազվագյուտմետաղային կարբոնատիտներով, տիտանամագնետիտով ու պլատինով (վերջինը օղակային ինտրուզիաների կենտրոնական մասերի դու-

նիտներում): Պրոտերոզոյան ու գուցե ավելի երիտասարդ ակտիվացման պրոցեսներն ընդգրկել են նաև Ենիսեյան լեռնաշխարհի հին դանդախածը, որտեղ գրանիտային ինտրուզիաների հետ կապված են ոսկու և ծարիրի նշանակալից հանքավայրերը, ինչպես նաև անագի, վոլֆրամի, սնդիկի երևակումները:

Վերինպալեոզոյան ու զլխավորապես մեզոզոյան ակտիվացման հետ, որը լայն ընդգրկել է Սիբիրական պլատֆորմը, պետք է կապել տրապային ֆորմացիայի ուլտրահիմքային-ալկալային ինտրուզիաների Մալմեչա-կոտուի կոմպլեքսի (Գուլինյան և ուրիշ ինտրուզիաները պլատֆորմի հյուսիսում) ու քիմբերլիտների ներդրումը:

Տրապային ֆորմացիայի դաբրո-դիաբազների հետ սերտորեն կապված են Նորիլսկ ու Տալնախ պղինձ-նիկելային (կոբալտով, պլատինոդներով) հանքավայրերը, ուլտրահիմքային-ալկալային ինտրուզիաների հետ՝ կարբոնատիտները հազվագյուտ մետաղներով, ապատիտով ու ֆլոգոպիտով, քիմբերլիտների հետ՝ ալմաստը:

Ենիսեյան-Չադրեցյան մարզում ակտիվացումը տեղի է ունեցել երկու անգամ՝ դեռնում ու մեզոզոյում և, համապատասխանաբար, երկու տարբեր հասակի են նաև քիմբերլիտներն ու նրանց հետ կապված ալմաստի հանքավայրերը:

Չինա-Կորեական վահանն ու նրա պլատֆորմը: Չինաստանի հյուսիս-արևելյան մասի ու Կորեայի տարածքում, իսկ առավել ուժեղ Հարավարևելյան Չինաստանում, արտահայտվել են վերին յուրային-ստորին կալմի հասակի ակտիվացման պրոցեսները, որոնք ուղեկցվել են կամարաբեկորային շարժումներով ու Յանշանյան գրանիտների ներդրումով: Վերջինների հետ կապված են վոլֆրամի, անագի, ծարիրի, ինչպես նաև բազմամետաղային հանքանյութերի, ոսկու, սնդիկի (սնդիկի հանքավայրերի մի մասը կապված է ավելի երիտասարդ երրորդական մագմատիզմի հետ) խոշորագույն հանքավայրեր:

Հարավային Չինաստանում ու Ծանդուն թերակղզում վաղ մեզոզոյան հասակի ակտիվացման հետ կապված է քիմբերլիտների ներդրումը, որոնց հետ զուգահեցվում է ալմաստը (սկվածքներում):

Կանադական վահանն ու պլատֆորմը նույնպես ենթարկվել են ուժեղ, իսկ հետագայում մեզոզոյան հասակի ակտիվացման պրոցեսների զղղեցույթները: Հավանաբար, ուժեղյան ակտիվացման հետ կապված է Կանադայի հյուսիս-արևմուտքի արխեյան հիմքում տեղադրված ուրանային հանքավայրերի մի մասը՝ (հանքայնացման հասակը 600 մլն. տ. է):

Գրենվիլ մարզում արտաօրոգեն նեֆելինային սիենիտների ու բազիտների-ուլտրաբազիտների ներդրման հետ կապված են կարբոնատիտային հանքավայրերը նիոբիումային հանքայնացումով: Մոնրեալ քաղաքի մոտ հայտնի է Օկա խոշոր կարբոնատիտային հանքավայրը նիոբիումի, հազվագյուտ հողերի, ուրանի ու ապատիտի հանքայնացումով, որի բացարձակ հասակը 95 մլն. տ. է: Մոտավորապես նույն հասակի է հայտնի Մաունտին-Պաս կարբոնատիտային հանքավայրը (ԱՄՆ, Կալիֆոռնիա) բաստնեզիտային հանքանյութերի խոշոր պաշարներով: Մեզո-կալնոզոյան ակտիվացման հետ (բացարձակ հասակը 50—55 մլն. տ.) անկասկած կապված են ալմաստաբեր քիմբերլիտային Պայկ խողովակիկները (ԱՄՆ, Արկանզաս) ու հնարա-

վոր է, որ մոտավորապես նույն հասակի ակտիվացման հետ կապված է ԱՄՆ-ում Կոլորադո սարահարթի կապար-ցինկային և ուրանային հանքայնացումը:

Աֆրիկա-Արաբական վահանն ու նրա պլատֆորմը Աֆրիկական վահանի մետաղային հարստությունների զգալի մասն ու առաջին հերթին հաղվազյուտմետաղային պեգմատիտների ու կարբոնատիտների խոշորագույն հանքավայրերը, ինչպես նաև արևմտի համաշխարհային նշանակության հանքավայրերը կապված են ակտիվացման պրոցեսների հետ, որոնք տեղի են ունեցել բազմիցս ուֆեյից մինչև մեզոկայնոզոյ: Աֆրիկայի ու Արաբական թերակղզու ակտիվացած մարզերը ձգտում են խորքային բեկվածքների զոնաներին, որոնց թվում ամենակարևոր դերն են խաղում ուֆոտային ստրուկտուրաները՝ գրաբեններն ու հորստերը, որոնք Կարմիր ծովի երկայնքով շարունակվում են այստեղից դեպի հարավ՝ Մոզամբիկ ու Մադագասկար կղզին, կաղմելով Արևելա-Աֆրիկական Մեծ բեկվածքների զոնան: Կարևոր դեր է խաղում նաև բեկվածքների երկրորդ զոնան, արդեն մայրցամաքի արևմտյան մասում, որը ձրգվում է Սահարայի Տուարեզյան վահանից ու Տիբեստի դանգվածից Նիգերիայով ու այստեղից դեպի հարավ Կամերունյան խրամի երկայնքով: Արխեյան-պրոտերոզոյան վահանի հիմքում հիմնադրված այդ հին խորքային բեկվածքների ակտիվացման պրոցեսները սկսում են դեռ ուֆեյում-ստորին քեմբրիում և նորից վերսկսվում են դեռևս, մեզոզոյում ու երրորդական ժամանակաշրջանում. այդ բեկվածքների զոնաներում տեղայնացված են ալկալիներով հարստացած զրանիտոիդների, ինչպես նաև օղակային ուլտրահիմքային-ալկալային կոմպլեքսները ու քիմբերլիտները:

Գրանիտոիդների հետ կապված են հազվագյուտմետաղային պեգմատիտներ բերլիլ-տանտալ-նիոբիում-լիթիումային հանքայնացումով ու ալբիտիտային հանքավայրեր կասիտերիտ-կոլումբիտային հանքայնացումով, որոնք կազմում են Արևելյան Աֆրիկա-Մադագասկարյան ու Նիգերիա-Սահարյան արդյունաբերական մեծ նշանակություն ունեցող գոտիներ:

Նշված զրանիտոիդների ու նրանց հետ կապված հանքավայրերի հասակը գտնվում է 600—480 մլն. տ. ինտերվալում, որը համապատասխանում է ուֆեյին-քեմբրին:

Արևելա-Աֆրիկական Մեծ բեկվածքի երկայնքով, Արևելյան ու Կենտրոնական Աֆրիկայի երկրներում բազմիցս տեղի է ունեցել ուլտրահիմքային-ալկալային օղակաձև ինտրուզիվ կոմպլեքսների ներդրումը, որոնց հետ կապված են հազվագյուտմետաղային կարբոնատիտների խոշորագույն հանքավայրեր (նիոբիումային, հաղվազյուտհողային, ուրանային հանքայնացումով), որոնք ձևավորվել են ուֆեյից մինչև երրորդական ժամանակաշրջանը ներառյալ:

Հարավ-Աֆրիկական հանրապետության ու մասամբ Հարավային ու Հարավարևմտյան Աֆրիկայի ուրիշ երկրների տարածքում լայն զարգացած են քիմբերլիտները արևմտի հայտնի հանքավայրերով. քիմբերլիտների բացարձակ հասակը գտնվում է նեղ հասակային ինտերվալում՝ 51—55 մլն. տ., հավանական է նաև ավելի հին քիմբերլիտների առկայությունը (Ջաիրում, Գանայում, Գվինեայում), այնուամենայնիվ, բոլորը կապված են ակտիվացման պրոցեսների հետ:

Շատ երիտասարդ երրորդական հասակի ակտիվացման պրոցեսների հետ

Տավանաբար կապված են վահանի Արաբական մասի ոսկու հանքավայրերը՝ Հորդանանի սահմանի մոտ, Իրաքի տարածքում, Սաուդական Արաբիայում, Մեքքայի ու Մեդինայի միջև ու Եմենի կենտրոնական մասում: Այդ շրջանների արմատական հանքավայրերն ու գլխավորապես ցրոններն ապահովում են տարեկան 1—2 տ. ոսկու հանույթը:

Հ ն դ կ ա կ ա ն վ ա հ ա ն ն ու ն ը ա պ լ ա տ ֆ ո Ր մ ը: Ակտիվացման պրոցեսները տեղի են ունեցել Հյուսիսային Հնդկաստանում՝ Ռաջմահալի շրջանում արևելքում մինչև Ռևա ու Պանա՝ արևմուտքում, արտահայտվելով կամարա-բեկորային շարժումներով ու միջին յուրայի հասակի պերիոդոտիտների ու ռոլերիտների դայկանների ներդրումով:

Պանա ալմաստաբեր շրջանում հայտնի են ակտիվացման հետ կապված քիմբերլիտային խողովակիկներ:

Կավճի-էոցենի հասակի ակտիվացման պրոցեսների հետ կապված են Դեկանյան տրապների արտավիժումներն ու նրանց հետ ղուգակցվող հիմքային ու ուլտրահիմքային-ալկալային ապարների ներդրումը (կարբոնատիտների երևակումներով):

Ա Ր Ե մ տ ա ա վ ս տ Ր ա լ ի ա կ ա ն վ ա հ ա ն ն ու ն ը ա պ լ ա տ ֆ ո Ր մ ը: Այդ վահանի ակտիվացման պրոցեսները վատ են ուսումնասիրված. հավանաբար ռիֆեյան հասակի ակտիվացման հետ կապված է վահանի հարավարևմտյան մասում Պերտ քաղաքի շրջանում, բազիտների-ուլտրաբազիտների ներդրումը, որտեղ նրանց մեջ տեղադրված են լիվլացիտն պղինձ-նիկելային (կոբալտի ու պլատինոիդների խառնուրդով) հանքանյութերի խոշոր հանքավայրեր: Առնհեմ թերակղզում հնարավոր է, որ ակտիվացման պրոցեսների հետ կապված է վահանի հյուսիսային մասի ուրանի հանքավայրերի մի մասը (Ռամ-Ջանգլ հանքադաշտը խեժա-սուլֆիդային պղինձ-ուրանային հանքանյութերով) և պղնձի ու կապարի որոշ ուշապլեոզոյան հանքանյութերի հանքավայրեր (Պայն-Գրիկ ու Կարպանտուն հանքային մարզերում):

Գ վ ի ա ն ա կ ա ն վ ա հ ա ն ն ու ն ը ա պ լ ա տ ֆ ո Ր մ ը: Այստեղ ակտիվացման պրոցեսներն արտահայտվել են ստորին պրոտերոզոյում. նրանց հետ կապված են այսպես կոչված «երիտասարդ» Կարիբյան գրանիտները (ներդրվել են երկու փուլում՝ 2200 ու 1900 մլն. տ. բացարձակ հասակով), որոնց հետ ղուգակցվում են հազվագյուտմետաղային պեզմատիտների ու ոսկու հանքավայրերը:

Բ Ր ա ղ ի լ ա կ ա ն վ ա հ ա ն ն ու ն ը ա պ լ ա տ ֆ ո Ր մ ը: Ընդլայնվում է ակտիվացման ռիֆեյան, ստորին դեոնի ու մեզոկայնոզոյան փուլերի ինտենսիվ զարգացմամբ: Ակտիվացման պրոցեսները զարգանում են գլխավորապես Սան-Ֆրանցիսկո ու Արգենտինյան լինեամենտների երկայնքով, որոնք հիմնվել են հին արխեյան հիմքում և ուղեկցվել են ռիֆեյան (բացարձակ հասակը 550 մլն. տ.) ու ստորին դեոնյան (բացարձակ հասակը 360 մլն. տ.) գրանիտոիդների ներդրումով. Սան-Ֆրանցիսկո լինեամենտի երկայնքով ներդրվել են նաև ուլտրահիմքային-ալկալային մեզոկայնոզոյան (բացարձակ հասակը 147—110 մինչև 133—51 մլն. տ.) կոմպլեքսները: Գրանիտոիդների հետ սերտ կապված են Մինաս-ժերաիս նահանգի, Բորբորեմա սարահարթի ու Բոլիվիա-Արգենտինյան գոտու հազվագյուտմետաղային

պեզմատիտների խոշոր դաշտերը՝ տանտալի, նիոբիումի, բերիլիումի ու լիթիումի հսկայական կոտակումներով, որոնք շատ նման են Աֆրիկական վահանի նույն հասակի (ոիֆեյ ու դեոն) հազվագյուտմետաղային պեզմատիտներին:

Ուլտրահիմքային-ալկալային, զլխավորապես մեզոզոյան հասակի կոմպլեքսների հետ կապված են հազվագյուտմետաղային կարբոնատիտների խոշոր կոտակումները՝ նիոբիումային (պիրոքլորային), ցիրկոնային, հազվագյուտհողային և մասամբ ուրան-թորիումային հանքայնացումով: Այստեղ հայտնի են այնպիսի խոշոր հանքավայրեր, ինչպիսիք են Բարեյրու-դի-Արաշա (հանքայնացման բացարձակ հասակը 133—51 մլն. տ.) ու Պոսու-դի-Կալդաս (բացարձակ հասակը 147—110 մլն. տ.), կարբոնատիտների ինտրուզիվ բնույթով, որոնք առաջացման պայմաններով ու կազմով շատ նման են Աֆրիկայի կարբոնատիտներին: Բրազիլիայի կարբոնատիտային հանքավայրերը ձգտում են զլխավորապես Սան-Ֆրանցիսկոյի լինեամենտին:

Մինաս-ժերաիս մարզի արևմտյան մասում մեզոզոյան ակտիվացման հետ կապված են արմատաբեր քիմբերլիտները:

Անտարկտիկական վահանն ու նրա պլատֆորմը նույնպես չեն խուսափել ակտիվացման պրոցեսների վերադրումից, որն այստեղ արտահայտվել է առավել ինտենսիվորեն միջին-վերին պալեոզոյի ու տրիաս-յուրայի ժամանակաշրջաններում:

Միջին-վերին պալեոզոյի ակտիվացման պրոցեսների հետ կապված է գրանիտների-գրանոդիորիտների ու դոլերիտների դակլանների ներդրումը. տրիաս-յուրայի ակտիվացումն արտահայտված է տրասպային ֆորմացիայով, որը ընդգրկում է գաբրոնորիտների ինտրուզիաներ և նրանց մեջ տեղադրված պղինձ-նիկելի լիկվացիոն խոշոր հանքավայրերը: Միջին-վերին պալեոզոյի գրանիտների հետ զուգակցվում են հազվագյուտմետաղային պեզմատիտները և ուրանային հանքանյութերի որոշ երևակումները:

Գեոկա ստույգ չի մեղոզոյան ու պլեյի հին արմատաբեր քիմբերլիտների և ուլտրահիմքային-ալկալային կարբոնատիտների համալիրի արտահայտումը:

2. Ակտիվացած միջնազանգվածների մետաղածնությունը: Միջնազանգված (срединный массив) տերմինի ու նրա մետաղածնության առանձնահատկությունների մասին միասնական և ընդունված բացատրություն առայժմ չկա:

Ըստ Յանշինի, (Яншин, 1965) «Միջնազանգվածները» Երկրի կեղևի կայուն տեղամասեր են, որոնք պահպանել են պլատֆորմի կամ նրան մոտ գարգացման բնույթ, այն դեպքում, երբ նրանց շուրջը ձևավորվում էին գետտինկլինալներ. դա այն ստրուկտուրային մակերեսի մնացորդներն են, որի վրա ծագել են տվյալ ծալքավոր մարզի գետտինկլինալային իջվածքները: Նույն հեղինակի իրավացի կարծիքով, միջնազանգվածը ոչ միայն ստրուկտուրային, այլև պատմա-երկրաբանական, ավելի ստույգ, պալեոտեկտոնական հասկացություն է:

Միջնազանգվածների մետաղածնային դերն ու նրանց հանքայնացման առանձնահատկությունները ըննարկել են մի շարք հեղինակներ՝ Զախարովը (Захаров, 1959), Ռադկևիչը (Радкевич, 1960, 1965), Սմիրնովը (Смирнов, 1961), Իցիկսոնը (Ициксон и др., 1963), Աբդուլաևը և Բորիսովը (Абдуллаев,

Борисов, 1963), ՏվալՇրելիձեն (Твалчрелидзе, 1964), Իովչև (Иовчев, 1965), Սատտրան (Sattran, Саттран, 1966), Շիլդհիմ (Шлыгин, 1968), Լաֆիտտ (Лафитт, 1969) և ուրիշները: Միջնազանգվածների հանքայնացման առանձնահատկությունների ու նրա նշանակության ամենալրիվ բնութագիրը բերված է Շչեգլովի գրքում (Щеглов, 1971):

Միջնազանգվածների մետաղածնության յուրօրինակությունը ընդգծել են Հ. Մ. Աբդուլաևը ու Օ. Մ. Բորիսովը, նշելով, որ միջնազանգվածները հանքայնացման բնույթով անցողիկ են պլատֆորմների ու գեոսինկլինալների միջև: Այդ հետազոտողների կողմից առանձնացված են միջնազանգվածների հերթ հանքա-պետրոգրաֆիակաան մարդերի տիպեր՝

ա) Միջնազանգվածներ սուբպլատֆորմային նստվածքային ծածկոցով, մագմատիզմի շնչին արտահայտումներով և ուրանի, պղնձի, ոսկու, ֆլուորիտի, կապարի, ու ցինկի ցածր ջերմաստիճանային հանքայնացումով (օր.՝ Կոլորադոյի ու Իրանա-Աֆղանստանի զանգվածները):

բ) Միջնազանգվածներ, որոնք բնութագրվում են սուբգեոսինկլինալային պարզացման պայմաններով. այդ տիպում հիմնական հանքայնացումը կապար-ցինկային, պղնձային, սկանդիումային երկաթաբեր և ավելի հազվադեպ հազվադյուտմետաղայինն է (օր.՝ Տրանսիլվանյան ու Հարավ-Գիսարյան զանգվածները):

դ) Միջնազանգվածներ, որոնք բնութագրվում են սուբգեոսինկլինալային պարզացման պայմաններով և գրանիտոիդների ներդրումով, որոնք ուղեկցվում են հիմնականում հազվադյուտմետաղային հանքայնացումով (օր.՝ Բուրեինյան, Խանկայան, Բոհեմյան, Կենտրոնական Ֆրանսիական և ուրիշ զանգվածները):

վ. Ի. Սմիռնովը (1961) միջնազանգվածներին վերադրում է ուժեղ կամ թույլ ծալքավորված հին ապարների խոշոր բեկորները, որոնք տեղադրված են ավելի երիտասարդ ծալքավոր զոնաներում: Նրանց մեջ կարող են տեղադրված լինել հերթ փուլերի էնդոգեն հանքավայրեր՝

1. հին, մինչ այն երկրաբանական ցիկլի հանքայնացումը, որի հետևանքով առաջացել է միջնազանգվածը պարունակող ծալքավոր շրջանը:

2. տվյալ ծալքավոր շրջանի մետաղածնային դարաշրջանին համապատասխանող:

3. երիտասարդ, վերագրված, կապված միջնազանգվածների ռեզեներացիայի (ակտիվացման՝ ըստ Ա. Գ. Շչեգլովի) հետ: Վ. Ի. Սմիռնովի ուսումնասիրությունների համաձայն միջնազանգվածների հանքաբերության ու նրան համապատասխանող ծալքավոր շրջանի հանքայնացման բնույթի տեսակետից անհրաժեշտ է առանձնացնել երկու տեսակի զանգվածներ, Առաջինները տեղադրված են գեոսինկլինալների ներքին զոնաներում և մտնում են առանցքային բարձունքների կազմի մեջ. գեոսինկլինալի լայնակի կտրվածքում նրանք գրավում են կենտրոնական դիրք:

Երկրորդ տեսակի միջնազանգվածներն ընդգծված են գեոսինկլինալային օղակում և ներկայացնում են ալդայիսի փակ գեոսինկլինալների կողային մասը. այդ զանգվածները գեոսինկլինալի լայնակի կտրվածքի նկատմամբ գրավում են եզրային դիրք: Առաջին ու երկրորդ տեսակի միջնազանգվածների մագմատիզմն ու մետաղածնությունը տարբեր են:

Առաջին տեսակի զանգվածների համար, որոնք մտնում են առանցքային միջնաբարձուքների կազմի մեջ, հատուկ են մազմատիզմն ու ներծին հանքավայրերը: Այստեղ բնորոշ են լեյզոկրատային գրանիտները, որոնց հետ զուգակցվում են գրեյզենային ու բարձր ջերմաստիճանային հիդրոթերմալ հանքավայրերի սերիա՝ անագի, վոլֆրամի, մոլիբդենի, բերիլի, լիթիումի և ուրիշ կուտակումներով: Այդ տեսակի միջնազանգվածների տիպիկ օրինակ է Արեւիելյան Անդրբայկալի քիմերյան գեոսինկլինալի Ազինյան զանգվածը. այդ նույն տեսակին են վերագրվում Արեւմտյան Եվրոպայի հերցինյան գեոսինկլինալի միջնազանգվածները (Մեսետա, Բոհեմյան, Արմորիկյան, Կենտրոնական Ֆրանսիական և ուրիշներ), որոնց բնորոշ են գրեյզենային ու բարձր ջերմաստիճանային քվարց-կասիտերիտային և քվարց-վոլֆրամիտային հանքավայրեր, տեղ-տեղ վերադրված ուրանի, ծարիրի, կապարի ու ցինկի, Ֆլյուորիտի ցածր ջերմաստիճանային ավելի ուշ հանքայնացումով: Ինչպես նշում է Ն. Ն. Զախարովը (1957) հերցինյան ծալքավոր առաջացումներում տեղադրված Արեւմտյան Եվրոպայի այդպիսի միջնազանգվածների մեծ մասի բնորոշ առանձնահատկությունն է նրանց մետաղածնային բնույթի արտասովոր նմանությունը:

Երկրորդ տեսակի զանգվածները, որոնք զոտնորված են գեոսինկլինալով ու նրա լայնակի կտրվածքի նկատմամբ գրավում են եզրային դիրք, փաստորեն ներկայացնում են գեոսինկլինալային հատակի կողերից մեկի գեոանտիկլինալային շրջանակը: Շատ հաճախ այդպիսի զանգվածների տարածքում բացակայում է նրան եզրապատող գեոսինկլինալների սինխրոն հանքայնացումը: Այդպիսի զանգվածների տիպիկ օրինակներ են Սովետական Միության արեւելյան շրջանների քիմերյան ծալքավոր մարզի Բուրեինյան ու Կոլիմյան զանգվածները, արտասահմանյան միջնազանգվածներից՝ ԱՄՆ-ի Կորդիլիերների քիմերյան ծալքավոր զոնայի Կոլորադո սարահարթը: Երկրորդ տեսակի միջնազանգվածներում, ծալքավոր շրջապատման սինխրոն հանքավայրերի բացակայութան դեպքում, եզրերում մշտապես դիտվում է հանքավայրերի մեծ կուտակում, ընդ որում երբեմն հանքայնացումը ներթափանցում է նաև միջնազանգվածների եզրային գոտին:

Հստ Ա. Գ. Շչեգոլովի (1971) միջնազանգվածների մեջ պարզորոշ առանձնացվում են երեք խոշոր փուլեր:

Առաջին փուլը կապված է զանգվածի բյուրեղային հիմքի առաջացման հետ, որը սովորաբար կազմված է արխեյի ու պրոտոերոզոյի ապարներից, իսկ Բայկալյան հասակի ծալքավոր մարզերում՝ միայն արխեյի ապարներից: Հազվադեպում այդ նույն փուլին պատկանում է պլատֆորմային նստվածքային ծածկոցի առաջացումը, որը ծածկում է մինչքեմբրյան հիմքը (Կոլորադո սարահարթը, Տարիմյան զանգվածը): Միջնազանգվածների էվոլյուցիայի երկրորդ փուլը պայմանավորված է այն ռեգիոնների գեոսինկլինալային զարգացումով, որոնց սահմաններում տեղադրված է այս կամ այն զանգվածը. զանգվածներից շատերը բազմիցս ենթարկվում են գեոսինկլինալային պրոցեսների ազդեցութանը, որը ներկայացված է տարբեր հասակի գեոսինկլինալային ձկվածքների զարգացմամբ (Բոհեմյան, Բուրեինյան և ուրիշ զանգվածներ): Միջնազանգվածների զարգացման երրորդ փուլը կապված է ինքնավար ակտիվացման հետ և կախված չէ հարեան տարածություններում

գեոսինկլինալային ճկվածքների ձևավորումից: Ակտիվացման պրոցեսները միջնազանգվածներից շատերում (Բոհեմյան, Բուրեինյան, Ռոդոպյան) ընթացում են երկու փուլով:

Առաջին փուլում գոյանում են զառիկող ճկվածքներ, լցված կոնտինենտալ հրաբխային բեկորային ֆորմացիաներով. լայն տարածված են թթու կամ հիմքային, երբեմն ալկալային էֆուզիվները, տարբեր կազմության ճեղքային սուբհրաբխային ինտրուզիաները:

Ակտիվացման երկրորդ փուլը բնութագրվում է վերադրված տերիզեն իջվածքների գոյացմամբ, որոնք լցված են խոշոր բեկորային, հաճախ ածխաբեր նստվածքներով: Ինքնավար ակտիվացման ամենաինտենսիվ պրոցեսներն արտահայտվել են միջնազանգվածներում, որտեղ մինչքեմբրյան ծալքավոր կառուցվածքները մերկացած են: Նրանք արտահայտված են յուրահատուկ կամարա-բեկորային տեկտոնական ձևերով, ճեղքային մագմատիզմով ու սպեցիֆիկ ներծին հանքայնացմամբ:

Արևմտաեվրոպական միջնազանգվածները (Բոհեմյան, Կենտրոնական Ֆրանսիական, Արմորիկյան, Վերին Հոենոսի և ուրիշ.), բնութագրվում են զարգացման ինքնուրույնությամբ (ինքնավարությամբ), հերցինյան կամ ալպիական գեոսինկլինալային ճկվածքներից անկախ: Նույն տիպին են դասվում Ռոդոպյան միջնազանգվածը, Թուրքիայի ու Իրանի զանգվածները, Բուրեինյան ու Խանկայան զանգվածները Սովետական Միության, արևելքում:

Ինքնավար ակտիվացման պրոցեսների դրսևորումն ու նրա հետ կապված մետազանգվածները խստիվ տարբերում է միջնազանգվածները նրանց շրջապատող ծալքավոր շրջաններից (Щеглов, 1971), որոնցում միայն հազվադեպ գեոսինկլինալների կողային մասերում ծագում են անդրադարձած ակտիվացման պրոցեսները:

Քանի որ Ա. Դ. Շչեգլովի գիրքը նվիրված է միջնազանգվածների մետազանգվածային, հետևապես ստորև բերում ենք միայն միջնազանգվածների մետազանգվածային առանձնահատկությունների համառոտ բնութագրումը, որոնք միաժամանակ կրում են Երկրի կեղևի երեք զլխավոր ստրուկտուրային էլեմենտների՝ վահանների-սլաբների, գեոսինկլինալային ծալքավոր զոնաների ու ինքնավար ակտիվացած շրջանների հանքայնացումը:

Զանգվածները նկարագրված են տարբեր մանրամասնությամբ (աժելի մանրամասն Բոհեմյան ու Կենտրոնական Ֆրանսիականը, որոնց մասին գոյություն ունի հարուստ գրականություն և միևնույն ժամանակ հեղինակին հաջողվել է դիտել այդ շրջանները) ու որոշակի հերթականությամբ՝ սկզբում պրոտերոզոյան գեոսինկլինալային, ապա պալեոզոյան գեոսինկլինալային, վերջում մեզոկայնոզոյան միջնազանգվածները:

Պրոտերոզոյան գեոսինկլինալային մարզերի միջնազանգվածների շարքին են դասվում Բայկալյանն ու Մուլայինը, տեղադրված Բայկալյան լեռնային երկրում: Երկու զանգվածներն էլ կազմված են արխեյան կոմպլեքսից, որը եզրապատված է պրոտերոզոյի ու քեմբրի գրանիտոիդներով ներգրված ծալքավոր ստրուկտուրաներով: Զանգվածների սահմաններում հայտնի են Ֆլո-գոպիտի, գրաֆիտի, հազվագյուտմետաղային պեղմատիտների հանքավայրեր. արևմուտքից արխեյան ստրուկտուրաները եզրապատված են Կելյան հանքային զոնայով, սնդիկի՝ հավանաբար մեզոզոյան հասակի հանքավայ-

բերով ու երևակումներով (ձգտում են երիտասարդ բեկվածքներին), որոնք կապված են ակտիվացման հետ:

Պալեոգոյան ծալքավոր գոտիների միջնազանգվածները ներկայացված են մինչքեմբրյան ապարների բլոկներով, շրջապատված կալեդոնյան կամ հերցինյան ծալքավոր ստրուկտուրաներով: Կալեդոնյան ստրուկտուրաների սահմաններում տեղադրված են Հարավ-Գիսարյան, մի շարք արևմտաեվրոպական գանգվածներ, ինչպես նաև Տարիմյան գանգվածի զգալի մասը (նրա մյուս՝ ավելի փոքր մասը շրջապատված է ուշկալեդոնյան ծալքավոր ստրուկտուրաներով):

Կոկչետավյան գանգվածը տեղադրված է Ղազախստանի կալեդոնյան ծալքավոր մարզի հյուսիսում ու կազմված է մինչքեմբրյան մետամորֆիկ ապարներից: Արևելքից ու արևմուտքից գանգվածը սահմանափակված է կալեդոնյան գեոսինկլինալային ճկվածքով, հարավից՝ միջին-վերին-պալեոգոյան իջվածքով, իսկ հյուսիսում ծածկված է մեզոկալցոգոյան նրստվածքներով:

Ըստ Ն. Գ. Շլիգինի (1968), դարգացման մինչքեմբրյան փուլում ձևավորվել են երկաթի ու գրաֆիտի մետամորֆոզեն ոչ մեծ հանքավայրեր, ոսկու, պղնձի, բազմամետաղային հանքանյութերի երևակումներ: Կալեդոնյան ճրկվածքներից անդրադարձած տեկտոնա-մագմատիկական ակտիվացման պրոցեսների հետևանքով ներդրվել են պերիդոտիտ-պիրոքսենիտ-նորիտային գանգվածներ պլատինոիդներին բնորոշ լիկվացիոն տիպի պղինձ-նիկելային հանքայնացումով: Փոքր-ինչ ուշ տեղի է ունեցել ուլտրահիմքային-ակալային կոմպլեքսների ներդրումը, որոնց հետ զուգակցվում են կարբոնատիտների, ֆլուոպիտի ու վերմիկուլիտի ոչ մեծ հանքավայրեր:

Ուշկալեդոնյան ժամանակաշրջանում տեղի է ունեցել զրանիտոիդային ապարների խոշոր բաթոլիտների ներդրումը (Ջերենդինյան դիորիտների-գրանոդիորիտների կոմպլեքսի երկաթի, կապարի ու ցինկի, ոսկու ոչ մեծ հանքավայրերով). մի փոքր ավելի ուշ ներդրվում է Բորովյան բիոտիտային ու լնչկոկրատ անագաբեր զրանիտների համալիրը, իսկ ավելի ուշ (դեոնյան)՝ տեղադրվում են ակալի գրանիտոիդները, որոնք ավարտում են կալեդոնյան գեոսինկլինալային մարզի զարգացումը ու բնութագրվում են տանտալա-նիոբիումային հանքանյութերի կուտակումներով: Զանգվածի հարավային եզրում, ուշ դեոնում, բեկվածքների երկայնքով ներդրվում են բարդ ինտրուզիվ-հրաբխածին կոմպլեքսներ հտորոգեն մոլիբդենային հանքայնացումով:

Արևելա-Ալթայյան գանգվածը տեղադրված է Ալթայա-Սայանյան ծալքավոր մարզի հարավարևմտյան մասում. գանգվածի հիմքը կազմված է պրոտերոզոյի մետամորֆիկ ապարներից, որոնց հարում են սիլիմանիտի ու փայլարաբեր պեգմատիտների կուտակումները: Շրջապատող կալեդոնյան գեոսինկլինալների զարգացման կապակցությամբ գանգվածը խորքային բեկվածքների սիստեմներով ջարդված է բլոկների ու ներդրված քեմբրյան հիպերբազիտներով ու գաբրոներով, քրոմիտի, մագնետիտի, ասբեստի հանքաբեռակումներով: Սիլուրում տեղի է ունեցել ճեղքային զրանիտ-զրանոդիորիտային ֆորմացիայի գանգվածների ներդրումը մոլիբդենի ու վոլֆրամի ոչ մեծ երևակումներով, իսկ դեոնում՝ բարդ կազմութային (գաբրոից մինչև գրանիտներ) ճեղքային ինտրուզիաների ներդրումը, որոնց հետ

զուգակցվում են տիտանամագնետիտի, նիկելի ու կոբալտի երևակումներ: Ընդ պալեոզոյում-մեզոզոյում տեղի է ունենում հարավից ու արևմուտքից զանգվածը սահմանափակող բեկվածքների ակտիվացում. այդ խզումային խախտումների զոնաներին (Կուրայի ու Տելեցկի) հարում են սնդիկի բազմաթիվ հանքավայրեր, այդ թվում բավականին հայտնի Ակտաշյան հանքավայրը: Ենթադրվում է, որ սնդիկային հանքայնացումը պարագենետիկորեն զուգակցվում է մեզոզոյան ակալային բազալտոդիորեի դալկաների հետ, որոնց ծագումը վերագրվում է հիմքային բազալտային մագմաների ենթակեղևի օջախներին:

Մանգեկենյան զանգվածը տեղադրված է Արևելյան Տուվայում, Մոնղոլական Ժողովրդական Հանրապետության սահմանում: Զանգվածի հիմքը կազմված է պրոտերոզոյան հասակի մետամորֆիկ կոմպլեքսից և ուլտրահիմքային ու թթու ինտրուզիվներից: Զանգվածը ելրապատված է բեկվածքների խոշոր զոնաներով, որոնք նրան անջատում են կալեդոնյան ծալքավոր ստրուկտուրաներից:

Մինչքեմբրյան մետամորֆիկ կոմպլեքսի հետ կապված են մագնետիտահեմատիտային հանքանյութերի մետամորֆոզեն հանքավայրեր, իսկ պրոտերոզոյան ինտրուզիվների հետ՝ փայլարաբեր պեզմատիտներ (գրանիտների հետ) ու ասբեստ (հիպերբազիտների հետ): Զանգվածի ելրային մասերում ուշ քեմբրում ձևավորվում են գաբրո-պլագիոգրանիտային ֆորմացիայի ինտրուզիաները, որոնց հետ զուգակցվում են ոսկու բարձր ջերմաստիճանային հիդրոթերմալ հանքաներևակումներ: Վերին պալեոզոյում-ստորին մեզոզոյում տեկտոնա-մագմատիկական ակտիվացման պրոցեսների կապակցությամբ խախտման զոնաների երկայնքով ներդրվում են ակալային ինտրուզիաներ, որոնց հետ կապված են ակալային պեզմատիտներն ու ալբիտիտները հազվագյուտմետաղային հանքայնացումով:

Այսպիսով, զանգվածի զարգացման համար առանձնացվում են նույն երեք ժամանակաշրջանները, որոնք բնորոշ են միջնազանգվածների ճնշող մեծամասնության համար: Առաջինը կապված է զանգվածի մինչքեմբրյան հիմքի ձևավորման հետ և նրա համար բնորոշ են երկաթի մետամորֆոզեն, փայլարաբեր պեզմատիտների, քրոմիտի ու ասբեստի պրոտերոզոյան հանքավայրեր, երկրորդ փուլը կապված է կից գեոսինկլինալներից անդրապարձած ակտիվացման ու մագմատիզմի հետ վերին քեմբրյան ոսկու հանքայնացումով. երրորդ փուլում պերմի-ստորին մեզոզոյան հասակի ինքնավար ակտիվացումը ուղեկցվել է ակալային մագմատիզմով և հազվագյուտմետաղային հանքայնացումով:

Հարավ-Գիսարյան զանգվածը տեղադրված է Միջին Ասիայի ծալքավոր ստրուկտուրաների հարավում ու սեղմված է ուշ պալեոզոյի ծալքավոր ստրուկտուրաների միջև: Զանգվածի հիմքն, ըստ երևույթի, մինչքեմբրյան է: Գլխավոր մետաղային հանքավայրերը (բազմամետաղային նանդիգա և ուրիշ.) տարածականորեն սերտ զուգակցվում են ուշհերցինյան կամ ալիի երիտասարդ հասակի պորֆիրիտների, ալբիտոֆիրների ու քվարցային պորֆիրների դալկաների հետ:

Ալպիական ժամանակաշրջանում ակտիվացման պրոցեսների հետ կապված, բայց մագմատիկական առաջացումների հետ որոշակիորեն չկապված.

ձևավորվել են հետևաբար հասակի բազմամետաղային ու ֆլուորիտային հանքավայրերը:

Կուզիտանյա լեռներում զանգվածի նստվածքային ծածկոցում ձևավորվել են նեոգենի կապար-ցինկային, սնդիկային ու բարիտային հանքաներակումները, որոնք հարում են ակտիվացման հետ կապված բեկվածքների խոշոր դոնաներին:

Տարիմյան զանգվածը Կենտրոնական Ասիայում, իրենից ներկայացնում է դժվարաշարժ բլոկ, եզրապատված Տյան-Շանի ու Կուեն-Լունի ծալքավոր ստրուկտուրաներով: Զանգվածի հիմքը կազմում է մինչքեմբրյան ապարների մետամորֆիկ կոմպլեքսը, որի վրա տարածված է պալեոզոյան նստվածքային ծածկոցը:

Զանգվածի մետաղածնությունը բնութագրվում է տելեթերմալ բազմամետաղային ինտենսիվ հանքայնացումով, որը զարգացած է պալեոզոյան, իսկ երբեմն էլ կավճի ու օլիգոցենի ապարներում: Զանգվածի եզրային մասում, Տյան-Շանի ու Կուեն-Լունի ծալքավոր ստրուկտուրաների նրա միակցության շրջանում հայտնի են զրանիտոիդների ճեղքային ինտրուզիաներ պղինձ-մոլիբդենային հանքայնացումով: Զանգվածի հյուսիսարևմտյան շրջանակի երկայնքով հաստատվում է բազմամետաղային հանքայնացման երկարածիղ Կաշգարյան գոտին, իսկ զանգվածի սահմանում տարածված են կապար-պղինձ-ծարիրային հանքավայրերը: Այդ հանքավայրերի մեծ մասը տեղագրված է դեռնի կրաքարերում, բայց նրանց մի մասը հանդիպում է նաև կավճի ու օլիգոցենի ապարներում, որով և որոշվում է հանքայնացման երիտասարդ հասակը:

Մեսետա: Այդ զանգվածը, որը երբեմն կոչվում է Իսպանական Մեսետա, ընդգրկում է Իսպանիայի հյուսիսարևմտյան ու կենտրոնական շրջաններն ու համարյա ամբողջ Պորտուգալիայի տարածքը: Զանգվածի հիմքը ներկայացված է մինչքեմբրի մետամորֆիկ կոմպլեքսով, որը հարավից ու արևելքից եզրապատվում է պալեոզոյան (հերցինյան) ծալքավոր ստրուկտուրաներով, կազմված քեմբրից մինչև կարբոնի հասակի նստվածքահրաբխածին հաստվածքներից:

Օրգովիկում զանգվածի առանձին բլոկները ձկվել են ու նրանցից մեկում առաջացել են, ըստ երևույթին, էքսհալյացիոն-նստվածքային տիպի երկաթային ու մանգանային հանքանյութերի հանքավայրեր. այդ նույն ժամանակ (Օրգովիկում) ներդրվել են երկաթի սկանդային հանքավայրերով ուղեկրցվող տոնալիտային ինտրուզիաներ:

Զանգվածի ամենաինտենսիվ հանքայնացումը տեղի է ունեցել հետպերմի ժամանակ, երբ զանգվածը շրջապատող գեոսինկլինալները ձևավորվել են ծալքավորումը ավարտած մարզերի: Զանգվածի արևմտյան մասում ինքնավար ակտիվացման կապակցությամբ ներդրվել են հետպերմյան զրանիտների ինտրուզիաներ, որոնց հետ Թադեուն (Thadeu, 1965) և ուրիշ հեղինակներ կապում են Պորտուգալիայի ու Հյուսիսարևմտյան Իսպանիայի անագ-վոլֆրամային ինտենսիվ հանքայնացումը:

Անադի ու վոլֆրամի ամենախոշոր հանքավայրերը (Պանասկելյոա, Բարալյա և ուրիշներ) գտնվում են զանգվածի արևմուտքում, Պորտուգալիայում և ներկայացված են քվարց-կասիտերիտ-վոլֆրամիտային երակներով ու գրեյ-

զեններով: Այդ նույն շրջաններում բավականին տիպիկ են նաև հինգէլեմենտանոց (Co-Ni-Bi-Ag-U) ու ոսկի-բվարց-արսենոպիրիտային ֆորմացիաների հանքավայրերը:

Ուրանի հանքավայրերը պատկանում են երկու տարբեր տիպերի: Առաջին տիպը զարգացած է գլխավորապես Իսպանիայում, սերտորեն զուգակցվում է ուշհերցինյան, հետպերմի հասակի անագ-վոլֆրամային ու պղինձ-կոբալտ-նիկելային հանքայնացման հետ (Ալբուկերկ, Լա-Վիրխեն և ուրիշ հանքավայրերը): Երկրորդ տիպը, որը զարգացած է համարյա միայն Պորտուգալիայում, բնութագրվում է ուրանային հանքայնացման սերտ կապով խալցեդոնանման քվարցի հետ, որը վերագրվում է ցածր ջերմաստիճանային հիդրոթերմալ տիպին:

Պորտուգալիայի այդ տիպի հանքավայրերի համար (Ուրգերիկա և ուրիշ.) հաստատված է նրանց ալպիական հասակը (բացարձակ հասակը, որոշված ուրանային խեժով՝ 100 մլն. տ. է):

Ալպիական հասակին են վերագրվում նաև բազամետաղային, սնդիկային, ֆլյուորիտային ու բարիտային հանքավայրերը, որոնք հարում են երիտասարդ բեկվածքներին. վերջինները հատում են ոչ միայն պալեոզոյան, այլ երբեմն նաև կավճի ու երրորդական նստվածքները: Ամենակարևորներն են բազամետաղային (Սլերա-Մորենա մարզ), ծարիրային (Սյուդադ Ռեալ շրջան), սնդիկային (Ալմադեն ու Ալմերիա հանքաղաշտեր), ֆլյուորիտային (Իսպանական Մեսետայի հյուսիսային շրջան՝ Աստուրիա) հանքավայրերը:


Այսպիսով, Իսպանական Մեսետայի միջնազանգվածի համար նույնպես առանձնացվում են նրա տեկտոնական զարգացման երեք գլխավոր փուլերը՝ մինչքեմբրյան հիմքում հայտնի են երկաթի մետամորֆոզեն հանքավայրերը. հարևան ստորին-միջինպալեոզոյան գեոսինկլինալային ճկվածքների զարգացման կապակցությամբ ձևավորվում են երկաթի ու մանգանի էքսհալյացիոն-նստվածքային ու երկաթի սկանոնային հանքավայրերը. ինքնավար ակտիվացման պրոցեսների հետ, որոնք ընդգրկում են պերմից մինչև երրորդական ժամանակաշրջանը, կապված են զանգվածի համար ամենակարևոր քվարց-կասիտերիտ-վոլֆրամիտային, հինգէլեմենտանոց (Co-Ni-Bi-Ag-U), քվարց-արսենոպիրիտ-ոսկեբեր, խալցեդոն-ուրանա-խեժային, ծարիր-սնդիկային ու ֆլյուորիտային ֆորմացիաների հանքավայրերը:

Կ ե ն տ ր ո ն ա կ ա ն Ֆ ր ա ն ս ի ա կ ա ն ղ ա ն գ վ ա ծ ն (նկ. 34) ընդգրկում է Ֆրանսիայի տարածքի համարյա մեկ քառորդը՝ նրա կենտրոնական մասամբ հարավային մարզերը: Զանգվածի հիմքը կազմված է մինչքեմբրի մետամորֆիկ կոմպլեքսից, ծածկված քեմբրի ու սիլուրի, տեղ-տեղ (հյուսիսում) նաև դեոնի ու կարբոնի նստվածքային ծածկոցով: Ոչ մեծ իջվածքներում՝ վերին պալեոզոյում, կապված զանգվածի բարձրացման հետ, տեղադրված են պերմի կոնտինենտալ ածխաբեր նստվածքները:

Զանգվածների սահմաններում լայն զարգացած են ուշհերցինյան հասակի կալիումային խոշոր ինտրուզիվներ ու ալեիլի երիտասարդ լեյկոկրատ գրանիտների ու գրանիտպորֆիրների ոչ մեծ մարմիններ, որոնք զանգվածի հյուսիս-արևելքում՝ Գրյուրի շրջանում հատում են պերմի նստվածքները. այդ ինտրուզիաների ներդրման ժամանակը պայմանականորեն ընդունվում է ոչ պալեոզոյի ու տրիասի սահմանը: Զանգվածի սահմաններում ամենա-

ինտենսիվ հանքայնացումը տեղի է ունեցել ինքնավար ակտիվացման պրոցեսների կապակցությամբ, որոնք տեղի են ունեցել ուշհերցինյան-մեզոզոյան շրջանում:

1971 թ. աշնանը մեզ հաջողվեց այցելել Կենտրոնական Ֆրանսիայի զանգվածի մի շարք հանքավայրեր և համոզվել նրանց նմանության մեջ նույնատիպ Բոհեմյան (Չեխական) զանգվածի հանքավայրերի հետ. Չեխա-



Նկ. 34—Ֆրանսիայի Կենտրոնական և ուրիշ զանգվածները գլխավոր մետաղային հանքավայրերով (ըստ Պ. Լաֆիտի նյութերի, 1969)։

կան զանգվածի հանքերը մեր կողմից դիտվել էին ավելի վաղ Հանքային լեռներում, Գերմանական Դեմոկրատական Հանրապետության տարածքում:

Կենտրոնական Ֆրանսիական զանգվածի համար առաջին հերթին բնորոշ է բարձր ջերմաստիճանային հիդրոթերմալ ու գրեյզենային կասիտերիտ-

վոլֆրամիտային հանքայնացումը (երբեմն բիսմութի զգալի խառնուրդով, լիթիումի միներալների ու բերիլի բարձր գերով), կապված ուշհերցինյան (բացարձակ հասակը 293—305 մլն. տ.) գրանուլիտների (երկփայլարային-դրանիտ-պորֆիրներ) ու ալբիտիտների հետ: Այդպիսի հանքավայրերի տիպիկ օրինակներն են էշասյեր ու Մոնտեբրա հանքադաշտերը, որոնք ներկայացված են քվարցհանքային երակների սերիաներով ու շտոկվերկային զոնաներով և տեղադրված են գրեյզենացված ինտրուզիվ զանգվածներում, մասամբ էլ՝ նրանցով ներդրված մինչքեմբրյան հիմքի փայլարային թերթաքարերում:

Հանքայնացումը ներկայացված է կասիտերիտով, վոլֆրամիտով, լիթիումի միներալներով (ամբլիգոնիտ, մոնտեբրազիտ, լիթիումային փայլարներ), բիսմութիտով և նվազ քանակությամբ բերիլով, տանտալ-կոլումբիտով ու իր բնույթով շատ նման է Հանքային լեռների Բոհեմյան (Չեխական) միջնազանգվածի նույնատիպ հանքավայրերին (Յինվալդ-Յինուվեց, Ալտենբերգ, Գեյեր և այլն): Կենտրոնական զանգվածի համար ոչ պակաս բնորոշ են ուրանային հանքավայրերը, ներկայացված ցածր ջերմաստիճանային հիդրոթերմալ երակներով ու շտոկվերկային զոնաներով խալցեդոնանման կարմրավուն գույնի (հեմատիտով ներծծված) քվարցով, ֆլյուորիտով, ուրանային խեժով, բարիտի, մեկնիկովիտի, մարկազիտի և այլ սուլֆիդների փոքր խառնուրդով: Այդ տիպի ամենահետաքրքիր ու խոշոր հանքավայրը Բուա-Նուարը Ֆորե շրջանում է, զանգվածի հյուսիսարևելյան մասում: Հանքավայրը շահագործվում է 1954 թ. 400 մ խորության բաց հանքով ու ստորերկրյա լեռնային աշխատանքներով. այն տեղադրված է ուշհերցինյան հասակի գրանիտներում ու ներկայացված է ոսպնյակներով, երակներով ու բրեկչիացած զոնաներով շատ հարուստ հանքայնացումով (ուրանի պարունակությունը 0,2—0,5 մինչև 2—6%): Կոլումբիտ ուրանային խեժը կազմում է կուտակումներ կարմիր, հեմատիտով ներթափանցված խալցեդոնում և ուղեկցվում է մարկազիտով, մեկնիկովիտով, հազվադեպ գալենիտով ու խալկոպիրիտով: Հանքավայրի վերին հորիզոններում լավ է արտահայտված օքսիդացման զոնան առատ ուրանային փայլարիկներով՝ տորբենիտով, աուսուլիտով և այլն:

Հանքապարունակող գրանիտների ու հանքայնացման հասակը ուշհերցինյան է (ըստ ուրանային խեժի 260 ± 5 մլն. տ.). հետագայում, ալպիական ակտիվացման պրոցեսների կապակցությամբ տեղի է ունեցել հանքային նյութի վերանստեցում, որի հետևանքով համեմատաբար ոչ մեծ ուրանային հանքավայրերի համար, հաստատված է 70 ± 5 մլն. տ. բացարձակ հասակ (մոտ է Պորտուգալիայի՝ Ուրդեբիկա նույնատիպ հանքավայրի հասակին՝ 100 մլն. տ.):

Նույն տիպի ուրանի ցածր ջերմաստիճանային մերձակերեսային հանքավայրեր հայտնի են Ֆրանսիայի Կենտրոնական զանգվածի մի շարք այլ շրջաններում՝ նրա հյուսիսարևմտյան մասում Կրուզիլ հանքային շրջանում, որտեղ շահագործվել է հարստագույն Հենրիետա երակը (խեժային հանքանյութերում մինչև 31% U!) և շահագործման համար նախատեսված է Մարինյակ հանքավայրը՝ հարուստ հանքանյութերի խոշոր պաշարներով (Մ-ի պարունակությունը մինչև 4%, իսկ որոշ ամենահարուստ ոսպնյակներում մինչև 20%), զանգվածի հյուսիսարևելյան մասում, Մորվանում հայտնաբեր-

ված է ուրանի մի շարք հանքավայրեր՝ Գրուրի, Կրեղո, Բոցո, և ուրիշներ, որոնց մի մասը շահագործվում է:

Մորվան հանքային շրջանում հաստատված է բարձր ջերմաստիճանային հիդրոթերմալ վոլֆրամիտ-մոլիբդենիտ-արսենոպիրիտային հանքավայրերի սերտ զուգակցությունը ավելի ուշ միջին ջերմաստիճանային բազմամետաղային (արծաթով) ու ամենաուշ ցածր ջերմաստիճանային քվարց-ֆլյուորիտ-բարիտային ու ուրանախեժային (կարմիր յաշմաներով ու սև ֆլյուորիտով) հանքավայրերի հետ:

Կրուդիլ հանքային շրջանի համար հաստատվում է ուշհերցինյան քվարց-վոլֆրամիտային երակների հատումն ավելի ուշ ուրանաբեր երակներով, որոնց բացարձակ հասակը, որոշված նաստուրանով, կազմում է 105-ից մինչև 147 մլն. տ.:

Կենտրոնական Ֆրանսիական զանգվածի հանքավայրերի այլ տիպերից հարկ է նշել Լիմուզին շրջանի ուշհերցինյան հասակի քվարց-արսենոպիրիտ-սոսկեբեր երակները (Շենի ու Լա-Ֆաժայսեր հանքավայրերը), որոնք շահագործվել են դեռևս գալո-նոմանյան ժամանակներում և որոշ ընդմիջումներով, շահագործվում են մինչև այժմ: Ինչպես նաև Սալսին-Օդ շրջանի սոսկեբերությունը զանգվածի հարավում, որը վերջերս մանրամասն նկարագրված է երկրաբան Տոլոնի կողմից (F. Tollon, 1970):

Զանգվածի հանքավայրերի կարևոր խմբին են դասվում անտիմոնիտային ցածր ջերմաստիճանային հիդրոթերմալ հանքանյութերի (Մասիակ-Ուշ, Բրիուզ և ուրիշ շրջաններ), քվարց-ֆլյուորիտային երակները (Լիոնեզ, Օմերվան, Բոժոլե և ուրիշ շրջաններ), բազմամետաղային ու բարիտային հանքավայրերը:

Հարկ է նշել, որ ծարիրային հանքանյութերի հետ հաճախ զուգակցվում է սոսկին, բազմամետաղայինների հետ՝ արծաթը, ֆլյուորիտայինների հետ՝ ուրանային խեժը (վերջինի զուգակցման օրինակ է Իսլ՝ էվել հանքավայրը): Այդ հանքավայրերի դարգացման բնորոշ շրջանն է Մոն-Լոզերը զանգվածի հարավում:

Հանքային երակները հարում են խզումներին ու տեղադրված են բայոսի նստվածքներում, որով որոշվում է հանքանյութային հասակի ստորին սահմանը (վերին յուրա և ավելի երիտասարդ):

Արմորիկյան զանգվածը կազմված է երկու մարզից՝ Նյուսիտային (Կոննուել թերակղզին Հարավարևմտյան Անգլիայում) և հարավային (Հյուսիսարևմտյան Ֆրանսիայում՝ Բրետան, Նորմանդիա, Վանդեա), որոնք բաժանված են միմյանցից Լա-մանշի նեղուցով:

Երկրաբանական կառուցվածքով ու մետաղածնության բնույթով Արմորիկյան զանգվածը մոտ է Կենտրոնական Ֆրանսիական զանգվածին: Զանգվածի հիմք են ծառայում մինչքեմբրյան մետամորֆիկ ապարները, որոնք ծածկված են պալեոզոյան ապարների (քեմբրից մինչև պերմ, իսկ տեղ-տեղ նաև մեզոզոյի նստվածքների) ծածկոցով:

Մազմատիկ ապարներից առավել զարգացած են ուշհերցինյան պորֆիրանման բիոտիտային զրանիտներն ու լեյկոկրատային երկփայլարային զրանիտներն ու զրանիտ-պորֆիրները, որոնք հատում են պերմ-կարբոնի նրստվածքները և իրենց հերթին տրանսգրեսիվորեն ծածկվում են մեզոզոյան նստվածքներով:

Լայն զարգացած են գլխավորապես հյուսիս-արևմուտք—հարավ-արևելք տարածման խախտումները, որոնց երկայնքով երկարաձգված են ամենաերիտասարդ երկփայլարային կամ մուսկովիտային գրանիտների ու գրանիտ-պորֆիրների ճեղքային ինտրուզիաները. վերջինների էլքերին են հարում անագ-վոլֆրամային, ուրանային, ինչպես նաև ոսկի-ծարիրային, բազմամետաղային ու բարիտային հանքանյութերի հանքավայրերը:

Նվազ զարգացած են, բայց նույնպես գրանիտոիդների զանգվածների հետ սերտորեն կապված են բերիլաբեր պեգմատիտներն ու քվարց-մոլիբդենիտային հանքաերևակումները, և բոլորովին հազվադեպ են պղնձի ու սնդիկի երևակումները:

Արմորիկյան (նկ. 35) ինչպես և Կենտրոնական Ֆրանսիական զանգվածներում, ինտենսիվ արտահայտվել են ինքնավար ակտիվացման պրոցեսները, որոնց հետ կապված են նույն, Կենտրոնական Ֆրանսիական զանգվածի համար նկարագրված, տիպերի հանքայնացումը: Լավ են ներկայացված բարձր ջերմաստիճանային քվարց-կասիտերիտային ու քվարց-կասիտերիտ-վոլֆրամիտային հանքավայրերը, որոնք տեղադրված են գրեյզենացված լեյկոկրատային գրանիտներում ու գրանիտ-պորֆիրներում (Մոնտբելյուբս, Աբարեց, Լա-Վիլիեդեր, Սենտ-Ռենան, Մորտան և այլն):

Դե-Մորտան (Վանդեա) հանքային շրջանում գրանիտների մեջ տեղադրված անագ-վոլֆրամային հանքավայրերի հետ սերտորեն զուգակցվում են ուրանի հանքավայրերը, որոնք զարգացած են ինտրուզիվ զանգվածների եզրերում:

Ուրանային ու անագ-վոլֆրամային հանքավայրերի սերտ տարածական կապը հաստատվում է նաև Բրետանի հանքային շրջաններում (Սենտ-Ռենան, Պլուարե, Պոնտիվի և այլն):


Արմորիկյան զանգվածի ուրանային հանքավայրերը ներկայացված են քվարց-խալցեդոն-ֆլյուորիտային երակներով ու շտովվերկներով, ուրանային խեժով, պիրիտով, մարկագիտով, որոնք հարում են խոշոր խախտման զոնաներին ու ցածր ջերմաստիճանային առաջացումներ են. նրանք Կենտրոնական Ֆրանսիական զանգվածի ուրանային հանքավայրերի նմանակներն են և նույնպես անագ-վոլֆրամային հանքայնացման նկատմամբ ավելի երիտասարդ: Սակայն հարկ է նշել, որ Արմորիկյան զանգվածի անգլիական մասում, Կոռնուել հանքադաշտում նիկելի ու կոբալտի արսենիդների ու խալկոպիրիտի հետ զուգակցվող ուրանային հանքանյութերը սերտորեն կապված են անագ-վոլֆրամայինների հետ, ներկայացնելով մեկ միասնական (°) հանքային պրոցեսի ավելի ուշ փուլ. սկզբնական փուլում նստել են կասիտերիտը և վոլֆրամիտը, իսկ ավելի ուշ ու վեր (ուղղաձիգ գոնալականություն)՝ ուրանային հանքայնացումը պղնձով, նիկելով, կոբալտով:

Ամենաերիտասարդ (մեզոկայնոզոյան) բեկվածքների զոնաներին ձգտում են բազմաթիվ բազմամետաղային ու ծարիրային հանքանյութերի հանքավայրեր, որոնք հայտնի են ինչպես Բրետանում, Նորմանդիայում ու Վանդեայում, այնպես էլ Կոռնուել թերակղզում: Առավել նշանակալից բազմամետաղային հանքանյութերի հանքավայրերի թվում հարկ է նշել Պուլուեն, Պլելաուֆ ու Սենտ-Բրիեն՝ Բրետանում, Լա-Տուշ ու Պոնտժան՝ Նորմանդիայում:

Ոսկի պարունակող ծարիրային հանքավայրերից լավ հայտնի է Լա-Լյուսետ խոշոր հանքադաշտը Նորմանդիայում, որը ներկայացված է հզոր (մինչև 10 մ) քվարց-կարբոնատ-անտիմոնիտային հրակներով և զուգակցվում է արսենոպիրիտի, պիրիտի ու սֆալերիտի հետ. բավականին նշանակալից է նաև Ռոշտրեծու հանքադաշտը Վանդեայում:

Վերը նշվածներին նման ծարիրային հանքավայրեր հայտնի են Կենտրոնական զանգվածի Մասյակ-Բրիուզ հանքային շրջանում:

Բերիլիումաբեր, երբեմն նաև լիթիումաբեր պեգմատիտների հանքավայրերը լայն զարգացած են Բրետանում ու Վանդեայում, սակայն նրանք բոլորը փոքր մասշտաբի են:



Նկ. 35—Արմորիկյան զանգվածի մետաղածնային բարտեզ (ըստ L. Chauris ու J. Guigues-ի նյութերի, 1969):

Շվարցվալդ ու Վոգելներ զանգվածները երբեմն միացվում են մեկ միասնական Վերին Հռենոսի զանգվածում, որի արևելյան մասը (Շվարցվալդ) տեղադրված է Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության:

նում, իսկ արևմտյանը (Վոգեզներ)՝ Ֆրանսիայում. նրանց բաժանում է Հոն-նոսի գրաբեներ:

Շվարցվալդի ու Վոգեզների հին հիմքը (մինչքեմբրյան կամ ստորին-պալեոզոյան հասակի) ներդրված է հերցլինյան գրանիտներով, որոնց հետ կապված են բազմազան հանքավայրեր: Հայտնի են սկառնային մագնետիտային հանքավայրերը շեյլիտով (Ֆրեմոն-Գրանֆոնտեն, Վոգեզներ) և միջին-ցածր ջերմաստիճանային կապար-ցինկային, ֆլյուորիտային, բարիտային հանքանյութերի բազմաթիվ հանքավայրերը Շվարցվալդում ու Վոգեզներում, որոնք հարում են խախտումներին:

Հայտնի են ուրանի հինգէլեմենտանոց ֆորմացիայի հանքավայրերը Շվարցվալդում (Վիտիխեն Ni-Co-Bi-Ag-U հանքանյութերով) ու քվարց-ֆլյուորիտ-բարիտային նաստուրանով Վոգեզներում (Ռոնշամպե, Կրուտ). հինգէլեմենտանոց ֆորմացիայի հանքավայրերի համար նշվում է նրանց տարածական ու զենետիկական կապը ուշ պերմի-տրիասի գրանիտների հետ. այդ հանքավայրերի հանքանյութերից ուրանինիտի հասակը 235 ± 6 մլն. տ. է ու նրանք տեղագրված են տրիասից հին ապարներում: Ինչ վերաբերում է կապար-ցինկային, ֆլյուորիտային ու բարիտային (երբեմն ուրանային խեժով) հանքավայրերին, ապա նրանք անշուշտ ավելի երիտասարդ են և ձգտում են երիտասարդ բեկվածքներին, իսկ նրանց մի մասը տեղադրված է օլիգոցենի ապարներում: Երիտասարդ բարիտային երակների հետ երբեմն սերտ զուգակցվում են անտիմոնիտի, մանգանի օքսիդների ու կարբոնատների կուտակումները:

Այսպիսով, Շվարցվալդի ու Վոգեզների բոլոր ներծին հանքավայրերը կապված են ակտիվացման պրոցեսների հետ, որոնք տեղի են ունեցել տրիասից մինչև օլիգոցենը ներառյալ:

Բ ո Ն Ե մ յ ա ն (կ ա մ Չ Ե խ ա կ ա ն). զանգվածը գրավում է Չեխիայի տարածքի ու նրան սահմանակից ԳՊՀ, ԳՖՀ ու Լեհաստանի շրջանները:

Բոհեմյան միջնազանգվածը կազմված է մինչքեմբրյան հիմքից և ծածկրված է պալեոզոյի ու մեզոկայնոզոյի նստվածքներով:

Լայն զարգացած են, հատկապես Հանքային լեռներում, գրանիտոիդների ինտրուզիաները, որոնց ներգրումը կապվում է (Шеглов, 1971), վերին պերմի ու ավելի ուշ ժամանակի ինքնավար ակտիվացման պրոցեսների հետ:

Պերմի ճկվածքները լցված են թթու էֆուզիվների ծածկոցներով («տեպլիցյան պորֆիրներ»), որոնց մեջ ներգրված են հանքաբեր գրանիտների ու գրանիտ-պորֆիրների ճեղքային ինտրուզիաները: Կավճի դարաշրջանի իջվածքներում (Պալաբյան և ուրիշ.) կուտակվում են կավճի տերիզեն ու պալեոզենի ածխաբեր նստվածքները, որոնք հատված են ալկալային հիմքային ապարների (տեղեկիտներ, լիմբուրգիտներ) ինտրուզիաներով:

Բոհեմյան զանգվածի մետաղային հանքավայրերի շարքում, ըստ հասակի ու առաջացման զետեկտոնական պայմանների, պարզորոշ առանձնացվում են երեք խմբեր. առաջինը՝ մինչքեմբրյան հասակի, տեղադրված հիմքի ապարներում, ընդգրկում է երկաթի հանքանյութերի ու գրաֆիտի մետամորֆոզեն հանքավայրերը, հազվագյուտմետաղային պեգմատիտներն ու քվարցային ոսկեբեր երակները. այդ խմբի հանքավայրերը (բացի գրաֆիտից,

որը տալիս է խոշոր կուտակումներ) մեծ շեն և հետաքրքրություն չեն ներկայացնում:

Երկրորդ խումբը ընդգրկում է երկաթի նստվածքային հանքանյութերն օրգոլիկի ապարներում, ինչպես նաև կալեդոնյան գրանիտների հետ կապված հազվագյուտ մետաղային պեղմատիտներն ու պղնձի և բազմամետաղային հանքանյութերի որոշ հիդրոթերմալ երևակումները:

Երրորդ, ամենակարևոր խումբն ընդգրկում է հետպերմի ժամանակաշրջանի զանգվածի ինքնավար ակտիվացման հետ կապված հանքավայրերը. այստեղ հայտնի են տարբեր հասակի երկու կարգի առաջացումներ, որոնցից առաջինը ձևավորվում է պերմի հասակի «տեպլիցյան պորֆիրներից» հետո, բայց կավճի կոնտինենտալ հաստվածքից առաջ: Այդ կարգին են պատկանում՝

ա) անագի ու վոլֆրամի բարձր ջերմաստիճանային հիդրոթերմալ և գրեյզենային հանքավայրերը; որոնք սերտորեն կապված են «տեպլիցյան պորֆիրները» հատող գրանիտների ու գրանիտ-պորֆիրների հետ (Յինվալ-Յինովեց, Ալտենբերգ, Կրուպկա և այլն):

բ) հինգէլեմենտանոց ֆորմացիայի (Ni-Co-Bi-Ag-U) հանքավայրերը, որոնց տիպիկ օրինակներն են Յախիմովը Չեխոսլովակիայում, Շնեբերգը ու Աննաբերգը ԳԴՀ-ում, Ֆիխտենգեբերգեն՝ ԳՅՀ-ում և այլն:

գ) ոսկի-բազմամետաղային (Իլովե) ու բազմամետաղային (Պրշիբրամ) հանքավայրերը Չեխոսլովակիայում: Մ. Վանեչեկի տվյալներով (1966) Բոհեմյան զանգվածի բազմամետաղային հանքավայրերն ունեն տրիասի-յուրայի հասակ:

Երկրորդ կարգին են պատկանում կավճի ու ավելի երիտասարդ հանքավայրերը, որոնք ներկայացված են ֆլյուորիտի ու բարիտի ցածր ջերմաստիճանային հիդրոթերմալ երակներով, երբեմն ծարիրային, ուրանային ու բազմամետաղային հանքայնացումով, հիմնականում տեղադրված են տուրոնի նստվածքներում:

Մագմատիկական առաջացումներից, ներդրման ժամանակի տեսակետից, էպիթերմալ հանքավայրերին առավել մոտ են Պոլաբյան իջվածքի արկալային հիմքային ապարները, որոնց հատակը կավիճ-պալեոգեն է:

Ըստ Լ. Բաումանի և ուրիշների (1967) Ֆրեյբերգի հանքադաշտի սահմաններում հարկ է առանձնացնել ուշհերցինյան ու կավճի-երրորդական հանքայնացման ժամանակաշրջանները:

Բոհեմիայի հյուսիսարևելյան սահմանի երկայնքով երրորդական բեկվածքով տեղի է ունեցել արկալային բազիտների-ուլտրաբազիտների, այդ թվում քիմբերլիտանման ապարների, ներդրումը, որոնց հետ կապված են պիրոպն ու ալմաստի երևակումները:

Ռոդոպյան զանգվածն ընդգրկում է Բուլղարական Ժողովրդական Հանրապետության հարավային մասը ու նրան սահմանակից Հունաստանի և Հարավսլավիայի մասերը: Զանգվածի հիմքը կազմում է մինչքեմբրյան մետամորֆիկ կոմպլեքսը, որի հետ կապված են երկաթի հանքանյութերի, գրաֆիտի, դիստենի և փայլարաբեր պեղմատիտների ոչ մեծ հանքավայրեր:

Պալեոոլոգյան գեոսինկլինալների դարդացման հետ կապված խորքային բեկվածքների երկայնքով տեղի է ունեցել հիպերբազիտների ներգրումը, որոնց մեջ տեղագրված են քրոմիտի փոքր հանքավայրեր. հավանաբար, նույն պալեոոլոգյան շրջանում են ձևավորվում նաև կալիումային գրանիտները, որոնց հետ կապվում են մագնետիտային հանքանյութերի սկանոնային ոչ մեծ հանքավայրերն ու պիրիտ-մոլիբդենիտային և ոսկի-պղինձ-բաղամամետաղային հանքայնացման երևակումները: Այդ բոլոր հին (մինչքեմբրյան ու պալեոոլոգյան) հանքավայրերը արդյունաբերական մեծ նշանակություն չունեն: Ռոդոպներում հանքայնացման գլխավոր ժամանակաշրջանը երրորդականն է, որը պայմանավորված է ինքնավար ակտիվացման պրոցեսներով և ուղեկըցվում է բեկվածքներով, հիմքային ու թթու էֆուզիվների արտադրումներով ու երրորդական գրանիտոիդների ինտրուզիվների ներգրումով. վերջինների հետ պարագենետիկորեն կապված է բաղամամետաղային հարուստ հանքայնացումը: Հանքավայրերի զգալի մասը տեղագրված է մինչքեմբրյան հիմքի ապարներում ու ներկայացված է մասամբ երակային տիպի գնեյսների և բյուրեղային թերթաբարերի մեջ, մասամբ էլ՝ հզոր մետասոմատիկ շերտաձև մարմիններով հիմքի մարմարներում:

Հանքավայրերի որոշ մասը (Մաջարևո, Գայենիտ-Ջվեղդել և այլն) տեղագրված է օլիգոցենի էֆուզիվներում, որով և որոշվում է բաղամամետաղային հանքայնացման երիտասարդ հասակը: Առավել հեռանկարային ու լավ ուսումնասիրված է Մադանի հանքային շրջանը Ռիբնիցա, Սպոլուկա և այլ խոշոր երակային հանքավայրերով (Богданов, 1965. Կовчев, 1965 և ուրիշ.) ու Գրոդիշև և այլ շերտաձև կուտակումներով մարմարներում (Докоб, 1967):

Առավել երիտասարդ ակտիվացման փուլը արտահայտված է դեպրեսիաների առաջացմամբ, որոնք լցված են պլիոցենի կոնտինենտալ ածխաբեր նստվածքներով (Ստրումայի ու Մեստիայի դեպրեսիաները զանգվածի արևմտյան մասում) և ներգրված են պլիոցենի հասակի տրախիանդելիտների դաշկաներով: Վերջինների հետ պարագենետիկորեն կապված են ֆլյուորիտի, անտիմոնիտային հանքանյութերի ու հավանաբար, ոսկի-արծաթային հանքանյութերի ցածր ջերմաստիճանային հանքավայրեր: Նրանք հայտնաբերված են Հունաստանի տարածքում Ստրումայի բեկվածքների զոնայի շարունակության երկայնքով: Այստեղ շատ հավանական է ուրանախեթային ցածր ջերմաստիճանային հանքայնացման հայտնաբերումը լայն զարգացած ֆլյուորիտ ու բարիտ պարունակող խալցեդոնանման քվարցի երակներում:

Անատոլիայի զանգվածները (Լիդիա-Կարիյան ու Լիկանյան) տեղագրված են Թուրքիայում և եզրապատվում են ալպիական ծալքավոր ստրուկտուրաներով՝ Պոնտական լեռներով՝ հյուսիսից ու Տավրոսի լեռներով՝ հարավից: Զանգվածների կառուցվածքը բլոկային է, նրանք ջարդված են բազմաթիվ բեկվածքներով. տեկտոնա-մագմատիկ ակտիվացման կուպակցությամբ նրանց երկայնքով ներգրվել են երրորդական (ու վերին կավճի °) գրանիտոիդային ու սինիտային ինտրուզիաներ, որոնց հետ զուգակցվում են սկանոնային երկաթի (Դիվրիկ), պղինձ-մոլիբդենային ու կապար-ցինկային հիդրոթերմալ հանքավայրեր:

Երիտասարդ բեկվածքների զոնաներին հարում են ծարիր-սնդիկային հանքավայրերի գոտիները, որոնցից ամենախոշորը ձգվում է Տավրոսյան

քրոմիտաբեր գոտուց դեպի Հյուսիս: Վերջերս Նիգդե շրջանում հայտնաբերված է շատ խոշոր կոմպլեքսային ծարիր-սնդիկ-վոլֆրամային (անտիմոնիտ-կինովար-ֆերբերիտային) հավանաբար նեոգենյան հասակի հանքավայր:

Իր անակաճ միջնազանգվածն ըստ Ա. Գ. Շչեգլովի (1971) ընդգրկում է Կենտրոնական ու Արևելյան Իրանի, Աֆղանստանի ու Հարավարևմտյան Պակիստանի մի մասի հսկայական տարածքը: Բոլոր կողմերից այն եզրապատվում է ալպիական ծալքավոր ստրուկտուրաներով. Հյուսիսից՝ էլբուրսի ու Ալադադ-Բինալուդաի, հարավ-արևմուտքից՝ Զագրոսի ծալքավոր զոնայով, իսկ արևելքում ու Հյուսիս-արևելքում՝ Բելուջիստանի գեոսինկլինալի ծալքավոր ստրուկտուրաներով:

Զանգվածի հիմքը ներկայացված է մինչքեմբրյան մետամորֆիկ համալիրով, որի հետ կապված են գրաֆիտի ու փայլաքաբեր, երբեմն բերիլիումային հանքայնացումով պեգմատիտների ոչ մեծ հանքավայրեր:

Ամենահետաքրքիր մետաղային հանքավայրերը կապված են երրորդական հասակի ակտիվացման պրոցեսների հետ, որոնք ուղեկցվում են շափավոր թթու գրանիտոիդների ներդրմամբ: Վերջինների հետ կապված են պղինձ-մոլիբդենային, բավամետաղային (երբեմն ուրանով), Co-Ni-Cu-ուրանային (Անարեկ շրջանը) բազմաթիվ հանքավայրեր: Ակտիվացման հետ են կապված նաև անտիմոնիտի, բարիտի, ավելի հազվադեպ՝ ֆլյուորիտի երակային խոշոր հանքավայրերը:

Բ ու ռ ե ի ն յ ա ն զ ա ն գ վ ա ծ ը բաժանում է Արևելյան Անդրբայկալի ու Սիխոտե-Ալինի գեոսինկլինալային մարզերը: Ակտիվացման պրոցեսներն այստեղ արտահայտվել են երկու անգամ՝ վաղ մեզոզոյում (տրիաս-յուրա) ու կավճում, ամեն անգամ ուղեկցվելով ինտրուզիվների ներդրմամբ ու հանքայնացումով: Վաղմեզոզոյում (յուրայի) գրանիտների ու գրանոզիորիտների հետ, որոնք ներդրված են զանգվածի եզերքում, կապված են անագի, ոսկու, մոլիբդենի ու վոլֆրամի (շեելիտի) ոչ մեծ հանքավայրեր: Ուշմեզոզոյում (կավճի) ակտիվացումը արտահայտվել է միջնազանգվածի կենտրոնական մասերում, որտեղ ակտիվ բեկվածքների երկայնքով առաջանում են վերադրված ձկվածքներ, կոնտինենտալ էֆուզիվներով ու սուբհրաբային գրանիտ-պորֆիրների ինտրուզիաներով: Վերջինների հետ սերտ կապված են սուլֆիդ-կասիտերիտային ու ավելի հազվադեպ քվարց-կասիտերիտային հանքավայրեր, իսկ թթու էֆուզիվներում հանդիպում են «փայտանման» կասիտերիտի բնածե կուտակումներ: Ամենախոշորը Խինգանյան հանքավայրն է, սուլֆիդ-կասիտերիտային տիպի բնորոշ ներկայացուցիչը:

Ավելի երիտասարդ (ուշ կավճ-պալեոգեն) ակտիվացման փուլի հետ կապված են իջվածքներ, լցված ածխաբեր նստվածքներով. երիտասարդ բեկվածքների զոնաներին հարում են ֆլյուորիտի, ծարիրի ու սնդիկի հանքավայրերը, որոնք զուգակցվում են խալցեդոնանման քվարցի հետ (Բոգուչանի և ուրիշ հանքավայրերը):

Խ ա ն կ ա յ ա ն զ ա ն գ վ ա ծ ը տեղադրված է Սիխոտե-Ալինյան գեոսինկլինալի ծալքավոր ստրուկտուրաների միջև: Միջնազանգվածի ակտիվացումը սկսվում է պերմի ժամանակաշրջանում, ուղեկցվելով գրանիտների ներդրումով և անագ-վոլֆրամային ու ֆլյուորիտային հանքայնացումով: Մեզոկայնոզոյում մագմատիզմը պարզորոշ չի արտահայտված, սակայն

երիտասարդ բեկվածքների երկայնքով փուխը նստվածքներում դիտվում է կինովարի բարձր պարունակություն:

Օխոտյան զանգվածը տեղադրված է Վերին Ինդիգիրկայի ու Հարավ-Վերխոյանսկի մեզոզոյան Վերխոյանսկ-Կոլիմյան ծալքավոր մարզի ձկվածքների միջև: Զանգվածի մեծ մասում զարգացած են Օխոտսկ-Չուկոտյան գոտու կավձի հրաբխային առաջացումները: Էֆուզիվ կոմպլեքսների զարգացումը հսկող բեկվածքների երկայնքով տեղի ունի լիպարիտների և անդեզիտների սուբհրաբխային ինտրուզիաների ու էքստրուզիաների և ճեղքային գրանիտոիդների ներդրումը, որոնց հետ կապված է վերին կավձի-պլեոգենի հասակի ոսկի-քվարցային, ոսկի-արծաթային, մոլիբդենային, բազմամետաղային հանքայնացումը: Զանգվածի ամենատիպիկ մետաղը ոսկին է:

Օմուրոնի զանգվածը տեղադրված է Վերխոյան-Կոլիմյան ու Չուկոտկայի ծալքավոր դոնաների մեզոզոյան ստրուկտուրաների միջև: Զանգվածի ալտիվացման կապակցությամբ լայն արտահայտվել են ուշկավձի գրանիտներ ու գրանիտոիդներ, ալկալային գաբրոիդներ ու սիենիտներ:

Գրանիտոիդների հետ կապված են մոլիբդենի ու ոսկու հանքավայրերը, իսկ ալկալային ապարների հետ տանտալ-նիոբիումային հանքայնացումը:

Կոլիմյան զանգվածը բաժանում է Վերխոյանսկ-Կոլիմյան ու Չուկոտկայի մեզոզոյան ծալքավոր մարզերը: Զանգվածում ամենահինտենսիվ մագմատիկ պրոցեսները արտահայտվել են մեզոզոյում ու կապված են զանդվածին կից գեոսինկլինալային ձկվածքների զարգացման հետ: Հիմնականում դրանք ճեղքային սուբհրաբխային վաղկավձի հասակի գրանիտոիդային ինտրուզիաներ են, պալեոգենում տեղի է ունեցել տեղենիտների ու էսեկսիտների ոչ մեծ ինտրուզիվների ներդրումը:

Հանքայնացումը կենտրոնանում է գլխավորապես զանգվածի շուրջը, համարյա յթափանցելով նրա սահմանները: Միջնազանգվածի վրա վերադրված հանքայնացումն արտահայտված է սահմանափակ և ներկայացված է անագի ոչ մեծ հանքավայրերով այն տեղամասերում, որտեղ զանգվածի վրա վերադրված է Օխոտսկ-Չուկոտյան հրաբխային գոտին:

Կոլորադո սարահարթի միջնազանգվածը տեղադրված է գեոսինկլինալային ձկվածքի ու խոշոր ուֆոտային դոնայի միջև, որը կից է Հյուսիս-ամերիկյան (Կանադական) պլատֆորմին: Զանգվածի հիմքը մինչքեմբրյան է, այն ծածկված է պալեոզոյան ու մեզոկայնոզոյան նստվածքային ապարների ծածկոցով:

Պալեոգենի գրաբենաձև ղեպրեսիաները Կոլորադո սարահարթը առանձնացրել են պլատֆորմից: Պալեոգենում ձևավորվել են նաև սուբհրաբխային ապարների դայկանների ու շտոկների լայնակի մագմատիկ գոտին, որը հատում է միջնազանգվածի ստրուկտուրաները, վերադրված իջվածքներն (ղեպրեսիաները) ու պլատֆորմը:

Այսպիսի վերադրված ստրուկտուրաների առաջացումը Ա. Գ. Շչեգոլովը (1968) կապում է ինքնավար տեկտոնամագմատիկական ալտիվացման պրոցեսների հետ: Երիտասարդ (պալեոգեն-նեոգենյան) սուբհրաբխային կոմպլեքսների հետ կապված են բազմաթիվ ու բազմազան հանքավայրեր, որոնք տեղադրված են հաճախ հիմքի մինչքեմբրյան ապարներում, բայց գենետիկորեն կապված են երիտասարդ մագմատիկական օջախների հետ: Մոնցոնիտների ու գրանադիորիտների փոքր ինտրուզիաների (շտոկների) հետ կապ-

ված են կլայմակս խոշորագույն մոլիբդենային հանքավայրը, կեղվիլ բազմամետաղային, ոսկու և ուրանի որոշ հանքավայրերը, որոնց հասակը օլիգոցեն-միոցենյան է: Դայկաների ու միուլիոցենյան հրաբխային ապարների դաշտերի հետ սերտորեն կապված են ցածր ջերմաստիճանային հիդրոթերմալ հանքավայրերը, որոնք հաճախ հարում են տեկտոնական զոնաներին, հրաբուխների խառնարաններին ու պայթման խողովակիկներին:

Հանքավայրերի այդ խմբին են պատկանում Բոուլդեր շրջանի ոսկի պարունակող ստիբնիտ-ֆերբերիտային հանքանյութերի հայտնի հանքավայրերը, Կրիպլ-Կրիկ ոսկի-տելուրիդային ֆլյուորիտով հանքավայրը և ուրիշ: Այդ հանքավայրերի հասակը հավանաբար պլիոցենյան է:

Կոլորադո սարահարթի բոլոր նշված հանքավայրերը գոյանում են Հյուսիսամերիկյան պլատֆորմի հարավարևմտյան շրջանների ինքնավար տեկտոնա-մագմատիկական ակտիվացման պրոցեսում, որը մասամբ ընդգրկում է Կոլորադո սարահարթի արևելյան շրջանները:

3. Մալֆալոուսը ավարտած ակտիվացած մարզերի մետաղածնությունը: Տեկտոնա-մագմատիկական ակտիվացման պրոցեսները համապատասխան հանքայնացմամբ տեղի են ունեցել ծալքավորումը ավարտած շատ մարզերի սահմաններում, սակայն որպես օրինակներ քննարկվելու են միայն Անդրբայկալի, Միջին Ասիայի, Ալթայա-Սայանյան մարզի և Անդերի ծալքավոր մարզերում լավ արտահայտված և ուսումնասիրված ակտիվացման պրոցեսները:

Անդրբայկալի մեզոզոյան ակտիվացման հանքային ֆորմացիաներին է նվիրված Ա. Գ. Շչեզլովի մենագրությունը (Идеглов, 1966): Նշվում է, որ մեզոզոյան ակտիվացումը ընդգրկում է բայկալյան ու կալեդոնյան ծալքավոր զոնաների ողջ տարածքը Զիդայի շրջանից հարավ-արևմուտքում մինչև Ամուրի, Նյուկիթի ու Օլեկմայի ակունքները՝ հյուսիս-արևելքում, տեղագրվելով Մոնղոլա-Սիստայան եզրային կարից դեպի հյուսիս: Ակտիվացման պրոցեսներն արտակարգ ինտենսիվ արտահայտվել են Արևմտյան Անդրբայկալում, թեև նրանք ընդգրկում են նաև Արևելյան ու Հյուսիսային Անդրբայկալն և Մերձբայկալը:

Արևմտյան Անդրբայկալի ակտիվացման պրոցեսում առանձնացվում են երկու փուլեր. առաջինն ընդգրկում է պեմը, տրիասը, հավանաբար, ստորին յուրան և արտահայտված է փոքրաթեք ձկվածքների առաջացումով՝ լցված հրաբխածին գոյացումներով, ճաված ծալքերի ու ներդրված գրանիտոիդներով: Երկրորդ փուլն ընդգրկում է միջին յուրայից մինչև ստորին կավճի ժամանակաշրջանը ու բնութագրվում է նեղ, երկարաձգված դեպրեսիաների առաջացմամբ, որոնք լցված են կոնտինենտալ ածխաբեր նստվածքներով և սահմանափակված են բեկվածքներով, որոնց երկայնքով ներդրվում են սուբհրաբխային հիմքային արկալային ինտրուզիաները:

Արևմտյան Անդրբայկալի բայկալյան ու կալեդոնյան ստրուկտուրաների ակտիվացման հետ կապված են հազվագյուտմետաղային (մոլիբդենային ու վոլֆրամային) հանքավայրերը, որոնք զուգակցվում են հրաբխածին ձկվածքների վաղմեզոզոյան փուլի գրանիտոիդների հետ, ինչպես նաև ցածր ջերմաստիճանային ֆլյուորիտային հանքավայրերը, որոնք առաջանում են տերիգեն իջվածքների ձևավորման փուլում:

Մոլիբդեն-վոլֆրամային հանքայնացման տիպիկ օրինակ է Զիդայի հանքադաշտը, որտեղ քվարց-մոլիբդենային փուլը նախորդում է քվարց-

Հյուրընդրիտայինին: Հանքայնացման հասակը վաղմեզոզոյան է (հետտրիասի, բայց մինչ միջին յուրայի): Զգալիորեն երիտասարդ են Արևմտյան Անդրբայկալի ֆլյուորիտային հանքավայրերը (Շարալզայ, Իվոլզա և այլն), որոնց երակները տեղադրված են ստորին կավճի ավազաքարերում և կոնգլոմերատներում, ձգտելով երիտասարդ բեկվածքների երկարաձգված զոնաների (Խիլոկյան ու Զիդա-Ուզինյան զոնաները): Ֆլյուորիտային հանքավայրերի խոշոր գոտին շարունակվում է Զիդա գետի միջին հոսանքից հարավ-արևմուտքում (Արևմտյան Անդրբայկալ) մինչև Շիլկա գետի ստորին հոսանքը հյուսիս-արևելքում (Արևելյան Անդրբայկալ): Կարևոր է ընդգծել, որ ֆլյուորիտի հետ մեկտեղ այդ գոտիներում հաստատված է հետստորինկավճի հասակի ոսկու, ծարիրի, սնդիկի, վոլֆրամի էպիթերմալ հանքայնացում: Արևմտյան Անդրբայկալում այդ հանքայնացումը ներկայացված է միայն երևակումներով, իսկ Արևելյան Անդրբայկալում ոսկու զգալի կուտակումներով (Բալեյ, Տասենո) ու կինովար-անտիմոնիտ-ֆերբերիտային կոմպլեքսային հանքանյութերով (Բարուն-Շիվենսկոե, Նովո-Իվանովսկոե և ուրիշ):

Միջին Ասիայի պալեոզոյան կոնսոլիդացած ստրուկտուրաների մեզոկենոզոյան ակտիվացման հարցերին են նվիրված Ե. Դ. Կարպովայի (Карпова, 1960, 1968), Ա. Ա. Լուկի (Лук, 1970) և ուրիշ հեղինակների աշխատությունները:

Պալեոզոյան ստրուկտուրաների ակտիվացման հետևանքով ձևավորվել են Կուրամիյան զոնայի, հատկապես Կարամազարի հանքային շրջանի տարբեր հանքավայրերը, որտեղ նրանք գնենտիկորեն կապված են ուշպալեոզոյան-վաղմեզոզոյան հասակի գրանիտոիդների հետ: Ամենահայտնի հանքավայրերի շարքին են դասվում սկառնային մոլիբդեն-վոլֆրամային (շեկիտային), Զորուխ-Դայրոնը, պղինձ-մոլիբդենային Ալմալիկը, բազմամետաղային Կանսայը, Դարբազա, Տակելի, պղինձ-բիսմուտային Ագրասման, Զելտիմաս, ֆլյուորիտային Նուզարդանը, մի շարք ոսկի-բազմամետաղային, ոսկու, բարիտային և ուրիշ հանքավայրերը:

Կենտրոնական Տյան-Շանի ու Պամիրի պալեոզոյան ծալքավոր ստրուկտուրաների ակտիվացման ժամանակաշրջանի հետ կապված են նեոգենի նստվածքներում տեղադրված բազմամետաղային հանքավայրերը (Ալշիյրակի խումբը՝ Արևմտյան Կիրգիզիստան, Դարասո՝ Հարավային Տաջիկստանում): Ե. Դ. Կարպովայի կարծիքով, նույն հասակի են նաև որոշ սնդիկ-կապարային (Կուզիտանգի խումբը) ու ֆլյուորիտային (Կարմիր թմբեր) հանքավայրերը, տեղադրված առաջինները՝ վերին յուրայի, իսկ վերջինները՝ կավճի նստվածքներում:

Ըստ երևույթին մեզոկենոզոյան ակտիվացման պրոցեսներն ու նրանց հետ կապված հանքայնացումը Միջին Ասիայում դարգացած են շատ ավելի լայն քան համարվում էր առաջ. հավանական է, որ Կիրգիզիայի Ալայան լեռնաշղթայի սնդիկի, ծարիրի ու մկնդեղի (ոնալզարի) հանքավայրերը, Տաջիկստանի Զերավշանա-Գիսարյան լեռնային մարզի նույնատիպ հանքավայրերը, ինչպես նաև Միջին Ասիայի ֆլյուորիտի հանքավայրերից շատերը նույնպես կապված են ակտիվացման պրոցեսների հետ:

Ալթայա-Սայանյան մարզի, Տուվայի, Լեռնային Ալթայի ու Սալաիրի Կալեդոնյան ծալքավոր ստրուկտուրաների ձևավորման շրջանը բնութագրվում է սնդիկի հանքավայրերի լայն զարգացմամբ,

որոնք տեղադրված են ուշհերցինյան ու մեզոզոյան իջվածքները եզրապատող խորքային բեկվածքների երկայնքով: Տուվայում նշվում է սնդիկի հանքայնացման կապը հիմքային կազմութայան ճեղքային փոքր ինտրուզիաների հետ (Кузнецов, 1964): Սնդիկային հանքայնացման հասակն ըստ Վ. Ա. Կուզնեցովի պետք է համարել ուշհերցինյան կամ մեզոզոյան:

Անգլյան ծալքավոր ստրուկտուրան ենթարկվել է կոնսոլիդացման հիմնականում ռիֆեյան ու կալեդոնյան ժամանակաշրջանում՝ հերցինյան ծալքավոր շարժումների շատ թույլ արտահայտման պայմաններում: Անդերի տեկտոնական զարգացումը մեզոկայնոզոյում շատ հետո է գեոսինկլինալային ստանդարտից ու կամարա-բեկորային շարժումների ինտենսիվ զարգացման կապակցությամբ ավելի մոտ է ինքնավար ակտիվացած մարզերի տիպին:

Մետադածնությունը կապված է բեկվածքների զոնայի երկայնքով Անդյան բազմաֆազային հսկա բաթոլիտի ներդրման հետ, որի առանձին փուլերի հասակը գտնվում է P-T (340 ± 40 մինչև 265 ± 30 մլն. տ.) մինչև J ($160 - 170 \pm 20$ մլն. տ.) կավճի (140 ± 20 մինչև 90 ± 10 մլն. տ.) ու երրորդականի (60 ± 10 մինչև 30 ± 20 մլն. տ.) սահմանում:

Այդ արտադեոսինկլինալային զրանիտոիդների հետ կապված է արտակարգ հարուստ և տարահասակ հանքայնացում՝ Sn-W-Bi Հյուսիսային Բոլիվիայում (հասակը T-J), Cu-Mo Չիլիում (C₂-Pg), Sn-Ag Կենտրոնական ու Հարավային Բոլիվիայում (միոցեն) ու փայտանման կասիտերիտի երկվակումներ Հարավային Բոլիվիայում (պլիոցեն):

ԱԿՏԻՎԱՅԱՍ ԶՈՆԱՆԵՐԻ ՄԵՏԱՂԱՄՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

Ակտիվացած (կամարա-բեկորային կամ «դիվա») ստրուկտուրաները զարգանում են հին ու երիտասարդ պլատֆորմների վրա, ինչպես նաև ծալքավորումն ավարտած մարզերի սահմաններում ու նրանց միջև տեղադրված միջնազանգվածներում:

Իրենց զարգացմամբ դրանք հաճախ ինքնավար են ու անկախ նույն հասակի գեոսինկլինալային մարզերից, իսկ տարածման մասշտաբով համեմատելի են վերջինների կամ վահանների և նրանց պլատֆորմների հետ:

Ակտիվացման մարզերը բնութագրվում են հարուստ ու յուրահատուկ մետադածնությամբ: Վահաններում ու նրանց պլատֆորմներում ակտիվացման հասակը տատանվում է ռիֆեյից մինչև մեզոկայնոզոյ, իսկ մագմատիկ ապարների կազմությունը փոխվում է բազիտներից-ուլտրաբազիտներից և ալկալային-ուլտրահիմքային կոմպլեքսներից մինչև շափավոր թթու և թթու զրանիտոիդների:

Ակտիվացման հետ կապված են Cu-Ni (Co, Pt, Pd-ով) լիվացիոն հանքանյութերի, հազվագյուտմետաղային պեգմատիտների, Sn-W հանքանյութերի, կարբոնատիտային հանքանյութերի, ալմաստի խոշոր հանքավայրեր, ինչպես նաև Au, Hg-Sb հանքանյութերի, ֆլյուորիտի, ուրանի ավելի փոքր հանքավայրերը:

Միջնազանգվածների սահմաններում ակտիվացումը տեղի է ունեցել մասամբ ուշհերցինյան, իսկ գլխավորապես մեզոկայնոզոյան ժամանակաշրջանում ու կապված է զրանիտոիդային ինտրուզիաների ներդրման հետ, որոնք զուգակցվում են քվարց-կասիտերիտ-վոլֆրամիտային, հինգլեմեետանոց

(Co-Ni-Bi-Ag-U), քվարց-արսենոպիրիտ-սսկեբեր, ուրանախեծային, բազմամետաղային, ծարիր-սնդիկային ու ֆլյուորիտային հանքավայրերով:

Մալքավորումն ալարտած մարզերում ախտիվացումը տեղի է ունեցել ուղհերցինյան ու գլխավորապես, մեզոկայնոզոյան ժամանակաշրջանում և կապված է զրանիտոիդների ինտրուզիաների ներդրման հետ. նրանց հետ զուգակցվում են հարստագույն անագ-վոլֆրամային, մոլիբդենային ու պղինձ-մոլիբդենային, սսկի-հանքային ու սսկի-արծաթային, ծարիրային ու սնդիկային, ֆլյուորիտային և ուրիշ հանքանյութերի հանքավայրերը:

Ամբողջությամբ վերցրած ախտիվացման պրոցեսներն ստեղծել են մի շարք հարստագույն հանքային մարզեր և ունեցել են հսկայական նշանակություն այնպիսի մետաղների կուտակման համար, ինչպիսիք են անագը, վոլֆրամը, մոլիբդենը, ուրանը, կապարն ու ցինկը, պղինձը, ծարիրը, սնդիկը, սսկին, նիոբիումը, ինչպես նաև ոչ մետաղային օգտակար հանածոներից ալմաստի, ֆլյուորիտի, մուսկովիտի ու ֆրոգուպիտի համար:

ՎՐԱԿԱՆՈՒՅՈՒՆ ԵՎՏԻՎԱՅԱՅ ՄԱՐԶԵՐԻ ՄԵՏԱԳԱՄՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Абдуллаев Х. М., Борисов О. М. Об особенностях развития срединных массивов, «Сов. геол.», № 8, 1963, с. 17—26.

Активизированные зоны земной коры, новейшие тектонические движения и сейсмичность. Матер. II Всес. тект. совещ. в Душанбе. «Наука», 1964, с. 256.

Андреев Б. А. О геологических и геофизических особенностях районов сводовых поднятий. «Тр. ВСЕГЕИ», т. 85, 1963, с. 101—108.

Архипов И. В., Перфильев А. С. К вопросу об эволюции структуры и эндогенного рудообразования складчатых областей Евразии. «Геотектоника», № 3, 1968, с. 45—57.

Белюсов В. В. Явление тектонической активизации в развитии земной коры. В кн. «Активиз. зоны земной коры». «Наука», 1964, с. 7—13.

Билибина Т. В., Терентьев В. М. Металлогенетические эпохи Алданского щита. «Тезисы докл. годичной сессии ученого совета ВСЕГЕИ», 1966, с. 42—44.

Богданов Б. Д. Причины обратной пульсационной зональности в Маданском рудном районе (Болгария). Symp. probl. of postmagmatic ore deposition, v. 2, Prague, 1965, с. 167—170.

Бутурлинов Н. В., Панов Б. С. Об изверженных породах и рудной минерализации Донецкого бассейна. «Зап. ВМО», ч. 88, вып. 4, 1959, с. 419—429.

Ванечек М. Обзор геологического строения и металлогенетического районирования Чешского массива. В кн. «Некоторые рудные м-ния Чешского массива», Прага, 1963, с. 9—20.

Геологическое строение СССР, т. IV, Полезные ископаемые. «Недра», 1968, с. 9—436.

Горжевский Д. И., Козеренко В. Н., Фогельман Н. А. О металлогенетическом районировании зон активизации. В сб. «Закон. размещ. полезн. ископ.», т. VIII. «Наука», 1967, с. 139—158.

Дымков Ю. М. Урановая минерализация Рудных гор. Атомиздат, 1960, с. 100.

Ицксон Г. В. и др. История геологического развития и магматизма Малого Хингана. «Тр. ВСЕГЕИ», т. 55, 1961, с. 5—65.

Ицксон М. И. Типы подвижных поясов Тихоокеанской окраины СССР. «Сов. геология», № 1, 1964, с. 10—38.

Иовчев И. Основы геологии и полезные ископаемые территории НР Болгарии. София, 1965, с. 224.

Казанский В. И., Терентьев В. М. Пограничные зоны активизируемых платформ и их металлогения. «Изв. АН СССР, сер. геол.», № 1, 1968, с. 3—19.

- Кандер В. М.* Ртутное оруденение зон активизации юга Сибирской платформы и ее складчатого обрамления. Автореф. канд. дисс. Новосибирск, 1969, с. 3—25.
- Карпова Е. Д.* Сводово-глыбовые области и их металлогения. В кн. «Пробл. регион. металлогении и эндогенного рудообразования». «Тр. ВСЕГЕИ», т. 155, 1968, с. 223—249.
- Колотухина С. Е.* и др. Геология месторождений редких элементов Африки и их экономическое значение. «Наука», 1964, с. 304.
- Колотухина С. Е.* и др. Геология месторождений редких элементов Южной Америки. «Наука», 1968, с. 279.
- Кормилицын В. С.* и др. О новом свинцово-цинковом рудном поясе в Северо-Западном Прибайкалье. «Геол. рудных м-ний», № 2, 1966, с. 45—58.
- Кузнецов В. А.* Ртутные формации Сибири и Дальнего Востока и некоторые закономерности их размещения. «Законом. размещ. полезн. ископ.», т. VII, «Наука», 1964, с. 300—316.
- Лаффит П.* Металлогения Франции. «Вестн. МГУ», № 1. 1969, с. 26—41.
- Луйк А. А.* Проблема генезиса южноальпийских гидротермальных свинцовых месторождений Тянь-Шаня. «Недра», 1970, с. 176.
- Масайтис В. Л., Старицкий Ю. Г.* Структуры «дива» Восточной Азии. В кн. «Строение и развитие земной коры», «Наука», 1964, с. 156—157.
- Машка М.* Основные особенности структуры и развития Чешского массива. В кн. «Тектоническое развитие Чехословакии», Изд. ИЛ, 1963, с. 19—34.
- Международный геохимический конгресс. Тезисы докладов, тт. I, II, 1971 (т. I, 438 с., т. II, с. 439—1018).
- Мирчик Г. Ф.* Основные закономерности развития земного ядра. «Бюлл. МОИП, отд. геол.», т. XVIII, вып. 3—4, 1940, с. 169.
- Мрня Ф.* К вопросу генезиса рудных жил в Яхимове. В кн. «Contributions of the symposium on the problems of postmagmatic ore deposition», v. 1, Prague, 1963, p. 446—449.
- Нагибина М. С.* О тектонических структурах, связанных с активизацией и ревивацией. «Геотектоника», № 4, 1967, с. 15—26.
- Обручев В. А.* Роль и значение молодых глыбовых движений в создании рельефа и месторождений редких металлов. «Юбил. сб., посвящ. 30-летию Великой Окт. рев.», Изд. АН СССР, 1947, с. 22—46.
- Пуцаровский Ю. М.* Резонансно-тектонические структуры. «Геотектоника», № 1, 1969, с. 3—12.
- Радкевич Е. А.* Полицикличность оруденения и явления активизации в металлогенических провинциях Восточной Азии. В кн. «Вопросы металлогении», «Недра», 1965, с. 218—229.
- Скаржинский В. И.* Основные закономерности размещения и перспективы поисков месторождений ртути на Украине. «Геол. журнал АН УССР», т. 28. № 5, 1968, с. 3—14.
- Смирнов В. И.* Металлогения тектонических секторов геосинклиналей. «Вестник Моск. ун-та», № 1, 1961, с. 3—14.
- Смирнов В. И.* О классификации магматогенных рудных месторождений. «Вестник Моск. ун-та», № 5, 1957, с. 28—35.
- Соловьев А. Т.* Региональные и локальные закономерности размещения эпитептермальных флюоритовых месторождений. Матер. к совещ. «Разработка основ научного прогноза месторождений полезных ископаемых». ВСЕГЕИ, вып. 4, 1970, с. 48.
- Татаринов П. М., Строна П. А.* Основные особенности месторождений, связанных с вулканическими формациями. «Зал. ВМО», ч. 96, вып. 1, 1967, с. 3—11.
- Таусон Л. В.* и др. Геохимические особенности формирования гранитоидных магм в зонах активизации. Межд. геохим. конгресс. Тезисы докладов, т. II, 1971, с. 642—643.
- Твалчрелидзе Г. А.* Некоторые особенности металлогении Средиземноморского геосинклинального пояса. В кн. «Закон. размещ. полезн. ископ.», т. 7, Изд. АН СССР, 1964, с. 48—180.

- Тектоника Евразии (гл. ред. А. Л. Яншин). «Наука», 1966. с. 486.
- Томсон И. Н., Фаворская М. А. Глубинная блоковая тектоника, магматизм и ору-
денение. В кн. «Пробл. геологии минеральных месторожд., петрологии и мине-
ралогии», т. I, «Наука», 1969, с. 80—107.
- Устиев Е. К. Охотский тектоно-магматический комплекс и некоторые связанные с
ним проблемы. «Сов. геол.», № 3, 1959, с. 3—26.
- Хаин В. Е. Возрожденные (эпиплатформенные) орогенические пояса и их тектоническая
природа. «Сов. геол.», № 7, 1965, с. 3—17.
- Шлыгин Е. Д. Сравнительная характеристика Молданубской глыбы Чехословакии и
Кокчетавской глыбы Казахстана. В сб. «Орогенические пояса», «Наука», 1968,
с. 138—141.
- Щеглов А. Д. Мезозойские эндогенные рудные формации активизированной складча-
той области Забайкалья. В сб. «Эндогенные рудные формации Сибири и Даль-
него Востока». «Наука», 1966, с. 67—74.
- Щеглов А. Д. Металлогения областей автономной активизации. «Недра», 1968,
с. 180.
- Щеглов А. Д. Флюоритовые месторождения—индикаторы процессов тектоно-магма-
тической активизации. «ДАН СССР», т. 188, № 2, 1969, с. 421—423.
- Щеглов А. Д. Металлогения срединных массивов. «Недра», 1971, с. 148.
- Baumann L., Rösler H. I. Zur genetischen Einstufung varistischer und postvaristischer
Mineralisationen in Mitteleuropa. Bergakad. Dtsch. № 11, 1967, s. 660—664.
- Chen-Kuo-ta. Exemples of activizing regions in the Chinesea platform with special
reference to the „Cathasia“ problem. Acta Geol. Sinica, v. 36, № 3, 1956, p.
240—271.
- Geffroy J. et Sarcia J. A. La notion de „gîte épitermal uranifère“ et les problèmes
qu'elle pose. Bull. de la Soc. de France. s. VI, t. 8, № 3, 1958, p. 173—190.
- Solety P. Les gisements de fluorine de la Provence cristalline (Moures, Tanneron,
Esteral). Mém. du BRGM, № 39, 1965, p. 264.
- Werner C. D. Die Spatlagerstätten des Thüringer Waldes und ihre Stellung in Rah-
men der saxonischen Metallprovinz Mitteleuropes. Ber. Deutsch. Ges. Ser. Geol.
Wiss. Miner. Lagerstätten, 11, 1, Berlin, 1966, s. 5—45.

VIII. ՍՏՐՈՒԿՏՈՒՐԱ-ՄԵՏԱՂԱԾՆԱՅԻՆ ԶՈՆԱՆԵՐԻ ՏԻՊԵՐԸ ՈՒ ՆՐԱՆՑ ԲՆՈՐՈՇ ՀԱՆՔԱՅԻՆ ՖՈՐՄԱՅԻՆԱՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԸ (ՇԱՐՔԵՐԸ)

Ստրուկտուրա-մետաղածնային զոնա անվան տակ հասկացվում է խո-
շոր հանքային մարզի (ռեզիոնի) մի մասը, որն ունի երկրաբանական զար-
գացման իր առանձնահատկությունները:

Ակնհայտ է, որ չորաբանչյուր ստրուկտուրա-մետաղածնային զոնային
բնորոշ է հանքային ֆորմացիաների իր համալիրը, առաջացած տվյալ զո-
նայի նստվածքակուտակման, տեկտոնիկայի և մագմատիզմի պրոցեսների
հետ կապված: Երկրաբանական պրոցեսների այդ փոխադարձ կապը հնարա-
վորություն է տալիս կոնկրետ պայմաններում որոշակի հանքային ֆորմա-
ցիաների հայտնաբերման կանխատեսման համար:

Սովետական Միության տարածքի մետաղածնային շրջանացման, հան-
քային մարզերի ու ֆորմացիաների առանձնացման ու նկարագրման փոր-
ձեր ձեռնարկվել են նաև առաջ (Վ. Ի. Սմիռնով, 1963, Հ. Գ. Մաղաբյան,
1969 և ուրիշ.), սակայն նրանք օտար երկրների մետաղածնությունը չեն ընդ-
գրրվել, որի հետևանքով մետաղածնային վերլուծումը մնում էր թերի:

Ինչպես հայտնի է, հասակային տարբերություններից անկախ, ըստ զար-

զացման տիպի ու մետաղածնության բնույթի Սովետական Միութեան մետաղածնային մարդերը մեր կողմից բաժանվել են հինգ խմբերի. այդ թվում ծալքավոր զոնաների երեք հիմնական տիպեր ու երկու տիպեր՝ վահանների ու նրանց պլատֆորմների համար:

Պահպանելով այդ սկզբունքը ու լրացնելով այն արտասահմանյան երկրների մասին նյութերով, շարադրում ենք հանքային մարդերի հետևյալ խմբավորումը՝

1. Ուրալյան տիպ (Սովետական Միությունում նաև Կովկաս-Անդրկովկասյան, կամ Կամչատկա-Կորյակյան տիպ. արտասահմանյան երկրներում՝ Բալկանա-Անատոլիայի, Կորդիլիերների, Նորվեգիա-Ապալաչյան, Կամչոննանյան և այլն). այս տիպին բնորոշ է վաղ ու միջին շրջանի ինտենսիվ զարգացումը բազիտներով, հիպերբազիտներով ու շափավոր թթվության գրանիտոիդներով, որոնց հետ սերտորեն զուգակցվում են երկաթի, տիտանի, վանադիումի, քրոմի, պլատինի խմբի մետաղների, պղնձի, մոլիբդենի, ինչպես նաև ոսկու, կապարի ու ցինկի, ծարիրի ու սնդիկի և ավելի հազվագեղ պլոֆրամի (շեելիտաբեր սկաններում), ուրանի, իսկ ոչ մետաղներից՝ ասբեստի, ալմաստի ու բարիտի խոշոր կուտակումները:

2. Անդրբալկալյան տիպ (Սովետական Միությունում նաև Հյուսիսարևելյան, Հեռավորարևելյան, Կենտրոնական Ղազախստանյան տիպ. արտասահմանյան երկրներում՝ Արևմտաեվրոպական, Բուլղիայի, Արգենտինյան). բնորոշ է ուշ փուլերի ինտենսիվ զարգացումը թթու, այսպես կոչված «ինքնուրույն» գրանիտներով, որոնց հետ զուգակցվում են անագի, վոլֆերամի (վոլֆրամիտի), մոլիբդենի (վոլֆրամիտի հետ զուգակցված), բերիլիումի, տանտալի-նիոբիումի, լիթիումի, ինչպես նաև ոսկու, ուրանի, կապարի ու ցինկի, ծարիրի, ավելի հազվագեղ՝ սնդիկի խոշոր կուտակումներ. ոչ մետաղներից բնորոշ են ֆլյուորիտը, մուսկովիտը, ֆլուգոպիտը:

3. Միջինասիական տիպ (Սովետական Միությունում նաև Ալթայա-Սայանյան, Հյուսիսարևելյան Ղազախստանյան. արտասահմանյան երկրներում Արևելաավստրալիական, ենթադրաբար Ատլասյան) այստեղ միջին փուլերի զգալի զարգացման պայմաններում (շափավոր թթվության գրանիտներով) արտահայտվել են նաև վաղ, ուշ, վերջնական փուլերը մագմատիզմի բազմազան կազմությամբ:

Հանքայնացումն այդ տիպում բարդ է, մետաղների բազմազանությամբ, որոնք բնորոշ են ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ տիպի մարդերին (քրոմ, տիտան, երկաթ, պղինձ, մոլիբդեն, վոլֆրամ, կապար ու ցինկ, ոսկի, ծարիր ու սնդիկ, ավելի հազվագեղ՝ անագ, ուրան և այլն):

4. Բալթիական տիպ (Սովետական Միությունում նաև Սարմատյան, Ալդանյան, Անաբարյան. արտասահմանյան երկրներում ընդգրկում է վահանների Կանադական, Չինա-Կորեական, Աֆրիկա-Արաբական, Հնդկական, Արևմտաավստրալիական, Գվինական, Բրազիլական, Անտարկտիկական մինչքեմբրյան հիմքի ելքերը): Այստեղ ամենուրեք ինտենսիվ զարգացած են երկաթի, մանգանի, ոսկի-ուրանային հանքանյութերի մետամորֆոզեն հանքավայրերը, հազվագյուտամետաղային պեղմատիտները, բարձր միջին ջերմաստիճանային ոսկու և ուրանի հիդրոթերմալ հանքավայրերը:

Մեծ նշանակություն ունեն հին հասակի կոլչեդանային տիպի հանքա-

վայրերը, որոնք առաջացնում են պղնձի, կապարի ու ցինկի, մկնդեղի (Au, Ag, Se, Te, Jn, Cd-ի և ուրիշ խառնուրդներով) հսկայական կուտակումներ:

5. Սիբիրական—Ռուսական տիպ՝ պլատֆորմային թիկնոցում տեղադրված հանքանյութումով. արտասահմանյան երկրներում այդ տիպը լավ է ներկայացված Աֆրիկա-Արաբական վահանի, ինչպես նաև Կանադական, Բրազիլական, Չինա-Կորեական, Արեմտաավստրալիական, Անտարկտիկական և այլ վահանների թիկնոցում:

Բնորոշ են լիկվացիոն պղինձ-նիկելային (Co, Pt, Pd-ի խառնուրդով) հանքանյութերի հսկայական կուտակումները, պղնձի, կոբալտի, կապարի ու ցինկի, գերմանիումի շերտածե հանքանյութերի նստվածքային (կամ մասամբ տելեթերմալ) ծագման, ինչպես նաև երկաթի ու մանգանի օօլիտային նստվածքային հանքավայրերը:

Հավանաբար, բացի վերը բնութագրված հինգ տիպերից անհրաժեշտ է լրացուցիչ անջատել հանքային մարդերի վեցերորդ տիպը, որը բնագրկում է վահանների-պլատֆորմների, միջնադանդվածների ու ծալքավորումն ավարտած մարդերի ակտիվացած տեղամասերը:

Ակտիվացած շրջանների հանքային մարդերի համար հարկ է ընդգծել ալկալային-ուտրահիմքային, հիմքային-ուտրահիմքային ու ավելի հազվադեպ՝ թթու և ալկալային ապարների ճեղքային ինտրուզիաների լայն զարգացումը. առաջինների հետ կապված են կարբոնատային հանքանյութերի (նիտրիումի, հազվագյուտ հողերի, ցիրկոնիումի, ապատիտի, ֆլուօպիտի կուտակումներով) ու ալմաստի հանքավայրեր, իսկ երկրորդների հետ՝ լիկվացիոն պղինձ-նիկելային հանքանյութերի և մագնեզիոֆերիտային սկառնային ու հիդրոթերմալ հանքանյութերի կուտակումները:

Թթու գրանիտոիդների հետ զուգակցվում են անագի ու վոլֆրամի, ավելի հազվադեպ մոլիբդենի ու ոսկու, բազմամետաղային հանքանյութերի ու ֆլյուորիտի խոշոր կուտակումները, իսկ ալկալային ապարների հետ՝ ապատիտի ու նիտրիումի համաշխարհային նշանակություն ունեցող հանքավայրերը:

Առանձնացած հանքային մարդերում, որպես ենթակա ստորաբաժանումներ, մեկուսանում են ստրուկտուրա-մետաղածնային զոնաներ, որոնք ունեն երկրաբանական կառուցվածքի ու զարգացման յուրահատկություններ և սեփական հանքային ֆորմացիաների համալիրներ:

Այսպես. Ուրալյան մետաղածնային գոտու սահմաններում պարզ առանձնացվում են մի քանի ստրուկտուրա-մետաղածնային զոնաներ (ըստ Վ. Ի. Սմիռնովի, 1963):

1) գեոսինկլինալային խոր իջվածքներ ստորջրյա էֆուզիվներով, որոնք ներփակում են կոլչեղանային, գլխավորապես պղնձի հանքանյութում, ու պլագիոգրանիտների և սիենիտների ինտրուզիվներով երկաթի ու պղնձի սկառնային հանքանյութերի հանքավայրերով:

2) խորքային բեկվածքներ բազիտների-հիպերբազիտների ինտրուզիաներով ու նրանց հետ կապված քրոմի, տիտանամագնետիտային հանքանյութերի, պլատինի խմբի մետաղների ու ալմաստի հանքավայրերով:

3) ներքին գեոստիկլինորիումներ միջին փուլերի գրանիտային ինտրու-

գլխաներով ու նրանց հետ կապված ոսկու, մկնդեղի (արսենուպիրիտի), վոլֆրամի և ուրիշ մետաղների հանքավայրերով:

4) գետտինկյինալային շրջանի ուշ փուլի գրանիտոիդների փոքր ինտրուզիաներով ու կապար-ցինկային, ֆլյուորիտի, ծարիրի ու սնդիկի տեղեկներով հանքավայրերով:

Փոքր կովկասի, Հայկական ՍՍՀ-ի ու նրա սահմանամերձ վրացական ու Ադրբեջանական ՍՍՀ-ի շրջանների համար հեղինակը առանձնացրել է հետևյալ ստրուկտուրա-մետաղածնային ղոնաները (հանքային գոտիները):

1) Թերծավրավոր Սոմխեթա-Ղարաբաղյան ղոնա՝ էֆուզիվների լայն զարգացմամբ (կոլչեդանային հանքայնացումով) ու չափավոր թթվոթթյան գրանիտոիդների ինտրուզիաների ներդրմամբ երկաթաքեր սկառնային, կոբալտային ու բազմամետաղային հիդրոթերմալ հանքավայրերով:

2) Ինտենսիվորեն ծալքավորված Փամբակ-Ղանդեղուրի ղոնա՝ չափավոր թթու գրանիտոիդներով, որոնք զուգակցվում են պղինձ-մոլիբդենային, ոսկի-սուլֆիդային ու բազմամետաղային հանքավայրերով:

3) Սևան-Ամասիայի խորքային բեկվածքի ղոնա՝ բազիտներով-հիպերբազիտներով ու նրանց հետ կապված քրոմիտի հանքավայրերով, պլատինի խմբի մետաղների ու ալմաստի երևակումներով: Խորքային բեկվածքի կրկին աշխուժացման ու վերջնական փուլերի գրանիտոիդային փոքր ինտրուզիաների ներդրման հետ կապված այդ նույն ղոնայում զարգացած է ոսկի-սուլֆիդ-տելուրիդային ինտենսիվ հանքայնացումը, հայտնի են նաև ծարիրի, սնդիկի, մկնդեղի (ռեալգար-ատրիպիզմենտային) հանքանյութերի երևակումներ:

Լավ հայտնի է, որ քիմիական տարրերն ու նրանցից կազմված միներալները հանդիպում են ոչ թե մեկուսացած, այլ սովորաբար կազմում են քիմիական տարրերի զուգակցությունների կամ միներալների միավորումներ (պարագենեզիսներ), որոնք առաջացել են համարյա միաժամանակ և որոշակի երկրաբանական պայմաններում:

Քիմիական տարրերի զուգակցումներ (շարքեր) հասկացությունը առաջին անգամ մշակվել է մեր հայրենակից պրոֆ. Անդրեաս Արծրունու կողմից (Աախենի պոլիտեխնիկական ինստիտուտ) անցյալ դարի վերջում, որը իր հետագա զարգացումն է ստացել Վ. Ի. Վեռնադսկու, Վ. Մ. Գուլզմիտի, Ա. Ն. Զավարիցկու, Ա. Ե. Ֆերսմանի և ուրիշների աշխատություններում:

Մինևրալների պարագենեզիս (сМЕЖНОСТЬ) հասկացությունը XIX դարի սկզբին առաջին անգամ մտցրեց ակադեմիկոս-հանքաբան Վ. Մ. Սևերգինը, որն այդ անվան տակ հասկանում էր որոշակի երկրաբանական պրոցեսների հետևանքով միասին ու համարյա միաժամանակ առաջացած միներալների խումբ: Հետագայում միներալների պարագենեզիս հասկացությունը զարգացվել է Ա. Բրեյտհաուպտի, Ա. Գ. Բետեխտինի, Ս. Ս. Սմիռնովի և ուրիշների աշխատություններում:

Այժմ հաստատվում է, որ ոչ միայն քիմիական տարրերն ու միներալները, այլև հանքային ֆորմացիաները բնության մեջ մեկուսացված չեն և կազմում են սերտորեն փոխադարձ կապված միավորներ (համալիրներ կամ շարքեր), որոնք առաջանում են համարյա միաժամանակ որոշակի երկրա-

բանական պայմաններում, հանքային մարզերի որոշակի տիպերի սահմաններում:

Սակայն մինչև հանքային ֆորմացիաների համալիրների քննարկմանը անցնելը, պետք է պայմանավորվել, թե ինչ ենք հասկանում «հանքային ֆորմացիա» անվան տակ և ինչ տիպի հանքային մարզեր պետք է առանձնացնել:

Այդ խնդիրների վրա աշխատել են սովետական երկրաբանների մեծ կոլեկտիվներ՝ Ս. Ս. Սմիռնովի, Վ. Ի. Սմիռնովի, Յու. Ա. Բիլիբինի, Վ. Ա. Կուզնեցովի, Ե. Ա. Ռադկևիչի, Ա. Ի. Սեմյոնովի, հեղինակի և ուրիշների ղեկավարությամբ:

Ս. Ս. Սմիռնովի պատկերացումների համաձայն «հանքային ֆորմացիա» տերմինի տակ մենք հասկանում ենք հանքային առաջացումների մի խումբ, որը միավորված է միևերալային կազմության ընդհանրությամբ, գեներտիկական առանձնահատկություններով, երկրաբանական պայմանների դրսևորումով ու նման տնտեսական նշանակությունով:

Կարևոր է, որ հանքավայրի պատկանելությունը որոշակի հանքային ֆորմացիայի արտահայտում է ոչ միայն նրա առաջացման պայմանները, այլև կանխորոշում է, որպես կանոն, այդ հանքավայրի մասշտաբն ու հեռանկարները, հանքանյութերի որակը, որոնման, հետախուզման ու շահագործման մեթոդները:

Հանքային ֆորմացիաների ամբողջ բազմազանությունը մեր կողմից ստորաբաժանված է 50 միավորների (աղ. 11):

«Հանքային մարզ» անվան տակ հասկացվում է Երկրի կեղևի մի տեղամաս, որն ունի հանքայնացման յուրահատուկ գծեր՝ պայմանավորված նրա երկրաբանական զարգացման առանձնահատկություններով, այսինքն՝ նըստվածքակուտակման, մագմատիզմի, ստրուկտուրաների, մետամորֆիզմի տիպերով: Ընդ որում, հանքային մարզի երկրաբանական ու մետաղածնային զարգացումն ընթանում է որոշակի ուղղությամբ մի քանի փուլերով. այս կամ այն փուլերի դրսևորման ինտենսիվությունը որոշում է մարզի տիպը:

Նլնելով այդ սկզբունքից, առանձնացված են հանքային մարզերի հինգ տիպ, որոնք արդեն բնութագրվել են: Հաստատվում է, որ հանքային մարզերի որոշակի տիպերին համապատասխանում են բնորոշ հանքային ֆորմացիաների համալիրներ (շարքեր), որոնք սովորաբար առաջանում են համարյա միաժամանակ որոշակի երկրաբանական պայմաններում:

Հանքավայրերի գեներտիկական խմբերի ու հանքային ֆորմացիաների հարաբերակցությունը (ըստ Յու. Ա. Բիլիբինի, 1955, Հ. Գ. Մաղաքյանի, 1959, Ե. Ա. Ռադկևիչի, 1959, Վ. Ի. Սմիռնովի, 1963 և Ա. Ի. Սեմյոնովի և ուրիշների, 1965, Վ. Ա. Կուզնեցովի, 1966):

Աղյուսակ 11

| Հանքավայրերի գեներտիկական խմբերը | Հանքային ֆորմացիաները |
|----------------------------------|---|
| 1 | 2 |
| Մագմատիկ (բուն մագմատիկ) | 1. քրոմիտային 2. պլատինի 3. տիտանամագնետիտային 4. ապատիտ-մագնետիտային 5. ապատիտային |

Պեղմատիտային

Կարբոնատիտային

Սկանային

Փրեյզենային

Հիդրոթերմալ՝

ա) Բարձր ջերմաստիճանային ենթախումբ

բ) Միջին ջերմաստիճանային ենթախումբ

գ) Ցածր ջերմաստիճանային ենթախումբ

Կոլչեզանային

Տելեթերմալ

Սուրճրաբխային

Հրաբխածին (էքսզալյացիոն) — նստվածքային

Հոդմնահարման

Նստվածքային

Մետամորֆոզեն

6. լուարիտային

7. պղինձ-նիկելային-սուլֆիդային

8. ալմաստաբեր

9. հազվագյուտմետաղային պեղմատիտներ Zr, Ta — Nb, Be, Li, Sn, U, Th, Mo, Ti և ուրիշ տիպերով

10. հազվագյուտմետաղային-կարբոնատիտային

11. երկաթաբեր, շեկիտաբեր, պղնձաբեր, մոլիբդենաբեր, բազմամետաղաբեր, հելվինաբեր և ուրիշ հանքաբեր սկանների տիպերով

12. Sn-W-Mo-Be գրեյզենային

13. քվարց-կասիտերիտային

14. քվարց-վոլֆրամիտ-մոլիբդենիտային

15. քվարց-ոսկի-արսենոպիրիտային

16. պղինձ-մոլիբդենային

17. ոսկի-սուլֆիդային

18. բազմամետաղային

19. սուլֆիդ-կասիտերիտային

20. հինգէլեմենտանոց (Co-Ni-Bi-Ag-U)

21. ստիրնիտ-կինովար-ֆլյուորիտային

22. ուրանախեմային

23. պղինձ-ծծմբա-կոլչեզանային, կոլչեզանա-բազմամետաղային, պիրոտինա-պղնձային, բարիտա-բազմամետաղային կոլչեզանային տիպերով

24. պղնձաբեր ալազաբաբեր

25. կապար-ցինկային (կարբոնատային ապարներում)

26. սիդերիտային

27. պղինձ-տուրմալինային

28. մագնեզիտֆերիտային (տրապային)

29. անագային (ոխրիտային)

30. ոսկի-արծաթային

31. ստիրնիտ-կինովար-ֆերրերիտային

32. ռեալգար-աուրիպլիզմենտային

33. կայծքարա-երկաթաբեր

34. կայծքարա-մանգանաբեր

35. կոլչեզանային (էքսզալյացիոն-նստվածքային)

36. էլյուվիալ-դելյուվիալ ցրոններ

37. երկաթային լատերիտներ

38. արղնահողային լատերիտներ

39. նիկելային սիլիկատային հանքանյութեր

40. ինֆիլտրացիոն հանքանյութեր Fe, Mn, Cu, U-V տիպերով

41. ալյուվիալ ու ծովային ցրոններ

42. երկաթաբեր

43. մանգանաբեր

44. բոքսիտային

45. V-U-Mo-բեր թերթաբեր

46. սուլֆիդային Cu և Pb-Zn հանքանյութեր

47. երկաթային հանքանյութեր

48. մանգանային հանքանյութեր

49. Au-U-բեր կոնզոլոմերատներ

50. անդալուզիտային, կիանիտային (գիստենային), սիլիմանիտային թերթաբեր (հաճախ ուտիլով)։

Հանքային ֆորմացիաների համար առանձնացած համալիրների (շարքերի) բնութագրումը տես աղ. 12-ում (առանձնացված է 9-շարք, որոնց թիվը, հավանաբար, հետագայում կարելի է լրացնել):

Հանքային ֆորմացիաների համալիրների առանձնացումը, որոնք բնորոշ են հանքային մարզերի որոշակի տիպերին, ունի ոչ միայն տեսական, այլև կարևոր կիրառական նշանակություն. այն նպաստում է նպատակալաց որոնումներին, ինչպես նաև կանխատեսմանը, այսինքն տվյալ հանքային մարզում զեռես անհայտ, բայց այդ տիպի մարզերին բնորոշ ֆորմացիոն համալիրի առանձին օղակների հայտնաբերմանը:

Աղյուսակ 12

Հանքային ֆորմացիաների շարքեր

| Շարքի հանքային ֆորմացիաներն ու նրանց օգտակար հանածոները | Շարքի զարգացման երկրաբանական պայմանները | Տարածման մարզերը |
|--|--|--|
| 1 | 2 | 3 |
| <p>I Քրոմիտային, պլատինային, տիտանամագնետիտային, ալմաստաբեր (Cr, Pt, Os, Jr, Fe, Ti, V, ալմաստ)</p> <p>II Պղինձ-նիկելային սուլֆիդային, մագնեզիտֆերիտային, կարբոնատիտային, ալմաստաբեր (Ni, Cu, Pt, Pd, Nb, TR, ալմաստ)</p> <p>III Հաղվազյուրումետաղային պեղմատիտներ, Sn-W-Mo-Be զրելզենային, քվարց-կասիտերիտային, քվարց-վոլֆրամիտ-մոլիբդենիտային, սուլֆիդ-կասիտերիտային, ոսկի-սուլֆիդային, բազմամետաղային, ստիրնիտ-կինովար-ֆլյուորիտային (Sn, W, Mo, Be, Au, Pb-Zn, Sb, Hg)</p> | <p>կապված է Ուրալյան տիպի ծալքավոր զոնաների զարգացման վաղ փուլի հիպերբազիտների հետ</p> <p>տրապներ և ուլտրաճիբլային ալկալային ինտրուզիվներ (այդ թվում քեմբրիոններ) պլատինոիդների ու վահանների սահմաններում</p> <p>Անդրբալկանյան տիպի ծալքավոր զոնաների ու լիուլերի թթու զրանիտներ</p> | <p>Ուրալ, Միջերկրածովային ու Նաղաղօվկիանոսյան զոտիների ներքին զոնաները</p> <p>Մերիդական պլատինոիդ, Կոլայի թերակղզի, Ուկրաինական ՍՄՀ, Կանադական, Աֆրիկական, Արևմտաամլստրալիական վահաններ</p> <p>Անդրբալկալ, Հյուսիս-Արևելք, Հեռավոր արևելք, Ղաղախստան, Արևմտաամլստրալիական, Արևելա-սինյան զոտիներ</p> |
| <p>IV Հանքաբեր սկանների, պղինձ-մոլիբդենային, ոսկի-սուլֆիդային, բազմամետաղային, ստիրնիտ-կինովար-ֆլյուորիտային (Fe, Cu, Mo, W, Au, Pb-Zn, Sb, Hg)</p> | <p>Միջինասիական, Ուրալյան, Կովկաս-Անդրկովկասյան տիպի ծալքավոր զոնաների զարգացման միջին փուլերի շափավոր թթու զրանիտոիդներ</p> | <p>Միջին Ասիա, Ուրալ, Կովկաս, Անդրկովկաս, Միջերկրածովային ու Նաղաղօվկիանոսյան զոտիների ներքին զոնաները, Ատլասյան զոտի</p> |
| <p>V Կոլչեղանային, կալծբարա-երկաթային, կալծբարա-մանգանային (Cu, Pb-Zn, Fe, Mn)</p> | <p>սպիլիտա-կերատոֆրոնում ու սորֆերիտներում, կապված Կովկաս-Անդրկովկասյան տիպի ծալքավոր զոնաների վաղ փուլերի սուբճարիտային ինտրուզիաների հետ</p> | <p>Ուրալ, Կովկաս-Անդրկովկաս, Կամ-Յուննանյան զոտի</p> |

| 1 | 2 | 3 |
|--|---|--|
| <p>VI Ոսկի-արծաթային, կիր-նովար-ստիբնիտ-ֆերրե-րիտային, ռեալգար-մո-րիպիզմենտային, անագային-ռիտիտային (Au, Ag, Sb, As, Hg, W, Sn)</p> | <p>կապված դարգացման վեր-ջրնական փուլերի կամ տարբեր տիպի ծալքա-վոր զոնաների վրա վե-սարկոտորանների թթու էքստրուկտանների հետ</p> | <p>Անդրկովկաս, Անդրբայկալ, Կամչատկա-Կորյակյան զոնա, Չուկոտկա, Միջ-երկրածովային ու Խա-ղաղօվկիանոսյան գոտի-ների ներքին զոնաներ</p> |
| <p>VII Երկաթաբեր լատերիտ-ներ, արդնահողային լատերիտներ, նիկելի սի-լիկատային հանքանյութեր ասբոլանոլ (Fe, Al, Ni, Co)</p> | <p>կապված ուլտրահիմքային (Fe, Ni, Co), ալկալա-յին, թթու կամ հիմքային (Al) ապարների հողմ-նահարման կեղևի հետ</p> | <p>Ուրալ, Խաղաղօվկիանոս-յան գոտու ներքին զո-նա, Բրազիլական, Աֆ-րիկական, Հնդկական վահաններ</p> |
| <p>VIII Նստվածքային երկա-թային, նստվածքային մանգանային, նստված-քային բորսիտային (Fe, Mn, Al)</p> | <p>գեոսինկլինալային ծովա-յին, մերձափնյա, ավելի հազվադեպ պլատֆորմա-յին ավազանների տեղա-մասերում</p> | <p>Ռուսական պլատֆորմ, Ու-րալ, Կովկաս, Անդրկով-կաս, Մանգիշլակ և ու-րիշ. Արևմտյան ու Կենտ-րոնական Եվրոպա, ԱՄՆ, ԶՉՀ և այլն</p> |
| <p>IX Մետամորֆոզեն երկա-թային, մետամորֆոզեն մանգանային, ոսկի-ու-րանաբեր կոնգլոմերատ-ներ, անդալուզիտ, կիա-նիտ-սիլիմանիտային ուտիլոլ թերթաբեր (Fe, Mn, Au, U, Al, Ti):</p> | <p>տեղադրված են վահանե-րի հիմքի մինչքեմբրյան հաստվածքներում</p> | <p>Ուկրաինական, Ռուսական ու Մեքիբական պլատ-ֆորմների բյուրեղային հիմքի էլեբեր. Կանադա-կան, Բրազիլական, Աֆ-րիկական, Հնդկական, Չինա-Կորեական, Արև-մտաավստրալիական և այլ վահաններ:</p> |

IX. ԿԱՆԵԱՏԵՍՈՒՄԱՄԱՐՏԱՎԱՅԻՆ ՄԵՏԱՎԱՅՆԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Միներալա-հոսքային բազալի նկատմամբ երկրի ժողովրդական տըն-տեսության հարաձուռն պահանջների ընդլայնման կապակցությամբ, կանխա-տեսումային քարտեզների կազմման աշխատանքները մինչև Հայրենական մեծ պատերազմը (1941—1945 թթ.) ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի երկրաբանական գիտությունների ինստիտուտի առջև դրված հիմնական խըն-դիրներից մեկն էր: Ակադեմիկոս Ա. Ն. Զավարիցկին արդեն 1939 թ. առա-ջադրեց կանխատեսումային քարտեզի խնդիրներն ու էությունը. նրա կարծի-քով (Заварицкий, 1939) մենք պետք է գործ ունենանք այնպիսի քարտեզի հետ, որտեղ «խնդ-որ ձևով ներկայացված են մեկ կամ տարբեր տեսակի օգ-տակար հանածոների հայտնաբերման ենթադրություններ ու սպասելիքներ»:

Ստեղծված, այդ ենթադրությունները շարունակելով է կրեն գուշակման բնույթով, այլ կանխատեսումային քարտեզը, առաջին հերթին, պետք է լինի գիտականորեն հիմնավորված, այսինքն՝ հեղինակի ենթադրություններից բացի քարտեզի վրա անպայման պետք է արտահայտել այդ ենթադրությունների փաստական հիմքերը:

* «Դիվա» սարկոտորանների տակ հասկացվում են Երկրի կեղևի ակտիվացած տեղամասերը:

Կանխատեսման քարտեզներում հարկ է առաջին հերթին ներկայացնել հանքավայրի տեղայնացման երկրաբանական միջավայրը բնութագրող փաստերը: Սակայն, կանխատեսումային քարտեզում երկրաբանական քարտեզի բոլոր տարրերը չպետք է նշվեն, այլ միայն այնպիսիները, որոնք հանքայնացման տարածման համար ունեն կարևոր նշանակություն. միայն այդպիսի առաջիկայի հիմք կազմելուց հետո կատարվում է նրա համատեղումն օգտակար հանածոների քարտեզի հետ ու առանձնացվում են տարածություններ կամ ուղղություններ, որոնց սահմաններում պետք է կատարել որոնման աշխատանքներ:

1943—1944 թթ. Հայրենական պատերազմի ծանր շրջանում ու առաջին հերթին հաղվազուտ ու գունավոր մետաղների գծով երկրի մեծ կարիքների կապակցությամբ, մետաղածնային քարտեզների կազմման հիմունքների ու մեթոդիկայի պրոբլեմով հաշտությունները զբաղվում էր ակադեմիկոս Գ. Ի. Շչերբակովը, որն իր առաջարկությունները հրատարակեց պատերազմից հետո (Щербаков, 1945).

Սույն գրքի հեղինակի և Գ. Ի. Շչերբակովի համագործակցությամբ կազմվում է մետաղածնային քարտեզների մի ամբողջ շարք՝ սկզբում Փոքր Կովկասի և Հայկական ՍՍՀ տարածքների (1944—1947 թթ.), հետագայում մայրցամաքների մետաղածնության մանրամասշտաբ քարտեզ-սխեմա (1959 թ.): Վերջին քարտեզը 1960 թ. ցուցադրվել է Կոպենհագենում քարտեզների ցուցահանդեսում և Միջազգային երկրաբանական կոնգրեսի 21-րդ նրստաշրջանում, այդ հարցի վերաբերյալ կարդացվել է զեկուցում (1960 թ., Կոպենհագեն): Նշված, ինչպես և ավելի ուշ ընդհուպ մինչև 1972 թ. կազմված քարտեզների կազմման սկզբունքը միասնական է: Դրանց համար հիմք է ծառայում ստրուկտուրաերկրաբանական ամփոփված քարտեզը, որի վրա առանձնացվում են հրաբխածին, տերիզեն, կարբոնատային, կարմրապուր, ածխաբեր, աղաբեր և ուրիշ տարահասակ լեռնային ապարների ֆորմացիաների համալիրներ և առաջին հերթին այնպիսիները, որոնք որպես բարենպաստ լիթոլոգա-ստրատիգրաֆիկական զործոն ներփակում են հանքային կուտակումներ ու հսկում են նրանց տեղաբաշխումը: Քարտեզներում առանձնացած են հանքայնացման մեկուսացումը և տեղաբաշխումը հսկող մագմատիկ կոմպլեքսները, որոնք ստորաբաժանված են ըստ հասակի, ֆազիաների (էֆուզիվ, սուբհրաբխային, հիպաբիսալ, պլուտոնիկ) ու պետրոգրաֆիկական կազմության:

Հանքավայրերը խոշոր ստրուկտուրաների զարգացման առանձին փուլերի համար ստորաբաժանված են ըստ գեներտիկական տիպերի ու հանքային ֆորմացիաների, ընդ որում նշանների ձևը, որոնցով գծանշվում են հանքավայրերը, արտահայտում է գեներտիկական տիպն ու հանքային ֆորմացիան, նշանի գույնը՝ գլխավոր օգտակար հանածոն, չափը՝ հանքավայրի մասշտաբը (խոշոր, միջին, փոքր): Հիմնական նշանի ներսում կամ կողքին լրացուցիչ նշաններով արտահայտվում է (ինդեքսով) հանքայնացման հասակը, նրա կապը որոշակի մագմատիկ կոմպլեքսների հետ, հանքամարմինների ձևերը: Ռեզոլուցի կամ նրա մի մասի հանքայնացման պատկանելությունը ստրուկտուրայի զարգացման որոշակի փուլին, նշանակվում է տվյալ փուլի զարգացման ուղիղ գծերով: Կարևոր է ընդգծել, որ եղած ամբողջ տվյալներից

քարտեզի վրա պետք է արտացոլվեն միայն գլխավորները, որոնք որոշում են հանքայնացման տեղաբաշխման օրինաչափությունները ու թույլ են տալիս կանխատեսումներ կատարելու. քարտեզի վրա եղած բոլոր տվյալները ցույց տալու ձգտումը գործնականորեն դժվարացնում է քարտեզի օգտագործումը: Բոլոր դեպքերում քարտեզը պետք է հեշտ կարգացվի, իսկ նրա մետաղածնային բեռնվածությունը պետք է լինի աչքի դարձող. այդ նպատակներով ընդհանրացված ու թեթևացրած երկրաբանա-ստրուկտուրային հիմքը պետք է տրվի վառ (բայց ոչ փայլատ), իսկ մետաղածնային բեռնվածությունը առավել վառ ու մուգ երանգներով. միայն այդ դեպքում երկրաբանությունը չի նսեմացնի մետաղածնությունը: Ավելի ուշ, 1946—1947 թթ. կանխատեսումա-մետաղածնային քարտեզների կազմման անհրաժեշտության մասին նշեցին Յու. Ա. Բիլիբինը ու Ս. Ս. Սմիռնովը:

ՎՍԵՖՆԻ երկրաբանների կոլեկտիվի կողմից կազմված ՍՍՀՄ տարածքի կանխատեսումա-մետաղածնային ամփոփիչ քարտեզները իրենց հիմքում ունեցել են Յու. Ա. Բիլիբինի ու Ս. Ս. Սմիռնովի հայտնի գրույթը այն մասին, որ «մետաղային հանքավայրերի առաջացման պրոցեսները սերտորեն կապված են բոլոր այլ պրոցեսների, այսինքն՝ նստվածքակուտակման, տեկտոնական շարժումների (ստրուկտուրաների ձևավորման), մագմատիզմի ու մետամորֆիզմի հետ նրանց պատմական զարգացման մեջ»:

Քարտեզների վրա առանձնացված են ա) շարժուն գոտիները կամ տարբեր հասակի ծալքավոր մարզերն ու բ) պլատֆորմները՝ հին ու էպիպլեոզոյան:

Հաշվի առնելով արդի երկրաբանական գիտելիքները, շարժուն գոտիներն ու պլատֆորմների հետ միասին, հավանաբար, անհրաժեշտ է առանձնացնել Նրկրի կեղևի ստրուկտուրաների նաև երրորդ հիմնական տիպը՝ դ) ակտիվացած մարզերը: Առանձնացման իրավունք ունեն նաև միջնազանգվածները, որոնք բնորոշվում են ստրուկտուրայի ու հանքայնացման յուրահատուկ գծերով:

Հետպրոտերոզոյան ծալքավոր մարզերի համար քարտեզների վրա առանձնացված են հետևյալ ստրուկտուրա-ֆորմացիոն կոմպլեքսները՝

1) բուն գեոսինկլինալային զարգացման փուլի վաղ իջվածքներ (սկզբնական ու վաղ զարգացման փուլեր ըստ Յու. Ա. Բիլիբինի) հրաբխա-նստվածքային, ավելի հազվադեպ տերիգեն և ուրիշ ֆորմացիաների իշխումով:

2) Ինտրագեոսինկլինալային ծալքավոր գոտիների ձևավորման փուլի իջվածքներ (զարգացման միջին փուլեր ըստ Յու. Ա. Բիլիբինի) տերիգեն ու կարբոնատային, ավելի հազվադեպ հրաբխածին ֆորմացիաների գերակշռմամբ:

3) Ուշօրոգեն փուլերի ներգեոսինկլինալային խանդակների ու եզրային իջվածքների (զարգացման ուշ փուլերը ըստ Յու. Ա. Բիլիբինի) տերիգեն, խաչտաբղետ, ածխաբեր, աղաբեր, ավելի հազվադեպ՝ տերիգեն-կարբոնատային ֆորմացիաների, վերերկրյա հիմքային ու թթու հրաբխածինների գերակշռմամբ:

Պալեոզոյան ու մեզոկայնոզոյան մարզերի համար առանձնացված են ստրուկտուրա-մետաղածնային զոնաների շորս տիպեր. առաջին՝ գլխավորապես վաղ փուլերի հանքայնացումով, երկրորդ՝ գլխավորապես միջին փուլե-

քի հանքայնացումով, երրորդ՝ գլխավորապես ուշ փուլերի հանքայնացումով, չորրորդ՝ տարբեր փուլերի հանքայնացման տարածական համատեղություններ:

Ստորաբաժանման այդ տեսակետը շրջանակով մենք նշել ենք ստրուկտուրա-մետաղածնային առավել նպատակահարմար դասակարգման հնարավորությունը, որը ենթում է հանքայնացման վաղ ու միջին փուլերի ռեզիոնների սովորական համատեղությունից, որոնցից տարածականորեն մեկուսանում են հանքայնացման ուշ փուլերի իշխման ռեզիոնները, այդ երկու տիպի ռեզիոնների վրա վերադրվում են հանքայնացման վերջնական փուլերը:

Այսպիսով, ստրուկտուրա-մետաղածնային զոնաների տիպերը որոշ չափով այլ տեսք են ստանում. առաջին տիպ՝ վաղ ու միջին փուլերի գերիշխմամբ, երկրորդ տիպ՝ ուշ փուլերի գերիշխմամբ, երրորդ տիպ՝ վաղ ու միջին փուլերի վրա վերջնական փուլի վերադրումով և չորրորդ տիպ՝ ուշ փուլերի վրա վերջնական փուլի վերադրումով:

Ընդհանուր առմամբ ՍՍՀՄ տարածքի մետաղածնային քարտեզների կազմման մեթոդիկայի հիմքում դրված են ռեզիոնալ մետաղածնային վերլուծության սկզբունքները, որոնք մշակել են Ս. Ս. Սմիրնովի և Յու. Ա. Բիլիբինի կողմից ղեկավարած ՎՍԵԳԵՆ՝ երկրաբանների կուլեկտիվը: ՍՍՀՄ կանխատեսումա-մետաղածնային քարտեզների կազմման նախապատրաստման հետ միաժամանակ, սկսած հիմնականում 1955 թ., մեծ աշխատանքներ են տարվում առանձին խոշոր ռեզիոնների մետաղածնային քարտեզների կազմման գծով: Այսպես, ալագեմիկոս Կ. Ի. Սատպահը ավարտել է Կենտրոնական Ղաղախստանի մետաղածնային-կանխատեսումային քարտեզների վերաբերյալ (Сатпаев, 1955), Ա. Ի. Սեմյոնովը՝ Արևելյան Ղաղախստանի (Семенов, 1957), Ե. Գ. Կարպովան՝ Միջին Ասիայի արևելյան մասի (Карпова, 1958), Վ. Տ. Մատվենկոն ու Ե. Տ. Շատալովը ՍՍՀՄ հյուսիս-արևելքի մետաղածնային քարտեզի (Матвеевко, Шаталов, 1958), Գ. Ն. Շչերբան՝ Կենտրոնական Ղաղախստանի հազվագյուտ մետաղների համար կանխատեսումային քարտեզի (Щерба, 1959), Ի. Ն. Սիտկովսկին, Ադրբեջանի մետաղածնային քարտեզի վերաբերյալ (Ситковский, 1959), Վ. Ա. Կուզնեցովը Աեռնային Ալթայի (Кузнецов, 1960) վերաբերյալ մեթոդիկայի և փաստական հիմքի հետազոտությունները: Ավելի ուշ ավարտվում է ծալքավոր մարզերի (Семенов, 1960, 1963, Татариннов, 1959, Шаталов, 1964) ու պլատֆորմների (Старицкий, 1965) մետաղածնային քարտեզների կազմման հիմունքների ու մեթոդիկայի վերաբերյալ մի շարք հետաքրքիր աշխատանքներ:

Սովետական երկրաբանների այդ ուսումնասիրությունների ազդեցության տակ և ՍՍՀՄ-ում մշակված և ընդունված մեթոդիկայով կանխատեսումա-մետաղածնային քարտեզների կազմման գործը զարգանում է Ֆրանսիայում (Պ. Լաֆիտ, 1960, Պ. Լաֆիտ, Ֆ. Պերմանժա, Պ. Ռուտյե, 1965), Պորտուգալիայում (Thadeu, 1965), ԱՄՆ-ում (Lang, 1961), Հնդկաստանում (Ray) և այլն: Սակայն հարկ է նշել, որ մետաղածնային քարտեզների կազմման համար բոլորի կողմից ընդունված միասնական մեթոդիկա առայժմ չկա. կան առաջարկություններ, որոնք այս կամ այն չափով հիմնված են ընդհանուր ձանաշում գտած հիմունքների վրա:

Գեոսինկլինալային ծալքավոր մարզերում հանքավայրերը ստրուկտուրայի զարգացման փուլերով ենթաբաժանվում են երեք խմբի՝

1) մինչծալքավոր կամ զարգացման վաղ փուլ.

2) ծալքավոր կամ միջին և ուշ զարգացման փուլեր.

3) հետծալքավոր կամ զարգացման վերջնական փուլ:

Տարբեր փուլերի հանքայնացման զարգացման տարածքները ուրվագրծ-

վում են համապատասխան նշաններով. օրինակ մինչծալքավորները.



ծալքավորները , հետծալքավորները : Ռեզիոնի պոլիցիկ-

լիկ զարգացման դեպքում, օրինակ, քիմերյան ու ալպիական դարաշրջաննե-
րում, ինչպես այդ տեղի ունի Փոքր Կովկասում, սահմանների նշումները ար-
տահայտվում են տարբեր գույներով՝ քիմերյանը կապույտ գույնով, իսկ ալ-
պիականը՝ դեղինով: Տարբեր դարաշրջանների հանքայնացման տարածական
վերադրման դեպքում, կամ մեկ դարաշրջանի տարբեր փուլերի համար, տա-
րածությունների ուրվագծերը համապատասխանաբար վերագրվում են մեկը
մյուսի վրա:

Այսպես, Հայկական ՍՍՀ ղլխավոր հանքայնացման դարաշրջաններն են
քիմերյանն ու ալպիականը: Քիմերյան մետաղածնային դարաշրջանի ներ-
սում առանձնացվում են երկու փուլ՝ վաղ, մինչծալքավոր (վերին յուրա),
ներկայացված Ալավերդու ու Ղափանի հանքային շրջանների կոլլեզանային
հանքայնացումով և միջին, ծալքավոր (վերին յուրա-ստորին կավիճ)՝ Կողբի
ու Ծավի հանքային շրջանների երկաթի սկառնային ու պղնձի, ոսկի-սուլֆի-
դային ու բազմամետաղային հիդրոթերմալ ոչ մեծ հանքավայրերով:

Ալպիական մետաղածնային դարաշրջանի ներսում առանձնացվում են
հանքայնացման երեք փուլեր. վաղ, մինչծալքավոր (վերին կավիճ—էոցեն)¹
բուն մագմատիկ քրոմիտային, էքսհալյացիոն-նստվածքային երկաթ-ման-
դանային ու կոլլեզանային հանքավայրերով. միջին և մասամբ ուշծալքավոր
(վերին էոցեն—ստորին միոցեն)² բունմագմատիկ տիտանամագնետիտային,
երկաթի ու շեելիտ-մոլիբդենիտային սկառնային, պղինձ-մոլիբդենային,
բազմամետաղային, ոսկի-սուլֆիդային հիդրոթերմալ և ուրիշ հանքավայրե-
րով. վերջնական հետծալքավոր (միոցեն-պլիոցեն)³ ղլխավորապես ցածր
ջերմաստիճանային հիդրոթերմալ ոսկի-արծաթային (տելուրիդներով), սըն-
դիկային, ծարիրային, ռեալգար-ատրիպիդմենտային, կապար-ցինկային,
ինչպես նաև առանձին բարձր ջերմաստիճանային հիդրոթերմալ մետասոմա-
տիկ ապատիտ-մագնետիտային ու միջին ջերմաստիճանային էնարգիտ-
տենանտիտային հանքայնութեի հանքավայրերով: Ալպիական դարաշրջանի
վաղ ու միջին փուլերի հանքայնացման հետ տեղ-տեղ պարզորոշ համատեղ-
վում է կամ վերադրվում է նրա վրա նույն դարաշրջանի վերջնական փուլերի
հանքայնացումը (Սևանի խորքային բեկվածքների զոնա, Փամբակ-Ջանդե-
զուրի անտիկլինոբիտում և ուրիշ.):

Տարբեր դարաշրջանների ու փուլերի հանքայնացման արտահայտման ուր-
վագծած տարածությունները միաժամանակ արտացոլում են հանքայնացման
երկրաբանական հասակը, որի համար, ըստ երևույթին, լրացուցիչ պայմա-
նական նշանների կարիք չկա (հանքավայրերի նշանների կողքին ինդեքսնե-
րով նշել հասակը):

էնդոգեն հանքավայրերի կապը կոնկրետ մագմատիկ ֆորմացիաների հետ ինդեքսով նշվում է հանքավայրի նշանի կողքին, ընդ որում այդ ինդեքսը հանքավայրի և մագմատիկ ֆորմացիայի ուրվագծերի համար նույնն է, օրինակ Վ, ՎD, S և ուրիշ:

Հանքամարմինների մորֆոլոգիան ընդունված է արտահայտել լրացուցիչ նշաններով հանքավայրի նշանի ներսում (տե՛ս աղ. 13): Հանքավայրի գենետիկական տիպն ու ֆորմացիան արտահայտվում են նշանի ձևով, իսկ զբլխավոր օգտակար հանածոն կամ մետաղը՝ գույնով. եթե զլխավոր օգտակար հանածոները (կամ մետաղները) երկու և ավելի են, նշանը համապատասխանաբար բաժանվում է մասերի ու ներկվում է տարբեր գույներով: Նշանի շափերով արտահայտվում է հանքավայրի մասշտաբը. ընդ որում սովորաբար ընդունում են եռանգամ բաժանումը՝ խոշոր հանքավայրեր (նշանի շափը 10 մմ), միջին հանքավայրեր (շափը 7 մմ), փոքր հանքավայրեր ու երեսակումներ (շափը 5 մմ):

Այն դեպքերում, երբ հանքավայրը, անկախ նրա մասշտաբներից, շահագործվում է, կամ մոտակա ժամանակում շահագործման կհանձնվի, նշանի վերին մասում տեղադրվում է փոքրիկ դրոշակ (տե՛ս աղ. 13):

Հայկ. ՍՍՀ հանքավայրերի տարբեր գենետիկական տիպերի ու հանքային ֆորմացիաների առաջատար մետաղի համար ընդունված գույներն ու նշանների ձևերը բերված են համապատասխանաբար աղյուսակներ 14 ու 15-ում:

Աղյուսակ 13

Հանքամարմինների մորֆոլոգիայի ու հանքավայրերի շափերի նշանակումների աղյուսակ

| | |
|----------------------------|-------------------------------|
| Հանքամարմինների մորֆոլոգիա | Հանքավայրերի շափերը |
| ⊖ Շտոկներ. բնօր | □ △ ○ Խոշոր |
| ⊗ Շտոկվերպներ | □ △ ○ Միջին |
| Նրակներ | □ △ ○ Փոքր |
| — Շերտեր | □ △ ○ Շահագործվող հանքավայրեր |
| ~ Շերտածև | |

Աղյուսակ 14

Առաջատար մետաղների նշանակումների աղյուսակ*

| | |
|-----------|---------------------|
| Երկաթ՝ | Կարմիր |
| Մանգան՝ | Բաց-մանուշակագույն |
| Բրոմ՝ | Մուգ-կանաչ |
| Տիտան՝ | Մուգ-մանուշակագույն |
| Մոլիբդեն՝ | Կորչագույն |
| Վոլֆրամ՝ | Հազանակագույն |
| Մկնդեղ՝ | Նարնջագույն |
| Սարիր՝ | Վարդագույն |

*) Պլատինի, ալմաստի, հազվագյուտ ու ցրված մետաղների հանքաբերակազմները նշվում են համապատասխան ինդեքսներով՝ Pt (պլատին), A (ալմաստ), Re (ռենիում), Se (սելեն), Te (տելուր) և ուրիշ. երեսակումի նշանի ներսում կամ նրա կողքին:

| | |
|---------------------|-------------|
| Սնդիկ՝ | բալի գույն |
| Պղինձ՝ | բաց-կանաչ |
| Կապար, ցինկ, արծաթ՝ | կապույտ |
| Ալյումին՝ | արծաթագույն |
| Ոսկի՝ | դեղին |

Հայկ. ՍՍՀ հանքավայրերի գենետիկական տիպերի ու հանքային ֆորմացիաների համար բնորոշված նշանների ձևն ու գույնը*)

| Գենետիկական տիպը | Հանքային ֆորմացիաներն ու նրանց տիպերը |
|---|---|
|  Բուն մագմատիկ |  Զրոմիտային |
| |  Տիտանամագնետիտային |
| |  Նեֆելինային սիենիտներ (կավահող) |
|  Պեգմատիտային |  Մոլիբդենաբեր Պեգմատիտներ |
|  Սկանային |  Երկաթաբեր տիպ |
| |  Շեելիտ-մոլիբդենիտաբեր տիպ |
|  Հիդրոթերմալ բարձր ջերմաստիճանային |  Ապատիտ-մագնետիտային |
| |  Արսենոպիրիտային |
| |  Զվարց-հեմատիտային |
|  Հիդրոթերմալ միջին ջերմաստիճանային |  Պղինձ-մոլիբդենային |
| |  Բազամետաղային |
| |  Ոսկի-սուլֆիդային |
| |  Տենանտիտ-էնարգիտային (պղինձ-մկնդեղային) |

Յու. Գ. Ստարիցկու տվյալների համաձայն պլատֆորմների համար մետաղածնային քարտեզների կազմման հիմունքները նկատելիորեն կտարբերվեն ծալքավոր գեոսինկլինալային մարզերից (Старицкий, 1965):

Պլատֆորմների մետաղածնային վերլուծության ժամանակ առաջին հերթին հարկ է տարբերել հիմքի ու նստվածքային ծածկոցի մետաղածնությունը: Պլատֆորմի հիմքը ուսումնասիրելիս պետք է օգտագործվեն ծալքավոր (շարժուն) գեոսինկլինալային ղոնանների համար մշակված սկզբունքներ:

*) Գունավոր պայմանական նշանների փոխարեն կարող են օգտագործվել նրբազծիկային նշաններ:

բը. պլատֆորմային ծածկոցի մետաղածնային անալիզի ընթացքում առաջին հերթին հարկ է առանձնացնել օգտակար հանածոների երկու խոշոր խումբեր՝ ներծին ու արտածին, և հաշվի առնել պլատֆորմների համար երկաթի, մանգանի, ալյումինի, ֆոսֆորիտների, կալիումային աղերի, ծծմբի, վանադիումի և մի քանի ուրիշ արտածին հանքավայրերի մեծ զերը: Պլատֆորմների ներծին հանքավայրերը կապված են մագմատիկ ապարների երկու խմբերի հետ՝ հիմքային-ուտրահիմքային ու ալկալային-ուտրահիմքային: Առաջին խմբի հետ կապված են իսլանդական սպաթի, լիկվաջիոն պղինձ-նիկելային (Co, Pt, Pd և ուրիշ խառնուրդներով) խոշոր հանքավայրեր, երբեմն էլ երկաթի հանքանյութերի կուտակումներ. երկրորդ խմբի հետ կապված են ալմաստի, ապատիտի, ֆլորոպիտի, հազվագյուտ տարրերի (Nb, TR, Zr և ուրիշ.)

- | | |
|--|---|
|  Հիդրոթերմալ ցածր ջերմաստիճանային |  Կապար-ցինկային |
| |  Ծարիրային |
| |  Մոդրկային |
| |  Ռեալգար-աուրիպիզմենտային |
| |  Ոսկի-արծաթային (տնուրիդներով) |
|  Կոլչեդանային |  Ծծմբակոլչեդանային տիպ |
| |  Պղինձկոլչեդանային տիպ |
| |  Բարիտ-քաղմամետաղային տիպ |
|  Հքսալյացիոն-նստվածքային |  Երկաթային տիպ |
| |  Մանգանային տիպ |
|  Նստվածքային |  Մագնետիտային ավազաքարեր |
|  Մետամորֆոզեն |  Երկաթաբեր թերթաքարեր |
| |  Ռուտիլաբեր թերթաքարեր |

հանքավայրեր, որոնք բացի ալմաստից կապված են կարբոնատիտների հետ: Առանձին պլատֆորմներում խոշոր ներծին (տեկեթերմալ) կուտակումներ են կազմում պղինձը, կապարը ու ցինկը: Նշված օգտակար հանածոների կուտակումները ձգտում են խզման խախտումների, որոնց երկայնքով ներդրվում են հանքաբեր մագմատիկ կոմպլեքսներ, կամ սահմանափակվում են պլատֆորմի ծածկոցի նստվածքային էֆուզիվ ապարների որոշակի հորիզոններով: Վերը նշված տվյալների համաձայն պլատֆորմի մետաղածնային քարտեզի վրա պետք է գծանշվեն՝ ա) տեկտոնական սարուկտուրաները, այդ թվում խզման խախտումները, բ) նստվածքային ու էֆուզիվ առաջացումները,

դ) ինտրուզիվ կոմպլեքսները, դ) օգտակար հանածոների հանքավայրերն ու նրանց կապը մագմատիկ և նստվածքային ֆորմացիաների հետ: Այդ հիմքի վրա պետք է առանձնացվեն մետաղածնային մարդերը, զոնաները, հանքային հանգույցներն ու դաշտերը և տրվեն կանխատեսումներ (առանձին վերադիր քարտեզների ձևով):

Վահանների-պլատֆորմների ակտիվացած մարդերի համար, ծալքավորումը արդեն ավարտած զոնաների ու միջնադանդվածների կանխատեսումային-մետաղածնային քարտեզների կազմման նպատակով պետք է մշակվի ինքնուրույն մեթոդիկա: Այս դեպքում անկախ հարևան ծալքավոր մարդերի զարգացումից պետք է հաշվի առնել ինքնավար (ըստ Ա. Գ. Շչեգլովի) մետաղածնության բնույթը, կամ երբեմն էլ մետաղածնության անդրադարձած բրնույթը (հարևան ծալքավոր զոնաներում կատարվող տեկտոնա-մագմատիկական պրոցեսների արձագանքը): Ակտիվացած մարդերի մետաղածնության համար վճռական նշանակություն ունի կամարա-բեկորային շարժումների բնույթը, որոնք ուղեկցվում են բեկվածքներով և յուրահատուկ հանքայնացում հակող մագմատիզմով:

Ռիֆեյում ու դեռնում ակտիվացած ստորինպրոտերոզոյան հիմքում նըշվում են ակտիվացման երկու շրջաններ, որոնց հետ կապված է բարձր ալկալիության գրանիտոիդների և ուլտրահիմքային-ալկալային ապարների կոմպլեքսների ներդրումը: Գրանիտոիդների հետ կապված են հազվագյուտմետաղային պեգմատիտների խոշոր հանքադաշտեր (Ta-Nb-Be-Li հանքայնացումով) ու ալբիտացված ալկալային գրանիտների զանգվածներ կասիտերիտ-կոլումբիտային (Sn-Nb) կամ պիրոքլորային (Nb, TR) հանքայնացումով, իսկ ուլտրահիմքային-ալկալային կոմպլեքսների հետ կապված են կարբոնատիտների խոշոր հանքավայրեր հազվագյուտմետաղային (Nb, Zr, Ta, TR և ուրիշ) հանքայնացմամբ:

Որոշ պլատֆորմներում արտահայտվում է նաև ավելի երիտասարդ մեզոկայնոզոյան ակտիվացումը քլամբերիտներով ու նրանց հետ կապված ալմաստներով (Հարավ-Աֆրիկյան, Սիբիրական, Հնդկական, հավանաբար նաև Բրազիլական պլատֆորմները), ինչպես նաև գրանիտոիդներով ու ալկալային ինտրուզիաներով ու նրանց հետ կապված ոսկու ու մոլիբդենի հանքավայրերով (Ալդան):

Կալեդոնյան ու հերցինյան ծալքավորումն ավարտված մարդերում, մեզոկայնոզոյան ակտիվացման հետ կապված է գրանիտոիդների ու ալկալային կոմպլեքսների ներդրումը, որոնք ուղեկցվում են անագ-վոլֆրամային, մոլիբդենային, ոսկեբեր, ֆլյուորիտային հանքայնացումով:

Վերջապես ակտիվացած միջնադանդվածներին բնորոշ են գրանիտոիդներն ու ալկալային ինտրուզիվները, որոնց հարում է բազմամետաղային, ոսկեբեր, ֆլյուորիտային և ուրանային հանքայնացումը: Ակտիվացած ըստըրոկտուրաների մետաղածնության առաջ առանձնահատկությունները հարկ է հաշվի առնել մետաղածնային քարտեզներ կազմելիս, նշելով հին հիմքի հանքայնացումը և առանձին ակտիվացման շնորհիվ վերադրված ավելի երիտասարդը:

Ակտիվացման փուլի մետաղածնության համար պետք է հաշվի առնել նրա ձգտումը կամարա-բեկորային ու ուրիշային ստրուկտուրաների ու խը-

զումների զոնաների, ինչպես նաև հանքայնացման սերտ կապը բարձր ալ-կալիոսթյան ապարների հետ, որոնց հետ կապված է օգտակար հանածոների յուրահատուկ համալիր (հազվագյուտմետաղային պեգմատիտներ ու կարբոնատիտներ, արաստաբեր քիմբերլիտներ, Sn-W, Au, բազմամետաղային, ֆլուորիտային, ուրանային հանքավայրեր):

Մետաղածնային քարտեզում կանխատեսումների նպատակով լրացուցիչ նշվում են գեոֆիզիկական անոմալիաների ուղվագծերը (մագնիսամետրիկ, գրավիմետրիկ), գեոքիմիական անոմալիաները (մետալոմետրիայի ու հիդրոգեոքիմիայի առաջնային ու երկրորդական պսակների տվյալներ), սկզած-քային հանույթի արդյունքները (բերվածքներում Au, կինովարի, կասիտերիտի և ուրիշ արժեքավոր միներալների բարձր պարունակությունների ուղվագծերը), հիդրոթերմալ փոփոխված ապարների (երկրորդային քվարցիտներ, պրոպիլիտներ, լիտոփենիտներ, պիրիտացված, սերիցիտացված, կաոլինիտացված) զարգացման տարածությունները:

Առանձնացված ստրուկտուրա-մետաղածնային զոնաների ուղվագծերը սովորաբար եզրավակելու կարիք չկա, այլ կետագծերով պետք է նշել նրանց շարունակությունը, որը ուղղություն է տալիս որոնումներին: Տարբեր հասակի նույնատիպ զոնաները ափսոսաբար լինելու համար առաջարկվում է ցույց տալ նրանց միևնույն գույնով, իսկ հասակը զոնայի ուղվագծի ներսում նշել ինդեքսով:

Որոշակի հանքային ֆորմացիաների ու մետաղների որոնման համար հեռանկարային տարածությունները, նշելով նրանց սահմաններում աշխատանքների կազմակերպման հերթականությունը, տրվում են առանձին վերադիր քարտեզների ձևով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՆԵԱՏԵՍՈՒՄԱ-ՄԵՏԱՂԱԾՆԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՆԵՐԻ
ԿԱԶՄՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Билибин Ю. А. Общие принципы металлогенических исследований. «Изв. АН СССР, сер. геол.», № 5, 1947, с. 95—112.
- Билибин Ю. А. Работы С. С. Смирнова в области металлогении. «Зап. ВМО», 77, № 5, 1947, с. 95—112.
- Бородаевская М. Б. Некоторые вопросы структурного картирования колчеданных полей Восточного склона Урала. «Тр. ЦНИГРИ», вып. 29. 1959, с. 3—12.
- Дворцова К. И. Крупномасштабное геологическое картирование в рудоносных субаэральных вулканогенных формациях. «Тезисы докл. годичной сессии Ученого совета ВСЕГЕИ», 1966, с. 48—50.
- Лаффит П., Перманжа Ф., Рутье П. Металлогеническое картирование, металло- текты и региональная геохимия. В сб. «Проблемы геохимии», «Наука», 1965, с. 669—672.
- Масакьян И. Г. Металлогеническая карта мира и некоторые закономерности распределения рудных месторождений в земной коре. Докл. сов. геологов на XXI сессии МГК. Пробл. 20—Вопросы металл. Госгеолтехиздат, 1960, с. 5—18.
- Материалы научной сессии по металлогеническим и прогнозным картам. Алма-Ата, 1958, с. 319.
- Орлова А. В., Шаталов Е. Т. Методические основы составления металлогенических и прогнозных карт рудных районов. В сб. «Закон. размещ. м-ний полезн. ископ.», т. II, Изд. АН СССР, 1959, с. 461—494.
- Принципы и методика составления металлогенических и прогнозных карт. «Недра», 1966, с. 194.

- Семенов А. И. Принципы и методика составления металлогенической карты Восточного Казахстана. «Сов. геол.», № 5, 1957, с. 110—127.
- Семенов А. И., Лабазин Г. С., Грушевой В. Г., Татаринцов П. М. О металлогенической карте СССР масштаба 1:5000000. «Сов. геол.», № 8, 1960, с. 3—25.
- Семенов А. И. О крупномасштабных прогнозных картах. «Сов. геол.», № 10, 1963, с. 86—96.
- Ситковский И. Н. Основные черты металлогении Азерб. ССР и металлогеническая карта Азербайджана. Изд. АН Каз. ССР. Алма-Ата, 1959, с. 60—76.
- Старицкий Ю. Г. О принципах и методике составления обзорных металлогенических карт для платформ. «Сов. геол.», № 10, 1965, с. 3—19.
- Твалчрелидзе Г. А. Опыт геотектонической классификации зон. «Узб. геол. журнал», № 1, 1960, с. 69—81.
- Хаин В. Е. О тектонической основе металлогенического районирования. «Геол. рудных м-ний», № 4, 1962, с. 7—28.
- Шаталов Е. Т. и др. Основные принципы составления, содержание и условные обозначения металлогенических и прогнозных карт рудных районов. «Недра», 1964, с. 194.
- Щерба Г. Н. Прогнозная карта на редкие металлы для Центрального Казахстана. Изд. АН Каз. ССР, Алма-Ата, 1959, с. 179—184.
- Щербаков Д. И. Принципы и методика составления металлогенической карты. «Сов. геол.», № 5, 1945, с. 52—64.
- Щербаков Д. И. О картах прогноза для магматогенных рудных месторождений. «Изв. АН СССР, сер. геол.», № 4, 1952, с. 9—14.
- Bariand P., Issakhanian V., Sadrzadeh M. Preliminary metallogenic map of Iran. Geol. Surv. Iran. rept, 7, 1965, p. 47.
- Lang A. H. Metallogenic maps. Econ. Geol. v. 56, № 6, 1961, p. 1123—1132.
- Ramovič M. The Methode of Preparation of Prognostification metallogenetic maps. Geoloski glasnik, v. 8, 1963, p. 147—190.
- Thadeu D. Carte minière du Portugal (notica explicative) Lisboa, 1965, p. 46.

ҶУРИДУСОНИ ҶУМҲУРИЯТИ ШИМА ҚИСМИ ҚИТЌОИ РАҶИОНИ ҚИРҶИСТОН

- Абдуллаев Х. М. Рудно-петрографические провинции и вопросы их классификации. Ташкент, 1961, с. 5—153.
- Активизированные зоны земной коры, новейшие тектонические движения и сейсмичность. Мат. II Всес. тект. совещ. в Душанбе. «Наука», 1964, с. 256.
- Белевцев Я. Н. Особенности металлогении докембрийских щитов. «Изв. АН СССР, сер. геол.», № 11, 1965, с. 17—28.
- Белоусов В. В. Основные вопросы геотектоники. 2-е изд. Госгеолтехиздат, 1962, с. 608.
- Белоусов В. В. Земная кора и верхняя мантия материков. «Наука», 1966, с. 123.
- Билибин Ю. А. Металлогенические провинции и металлогенические эпохи. Госгеолтехиздат, 1955, с. 86.
- Билибин Ю. А. Основные проблемы металлогении. Избр. труды. Изд. АН СССР, тт. I, II, III, 1958—1961: т. I, 1958, с. 432; т. II, 1959, с. 488; т. III, 1961, с. 518.
- Билибин Ю. А. Общие вопросы металлогении золота. Избр. тр., т. 2, Изд. АН СССР, 1959, с. 488.
- Билибин Ю. А. Диоритовые магмы как первоисточник золотого оруденения. Избр. труды, т. III, 1961, с. 518.
- Богданов А. А., Муратов М. В., Хаин В. Е. Об основных структурных элементах земной коры. «БМОИП. отд. геол.», т. XXXVIII, вып. 3, 1963, с. 3—32.
- Богданович К. И. Рудные месторождения. СПб., 1912—1913, т. I, с. 293; т. II, с. 475.
- Быховер Н. А. Распределение мировых ресурсов минерального сырья по эпохам рудообразования. Госгеолтехиздат, 1963, с. 474.
- Быховер Н. А. Экономика минерального сырья. «Недра», 1967, с. 368.

- Вахромеев С. А.* Краткий курс металлогении. Ротапринт Иркутского политехн. ин-та, 1970, с. 3—137.
- Виноградов А. П.* Закономерности распределения химических элементов в земной коре. «Геохимия», № 1, 1956, с. 6—52.
- Володин В. Ф.* Докембрийские золотоносные конгломераты СССР, «Сов. геол.», № 12, 1965, с. 17—26.
- Геологическое строение СССР, т. IV. Основные закономерности размещения месторождений полезных ископаемых на территории СССР. «Недра», 1968, с. 9—436.
- Геология россыпей. Сборник. «Наука», 1965, с. 400.
- Герасимовский В. И.* Месторождения урана зарубежных стран. Изд. АН СССР, 1959, с. 143.
- Гинзбург А. И., Нечаева Е. А.* и др. Редкометалльные карбонаты. «Геол. м-ний редких элементов», вып. № 1, Госгеолтехиздат, 1958, с. 128.
- Горжевский Д. И., Козеренко В. Н.* О закономерностях размещения полиметаллических и редкометалльных зон и поясов (на примерах Алтая, Вост. Казахстана и Забайкалья). «Геол. сб. Львов. геол. об-ва при ун-те им. Ив. Франко», № 2—3, 1956, с. 36—61.
- Горжевский Д. И., Козеренко В. Н.* Связь эндогенного рудообразования с магматизмом и метаморфизмом. «Недра», 1965, с. 300.
- Горжевский Д. И., Козеренко В. Н., Фогельман Н. А.* О металлогеническом районировании зон активизации. В сб. «Законом. размещ. полезн. ископ.», т. VIII, «Наука», 1967, с. 139—158.
- Дзоцинидзе Г. С.* Роль вулканизма при образовании осадков. «Недра», 1965, с. 12—153.
- Дзоцинидзе Г. С.* Роль вулканизма в образовании осадочных пород и руд. «Недра», 1969, с. 340.
- Домарев В. С.* Проблемы общей металлогении. «Вестн. ЛГУ», № 24, 1968, с. 28—40.
- Заридзе Г. М.* Эндогенные формации орогенных областей. «Недра», 1970, с. 311.
- Захаров Е. Е.* К вопросу о классификации месторождений полезных ископаемых. «Изв. АН СССР, сер. геол.», № 5, 1953, с. 50—81.
- Захаров Е. Е.* Опыт металлогенического районирования Европы. В сб. «Закон. размещ. полезн. ископ.», т. II, Изд. АН СССР, 1959, с. 5—24.
- Ивантишин М. Н.* Металлогения докембрийских щитов мира. В сб. «Металлогения докембрийских щитов и древних подвижных зон», Изд. АН УССР, 1960, с. 30—42.
- Ирдли А.* Структурное развитие С. Америки. Изд. ИЛ, 1954, с. 666.
- Казницын Ю. В.* Гипотеза природы металлогенической специализации и некоторые ее минералого-геохимические аспекты. «Зап. ВМО», ч. 94, вып. I, 1965, с. 28—40.
- Карпова Е. Д.* Сводово-глыбовые области и их металлогения. «Тез. докл. годичной сессии Ученого совета ВСЕГЕИ», 1966, с. 55—57.
- Коллектив авторов (под ред. Е. Т. Шаталова). Обзор геологических понятий и терминов в применении к металлогении. Изд. АН СССР, 1963, с. 7—182.
- Константинов М. М., Куликова Е. Я.* Урановые провинции. Атомиздат, 1960, с. 306.
- Константинов М. М.* Проблемы происхождения стратифицированных месторождений свинца и цинка. Изд. АН СССР, 1963, с. 183.
- Константинов Р. М., Жариков В. А., Омеляненко Б. И.* и др. Изучение закономерностей размещения минерализации при металлогенических исследованиях рудных районов. «Недра», 1965, с. 303.
- Королев А. В.* Эндогенное рудообразование в развитии Земли. Избр. труды. Изд. АН Узб. ССР, 1963, т. 1, с. 500.
- Косыгин Ю. А.* Тектоника территории СССР. «Природа», № 9, 1955, с. 28—38.
- Котляр В. Н.* О магматических комплексах и оруденении. «Сов. геол.», сб. 43, 1955, с. 61—70.
- Котляр В. Н.* Древние металлоносные конгломераты. «Сов. геол.», № 11, 1960, с. 45—67.

- Котляр В. Н. Экструзивы, эффузивы и оруденение. «Изв. высш. учебн. завед., сер. геол. и развед.», № 9, 1960, с. 60—82.
- Котляр В. Н. Типы месторождений, связанных с палеовулканизмом. В сб. «Рудоносность вулканогенных формаций», «Недра», 1965, с. 7—29.
- Котляр В. Н. Основы теории рудообразования. «Недра», 1970, с. 464.
- Красный Л. И. Подвижные области и вопросы их номенклатуры. «Сов. геол.», № 10, 1961, с. 118—136.
- Кузнецов В. А. и др. Основы формационного анализа эндогенной металлогении Алтае-Саянской области. СО АН СССР, «Наука», 1966, с. 5—155.
- Кузнецов Ю. А. Главные типы магматических формаций. «Недра», 1964, с. 387.
- Лазько Е. М. Основы региональной геологии СССР, т. I, Изд. Львов. ун-та, 1962; т. II, «Недра», 1965; т. III, «Недра», 1971 (т. I, с. 424; т. II, с. 550; т. III, с. 344).
- Магакьян И. Г. Рудные месторождения. Изд. 1-е. «Недра», 1955, с. 335; изд. 2-е, АН Арм. ССР, 1961, с. 548.
- Магакьян И. Г. Основы металлогении материков. Изд. АН Арм. ССР, 1959, с. 280.
- Магакьян И. Г. Металлогеническая карта мира и некоторые закономерности распределения рудных месторождений в земной коре. Докл. сов. геол. на XXI сессии МГК. Пробл. 20—Вопросы металлогении. Госгеолтехиздат, 1960, с. 5—18.
- Магакьян И. Г. Типы рудных провинций и рудных формаций СССР. «Недра», 1969, с. 224.
- Материалы научной сессии по металлогеническим и прогнозным картам. Изд. АН Каз. ССР, Алма-Ата, 1958, с. 319.
- Муратов М. В. Складчатые геосинклинальные пояса Евразии. «Геотектоника», № 6, 1965, с. 3—18.
- Муратов М. В. Главнейшие эпохи складчатости и мегастадии развития земной коры. «Геотектоника», № 1, 1965, с. 6—29.
- Муратов М. В. Сравнительная тектоника фундамента древних платформ и история их формирования. «Изв. высш. уч. завед., сер. геол. и развед.», № 3, 1966, с. 3—48.
- Муратов М. В. Геосинклинальные складчатые пояса и системы, их этапы развития и магматизм. «Изв. АН СССР, сер. геол.», № 10, 1967, с. 47—67.
- Набоко С. И. Гидротермальный метаморфизм пород в вулканогенных областях. Изд. АН СССР, 1963, с. 1—171.
- Нагибина М. С. Тектоника и магматизм Монголо-Охотского пояса. Изд. АН СССР, 1963, с. 464.
- Нагибина М. С. О тектонических структурах, связанных с активизацией и ревивацией. «Геотектоника», № 4, 1967, с. 15—26.
- Наковин Н. И. Вторичные кварциты, их минералогические фации, генезис и практическое значение. «Изв. АН СССР, сер. геол.», № 1, 1947, с. 135—150.
- Наливкин Д. В. Геология СССР, в 2-х томах. Изд. АН СССР, 1962, с. 813.
- Обручев В. А. История геологических исследований Сибири. Изд. АН СССР, вып. 9, 1959, с. 199.
- Обуэн Ж. Геосинклинали (проблемы происхождения и развития). «Мир», 1967, с. 302.
- Павловский Е. В. Сравнительная тектоника мезо-кайнозойских структур Восточной Сибири и Великого рифта Африки и Аравии. «Изв. АН СССР, сер. геол.», № 5, 1948, с. 25—38.
- Пейве А. В., Сеницын В. М. Некоторые основные вопросы учения о геосинклиналиях. «Изв. АН СССР, сер. геол.», № 4, 1950, с. 28—52.
- Пейве А. В. Общая характеристика, классификация и пространственное расположение глубинных разломов. Главные типы глубинных разломов. Ст. 1. «Изв. АН СССР, сер. геол.», № 1, 1956, с. 90—105.
- Пейве А. В. Связь осадконакопления, складчатости, магматизма и минеральных месторождений с глубинными разломами. Главнейшие типы глубинных разломов. Ст. 2. «Изв. АН СССР, сер. геол.», № 3, 1956, с. 57—71.
- Пилипенко П. П. Скарны и оруденение. «Тр. МГРП», т. 13, 1939, с. 3—81.

- Потемкин К. А., Спицын А. Н.* Редкие элементы в россыпях зарубежных стран. Изд. АН СССР, 1963. с. 97.
- Пуцаровский Ю. М.* Резонансно-тектонические структуры. «Геотектоника», № 1, 1969, с. 3—12.
- Радкевич Е. А.* К вопросу о типах металлогенических провинций и рудных районов. В сб. «Закон. размещ. полезн. ископ.», т. II, Изд. АН СССР, 1959, с. 25—59.
- Рудоносность вулканогенных формаций. Госгеолтехиздат, 1963, с. 325.
- Рудообразование и металлогения. Киев, «Наукова думка», 1971, с. 183.
- Салоп Л. И.* Геология Байкальской горной области, т. 2. Магматизм, тектоника, история геол. развития. «Недра», 1967, с. 7—699.
- Семенов А. И., Лабазин Г. С., Грушевой В. Г., Татаринов П. М.* О металлогенической карте СССР масштаба 1:5000000. «Сов. геол.», № 8, 1960, с. 3—25.
- Семенов А. И.* О типах металл. провинций в складчатых областях СССР. «Геол. рудных м-ний», т. 5, № 4, 1963, с. 3—23.
- Сердюченко Д. П.* и др. Людвиговитовая минерализация и (Fe-B-TR)-парагенез в древних платформах. ИМГРЭ, Изд. АН СССР, 1963, с. 135.
- Серпухов В. И.* Общие принципы регионального металлогенического анализа. «Сов. геол.», сб. 43, 1955, с. 27—42.
- Славин В. И., Яранов Д.* Срединные массивы европейской части альпийской геосинклинальной области. Докл. сов. геол. на XXI сессии, МГК. Пробл. 18. Изд. АН СССР, 1960, с. 137—149.
- Смирнов В. И.* Опыт металлогенического районирования территории СССР. «Изв. АН СССР, сер. геол.», № 4, 1959, с. 3—21.
- Смирнов В. И.* Металлогения геосинклиналей. В сб. «Закон. размещ. полезн. ископ.», т. V, Изд. АН СССР, 1962, с. 17—81.
- Смирнов В. И.* Очерки металлогении. Госгеолтехиздат, 1963, с. 163.
- Смирнов В. И.* Геология полезных ископаемых. «Недра», 1965, с. 5—590.
- Старицкий Ю. Г.* Некоторые особенности магматизма и металлогении платформенных областей. В сб. «Закон. размещ. полезн. ископ.», Изд. АН СССР, т. I, 1958, с. 252—274.
- Судовиков Н. Г.* Региональный метаморфизм и некоторые проблемы петрологии. Изд. ЛГУ, 1964, с. 550.
- Суражский Д. Я.* Методы поисков и разведки месторождений урана. Атомиздат, 1960, с. 7—240.
- Татаринов П. М., Страна П. А.* Основные особенности месторождений, связанных с вулканогенными формациями. «Зап. ВМО», вып. I, 1967, с. 3—11.
- Твалчрелидзе Г. А.* Металлогенические особенности некоторых элементов геосинклинальных областей. «Изв. АН СССР, сер. геол.», № 3, 1962, с. 3—16.
- Твалчрелидзе Г. А.* Опыт систематики эндогенных месторождений складчатых областей. «Недра», 1966, с. 176.
- Томсон И. Н.* Глубинные разломы и оруденение в складчатых областях. В кн. «Вопросы металлогении», МГК, XXII сессия, докл. сов. геологов. пробл. 16, «Недра», 1965, с. 82—90.
- Точилин М. С.* Происхождение железистых кварцитов. Госгеолтехиздат, 1963, с. 168.
- Уран в древних конгломератах. Коллектив авторов, под ред. В. Н. Котляра. Госгеолтехиздат, 1963, с. 188.
- Ферман А. Е.* Геохимические проблемы Союза. Изд. АН СССР, 1931, с. 39.
- Хаин В. Е.* О тектонической основе металлогенического районирования складчатых зон. «Геология рудных месторождений», № 4, 1962, с. 7—28.
- Хаин В. Е.* Общая геотектоника. «Недра», 1964, с. 3—479.
- Хаин В. Е.* Об основных тенденциях в развитии земной коры. «Вестн. МГУ». № 1, 1968, с. 25—40.
- Харкевич Д. С.* Обзор представлений о металлогенической классификации складчатых областей и платформ. «Узб. геол. журнал», № 4, 1960, с. 48—57.
- Шаталов Е. Т.* О металлогеническом районировании и применяемой терминологии. «Геология рудных месторождений», № 3, 1959, с. 3—34.

- Шаталов Е. Т.* Некоторые предложения о принципах классификации рудоносных площадей. «Узб. геол. журнал», № 6, 1961, с. 62—84.
- Шаталов Е. Т.* и др. Обзор геологических понятий и терминов в применении к металлогении. Изд. АН СССР, 1963, с. 7—182.
- Шаталов Е. Т.* и др. Основные принципы составления металлогенических и прогнозных карт. «Недра», 1964, с. 194.
- Шатский Н. С.* Гипотеза Вегенера и геосинклинали. «Изв. АН СССР, сер. геол.» № 4, 1946, с. 7—22.
- Шатский Н. С.* Геотектоническая закономерность распределения эндогенных рудных месторождений. «Изв. высш. учебн. завед., сер. геол. и разв.», № 11, 1960, с. 9—18.
- Шейнманн Ю. М.* Платформы, складчатые пояса и развитие структур земли. «Тр. ВНИИ-1», вып. 49, Магадан, 1959, с. 1—63.
- Шейнманн Ю. М.* Очерки глубинной геологии. «Недра», 1968, с. 3—231.
- Шипулин Ф. К.* Интрузии и рудообразование. «Недра», 1968, с. 215.
- Штилле Г.* Геотектоническое расчленение истории Земли. Избр. тр. «Мир», 1964, с. 887.
- Щеглов А. Д.* Металлогения областей автономной активизации. «Недра», 1968, с. 180.
- Щеглов А. Д.* Металлогения средних массивов. «Недра», 1971, с. 148.
- Щербаков Д. И.* Принципы и методика составления металлогенической карты. «Сов. геол.», № 5, 1945, с. 52—64.
- Янишик А. Л.* Проблема срединных массивов. «БМОИП, отд. геол.», т. XX, вып. 5, 1965, с. 8—39.
- Bateman A.* Economic mineral Deposits, 2 ed New-York, 1948, p. 916.
- Blondel F., Lasky S.* Mineral reserves and mineral resources-Econ. Geol. v. 51, № 7, 1956, p. 686—697.
- Borhert H.* Der initiale Magmatismus und die zugehörigen Lagerstätten. Neues Jahrb. Min. Bd 991, s. s. 541—572, 1957.
- Goldschmidt V. M.* Geochemistry. Clarendon Press, Oxford 1954, p. 730.
- Krenkel E.* Geologie und Bodenschätze Afrikas. Leipzig, 1957, s. 1—597.
- Kun D. N.* The mineralogenetic provinces of Africa. Econ. Geol. v. 58, № 5, 1963, p. 774—790.
- Launay L. De.* Traité de métallogénie. Gîtes minéraux et métallifères. 3 tomes, 1913, 858, 801 et 624 p. p.
- Newhouse* Ore deposits as related to structural features. Princeton Univ. Press, 1942, p. 3—267.
- Park C. F.* The zonal theory of ore deposits. Econ. Geol. v. 45, 1950, p. p. 226—248.
- Park C. F.* The problem of vertical zoning. Econ. Geol. v. 52, № 5, 1957, p. 477—481.
- Park C. F. IR Mac Diarmond R.* Ore deposits. San-Fransisco, Londra, 1964.
- Raguin E.* Géologie des gîtes minéraux. Masson édit. Paris, 1961, p. 1—686.
- Ramdohr P.* Die Uran-und Goldlagerstätten Witwatersrand-Bleind River District-Dominion reef-Serra de Jacobina. Abhandl. der Deutschen Academie der Wissenschaften zu Berlin. Klasse für Chemie, Geologie. Jahrgang 1958, № 3, s. 35.
- Routhier P.* Les gisements métallifères. Masson, Paris, 1963, 2 v., p. 1282.
- Schneiderhöhn H.* Erzlagerstätten. Kurzvorlesungen sur Einführung und zur Wiederholung, 1944, Yena, s. 1—262.
- Schulling R. D.* Tin belts on the continents around the Atlantic Ocean. Econ. Geol. v. 62, № 4, 1967, p. 540—550.
- Symposium sobre yacimientos de manganeso.* XX Congr. Geol. intern, t. t. 1—V, Mexico, 1956, t. III, p. 36—78; p. 257—346.
- Turneaure F. S.* Metallogenetic provinces and epochs. Econ. Geol. Fiftieth Anniversary Volume, 1905—1955, pt. I, 1955, p. 38—98.

Ա Մ Փ Ռ Փ Ռ Ի Մ

Ներկայացված աշխատությունում ամփոփված է մետաղային հանքավայրերի և մետաղածնության ուսումնասիրման բնագավառում հեղինակի համարյա քառասունամյա աշխատանքի փորձը, այդ գիտելիքների գծով ամբողջ մատչելի դրականության օգտագործմամբ:

Հեղինակն իր առջև խնդիր է դրել շարագրել մետաղածնության հիմունքները որպես մի գիտություն, որը բացահայտում է մետաղային օգտակար հանածոների հանքավայրերի տեղաբաշխման օրինաչափությունները Երկրի կեղևում և ընդգրկում է գլխավոր մետաղածնային ստրուկտուրաների տիպերը՝ վահանների ու նրանց պլատֆորմների, ծալքավոր շարժուն գոտիների, ակտիվացման մարզերի (իրենց զարգացման փուլերով), վերջինների հանքայնացման առանձնահատկությունների և տարածության մեջ այդ փուլերի մեկուսացման նկարագրությունը:

Գրքում բերված է վահանների ու նրանց պլատֆորմների, ծալքավոր շարժուն ու ակտիվացած մարզերի մետաղածնության նկարագրումը: Այդ մեծ փաստացի նյութի հիման վրա բերվում են որոշ առաջարկություններ կանխատեսումային-մետաղածնային քարտեզների կազմման մեթոդիկայի ու որոշակի երկրաբանական պայմանների համար տիպիկ հանքային ֆորմացիաների համալիրների (շարքերի) նպատակասլաց որոնումների կազմակերպման վերաբերյալ: Նշված ծավալով գիրքը կարող է ծառայել որպես ամփոփիչ աշխատություն աշխարհի մետաղածնության վերաբերյալ, ինչպես նաև ԲՈՒՀ-ում ուսանողներին կարգացվող «Մետաղածնության» դասընթաց:

Աշխատանքում հիմնավորվում է հանքայնացման օրինաչափ տեղաբաշխումն Երկրի կեղևում, կապված նստվածքակուտակման, մագմատիզմի ու ստրուկտուրաների զարգացման պրոցեսների հետ:

Հիմնական եզրակացությունները հետևյալն են՝

1. Երկրի կեղևի երեք հիմնական ստրուկտուրաների տիպերի՝ վահանների և նրանց պլատֆորմների, ծալքավոր շարժուն գոտիների և ակտիվացման մարզերի հանքայնացումը զարգանում է մի քանի փուլերով և ունի իր յուրահատկությունը:

2. Հանքավայրերի որոշակի տիպերն օրինաչափորեն կապված են որոշակի տեկտոնա-մագմատիկական համալիրների հետ, որոնք առաջանում են խոշոր ստրուկտուրաների զարգացման տարբեր փուլերում ու տարածության մեջ մեկուսանում են, որն իր հերթին ուղղություն է տալիս որոնումներին:

3. Վահանները-պլատֆորմները մի կողմից, շարժուն ծալքավոր գոտիները մյուս կողմից, իսկ ակտիվացած մարզերը իրենց հերթին ունեն հանքայնացման նույնատիպ բնույթ և հանքային ֆորմացիաների որոշակի համալիրներ (շարքեր):

4. Նկարագրված տասը՝ Ռուսական, Սիբիրական, Չինա-կորեական, Կանադական, Աֆրիկա-Արաբական, Հնդկական, Արևմտաավստրալիական, Գվիանական, Բրազիլական, Անտարկտիկական վահանների ու նրանց ֆորմացիաների մետաղածնությունը զարգանում է երեք հաջորդական փուլերով, կապված, համապատասխանաբար վահանի հիմքի ձևավորման, նրա պլատֆորմային թիկնոցի ու նրանց վրա վերադրված ակտիվացման պրոցեսների հետ:

Հիմքի ապարների հետ կապված են երկաթի ու մանգանի հանքանյութերի, ոսկու և ուրանի մետամորֆոզեն հանքավայրերը, ինչպես նաև հազվագյուտմետաղային պեղմատիտներն ու ոսկեբեր և ուրանաբեր քվարցային երակները. ծածկոցի ապարներում տեղադրված են պղնձի ու կապար-ցինկային հանքանյութերի ստրատիֆորմ հանքավայրերը, կոլչեդանային հանքավայրերն ու լիվվացիոն պղինձ-նիկելային (Co, Pt, Pd-ով) հանքանյութերը. վերջապես, վահանի ու նրա պլատֆորմի ակտիվացման պրոցեսների հետ կապված են հազվագյուտմետաղային պեղմատիտները, կարբոնատիտներ, ալմաստաբեր քիմբերլիտները:

Վահանների ու նրանց պլատֆորմների հանքայնացման բնորոշ առանձնահատկությունն է արտակարգ հարստությունը երկաթով, մանգանով, ոսկով, ուրանով, նիկելով, կոբալտով, պլատինոիդներով, բերիլիումով, նիոբիումով, տանտալով, ցիրկոնով, հազվագյուտ հողերով, ալմաստով, նվազ չափով պղնձով, կապարով ու ցինկով, գերմանիումով:

5. Աշխատանքում նկարագրված տասնչորս՝ Միջերկրածովային, Խաղաղօվկիանոսյան, Ուրալյան, Ալթայա-Սայանյան, Միջինասիական և ուրիշ ծավալներ շարժուն գոտիների մետաղածնությունը զարգանում է չորս հաջորդական՝ վաղ, միջին, ուշ ու վերջնական փուլերով, հաճախ բիցիկլիկ կամ պոլիցիկլիկ եղանակով, մի քանի մետաղածնային դարաշրջանների ընթացքում:

Առանձին փուլերը դրսևորվում են տարբեր ինտենսիվությամբ, բնորոշվում են հանքայնացման առանձնահատկությունով ու մեկուսանում են տարածություն մեջ:

Վաղ փուլի համար բնորոշ են կոլչեդանային ու երկաթ-մանգանային հանքավայրերը, կապված հրաբխածինների հետ, ինչպես նաև քրոմիտի, տիտանամագնետիտի ու պլատինի խմբի մետաղների հանքավայրերը հիպերբազիտներում:

Միջին փուլում, չափավոր թթվ գրանիտոիդների հետ կապված, առաջանում են երկաթի, պղնձի, վոլֆրամի (շեելիտի) և ուրիշ սկառնային հանքավայրերը, ինչպես նաև պղինձ-մոլիբդենային, ոսկի-սուլֆիդային, բազամետաղային, ծարիր-սնդիկային, ալիլի հազվագույն ուրանային հանքանյութերի հիդրոթերմալ հանքավայրերը:

Ուշ փուլում տեղի ունի թթու գրանիտների ներդրում, որը ուղեկցվում է հազվագյուտմետաղային պեղմատիտներով, անագի, վոլֆրամի, մոլիբդենի, բերիլիումի գրեյզենային հանքավայրերով, ինչպես նաև ոսկու, բազամետաղային, ծարիր-սնդիկային և ուրանային հիդրոթերմալ հանքավայրերով: Վաղ ու միջին փուլերի հանքային կոմպլեքսները սովորաբար հանդիպում են համատեղ ու լավ են ներկայացված Ուրալում և Միջերկրածովային ու Խաղաղօվկիանոսյան գոտիների ներքին զոնաներում, որտեղ կապված են օվկիանոսային (բազալտային) տիպի կեղևի հետ:

Ուշ փուլի հանքային կոմպլեքսները, որպես կանոն, տարածականորեն մեկուսացված են առաջին երկուսներից, լավ են ներկայացված ծալքավոր շարժուն գոտիների արտաքին զոնաներում՝ Ասիայի Հյուսիս-Արևելքում ու Հարավ-Արևելքում, Արևմտյան Եվրոպայում, Կենտրոնական Ղազախստանում, որտեղ կապված են կոնտինենտալ (սիալիկ) տիպի կեղևի հետ:

Վերջնական փուլի համար արտակարգ բնորոշ է ցածր ջերմաստիճանային հիդրոթերմալ հանքանյութումը, որը ներկայացված է ոսկի-արծաթային, ծարիր-սնդիկային, ռևալգար-աուրիպիգմենտային, ուրանախեժային հանքանյութերով: Այդ տիպը տարածության մեջ վերագրվում է մի կողմից վաղ և միջին փուլերի, մյուս կողմից ուշ փուլի զարգացման մարզերի վրա, որը լավ դիտվում է Բալիաններում, Անդրկովկասում, Անդրբայկալում, ԱՄՆ-ի արևմտյան նահանգներում, Մեքսիկայում և ուրիշ շրջաններում:

Կարևոր է ընդգծել, որ ծալքավոր զոնաների զարգացման առանձին փուլերն ու նրանց համապատասխանող հանքավայրերի շարքերը առանձնանում են տարածության մեջ, ստեղծելով ստրուկտուրա-մետաղածնային զոնաներ նստվածքակուտակման, մագմատիզմի, ստրուկտուրաների ու հանքանյութային առանձնահատկություններով: Սովորաբար խիստ գերիշխում են միայն 1—2 փուլ, հաղորդելով մետաղածնային զոնային իր յուրահատկությունը, որը որոշում է կանխատեսման ու որոնողական աշխատանքների գիտականորեն հիմնավորված ուղղությունները:

6. Ակտիվացման պրոցեսները վերագրվում են վահանների ու նրանց պլատֆորմների, ծալքավոր գոտիների ու միջնազանգվածների վրա և արտահայտված են կամարային բարձրացումների ու իջվածքների գոյացումով, որոնք բարդեցված են խախտումներով. վերջինների երկայնքով ներդրվում են բարձր ալկալիոթյան գրանիտոիդները, ուլտրահիմքային-ալկալային ու հիմքային ինտրուզիաները, որոնց հետ կապված է յուրահատուկ հանքանյութում:

Վահանների ու պլատֆորմների ակտիվացման հետ կապված են հազվագյուտմետաղային պեգմատիտները, կարբոնատիտները, ալմաստաբեր քիմբերլիտները. ծալքավորումն ավարտած մարզերի ու միջնազանգվածների սահմաններում ակտիվացման հետ կապված են բազմամետաղային, ոսկի-սուլֆիդային, սնդիկ-ծարիրային, ստիբիտ-ֆերբերիտ-շեելիտային, ֆլյուորիտային և ուրանախեժային հանքանյութերը:

7. Նույնատիպ մետաղածնային վահանների ու պլատֆորմների, ծալքավոր շարժուն գոտիների, ակտիվացած մարզերի համար, անկախ նրանց երկրաբանական հասակից ու միմյանցից բաժանող տարածությունից, հաստատվում է մեծ նմանություն նույնանուն հանքային ֆորմացիաների հանքավայրերի ու հանքանյութերի տիպերի միջև:

Այսպես ամենուրեք նույնատիպ են կոլչեզանային, պղինձ-մոլիբդենային, սուլֆիդային, պղինձ-նիկելային և ուրիշ հանքային ֆորմացիաների հանքանյութերը. սովորական աչքով չեն տարբերվում միմյանցից, օրինակ, Փոքր Կովկասի պղնձի կոլչեզանային կամ պղինձ-մոլիբդենային հանքանյութերը Բուլղարական Ժողովրդական Հանրապետության (Միջերկրածովային գոտի), կամ Կամչատկայի ու Բրիտանական Կոլումբիայի (Խաղաղօվկիանոսյան գոտի) նույն տիպի հանքանյութերից:

Այս հանգամանքը վկայում է հանքային պրոցեսի զարգացման գլոբալ օրինաչափությունների առկայության մասին Երկրի կեղևում:

8. Յուրաքանչյուր ստրուկտուրա-մետաղածնային զոնայի (կամ մետաղածնային մարզի տիպի) համար մեր կողմից առանձնացվում են հանքային ֆորմացիաների բնորոշ համալիրներ (շարքեր), որոնք տվյալ երկրաբանական պայմաններում առաջանում են համատեղ ու համարյա միաժամանակ:

Կանխատեսումային-մետաղածնային քարտեզները, որոնց վրա առաջարկվում է տեղադրել հանքայնացման տիպը ու տեղադրման օրինաչափությունները հսկող երկրաբանական առանձնահատկությունները, տվյալ երկրաբանական պայմանների համար բնորոշ հանքային ֆորմացիաների համալիրներ (շարքերի) պատկերացումների հետ համակցված, կոչված են օժանդակելու կիրառական խնդիրների լուծմանը, այսինքն որոշակի երկրաբանական ստրուկտուրաների համար տիպիկ հանքային ֆորմացիաների ողջ շարքի նպատակապես որոնող-հետախուզական աշխատանքների կազմակերպմանը:

Բ Ո Վ Ա Ն Կ Ա Ռ Ի Թ Յ ՈՒ Ն

| | |
|--|-----|
| Ն եր ա ծ ու թ յ ու ն | 5 |
| I. Մետաղածնութիւն ծագման ու զարգացման համառոտ պատմութիւնը | 7 |
| II. Մետաղածնութիւն հիմնական խնդիրները և տերմինարանութիւնը | 10 |
| III. Մետաղածնային մարդերն ու դարաշրջանները | 12 |
| IV. Մետաղածնային ստրուկտուրաների հիմնական տիպերն ու նրանց զարգացման փուլերը | 18 |
| V. վաճանների ու նրանց պլատֆորմների մետաղածնութիւնը | 25 |
| 1. Արևելահնդկական (Բուսական) վաճանն ու նրա պլատֆորմը | 25 |
| 2. Սիրիական վաճանն ու նրա պլատֆորմը | 31 |
| 3. Չինա-կորեական վաճանն ու նրա պլատֆորմը | 37 |
| 4. Կանադական վաճանն ու նրա պլատֆորմը | 40 |
| 5. Աֆրիկա-Արաբական վաճանն ու նրա պլատֆորմը | 44 |
| 6. Հնդկական վաճանն ու նրա պլատֆորմը | 57 |
| 7. Արևմտաավստրալիական վաճանն ու նրա պլատֆորմը | 61 |
| 8. Գլխական վաճանն ու նրա պլատֆորմը | 63 |
| 9. Բրազիլական վաճանն ու նրա պլատֆորմը | 66 |
| 10. Անտարկտիդայի վաճանն ու նրա պլատֆորմը | 77 |
| վաճանների ու նրանց պլատֆորմների մետաղածնութիւն հիմնական գծերը | 81 |
| VI. Նալբաղոր շարժուն գոտիների մետաղածնութիւնը | 84 |
| 1. Միջերկրածովային մետաղածնային գոտին | 85 |
| 2. Խաղաղօվկիանոսյան մետաղածնային գոտին | 112 |
| 3. Ռուսական մետաղածնային գոտին | 152 |
| 4. Թայմիրյան մետաղածնային գոտին | 165 |
| 5. Ալթայա-Սայանյան մետաղածնային գոտին | 169 |
| 6. Ղաղախստանյան մետաղածնային գոտին | 177 |
| 7. Միջինասիական մետաղածնային գոտին | 184 |
| 8. Արևմտաալթայական մետաղածնային գոտին | 193 |
| 9. Նորվեգա-Ապալաչյան մետաղածնային գոտին | 201 |
| 10. Ստրալյան մետաղածնային գոտին | 205 |
| 11. Կապի մետաղածնային գոտին | 209 |
| 12. Կամ-Յոննանյան մետաղածնային գոտին | 210 |
| 13. Արևելաավստրալիական մետաղածնային գոտին | 210 |
| 14. Արգենտինյան մետաղածնային գոտին | 212 |
| Նալբաղոր շարժուն գոտիների մետաղածնութիւն հիմնական գծերը | 214 |
| VII. Ակտիվացած (աշխուժացած) շրջանների մետաղածնութիւնը | 215 |
| 1. վաճանների ու նրանց պլատֆորմների ակտիվացած տեղամասերի մետաղածնութիւնը | 216 |
| 2. Ակտիվացած միջնազանգվածների մետաղածնութիւնը | 223 |
| 3. Նալբաղորումը ավարտած ակտիվացած մարզերի մետաղածնութիւնը | 241 |
| Ակտիվացած զոնաների մետաղածնութիւն հիմնական գծերը | 243 |
| VIII. Ստրուկտուրա-մետաղածնային զոնաների տիպերն ու նրանց բնորոշ հանքային ֆորմացիաների համալիրները (շարքերը) | 246 |
| IX. Կանխատեսումա-մետաղածնային քարտեզների կազմման մեթոդիկայի վերաբերյալ | 253 |
| Գրականութիւն մետաղածնութիւն ընդհանուր հարցերի վերաբերյալ | 263 |
| Ա ն փ ո փ ու մ | 263 |

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԵՎՈՐԳԻ ՄԱՂԱՔՅԱՆ
ИВАН ГЕОРГИЕВИЧ МАГАКЪЯН

Մ Ե Տ Ա Ղ Ա Ծ Ն Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Տպագրվում է Հայկ. ՍՍՀ ԳԱ
Երկրաբանական գիտությունների ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

ИБ 10

Պատասխանատու խմբագիր
Է. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հրատարակչական խմբագիր
Լ. Ս. ՍԱՐԱՅՅԱՆ
Գեղ. խմբագիր
Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱՆՅԱՆ
Տեխնիկական խմբագիր
Ռ. Խ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Սրբագրիչ
Լ. Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

վ.Տ. 09661

Պատվեր 550

Հրատ. 4747

Տպարանակ 1000

Հանձնված է շարվածքի 16. 05. 1978 թ.: Ստորագրված է տպագրության 29. 09. 1978 թ.:

Տպագրական 17,13 մամուլ, սլայման. 23,97 մամուլ, հրատ. 20,83 մամուլ:

Թուղթ № 1, 70×108¹/₁₆, գինը 3 ս. 05 կ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 375019, Բարեկամության 24 գ
Издательство Академии наук Армянской ССР, 375019, Ереван, Барекамутян, 24-г.
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության Երևանի տպարան
Ереванская типография АН Арм. ССР, 375019, Ереван, Барекамутян 24.